ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(1) 2018

Երևան - 2018

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Կ. Ա. Գևորգյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
Երևանի պետական
համալսարան

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025, Երևան,
Ալեք Մանուկյան 1,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ:
Հեռ.՝ 060-71-02-43

Էլ. կայք՝ publications.ysu.am
publishing.ysu.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝
համամիտ չլինելով
հեղինակների
տեսակետներին:

e-mail: law@ysu.am
Տպագրական 32.625 մամուլ:

Տպաքանակը՝ 100
Հանձնված է շարվածքի՝
15.01.2018
Հանձնված է տպագրության՝
20.04.2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթուր Վաղարշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՐԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 7

Վիկտորյա Օհանյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋԱՃՅՈՒՂԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ 21

Տարոն Սիմոնյան

ԻՐԱՎԱԲԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ XXI ԴԱՐՈՒՄ. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 34

Ваге Геворкиян

К ВОПРОСУ О МЕХАНИЗМЕ ВЛАСТИ КАК О СТРУКТУРНОМ ЭЛЕМЕНТЕ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ ОБЩЕСТВА 46

Գևորգ Դանիելյան

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 58

Վարդան Այվազյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԱՏԵԽՆԻԿԱՆ 78

Անահիտ Մանասյան

ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 95

Ռուստամ Մախմուդյան

ԵՋԴԻՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՉՃԱՆԱՉՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 111

Հասմիկ Ենգոյան

2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 130

Рита Арустамян
ФУНКЦИЯ ОХРАНЫ ПРАВ И СВОБОД ГРАЖДАН И ИХ ОТВЕТСТВЕННОСТЬ ПЕРЕД ОБЩЕСТВОМ 138
Դավիթ Հակոբյան
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ 154
Լիպարիտ Մելիքջանյան
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 166
Արսեն Թավադյան
ԱՆՎԱՎԵՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 176
Ռաֆիկ Գրիգորյան
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 189
Արա Գաբուզյան
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 203
Աննա Մարգարյան
ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ 213
Тигран Симонян
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ, ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВЫЕ, ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ МЕРЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ МОЛОДЕЖИ 234
Սամվել Դիլբանդյան
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԷԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԲԵԿԱՆՄԱՆ ՀԻՄՔ 262

Վահե Ենգիբարյան
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....276
Տաթևիկ Սուջյան
ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԱՂՏՆԻ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 296
Արմեն Հովհաննիսյան
ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԲՈՂՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ.....314
Սերգեյ Մարաբյան
ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ.....326
Հրայր Ղուկասյան, Անահիտ Հարությունյան
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.....352
Գուրգեն Ներսիսյան
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....375
Սերգեյ Մեղրյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ. ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....395

Վահե Հովհաննիսյան
ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 430
Վարդուշ Եսայան
ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 445
Վահագն Դալլաքյան
ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 458
Օլիմպիա Գեղամյան
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 472
Տիգրան Խաչիկյան
ԵԱՏՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 484
Հեղինե Գրիգորյան
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 496
Անի Սիմոնյան
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 513

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՐԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Արթուր Վաղարշյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի ստեղծման և գործողության իրավական կառուցակարգի պատմության համակարգված նկարագիրը հիմք է այդ հանրապետության ընդհանուր պատմության շատ հիմնահարցերի վերաիմաստավորման, դրան վերաբերող պատմագրության մեջ տեղ գտած մոտեցումների ճշգրտման, վիճելի հիմնահարցերի նկատմամբ բարոյական գնահատականներից ու վերաբերմունքից ձերբազատվելու և դրանք պետաիրավական (իրավական-օրինական և ոչ իրավական-ապօրինի) տեսանկյունից դիտարկելու համար: Սակայն բացի զուտ պատմագրական նշանակությունից՝ շատ կարևոր է հանրապետության գոյության ու գործողության փորձից դասեր քաղելը: Այլ կերպ ասած՝ Առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի ստեղծման, կազմակերպության և իրավական գործունեության հիմնահարցերի բազմակողմանի-համալիր հետազոտությունը, դրանց ամբողջական նկարագիրը և վերլուծությունը պետք է օգտագործել տեսական նոր օրինաչափությունների առաջադրման համար, որոնք կարող են կիրառվել արդի պետության բարեփոխումների համար:

Փորձենք օգտագործել Առաջին հանրապետության պետական իշխանության համակարգի, դրա կազմակերպական և գործառութային առանձնահատկությունների, իրավական գործունեության ամբողջական, համակարգված պատմաիրավական հետազոտությունը և առաջ քաշել ինչպես, այսպես կոչված, պատմական-իրավական փաստերը լուսաբանող, այնպես էլ այսօրվա պետականակերտության համար գործնական-կիրառական նշանակություն ունեցող տեսական օրինաչափություններ:

Հայաստանի առաջին հանրապետության պետական և իրավական համակարգի ծագման, կայացման պատմական գործընթացների

վերլուծությունը և գնահատումը հիմք են տալիս առաջ քաշելու հետևյալ բացահայտող, լուսաբանող հիմնադրույթներն ու օրինաչափությունները:

1. Առաջին հանրապետության հիմնադրման և միջազգային ճանաչման ընթացքը, անկախության անսպասելիության հանգամանքը պայմանավորեցին նաև նորաստեղծ պետության կառավարման համակարգի յուրահատկությունները: Օրենսդիր իշխանության համակարգի կայացման և զարգացման տեսանկյունից հանրապետության պետական կառավարման համակարգն անցել է կազմակերպական երեք փուլ՝ ա) հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, բ) հանրապետության ազգաբնակչության և հիմնական քաղաքական կուսակցությունների նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում, գ) քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով խորհրդարանական կառավարում:

2. 1919 թ. մայիսին Անկախ և միացյալ Հայաստանի հռչակման գործընթացում ՀՅԴ-ի և կառավարության գործունեության անդրկուլիսային գործելակերպը կազմակերպված քաղաքական դավադրություն էր՝ ընդդեմ հանրապետության, հանուն դաշնակցական կուսակցության մենատիրության հաստատման: Նման պնդման համար հիմք է իրավական դիրքերից այնպիսի միտումների վերհանումը, ինչպիսիք են՝ օրենսդիր մարմնի աշխատանքների նպատակային ձախողումը, վարչապետությունից Հ. Քաջազնունու մեկուսացումը և Ա. Խատիսյանի կողմից նրա լիազորությունների յուրացումը, կառավարության կողմից, շրջանցելով խորհրդարանը, կարևորագույն սահմանադրական նշանակության երկու իրավական ակտի ընդունումը («Անկախ և միացյալ Հայաստանի» ակտը, «Հայաստանի խորհրդի կազմը 12 ներկայացուցիչներով ուժեղացնելու մասին» օրենքը), առանց դրանց քաղաքական անհրաժեշտության լուրջ քննարկումների, խախտելով դրանց ընդունման օրինականության և՛ բովանդակային, և՛ ընթացակարգային-ձևային պահանջները: Եթե նշված գործընթացները տեղի ունենային իրավական օրինականության հունով, ապա դրանք չէին հանգեցնի խորհրդարանում քաղաքական բազմազանության վերացմանը, ազգային համերաշխության խարխլմանը, մնացած քաղաքական ծանրակշիռ ուժերի օտարմանը.

հետևանքներ, որոնք՝ որպես ներքին գործոններ, նպաստեցին հանրապետության անկմանը։

3. Հայաստանի խորհուրդը հիմնադրվել էր որպես անժամկետ գործողության խորհրդարան։ Խորհրդի լիազորությունների դադարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր։ Չունենալով մեծամասնություն խորհրդում՝ դրան հասնելը դաշնակցականների համար շատ բարդ խնդիր էր։ Այդ կացությունից դուրս գալու և քաղաքական-իրավական ճգնաժամը հաղթահարելու ելքը դաշնակցությունը տեսավ խորհրդարանի աշխատանքների ձախողման մեջ։ Նպատակը խորհրդարանն անդամալույծ մարմին դարձնելն էր և դրանով ընդդիմությանը փաստի առաջ կանգնեցնելը, ինչը կստիպեր վերջինիս համաձայնել ինքնարձակմանը և կազմակերպել խորհրդարանական ընտրություններ։ Հրահրելով կոչեր՝ արձակել Հայաստանի խորհուրդը՝ նրանք քննադատության թիրախ էին դարձրել հատկապես խորհրդարանում կուսակցությունների և ազգությունների խտրական ներկայացուցչությունը։

Պահն իսկապես պատմական էր ու պատասխանատու։ Սակայն Հայաստանի քաղաքական ուժերը, հոսանքները, գործիչները չկարողացան թոթափել խմբակային, անհատական շահերն ու հակամարտությունները, չեզոքացնել պետությանը սպառնացող վտանգներն ու դժվարությունները, համախմբել ժողովրդին, կայացնել նորաստեղծ պետությունը, գտնել այն ոսկե միջինը, որը կդառնար ՀՀ հաղթական կայացման անկյունաքարը։

4. Հայաստանի պառլամենտի ընտրությունների կազմակերպման և նախընտրական քարոզչության ընթացքում շարունակվեցին օրենսդիր կառավարության և կուսակցությունների քաղաքական խարդավանքները։ Ոչ կառուցողական, նեղ կուսակցական դիրքորոշումների, քաղաքական անհանդուրժողականության հետևանքով ՀԺԿ-ն դուրս եկավ կառավարական կոալիցիայից։ Այնուհետև միայն դաշնակցականներով համալրված կառավարությունը, օգտվելով ՀԺԿ-ի հայաստանյան կոմիտեի այսրոպեական որոշումից, առանց օրինական հիմքերի քվեարկությունից հանեց դրա ընտրական ցուցակը։ Արդյունքում ՀՅԴ-ն ստացավ պատգամավորական տեղերի բացարձակ մեծամասնությունը, և Հայաստանում հաստատվեց դաշնակցական մենիշխանություն։ Երկրորդ խորհրդարանը ևս հիմնադրվեց որպես անժամկետ լիազորություններով մարմին. դրա դա-

դարման միակ իրավական ուղին ինքնալուծարումն էր: Ընտրությունների համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից ընտրությունների պարտադիրության և պարբերականության խախտմամբ խեղաթյուրվում էր ներկայացուցչական կառավարման կարևորագույն գիծը՝ ժամկետայնությունը: Սա ճակատագրի հեգնանք չէր, այլ ՀՅԴ-ի կողմից մտածված ծրագիր: Խորհրդարանի ընտրությունից հետո դաշնակցական քաղաքական միտքը սկսեց կռվաններ որոնել դրա իշխանությունը «հավերժացնելու» համար:

5. Առաջին հանրապետության հիմնադրման եղանակը և պետական իշխանության ստեղծման առանձնահատկությունները, նեբառյալ պետական շինարարության փորձի և պատշաճ սահմանադրական կարգավորման բացակայությունը, կառավարման դուալիստական միապետական համակարգից անցումը հանրապետականի, պայմանավորեցին այն հանգամանքը, որ առաջին խորհրդարանը հիմնադրվեց որպես անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան: Այդ կարգավիճակը փոխանցվեց Հայաստանի պառլամենտին: «Անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան» հասկացությունը չէր ենթադրում բացարձակություն, որովհետև պետական իշխանության համակարգը կառուցված էր իշխանությունների բաժանման սկզբունքով, ինչն արդեն իսկ ենթադրում էր խորհրդարանի իրավասության սահմանափակում: Սակայն խորհրդարաններն իրենց օրենսդրական իրավասության բնույթով բացարձակ անսահմանափակ էին, քանզի դրանք ունեին իրավազորություն ցանկացած հարցով ընդունելու, փոփոխելու և վերացնելու օրենքները, և չկար պետական որևէ կառույց, որը կարող էր կասկածի ենթարկել նրանց ակտերի իրավականությունը:

6. Առաջին հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում էր իշխանությունների եռաթև բաժանման հիման վրա: Բաժանումը դրսևորվում էր երեք առումներով՝ գործառութային, կառուցվածքային-կազմակերպական, անձնական: Սակայն իշխանությունների բաժանման համակարգը աղճատված էր, որովհետև այն չէր ապահովում իշխանության ճյուղերի հավասարակշռումը: Որպես կանոն իշխանության երեք թևերի մարմինները պետք է լինեն ինքնուրույն իրենց իրավասության շրջանակներում, չեն կարող միջամտել այլ մարմինների իրավասությանը: Սակայն հանրապետության օրենսդիր մարմինների բացարձակ օրենսդրա-

կան իրավասությունը խախտում էր իշխանության մնացած թևերի՝ իրենց իրավասության շրջանակներում ինքնուրույնությունը, հիմքեր էր ստեղծում օրենսդրի կողմից այլ մարմինների իրավասությանը կամայական օրենսդրական միջամտության համար։ Մյուս կողմից՝ իշխանությունների փոխհարաբերություններում «հակակշիռների և զսպիչների» թույլ համակարգը ի չիք էր դարձնում իշխանությունների բաժանման իրական գործողությունը։ Պատվիրակված օրենսդրման համակարգի կիրառման պայմաններում դա հանգեցնում էր գործադիր իշխանության գերակայության։ Հանրապետության խորհրդարանականության ողջ պատմությունը վկայում է, որ կառավարող կուսակցությունն ամեն անգամ պայքարի մեջ էր մտնում հենց խորհրդարանի հետ։ Եթե դա հասկանալի էր Հայաստանի խորհրդի պարագայում, ապա անհասկանալի է Հայաստանի պառլամենտի դեպքում, երբ նրան ևս զրկեցին «օրենսդրի» իրավունքներից։ Անշուշտ, իրավիճակն արտակարգ էր, ճգնաժամային, լարված, օպերատիվ ու արագ լուծումներ պահանջող։ Բայց դա չի նշանակում, որ ասպարեզից պետք էր դուրս թողնել խորհրդարանը։ Կարելի էր կատարել իրականության պահանջներին համապատասխանող իրավազորությունների բաժանում՝ կառավարությանը վերապահելով միայն որոշակի ոլորտներում պատվիրակված օրենսդրման իրավունք։ Այս դեպքում պետական նավը կլիներ հավասարակշռված, իսկ ինքը՝ կառավարությունը՝ հակակշռված։ Սակայն մենատիրական ձգտումները հասնում էին մոլագարության աստիճանի. ամեն ինչ միայն իրենց և իրենց միջոցով, մնացած բոլորը ոչինչ են ու թշնամի։ Պետական շինարարության օբյեկտիվ, իրավական օրինաչափությունների պահպանումը և գործադիրին հակակշռող խորհրդարանի առկայությունը միգուցե հանրապետությունը չհասցնեին կորստալից տապալման, հատկապես որ կային քաղաքական գործիչներ, ովքեր կանխագուշակում էին ապագա ձախողումը։

7. Խորհրդարանական վերահսկողությունը և դրա ձևերը պայմանավորված էին պետական կառավարման ձևով և ռեժիմով։ Հանրապետությունում գործել են համաշխարհային խորհրդարանական պրակտիկային հայտնի խորհրդարանական վերահսկողության համարյա բոլոր ձևերը՝ բացառությամբ կառավարությանն ուղղակիորեն անվստահություն հայտնելու ընթացակարգի։ Հայաստանի խորհրդում ընդդիմությունն ամեն մի փոքր խախտում կամ հիմ-

նախնդիր դարձնում էր խորհրդարանական վերահսկողության առարկա, իսկ նիստերի օրակարգերում խորհրդարանական վերահսկողության առատությունը զգաստացնում ու զգոնացնում էր կառավարությանը: Վերջինը, խորհրդարանում չունենալով կայուն մեծամասնություն, ամենայն պատասխանատվությամբ էր վերաբերվում դրանց, իսկ դաշնակցական խմբակցությունը ջանադիր հետևում էր, որ ընդունված բանաձևերը չլինեն ի վնաս գործադիրի: Իսկ Հայաստանի պառլամենտում խորհրդարանական վերահսկողության ձևերը կորցրել էին իրական ազդեցությունը, որովհետև դաշնակցությունն ուներ բացարձակ մեծամասնություն: Ընդդիմությունը նույնիսկ այդ անելանելի պայմաններում խորհրդարանական ինստիտուտներն օգտագործում էր քարոզչության կամ քաղաքական խնդիրներ լուծելու համար: Այդպիսով՝ խորհրդարանական վերահսկողության ձևերի իրավական արդյունավետությունը կախված էր խորհրդարանական ուժերի հարաբերակցությունից:

8. Խորհրդարանագիտության մեջ հայտնի դատական իշխանության և արդարադատության ոլորտին առնչվող խորհրդարանական բոլոր հնարավոր լիազորություններից խորհրդարանները համանմանության կարգով իրենց վերապահել էին համաներում հայտարարելու իրավունքը, ինչպես նաև ոլորտի մարմինների պաշտոնյաների նշանակումը: Խորհրդարանների գործունեության ընթացքում ստեղծվել են քննիչ հանձնաժողովներ: Չի կիրառվել միայն իմպիչմենտի ինստիտուտը: Անցումային իրավական համակարգում սահմանադրական կարգավորման բացերի պայմաններում խորհրդարանն իրեն վերապահեց նաև ներման իրավունքը, ինչը օրենսդիր մարմնին վերածեց յուրահատուկ քվազի դատարանի: Նման եզրակացության հիմքը ներման դիմումների բավականին մեծ քանակն է, իսկ որոշ գործերով՝ նաև դատավճիռների վճռաբեկության որոշումներ կայացնելու փաստը: Լիազորությունների այս ոլորտը ևս հաստատում է, որ հանրապետության խորհրդարանը պետական իշխանության համակարգում իր դերով բացարձակապես գերիշխող, իսկ իր իրավասության ծավալով բացարձակապես անորոշ իրավասությամբ խորհրդարան էր:

9. Պատգամավորների կարգավիճակը կառուցված էր իրավահավասարության սկզբունքով և ենթադրում էր խորհրդարանականի գրեթե բոլոր հանրաճանաչ իրավունքները, ինչպես նաև պարտակա-

նությունները: Հայաստանի խորհուրդը ստեղծելիս հիմնադիրներն անտեսեցին պաշտոնների համատեղման անթույլատրելիությունը. օրենսդրությունը չէր սահմանում պաշտոններ ունենալու որևէ արգելք: Այս սխալը հետագայում շտկվեց՝ ընկնելով, սակայն, մյուս ծայրահեղության մեջ. պաշտոնների համատեղելիությունը լրիվ արգելվեց: Այնուհետև օրենքը քայլ առ քայլ ընդլայնեց պատգամավորի՝ պետահասարակական այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

10. Կառավարության ձևավորման եղանակը պայմանավորված էր պետական կառավարման ձևով: Կառավարությունն իր ձևով բացարձակ խորհրդարանական էր. այն կազմավորվում էր խորհրդարանի կողմից և լրիվ պատասխանատու էր միայն նրա առջև: Կառավարությունը կազմված էր վարչապետից (նախարար-նախագահից), ինչպես նաև պորտֆելով նախարարներից: Կառավարության ձևավորման կարգը, կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերությունների իրավական կարգավորման բացը Հայաստանի խորհրդում հանգեցնում էին պատեհապաշտ, երբեմն նաև արտառոց անհատական իրավական կարգավորման:

11. Հանրապետության կայացմանը զուգընթաց գործադիր իշխանության մարմինների համակարգը ծավալվում և ճյուղավորվում էր: Դա օրինաչափ էր, քանզի պետական կառավարման խնդիրներն օրավուր առաջ էին բերում նոր գործառույթների իրականացման անհրաժեշտությունը, իսկ սա էլ իր հերթին պահանջում էր կատարող սուբյեկտների հիմնադրում: Պետական կառուցակարգի գործադիր համակարգի էքստենսիվ զարգացումը մի կողմից օբյեկտիվ օրինաչափություն էր, մյուս կողմից հանգեցրեց ապարատի և ծախսերի ուռճացման: Պետության խնդիրները և գործառույթներն ունեն բազմագործոն պայմանավորվածություն: Դրանցից մեկն էլ պետության՝ տվյալ պահին ունեցած հնարավորություններն են, ինչպես նաև դրանով պայմանավորված գերակայությունները: Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, չունենալով ներքին լուրջ հնարավորություններ (հատկապես ֆինանսներ), պետական կառուցակարգը միանգամից «լծեցին» պետության բոլոր հնարավոր գործառույթների իրականացմանը, ինչը չկայացած համակարգի համար վտանգավոր փորձություն էր: Այնինչ պահի հրամայականը թելադրում էր ներքին և արտաքին միայն որոշ գործառույթների անպայման և, իհարկե,

արդյունավետ իրականացումը։

12. Հանրապետության կառավարության իրավասությունը չուներ որևէ իրավական ամրագրում։ Այդ հարցը կարգավորվում էր «կառավարությունը և նրա ղեկավարն իրականացնում են ազգային քաղաքականության մշակումն ու կենսագործումը» դասական բանաձևով։ Կառավարությունը երկրի ընթացիկ կառավարումն իրականացնող ընդհանուր իրավասության գործադիր-կարգադրիչ մարմին էր, որի իրավասությունն ընդգրկում էր պետական կյանքի բոլոր հարցերը, որքանով որ դրանք վերապահված չէին խորհրդարանի և մյուս պետական մարմինների իրավասությանը։ Կառավարության հիմնական գործառույթը պետության արտաքին և ներքին քաղաքականության ընդհանուր ծրագրի առաջարկությունն էր, դրա ձևակերպումը, ինվեստիտուրան խորհրդարանում և կենսագործումը։ Այս գործառույթի իրականացման իրավական ձևը նոր ձևավորվող կառավարության հայտարարագիրն էր։ Բացի գործադիր կանոնակարգող իշխանությունից՝ կառավարությունն ուներ լայն հնարավորություններ՝ լուրջ կերպով ազդելու օրենսդրական գործընթացի վրա։ Այդպիսի լծակները երեքն էին՝ **առաջին՝** կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրան հարակից մի շարք իրավունքներ, **երկրորդ՝** կառավարությանն օրենսդիր մարմնի իրավազորությունների փոխանցման արդյունքում պատվիրակված օրինաստեղծ գործունեությունը, **երրորդ՝** կառավարության կողմից օրենսդրական գործառույթի իրականացման թաքնված կառուցակարգը, այսինքն՝ խորհրդարանական հանձնաժողովների, կառավարության ու խորհրդարանի անդամներից կազմված հատուկ հանձնաժողովների, խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցության միջոցով օրինագծերին օրենքի ուժ տալու հնարավորությունը։

13. Մեծ ջանքերի և ծախսերի գնով հիմնադրված պետական կառավարման մարմինների համակարգը և դրա համալրումը քիչ թե շատ կարող ծառայողներով առաջ բերեցին նոր հիմնախնդիր, այն է՝ պետական ծառայողի կերպարի, նրա ազնվության և օրինական գործունեության հիմնահարցը։ Այդ հարցը Հայաստանում ձեռք էր բերել քաղաքական մեծ նշանակություն, որովհետև վարկաբեկում էր պետական իշխանությունը, սպառնում էր անկախ ազգային պետականության գոյությանը։ Սովորական պայմաններում 1918-1919 թթ. ընթացքում կառավարությունը փորձում էր աստիճանական, իրավա-

կան ճանապարհով կառուցել և կայացնել պետական կառուցակարգը: Սակայն արտասովոր իրադրությունը դրդում էր կառավարությանը՝ դիմելու արտակարգ միջոցառումների, հատկապես պետական ծառայության իրավական կարգավորման, պետական ծառայողների վրա հսկողություն և վերահսկողություն սահմանելու հարցում: Այդպիսի բնույթ կրող արտակարգ միջոցառումները ձեռնարկվել են մի քանի ուղղությամբ: **Առաջինը** պետական ծառայողների իրավական պատասխանատվության կարգի և պայմանների խստացումներն էին՝ արտակարգ քննիչ և դատական մարմիններ ստեղծելու միջոցով, **երկրորդը** պետական ապարատի ազգայնացման քաղաքականության իրականացումն էր, իսկ **երրորդը** 1920 թ. Մայիսյան ապստամբության հետևանքով պետական ծառայության արտասովոր կարգերի սահմանումն էր, ինչպես նաև պաշտոնեական հանցագործությունների նախաքննությունը և դատական քննությունն արտակարգ մարմիններին հանձնելը: Սակայն կառավարող ընտրանու ձեռնարկած արտակարգ միջոցառումներից շատերը վերածվում էին անարդյունավետ քայլերի: Հասնելով ձեռնարկված պետաիրավական որևէ քայլի անարդյունավետության գիտակցմանը՝ կառավարող մեծամասնությունը փորձում էր այն հաղթահարել նոր արտակարգ միջոցառմամբ, որը սկզբում թվում էր ամենալավդեղատոմսը: Սակայն նորից պարզվում էր, որ այդպես չէ: Կախարդական շրջանակ էր սա, որից դուրս գալը, կարծես թե, դարձել էր անհնարին:

14. Երկրի կառավարման արտակարգ միջոցառումներն ունեին ոչ միայն օբյեկտիվ, անհրաժեշտ, այլ նաև քաղաքական դրդապատճառներ, պայմանավորված էին կառավարող կուսակցության մենատիրական ձգտումներով, հետևանք էին իրավական մշակույթի ցածր մակարդակի: Նման ուղղվածություն ունեցող օրենսդրական նախաձեռնություններ արվում էին հանրապետության գոյության ողջ ժամանակ, սակայն խորհրդարանների ողջամիտ դիրքորոշման հետևանքով մեծամասամբ ընթացք չէին ստանում: Դրան հակառակ, երբ օրենսդրական լիազորությունները փոխանցվում էին կառավարությանը, արտակարգ օրենսդրական նախաձեռնություններն անարգել իրագործվում էին: Արտակարգ միջոցառումները, շատ դեպքերում բացի հակաժողովրդավարական լինելուց, հաճախ նաև անարդյունավետ, իրավական-կազմակերպական տեսակետից լավագույն կերպով չմտածված փորձեր էին, որովհետև դրանք ևս չէին հանգեցնում հանրապետությունում օրինականության և իրավա-

կարգի հաստատմանը, պետական կառավարման նպատակների արագ, պատշաճ կենսագործմանը: Օրենսդիր մարմիններն ունեին անսահմանափակ հնարավորություններ իրենց իրավաստեղծագործության ընթացքում: Առաջին հանրապետությունն իր կառավարման ձևով հանրապետություն էր, սակայն ոչ իրավական պետություն: Այդպիսի իրավահասկացողությունը և գործելակերպը շատ դժվար է նույնիսկ հայրենասիրական դիկտատուրայի նպատակահարմարության տեսանկյունից արդարացնել, որովհետև ազգային-պետական ուժեղ իշխանություն չի նշանակում կամայականություն:

Պատմական փորձը հնարավորություն է տալիս առաջ քաշելու նաև հայեցակարգային և գործնական նշանակություն ունեցող տեսական հիմնադրույթներ, որոնք կարող են օգտագործվել արդի պետահիրավական համակարգի կատարելագործման և բարեփոխման համար:

1. Առաջին հանրապետության պաշտպանական քաղաքականության փորձը, արդի հայկական երկու պետությունների աշխարհաքաղաքական կացությունը հիմք են տալիս պատմության դասերի տեսական իմաստավորման միջոցով առաջ քաշել պետական ապարատի կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ պաշտպանունակությունը: Պաշտպանունակությունը պետական համակարգին բնորոշ որոշակի հատկություն է, ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման հատկություն: Խնդիրն այն է, որ այդ հատկությունը՝ աղետալի, արտակարգ, պատերազմական պայմաններում գործելու ունակությունը, դրվի սովորական իրադրությունների համար ստեղծված պետական մարմինների ու իրավական ինստիտուտների էության մեջ:

2. Պաշտպանունակության սկզբունքի դիրքերից անհրաժեշտ է անցկացնել ողջ արդի օրենսդրության իրավական մոնիթորինգ, որի իրականացման համար առաջարկվում են հետևյալ չափորոշիչները. **ա)** պետական իշխանության և տեղական կառավարման համակարգն արդյունավետ և հստակ է այնքան, որ ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև՝ պատերազմական, չի առաջացնում որևէ կազմակերպական-կառուցվածքային վակում, **բ)** հանրային իշխանական բոլոր կառույցները հստակ տիրապետում են իրենց իրավասությանը և ընդունակ են իրացնելու այն ցանկացած արտակարգ կամ պատերազմական պայմաններում՝ ելնելով իրենց հանրային-իշխանական առաքելությունից, **գ)** հանրային իշխանական համակարգն իր ծառա-

յողական և աշխատանքային անձնակազմով տոգորված է կարգապահության, հայրենիքի պաշտպանության ոգով, արտակարգ պայմաններում ընդունակ է կարգապահության ու ինքնակազմակերպման, պատրաստակամ է անձնազոհության։

3. Դատական շինարարության և դատական համակարգի գործունեության տեսական իմաստավորման հիման վրա մշակվել է դատական իշխանության կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ գործառութային ինքնաբավությունը. դատական իշխանությունն իր ներհամակարգային բոլոր խնդիրների, գործառույթների, լիազորությունների իրականացման հարցում պետք է լինի ինքնաբավ, արտահամակարգային պետական կառույցներից չկախված։ Բոլոր ներհամակարգային գործառույթներն ու լիազորությունները, ներառյալ արդարադատության իրականացման կազմակերպականապահովող, պետք է կատարվեն ներհամակարգային օժանդակող կառավարչական կառույցների, ռեսուրսների միջոցով։

4. Համակարգային մոտեցման կիրառումը հիմք է տալիս պնդելու, որ ազգային անվտանգության և պաշտպանության համակարգում, իրավաօրինականության կայացման գործում կարևոր բաղադրիչ են բնակչության հոգևոր-բարոյական-իրավական որակները։ Հարատևման հավերժ պայքարում կիրառվել և կիրառվում է երկու հիմնական ռազմավարություն՝ զանգվածայնությունը (քանակը) կա՛մ «ոգին»։ Առաջին «հաճույքից» մենք զրկված էինք և՛ այն ժամանակ, և՛ այսօր։ Հետևաբար երկրորդը պետք է դառնա մեր գոյության ռազմավարությունը։ Այդ առանձնահատուկ ոգին, գումարած կազմակերպական կառուցվածքին, կտա այն արդյունքը, որը մենք ակնկալում ենք պատմությունից։ Արդի շրջանի բոլոր տեսակի բարեփոխումները, հասարակական դաստիարակության ու կրթության համակարգն ուղղակիորեն պետք է խարսխվեն այս աքսիոմայի վրա և ազգային հիմքով հայրենասիրական, բարոյահոգեբանական-իրավական դաստիարակությունն ու կրթությունը դարձնեն իրենց նպատակներից մեկը։ Արդի կրթական համակարգը այս տեսանկյունից կարիք ունի մոնիթորինգի, իսկ այնուհետև՝ բարեփոխման։ Արդյունքում կրթական համակարգում հայրենասիրական, իրավական ու բարոյական ուսուցումը պետք է դարձնել ուսումնական առանձին բնագավառ, կրթության բովանդակային բաղադրիչ, սովորողների պատրաստվածությանը ներկայացվող առանձին ընդհանրական պահանջ՝ ներառելով այն բոլոր տեսակի կրթական պետական չա-

փորոշիչներում, հենքային ուսումնական պլաններում, առարկայական ծրագրերում:

5. Պատմական փորձից քաղված դասը հիմք է տալիս առաջ քաշելու և ձևակերպելու հետևյալ օրինաչափությունը. քաղաքականության սահմանադրականությունը, իրավաօրինականությունը և խորհրդարանական իրական բազմակարծությունը ռազմավարական ճիշտ ընտրություն կատարելու, ազգային պետականության կայացման և հարատևության կարևորագույն երաշխիքներ են:

6. Պետականակերտության օրինաչափություններից է այն, որ հասարակական գործոնների բացասական ազդեցության պայմաններում կարևորվում է հատուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվային երաշխիքը, որը մնացած գործոնների շարքում ոչ թե երկրորդական, այլ ակտիվ, ստեղծագործաբար վերափոխող գործոն է: Այն ունակ է ազդելու արտաիրավական հասարակական պայմանների դրական փոփոխման վրա: Ինչպես անցյալում, այնպես էլ այսօր պատմական պատասխանատվության մեծ մասը կրում են քաղաքական ղեկավարությունը, օրենսդիր մարմինները, որովհետև նրանց պարտականությունն է որոշել պահի հրամայական գերխնդիրները, դրսևորել լայն սոցիալական և պետական մտահորիզոն, բազմագործոն և բազմակարծիք մոտեցում: Քաղաքական պատվերը պետք է պայմանավորի իրավաստեղծ աշխատանքի ռազմավարությունը և մարտավարությունը, որոնց համապատասխան պետք է մշակվեն հասարակական կյանքի պահանջմունքներից ու կարիքներից բխող օրենսդրական ծրագրերն ու իրագործվեն: Հետևաբար օրինաչափորեն պետաիրավական շինարարության ընթացքում կարևորվում է «էլեգանտ իրավագիտության», «բարու և արդարության» արվեստի իրական մասնակցությունն իրավաստեղծ աշխատանքում՝ նրա բոլոր փուլերում: Առաջին հանրապետությունը զրկված էր նման հնարավորությունից: Արդի Հայաստանը չպետք է անտեսի այդ օրինաչափությունը:

7. Հանրապետության դատական շինարարության փորձը հաստատում է նաև մեկ այլ օրինաչափություն. պետական կառուցակարգը սոցիալապես պայմանավորված է, այսինքն՝ այն պետության կամայական հայեցողության արդյունքը չէ, այլ հասարակական հարաբերություններին, իրավիճակին համապատասխան ստեղծվող ու գործող համակարգ: Դատական համակարգը, որը սովորական պայմաններում գործում էր բավականին արդյունավետ, հանրապետութ-

յան ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական իրականության մեջ ի վիճակի չէր ապահովելու իր առջև դրված խնդիրների լուծումը: Անիշխանությունը և քաոսը, գործ իրականությունը ռուսական դատական կանոնադրությունների շատ դրույթներ վերածեցին «իդեալիզմի»: Եթե հնարավոր չէր ապահովել եղած համակարգի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, ապա համակարգը պետք է վերափոխվեր, հարմարեցվեր իրականության պայմաններին: Անհաջողության գլխավոր պատճառը դատական շինարարության ռազմավարության սխալ ընտրությունն էր. ոչ թե իրականությունը պետք է հարմարեցվեր դատական համակարգին, այլ դատական համակարգը՝ իրականությանը, հասարակական հարաբերություններին: Գերխնդիրը, նպատակը արդյունքն է, այսինքն՝ իրավակարգի հաստատումը, արդարադատության խնդիրների կենսագործումը, այլ ոչ թե դատական մարմինների համակարգը, որը միայն միջոց է՝ հասնելու իրավական հիմքերի վրա դրված արդարադատության կենսագործմանը:

8. Հասարակական միջավայրը կարևոր նշանակություն ունի «իդեալական» պետահիրավական նորմատիվային համակարգի համար: Փոխառված իրավական մոդելը կարող է լինել ժողովրդավարական, սակայն չկատարել իր առջև դրված խնդիրները: Պատճառը կոլիզիան է սովորական, կայուն հասարակական պայմանների համար մոդելավորված համակարգի և օբյեկտիվորեն առկա արտակարգ, բացասական հասարակական պայմանների միջև, որոնք ի վերջո չեզոքացնում են ներդրված իրավական մոդելի գործառութավորումը, եթե այն չի տեղայնացվում ու հարմարեցվում շրջակա հասարակական միջավայրի պայմաններին:

ОПЫТ ФУНКЦИОНИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВОЙ СИСТЕМЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПРЕДЛОЖЕНИЯ ПО СОВЕРШЕНСТВОВАНИЮ СОВРЕМЕННОЙ РЕСПУБЛИКИ

Артур Вагаршян

Заведующий кафедрой терии и истории государства и права ЕГУ, доктор юридических наук, профессор

В статье на основе анализа опыта деятельности учреждений, организаций и функционирования государственного аппарата Первой

республики Армения выдвигаются как выясняющие историко-правовые факты и закономерности, так и имеющие прикладное значение концептуальные теоретические положения и закономерности, которые необходимо использовать для совершенствования современного армянского государства.

EXPERIENCE OF THE FUNCTIONING OF THE PUBLIC-LEGAL SYSTEM OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA AND THE PROPOSALS FOR IMPROVING THE MODERN REPUBLIC

Artur Vagharshyan
Head of Chair of Theory and History of State and Law
YSU, Doctor of Law, Professor

Based on the analysis of the experience of establishment, organization and functioning of the state apparatus of the First Republic of Armenia, the historical-legal facts, the regularities, as well as the practical, conceptual and theoretical provisions and regularities to be applied for improving the modern Armenian state are put forward in the article.

Բանալի բառեր – ազգային ներկայացուցչություն, կուսակցական ներկայացուցչություն, իրավական օրինականություն, Հայաստանի խորհուրդ, Հայաստանի պառլամենտ, պաշտպանունակություն, գործառութային ինքնաբավություն, էլեգանտ իրավագիտություն, «ընկալված» մոդել
Ключевые слова: национальное представительство, партийное представительство, правовая законность, Совет Армении, Парламент Армении, обороноспособность, функциональная самодостаточность, элегантная юриспруденция, рецепцированная модель
Key words: national representation, party representation, legitimacy, Council of Armenia, Parliament of Armenia, defensive capacity, functional self-sufficiency, elegant jurisprudence, "perceived" model

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՁՅՈՒՂԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վիկտորյա Օհանյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Երբեմն որոշումները, որոնք լավագույնն են անհատների համար, կարող են չարիք լինել խմբի (հասարակության) համար։
«The Economist» ամսագիր, 7 սեպտեմբերի, 2016[1]

21-րդ դարի իրողությունները նոր մարտահրավերներ են նետում իրավունքին. կանտյան «իրավունքի սահմանման փնտրտուքը» առավել քան արդիական է մեր օրերում։ Իրավունքի մասին պատկերացումները կարող են հարաբերականորեն ճշմարիտ, համակողմանի և հիմնավորված լինել միայն որոշակի ժամանակաշրջանի համար՝ որոշակի պարադիգմաների շրջանակներում. դրա պատճառը ոչ միայն գիտական մտքի զարգացումն է, այլև հիմնականում մարդկային հասարակության փոփոխության դինամիկան։ Իրավունքի «մաքուր» ուսմունքը, իրավունքի իմաստավորումը առանց դրա ներգործության օբյեկտի՝ վարքագծի, հասարակական հարաբերության, հասարակական իրողությունների հետ սերտ կապի և փոխպայմանավորվածության խորը ուսումնասիրման, նման են ֆուտբոլի, որտեղ խաղացողը գիտի կանոնները, հետևում է դրանց, կիրառում է լավագույն հնարքները, սակայն չի տեսնում դարպասը։ Հայաստանի իրավական իրականությունը լի է օրինակներով, երբ ընդունված իրավակարգավորումը իր բնույթով «իրավական» է[2], համապատասխանում է իրավաբանական տեխնիկայի բոլոր կանոններին, այսինքն՝ իրավունքի նորմ է թե՛ ձևի և թե՛ էության տեսանկյուններից, բայց, այդուհանդերձ, չի բերում որևէ դրական

[1] https://www.economist.com/blogs/economist-explains/2016/09/economist-explains-economics

[2] Եզրույթն օգտագործվում է իրավաբանական իրավահասկացողության (բնական-իրավական և ազատական-իրավաբանական) տեսանկյունից։

փոփոխության հասարակական կյանքում: *Հարց. արդյո՞ք իրավունքի դերն է նման փոփոխության բերելը, թե՞ իրավունքի հիմնական գործառույթը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն ապահովելն է:* Հարցը, իհարկե, որոշակիորեն կապված է իրավունքի տեսության շրջանակներում իրավահասկացողության լեգիստական և իրավաբանական տիպերի հակադրման հետ[1], սակայն չի հանգում վերջինիս և սույն հոդվածում քննարկվում է այլ տեսանկյունից:

Ավանդական իրավագիտությունը իրավունքը արժևորում է որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ: Եթե ամփոփենք «կարգավորիչ» գործառույթի որակական կողմը, առաջ են գալիս հետևյալ հատկանիշները՝ նորմատիվություն, համապարտադիրություն, ապահովվածություն պետական հարկադրանքով (պոզիտիվիստական պարադիգմա), բնական օրենքներով, արժեքներով և սկզբունքներով կանխորոշվածություն (բնական-իրավական պարադիգմա), ձևական հավասարություն, արդարություն և ազատություն (ազատական-իրավաբանական պարադիգմա), հասարակությունում գործող օբյեկտիվ օրինաչափություններին համապատասխանություն (սոցիոլոգիական պարադիգմա), անհատի և կոլեկտիվի հոգեբանական (հուզական) անգիտակցական մղումներով պայմանավորվածություն (հոգեբանական պարադիգմա): Պետք է նշել սակայն, որ իրավահասկացողության այս բոլոր տիպերը նշանավորում են իրավունքի տեսության՝ որպես հասարակական գիտության մինչդասական և դասական շրջանը[2]: Այս բոլոր պարադիգմաներում իրավունքի հիմնական սուբյեկտը՝ անհատ մարդը, շատ փոքր դերակատարում ունի իրավունքի ձևավորման գործընթացում, իրավունքն իր էությամբ և բովանդակությամբ ի վերջո համարվում է նախատրված, պայմանավորված բազում օբյեկտիվ գործոններով և սուբյեկտիվ գործոններով, բայց չկախված իրավունքի հասցեատիրոջից: Մարդը, լինելով սուբյեկտիվ իրավունքի սուբյեկտ, օբյեկտիվ իրա-

---

[1] Տե՛ս, օրինակ, **Проблемы общей теории права и государства:** Учебник для вузов / Под общ. ред. В. С. Нерсесянца, М., 2004, էջ 135:

[2] Իրավունքի տեսության՝ որպես գիտության զարգացման շրջանների մասին ավելի մանրամասն տե՛ս **Разуваев Н. В., Современная теория права в поисках постклассической парадигмы познания,** Правоведение, N 5(316), 2014, էջեր 137-151:

վունքի օբյեկտ է՝ հանձին հասարակական հարաբերություններում իր վարքագծի:

Դժվար է չհամաձայնել այն մտքի հետ, որ ավանդական իրավագիտությունն իր մինչդասական և դասական պարադիգմաներով հետ է մնում այն գործընթացներից, որոնք ընթանում են բնական գիտություններում, ինչպես նաև որոշ հասարակական գիտություններում, ինչը նշանակում է, որ իրավունք երևույթի գիտական իմաստավորումը ոչ բոլոր դեպքերում է համապատասխանում 21-րդ դարի հասարակական-իրավական իրականությանը: Ժամանակակից գիտության կենտրոնում են հարաբերականությունը և մարդը՝ որպես ստեղծարար, այլ ոչ թե օբյեկտ: Հետևաբար, ժամանակակից իրավագիտության շրջանակներում իրավունքի տեսության կողմից պետք է ուսումնասիրության առարկա դարձվեն իրավունքի նոր որակներ, մասնավորապես՝

- կարգավորման ներուժը, որն ունակ է բերելու սոցիալապես նշանակալի փոփոխության, մարդու համար ստեղծելու իր իրավունքների լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ,
- բարդ համակարգ և բարդ համակարգի տարր լինելը՝ մյուս տարրերի հետ (օրինակ՝ սոցիալական նորմերի) փոխգործակցության և փոխկապվածության պայմաններում,
- մարդու համար, սակայն նաև մարդու միջոցով ձևավորվելը և այս գործընթացի վրա ազդող բազմաթիվ դետերմինանտների անհրաժեշտ և պատահական ազդեցության գնահատումը:

Այս և այլ կարևոր առումների գիտական հիմնավորումը հնարավոր չէ ավանդական իրավագիտության շրջանակներում: Ավելին, իրավագիտությունը գիտության այլ ճյուղերից «մաքրազերծելու» ջանքերը երբեմն լիովին հեռացնում են իրավունքի տեսությունը կյանքից և բացառում են դրա նվաճումների գործնական կիրառությունը: Ռոմաշովը դիպուկ նշում է. «Մենք՝ տեսաբաններս, ձգտելով «մաքուր իրավունքին», վեր ենք ածվում իրավագիտության սխոլաստների, իսկ դա հանգեցնում է մեր գիտական ձեռքբերումների նկատմամբ հետաքրքրության բացակայությանը թե՛ ճյուղային իրավաբանական գիտությունների ներկայացուցիչների և թե՛ պրակտիկ իրավաբանների կողմից»[1]: Առաջանում է գիտության և պրակտիկայի

[1] Տե՛ս **Ромашов Р. А., Интегральная юриспруденция и энциклопедия права: историко-методологический анализ,** Правоведение, N 3 (308), 2013, էջ 107:

միջև այն խորը անջրպետը, որի գիտակցման և հաղթահարման խնդրի առջև կանգնած ենք այսօր բոլորս։

Իրավաբանական գիտության վերջին տասնամյակների զարգացումները ցույց են տալիս, որ իրավունքն իսկապես դիտարկվում է որպես բարդ համակարգ և հետևաբար չի կարող համակողմանիորեն ուսումնասիրվել իր՝ հասարակական հարաբերությունների վրա ունեցած ներգործության տեսանկյունից, եթե չդարձվի միջճյուղային գիտական ուսումնասիրության առարկա։ Ժամանակակից աշխարհում, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է, և բոլոր տարրերը գտնվում են սիներգիայի գործընթացների մեջ, իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորչի դերը, նշանակությունը և իրական ներուժը պետք է նորովի իմաստավորվեն այնպիսի մոտեցման ու մեթոդաբանության և, վերջապես, իրավունքի տեսության այնպիսի նոր պարադիգմայի տեսանկյունից, որը համահունչ է բարդ համակարգերի տեսությանը և արդի իրողությունների թելադրանքին[1]։ Իրավունքի իմաստի և բովանդակության փնտրտուքն այսօր շարունակվում է հավանականությունների տեսության, խաղերի տեսության և այլ մաթեմատիկական-տնտեսագիտական գործիքակազմերի կիրառմամբ, սոցիալական նորմերի և սոցիալական փոփոխության մասին սոցիոլոգիական ուսմունքների շրջանակներում, գեշտալտ հոգեբանության և այլ գիտությունների նվաճումների կիրառմամբ։ Այս մոտեցումը հանգեցրել է որոշ զարգացումների նաև իրավունքի տեսության շրջանակներում։ Որոշ տեսաբանների կողմից առաջ են քաշվել իրավունքի տեսության նոր պարադիգմաներ, օրինակ՝ իրավունքի կոմունիկատիվ (հաղորդակցական) տեսությունը և հայեցակարգը[2], նորովի իմաստավորվում է իրավունքի ինտեգրալ տեսութ-

---

[1] Տե՛ս **Taron V. Simonyan,** "Nash Equilibrium as a Mean for Determination of Rules of Law (for sovereign actors)", Journal of Scientific Articles dedicated to the 80th anniversary of the Faculty of Law (YSU), էջ 19։

[2] Տե՛ս **Поляков А. В., Коммуникативная концепция права (генезис и теоретико-правовое обоснование):** диссертация на соискание учебной степени доктора юридических наук в виде научного доклада. СПб., 2002, ինչպես նաև՝ **Архипов С. И.,** Коммуникативная теория права А. В. Полякова, Российский юридический журнал, 2016, N 4, էջեր 20-27; **Кравиц В.,** ***Юридическая коммуникация в современных правовых системах (теоретико-правовая перспектива)***, Правоведение, N 5, 2011 և այլն։

յունը. իրավունքի տեսությունը նույնպես դինամիկ զարգանում է: Ամեն դեպքում, նույնիսկ անկախ տիրապետող պարադիգմաներից՝ անվիճելի է, որ իրավունքի տեսությունը լայն իմաստով կարող է միայն շահել՝ օգտագործելով գիտության այլ ճյուղերում արտաքնապես դրսևորվող վարքագծի և հասարակական հարաբերությունների հետազոտման տեսությունները, մեթոդաբանությունն ու գործիքակազմը:

Որպես օրինակ անդրադառնանք կիրառական մաթեմատիկայի ճյուղ հանդիսացող խաղերի տեսությանը: Դրա կիրառումը տնտեսագիտությունում, միջազգային հարաբերությունների և սոցիոլոգիայի ոլորտում արդեն իսկ տասնամյակների պատմություն ունի: Հասարակական գիտություններում խաղերի տեսությունը ծառայում է հիմնականում որպես կանխատեսման գործիք: Իրավունքի ներգործության օբյեկտը վարքագիծն է, հետևաբար իրավունքի կենսագործման համար ևս վարքագծի համար սահմանված չափորոշիչների պայմաններում կանխատեսումը, թե վարքագծի բոլոր հնարավոր տարբերակներից որ մեկը կընտրվի հասարակական հարաբերության մասնակիցների կողմից, շատ կարևոր է: Հետաքրքիր է, որ խաղերի տեսության նվաճումների կիրառումը հասարակական հարաբերությունների նկատմամբ հետապնդում է հենց կանխատեսման, այլ ոչ թե մաթեմատիկական ճշտությամբ վերիֆիկացման նպատակ[1]: Իրավունքի զարգացմանը զուգընթաց՝ մարդու իրավունքների իրավունքի առաջնայնության, ազատական-ժողովրդավարական արժեքների հաղթանակման, իրավական պետության և քաղաքացիական հասարակության հայեցակարգերի զարգացման, անհատի՝ որպես իրավական էակի և ինքնակառավարվող, ինքնակազմակերպվող քաղաքացիական հասարակության անդամի ճանաչման գործընթացները ընդլայնում են դիսպոզիտիվությունն ու բազմատարբերակությունը իրավունքում, ինչի պայմաններում իրավունքի կարգավորիչ ներգործության կանխատեսումը առավել ևս դառնում է կարևոր:

---

[1] Տե՛ս **Jessie Bernard,** "The Theory of Games", American Journal of Sociology 59 (1954), p. 412, հղումն ըստ **Richard Swedberg,** "Sociology and Game Theory: Contemporary and Historical Perspectives", Theory and Society, Vol. 30, N. 3 (June 2001), էջ 305:

Խաղերի տեսությունը իրավունքում կիրառելու վերաբերյալ կան մի շարք աշխատություններ, որոնցում հիմնավորվում է խաղերի տեսության հայեցակարգերի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ խաղի (մեր դեպքում՝ հասարակական հարաբերության) մասնակիցները՝ ինքնուրույնաբար որոշում կայացնողները, ենթադրաբար գործում են խելամիտ և ռացիոնալ[1]: Ինքնուրույնաբար և խելամտորեն (իր իրավունքների և օրինական շահերի գիտակցմամբ) գործելու կանխավարկածն ընկած է նաև իրավաչափ վարքագծի հիմքում, որովհետև իրավունքի տեսության շրջանակներում վերջինս կապվում է այնպիսի «գիտակցական» կատեգորիաների հետ, ինչպիսիք են՝ իրավագիտությունը (հատկապես՝ իրավական գաղափարախոսությունը) և իրավական մշակույթը: Հետևաբար, խաղերի տեսությունը իրավունքում կիրառելիս վերցվում է իրավունքի կարգավորման ոլորտում գտնվող խնդրո առարկա հասարակական հարաբերությունը և դիտարկվում որպես խաղ, ինչը հնարավորություն է տալիս կանխատեսելու և վերլուծելու իրավահարաբերության սուբյեկտների վարքագիծը:

Խաղերի տեսության շրջանակներում Ջոն Նեշի կողմից առաջարկված հավասարակշռության գաղափարը[2], թերևս, առանձին հետաքրքրություն է ներկայացնում իրավունքի կենսագործման տեսանկյունից: Ըստ Նեշի՝ ոչ համագործակցային խաղում, այսինքն՝ այնպիսի խաղում, որտեղ մասնակիցները հնարավորություն չունեն պայմանավորվելու, կամ չկա պայմանավորվածությունները կյանքի կոչելու որևէ գործուն մեխանիզմ, միշտ առկա է խաղացողների ռազմավարությունների այնպիսի համադրություն, որի պայմաններում խաղացողը չի կարող ավելի լավ ռազմավարություն և ավելի լավ արդյունք գրանցել առանց մյուս խաղացողների ռազմավարությունների փոփոխության: Այդ վիճակը կոչվում է Նեշի հավասարակշռություն, և այն ունի կայուն բնույթ, քանի որ խաղի պայմաննե-

[1] **Morten Hviid,** "Games Lawyers Play?", review of "Game Theory and the Law" by Douglas G. Baird, Robert H. Gertner and Randal C. Picker, Oxford Journal of Legal Studies, Vol. 17, N. 4 (Winter, 1997), p. 707-708.

[2] Նեշի հավասարակշռության տեսությունը (Nash equilibrium) լայն կիրառություն է ստացել տնտեսագիտության և սոցիոլոգիայի մեջ, դրա հեղինակ Ջոն Նեշը 1994 թ. արժանացել է Նոբելյան մրցանակի:

րում, երբ յուրաքանչյուրը հետապնդում է իր շահերը և գործում ինքնուրույն, Նեշի հավասարակշռության վիճակը առավել շահեկան և ապահով վիճակն է յուրաքանչյուրի համար, որտեղ նվազագույնի է հասցված այլ խաղացողների գործողությունների արդյունքում վնաս կրելու ռիսկը։ Յուրաքանչյուրը կայացնում է իր համար առավել շահեկան որոշումը՝ հիմք ընդունելով մյուսների վարքագծի մասին սեփական կանխատեսումները։ Իհարկե, Նեշի հավասարակշռության վիճակը բնավ չի հանդիսանում օբյեկտիվորեն լավագույնը խաղացողների համար։ Ավելին, ողջ խմբի համար այն կարող է լինել նաև բացասական։ Հարցն այն է, որ ավելի լավ արդյունք հնարավոր է միայն այն դեպքում, եթե խաղի մասնակիցները համագործակցեն ընդհանուրի և յուրաքանչյուրի համար ավելի մեծ բարիքի նպատակով։ Ոչ համագործակցային հարաբերության մեջ դա հնարավոր չէ։

Նեշի հավասարակշռության հայեցակարգը, փաստորեն, կիրառելի է այնպիսի հասարակական հարաբերության նկատմամբ, որի մասնակիցները իրավունքի նորմերով սահմանափակված լինելու պայմաններում ունեն վարքագծի որոշակի տարբերակներ ընտրելու հնարավորություն։ Այսինքն՝ Նեշի հավասարակշռությունը կիրառելի է իրավունքի դիսպոզիտիվ նորմերով կարգավորվող հասարակական հարաբերության նկատմամբ։ Ավելին, եթե ելնենք այն կանխադրույթից, որ իրավունքը սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի մեկ տարրն է միայն, իսկ մարդկանց վարքագիծը հասարակական հարաբերություններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարգավորվում է կամ ենթարկվում է համակարգի մյուս տարրերի, մասնավորապես՝ սոցիալական նորմերի ներգործության, ընտրությունը իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագծի սպեկտրում նույնիսկ իմպերատիվ նորմերի դեպքում ևս կարող է հետազոտվել խաղերի տեսության տեսանկյունից։

Քննարկենք այս դատողությունը ստորև ներկայացված օրինակի միջոցով։ Դատավորի վարույթում գտնվում է գործ, որի կողմերից մեկը դատավորի հարևանն է։ Դատավորը չի հայտնում ինքնաբացարկ։ Մյուս կողմը ներկայացնում է դատավորի ինքնաբացարկի միջնորդություն։

Դատավորի վարքագծի տարբերակներն են՝ ա) ընդունել միջնորդությունը և ինքնաբացարկ հայտնել, բ) մերժել միջնորդությունը և շարունակել քննել գործը։ Կողմի վարքագծի տարբերակներն են՝

ա) գործի քննության արդյունքներով բավարարված չլինելու դեպքում բողոքարկել վերջնական դատական ակտը վերաքննիչ դատարան, բ) դիմել Բարձրագույն դատական խորհրդում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտին՝ դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտման հիմքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ։

Քանի որ կողմը հարաբերության տվյալ փուլում կատարել է այն միակ քայլը, որ հասանելի էր իրեն իրավական կարգավորման շրջանակներում՝ ներկայացրել է դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը, և ռազմավարության փոփոխություն տեղի ունենալ չի կարող, քննարկենք դատավորի տեսանկյունից վարքագծի առավել օպտիմալ տարբերակը[1]։

1) Հասարակության մեջ դատավորը ընկալվում է որպես սխալի իրավունք չունեցող լավագույն մասնագետ. եթե դատավորը ինքնաբացարկ հայտնի, տպավորություն կստեղծվի, որ դատավորը փորձում էր կոծկել իր՝ անաչառ չլինելու հանգամանքը կամ բավարար չի տիրապետում օրենքին և դատավորի վարքագծի կանոններին, ինչը բացասաբար կանդրադառնա իր հեղինակության վրա. քանի որ դատավորի կողմից արդեն իսկ թույլ է տրված խախտում՝ ինքնաբացարկի հիմքերի առկայության պարագայում ինքնաբացարկ չհայտնելը, դատավորի համար անբարենպաստ հետևանքների հավանականությունը կազմում է 100 տոկոս։

2) Եթե դատավորը ինքնաբացարկ չհայտնի, կողմը չի բողոքարկի դատական ակտը վերաքննիչ դատարան այդ հիմքով, եթե դատական ակտը կայացվի իր օգտին, բողոքարկվելու դեպքում, հնարավոր է, վերաքննիչ դատարանը չգտնի, որ առկա էր ինքնաբացարկի հիմք, կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտը կարող է չընդունել դիմումը՝ հիմնավորված չլինելու հիմքով և այլն. այսպիսով՝ հավա-

[1] Այս և այլ օրինակներում վարքագծի տարբերակները քննարկվում են ոչ թե իրավաչափության, այլ խաղերի տեսության տեսանկյունից, որի պայմաններով յուրաքանչյուր անհատ գործում է ինքնուրույն՝ իր շահերից ելնելով։ Տվյալ դեպքում դատավորի շահն այն է, որ չբացահայտվի իր կողմից թույլ տրված վարքագծի կանոնների խախտումը՝ ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում ինքնաբացարկ չհայտնելը։

նականությունը, որ դատավորը կկրի անբարենպաստ հետևանքներ, շատ ավելի փոքր է, քան 100 տոկոսը։

Ավելի քան հավանական է, որ դատավորը նման իրավիճակում կընտրի ինքնաբացարկ չհայտնելու ռազմավարությունը. հաշվի առնելով նաև կողմից շահերն ու գործելու հնարավորությունները՝ սա կստեղծի տվյալ հարաբերության շրջանակներում Նեշի հավասարակշռության վիճակ։

Արդյո՞ք Նեշի հավասարակշռության վիճակը իրավահարաբերության շրջանակներում նպաստում է իրավունքի նորմի լիարժեք կենսագործմանը, այսինքն՝ այն սոցիալական բարիքին, որին ծառայում է նորմը։ Ակնհայտ է, որ դատավորի ընտրությունն այն իրավաչափ վարքագիծը չէ, որին ուղղված են դատավորի անաչառությունն ապահովող իրավական կարգավորները, ավելին, ստեղծված իրավիճակը շատ հեռու է այն սոցիալական բարիքից, որը պետք է ձևավորվեր կարգավորման արդյունքում՝ հասարակության վստահությունը դատական համակարգի անաչառության մեջ, արդարադատության շահերի հաղթանակը։ Նեշի հավասարակշռության պայմաններում յուրաքանչյուրը ստեղծված իրավիճակում գործում է իր համար «շահավետ» ձևով, սակայն տուժում է խմբի՝ հասարակության շահը՝ ի դեմ արդար դատաքննության։

Ո՞րն է խնդիրը։ Գործող իրավակարգավորումները նախատեսում են դատավորի ինքնաբացարկի ինստիտուտը, հստակ կարգավորում են ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը, դատավորի վարքագծի կանոնները և դրանց իրականացման կառուցակարգերը։ Մի կողմից, եթե քննության առնենք գործող կարգավորումները դրանց «իրավական» լինելու տեսանկյունից, ապա վերջիններս չեն խաթարում իրավունքի ընդհանուր սկզբունքները, չեն հակասում Սահմանադրությանը և միջազգային իրավունքի նորմերին։ Իրավակարգավորումները ընդունվել են սահմանված կարգով, դրանց ձևավորման գործընթացում կիրառվել և պահպանվել են այն բոլոր մեթոդներն ու ընթացակարգերը, որոնք ուղղված են իրավական կարգադրագրի այնպիսի բովանդակության ապահովմանը, որը հետագայում կկենսագործվի հասարակական հարաբերություններում (հանրային լսումներ, մասնագիտական քննարկումներ, իրավական ԿԱԳ և այլն)։ Այդուհանդերձ, իրավունքի կարգավորիչ գործառույթը չի կենսագործվում։ Իսկ սիստեմատիկորեն չկենսագործվող իրա-

վունքը ոչ այլ ինչ է, քան իրավունքի պատրանք: Ակնհայտ է նաև, որ այս արդյունքի հանգեցրել է հենց ինքը՝ իրավական կարգավորումը, որի վալիդությունը չի գնահատվել մարդկանց սոցիալական վարքագծի դետերմինանտների, շարժառիթների և նպաստող ու խոչընդոտող գործոնների տեսանկյունից: Իրավական կարգավորումը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Նեշի հավասարակշռությունը օբյեկտիվ օրինաչափություն է: Արդի իրավագետների մեծ մասն անվերապահորեն ընդունում է այն հիմնական պոստուլատը, որ մարդիկ գործում են բացառապես (կամ հիմնականում) սեփական շահերն առավել լիարժեք իրականացնելու տեսանկյունից: Եվ այդ դեպքում հարցերի հարցն այն է, թե ո՞րն է հասարակական բարիքը, և ի՞նչ եղանակով պետք է տրվի իրավական կարգավորումը, որպեսզի անհատների եսակենտրոն վարքագծերի համադրման արդյունքում իրավունքի նորմը տանի դեպի հասարակական բարիք[1]: Այս հարցի հստակ և արագ լուծումը կարևոր է նաև այն պատճառով, որ մարդիկ, որպես կանոն, հակված են կրկին և կրկին կիրառելու այն վարքագծային մոդելները, որոնք մեկ անգամ արդեն իսկ դրական արդյունքներ են տվել շահերի առավել բավարարման տեսանկյունից[2]: Իսկ բազմակի կիրառությունը կարող է ձևավորել սոցիալական նորմ, որի հետագա հաղթահարումը իրավունքի նորմի միջոցով դյուրին չի լինի:

Եթե այս տրամաբանությամբ մոտենանք խնդրին, իրավաձևավորման ժամանակ խնդրո առարկա հասարակական հարաբերության մասնակիցների կանխատեսվող վարքագծի տարբերակների և դրանց՝ Նեշի հավասարակշռության բացահայտումը հնարավորություն կտար առաջարկելու այնպիսի իրավակարգավորում, որը կհանգեցներ Նեշի հավասարակշռության կետի շեղման՝ նախանշելով վարքագծի լրացուցիչ տարբերակներ, կամ նախատեսելու համագործակցություն խթանող կարգավորում, քանի որ համագործակցությունը ինքնին խախտում է Նեշի հավասարակշռությունը դեպի ավելի լավ արդյունք և ավելի մեծ բարիք յուրաքանչյուր կողմի հա-

[1] **Lawrence E. Mitchell, "**Understanding Norms", The University of Toronto Law Journal, Vol. 49, No. 2 (Spring, 1999), p. 189.

[2] **Robert Axelrod,** "An Evolutionary Approach to Norms", The American Political Science Review, Vol. 80, No. 4 (Dec., 1986), p. 1096.

մար: Մեր բերած օրինակում պատկերացնենք, որ իրավակարգավորումը նախատեսում է ինքնաբացարկի միջնորդության քննարկման և լուծման այլ կարգ. բացի դատավորից՝ միջնորդությունը անանուն ձևով (դատական համակարգի ԻՏ համակարգի միջոցով) միաժամանակյա քննարկման է ներկայացվում ևս երկու դատավորների, որոնցից յուրաքանչյուրը պարտավոր է առաջարկել միջնորդության լուծման իր տարբերակը, որը ուղարկվում է գործը քննող դատավորին և միջնորդություն ներկայացրած կողմին: Առնվազն մեկի կողմից ինքնաբացարկի հիմք ճանաչվելու դեպքում գործ քննող դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Այսպիսի իրավակարգավորման դեպքում դատավորի համար վարքագծի տարբերակների ցանկը և անբարենպաստ հետևանքների հավանականությունը փոխվում են: Դատավորը գիտակցում է ինքնաբացարկի հիմքերի առկայության հավանական ճանաչումը մյուս դատավորների կողմից, իր կողմից հիմքերի չընդունման և միջնորդության մերժման դեպքում է այս անգամ անմիջապես հարց առաջանալու իր անաչառության կամ արհեստավարժության վերաբերյալ, ինչը կարող է նախականխիչ էֆեկտ ունենալ և դրդել դատավորին ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում ինքնաբացարկ հայտնել՝ չսպասելով կողմի միջնորդությանը: Նման պրակտիկան կնպաստի դատական իշխանության անաչառության վերաբերյալ վստահության ձևավորմանը:

Սույն հոդվածի շրջանակներում մեր նպատակը չէ առաջարկել դատավարական օրենսդրության կամ դատավորի վարքագծի կանոնների փոփոխություն: Այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը, ընդհակառակը, պետք է լուրջ քննության առնվի՝ ուսումնասիրելով դատական պրակտիկան, դատական կորպուսի ներկայացուցիչների հոգեբանական առանձնահատկությունները և կորպորատիվ մշակույթը, հանրության վստահության իրավիճակը և այլ հարցեր: Բերված օրինակը ցույց է տալիս, որ առանց նախապես գնահատելու այն ներգործությունը՝ հոգեբանական, տեղեկատվական, սոցիալական, տնտեսական, որն իրավակարգավորումը իր ձևով և բովանդակությամբ կունենա հասարակական հարաբերությունների մասնակիցների վրա (հենց մասնակիցների՝ իրավահարաբերության սուբյեկտների, որոնք ցուցաբերում են *կամային* վարքագիծ), հնարավոր չի լինի կանխատեսել իրավունքի նորմի կենսագործումը հասարակական հարաբերություններում: Կարելի է բերել բազում այլ օրի-

նակներ, որոնց մանրամասն վերլուծությունը հնարավոր չի լինի մեկ հոդվածի շրջանակներում:

Այսպիսով՝ ավանդական իրավագիտությունը չի տալիս պատասխան այն հարցին, թե ինչ է իրավական կարգավորման *որակը,* և ինչ չափանիշներով է հնարավոր այն գնահատել: Իրավագիտությունը «հասարակական հարաբերությունների կարգավորիչ», «իրավաչափ վարքագիծ», «սոցիալական կարգավորման համակարգ» երևույթները ուսումնասիրում է զուտ իրավական բնութագրերի շրջանակներում: Ինչպես արդեն նշվել էր, այսպիսի գծային, ճյուղային մոտեցումն այլևս հնարավորություն չի տալիս գիտական հետազոտության առարկա դարձնելու իրավունքի կենսագործման հիմնախնդիրն իր բոլոր հարթություններով, քանի որ իրավունքն ինքը բարդ համակարգ է: Հետևաբար, իրավունքի՝ հասարակական հարաբերությունների կարգավորման միջոցով ցանկալի հանրային բարիք ստեղծելու պայմանները պետք է հետազոտման առարկա դառնան իրավունքի տեսության կողմից՝ իրավաձևավորման և իրավունքի կենսագործման փոխկապակցված հիմնախնդիրների համատեքստում: Այս խնդիրը լուծելու համար իրավունքի տեսությունը կարող է հաջողությամբ հենվել այլ գիտությունների մեթոդական և գործիքային նվաճումների վրա՝ ադապտացնելով դրանք իրավական իրականության առանձնահատկություններին:

МЕЖОТРАСЛЕВЫЕ И ИНТЕГРАЛЬНЫЕ ПОДХОДЫ ТЕОРИИ ПРАВА К СОВРЕМЕННЫМ ПРОБЛЕМАМ РЕАЛИЗАЦИИ ПРАВА

Виктория Оганян

Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Данная статья посвящена рассмотрению вопроса о роли теории права в переосмыслении назначения права как социального регулятора и элемента соционормативного регулирования – не просто регулирования общественных отношений, а регулирования, направленного-наиболее эффективным способомна достижение общественного блага. Классические парадигмы теории права не действует при обсуждении и решении подобного вопроса, в связи с чем в статье обосновы-

вается необходимость применения межотраслевого интегрального подхода к изучению поведения человека в правоотношении, а также рассматривается возможность применения методологического инструментария других наук для этой цели. В частности, автором применяется концепция теории игр и равновесия Нэша в процессе прогнозирования поведения субъектов правоотношений, что является важнейшим условием для выработки адекватного правоположения и претворения в жизнь целей правового регулирования.

INTERDISCIPLINARY AND INTEGRAL APPROACHES TO CONTEMPORARY PROBLEMS OF REALISATION OF LEGAL NORMS

Victoria Ohanyan

Docent at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

The article refers to the role of legal theory in evolution of understanding the role of law as a social regulator and the element of socio-normative regulation of the society. This role is not just to ensure regulation, but rather ensure the most efficient regulation aiming at common good. Classical paradigms of legal theory do not allow for consideration of this issue, so the article argues the importance of applying interdisciplinary integral approach to examining human behavior in legal relationship, as well as presents the possibility to apply the methodology, tools and instruments, developed by other branches of science. In particular, the author analyses the application of game theory and Nash equilibrium in the process of predicting the behavior of people – parties of legal relationship, which is a vital prerequisite for elaboration of adequate legal rule and achievement of the goal of legal regulation.

Բանալի բառեր – ավանդական իրավագիտություն, միջճյուղային մոտեցում, բարդ համակարգ, խաղերի տեսություն, Նեշի հավասարակշռություն, իրավունքի կենսագործում

Ключевые слова: классическое правоведение, межотраслевой подход, сложная система, теория игр, равновесие Нэша, реализация права

Keywords – classical jurisprudence, interdisciplinary approach, complex system, game theory, Nash equilibrium, realization of legal norms

ԻՐԱՎԱԲԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ XXI ԴԱՐՈՒՄ. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարոն Սիմոնյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հասարակության զարգացման յուրաքանչյուր ժամանակաշրջան իր հետ բերում է նոր մարտահրավերներ, որոնք հանդիսանում են և՛ խոչընդոտ հասարակության զգալի թվով անդամների համար ինքնադրսևորման, մասնագիտական գիտելիքների ու հմտությունների իրացման համար, և՛ միաժամանակ այդ նույն մարդկանց ընձեռում են ինքնակատարելագործվելու, նոր իրականությանը հարմարվելու և սեփական աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու հնարավորություն:

Նման խնդրի առջև կանգնել է նաև ժամանակակից իրավաբանը, ով տնտեսագետի, ֆինանսիստի, հաշվապահի և այլ մասնագետների հետ միասին այլևս կարիք չունի ժամանակ ծախսելու և զբաղվելու իր մասնագիտական աշխատանքի այն մասով, որն իր բնույթով տեխնիկական է կամ կիսատեխնիկական: Եվ սա օրինաչափ է, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը ներթափանցել է նաև հումանիտար գիտությունների բնագավառ և այդ գիտելիքների գործնական կիրառման ոլորտ:

Այն հեղափոխությունը, որի մասին խոսում էր Ալվին Թոֆլերն իր «Երրորդ ալիք» աշխատանքում, արդեն իրականություն է: Եթե հասարակությունների և ընդհանրապես քաղաքակրթությունների զարգացման առաջին փուլը գյուղատնտեսական արտադրանքի և դրանով պայմանավորված սոցիալ-տնտեսական համակեցության ժամանակաշրջանն էր, իսկ երկրորդը՝ արդյունաբերականը, ապա, ըստ նրա, երրորդ ալիքը, որը հեղափոխում է մարդկային համակեցությունը, վերաիմաստավորում է այն և դնում նոր քաղաքակրթության գաղափարախոսական և փաստական հիմքերը, տեղեկատվականն է, այլ կերպ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանը[1]: Նման հեղափոխության մասին է խոսել նաև տնտեսագետ Կլաուս Սչուաբը իր «Չորրորդ արդյունաբերական հեղափոխութ-

[1] Մանրամասն տե՛ս Alvin Toffler, The Third Wave, Bantam Books, 1989:

յուն» աշխատանքում[1]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բերած փոփոխությունները, ըստ էության, տարածվում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ ձևափոխելով և վերաիմաստավորելով անգամ մարդու աշխատանքը, ինչը հասարակական համակեցության էութենական հիմքերից է:

Այդ նույն տեխնոլոգիաներն են նաև պատճառ հանդիսանում կյանքի արագացման, ինչը չի կարող չանդրադառնալ ընդհանրապես մարդու և հասարակության կյանքի իմաստավորման վրա:

Շատերն ասում են, թե հասարակական կյանքի արագացումն ուղիղ համեմատական չէ տեխնոլոգիաների զարգացմանը: Սակայն համաձայն չենք այս տեսակետի հետ, քանի որ կյանքի արագությունը պայմանավորող գործոններից մեկը, եթե ոչ ամենակարևորը, տեղեկատվությունն է: Այսինքն՝ պայմանավորված նրանով, թե ինչքան տեղեկատվություն է հասանելի դառնում մարդուն և հասարակությանը կոնկրետ ժամանակահատվածում, ժամանակի ընթացքն այդ մարդու և հասարակության համար արագանում է: Այլ կերպ ասած՝ մարդու բանականության համար ժամանակի ընթացքը չափվում է ընկալված տեղեկատվության քանակով, և մարդը մեկ օրում կարող է ապրել մեկ տարվա կյանք, եթե այդ մեկ տարվա տեղեկատվությունը նա ընկալում է այդ մեկ օրում և դարձնում սեփական կենսափորձի մասը:

Այս երևույթը բնորոշ է մեր իրականությանը, ինչն առավել ընդգծված է դառնում և սրվում հասարակությունների և պետություններ անցումային փուլերում, երբ արժեքների վերաարժեքավորման գործընթացներ են տեղի ունենում, փոխվում են հասարակության անդամների անհատական և սոցիալական կենսիմաստն ու աշխարհընկալումը՝ ընդհանրապես, և իրավամտածողությունն ու պետությունում, հասարակությունում սեփական դերի որոշակիացումը՝ մասնավորապես: Այդ է պատճառը, որ *«մեր օրերում գիտական հետազոտությունների հիմնական շեշտադրումը սուբստանցիայից տե-*

[1] Klaus Schwab, “The Fourts Industrial Revolution”, World Economic Forum, Geneva, 2016.

դափոխվել է հարաբերություններ, կապեր, ժամանակ»[1]: Այս հարցն առավել մանրամասն ներկայացրել ենք մեր նախկին աշխատանքներում[2]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման հետևանքով առաջացած մարտահրավերները չեն շրջանցել նաև իրավաբանին և իրավաբանի մասնագիտությունը:

Ինչպես սոցիալական փոփոխություններից բխած մարտահրավերների մեծ մասը, այնպես էլ իրավաբանին ուղղված նշված մարտահրավերներն առաջին հայացքից թաքնված են կամ քողարկված: Եվ դրանք տեսանելի են դառնում միայն այն ժամանակ, երբ արդեն *իրենց գործն արել են* ու մեծ թվով մասնագետների թողել *խաղից դուրս*՝ զրկելով նրանց սեփական մասնագիտությամբ հասարակությանը պիտանի և օգտակար լինելուց ու գումար վաստակելու հնարավորությունից:

Իրավաբանի մասնագիտության ապագան սկսվել է դեռևս մոտ երկու տասնամյակ առաջ, երբ տեխնոլոգիական զարգացման պայթյունի հետևանքով սկսեցին հանրայնացվել անհատական համակարգիչներն ու տեղեկատվության փոխանցման էլեկտրոնային եղանակները:

Որպես երկրորդ փուլ՝ առաջացան իրավաբանական փաստաթղթերի համակարգման ու փոխանցման, դրանց կառավարման, իրավաբանական գրասենյակների ներքին աշխատանքների կազմակերպման, դատավարություններում ընթացքի արձանագրման, հաճախորդներին էլեկտրոնային եղանակով հեռահար իրավաբանական ծառայությունների մատուցման, հեռահար իրավաբանական ուսուցման կազմակերպման և այլ համակարգչային ծրագրերը:

Զարգացման հաջորդ փուլը կարելի է համարել մեծ իրավաբանական տեղեկատվական բազաների ձևավորումը. օրինակ՝ էլեկտրոնային իրավաբանական գիտական գրադարաններ, դատա-

[1] I. Prigogine, I. Stegers, Order Out of Chaos: men's new dialogue with nature, Bantam Books, 1984 կամ Пригожин И., Стегнерс И., Порядок из хаоса: Новый диалог человека с природой. М., "Прогресс", 2003, с. 49:

[2] Մանրամասն տե՛ս Տ. Վ. Սիմոնյան, Ժամանակի ընկալման և սոցիալական սկզբնական և ընթացիկ հիշողության դերը անկայուն և անցումային հասարակություններում, 2011, հոդված «Պետություն և իրավունք», թիվ 1(51), Երևան, 2011, էջ 56-67:

կան ակտերի բազաներ կամ այլ կերպ ասած՝ «իրավաբանական հիշողության» մեծ տեղեկատվական կենտրոններ (big data center), ինչպես օրինակ՝ https://www.lexisnexis.com, https://legalresearch.westlaw.co.uk և այլն:

Զարգացման մյուս փուլն արդեն իրավաբանի մասնագիտության բնագավառում հեղափոխության թագն ու պսակն է, որովհետև այս փուլում ձևավորվում են իրավաբանին ոչ թե աջակցող և նրա աշխատանքը թեթևացնող տեխնիկական միջոցներն ու հնարավորությունները, այլ արդեն ի հայտ են գալիս նրան ինչ-որ կերպ փոխարինող ծրագրեր: Մեծ տեղեկատվական կենտրոններում հավաքված տեղեկատվությունը սկսվում է վերլուծվել, և արդյունքում հնարավոր է դառնում ծրագրում ներդրված ալգորիթմների շնորհիվ կատարել իրավաբանական վերլուծություններ, կազմել իրավաբանական փաստաթղթեր և ստանալ առաջադրված հարցերի պատասխան առանց մարդու ուղեղի անմիջական մասնակցության:

Իհարկե, այս համակարգերը ևս ունեն զարգացման փուլեր, և սկզբնական փուլում դրանք պարզապես մեխանիկական վերլուծություն ենթադրող ալգորիթմներով են աշխատում և հետո նոր միայն արհեստական բանականության տարրեր ունեցող ալգորիթմներով:

Ընդհանրապես արհեստական բանականությունը լայն հասկացություն է: Ավելի ընդարձակ ձևով այն կարելի է բնորոշել որպես իրականության ինչ-որ ասպեկտների մոդելավորման համար տեղեկատվության վերլուծության գործիք: Այս մոդելներից բխող եզրակացությունները հետագայում օգտագործվում են ապագա հնարավոր իրադարձությունները կանխատեսելու և ակնկալելու համար: Վիճակագրական մոդելները ստեղծվում են՝ մի շարք ալգորիթմներ օգտագործելով, կամ քայլ առ քայլ հրահանգներով, որոնց համակարգիչը կարող է հետևել՝ որոշակի խնդիրներ լուծելու համար[1]:

Այսօր ժամանակի ոգին գիտակցող և իրավաբանական մասնագիտության ներկայի ու ապագայի մարտահրավերները որոշակիացնող առաջատար իրավաբանական հանրույթներում, որոնք հանդես

[1] Artificial Intelligence: opportunities and implications for the future of decision making, Government Office for the Science, United Kingdom https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/566075/gs-16-19-artificial-intelligence-ai-report.pdf

են գալիս որպես իրավական արժեքներ ստեղծողներ, ամենաշատ քննարկվող թեմաներից մեկն արդեն մասնագիտության վրա սպասվող ազդեցությունն է, որ կարող են ունենալ գերարագ համակարգիչները մարդու բանականության կրկնօրինակման և որոշումների ընդունման իրենց ունակություններով, այլ կերպ՝ արհեստական բանականությամբ:

Այս ոլորտի վերջին փորձերից կարելի է նշել ամերիկյան IBM ընկերության Watson «ճանաչողական համակարգչային համակարգ» ծրագիրը[1], որն օգտագործվում է բժշկության մեջ հիվանդությունների ախտորոշման, ֆինանսական շուկաներում, իրավունքում և մի շարք այլ ոլորտներում տեղեկատվության վերլուծության բնագավառում, հայկական ELL Partnership իրավաբանական գրասենյակի «Էլեկտրոնային դատարան» իմացական համակարգչային ծրագիրը[2], որը համապատասխան հարցադրումների միջոցով վերլուծում է ներբեռնված օրենսդրական ու նախադեպային տեղեկատվությունն ու տալիս գործն ըստ էության լուծող դատական ակտեր և այլն: Իհարկե, ոչ բոլոր ծրագրերի ոչ բոլոր մասերն են պարունակում արհեստական բանականության տարրեր, սակայն դրանցում արդեն մարդու ուղեղի ճանաչողական, իմացական, գնահատողական և վերլուծական գործառույթներին փոխարինող սաղմերն արդեն կան:

Արհեստական բանականությունն իրավաբանների կողմից օգտագործվել և օգտագործվում է նաև կանխատեսումների համար: Այսպես՝ 2014 թ. Չիկագո-Քենտի Իրավունքի քոլեջի պրոֆեսոր Դանիել Մարտին Կատզը Միչիգանի պետական համալսարանի իրավունքի դպրոցի իր գործընկերների հետ ձևավորեց ալգորիթմ, որը կանխատեսում էր ԱՄՆ Գերագույն դատարանի գործերի հնարավոր որոշումները: Մոտ ութ հազար վերլուծված գործերով այն տվեց 70 տոկոս ճշգրտություն[3]:

Կանադայի իրավաբանների ասոցիացիան 2014 թ. իր զեկույցում ընդգծեց իրավաբանական բարեփոխումների անհրաժեշտությունը և շեշտեց, որ կենսունակ, մրցունակ և արդիական իրավաբա-

[1] https://www.ibm.com/watson/

[2] http://e-sud.ru/, http://e-court.org

[3] Julie Sobowale, How artificial intelligence is transforming the legal profession, http://www.abajournal.com/magazine/article/how_artificial_intelligence_is_transforming_the_legal_profession

նական մասնագիտության բանալին նորարարությունն է[1]:

Իրավաբանության բնագավառում արհեստական բանականության կարևորությունն ու արդիականությունն այնքան են ընդգծված, որ ոլորտի առաջավոր մասնագետներն արդեն պարբերական են դարձրել «Արհեստական բանականությունն արդարադատության համար» թեմայով ամենամյա համաժողովները (Atificial Intelligence for Justice – AI4J)[2], «Արհեստական բանականություն և իրավունք» գիտական հանդեսների[3] տպագրումը և այլն:

Այս ամենից ելնելով (ընդգծելով նաև մեր ցանկությունը)՝ հայկական իրավաբանական դպրոցը (իր գիտական և գործնական թևերով) չպետք է լինի աշխարհի առաջատար իրավաբանական դպրոցների ստեղծած արժեքների միայն սպառողը, այլ նաև ինքը պետք է մասնակցի այդ արժեքների ստեղծմանը, եթե հնարավոր է, ինքը լինի առաջամարտիկը (քանի որ նման նախադրյալներ ու ներուժ առկա են): Գտնում ենք, որ մեզանում ևս պետք է ճիշտ գնահատական տրվի այն իրավական զարգացումներին, որ տեղի են ունենում մեր շուրջը, և գիտակցվեն իրավաբանական մասնագիտության բնագավառում արդի ձևափոխումները, իրավաբանական շուկայի փոփոխվող կառուցվածքը և դրանից բխող պահանջները: Միայն այս ամենից հետո մենք կկարողանանք լիարժեք մասնակցություն ունենալ իրավաբանական մասնագիտության զարգացման համընթաց գործընթացին, այլ ոչ թե գոհանալ հետնապահներից առաջ լինելու ոչ այդքան պատվավոր տեղով:

Իսկ եթե մենք հետ մնանք իրավաբանական շուկայի և իրավաբանական մտքի արդի զարգացումներից, ապա նորից ստիպված կլինենք հաշտվել իրավաբանական զարգացումների հետևանքների հետ և տեսական կամ գործնական ազդեցություն չունենալ հնարավոր զարգացումները պայմանավորող գործոնների վրա: Իսկ այս իրավիճակներում մեր իրավաբանները պետք է «խաղան» այն կանոններով, որոնց հեղինակները իրենք չեն, և բնականաբար այս դեպքերում իրավաբանական մասնագիտության դափնեպսակը եր-

[1] Futures: Transforming the Delivery of Legal Service in Canada, The Canadian Bar Association, https://www.cba.org/CBAMediaLibrary/cba_na/PDFs/CBA%20Legal%20Futures%20PDFS/Futures-Final-eng.pdf

[2] http://www.ai.rug.nl/~verheij/AI4J/

[3] https://link.springer.com/journal/volumesAndIssues/10506

բեք չկրեն՝ հետք չթողնելով մասնագիտության զարգացման վրա, այլ միայն փորձեն հասնել դրա հետևից, քանի որ նման իրավիճակներում «հաղթում» կամ հաջողության հասնում են նրանք, ովքեր սահմանում են մասնագիտության «շուկայի» կանոնները կամ այդ կանոնները պայմանավորող արժեքները։

Վերոնշյալի լույսի ներքո փորձենք որոշակիացնել և հստակեցնել այն հիմնական գործնական մարտահրավերները, որ սպասվում են XXI դարի իրավաբանին։ Ներկայացված մարտահրավերներն ավելի շատ ընդգծված են մասնավոր ոլորտում աշխատող իրավաբանների համար։

ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ, որ կարելի է արդեն որոշակիացնել, տեխնիկական, կիսատեխնիկական կամ տեխնիկավերլուծական իրավաբանության վերացումն է՝ որպես իրավաբանի աշխատանք։

Ինչո՞ւ։ Խնդիրն այն է, որ իրավաբանական այն աշխատանքը, որը փորձում էր իրար կապել, վերլուծել նորմատիվ իրավական ակտերում, դատական որոշումներում առկա տեղեկատվությունը և դրա հիման վրա գալ եզրահանգումների, արդեն կատարվում է և հետագայում էլ ավելի կատարելագործված եղանակով պետք է կատարվի համակարգչային ալգորիթմների միջոցով։

Միջին կամ դրանից ցածր համալիրություն ու բարդություն ունեցող իրավական փաստաթղթերի, այդ թվում՝ պայմանագրերի կազմման համար ևս արդեն որոշ երկրներում կարիք չկա դիմելու իրավաբանի օգնությանը. նման փաստաթղթեր կարելի է ստանալ ինքնուրույն՝ անգամ ոչ իրավաբանական տերմիններով մուտք անելով ցանկալի հարաբերությունը և դրա ցանկալի կարգավորումը համապատասխան համակարգչային ծրագիր, իսկ վերջինս արդեն մաքուր իրավաբանական տերմինաբանությամբ կտրամադրի իրավական փաստաթուղթը։ Որպես օրինակ բերենք https://ebrevia.com/ ծրագիրը։

Ոչ շատ համալիր և բարդ հարցերով իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար որոշ երկրներում նորից կարիք չկա դիմելու իրավաբանի աջակցությանը, քանի որ դա արդեն հնարավոր է համակարգչային ծրագրերի շրջանակներում։ Որպես օրինակ բերենք IBM-ի Watson ծրագիրը։ Դատարան գնալուց առաջ կարելի է առանց իրավաբանի գնահատել սեփական հնարավորությունները՝ հասկանալով հայցը պնդելու և դրա բավարարումը ստանալու հա-

մար պահանջվող ապացույցների շրջանակը և այլն, որի հնարավորությունը Ռուսաստանի Դաշնության օրենսդրության շրջանակներում տալիս է ELL Partnership հայկական իրավաբանական գրասենյակի «Էլեկտրոնային դատարան» (e-court, e-sud) ծրագիրը։

Այստեղ հարց է առաջանում, թե արդյո՞ք նման ծրագրերը կարող են շատ ավելի լավ աշխատել, քանի իրավաբանի ուղեղը, որպեսզի կարողանան վերջինիս ամբողջությամբ փոխարինել։ Պատասխանը կարող է տարբեր լինել։

Նրանք, ովքեր կպնդեն, որ արհեստական բանականությունը կարող է շատ ավելի լավ աշխատել, կարող են հիմնավորել իրենց դիրքորոշումը նրանով, որ այդ նույն արհեստական բանականության կամ դրան նմանակող համակարգչային ծրագրերի ձևավորման, զարգացման համար աշխատում է ոչ թե մեկ իրավաբան, այլ դրանցում անընդհատության սկզբունքով աշխատում են իրավաբանների խմբեր, և այդ նույն ծրագիրը, փաստորեն, պարունակում է այդ բոլոր իրավաբանների ուղեղների հավաքական բանականությունը անընդհատ կատարելագործման ռեժիմում, ինչը շատ ավելի համալիր մտածողություն և որոշումների ընդունման ավելի ճկուն ու արդյունավետ կառուցակարգ կարող է ունենալ, քան մեկ իրավաբանի ուղեղը։

Նրանք, ովքեր կպնդեն, որ ամեն դեպքում համակարգչային ծրագիրը երբեք չի կարող ավելի արդյունավետ աշխատել, քան մարդու ուղեղը, կարող են հիմնավորել իրենց պնդումը այն փաստարկումով, որ, միգուցե, հեռավոր ապագայում արհեստական բանականությունն ինքնակատարելագործման հնարավորություն ևս ունենա, սակայն այն տեսանելի ապագայում ինքնագիտակցման հնարավորություն չի ունենա (թեկուզ անգամ անվտանգության շարժառիթներից ելնելով)։ Ինքնագիտակցության, դրանով պայմանավորված հուզական/զգայական ընկալման բացակայությունը կլինի այն հիմնական սահմանը, ինչը թույլ չի տա արհեստական բանականությանը համեմատվել և մրցակցել մարդու բանականության հետ իրենում առկա տեղեկատվության վերլուծության միջոցով առնվազն արդար և համալիր որոշումներ ընդունելու ասպարեզում։ Միգուցե, օգտագործելով հաշվողական և բանաձևային մտածողության ոլորտում իր գերակայությունը, *արդյունավետ* որոշումներ ընդունելու բնագավառում հարաբերության մասնակիցների շահերի հավասարակշռման միջոցով արհեստական բանականությունն առաջ անցնի մարդու

բանականությունից, սակայն այն դեռևս տեսանելի ապագայում չի կարող գերազանցել մարդու բանականությանն *արդար և համալիր* որոշումներ ընդունելիս։

Սակայն, այս ամենով հանդերձ, կարող ենք հիմնավոր համարել այն պնդումը, որ զարգացած և արագ զարգացող իրավական մշակույթ ունեցող հասարակություններում առնվազն մասնավոր իրավահարաբերությունների բնագավառում աշխատող իրավաբանների համար առկա մարտահրավերը արդիական է։

Իրավաբանական շուկան այսօր էլ նման հասարակություններում չի պահանջում և գնալով այլևս չի էլ պահանջելու, այսպես ասած, տեխնիկ-իրավաբաններին, ովքեր կատարում են տեխնիկական կամ կիսատեխնիկական աշխատանք՝ փնտրելով, գտնելով և իրար կապելով իրավական տեղեկատվության (նորմատիվ իրավական ակտեր, դատական որոշումներ, գործարար շրջանառության սովորույթներ, դոկտրինալ աղբյուրներ) ոլորտում առկա կամ այլ կերպ որոշակիացված վարքագծի կանոնները, քանի որ դա անում են համակարգչային ծրագրերը և անում են ավելի արդյունավետ։

Սա նման է արդյունաբերական հեղափոխությանը, երբ զարգացած արդյունաբերական պետություններում հաստոցները փոխարինեցին բանվորներին։ Իհարկե, բանվորների դասակարգը չվերացավ։ Պարզապես բանվորները սկսեցին կատարել մի փոքր ավելի ոչ տեխնիկական, մտավոր աշխատանք. սկսեցին սպասարկել այդ նույն հաստոցները կամ տեղափոխվեցին այլ աշխատանքների, որոնց պահանջարկն առաջացավ։

Նույնը պետք է տեղի ունենա և արդեն տեղի է ունենում զարգացած իրավաբանական շուկաներում։ Ստեղծագործ իրավաբանի աշխատանքն է կարևորվում, և նրա պահանջարկը մեծանում է, քանի որ կա՛մ նույն այդ համակարգերի հետևում կանգնած են նորարար իրավաբանները, կա՛մ էլ իրավաբանական շուկայում այն աշխատանքը, որ համակարգչային ծրագրերի կողմից չի կատարվում և չի էլ կարող կատարվել, ունակ են կատարելու միայն ստեղծագործ և համալիր մտածողություն ունեցող իրավաբանները։

Եվ այն, ինչ կատարվում է, կարելի է պատկերավոր բնորոշել **առաջին մարտահրավերի** կարգախոսով՝ **«անցնում է «տեխնիկ» իրավաբանների ժամանակաշրջանը, գալիս է ստեղծագործ իրավաբանների ժամանակաշրջանը»**։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ, որ ուղղված է XXI-րդ դարի իրա-

վաբանին, բխում է առաջին մարտահրավերից։ Եթե շուկան փոխում է իրավաբանին ուղղված իր պահանջները, ապա վերջինս պետք է կարողանա ստանալ այնպիսի կրթություն, որը նրան կդարձնի մրցունակ շուկայում, իսկ նրա աշխատանքը՝ պահանջված, և նա չի համալրի դիպլոմավորված գործազուրկների շարքը։

Այսինքն՝ երկրորդ մարտահրավերն արդեն գործնականում իրացվելու խնդիր ունեցող իրավաբանի միջոցով ուղղվում է կրթական համակարգին։

Սա արդեն արմատապես փոխում է ձևավորված այն պատկերացումները, որ ժամանակակից իրավաբանական ուսումնական հաստատությունները պետք է կրթեն և հասարակությանն ու պետությանը տրամադրեն խիստ պրակտիկ իրավաբաններ, ովքեր ամբողջ կրթական գործընթացում իրենց մեջ զարգացրել են միակողմանի մտածողությունը և խիստ կոնկրետ խնդիրների լուծման բացառապես գործնական հմտությունները։

Այն, ինչ պահանջում է զարգացող իրավաբանական շուկան, ստեղծագործ իրավաբանն է։ Կարծում ենք, որ փոքր քանակությամբ տեխնիկ կամ կատարող իրավաբանների, այսպես ասած՝ կրտսեր իրավաբանների պահանջարկը դեռևս կպահպանվի, ինչպես այսօր պահպանվել է բացառապես ուժային գործ անող բանվորական որոշակի աշխատուժի պահանջարկը, սակայն դա այնքան փոքր պահանջարկ կլինի, որ ուսումնական հաստատությունները նման կադրեր տալու խնդիր չեն ունենա։

Այս ամենը տանում է նրան, որ իրավաբանական կրթական հաստատությունները վերանայեն ուսումնական ծրագրերն այնպես, որ դրանց հիմնական նպատակը լինի ապագա իրավաբանի մոտ գնահատողական, վերլուծական և դրա հիման վրա ստեղծագործական ունակությունների ձևավորումը։ Սա, իհարկե, չի նշանակում, որ պրակտիկ/գործնական առարկաները պետք է բացառվեն ապագա իրավաբանի կրթական ծրագրից, և մենք, ըստ էության, կրկին հետ ենք գնալու նախկինում տարածված խիստ տեսական կրթության տրամադրմանը։ Հակառակը, այդ առարկաները պետք է վերամշակվեն և բարձրացվեն այն մակարդակի, որ իրավաբանի գործնական հմտությունները հավասարեցվեն «այբբենարան իմանալուն» և հասցվեն վերլուծական ու ստեղծագործական ունակություններ ձևավորելու հմտության մակարդակ։ Այլ կերպ ասած՝ կրթական գործընթացն այնպես պետք է կազմակերպվի, որ ապագա իրավա-

բանն ունենա և՛ տեսական, և՛ գործնական բարձր գիտելիքներ, և դա արվի այնպես, որ իրավունքի տեսության և պրակտիկայի սահմանը գրեթե վերանա նրա համալիր մտածողությունում, դրանք դառնան միևնույն երևույթի տարբեր կամ նույնական որակները՝ կախված դիտարկման պայմաններից։ Միայն այդկերպ հնարավոր կլինի կրթության արդյունքում ստանալ ստեղծագործող իրավաբան, ով կլինի XXI դարի ամենապահանջված իրավաբանը։

Իսկ այն խնդիրը, որ դնում է այս մարտահրավերը իրավաբանական կրթական համակարգի առջև, կարելի է կրկին պատկերավոր բնորոշել որպես «**ժամանակից մեկ քայլ առաջ քայլող իրավաբան ձևավորելու առաջադրանք**»։

ПРАКТИЧЕСКИЕ ВЫЗОВЫ ЮРИСТОВ В XXI ВЕКЕ: ИСКУССТВЕННЫЙ ИНТЕЛЛЕКТ

Тарон Симонян

Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Современное ускоренное развитие информационных технологий влияет на все сферы социальной и индивидуальной жизни. Юридический рынок, наряду с юридической профессией, не является исключением. В последнее время одной из самых горячих тем в правовых кругах является ожидаемое влияние на профессиююриста когнитивных компьютерных систем с суперэффективными программными алгоритмами, которые способны моделировать человеческий интеллект и принимать решения, также известный как «искусственный интеллект». Искусственный интеллект меняет образ мышления юристов, способ ведения бизнеса и взаимодействие с клиентами. Это должно восприниматься более, чем просто юридическая технология. Несомненно, это будет следующим революционным шагомв юридической профессии. Искусственный интеллект выделяет то, что потенциал для будущих изменений будет состоять в изменениях парадигмы юридических работ. Все эти процессы могут идти в ногу с некоторыми новыми вызовами, что не нужно воспринимать как неожиданность, так как эти вызовы весьма ожидаемы.Цель статьи – это определение возможных вызовов и проблем, с которыми могут столкнуться

юристыв XXI веке, а также качеств, необходимых для юриста, чтобы оставаться востребованным на профессиональном рынке и в обществе в целом.

THE PRACTICAL CHALLENGES OF A LAWYER IN THE XXI CENTURY. ARTIFICCIAL INTELLIGENCE

Taron Simonyan
Docent at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

The current acceleration in the information technologies shapes almost all areas of social and individual life. Meanwhile, the legal market, along with the legal profession, are not an exclusion. One of the hottest topics in the legal community of late is the expected impact on the profession of cognitive computer systems with super effective software algorithms that have capacity to simulate human intelligence and decision-making, a.k.a. "artificial intelligence". The artificial intelligence is changing the way lawyers think, the way they do business and the way they interact with clients. It can be considered as more than legal technology. It is the next great step that will revolutionize the legal profession. What makes artificial intelligence stand out is the potential for a paradigm shift in how legal work is done. All these processes bring challenges with them and they must be met not with a surprise but with an anticipation. The article tries to determinate possible challenges, which will be faced by a lawyer in XXI century and tries to define the necessary qualities s/he must have in order to be demanded by the legal market and society.

Բանալի բառեր – արհեստական բանականություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, իրավաբանական մասնագիտություն, իրավաբանական շուկա, իրավաբանների գործնական մարտահրավերներ
Ключевые слова: искусственный интеллект, информационные технологии, юридическая профессия, юридический рынок, практические задачи юристов
Key words: artificial intelligence, information technologies, legal profession, legal market, lawyers' practical challenges

К ВОПРОСУ О МЕХАНИЗМЕ ВЛАСТИ КАК О СТРУКТУРНОМ ЭЛЕМЕНТЕ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ ОБЩЕСТВА

Ваге Геворкиян

Асистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Вопрос о первейшем элементе общества находился в центре внимания философии и обществоведческой науки. Только в XIX веке этот вопрос проявился в учении К. Маркса и школе Питирима Сорокина. Как отмечал Маркс, «общество не состоит из индивидов, а выражает сумму тех связей и отношений, в которых эти индивиды находятся друг с другом»[1].

Таким образом, первейший и важнейший элемент общества Маркс усматривал в общественных связях и складывающихся на их основе отношениях между людьми как членами общества. Подобную же позицию к первейшему элементу общества занимал и Питирим Сорокин: «Индивид представляет собой лишь физический, биологический или психологический феномен, а социальные связи и отношения обозначены и представляют собой «значимое человеческое взаимодействие»»[2].

Таким образом, при двух подходах первейший элемент (клеточка, атом) общества заключается в общественных связях и отношениях, общих для всех социокультурных явлений. Любое взаимодействие людей является необходимой общественной формой, называемой общественным отношением. Общественные отношения являются объективной реальностью, независимой от воли и сознания людей, производящих и воспроизводящих в процессе своей деятельности общественные блага. Общество являет собой сложную систему разнообразных общественных отношений. Оно представляет собой сложную социальную систему, способную к самоуправлению. Способность к саморегулированию заключается в наличии в каждой из частей системы

[1] Маркс К., Энгельс Ф., Сочинения, Т. 46, Ч. 1, С. 214.

[2] Сорокин Питирим, Человек. Цивилизация. Общество, М., 1992, С. 192.

особых подсистем управления в виде определенных механизмов, органов и институтов. Роль подсистемы управления чрезвычайно важна, т.к. именно она обеспечивает интеграцию всех компонентов системы, делая возможным их согласованное действие. Общество, как целостная социальная система выполняет по отношению к себе две функции:

во-первых, функцию сохранения системы, ее устойчивое состояние. Данная функция, называемая гомеостазом, направлена на воспроизводство системы.

во-вторых, функцию совершенствования системы, ее оптимизацию.

По мере усложнения и развития общественной жизни возникла необходимость в управлении такого уровня и качества, которые были бы в состоянии обеспечить мирное сосуществование разнообразных социальных страт, находящихся в отдельных, существенно отличающихся друг от друга, условиях жизни и их социального действия, не нарушающего сложившиеся рамки социальной системы.

Социальная асимметрия привела к дифференцированной структуре интересов и потребностей, востребовавших таких механизмов регуляции, которые в состоянии преодолевать конфликты интересов, выделяя среди них общезначимые и групповые в качестве доминирующих и первостепенных. Реализация указанных интересов и преодоление их конфликтов формирует объективные условия для выделения особой сферы социальной жизни, являющей собой более развитый и сложный уровень социальности, политическую сферу и соответствующие ей политические институты.

Сфера политики (политическая сфера общества) при широком толковании – политическое общество, формируется объективно при определенных объективных условиях экономического, культурно-технического, социального развития и условия существования в нем определяют более высокий тип, т.е. второй уровень социальности, формирование которого началось в доисторический период человеческой истории с утверждением производящей экономики и с появлением прибавочного продукта производства как предпосылки становления частной собственности.

Таким образом, специфика политики как сферы социальной жиз-

ни связана прежде всего с ее способностью (возможностью, социальной потенцией) обеспечивать целостность общества, преодолевать конфликт интересов, согласовывать группы интересов, что способствует оптимальному регулированию социального воздействия. Подобный взгляд на политику как сферу социальной практики, обеспечивает коммуникативный подход, рассматривающий ее как универсальное средство обеспечения целостности социума и, одновременно, механизма регулирования конфликтов в нем.

Взгляды Аристотеля на политику как сферу интеграции частей и сегментов общества на основе реализации общественного интереса, осуществляемого государственной властью, заложили традицию понимания политики как сферы интеграции всех граждан в сообщество. Такое понимание политики является наиболее распространенным в настоящее время и, пользуясь правовой терминологией, «должной», социально востребованной.

Формируемые данной сферой социальной реальности институты, учреждения и нормы их организации и деятельности постепенно объединяются в систему, имеющую незаменимое значение и роль для организации, управления и стратегического развития общества.

Не вдаваясь в подробности политологического подхода к политической системе общества, целесообразно при анализе структуры политической системы общества принять точку зрения, согласно которой «системный подход представляет собой одно из методологических направлений в политических исследованиях и его никак нельзя путать с политической системой, представляющей собой реальное образование. Это разноплановые вещи, которые нельзя смешивать без существенных издержек с точки зрения и достоверности результатов исследования»[1].

Обосновывая свою точку зрения, автор указывает, что начиная с середины прошлого века (50-х годов XX века) одним из важнейших методологических инструментов анализа считается системный анализ. Основоположники этого подхода американские политологи Д. Истон, К. Дойч, Г. Алмонд и др. – рассматривают понятия «политическая система» и «системный подход» как синонимы. «Такая точка

[1] Гаджиев К.С., Политология. Основной курс, М., 2005, С. 213.

зрения в значительной мере обеспечивает саму идею вычленения политической системы как самостоятельного феномена, обладающего собственными, только ему одному присущими характеристиками. При всех положительных характеристиках системного анализа, его недостатком является то, что он концентрирует внимание на ролях, функциях и взаимодействиях в ущерб изучению их субъектов, самой политической системы с ее институтами, структурами и их взаимоотношениями»[1].

Эволюция социальных систем ведет к их усложнению, а в данном случае и к выделению в ней сложного, многогранного явления, феномена современных государств, обеспечивающих ее устойчивость, стабильность и динамику развития. В современной юридической науке политическая система общества определяется как универсальная управляющая система государственно-организованного общества, компоненты которой связаны политическими отношениями и которая, в конечном счете, регулирует производство, экономические отношения, равно как и распределение социальных благ на основе использования государственной власти отдельными социальными общностями[2].

Политическая система общества включает три структурных элемента: механизм власти, механизм сопротивления, центристские общественные организации.

Механизм власти включает в свой состав государственную власть, механизм государства и влиятельные политические партии. Государственная власть является основным элементом механизма власти. Именно государственная власть определяет основы политики государства. Именно государственной властью и ее механизмом обеспечиваются эффективное управление в обществе, удовлетворяются общезначимые интересы общества, корпоративные и частные интересы.

Механизмом власти обеспечивается рациональность и целесообразность государственного управления, обеспечивающие организо-

---

[1] Там же, С. 216.

[2] Общая теория государства и права, Академический курс, М., 2007, Т. 1, С. 488.

ванность и порядок в обществе. В силу своей организации и ресурсов механизм власти обладает способностью функционировать автономно, реализуя социальные ценности и социальные нормы. Механизм власти в демократических обществах формируется как система демократии. В таких обществах механизм власти имеет законный и легитимный характер, опираясь на широкую социальную основу. При авторитарном, а тем более при тоталитарном режиме механизм власти трансформируется в систему господства или систему диктатуры. У такого механизма отсутствует легитимность, что делает ее неэффективной и требующей неукоснительного восстановления принципа народного суверенитета.

Вторым элементом механизма власти является механизм сопротивления, включающий партии и организованные политические движения, противостоящие официальной политике государства. Механизм сопротивления имеет различную природу при различных политических режимах. При демократическом режиме механизм сопротивления является конструктивным элементом политической системы общества. Благодаря ему осуществляется социальный контроль за законностью деятельности механизма власти. Механизм сопротивления является необходимым условием существования демократического режима. Механизм сопротивления своей конструктивной критикой способствует повышению эффективности деятельности механизма власти, системы государственного управления.

Третьим структурным элементом политической системы общества является система центристских организаций. Данные организации участвуют непосредственно в политической жизни общества. Занимаясь иной, далекой от политики деятельностью, центристские организации способствуют укреплению позиций и организации деятельности государства и механизма власти. Центристские организации способствуют активности гражданского общества и удовлетворению разнообразных интересов личности как члена гражданского общества.

В общественной практике политикой часто называют любую целенаправленную деятельность. Мыслители древней, средневековой и новой эпох усматривали в возникновении и развитии политики воздействие природных, социальных и внутригосударственных факторов. Происходящие изменения и перемены требовали рационализа-

ции политико-правовых представлений.

Уже в Древнем Китае у философа Лао-Цзы и Геродота в Древней Греции обосновывается подход к земным делам как к результатам человеческих действий. Макиавелли разработал представление о политике как об искусстве властителей удерживать власть и обеспечивать ее трансгрессию и прочность. Возникший еще в XVI в. «макиавеллизм» заложил основы теории политики с позиций силы.

Гоббс, Локк и другие мыслители нового времени обосновывали идею о том, что корни политики лежат в основе эмпирической реальности. Теоретическое осмысление политики было осуществлено Гегелем, к заслугам которого относится принципиальная постановка вопроса о диалектической взаимосвязи, соотношении социально-экономической и политической сфер общества, а не просто их отличия, как у Макиавелли. Огромную роль в изучении политики сыграли идеи, разработанные Марксом и Энгельсом, объясняющие происхождение и суть политики доминирующим влиянием среди других факторов экономических отношений. Суть политики обусловлена способом производства материальных благ и одновременным влиянием политики на экономическую сферу во многих направлениях.

В учении немецкого социолога, экономиста и юриста М. Вебера на политику оказывает влияние множество социокультурных факторов, проявляющихся во взаимодействии различных сфер общества. Однако нельзя ни один из них считать определяющим. Возможности развития общества беспредельны. Вебер определял политику как стремление к участию во власти или оказанию влияния на распределение власти, будь то распределение между государствами, между группами людей, которые она в себе заключает[1].

При анализе политики основными подходами (парадигмами) являются:

1. теологический, заключающий в сверхъестественной интерпретации государственной власти;

2. натуралистический, объясняющий природу политики из влияния географической среды, свойственной живой природе, человеческих особенностей;

[1] Вебер М., Избранные произведения, М., 1990.

3. социальный, объясняющий политику через воздействие различных сфер общественной жизни, социокультурных характеристик субъекта политики;

4. рационально-критический, объясняющий политику не внешними по отношению к ней факторами, а ее внутренними свойствами и компонентами (элементами);

В настоящее время политику интерпретируют как: 1. отношения между социальными группами (стратами, классами); 2. господство, связанное с завоеванием и использованием государственной власти; 3. упорядочение общественной жизни, средство управления обществом; 4. систему принципов и норм регулирования общественной жизни в целом и отдельных социальных групп.

Таким образом, любой из указанных подходов представляет политику как сферу межгрупповых отношений по поводу использования власти, ее публичных институтов для реализации их общественно значимых интересов и потребностей. Отмеченное позволяет рассматривать политику в следующих двух основных аспектах (ракурсах):

1. политика как средство организационного и духовного начала общества;

2. политика как регулятивно-контрольная сфера, направляющая жизнь, деятельность, взаимоотношения членов общества, общественных групп и классов, стран и наций.

Политика – чрезвычайно сложное явление. Она включает и субъективное, и объективное, и тенденцию деятельности, и саму практическую деятельность, и процесс воспроизводства связей и их объективизацию в виде структур политической власти и управления. Политика охватывает комплекс взаимосвязанных явлений и процессов. Структура политики сложна и многогранна. Она включает в себя:

– организационную деятельность социальных групп и представляющих их учреждений власти по управлению обществом или в интересах этих групп;

– общественные отношения между социальными группами и сообществами людей по поводу государственной власти (ее завоевания, удержания, использования);

– политическое сознание и политическую культуру, являющиеся неотъемлемой стороной как политической деятельности, так и

политических отношений;

– совокупность политических организаций и норм, с помощью которых регулируются интересы и цели и осуществляется государственная власть.

Как особому явлению политике присуще такое свойство как универсальность, а именно способность воздействовать на любые стороны общественной жизни, события и отношения.

Как сложное явление политику можно рассматривать в трех аспектах: институциональном; нормативном; функциональном.

Институциональный аспект предполагает рассмотрение политики как совокупности институтов, в рамках которых осуществляется властвующая и управляющая деятельность. В нормативном измерении политика предстает как совокупность ценностей и норм, целей и задач политической деятельности, зависящих от общих интересов социальных групп и общества в целом. Функциональное измерение политики представляется как система действий по защите и реализации общих интересов и целей по осуществлению власти и управлению государством.

Таким образом, диапазон политики объемлет институты и ценности, нормы, властеотношения, политические идеи и практику. Мир политики – это социальная реальность. Особенности политики как феномена социальной реальности позволяют рассматривать ее как «политико-социальную реальность», «политико-социальную действительность», «политическое пространство», «политическую жизнь».

В сфере политики формируются общие интересы и цели социума, формируются правила, распределяющие роли и функции, организуется управление общественными делами. Политика объективно создает систему, защищающую общество от распада, регулирует общественные связи и отношения. Политика, созидая и развивая политическую систему общества, осуществляет свои важнейшие функции, к которым относятся:

1. регулирование и разрешение возникающих противоречий и конфликтов, направление их в русло диалога власти и общества;
2. выражение властно значимых интересов всех групп и слоев;
3. Интеграция различных групп и слоев общества, т.е. консолидация общества;

4. Обеспечение прогрессивного развития общества;

5. Обеспечение целостности общественной системы и общественного порядка;

6. Конституирование человека как социально-активного существа.

Политическая система и важнейший ее структурный элемент – механизм власти – создают нужную организацию, необходимую для координации деятельности структур, организаций и членов общества.

Политическая система общества позволяет представить политическую жизнь в целостности и устойчивости, акцентируя внимание на структурной, организационно-институциональной и функциональной сторонах политики. Политическая система является подсистемой совокупной общественной системы. В качестве подсистемы политическая система взаимодействует с другими подсистемами: социальной, экономической, моральной, правовой, культурной, составляющими ее общественное окружение, которое наряду с природной средой и внешней политической действительностью образуют «окружающую среду», в которой политическая система черпает свои ресурсы.

Различные политические явления теснейшим образом взаимосвязаны и составляют определенную целостность, имеющую относительную самостоятельность. Политическая система общества представляет собой сложное, многогранное явление. В правовой науке политическая система изучается с позиций системного и структурно-функционального анализа с точки зрения ее относительной «статики и непрерывной динамики соотношения системы как целого с ее отдельными элементами, прежде всего выясняя место и роль государства (государственной власти) в этом образовании, его новые качества, особенности, грани как структурного элемента»[1].

Научная ценность понятия «политическая система» заключается в том, что оно позволяет выделить политическую жизнь из общественной практики как самостоятельную часть, как подсистему общей социальной системы. Эта категория указывает на то, что в ней расс-

[1] Общая теория государства и права, Академический курс, Т.1, М., 2007, С. 487.

матриваются явления, имеющие системный характер, т.е. представляющие собой определенную целостность. Элементы ее тесно взаимосвязаны и находятся в непрерывном взаимодействии друг с другом. Благодаря этой своей структуре система приобретает качество внутренне организованного, упорядоченного единого целого. Кроме того, понятие системы указывает на неразрывное единство каждой ее части с окружающей средой, на взаимосвязанность между ними. Каждый структурный компонент системы может рассматриваться как в качестве подсистемы в рамках целого (макросистемы), так и в качестве системы низкого уровня, которая в свою очередь имеет компоненты, свою специфику в способах как своей организации, так и функционирования.

В основе политической системы общества лежат политические отношения и политическая власть. Политика – главная предпосылка, главный фактор существования и функционирования политической системы.

Политическая система является универсальной управляющей и регулирующей системой, обеспечивающей единство функционирования всех других подсистем общества на основе использования государственной власти.

Политическая система общества представляет собой совокупность государственных и общественных организаций, объединений, правовых и политических норм, принципов организации и осуществления политической (государственной) власти в обществе.

Политическая система общества как подсистема социальной системы общества выполняет только ей свойственные специфические функции:

– интеграционная функция, которая выражается в интеграции, объединении в общественное целое всех элементов социальной структуры на базе ценностей экономических и политических элит;

– целеполагающая функция, состоящая в определении целей и задач развития общества;

– организаторская функция, состоящая в легитимации усилий государственной власти и государственной политики в мобилизации материальных, духовных ресурсов для осуществления целей и задач общества;

– контролирующая функция, призванная контролировать конфликты интересов разных социальных групп с целью обеспечения социальной целостности общества. Контроль осуществляется дифференцированно, не нося всеобщего и уравнительного характера.

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐ

Վահե Գևորգյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հասարակության քաղաքական համակարգը ձևավորվում է հասարակությունում սոցիալական ասիմետրիայի արդյունքում: Տարաբնույթ սոցիալական խմբերի միջև հասարակական տարբերությունները ձևավորում են քաղաքական ոլորտը, որի կայացման արդյունքում ձևավորվում է հասարակության քաղաքական համակարգը: Նշված ինստիտուտը կանոնակարգում է հասարակական ոլորտը, քաղաքական դաշտը, որի նպատակով ձևավորվում է իշխանության մեխանիզմը: Իշխանության մեխանիզմն ընդգրկում է ինչպես պետություն մեխանիզմը, այնպես էլ ազդեցիկ քաղաքական կուսակցությունները:

Քաղաքական համակարգի հաջորդ կառուցվածքային տարրը դիմադրության մեխանիզմն է, որն ընդգրկում է ընդդիմադիր կուսակցությունները և ուժերը: Դիմադրության մեխանիզմը իրականացնում է հասարակական հսկողություն իշխանության գործունեության օրինականության նկատմամբ: Քաղաքական համակարգի երրորդ կառուցվածքային տարրը կենտրոնամետ կազմակերպություններն են, որոնք, իրականացնելով տնտեսական և այլ գործունեություն, նպաստում են իշխանության գործունեությանը:

CONSERNING THE STATE MECHANISM AS STRUCTURAL ELEMENT OF SOCIAL POLITICAL SYSTEM

Vahe Gevorgyan
Assistant at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

The social political system is formed within the society as a result of social asymmetry. Various social differences between social groups form the political sphere, during the establishment of which the social political system is being formed. The mentioned institution regulates the social field, the political framework which aims at the establishment of power mechanism. The power mechanism includes both the state mechanism and powerful political parties.

The next structural element of the political system is the resistance mechanism, which includes opposition parties and forces. The mechanism of resistance exercises control over the legality of public authorities' activities. The third structural element of the political system includes the centrist organizations that are implementing economic and other activities that contribute to the government's activities.

Բանալի բառեր - քաղաքական համակարգ, հասարակություն, իշխանության մեխանիզմ, դիմադրության մեխանիզմ, կենտրոնամետ կազմակերպություններ, պետական իշխանություն, պետական կառավարում

Ключевые слова: политическая система, общество, механизм власти, механизм сопротивления, центристские организации, государственная власть, государственное управление

Keywords: political system, society, power mechanism, resistance mechanism, acentrist organizations, state power, state management

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գևորգ Դանիելյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վարչարարության և վարույթի առանձին տեսակների առանձնահատկությունների իրավաչափությունը և սահմանները: Իրավահավասարության հետ աղերսներ ունեցող օրենսդրական կարգավորումների պարագայում միատեսակությունն ու կանխատեսելիությունը, ըստ էության, համարվում են ինչպես պատշաճ վարչարարության, այնպես էլ հավակնոտ իրավական վարքագծի երաշխիքներ: Ընդ որում, քննարկվող հարցադրման տեսանկյունից, իրավաստեղծ գործունեության առնչությամբ հակված ենք առավել հիմնավորված համարելու իրավագետ Վլ. Ներսիսյանցի տեսակետը, ըստ որի՝ «իրավաստեղծ գործունեություն» եզրույթի նեղ իմաստը թույլ չի տալիս ճշգրիտ բնորոշել այդ հարթությամբ ընթացող բոլոր գործընթացները, մինչդեռ «իրավասահմանում» եզրույթի համարժեք մեկնաբանության արդյունքում հնարավոր է դառնում այն ընկալել որպես իրավունքի պոզիտիվացման գործընթացի ցանկացած ձևականացված արտացոլում: Այսինքն՝ իրավասահմանման տեսանկյունից հիշյալ գործառույթը ներառում է ոչ միայն նորմատիվ ակտերի ընդունման, այլև սովորույթի, դատական նախադեպի, իրավաբանական դոկտրինայի ձևավորման, ինչպես նաև ոչ իրավաչափ նորմատիվ ակտերի շրջանակը նվազեցնելու ողջ համակարգը[1]:

Սոցիալ-իրավական վերոհիշյալ արժեքները խոցելի են դառնում, ըստ այդմ էլ՝ կոռուպցիան ու հովանավորչությունը լայն տարածում են ձեռք բերում այն երկրներում, որտեղ բազմաթիվ այլ գործոնների հետ մեկտեղ «հստակ չեն իշխանության մարմինների հայեցողության սահմանները, և մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը»[2]: Միա-

---

[1] Տե՛ս **Нерсисянц В. С.**, Общая теория права и государства, Учебник, Издательская группа НОРМА – ИНФРА-М, 1999, 398-399 էջեր:

[2] Տե՛ս **Հարությունյան Գ. Գ.**, Սահմանադրական մշակույթի պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները (խմբ.՝ Գ. Դանիելյան, Ռ. Ավագյան, Կ. Միրումյան), վերահրատ.՝ (լրամշակ.) – Եր., «Նժար» հրատ., 2016, էջ 209:

ժամանակ, նույն այդ երաշխիքներն առավել իրատեսական դարձնելու տեսանկյունից հարկ է լինում նախատեսելու նաև որոշ առանձնահատկություններ, որոնք, սակայն, կարող են իրավաչափ համարվել բացառապես իրավունքի հիմնարար սկզբունքներին համահունչ լինելու պարագայում:

Իրավաչափ իրավակարգավորման տեսանկյունից հարկ է հստակեցնել այն չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու անհրաժեշտ համամասնություն ու ներդաշնակություն իրավունքի հիմնարար սկզբունքների և վարչական վարույթի առանձնահատկությունների միջև:

Վարչական վարույթի առանձնահատկությունների համալիր ուսումնասիրությունը բերում է այն միանշանակ համոզմանը, որ դրանք, թերևս, հանգեցնում են առավելապես վարչական մարմինների համար հնարավորինս դյուրին ընթացակարգերով գործելառճի երաշխավորմանը, ընդ որում, հաճախ դա ուղեկցվում է այդ ոլորտում վարչարարության արդյունավետության նվազմամբ: Ըստ իրավագետ Ա. Վաղարշյանի՝ «Իրավական շատ համակարգերում նկատվում է հանրային իշխանության անհարկի միջամտությունը իրավական գործունեության տարբեր ոլորտներին, ընդ որում երբեմն նաև ճիշտ չհասկացված «հանրային շահերի» դիրքերից»[1]:

Ընդհանրապես, իրավական կարգավորումը կարող է իրավաչափ համարվել բացառապես Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի հետևողական պահպանման պարագայում. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը» (78-րդ հոդված): Հարկ է արձանագրել, որ հայրենական օրենսդրությունն արդեն հանգրվանել է մի այնպիսի փուլում, երբ օրենսդրական կարգավորումների շրջանակի անհարկի ընդլայնումը ոչ միայն խիստ խոցելի է իրավական

[1] Տե՛ս **Վաղարշյան Ա.**, «Իրավունք» հասկացության տեսամեթոդաբանական և գործնական նշանակությունը», «Բանբեր Երևանի համալսարանի», Շարք 3, Իրավագիտություն, № 3(144), ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 5-6:

անվտանգության տեսանկյունից, այլև արդարացում չունի զուտ գործնական չափանիշներով: Նկատի ունենք այն, որ անկախության սկզբնական փուլում, անհրաժեշտ փորձի պակասի արդյունքում, օրինաչափորեն մեծ էր տարաբնույթ հարաբերությունների աննախադեպ լայն շրջանակ օրենսդրական կարգավորման առարկա դարձնելու գրավչությունը, սակայն ներկայիս ներուժի պարագայում բավարար հիմքեր կան վերանայելու իրավասահմանման գործընթացների հիմնական միտումները: Այս տեսանկյունից համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք համաչափության սկզբունքն ընկալում են որպես իրավաստեղծագործության մեջ «ինտերվենցիայից դեպի կարգավորում անցնելու» նախապայման, և գտնում են, որ հարկ է դիմել կարգավորման միայն այն դեպքում, երբ անխուսափելի է դրա անհրաժեշտությունը, և կարգավորումն էլ պետք է լինի հետապնդվող նպատակին համաչափ[1]:

Վարչական վարույթի առանձին տեսակների համար առանձնահատկություններ սահմանելու հնարավորություն նախատեսված է օրենսդրությամբ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Առանձին տեսակների վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»: Այսպիսի խիստ ընդհանրական խմբագրությամբ նորմը գիտագործնական հարթությամբ անհարկի հակասական մոտեցումների տեղիք է տվել՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: Այսպես՝ այն կարծիքն է հայտնվել, որ Օրենքով ամրագրված սկզբունքները ոչ միշտ են կիրառելի վարույթի այլ տեսակների պարագայում[2]: Տվյալ դեպքում Օրենքի այն նորմին, ըստ որի՝ կարող են սահմանվել

[1] Տե՛ս, օրինակ, **Օհանջանյան Վ.**, Իրավաստեղծագործության արդի մարտահրավերները, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», Նվիրվում է ՀՀ անկախության 25-ամյակին, Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 55:

[2] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, «Հարդ ընդ սոֆթ» հրատ., Երևան, 2007, էջ 19:

«առանձին տեսակի վարչական վարույթների *առանձնահատկություններ*», տրվել է անհարկի տարածական մեկնաբանություն, մինչդեռ իրավունքի միևնույն ճյուղի շրջանակներում չեն կարող սահմանվել տարբեր սկզբունքներ, իսկ առանձնահատկությունները կարող են վերաբերել միայն կոնկրետ ընթացակարգերին: Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ նշված տեսակետի հեղինակները հետագայում, թերևս, վերանայել են իրենց դիրքորոշումը. «Չի կարելի բացառել նաև, որ վարչարարության առանձին տեսակներ կունենան այնպիսի առանձնահատկություններ, որոնք կարտացոլվեն հիշատակված սկզբունքներին չհակասող, սակայն վերջիններից բխող կամ դրանք լրացնող այլ սկզբունքային դրույթներում»[1]:

Վարչական վարույթի առանձնահատկությունների սահմաններն ուրվագծելիս, նախ, հարկ է անդրադառնալ խնդրին առնչվող սահմանադրական հիմնադրույթներին: Այսպես՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»: Այս դեպքում Սահմանադրությամբ ընդգծվում է իրավունքների և ազատությունների սահմանման տեսանկյունից օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների հստակեցման անհրաժեշտությունը, սակայն այս կարգավորումից ինքնին չի բխում, որ անգամ օրենքով կարող են անվերապահորեն սահմանափակվել հիշյալ իրավունքներն ու ազատությունները: Նախ՝ իրավունքների և ազատությունների ամրագրմանը նվիրված Սահմանադրության յուրաքանչյուր հոդվածով որոշակիացված են դրանց սահմանափակման հիմքերը, բացի դրանից՝ Սահմանադրության 80-րդ հոդվածով առաջադրված է առավել ընդհանուր ու գերակա նշանակություն ունեցող «արգելապատնեշ», ըստ որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ ամրագրված դրույթ-

[1] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015, էջ 46:

ների էությունն անխախտելի է։ Այս հարցադրումը առանցքային նշանակություն ունեցավ նաև սահմանադրական բարեփոխումների փուլում. «Հայեցակարգային մոտեցումն այն է, որ իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով»[1]։

Վերն ասվածից բխում է, որ վարչական վարույթի առանձնահատկություններ սահմանելիս, նախ, հարկ է առնվազն նկատի ունենալ, որ հիմնարար առանձնահատկությունները կարող են սահմանվել բացառապես օրենքով, ընդ որում, դրանք չպետք է հանգեցնեն հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների էության խաթարմանը։ Բնականաբար, «դրույթի էության խախտում» արտահայտության բովանդակության շուրջ դեռ առաջիկայում կլինեն բազում բանավեճեր, հարկ կլինի հստակեցնել վերջինիս բովանդակային բաղադրիչները (ակնկալվում է, որ դա պատեհ առիթով կանի Սահմանադրական դատարանը), սակայն արդեն այս փուլում հարկ է նկատի ունենալ, որ վարչական վարույթի առանձին տեսակների առանձնահատկությունների մասով ոչ մի պարագայում չի կարելի դիմել մարդու իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումների, որոնք կհանգեցնեն հիմնական իրավունքների մրցակցության սկզբունքի խախտմանը։ Այս տեսանկյունից համամիտ ենք այն իրավագետների հետ, որոնք գտնում են, որ քննարկվող դեպքում պետք է գործի «lex specialis»-ի գերակայության ընդհանուր կանոնը[2], միաժամանակ կշարունակի գործել դրանց և ընդհանուր սկզբունքների միջև հակասությունը բացառելու պահանջը։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչական վարույթի առանձին ինստիտուտների կարգավորման հարցում ևս հանդիպում են ոչ միասնական չափանիշների կիրառման դեպքեր, ինչը բացարձակապես թելադրված չէ որևէ գործոնով։ Այս դեպքում անգամ գե-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, -Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 30։

[2] Տե՛ս **Զաքս Միխայել**, Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքները։ Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական վարույթում / Մ. Զաքս, -Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2012, էջ 89։

րատեսչական շահի ոչ իրավաչափ եղանակներով պաշտպանության խնդիր չկա, քանզի ոչ միասնական կարգավորումների պատճառը, թերևս, օրենսդրության անկատարությունն է, ինչը դրսևորվում է իրավաբանական տեխնիկայի տարրական պահանջների անտեսմամբ։ Օրինակ՝ հանրային ծառայության վերաբերյալ օրենսդրությունում բացակայում է այն արարքների հստակ շրջանակը, որոնք հանգեցնում են կարգապահական պատասխանատվության։ Այսպես՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով այդպիսիք են համարվում ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ծառայողական լիազորությունները գերազանցելը, ինչպես նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելը։ Մինչդեռ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով կարգապահական պատասխանատվության հիմք են՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ծառայողական դիրքն ի չարը գործադրելը, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելը։ Հավելենք, որ միմյանցից տարբերվում են նաև պետական հատուկ ծառայության իրավական հիմքերին նվիրված օրենսդրական ակտերում ամրագրված դրույթները։ Կարծում ենք՝ նշվածը կարող է բացատրվել բացառապես օրենսդրության թերություններով, ընդ որում, բացակայում է վերը նշված տարաբնույթ օրենսդրական դրույթների հիմնավորման օգտին որևէ փաստարկ։

Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի համալիր վերլուծությունը ցույց է տալիս, որ հաճախ վարչական վարույթի առանձին տեսակների, ինչպես նաև դրանց առանձնահատկությունների ամրագրումն իրականացվում է ոչ պատշաճ հստակությամբ, ինչի արդյունքում առանձնահատկություններ սահմանող իրավական նորմերն ընկալվում են իբրև վարչական վարույթի ընդհանուր կանոններ սահմանող օրենսդրության նորմերին հակասող դրույթներ։ Բնականաբար, առանձնահատկությունները կարող են վերաբերել վարչական վարույթի բոլոր այն բաղադրիչներին, որոնք չեն հանգեցնում իրավունքի սկզբունքների խախտումների, սակայն դա չի նշանակում, որպես առանձնահատկություններ կարող են ընկալվել նաև

ընդհանուր կանոններին չհամապատասխանող ցանկացած նորմեր: Այս տեսանկյունից հարկ է մի ընդհանուր կանոնով հստակեցնել, որ հիմնական կանոններից շեղումները ամրագրված են որպես վարչական վարույթի առանձնահատկություններ, իսկ հակասության դեպքում գործում են առանձնահատկություններ սահմանող նորմերը: Ընդ որում, հնարավորինս նպատակահարմար է ձեռնպահ մնալ այնպիսի անորոշ ձևակերպումներից, ինչպիսիք են՝ «կիրառվում են այնքանով, որքանով», «գերակայում են նույն բնույթի հարաբերություններ կարգավորող իրավական նորմերի նկատմամբ» և այլն:

Վարչական ակտի օրենսդրական բնորոշման արդի հիմնախնդիրները: Քննարկվող հարցադրման մեթոդաբանության տեսանկյունից նպատակահարմար է առանձնացնել «վարչական ակտ» եզրույթի բնորոշումը: Ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի»: Նկատենք, որ որոշ բացառություններով հանդերձ՝ վերը նշված բնորոշումը կարող էր ամբողջությամբ ներառել ոչ միայն անհատական, այլև նորմատիվ իրավական ակտերը, ինչը միանգամայն խելամիտ ու հիմնավորված կլիներ, սակայն միանշանակ վերապահումներն առ այն, որ վարչական ակտը անհատական ակտ է, ամբողջովին խաթարել են վարչական վարույթի և վարչարարության բուն էությունը:

Այն, որ վերը նշված հատկանիշներով օժտված է ոչ միայն անհատական, այլև նորմատիվ իրավական ակտը, խնդրահարույց չէ, ավելին, հենց նորմատիվ իրավական ակտերն են հաճախ առավելապես բնութագրվում որպես արտաքին ներգործություն ունեցող, հանրային իրավունքի բնագավառում հարաբերությունների կարգավորման նպատակով անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն

ուղղված իրավական ակտեր: Վարչական ակտերի շրջանակն անհարկի նեղացնելը և բացառապես անհատական ակտերով սահմանափակվելը համահունչ չեն նաև միջազգային իրավական չափանիշներին: Այսպես՝ Եվրախորհրդի նախարարների կոմիտեի դեռևս 2004 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 2004(20) բանաձևի 1-ին կետով ամրագրված է հետևյալ դրույթը. «Վարչական ակտեր են վարչական մարմինների այն անհատական և *նորմատիվ ակտերը* (ընդգծումը մերն է), որոնք ընդունվել են հանրային իշխանության իրականացման շրջանակներում և կարող են ազդել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի վրա»:

Ազգային անվտանգության ոլորտում վարչական վարույթի առանձնահատկությունների իրավական հիմքերի թերությունները և դրանց բարելավման ուղիները: Վերևում արդեն անդրադարձանք, որ վարչարարության այս կամ այն ոլորտում վարչական վարույթի առանձնահատկությունները, ըստ էության, անհրաժեշտ են, սակայն դրանք կարող են արդյունավետ լինել որոշակի չափանիշների պահպանման դեպքում: Ազգային անվտանգության ոլորտում վարչական վարույթի առանձնահատկությունների իրավական հիմքերի համալիր հետազոտությունը բերում է այն համոզման, որ դրանցում դեռևս առկա են էական թերություններ, ներքին հակասություններ և այլն: Սույն հոդվածում կանդրադառնանք առավել առանցքային հարցադրումներին և կառաջադրենք որոշակի լուծումներ:

Նախ՝ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ ազգային անվտանգության պարագայում ընդունվող իրավական ակտերը, այդ թվում՝ արտաքին ազդեցություն ունեցող եզրակացությունները չեն կարող դասական իմաստով համարվել վարչական ակտեր, քանզի դրանք ուղղակիորեն առնչվում են երկրի պետական անվտանգության հետ, իսկ նման պարագայում միջազգային իրավական չափանիշներով, մասնավորապես Եվրախորհրդի նախարարների կոմիտեի դեռևս 2004 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 2004(20) բանաձևի դրույթներով՝ այդպիսիք չեն կարող ընդունվել, հրապարակվել և կիրառվել վարչական ակտին բնորոշ ընդհանուր ընթացակարգերով:

Խնդիրն այն է, որ այդպիսի անհատական ակտերի ու եզրակացությունների մեծ մասը առնվազն պետական կամ ծառայողական գաղտնիքի պահպանման նկատառումով չի կարող պարտադիր

ուղեկցվել հիմնավորումներով: Ավելին, առանձին ճյուղային օրենսդրական ակտերով ողջամտորեն ամրագրվել է հիշյալ դիրքորոշումը, ինչի արդյունքում հիմնավորումները անհատական ակտի պարտադիր նախապայման չեն դիտարկվել: Այսպես՝ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու *դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել* (ընդգծումը մերն է)»: Նկատենք, որ մերժման հիմքում, հիմնականում, դրվում է Ազգային անվտանգության ծառայության եզրակացությունը, ինչից բխում է, որ հիմնավորման պարտադիր պահանջը չի տարածվում այդ փաստաթղթի վրա ևս: Այս համատեքստում վիճահարույց իրավական նորմ է բովանդակում «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը. «Պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպություններն ու քաղաքացիներն ազգային անվտանգության մարմինների կողմից իրենց իրավունքների ու ազատությունների սահմանափակման դեպքում իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բացատրություններ և տեղեկություններ ստանալ ազգային անվտանգության մարմիններից»:

Վերոհիշյալը, թերևս, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին թյուր ընկալումների հետևանք է, քանզի անտեսվել է այն փաստարկը, ըստ որի՝ ազգային անվտանգության ոլորտում ընդունվող իրավական ակտերի, իրականացվող վարչական վարույթի կամ վարչարարության մասին անվերապահորեն բացատրություններ տալն առնվազն համատեղելի չէ պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների ողջամիտ պաշտպանության պահանջի հետ: Ասվածի համատեքստում իրավակարգավորումն իրավաչափ կլիներ, եթե հստակեցվեր, որ բացատրություններ կարող են տրվել միայն ազգային անվտանգության մարմնի հայեցողությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերում, մինչ-

դեռ գործող օրենքը սահմանափակվել է սոսկ «օրենսդրությամբ սահմանված կարգը» արտահայտությամբ, ինչից բխում է, որ օրենսդրության կարգավորման առարկան միայն բացատրություններ տալու կարգն է։

Անհրաժեշտ է նկատել, որ ազգային անվտանգության մարմնի կողմից կայացված իրավական ակտի կամ վարչական վարույթի շրջանակներում, անվտանգության նկատառումներից ելնելով, մերժումների առնչությամբ հիմնավորումներ տալը հայեցողական հարթությամբ դիտարկելը համահունչ է նաև միջազգային փորձին։ Այսպես՝ մուտքի վիզա ստանալու վերաբերյալ դիմումները մերժելիս դեսպանատները իրենց հայեցողությամբ կարող են ինչպես պատճառաբանել, այնպես էլ ձեռնպահ մնալ որևէ պատճառաբանությունից։

Հավելենք, որ պետական կամ ազգային անվտանգության հիմքով Սահմանադրությունը ևս նախատեսում է մի շարք հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման անհրաժեշտություն (Սահմանադրության 25-րդ, 31-34-րդ, 40-42-րդ, 44-45-րդ, 47-րդ և այլ հոդվածներ)։ Այսպիսով՝ ասվածից բխում է, որ ազգային անվտանգության ոլորտում ոչ բոլոր իրավական ակտերի ու վարչարարության առնչությամբ են իրավասու մարմինները պարտավոր բացատրություններ տալ կամ հիմնավորել իրենց դիրքորոշումը։

Այժմ նշված հարցադրման շրջանակներում անդրադառնանք մեկ այլ հարակից հարցադրման՝ իրավական ակտերի կամ գործողությունների բողոքարկմանը։ «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել ազգային անվտանգության մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ գործողությունները»։ Խնդիրն այն է, որ դարձյալ վերը նշված միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ ոչ բոլոր անհատական իրավական ակտերն ու անձի փաստացի իրավական վիճակի վրա ազդող իրավական փաստաթղթերն ու գործողություններն են ենթակա բողոքարկման։ Ըստ էության, խելամիտ էլ չէ բողոքարկման առարկա ճանաչել այնպիսի ակտերը, որոնց առնչությամբ իրավաչափորեն բացակայում են հիմնավորումները։ Հավելենք, որ Սահմանադրությունը ևս վարչական մարմինների իրավական ակտերի ու գործողությունների բողոքար-

կումը չի համարում բացարձակ իրավունք, իսկ 61-րդ հոդվածում խոսքը միայն իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության մասին է, ինչից բնավ չի բխում, որ ցանկացած անհատական ակտ կամ գործողություն ենթակա է բողոքարկման։

Դարձյալ վերադառնանք մուտքի վիզա տրամադրելու վերաբերյալ դիմումների մերժումներին։ Այս դեպքում խոսքը վարչական վարույթի շրջանակներում մերժման մասին ընդունված որոշման մասին է, որը, սակայն, առնվազն հիմքերի կտրվածքով, բողոքարկման ենթակա չէ։ Սա բնավ չի հանգեցնում անձի իրավունքների և ազատությունների անհիմն սահմանափակման, քանզի խոսքը բացառապես ազգային անվտանգության նկատառումներից ելնելով կայացված որոշման մասին է, որի դեպքում հիմնավորումները չեն կարող անվերապահորեն բացահայտվել։ Ցավոք, այս նրբությունն անտեսվել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ»։ Այս դեպքում, թերևս, քննարկվող նորմն իրավաչափ է «վարչական ակտ» եզրույթի կիրառման մասով, քանզի հստակեցվում է, որ բողոքարկման առարկա չեն կարող լինել մյուս անհատական իրավական ակտերը[1]։ Սակայն իրավաչափ չէ անվերապահո-

[1] Տվյալ դեպքում, ինչպես արդեն նշել ենք, խնդիրը միայն այն է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ «վարչական ակտ» եզրույթին տրվել է ակնհայտ ոչ իրավաչափ բնորոշում. «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն։ Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի»։ Այսպիսով՝ անտեսվել է, որ միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ հիմնավորման ոչ ենթակա իրավական ակտը չի կարող վարչական համարվել։

րեն բոլոր գործողություններն ու անգործությունը դարձնել բողոքարկման առարկա, քանզի դրանց վրա ևս տարածվում է ազգային անվտանգության նկատառումներով այդպիսիք հիմնավորումներով չուղեկցելու սկզբունքը։ Այս առնչությամբ, կարծում ենք, նպատակահարմար է վերանայել վերը նշված երեք օրենսդրական ակտերի (ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, «Վարչարարության և վարչական վարույթի մասին» և «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքները) համապատասխան նորմերը։

Ազգային անվտանգության մարմինների ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով վարչական վարույթին առնչվող առանձնահատկությունների ամրագրման հիմնախնդիրը։ Մինչև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը գործադիր իշխանության մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտեր ընդունելու հարցում սահմանափակումներ չեն եղել։ Սակայն Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված հիմնադրույթը նշված հարցադրման համատեքստում ենթադրում է էական վերանայումներ. «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր»։

Հիշյալ նորմը, ըստ էության, պարզաբանման կարիք ունի, մասնավորապես անհրաժեշտ է հստակ պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունել բոլոր սահմանադրական մարմինները։ Խնդիրն այն է, որ հիշյալ նորմը սահմանում է նաև լրացուցիչ պայման, այն է՝ սահմանադրական մարմինները, ինչպես նախատեսված է վերը նշված հոդվածով, կարող են ընդունել նորմատիվ ակտեր միայն «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»։ Նկատենք, որ սահմանադրական նշված ձևակերպումը, ըստ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի եզրակացության[1], ենթակա չէ տարա-

[1] Տե՛ս ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի նիստերի արձանագրությունները։

ծական մեկնաբանության, ուստի խոսքն միայն այն սահմանադրական մարմինների մասին է, որոնց կողմից նորմատիվ իրավական ակտեր ընդունելն անմիջականորեն նախատեսված է Սահմանադրությամբ։

Նկատենք, որ Ազգային անվտանգության ծառայությունը ներկայումս հանդիսանում է Կառավարությանն առընթեր գործող պետական մարմին, մինչդեռ Սահմանադրությամբ այդպիսի կարգավիճակ ունեցող մարմին նախատեսված չէ։ Արդեն 2018 թ. ապրիլից՝ Կառավարությանն առնչվող Սահմանադրության նորմերի ամբողջական կիրառումից հետո, հարկ կլինի հստակեցնել Ազգային անվտանգության ծառայության կարգավիճակը, իսկ դա նշանակում է, որ նորմատիվ ակտեր ընդունելու իրավասությունը կարող է պահպանվել բացառապես նախարարի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում (Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մաս), քանի որ վերջինս չի կարող հանդես գալ որպես ինքնավար մարմին (այդպիսիք Սահմանադրության 122-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով օժտված են նորմատիվ ակտեր ընդունելու իրավասությամբ), իսկ Կառավարության կամ վարչապետի ենթակայության տակ անցնելու պարագայում այլևս օժտված չի լինի հիշյալ լիազորությամբ։

Ինչպես նկատեցինք, հիշյալ մոտեցման հիմքում դրված է ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ դիրքորոշումը։ Միաժամանակ նպատակահարմար ենք համարում անդրադառնալ խնդրին նաև այլ ասպեկտներով։ Այսպես՝ ըստ նախագծի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարության հարցադրման մեջ արտացոլված դիրքորոշման՝ Սահմանադրությամբ մի շարք մարմինների դեպքում հստակ նշված է, որ տվյալ մարմնին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն, մինչդեռ մյուս դեպքերում այդպիսի նորմեր սահմանված չեն։ Նախ՝ մեր կարծիքով՝ առավել համալիր հետազոտությունը վկայում է, որ խմբագրական կտրվածքով իրավակարգավորման տարբերությունները դրանով չեն սահմանափակվում. խնդիրն այն է, որ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությունը մի

դեպքում իմպերատիվ եղանակով ամրագրված է անմիջապես Սահմանադրությամբ (օրինակ՝ 152-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր), մեկ այլ դեպքում՝ այդպիսի լիազորություն ամրագրելու հնարավորությունը վերապահված է օրենսդրին (օրինակ՝ 122-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ինքնավար մարմիններին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն)։ Նույնական չեն նաև լիազորող նորմերի դիսպոզիցիաները. մի դեպքում՝ պարզապես ամրագրվում է նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն (122-րդ հոդվածի 3-րդ մաս), մեկ այլ դեպքում՝ հիշյալ լիազորությունն ամրագրված է որոշակի վերապահումներով. ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով (175-րդ հոդվածի 3-րդ մաս)։

Նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտելուն առնչվող հարցի կարգավորման տեսանկյունից վերոհիշյալ սահմանադրական դրույթներն ունեն ելակետային, սակայն ոչ սպառիչ նշանակություն։ Սահմանադրական մարմնի կարգավիճակը որոշվում է ինչպես վերջինիս հատուկ լիազորություններն անմիջականորեն Սահմանադրությամբ ամրագրելու (օրինակ՝ 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված են դատախազության լիազորությունները), այնպես էլ որպես հանրային իշխանություն կրող մարմնի ընդհանուր լիազորությունները Սահմանադրությունից բխեցնելու եղանակով (օրինակ՝ հիշյալ 176-րդ հոդվածով՝ դատախազությունում ծառայության ընդունելը կամ անձանց դիմումներն ու առաջարկությունները քննարկելն ամրագրված չեն, որպես դատախազության սահմանադրական լիազորություն, սակայն դատախազությունը այդպիսի լիազորություններով, ըստ էության, օժտված է, ինչը համապատասխանում է պետության կողմից անձանց իրավունքների ապահովման և երաշխավորման սահմանադրական հիմնադրույթների պահանջներին)։ Այսպես՝ դատախազությանն օրենքով ծառայության ընդունելու լիազորություն սահմանելը չի դիտարկվում Սահմանադրությանը հակասող, քանի որ դա բխում է նույն Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված հանրային ծառայության անցնելու իրավունքից և այլն։

Նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությունը ևս հարկ է դիտարկել վերջիններիս սահմանադրական կարգավիճակի համատեքստում, մասնավորապես, եթե, օրինակ, դրանց գործունեությունն առնչվում է անձանց սահմանադրական առանձին իրավունքների ապահովման նպատակով նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտության հետ, ապա նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն սահմանելը կդիտարկվի որպես իրավաչափ: Նպատակահարմար ենք համարում նկատել նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ Սահմանադրությամբ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն է սահմանված, կամ այդպիսի լիազորություն սահմանելու հնարավորություն է վերապահված օրենսդրին, նորմատիվ իրավական ակտեր ընդունելու սահմանները ևս հարկ է որոշել՝ բացառապես այդ մարմինների սահմանադրական կարգավիճակից ելնելով, քանզի նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորությունն ապրիորի չէ:

Ինչ վերաբերում է սահմանադրական կարգավորումների ոչ միատեսակությանը, ապա իրականում նշված իրավական կարգավորումները հարկ է ընկալել հետևյալ ելակետային մոտեցմամբ՝ Սահմանադրության առանձին նորմերով վերապահված է հատուկ լիազորությունների իրացման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն, մինչդեռ օրենքներով կարող են սահմանվել այդ մարմինների կարգավիճակին համապատասխան ընդհանուր լիազորությունների իրացման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու հիմքեր:

Այսպես՝ Կառավարությունը Սահմանադրության 153-րդ հոդվածով իրավասու է ընդունել նորմատիվ իրավական ակտեր, ինչից բխում է, որ վերջինս կարող է այդպիսիք ընդունել ինչպես հատուկ լիազորությունները, այնպես էլ ընդհանուր լիազորություններն իրացնելիս, սակայն դատախազության պարագայում Սահմանադրության 176-րդ հոդվածով այդպիսի լիազորություն չսահմանելը հիմք է, որպեսզի դատախազության կողմից սահմանադրական հատուկ լիազորություններն իրականացնելու համար օրենքով չսահմանվի նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն: Օրինակ՝ դատախազությունը իրավասու չէ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կանոնակարգել վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու կարգը (իսկ նույն այդ լիա-

զորության բնականոն իրականացման համար ներքին կազմակերպական բնույթի նորմատիվ ակտը չի կարող դիտարկվել իբրև սահմանադրական լիազորության իրականացման համապարտադիր կարգը սահմանող), սակայն իրավասու է կանոնակարգել դատախազությունում ծառայության անցնելու իրավունքի իրացման կարգի հետ կապված՝ օրենքի իրացումն ապահովող որոշ հարաբերություններ:

Քննարկման առարկա հարցադրումների առնչությամբ տեսակետների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությամբ նախատեսված ոչ բոլոր մարմիններին նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն վերապահելու մասին մոտեցումների հիմքում ընկած է այն մտավախությունը, որ դեռևս կայուն ժողովրդավարական ավանդույթների բացակայության պայմաններում նպատակահարմար չէ հիշյալ մարմիններին նորմատիվ բնույթի իրավաստեղծ լիազորությամբ օժտելը: Վերջապես, կայուն ժողովրդավարական ավանդույթներ ձևավորելու երաշխիքը բնավ արգելքների մեթոդաբանությունը չէ, հարկ է զարգացումների օրինաչափ ուղղությունները համարժեք գիտակցելու քաղաքական կամք: Այս նկատառումով հետաքրքիր դիտարկում ունի Ա. Հարությունյանը. «Հետխորհրդային երկրների մեծ մասն արդեն վաղուց ղեկավարող առաջնորդները հանդիսանում են գործող օլիգարխիկ համակարգի ճարտարապետները....: Նրանք են հենց զարգացման նոր ռելսերի վրա երկրները տեղափոխելու պատճառները: Հասկանո՞ւմ են, արդյոք, նրանք դա: Եթե այո, ապա պետք է իշխանությունը դարձնեն թափանցիկ և մեղմեն վերահսկողությունը»[1]: Նկատենք, որ քաղաքական կամքի վճռորոշ լինելու վերաբերյալ դատողությունները բնորոշ են նաև Արևմտյան Եվրոպայի իրավական մտքի ներկայացուցիչներին[2]:

Մյուս կողմից՝ չպետք է անտեսել, որ վերը նշված լիազորության բացակայությունն էապես կնվազեցնի նույն այդ մարմինների գոր-

---

[1] Տե՛ս **А. А. Арутюунян**, Конституционализм: проблемы постсоветской реальности: монография / А. А. Арутюнян, Норма, -М., 2013, էջ 6:

[2] Տե՛ս, օրինակ, Histoire du droit Français. Le droit pendant la pe՛riod franque. http://www.cosmovisions.com/droitFranc.htm. Chevallier J., L'Etat, Dalloz, coll. Connaissance dudroit, 2e ed., 2011, էջ 69:

ծունեության արդյունավետությունը և հընթացս անհարկի կծանրաբեռնի Կառավարությանը և խորհրդարանին:

Ազգային անվտանգության մարմինների ու դրանց պաշտոնյաների որոշ անհատական ակտեր՝ վերը նշված նկատառումներով անբողոքարկելի համարելու համատեքստում հարկ է անդրադառնալ նաև այն հարցին, թե որքանո՞վ է այդպիսի դիրքորոշումը համահունչ Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված պատշաճ վարչարարության և 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքներին: Նկատենք, որ այս երկու իրավունքներն էլ չեն ուղեկցվում դասական սահմանափակումներով (պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակը և այլն), իսկ դատական պաշտպանության իրավունքը չի կարող սահմանափակվել անգամ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ:

Վերոհիշյալ հարցին համալիր պատասխան տալու նկատառումով հարկ ենք համարում նկատել, որ, նախ, պատշաճ վարչարարության իրավունքի իրացման կարգի՝ մեր կողմից հիշատակված առանձնահատկությունները բխում են անմիջապես 50-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված նորմից. «Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք՝ *բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների* (ընդգծումը մերն է)»: Նկատենք, որ քննարկվող դեպքում «փաստաթղթեր» եզրույթը, ըստ էության, համարժեք է «փաստական հիմքեր» եզրույթին, իսկ նման պարագայում պարզապես հնարավոր չէ վարչական վարույթի հասցեատիրոջը ներկայացնել իրավական ակտի հիմնավորումները: Մյուս կողմից, անձը զրկված չէ այդպիսի իրավական ակտերը բողոքարկելու հնարավորությունից, եթե խախտվում են վարութային կամ նյութական այլ նորմեր (օրինակ՝ որոշումն ընդունվել է քվորումի բացակայության պարագայում և այլն): Ընդ որում, նույն այդ հիմքով կարող է իրացվել նաև դատական պաշտպանության իրավունքը, ինչը համահունչ է Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության պահանջին:

Մի պահ թողնենք այս մոտեցման բուն քաղաքական գնահատականը, ընդգծենք միայն, որ հեղինակների մի մասը ևս իրավաչա-

փորեն ակնկալում է զարգացումների միանգամայն նոր ուղղություն՝ հենց քաղաքական առաջնորդների նախաձեռնությամբ:

Այսպիսով՝ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու և այդ եղանակով վարչարարության առանձնահատկություններ սահմանելու լիազորության հարցում դեռևս առկա են էական տարաձայնություններ, միաժամանակ համոզված ենք, որ առաջիկա զարգացումների համատեքստում գործնականում այդ տարաձայնությունները կհարթվեն՝ հօգուտ գործադիր իշխանության մարմինների նորմատիվ ակտեր ընդունելու իրավասություն վերապահելու, քանզի օրենքներով կամ Կառավարության որոշումներով պարզապես հնարավոր չի լինի կանոնակարգել ակնհայտ մեծ ծավալի հասարակական հարաբերություններ՝ միաժամանակ վտանգելով պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկատվության պահպանությունը:

Ամփոփելով ազգային անվտանգության ոլորտում վարչական վարույթի և վարչարարության առանձնահատկությունների իրավաչափության և սահմանների վերաբերյալ մեր դատողությունները՝ նպատակահարմար ենք համարում ընդգծել, որ հիշյալ հիմնախնդիրները սոսկ օրենսդրական մասնակի վերանայումներով, առավել ևս խմբագրական փոփոխություններով պարզապես հնարավոր չէ լուծել, անհրաժեշտ է հայեցակարգային հարթությամբ արմատապես բարեփոխել վարչական վարույթի, վարչարարության ողջ իրավական հենքը՝ հարստացնելով այն «պատշաճ վարչարարության» սահմանադրական իրավունքի արդի պահանջներին ներդաշնակ ու համահունչ իրավակարգավորումներով:

ОСОБЕННОСТИ АДМИНИСТРИРОВАНИЯ В СФЕРЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Геворг Даниелян

Заведующий кафедрой конституционного права

ЕГУ, доктор юридических наук, профессор

В статье проанализированы особенности администрирования в сфере национальной безопасности, правовые признаки административных актов органов национальной безопасности, обоснована необ-

ходимость расширения содержания понятия «административного акта» и т.п.

Как известно, отечественное законодательство придерживается позиции, согласно которой административными актами являются лишь индивидуальные правовые акты. Критикуя эту позицию, автор статьи приводит факты, подтверждающие, что административными актами одновременно являются также и нормативные акты.

В статье подчеркивается мысль, что административные акты органов национальной безопасности имеют некоторые особенности, которые исключают их опротестование на общих основаниях. В частности, автор приходит к выводу, что многие индивидуальные нормативные акты органов государственной безопасности не должны сопровождаться соответствующими обоснованиями, поскольку в результате этого государственная тайна будет неизбежно разглашена. В то же время автор приходит к выводу, что если правовой акт по правомерным основаниям не сопровождается соответствующими обоснованиями, то он не может считаться административным актом в классическом смысле этого слова.

В связи с вышеизложенными выводами, автором предложены соответствующие изменения и дополнения в действующем законодательстве.

PECULIARITIES OF ADMINISTRATION IN THE FIELD OF NATIONAL SECURITY

Gevorg Danielyan
Head of the Chair of Constitutional Law
YSU, Doctor of Law, Professor

In this article peculiarities of administration in the sphere of national security, legal attributes of administrative acts of national security authorities are analyzed, the necessity to extend the content of the concept “Administrative act” is substantiated, etc.

As it is known, domestic legislation holds the opinion according to which administrative acts are merely individual legal acts. Criticizing this opinion the author of the article puts forward such facts certifying that normative acts are also administrative acts as well.

In this article the opinion is emphasized that administrative acts of national security authorities stand out due to some peculiarities which exclude their protest on a common basis. In particular, the author comes to the conclusion that a lot of individual normative acts of national security authorities should not be attributed by relevant substantiations since as a result state secret will be inevitably disclosed. At the same time the author comes to the conclusion that if legal act is not attributed by relevant substantiations for a permitted cause, it cannot be considered an administrative act in the classical sense.

With regard to the above-mentioned conclusions, the author suggests the appropriate amendments and supplements to the legislation in force.

Բանալի բառեր – ազգային անվտանգություն, վարչական վարույթ, վարչարարություն, վարչական վարույթի առանձին տեսակներ, վարչարարության առանձնահատկություններ, վարչական ակտ, վարչական ակտի հիմնավորում, վարչարարության սկզբունքներ

Ключевые слова: национальная безопасность, административное производство, администрирование, отдельные виды административного производства, особенности администрирования, административный акт, обоснование административного акта, принципы администрирования

Key words: national security, administrative proceedings, administration, selected types of administrative proceedings, peculiarities of administration, administrative act, substantiation of administrative act, principles of administration

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԱՏԵԽՆԻԿԱՆ

Վարդան Այվազյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Եթե մեր առջև խնդիր դնենք մշտադիտարկել աշխարհակարգը, ապա ինչպես համաշխարհային մասշտաբի, այնպես էլ ներպետական մակարդակի իրադարձությունների հոսքը առավելապես հիշեցնում է պատերազմական նորությունների խրոնիկա, որոնցում ոչ թե լուսաբանվում են ազգային և գլոբալ ոլորտների բարեկեցության ձեռքբերումներն ու զարգացումը, այլ հիմնականում հակամարտությունները:

Այս առումով ծագող հակամարտությունները չեն կանխարգելվում կամ էլ լուծվում սահմանված իրավակարգավորման հարթությունում: Դրա փոխարեն դիտարկվում է արդեն գոյություն ունեցող հակամարտությունների իրավիճակային բորբոքման ծայրահեղ վտանգավոր միտում, որն իրականացվում է պատերազմական ժամանակի իրավունքին բնորոշ ուժային որոշումների ռեժիմի կիրառմամբ: Որպես ասվածի վառ օրինակ բերենք Կորեական թերակղզու ընթացիկ ճգնաժամը, Մերձավորարևելյան տարածաշրջանը, գլոբալ մասշտաբի անկառավարելի միգրացիան, ինտեգրացիոն գործընթացների խափանումը և համաշխարհային հանրության և աշխարհակարգի ներդաշնակ ու հետևողական զարգացման համակարգային նախաձեռնությունների վերացումը, Եվրամիության մարտահրավերների փոփոխությունները (Կատալոնիա, Հունգարիա, Լեհաստան), միջազգային ահաբեկչությունը, որն ուղեկցվում է լոկալ կազմակերպությունների տարածաշրջանային և պսեվդոպետությունների (ԻԼԻՊ) վերածման ռեցիդիվներով, ազգամիջյան անկառավարելի բախումների աճը, տնտեսական ոլորտում սանկցիոն քաղաքականությունը, որն ըստ էության հուղարկավորում է իրավական գլոբալիզմի հայեցակարգը և պարալիզացնում արդեն գոյություն ունեցող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են Արժույթի համաշխարհային կազմակերպությունը, քաղաքական կոալիցիաների շրջանակներում ինքնաթողության իրավունքը, որը գալիս է փոխա-

րինելու միջազգային իրավունքին, միջազգային և լոկալ հակամարտությունները, մարդասիրական աղետների կատակլիզմների լուծման ոլորտում ՄԱԿ-ի դերակատարության ու հեղինակության անկումը և այլն: Այս ամենը ժամանակակից աշխարհի կոնֆլիկտոլոգիական վիճակի քարտեզի ոչ ամբողջական ցանկն է:

Այս ամենը դիտարկելով իրավագիտության (պետության և իրավունքի տեսության) պրիզմայով՝ կարելի է փաստել, որ աշխարհը գտնվում է համակարգային ճգնաժամի մեջ, իսկ համաշխարհային գործընթացների կարգավորումը՝ համակարգային հակամարտության մեջ:

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգային հակամարտությունների ծագումնաբանության համալիր հետազոտության շրջանակներում մեր կողմից հրատարակվել են մի շարք գիտական հոդվածներ, որոնք նպատակաուղղված են եղել նոր ձևավորվող «Իրավական հակամարտաբանություն» գիտական դիսցիպլինի շրջանակներում մեթոդաբանական գործիքակազմը համակարգելուն: Այս հոդվածը համարվում է այդ գիտական հոդվածների թեմատիկ վերլուծական բլոկների տրամաբանական լրացում[1]:

Իրավական հակամարտաբանության պրակտիկ նպատակակետերից մեկը համարվում է անհրաժեշտ գիտական տարողության և իրավական մշտադիտարկման վերլուծական համարժեքության ձևաչափում աշխարհակարգի ընթացիկ վիճակի նկարագրությունը:

Քանի որ աշխարհակարգը, որպես իրավական օբյեկտ կամ իրավունքի օբյեկտ, իր հիմքում կանխորոշվում է միջպետական հարաբերությունների շրջանակներում համակարգային փոխգործակցությամբ, ապա գլոբալացման հեղափոխության պայմաններում, որպես կայացած փաստ, առաջնահերթ պահանջ է դառնում այնպիսի

[1] «Принципы конституционализма в экономической системе» ПРАВОВОЕ ГОСУДАРСТВО: Теория и практика Выпуск N 1 (47), 2017, с. 167-177, «Конфликтогенная Природа Принципа Верховенства Права и Генезис Системных Конфликтов Конституционно – Правового Регулирования», Бизнес в законе. Экономико-юридический журнал, Москва, Выпуск №2, 2016, с. 120-127, «Конфликтологическая Природа Несовершенства в Системе Международного Права» Пробелы в российском законодательстве, Москва, Выпуск №3, 2016, с. 242-248.

եզրութային ագրեգատների գործածումը, ինչպիսիք են՝ «Մարդկությունը» և «Համաշխարհային հանրությունը»:

Ժամանակակից Եվրոպայի ամենաինքնատիպ քաղաքական փիլիսոփաներից մեկի՝ Էնտոնի դե Յասայիի «Պետություն» աշխատությունը սկսվում է հետևյալ արտահայտությամբ. «Ի՞նչ կանեիք, եթե լինեիք պետություն»[1]: Եթե այս հարցադրումը փոխենք «Ի՞նչ կանեիք, եթե լինեիք մարդկությունը» հարցադրմամբ, ապա պատասխանը կլինեին հետևյալ պոստուլատները, որոնք էլ կազմում են սահմանադրականության սիստեմատեխնիկան.

- Մարդկությունը պետք է պատասխանատու կերպով և միանշանակորեն գիտակցի, որ իր գոյատևումն ու կենսագործունեությունը չեն կարող ունենալ ոչ համակարգային բնույթ և գտնվել անկառավարելի ինքնաձևավորման ռեժիմում, և գլոբալ քաղաքակրթական էկզիստենցիալ համակարգի շրջանակներում պետք է կյանքի կոչի համաշխարհային հանրության հավաքական գոյը՝ իրավական կարգավորման համարժեք գործուն կառուցակարգերով:

Վերը նշված պոստուլատի ընդունման պարագայում մարդկությունը հանդես է գալիս որպես իմանենտ իրավագիտակցությամբ օժտված բանականության կրող, որի հիման վրա գործի են դրվում իրավագենեզը և իրավաձևավորման գործընթացը, որում ձևավորվում է համաշխարհային հանրության՝ որպես էկզիստենցիալ համակարգի շրջանակներում իրավական ամրագրման օբյեկտի իրավասուբյեկտությունը: Այս դեպքում իրավական մետրիկան կառուցակարգվում է բանականության առկայության պարտադիրության սկզբունքի հիման վրա, համակարգի՝ որպես ցանկացած գոյի սուբստանցիալ հիմքի օբյեկտիվ սկզբի և համակարգայնության՝ որպես հասարակության գոյության ձևի պարտադիր հատկության, որը հանդես է գալիս որպես լեգիտիմության առաջնային դրսևորում, հիմնականացման (constituition) շրջանակներում: Լեգիտիմությունը, որպես իրավական չափանիշ, գործի է դնում ինչպես մարդկության, այնպես էլ համաշխարհային հանրության՝ որպես իրավական օբյեկտների իրավաբանական կարգավիճակը ամրագրող սահմանադրականության ակտը:

[1] Տե՛ս Энтони де Ясаи, Государство, Москва: Челябинск: ИРИСЭН, Социум, 2016, էջ 13:

Անհրաժեշտ է նշել, որ լեգիտիմության իրավական բովանդակությունը կայանում է մնացած բոլոր իրավական օբյեկտների նկատմամբ նրա հատուկ «Վերաստիճանակարգությամբ», քանզի այն հանդես է գալիս որպես «համակարգային ցենզոր», որը սահմանում է իրավունքի «իրավաբանական կարգավիճակը» իր ցանկացած դրսևորմամբ ինչպես ինքն իր մեջ (այսինքն՝ այն կատեգորիայի մակարդակում, որում պահանջվում են չափանիշներ, որոնք սահմանում են, թե որ դեպքում Իրավունքն ունի իրավունք՝ լինել Իրավունք, և որ դեպքում՝ ոչ, այսինքն՝ ձևաչափ, որում ինչպիսին պետք է լինի իրավունքը, որպեսզի իրավունք ունենա լինել Իրավունք), այնպես էլ իրավակարգավորման բոլոր օբյեկտների (նաև համալիր հասարակական գործընթացի և համաշխարհային հանրության) լեգալության (որպես լեգիտիմության դրսևորման օպերացիոն մակարդակի) համապատասխանության հատկությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել «Հիմնակառուցում» կատեգորիան, դրա նշանակությունը՝ որպես իրավագոյացման բազային գործիքային տարր և շինարարական նյութ իրավունքի՝ որպես համակարգի գործառնական դրսևորման բնագավառում: Եվ այս առումով «Հիմնակառուցումը» պետք է դիտարկել ոչ միայն որպես վերլուծական ակտ, այլ արդեն նաև իրավական ակտ: Այս առումով «Հիմնակառուցումը» հանդես է գալիս համապատասխանաբար որպես սիստեմատեխնիկական ագրեգատ, որը իրացնում է համակարգագոյացման տեխնոլոգիական գործընթացը վերլուծության և իրավունքի (վերլուծական իրավունք) սինթեզում: Ուստի «Հիմնակառուցումը» զուտ փաստի արձանագրումը չէ:

Առանձին վերցրած պետականության մասշտաբում դիտարկելիս այս պոստուլատը ուժի մեջ է մտնում ժողովրդի կամահայտնության միջոցով: Այստեղ ժողովուրդը հանդես է գալիս որպես հասարակության էկզիստենցիալ համակարգի հայեցակարգային մոդելը հաստատող իմանենտ իրավունքի կրող: Այդ մոդելը միանշանակ ձևականացման մակարդակում լիարժեքորեն առարկայական նկարագրում և բացահայտում է արժեհամակարգը՝ որպես իրավական ամրագրման օբյեկտ, որի հիման վրա պետք է մշակվի արդեն էկզիստենցիալ համակարգի գործառնական մոդելը՝ գործի դնելով իրավական տարածությունը, որում պետք է տեղավորվեն ինչպես հասարակությունը, այնպես էլ վերջինիս կողմից հիմնադրվող պետությունը

(իր գործառնական առաքելության և լիազորությունների իրավաբանական ամրագրմամբ), ինչպես նաև համալիր հասարակական գործընթացների իրավական կարգավորման համակարգը:

Սա իրավագոյացման առաջին սահմանադրական ակտն է, որի արդյունքում ձևավորվում է իրավական տարածությունը, որը իրացնում է կառավարելի էկզիստենցիայի կարգավորվածությունը արժեքների կոորդինատների համակարգում՝ նրանում զետեղելով հասարակությունը՝ դրանով իսկ ձեռք բերելով իրավական լեգիտիմություն: Այսպիսով՝ սահմանվում է Հեգելյան «իրավունքի և ոչ իրավունքի»[1] շեմը, և տեղի է ունենում իրավունքի բովանդակային գործողության տարածության գոյացումը:

Սա ամենաառանցքային ասպեկտն է, որի վրա կառուցվում է երկրորդ պոստուլատը:

Մարդկությունը պետք է ունենա կամք և գործառնական ունակություն կառուցելու իր էկզիստենցիալ համակարգը՝ որպես համալիր տեխնոլոգիական գործընթաց, որն իր մեջ ներառում է բոլոր ենթահամակարգերի կառուցումը, որոնց համակարգային փոխգործակցության արդյունքում ապահովվում է համաշխարհային հանրության ներդաշնակ ու հավասարակշռված գործառնական էկզիստենցիան ինչպես վերպետական ու վերազգային, այնպես էլ ներպետական և ազգային մակարդակներում:

Այս պոստուլատի ընդունումը նշանակում է, որ մարդկությունը, արդեն ունենալով համարժեք իրավագիտակցություն և ինքնագիտակցություն՝ նույնականացնելու իրեն որպես բանական գոյի (բարձր կազմակերպված բանականության կրողի բնական իմանենտ իրավասուբյեկտություն), ճանաչելով համակարգային մակարդակում իր էկզիստենցիայի կառավարման անհրաժեշտությունն ու օբյեկտիվ բնույթը, որպես ֆունկցիոնալ-ակտիվ արարող, ստեղծագործող, պարտականություն է ստանձնում կառուցելու էկզիստենցիայի համակարգ ֆունկցիոնալի իրավասուբյեկտության ձևաչափում:

Սա իրավագոյացման երկրորդ սահմանադրական ակտն է, որում «Մարդկություն» և «համաշխարհային հանրություն» իրավական օբյեկտները, ունենալով կյանքի և գոյատևման սահմանադրա-

[1] Տե՛ս Георг Вилгельм Фридрих Гегель, Философия права, Академия наук СССР, Институт Философии, издательство “Мысль”, Москва, 1990:

կան իրավունք, արդեն որպես ֆունկցիոնալներ, ծանրաբեռնվում են իրենց ճակատագրի և կենսապահովման համար պատասխանատվությամբ՝ դրանով իսկ ավարտելով լիարժեք իրավասուբյեկտության ակտը: Այդպիսով տեղի է ունենում իրավունքի ֆունկցիոնալ գործողության տարածականագոյացումը: Այսինքն՝ տեղի է ունենում իրավունքի օնտոգենեզ՝ որպես իրավունքների և պարտականությունների սինթեզ միասնական ամբողջում, որի արդյունքում գործառնականորեն իրացվում է իրավագոյացումը, քանի որ արդեն առկա է ինչպես իրավունքի կառուցվածքը, այնպես էլ դրա կրողը, որի դերում հանդես է գալիս Սուբյեկտը: Այդպիսով համակարգագոյացումը ձեռք է բերում իրավական բնույթ, իրավական օբյեկտի հատկություն, համապատասխանաբար և իրավական բովանդակություն պարտավորվածության, կարգավորվածության և կառավարելիության կազմվածքով ստեղծվող համակարգի շրջանակներում: Ինչպես նաև սիստեմատեխնիկական հանդես է գալիս որպես իրավական օբյեկտ՝ ֆունկցիոնալի՝ համակարգագոյացման տեխնոլոգիական իրականացման բովանդակային առաքելությամբ:

Նման դրվածքում դիտարկվում է նաև իրավագոյացման երրորդ սահմանադրական ակտը, որը եզրափակելով իրավագենեզի ամբողջականության սիստեմատեխնիկական կառուցվածքը, գործի է դնում իրավունքի օպերացիոն գործողության տարածությունը՝ դրանում տեղադրելով պետությունը՝ որպես իրավական օբյեկտ տեխնիկական ընթացակարգային մակարդակում՝ հիմնական օրենքի ընդունման իրավաբանական կանոնակարգի շրջանակներում:

Իրավունքի համակարգի կառուցման նման սիստեմատեխնիկայի արդյունքում ընդգծվում են այն սահմանադրական օբյեկտները, որոնք իրավունքի և պետության կառույցի համակարգագոյացման մեջ ունեն բարձրագույն իրավական կշիռ, և սահմանվում է նորմատիվ ակտերի աստիճանակարգի ու ներդրվածության համակարգը, որոնք գործի են դնում համալիր հասարակական գործընթացի իրավական կարգավորումը իրավունքի սահմանադրական գործողության գործառնական կանոնակարգի և մետրիկայի մեջ՝ դրանով մեկնարկելով սահմանադրահիրավական կարգավորումը օպերացիոն մակարդակում:

Ըստ էության իրավագոյացման սիստեմատեխնիկական ձևաչափ է, որի համաձայն՝ իրավագենեզն ու պետականագոյացման շրջանակներում իրավական կարգավորման համակարգագոյացումը ապահովում են իրավունքի գործողության սահամանադրական ամբողջականությունը՝ բացառելով, չթույլատրելով և կանխարգելելով կամ վատագույն դեպքում լուծելով համակարգային հակամարտությունները իրավունքի լեգիտիմության խելամիտ և վերլուծական մետրիկայում:

Իրավունքի գերակայության սկզբունքի իրավական բովանդակության ընկալումը՝ որպես իրավական պետության և քաղաքացիական հասարակության կարգավիճակի ապահովման հիմնական պայման, կանխորոշվում է իրավական համակարգի ներսում իրավունքի գործողության բոլոր մակարդակներում համակարգային հակամարտություններ չթույլատրելու իրավագիտակցությամբ:

Նման մեթոդաբանական մոտեցումը ակնհայտորեն կարելի է կիրառել ռեկուրսիվորեն հավաքական գոյի ձևի և դրսևորման աստիճանակարգի ցանկացած հատվածում՝ խնդիր դնելով սահմանելու յուրաքանչյուր կոնկրետ մակարդակի համար սահմանադրահիրավական կարգավորման սիստեմատեխնիկան: Այդ մակարդակներն են.

- Մարդկություն,
- Քաղաքակրթություն,
- Ժողովուրդ,
- Ազգ, ազգություն,
- Պետական կոնգլոմերացիաներ, կայսրություններից մինչև միութենական, դաշնային, ծրագրային, նպատակային կազմավորումներ, ունիտար պետական կազմավորումներ,
- Բիզնես կոնգլոմերացիաներ՝ տրանսազգայինից մինչև անհատ ձեռնարկատերերը,
- Հասարակական միավորումներ ու շարժումներ,
- Սոցիալական կազմավորումներ՝ տոհմացեղային, ընտանեկան, ակումբային շահերով և այլն,
- Մարդը, որպես մասնավոր գոյի իրավասուբյեկտության կրող, որը եզրափակում է համակարգագոյացման այդ աստիճանա-

կարգը, համարվում է վերը նշված կոլեկտիվ գոյի իրացման ձևերի աստիճանների սուբստանցիալ հիմքը։

Այս պարագայում ակնհայտ է, որ Իրավունքի համակարգի կամ իրավունքի գործողության շրջանակներում իրավական տարածությունը, իրավական ամրագրումը և իրավաստեղծագործությունը ունեն փոխկապակցվածության և ներդրվածության բնույթ վերը նշված աստիճանակարգին համապատասխան, որում կենտրոնական իրավական օբյեկտի դերում հանդես է գալիս մարդը։

Կոլեկտիվ գոյի աստիճանակարգի յուրաքանչյուր աստիճանում իրավական բովանդակությունը չի կարող դիտարկվել Մարդու բովանդակային կոնստրուկտիվի ամբողջականությունից դուրս, ինչպես նաև մարդու իրավական բովանդակությունը չի կարելի սահմանափակել իրավասուբյեկտության նեղ միջանցքով՝ մասնավոր գոյի իրավագոյացման շրջանակներում:

Առանց իրավական ամրագրման օբյեկտի բովանդակության բացահայտման չի կարող կատարվել իրավական ամրագրում այդ ամրագրման առարկայի բացակայության պարագայում, այսինքն՝ օբյեկտի էությունը չի կարող բացակայել կամ լինել անորոշ և ոչ միանշանակ, քանի որ իրավական ամրագրումը պետք է միանշանակորեն և որոշակիորեն ապահովի հենց օբյեկտի ընտրված կոնստրուկցիայի էության համապարտադիրությունը՝ որպես բազային ճշմարիտ՝ հաջորդականորեն չթույլատրելով դրա իրավական բովանդակության մեջ բազմազանությունը նորմատիվ կոնստրուկտիվի մեկնաբանության միջոցով (օրենքի կամ այլ ենթաօրենսդրական ակտի միջոցով)։

Այս առումով սահմանադրական իրավագոյացման սիստեմատեխնիկական իրավական ամրագրման օբյեկտի դերում ընտրում է ոչ թե կոլեկտիվ գոյի աստիճանակարգի առանձին դրվագներ, այլ կոլեկտիվ գոյի աստիճանակարգի ամբողջ ծառը՝ որպես մասնական ամբողջ։

Այս պարագայում իրավունքի գործողության հայեցակարգային տարածությունում լուծվում է ևս մեկ՝ նավիգացիայի առանցքային մեթոդաբանական հիմնախնդիր. իրավագենեզի սուբստանցիալ մակարդակը կանխորոշող բազային համակարգագոյացնող օբյեկտից, որը հանդիսանում է մարդը, վերընթաց մինչև կոլեկտիվ գոյի աստի-

ճանակարգի օբյեկտներ, որոնց բարձրագույն մակարդակը համարվում է մարդկությունը՝ որպես իրավական օբյեկտ, որի իրավական բովանդակությունը կանխորոշվում է կոլեկտիվ գոյի աստիճանակարգի բոլոր օբյեկտների վերջնական սինթեզով։

Ինչպես նաև հնարավոր է դառնում նավիգացիան իրավունքի օպերացիոն գործողության տարածությունում, որում տեղի է ունենում օպերացիոն իրավակիրառման գործառնական իրացման վայրընթացը արդեն սահմանադրաիրավական կարգավորման ռեժիմում, այսինքն՝ կոլեկտիվ գոյի աստիճանակարգի յուրաքանչյուր աստիճանի իրավակարգավորումը բխում է աստիճանակարգում առկա վերադաս օբյեկտի իրավական տարածությունից։

Սա նշանակում է, որ ցանկացած նորմատիվ ակտ պետք է ունենա սահմանադրությունից բխող հետագիծ։ Նման սիստեմատեխնիկան թույլ է տալիս բացառել իրավունքի համակարգային հակամարտությունները բովանդակային մակարդակում օրենսդրական համակարգի համակարգային սինխրոնիզացման միջոցով, որի ցանկացած նորմատիվ ակտը պետք է արտացոլի մարդու՝ որպես ժողովրդի ներկայացուցչի, հասարակության անդամի, քաղաքացու, պետության շրջանակներում համալիր հասարակական գործընթացների իրականացման իրավական բովանդակությունը։

Կոլեկտիվ գոյի շրջանակներում Մարդու գոյության սկզբունքի գիտակցումը պետք միտված լինի նրան, որ յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք։ Համապատասխանաբար, պետությունն ունի պարտականություն ապահովելու քաղաքացիների կյանքի անձեռնմխելիությունը՝ որպես վերջիններիս բազային և առաջնային իրավունք։ Առանց նման գիտակցության իրավաբանական իրավասության հասարակության իրավագիտակցության ինստիտուտը կլինի ոչ լիարժեք՝ քաղաքացիների կողմից գիտակցական մակարդակում իրենց իրավունքների ու պարտականությունների չընկալման ռեցիդիվով։

Մասնավորապես այդ ասպեկտն էլ համարվում է անկատարության և երբեմն նաև անկոնֆլիկտ իրավական կարգավորման համարժեք համակարգի ստեղծման անհնարինության պատճառական մակարդակը, օրինակ՝ միջազգային իրավունքի համակարգի ճգնաժամը, երկմակարդակ սահմանադրության գործառնավորումը վեր-

ազգային, դաշնային մակարդակներում և իրավունքի գործողությունը ինքնավարության մակարդակում՝ ինքնիշխանության այս կամ այն մոդելով։

Միաժամանակ մեթոդաբանական մոտեցումն ընտրված է իրավունքի՝ որպես համակարգային երևույթի, համակարգի և համակարգայնության՝ որպես իրավագենեզի սուբստանցիալ հիմքի, սիստեմատեխնիկայի՝ որպես իրավունքի համակարգի և պետության կառույցի կառուցման գործառնական ունակության, սահմանադրականության՝ որպես իրավական ամրագրման համակարգի, որն ապահովում է իրավունքի համակարգային ամբողջականությունը պետության գենեզիսի բոլոր փուլերում, բովանդակային բնույթի ֆենոմենոլոգիական սինթեզի նպատակով։

Որպես ֆենոմենոլոգիական սինթեզի հետևանք, սահմանադրականությունը հանդես է գալիս որպես պետական կառույցի պատասխանատու իրավագոյացման մեթոդաբանական սկզբունք և համալիր հասարակական գործընթացների իրավական կարգավորման համակարգագոյացման ունակություն՝ իրավական կարգավորման համակարգում համակարգային հակամարտությունների բացառման սիստեմատեխնիկական սկզբունքով։

Այս պարագայում սահմանադրականությունը հանդես է գալիս որպես իրավունքի լեգիտիմացման համակարգ՝ իր ելակետային բովանդակային գործառնական առաքելությամբ և դրսևորմամբ, իրավունքի համակարգային ամբողջականության մետրիկայի միջոցով, որի կորուստը նրան դարձնում է ոչ իրավունք։

Ինչպես երևում է, սահմանադրականության ընկալման պատկերացման մեջ վերոնշյալ սպեկտրից դուրս ցանկացած պարզեցում անխուսափելիորեն կհանգեցնի իրավունքի էության ընկալման անունակության ընդհանրապես և սահմանադրականության էության մասնավորապես, որի արդյունքում սահմանադրականությունը կդիտարկվի որպես սահմանադրության ընդունման տեխնիկական ակտ, որը, որպես կանոն, տեղի է ունենում այլ սահմանադրությունների տեքստերից արտագրելու և սուբյեկտիվ իրավասության (որպես կանոն, ոչ իրավասու պրոֆեսիոնալների կամ ոչ պրոֆեսիոնալների կողմից) շրջանակներում խմբագրելու միջոցով, որը երաշխավորում է իրավունքի գործողության դեֆորմացման ռեցիդիվները

սահմանադրաիրավական կարգավորման մակարդակից մինչև իրավակիրառ բնույթի ընթացակարգերը։

Բացասական պատասխանը, այսինքն՝ իրավական պոստուլատի չընդունումը, գործի է դնում անհամակարգայնության թույլատրելիությունը, որի արդյունքում հնարավոր չի դառնում գոյատևման ներդաշնակ ու հավասարակշռված էկզիստենցիալ համակարգի կառուցումը, կամ նեղացվում է համակարգագոյացման դրվածքը համաշխարհային հանրության այն անդամների շահերի իրավիճակային պայմանավորվածությունների ձևաչափում, որոնց դիրքորոշումները հնարավոր չէ անտեսել ուժի իրավունքի տեսանկյունից։ Այս դրվածքի պայմաններում առաջանում է իրավունքի համակարգագոյացման համակարգային հակամարտություն, որում հնարավոր չի լինում կառուցել իրավունքի համակարգ, որն ապահովի իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքը, և որի պայմաններում իրավագոյացման սուբստանցիալ հյուսվածքները փոխարինվում են վարքագծի կանոնագոյացմամբ, որը դուրս է լեգիտիմության իրավական մետրիկայից, փոխարինելով իրավական իմպերատիվը (սահմանադրական իրավական լեգիտիմության օբյեկտիվ բնույթը) որոշում կայացնող ուժային խմբի բռնապետական թելադրանքով (ոչ իրավական լեգիտիմության ներսուբյեկտային բնույթը)։

«Մարդկություն» և «համաշխարհային հանրություն» եզրույթների համակողմանիությամբ և մեծածավալությամբ հանդերձ՝ իրավագիտության տեսանկյունից, որը պարտավոր է դիտարկել դրանք որպես իրավունքի օբյեկտներ, դրանք չեն կարող մնալ «պետությունների ներսուբյեկտային ընկալման» հարթության մեջ և ակնհայտ է, որ պետք է ձևականորեն մոդելավորվեն սահմանադրական ունիվերսումի վերլուծական ձևաչափում, որը սահմանում է բովանդակային և գործառնական միանշանակությունը, առանց որի «համաշխարհային հանրություն» հասկացության ընդհանրական ընկալումը հենց համաշխարհային հանրությանը կդարձնի առնվազն անկարող։ Արդյունքում ներկա ժամանակահատվածում մենք դեմ առ դեմ մոլորակային մակարդակում բախվում ենք գլոբալ համակարգային հակամարտության մարտահրավերին։ Քանզի սահմանադրական մակարդակում իրավական ինքնանույնականացման բացակայությունը համալրվում է «գերտերության» թելադրանքի սկզբունքով, որը

հիմնվում է ձևական հավաքական կոնսենսուսի վրա, որը ձեռք է բերվում համաշխարհային հանրության անդամներին արդեն սահմանված սցենարը արտաքուստ ոչ հրապարակային պարտադրելու միջոցով՝ հենված լինելով «բացառիկության ինքնահռչակ իրավունքի» վրա:

Այս պարագայում կենտրոնական հիմնախնդիրը համարվում է «Իրավունքի համակարգ», «կոնվենցիոնալ իրավունքի տարածականություն» և «Սահմանադրական իրավունք» կատեգորիաների ընկալման անորոշությունը: Խնդիրն այն է, որ դրանք բովանդակային մակարդակում նույնական չեն և անհամատեղելի են իրավունքի գործողության գործարկման գործառնական համակարգի կառուցման սիստեմատեխնիկայում:

Իրավունքի համակարգ կառուցելիս ամենաառանցքային հարցը համարվում է այնպիսի կոորդինատների համակարգի պրոեկտավորումը, որում իրավունքի գերակայության սկզբունքը (իրավունքի ուժ) ոչ միայն համարվում է հնարավոր, այլև օբյեկտիվ վերլուծական ձևականացման հիման վրա ամրագրվում է սահմանադրական մակարդակով՝ բացառելով իրավունքի դրսևորման կախվածությունը ուժերի աշխարհաքաղաքական դասավորվածությունից, որոնք ուղղված են ենթակայության աստիճանակարգով ազգային շահերի ուրվագծմանը:

Իրավական համակարգի նման սիստեմատեխնիկայի արդյունքում իրավունքի գործողությունը գործի է դրվում ակտիվ իրավասուբյեկտության պարադիգմայի ձևաչափում: Այս պարագայում ընդունվում է պետության՝ որպես ակտիվ գործող սուբյեկտի հանդես գալու թույլատրությունը, որը հետապնդում է իր սեփական շահերը, որոնք հակադրվում են և փոխադարձաբար բացառում են պետականության մոդելը՝ հիմնված քաղաքական-փիլիսոփայական հայեցակարգի վրա, որի համաձայն՝ «պետությունը «պասիվ գործիք է», որը ծառայում է բացառապես հասարակության շահերին ամբողջությամբ:

Այս տարբեր հայեցակարգերի իրավական բովանդակությունը տարբեր է և անհամադրելի, որոնցում սահմանադրական էությունն ու բովանդակությունը տարբեր են: Պետության սուբյեկտության ակտիվ մոդելի դեպքում սահմանադրաիրավական կարգավորումը իր մեջ կրում է եզրութային հայեցակարգային հակամարտություն, որը

վերացնում է իրավունքի էությունը և փոխարինում է այն համապարտադիր կանոններով՝ փոխարինելով իրավազոյացումը կանոնագոյացմամբ, պարտավորության ինստիտուտը փոխարինում է հարկադրական կանոնակիրառմամբ: Պետության օպերացիոն գործառնավորման տեսանկյունից դա կարող է լինել աննկատ, քանի որ իրավունքի դրսևորման իրավակիրառ մակարդակը «իրավունք չունի» քննարկել կամ սահմանել արդարադատության արդարության չափանիշները, որպես ֆունկցիոնալ՝ իր գործադիր բնույթի բերումով, պարտավոր է պահպանել «համապարտադիր վարքագծի կանոնները»:

Արդյունքում նշմարվում է պետականագոյացման համակարգային հակամարտություն, որը կայանում է նրանում, որ պետականության մեթոդաբանական բազիսը, պետության գործառնավորման օպերացիոն բազիսը, որը դիտարկվում են քաղաքական փիլիսոփայությունից դուրս, նեղացվում է տնտեսագետների մոտեցման շրջանակներում, որոնք պետությունը դիտարկում են որպես բիզնես սուբյեկտ, որպես ունիվերսալ կոնստրուկտիվ, միայն պետության դեպքում է, որ վերջինս ձգտում է առավելագույնի հասցնել ոչ թե շահույթը, այլ իշխանական լիազորությունների ծավալը՝ դրանք օգտագործելով սեփական վերջնական նպատակներին հասնելու համար, ինչպիսին որ նրանք լինեն:

Նման համակարգային հակամարտության պայմաններում ձևավորվում է համակարգային ռեցիդիվ:

Ամեն ինչ դիտարկվում է օգուտի հարթության մեջ: Պետության դիսֆունկցիան հանդես է գալիս որպես իրավական էության փոխարինման արդյունք, որտեղ էկոնոմիկան չի բխում պետականության աստիճանակարգային կառուցվածքից, որպես հասարակական կառուցվածքի համակարգի, այլ ընդհակառակը, պետությունը հանդես է գալիս որպես օգուտի տնտեսական կոնստրուկտիվի մասնավոր դեպք: Պետության էության նման գաղափարախոսական իրավասահմանման արդյունքում, որպես պարտավորության անվիճելի և առաջնային սահմանադրական առարկա, այդ աստիճանակարգը փոխարինվում է հասարակության և պետության միջև առևտրով, որոնք ունեն օգուտի տարբեր ոլորտներ:

Ստորև ներկայացնում ենք իրավունքի գործառնական գործոդության սխեմատիկ կոնստրուկտիվը «ռացիոնալ ընտրության պա-

րաղիգմայում», պետության քաղաքական դինամիկայի շրջանակնե-
րում:



Նման դասավորվածությամբ «պետության հիմնական գործիքը համարվում է այս կամ այն խմբի հպատակների սատարման գրավումը նրանց օգտին ուրիշներից զավթած հարստության վերաբաշխման» միջոցով. . .

Այս պարագայում պետությունը պարփակվում է քաղաքական իշխանության ներքին բնույթի մեջ՝ ունենալով կենտրոնական նպատակ և խնդիր՝ ցանկացած միջոցով փոփոխվող հանգամանքների պայմաններում ապահովել իշխանության համակարգի հավերժությունն ու անխափանությունը, սահմանելով այն ուղին, որով զարգանում են կառավարման ձևերը, այլ ոչ թե ուղին է սահմանվում այդ ձևերով: Սա սահմանադրականության համակարգային հակամարտության թաքնված ռեցիդիվ է, երբ սահմանադրությունը գրվում է կամ փոփոխվում է հարմարավետ կառավարման ձևի համար, այլ ոչ հակառակը, որ կառավարման ձևը և հասարակական համալիր գործընթացների կառավարման համակարգը բխեցվում են պարտավորության (долженствование) սահմանադրական կարկասից, որը իրացնում է հասարակության արժեքների համակարգը՝ պետական շահերի իրավական մետրիկայով (պոզիտիվիզմի կոնֆլիկտաբանական բնույթը):

Պետության և հասարակության շահերի միջև անհավասարակշռությունը հնարավոր չէ լուծել առանց լեգիտիմության իրավական մետրիկայի, որը որոշում և ուրվագծում է իրավական թույլատրելիության սահմանները (շահերը որպես այդպիսիք), որն էլ իր հերթին կարող է դուրս բերվել պետության շահերի իրավական բովան-

դակության և հասարակության շահերի իրավական բովանդակության կոնստրուկտիվներից։

Անհավասարակշռության նշմարման հնարավորության բացակայությունը դեռևս չի նշանակում, որ այդ անհավասարակշռությունը կանհետանա և չի լինի, թեպետ իրավական առումով ոչ ոք ձևականորեն այն չի էլ կարող ապացուցել սահմանադրական ձևաչափի բացակայության պարագայում, որի հիման վրա հնարավոր կլիներ անցկացնել սահմանադրական մշտադիտարկում։ Սա ուղղակիորեն վերաբերում է վերը նշված սահմանադրական օբյեկտներին ինչպես իրավական բովանդակության կոնստրուկտիվի առումով, այնպես էլ դրանից բխող իրավակիրառ ձևաչափի առումով, որը հնարավորություն է տալիս պրակտիկայում գնահատական տալու անհավասարակշռությանը և իրականացնելու սահմանադրական մշտադիտարկում պետության և հասարակության շահերի բախումները կանխարգելելու առումով, քանզի հակամարտության առկայությունն արդեն իրենից ներկայացնում է սահմանադրականության, քաղաքացիական իրավական հասարակության սկզբունքի վերացում և այս կամ այն ձևով Սահմանադրության խախտում։

Ուստի իրավագիտության տրամաբանական հարթակը տեսականորեն թույլատրում է նման հակամարտության առկայությունը՝ որպես «իրերի բնական վիճակ» պետության զարգացման դինամիկայի պայմաններում և համապատասխանաբար պետություն-հասարակություն հարաբերություններում նոր հանգամանքների ի հայտ գալով։ Ավելին, այդ ամենը բնական և օրինաչափ չէ և բացառում է սահմանադրականությունը, որի խնդիրն է սահմանել պետականության բազիսի անփոփոխելիությունը (արժեհամակարգի և կառավարման ձևի սահմանադրական կոնստրուկտիվը, որն ապահովում է այդ արժեքների համակարգի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը) և իրավական համակարգը, որը ապահովում է այդ պետականության իրավական ամրագրումը և իրավաբանական ուղեկցումը արդեն օպերացիոն գործառնական մակարդակում։

Այս պարագայում սահմանադրականության էությունը անորոշ է դառնում հասարակության քաղաքացիական իրավասությանը համաչափ՝ երբեմն իջնելով մինչև կենցաղային մտածողության մակարդակ, ձևավորելով անկարողություն՝ հասկանալու սահմանադրական բազիսի փոփոխության իրավական բովանդակության և կար-

գավիճակի տարբերությունը և այն հանգամանքները, որոնք փոխգործակցության կոնֆիգուրացիայի փոփոխության ուժով պահանջում են իրավական ամրագրում համալիր հասարակական գործընթացի շրջանակներում, որոնք նոր հանգամանքների (որոնց իրավական բովանդակությունը չպետք է դուրս գա սահմանադրական բազիսի շրջանակներից) բերումով պահանջում են կատարելագործում և լրացուցիչ իրավական ամրագրում։

Սա իրավական վերլուծության որակի համարժեքության համար պատասխանատվության առանցքային հիմնահարցն է, որն ի վիճակի է հասկանալ իրավունքի էությունն ընդհանրապես և սահմանադրականության իրավական բովանդակությունը, որպեսզի «ակնածանքով» վերաբերի իրավունքի գենեզիսի, հասարակության, պետության, պետականության ինստիտուտի ամրագրման իրավագոյացման և պետության իրավասուբյեկտության գործառնական նախագծման հիմքերին վերաբերող ցանկացած հարցի։ Սահմանադրությունը ընթացիկ իրավիճակի ներքո չի կարող գրվել։ Սահմանադրականության՝ որպես պետականության իրավական ամրագրման դիսցիպլինի գաղափարը չի կարող հիմնվել կարճաժամկետ կամ նույնիսկ միջնաժամկետ հանգամանքների իրավաստեղծագործության վրա, սակայն օբյեկտը սահմանադրական օրինաստեղծագործության կարգավիճակ ձեռք է բերում միայն այն դեպքում, եթե ունենում է համակարգաստեղծ ֆունկցիոնալություն, այսինքն՝ բովանդակային և, մասնավորապես, նրա իրավական բովանդակության կազմվածքի առումով ունենում է ոչ միայն երկարաժամկետ ֆունկցիոնալության բնույթ, այլև, որպես բազային օբյեկտ, անփոփոխելիության իմանենտ կարգավիճակ, որից կախված է համակարգային ամբողջականությունը։ Մասնավորապես պետությունը չունի բարձրագույն իշխանության իմանենտ իրավունք, այն պատկանում է բացառապես ժողովրդին-հասարակությանը (հասարակության իրավական բովանդակությունը)։ Այս պարագայում իրավունքի համակարգի կառուցման համակարգային ճարտարաբանությունը սկզբունքորեն չի ապահովում իրավագոյացման առաջին և երկրորդ սահմանադրական ակտերը՝ պարփակվելով ընդամենը իրավունքի գործողության օպերացիոն տարածության մեջ ձևական առումով սահմանադրության ակտի ընդունմամբ՝ որպես տեխնիկական ընթացակարգ։

СИСТЕМАТЕХНИКА КОНСТИТУЦИОНАЛИЗМА

Вардан Айвазян
Начальник отдела юридического обеспечения
специальной следственной службы РА,
доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В рамках комплексного исследования Генезиса Системных Конфликтов в Конституционно-правовом регулировании, нами был издан ряд статей, нацеленных на систематизацию методологического инструментария в рамках зарождающейся новой научной дисциплины «Правовая конфликтология». Настоящая статья является логическим дополнением тематических аналитических блоков, раскрытых в ранее опубликованных статьях.

SYSTEM ENGEENEARING OF THE CONSTITUTIONALISM

Vardan Ayvazyan,
Head of the Legal Provision Department of Special Investigation Service of RA,
Docent at the YSU of Chair of Constitutional Law, Candidate of Legal Sciences

As part of a comprehensive study of the Genesis of Systemic Conflicts in Constitutional Legal Regulation, we published a number of articles aimed at systematizing methodological tools within the emerging new scientific discipline "Legal Conflictology." This article is a logical addition to the thematic analytical blocks separately disclosed in these articles.

Բանալի բառեր – սահմանադրականություն, համաշխարհային ճգնաժամ, սիստեմատեխնիկա, սահմանադրաիրավական կարգավորում, իրավական հակամարտաբանություն, համակարգային հակամարտություն, համաշխարհային հանրություն, մարդկություն
Ключевые слова: конституционализм, мировой кризис, системотехника, конституционно-правовое регулирование, правовая конфликтология, системные конфликты, мировое сообщество, человечество
Key words: constitutionalism, world crisis, system engineering, constitutional-legal regulation, law conflictology, systemic conflicts, global community, humanity

ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անահիտ Մանասյան
ՀՀ արդարադատության ակադեմիայի
գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

«Ժողովրդավարությունն» առօրյայում օգտագործվող ամենատարածված հասկացություններից է, և ժամանակակից աշխարհում դժվար թե գտնվի մեկը, ով ծանոթ չէ հիշյալ եզրույթին: Միևնույն ժամանակ, կարծում ենք, նշված հասկացությունը ոչ միշտ է պատշաճ ընկալվում, իսկ որոշ դեպքերում ձևախեղված էությամբ է կիրառվում, հատկապես երբ ավտորիտար և տոտալիտար ռեժիմներն իրենց ժողովրդավար են հռչակում՝ ժողովրդի աջակցությունը որպես դրա հիմնավորում վկայակոչելով[1]: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ ժողովրդի աջակցությունը փաստող այս կամ այն երևույթների առկայությունը, օրինակ՝ ընտրությունների հրապարակված արդյունքները և այլն, չեն կարող ժողովրդի իրական իշխանությունն ու ժողովրդավարության գոյությունը փաստող միակ վկայությունը լինել: Վերջիններս ենթադրում են մի շարք այլ կարևոր հանգամանքների առկայություն, որոնց Էությունը անհրաժեշտ ենք համարում բացահայտել ստորև:

Բառարանային ձևակերպմամբ՝ ««ժողովրդավարությունը» ժողովրդի կողմից կառավարումն է, որտեղ գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին և իրականացվում է նրա կողմից անմիջականորեն կամ ազատ ընտրական համակարգի համատեքստում նրա կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով»: Ինչպես բնութագրում էր Աբրահամ Լինքոլնը, ժողովրդավարությունը «ժողովրդի, ժողովրդի կողմից և ժողովրդի համար» իրականացվող իշխանութ-

[1] Տե՛ս *What Is Democracy?* Editor: Howard Cincotta, https://www.ait.org.tw/infousa/zhtw/docs/whatsdem/whatdm2.htm:

յունն է[1]: Մեկ այլ բնորոշմամբ՝ ժողովրդավարությունը կառավարման ձև է, որի պարագայում քաղաքացիներն անձամբ կամ իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով իրականացնում են (քաղաքական) որոշումների կայացման իրավունքը: Ընդ որում, ժողովրդավարության հիմքում ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու հանգամանքն է[2]: Ժողովրդավարությունը ներկայացվում է նաև որպես հասարակության պետական-քաղաքական այնպիսի կազմակերպում, որտեղ ժողովուրդն է հանդիսանում իշխանության աղբյուրը[3]:

Հիշյալ համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ գրականության մեջ ներկայացվում են նաև տարաբնույթ հանգամանքներ, որոնք ենթադրում են, այսպես կոչված, «լավ, որակյալ» ժողովրդավարության առկայությունը, այդ թվում՝ չափահաս քաղաքացիների համընդհանուր ընտրական իրավունքի, պարբերական, ազատ, մրցակցային, արդար ընտրությունների, առավել քան մեկ քաղաքական կուսակցության, առավել քան մեկ տեղեկատվության աղբյուրի առկայությունը և այլն[4]:

Ամփոփելով ներկայացված տեսակետները՝ հանգում ենք այն եզրակացության, որ չնայած դրանցից յուրաքանչյուրը տարբեր դիտակետերից է մոտենում քննարկվող երևույթին, սակայն բոլորի համար էլ առանցքային է մի կարևոր հանգամանք՝ այն, որ իշխանության աղբյուրը ժողովրդավարական հասարակական համակարգերում ժողովուրդն է: Հետևաբար, մեր կարծիքով, «ժողովրդավարություն» երևույթը բնութագրելու համար առաջին էլակետային հանգամանքն այն է, որ ի տարբերություն կառավարման այլ ձևերի ժողովրդավարության պարագայում իշխանության իրական աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունը պատկանում է ժողովրդին, իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս Философия: Энциклопедический словарь. — М.: Гардарики. Под редакцией А.А. Ивина. 2004. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/313:

[3] Տե՛ս Философский энциклопедический словарь. 2010. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/313:

[4] Տե՛ս Leonardo Morlino. Qualities of Democracy: How to Analyze Them. Istituto Italiano di Scienze Umane, Florence (Italy). 2009, էջ 3:

Հիշյալ համատեքստում հարց է առաջանում այն մասին, թե արդյո՞ք համընդհանուր ճանաչում գտած վերը նշված բնորոշումը բավարար է ժողովրդավարության էությունը պատշաճ ընկալելու և ներկայացնելու համար: Ավելին, արդյո՞ք այդ բնորոշման պայմաններում ընդհանրապես հնարավոր է խոսել ժողովրդավարության առկայության կամ բացակայության մասին, թե՞ վերջինս ընդամենը նպատակ է, որին պետք է ձգտել, սակայն երբևէ հնարավոր չի լինի կատարյալ ձևով կենսագործել: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ժողովրդավարությունն ընդամենը սոցիալական իդեա, նպատակ է և չափազանց բարդ կամ նույնիսկ անհնար է վերջինս ամբողջությամբ իրացնել: Նշված տեսակետի կողմնակիցների կարծիքով՝ տվյալ պարագայում հիմնական մեթոդոլոգիական ասպեկտն այն պետք է լինի, որ ժողովրդավարությունը ոչ թե պետք է դիտարկել որպես որակ, որը բնորոշ է կամ բնորոշ չէ կոնկրետ հասարակությանը, այլ հիմնական ուշադրությունը պետք է սևեռել այն հանգամանքին, որ «ժողովուրդն» ինքը պատասխան տա այն հարցին, թե որքանով ժողովրդավարական է ինքը, որքան ժողովրդավարական կարող է կամ պետք է լինի և ինչպես ժողովրդավարությունը կարելի է ընդլայնել[1]:

Առաջադրված հարցադրումներին պատասխանելու համար անհրաժեշտ է մի քանի կարևոր հիմնահարցերի վերլուծություն, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ ժողովրդավարական կառավարումն իր հետ բերում է բազում խնդիրներ, որոնք սկսում են կասկածի տակ դնել վերջինիս արդյունավետությունը: Այդ թերությունները հարկ ենք համարում վերլուծել հիշյալ համատեքստում:

Կարևորագույն բացասական երևույթը, որին հանգում են ժողովրդավարական կառավարման համակարգերը, «միջակ առաջնորդների» կամ, այսպես կոչված, «կարգախոսների ստրուկների» ձևավորումն է, ինչն իր հերթին հանգեցնում է ցածր մշակույթի առաջացման: Տոկվիլի կարծիքով՝ նույնիսկ եթե լավ առաջնորդները կարողանում են գալ իշխանության, նրանք ի վիճակի չեն լինում իրա-

[1] Տե՛ս Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 144:

կանացնել երկարաժամկետ և համահասարակական ծրագրեր, քանի որ վերջիններս գտնվում են տարատեսակ հետաքրքրություններ ունեցող անկայուն հասարակության «ողորմածության» ներքո, որն անընդհատ փոխում է իշխանության կրողներին ընտրությունների արդյունքում: Այդ հանգամանքն իր հերթին հանգեցնում է իշխանության անարդյունավետության[1]: Ավելին, ընդգծվում է, որ հիշյալ համակարգերում հաջողակ քաղաքական գործիչ է դառնում այն անձը, ով հմտացած է բանակցություններին և «առևտրային» հարաբերություններին, հետևաբար նաև՝ կոնկրետ ծրագրերի աջակցության ad hoc կոալիցիաներ ստեղծելու հարցերում[2]: Նույնիսկ ժողովրդավարական կառավարման սկզբունքներին վերաբերող մեթոդական ուղեցույցներում է շեշտադրվում ներկայացուցիչների՝ ինքնագովազդի գործառույթը, և ընդգծվում է, որ վերջիններիս հաջողությունը հնարավոր է սոսկ այդ գործառույթի իրացման պարագայում, քանի որ անձը չի կարող ճանաչված լինել, քանի դեռ չի գովազդում իրեն[3]:

Ժողովրդավարական հասարակական համակարգերի կարևորագույն թերություններից է դիտարկվում նաև, այսպես կոչված, «դատարկ տարածքի» սինդրոմը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ իշխանության կրողն ու աղբյուրը, այն է՝ ժողովուրդը, տվյալ պարագայում չանհատականացվող, վերացական երևույթ է՝ բաղկացած անընդհատ փոփոխվող մասնաներից: Արդյունքում առաջանում է այսպես կոչված «դատարկ տարածք», որի համատեքստում էլ իրականացվում է իշխանությունը՝ ժողովրդի կողմից ընտրված կամ ինքնանշանակված անձանց կողմից, իսկ ժողովուրդն ինքն իրականում հեռացված է մնում իշխանությունից: Արդյունքում նման իշխանությունը անմիջապես զբաղեցվում է այնպիսի անհատներով, որոնք խաղում են հասարակական կարծիքի հետ կամ շահարկում են այն: Այդ հանգամանքն էլ իր հերթին հանգեցնում է պոպուլիստ քաղաքա-

[1] Տե՛ս Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 17:

[2] Տե՛ս Walker Jack L. A Critique of the Elitist Theory of Democracy // The American Political Science Review, Vol. 60, No. 2 (Jun., 1966), էջ 291:

[3] Տե՛ս Concepts and Principles of Democratic Governance and Accountability. Edited by Mathias Kamp, 2011, էջ 18-19:

կան գործիչների դեմագոգիկ կառավարման կամ ժողովրդավարության դիմակով քողարկված բռնապետության[1]:

Ժողովրդավարության հաջորդ թերությունն այն է, որ վերջինիս պարագայում պետությունն անընդհատ հավասարակշռում է օխլոկրատիայի և դիկտատուրայի միջև: Ավելին, անձի դիկտատուրան տվյալ պարագայում փոխարինվում է մեծամասնության դիկտատուրայով, ինչը միանշանակ ավելի լավ չէ, եթե ոչ ավելի վատ հասարակական հարաբերությունների բնականոն ընթացքի տեսանկյունից[2]: Դրան գումարվում է այն, որ նույնիսկ ժամանակակից ժողովրդավարությունները չեն կարողանում զերծ մնալ պլուտոկրատիայից (հարստության իշխանությունից)[3]:

Ժողովրդավարական կառավարման համակարգերին բնորոշ կարևորագույն թերություններից է նաև վերջինիս իռացիոնալությունը, ինչի հիմքում ընկած է անիրազեկ բազմության կողմից իր շահերը ճիշտ ընկալելու անհնարինությունը[4]:

Հիշյալ համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ տվյալ պարագայում ուսումնասիրության հիմնական սուբյեկտը հենց անհատն է, քանզի երբ քննարկվում է խմբի «ռացիոնալության» հարցը, այն հնարավոր է դիտարկել սոսկ խմբի անդամների վարքագծի տեսանկյունից: Գրականության մեջ կարելի է հանդիպել այն տեսակետին, որ ռացիոնալ անհատը ևս եսասեր է: Ավելին, ընդգծվում է, որ քանզի ժողովրդի քաղաքական վարքագիծը նման է տնտեսական փոխհարաբերությունների մասնակիցների վարքագծին, ենթադրվում է, որ նրանք կոնկրետ որոշումներ կայացնելիս հաշվի են առ-

---

[1] Տե՛ս Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 179:

[2] Կարևորագույն խնդիրը հիշյալ համատեքստում այն է, որ որևէ մեկը չի կարող երաշխավորել, որ հասարակության ընտրությունը ճիշտ է: Օրինակ՝ Հիտլերը իշխանության էր եկել ժողովրդավարական եղանակով՝ մեծամասնություն ստանալով Ռեյխսթագում (տե՛ս Галеев К. Монархия и республика. Достоинства и недостатки, http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm):

[3] Տե՛ս Галеев К. Монархия и республика. Достоинства и недостатки, http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm:

[4] Տե՛ս Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 22:

նում միայն իրենց սեփական շահերը: Այդ առումով, օրինակ, ակնհայտ է, որ անհատները կոնկրետ իրի համար չեն վճարում առավել, քան անհրաժեշտ է՝ սոսկ արտադրողի կամ վաճառողի բարեկեցության շահերը նկատի ունենալով: Վերը շարադրվածը հաշվի առնելով՝ հիշյալ հեղինակների համար առանցքային է դառնում տնտեսական մոդելի տարածումը քաղաքական վարքագծի վրա, ինչի համատեքստում ակնհայտ է, որ երբ անհատն ընտրում է, պաշտոն է զբաղեցնում կամ իր պաշտոնական լիազորությունների շրջանակներում որոշակի քաղաքականություն է իրականացնում, ենթադրվում է, որ դա չի արվում՝ հանրային շահերից ելնելով: Ավելին, ակնհայտ է և այն, որ հնարավոր չէ երաշխավորել, որպեսզի անհատը միշտ հետևի ներդաշնակ հասարակական կյանքի համար անհրաժեշտ և փիլիսոփաների կողմից նախանշված բարոյական նորմերին: Այդ հանգամանքն իր հերթին առանցքային է դարձնում այն հարցը, որ համապատասխան նորմերն ու ինստիտուտները պետք է ձևավորվեն՝ նկատի ունենալով եսասեր վարքագծի առկայության անընդհատ հնարավորությունը և վերջինս այնպես ուղղորդելով, որ այդ վարքագիծը շահավետ, այլ ոչ վնասակար դառնա հասարակության անդամների և հասարակական հարաբերությունների բնականոն զարգացման համար: Տնտեսական հարաբերություններում հիշյալ արդյունքը որոշակի առումով երաշխավորվում է նաև այն պատճառով, որ դրանք կառուցվում են ինքնակարգավորվող ու ինքնակազմակերպվող վարքագծի հիման վրա:

Հիշյալ համատեքստում կարևորվում են նաև քաղաքական կուսակցությունների վարքագծի ընկալումն ու վերլուծությունը: Հարկ է նկատի ունենալ, որ կուսակցությունները բաղկացած են քաղաքական գործիչներից, ովքեր իշխանության են ձգտում ոչ թե նպաստավոր քաղաքականություն իրականացնելու, այլ «պաշտոն ունենալու հանգամանքից բխող շահ, հեղինակություն, իշխանություն ձեռք բերելու համար»: Այդ նպատակով էլ նրանք այլոց հետ միավորվում են քաղաքական կուսակցություններում՝ իշխանություն ձեռք բերելու համար պայքարելու նպատակով: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ ժողովրդավարական քաղաքական համակարգերում կուսակցությունները համարժեք են գործարարներին՝ տնտեսական հարաբերություններում: Հետևաբար կուսակցությունները ձևավորում և իրականացնում են այնպիսի քաղաքականություն, որը, նրանց կար-

ծիքով, կարող է առավել շատ ձայներ երաշխավորել, այնպես, ինչպես գործարարները արտադրում են այնպիսի արտադրանք, որը, նրանց կարծիքով, առավել շատ շահույթ կբերի: Բնականաբար, պետական իշխանությունը պետք է որոշակի սոցիալական գործառույթներ իրականացնի, իսկ իշխող կուսակցությունը բավարար թվով ընտրողների պետք է բավարարված պահի՝ վերընտրվելու հանգամանքը երաշխավորելու նպատակով: Այլ կերպ՝ քննարկվող «փոխանակման հարաբերություններում» քաղաքացիները պետք է որևէ բան ստանան իրենց ձայների դիմաց: Սակայն այս օգուտները ընտրվելու և իշխանությունը պահելու մոտիվացնող նպատակի սոսկ կողմնակի արդյունքն են, այնպես, ինչպես գնորդին համապատասխան որակի մեքենա տրամադրելն է մեքենա վաճառողների համար արդյունավետ վաճառք կազմակերպելու սոսկ կողմնակի արդյունք:

Այս ամենը գիտակցելով՝ կուսակցություններն իրենց գաղափարախոսությունը հրապարակում են գովազդներին բնորոշ ոճով: Քանզի կուսակցության նպատակն է ընդամենը ընտրվել, վերջիններիս առաջնորդները հոգ չեն տանում գաղափարախոսության ներքին արժեքի, նշանակության մասին, այլ ձևավորում են այնպիսի գաղափարախոսություն, որը, նրանց կարծիքով, կգրավի առավել մեծ թվով ընտրողների[1]:

Վերը շարադրվածը հաշվի առնելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ ժողովրդավարության թերությունները ու դրա հետևանքով հասարակական համակարգերում առաջացող ձևախեղումները գրեթե նույնանում են պետական ռեժիմի այլ ձևերի թերությունների և վերջիններիս համատեքստում առաջացող ձևախեղումների հետ: Օրինակ՝ որպես ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի արտահայտություն դիտարկվող բացարձակ միապետության թերություններից են մեկ անձի կամքից ու որակներից ամբողջ պետության ճակատագրի կախվածությունը, գահաժառանգության հարցի շուրջ առաջացող կոնֆլիկտները, այն, որ ժողովրդի դժգոհությունը հաղթահարելու հիմնական միջոցը դառնում է իշխանության տապալու-

[1] Տե՛ս Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 101-110:

մը, ինչը կարող է վերաճել քաղաքացիական պատերազմի և այլն[1]: Ակնհայտ է, որ հետևանքային տեսանկյունից քննարկվող թերությունները գրեթե նույնանում են ժողովրդավարության թերություններ ու ժողովրդավարական հասարակական համակարգերի ձևախեղումների հետ: Ավելին, այդ հանգամանքը նկատի ունենալով՝ գրականության մեջ տեսակետ է արտահայտվում, որ իրականում ստացվում է այնպես, որ ժողովրդավարության գաղափարը, որն ամեն ինչ կարող է նշանակել, բացարձակ ոչինչ էլ չի նշանակում[2]:

Կարծում ենք, որ ժողովրդավարության գաղափարն անբովանդակ հասկացության կարելի է վերածել և պետական ռեժիմի այլ տարատեսակներին բնորոշ նույն խնդրահարույց իրավիճակներին կարելի է հանգել մի դեպքում՝ ժողովրդավարությունը սոսկ որպես իշխանությունը ժողովրդին պատկանելու հատկանիշով օժտված պետական ռեժիմ դիտարկելու պարագայում:

Հետևաբար գտնում ենք, որ ժողովրդավարության էության առնչությամբ առկա ընկալումներն ու դոկտրինալ մոտեցումներն ունեն վերաիմաստավորման անհրաժեշտություն: Ավելին, ժողովրդավարության էության պատշաճ ընկալման համար միայն վերը ներկայացված համընդհանուր ճանաչում գտած բնորոշման վկայակոչումը բավարար չէ, և հիշյալ համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք ևս: Այդ առումով ելակետային նշանակություն ունի այն, որ մեր կարծիքով՝ ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու մոտեցումն ինքնանպատակ չէ, և վերջինս որպես այդպիսին երբևէ չի կարող ընկալվել: Ավելին, կարծում ենք, որ այդ մոտեցումը որդեգրելու պատճառները բնական են և հիմնված են մարդու բնույթն ու հասարակության ձևավորման առանձնահատկությունները հաշվի առնելու հանգամանքի վրա: Այդ տեսանկյունից ակնհայտ է, որ ցանկացած հասարակական-քաղաքական կազմավորում էլ ձևավորվում է առաջին հերթին անհատի պահանջմունքները բավարարելու և մարդու՝ որպես տեսակի գոյությունը պահպանելու համար: Հետևաբար ակնհայտ է նաև, որ

[1] Տե՛ս Галеев К. Монархия и республика. Достоинства и недостатки, http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm:

[2] Տե՛ս Concepts and Principles of Democratic Governance and Accountability. Edited by Mathias Kamp, 2011, էջ 10:

հիշյալ նպատակին հասնելու լավագույն միջոցը կարող է լինել մարդկանց, ժողովրդին իշխանության աղբյուր ճանաչելը:

Այդ հանգամանքն իր հերթին ենթադրում է, որ ժողովրդավարության դոկտրինն ինքնին պետք է կառուցված լինի այն տրամաբանությամբ, որ վերջինիս առանցքում մարդն է, ում համար երաշխավորված են ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու անհատի արժևորման պահանջի իրացումը: Կարծում ենք, որ վերը նշված հանգամանքը ժողովրդավարության էությունն է, հիմնական իդեալը, նպատակը, վերջինիս ելակետային հատկանիշն ու տարբերակիչ առանձնահատկությունը հասարակության պետական-քաղաքական կառուցվածքի այլ ձևերից: Հետևաբար, ժողովրդավարությունն ինքնին ինքնանպատակ չէ, և վերջինիս արժեքը ոչ թե զուտ իշխանությունը ժողովրդին պատկանելու հանգամանքի մեջ է, այլ վերը նշված նպատակի փաստացի իրականացման:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ժողովրդավարության առկայությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է գոյություն ունեցող իրականության շրջանակներում իրականացվել քննարկվող նպատակը: Դա իր հերթին ենթադրում է, որ պետական ռեժիմի հիշյալ ձևի առնչությամբ ներկայացվող բոլոր այլ հատկանիշները բխում են վերը նշված առանձնահատկությունից, ուղղված են հենց այդ նպատակի իրականացմանը, ինչը ենթադրում է, որ հասարակական կյանքի և դրա ընկալմանն առնչվող տարատեսակ զարգացումներով պայմանավորված՝ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում հավելել նաև, որ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ սահմանադրական կարգավորումների, համաձայն որոնց՝ **պետությունը** սահմանափակված էր մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք[1], մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակված լի-

[1] 2005 թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված:

նելու պահանջը սահմանում է **հանրային իշխանության** համար[1]: Կարծում ենք, որ հիշյալ փոփոխությունն ունի կոնցեպտուալ բնույթ և առանցքային առումով վերափոխում է քննարկվող երևույթի էությունը: Դա ընդգծվում է առաջին հերթին այն տեսանկյունից, որ հիշյալ համատեքստում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակված լինելու պահանջը տարածվում է նաև ժողովրդի իշխանության վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իշխանության գաղափարն ընդգրկում է ոչ միայն պետական, այլ նաև ժողովրդի իշխանությունը[2]: Հետևաբար, ժողովրդի իշխանությունն ու դրա իրականացումը ևս չեն կարող դիտարկվել որպես ինքնանպատակ և բոլոր դեպքերում սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով[3]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ մեր կարծիքով՝ ժողովրդավարության համար առանցքային հատկանիշն այն է, որ վերջինիս պարագայում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար՝ հիմքում ունենալով մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, և նպատակ ունենալով անհատի համար երաշխավորել ինքնարտահայտ-

---

[1] 2015 թ. դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված:

[2] Հանրային իշխանությունը բաղկացած է հետևյալ երեք կառուցվածքային տարրերից՝ ժողովրդի իշխանություն, պետական իշխանություն, տեղական ինքնակառավարման իշխանություն (տե՛ս Авакьян С., Публичная власть: конституционно-правовые аспекты // Вестник Тюменского государственного университета. N 2, 2009, էջ 6):

[3] Հիշյալ համատեքստում հետաքրքիր է Վրաստանի Հանրապետության օրինակը: Վերջինիս Սահմանադրության 7-րդ հոդվածը սահմանում է, որ **ժողովուրդը և պետությունը** սահմանափակված են մարդու և քաղաքացու՝ համընդհանուր ճանաչում ունեցող իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք
(http://www.constcourt.ge/en/court/legislation/constitution.page):

ման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը[1]:

Վերը շարադրվածի արդյունքում հանգում ենք նաև ստորև ներկայացվող մի քանի կարևոր եզրահանգումների.

Ակնհայտ է, որ ժողովրդաիշխանության համակարգին բնորոշ թերությունների արդյունքում առաջացող հասարակական համակարգերի ձևախեղումները հանգեցրել են այնպիսի իրավիճակի, երբ այն նպատակը, որի համար ստեղծվել է ժողովրդավարությունը՝ որպես գաղափար, իդեա, ևս ձևախեղվում է: Ավելին, այսպես կոչված ժողովրդաիշխանությանը բնորոշ ինստիտուտները շատ հաճախ սկսում են ծառայել նշված նպատակին հակառակ:

Հետևաբար հիմնական եզրահանգումը հիշյալ համատեքստում պետք է այն լինի, որ հասարակական հարաբերությունների կանոնակարգման նպատակով ստեղծվող տարատեսակ ինստիտուտները իրենց իրացման ընթացքում պետք է ծառայեն սոսկ այն նպատակներին, որի համար ստեղծվել են: Հակառակ պարագայում, անկախ տարատեսակ ձևական պահանջների պահպանման հանգամանքից, ձևախեղվում է հենց ինստիտուտի էությունը, ինչն իր հերթին անիմաստ է դարձնում վերջինիս գոյության անհրաժեշտությունը:

Հաջորդ կարևորագույն եզրահանգումը հիշյալ համատեքստում այն է, որ վերը նշված նպատակները կենսագործելու և թվարկված թերություններից խուսափելու համար անհրաժեշտ է համարժեք քաղաքական ու սահմանադրական մշակույթ: Հետևաբար, ժողովրդավարությանը բնորոշ հատկանիշների առկայությունը հնարավոր է երաշխավորել սոսկ մինչժողովրդավարական համարժեք քաղաքական ու սահմանադրական մշակույթի առկայության պայմաններում: Այլ կերպ՝ ժողովրդավարությունը պետությանն ու հա-

[1] Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի առանձին հեղինակների կողմից արտահայտված այն տեսակետը, որ «բարոյական» տեսանկյունից ժողովրդավարության էությունը հասարակության յուրաքանչյուր կոնկրետ անդամի համար բոլոր սոցիալական հնարավորությունների զարգացման մեջ է, իսկ ժողովրդավարության «հիմնական չափանիշը» անհատներին հավասար արդյունավետ իրավունքի տրամադրումն է ապրել այնքան «ամբողջական», որքան նրանք կարող են ցանկանալ (տե՛ս Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 149):

սարակությանն ի սկզբանե պատկանող բնութագրիչ չէ և կարող է ձեռք բերվել սոսկ հասարակական զարգացման որոշակի փուլում: Ավելին, ակնհայտ է, որ նույնիսկ հիշյալ նպատակի իրականացման և ժողովրդավարության առկայության պարագայում վերջինս պարբերաբար հանգելու է հասարակական համակարգերի վերը թվարկված ձևախեղումներին, արդյունքում՝ ժողովրդավարության՝ որպես պետության սահմանադրաիրավական բնութագրիչի բացակայության: Հետևաբար, կարծում ենք, որ ժողովրդավարական պետության կայացման գործընթացն անընդհատ շրջափուլ է՝ մինչժողովրդավարական հասարակական համակարգից անցում ժողովրդավարականին և հակառակը: Ընդ որում, ժողովրդավարական հասարակական համակարգին նախորդող և հաջորդող ամբողջ ժամանակահատվածում ընթանում է համարժեք սահմանադրական ու քաղաքական մշակույթի ձևավորման գործընթացը: Այդ է պատճառը, որ որոշ հեղինակների կարծիքով՝ ժողովրդավարությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես վիճակ, այլ նաև որպես գործընթաց, և այդ առումով «ժողովրդավարություն» և «ժողովրդավարացում» եզրույթներն անհրաժեշտ է ընկալել որպես հոմանիշներ[1]:

Հետևաբար հետաքրքրականը հիշյալ համատեքստում այն է, որ հենց պետական ռեժիմի այլ ձևերի ու դրանց բնորոշ երևույթների առկայությունն է դառնում միջանկյալ կառուցակարգ ժողովրդավարական հասարակական համակարգ և մշակույթ ձևավորելու համար: Ընդ որում, ներկայացված վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ դրանից խուսափելը, ըստ էության, անհնար է:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ժողովրդավարության տեսությունն ինքնին ոչ այլ ինչ է, քան սոսկ հասարակական համակարգերի ներդաշնակ գոյության համար անհրաժեշտ առանցքային հանգամանքի, այն է՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի, անհատի համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը երաշխավորելու նպատակին ուղղված միջոց: Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու մոտեցումն ինքնանպատակ չէ, այդ մոտեցումը

[1] Տե՛ս Баранов Н., Исторический обзор развития демократии, http://nicbar.ru/theoria_democraty1.htm:

որդեգրելու պատճառները բնական են և հիմնված են մարդու բնույթն ու հասարակության ձևավորման առանձնահատկությունները հաշվի առնելու հանգամանքի վրա: Թեև արդեն ընդգծվեց այն հանգամանքը, որ ժողովրդաիշխանության հետևանքով առաջացող հասարակական համակարգերի ձևախեղումները գրեթե նույնանում են պետական ռեժիմի այլ ձևերին բնորոշ թերությունների հետ[1], սակայն միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ցանկացած հասարակական-քաղաքական կազմավորում էլ ձևավորվում է առաջին հերթին անհատի պահանջմունքները բավարարելու և մարդու՝ որպես տեսակի գոյությունը պահպանելու համար: Հետևաբար ակնհայտ է, որ հիշյալ նպատակին հասնելու լավագույն միջոցը անհատների համար կարող է լինել հենց իրենց՝ իշխանության աղբյուր ճանաչելը: Արդյունքում հանգում ենք այն հետևության, որ ժողովրդին իշխանության աղբյուր ճանաչելն ինքնանպատակ չէ, սոսկ մարդու անձնային և սոցիալական առանձնահատկությունների տեսանկյունից առավել ընդունելի միջոց է հասարակական համակարգերի առանցքային նպատակին հասնելու համար: Վերը շարադրվածի արդյունքում ակնհայտ է դառնում նաև, որ ***ժողովրդավարության առկայության մասին կարելի է խոսել սոսկ այն իրավիճակում, երբ յուրաքանչյուր կոնկրետ անհատ զգա, որ կոնկրետ հասարակական համակարգում մարդն է բարձրագույն արժեքը, և իր համար երաշխավոր-***

[1] Այդ առումով տեղին է հիշատակել Արիստոտելի այն տեսակետը, որ մեծամասնությունը կարող է ձևավորել լավ իշխողներ ոչ թե այն պատճառով, որ անհատապես ամեն սովորական անհատ իմաստուն է, այլ բազմաթիվ անհատների համադրված հմտությունների և գիտելիքների շնորհիվ, այլ կերպ՝ վերջինս առաջ է քաշում քանակական իմաստության գաղափարը: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի նաև Կոնդորսեի «ժյուրիի թեորեմը», համաձայն որի՝ եթե ենթադրենք, որ կա որևէ կոնկրետ որոշում, որն օբյեկտիվորեն լավագույնն է հասարակության համար, և հասարակության անդամներից յուրաքանչյուրն ունի վերջինս ընտրելու 50 տոկոսից ավելի հնարավորություն, ապա որքան մեծ է կոնկրետ տարբերակի համար տրված ձայների մեծամասնությունը, այնքան առավել հավանական է, որ դա լավագույն որոշումն է, որի համար կարելի էր քվեարկել (տե՛ս Cunningham F. Theories of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 154):

ված են ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու իր՝ որպես անհատի արժևորման պահանջի իրացումը:

Ավելին, իշխանությունը ժողովրդին հանձնելը կարող է ծառայել հասարակական համակարգերի ներկայացված նպատակին սոսկ սահմանադրական ու քաղաքական մշակույթի համարժեք մակարդակի առկայության դեպքում և որոշակի առումով հենց այդպիսի մշակույթի առկայության արդյունք է:

Հավելենք նաև, որ սահմանադրական ու քաղաքական հիշատակված մշակույթի առկայությունը հնարավոր է սոսկ մի դեպքում, երբ ինչպես անհատների անհատական վարքագծի, այնպես էլ իշխանության ու քաղաքական գործիչների քաղաքական վարքագծի հիմքում ընկած լինեն «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը, այն տրամաբանությունը, որ մարդը պետք է լինի բարձրագույն արժեք, ում համար պետք է երաշխավորված լինեն ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու անհատի արժեվորման պահանջի իրացումը, հետևաբար, յուրաքանչյուրի վարքագիծը պետք է սահմանափակված լինի հենց այդ հանգամանքով: «Ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի էությունը հիշյալ համատեքստում կայանում է նրանում, որ իշխանության կրողն ինքն առաջին հերթին պետք է իրեն սահմանափակի քննարկվող հանգամանքներով, անհատն ինքը պետք է գիտակցի, որ թեև ինքը բարձրագույն արժեք է, իր համար պետք է երաշխավորված լինեն ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու իր արժևորման պահանջի իրացումը, հանրային իշխանության այլ կրողներն էլ պետք է սահմանափակված լինեն իր հիմնական իրավունքներով և ազատություններով, տվյալ պարագայում առանցքային է այն, որ միևնույն ժամանակ նույնը բնորոշ է նաև այլ անհատներին, հանրային իշխանության այլ կրողներին: Հետևաբար շարադրված հանգամանքների իրացումն ու դրանով պայմանավորված՝ համարժեք սահմանադրական և քաղաքական մշակույթի առկայությունը հնարավոր են առաջին հերթին յուրաքանչյուրի կողմից նշված հանգամանքների ընկալման, հարգման և դրանցով փաստացի ինքնասահամանափակված լինելու իրավիճակում:

СТАБИЛЬНАЯ ДЕМОКРАТИЯ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ МЫСЛИ

Анаит Манасян
Проректор Академии юстиции по научной работе,
доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В статье анализируется идея демократии. Нами сделан вывод, что для восприятия этого понятия должным образом недостаточно лишь изучить особенности осуществления власти народом и для народа, и Доктрины демократии нуждаются в переосмыслении. Мы считаем, что стержневым в данном контексте должно быть то, что демократия – это форма правления, в условиях которой источником власти является народ, власть осуществляется народом и для народа, имея в основе человека как высшую ценность, ставя целью гарантию для личности возможности самовыражения и самореализации. Более того, автор приходит к заключению, что власть народа не является безграничной и должна ограничиваться основными правами и свободами человека и гражданина.

STABLE DEMOCRACY IN THE CONTEXT OF CONTEMPORARY CONSTITUTIONAL-LEGAL THOUGHT

Anahit Manasyan
Vice-Rector of the Academy of Justice for Scientific Affairs,
Associate Professor at the YSU Chair of Constitutional Law,
Candidate of Legal Scences

Author analyzes the idea of democracy. She draws a conclusion that for the proper perception of this notion just the feature of implementation of power by the people and for the people is not enough, and the doctrines of democracy need to be rethought. According to the author the key point here should be the fact that democracy is a form of governance within the frames of which people are the source of power, power is implemented by the people and for the people, having in the basis the human being as the highest value and being guided by the aim of guaranteeing for the latter possibilities for self-expression and self-realization. Moreover, author concludes that the power of people is not an unlimited one and should be limited by fundamental human and citizen's rights and freedoms.

Բանալի բառեր - ժողովրդավարություն, կայուն ժողովրդավարություն, ժողովրդի իշխանություն, մարդը որպես բարձրագույն արժեք, մարդու և քաղաքացու իրավունքներ և ազատություններ

Ключевые слова: демократия, стабильная демократия, власть народа, человек как высшая ценность, права и свободы человека и гражданина

Keywords: democracy, stable democracy, power of people, human being as the highest value, human and citizen's rights and freedoms

ԵԶԴԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ռուստամ Մախմուդյան
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Ենթադրվում էր, որ 21-րդ դարում աշխարհը կլինի ավելի ժողովրդավարական և մարդասեր: Սակայն ոչ միայն ենթադրությունն իրականություն չդարձավ, այլև համաշխարհային հանրությունը կանգնեց ավելի ուժեղ արհավիրքի առջև՝ ի դեմս ինքնակոչ իսլամական պետության (այսուհետ նաև՝ ԻԼԻՊ): Վերջինս հատկանշական է նրանով, որ գոյություն ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներն ու աշխարհի գրեթե բոլոր կողմերում շարունակվող պատերազմներն էականորեն տարբերվում են ԻԼԻՊ-ի նպատակներից: Վերջիններս ցանկանում են վերջնականապես ամբողջ աշխարհում գերիշխող դարձնեն իսլամն ու դրա հետ փոխկապակցված երևույթները:

Հայ հասարակությանն ավելի է «հետաքրքրում» այս գործընթացը նրանով, թե որքանով է 1915 թ. Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական չճանաչումը բովանդակային առումով նպաստել մեր ժամանակներում տեղի ունեցող իրադարձություններին: Խոսքը մասնավորապես միջազգային մակարդակով անպատժելիության մթնոլորտի մասին է ու դրա արդյունքում վրա հասնող հետևանքների: Հայոց ցեղասպանությունից հետո ընդամենը տարիներ անց մարդկության դեմ ուղղված ահաբեկչական հանցագործություններ տեղի ունեցան տարբեր մակարդակներով, որոնց կենտրոնական դիտակետում հիմնականում քրդերն էին: Վերջիններիս նկատմամբ իրականացվող գործողությունները ոչ միայն թուրքական[1], այլ նաև

[1] Տե՛ս **Кочои С. М.**, О геноциде, терроре и массовыь нарушениях прав человека; Киров, 2002г., էջ 15:

արաբական կազմակերպությունների վարած քաղաքականության արդյունքն էին՝ համապատասխանաբար Թուրքիայում և Իրաքում[1]:

Արդեն 2014 թվականի սկզբին՝ Իրաքում և Սիրիայում կառավարական զորքերի դեմ հաջող մարտերից հետո, սուննի մահմեդական կազմակերպության նախաձեռնությամբ զարկ տրվեց այն գործընթացին, ըստ որի՝ Իրաքի և Լևանտի Իսլամական պետությունը հայտարարեց օկուպացված տարածքներում Իսլամական խալիֆաթ, իսլամական պետություն ստեղծելու մասին: Գործընթացի սկզբնական փուլում միջազգային հանրությունը հայտարարում էր, որ Իրաքի բանակը որը, ի դեպ, վերապատրաստվել էր ամերիկյան զորքերի կողմից, իրենց կողմից նախագծված Սահմանադրությամբ կոչված էր պաշտպանելու քաղաքացիական բնակչությանը, սակայն վերջիններս ոչ միայն պարտություն կրեցին, այլև չկարողացան ահաբեկիչների առաջխաղացման ընթացքում կանխել գերժամանակակից զենք ձեռք բերելու գործընթացը: Ընդ որում, բոլորովին վերջերս ռուս-թուրքական փոխհարաբերություններում առաջացած լարվածության ընթացքում հանրությանը ներկայացվեց տեղեկատվություն այն մասին, որ ահաբեկչական խմբավորումներին զենք մատակարարել է Թուրքիան Իրաքում եղած նավթի «դիմաց»: Պետք է նշել, որ միջազգային հանրությունն այսօր գործ ունի ոչ թե սովորական ահաբեկչական կազմակերպության հետ, այլ ահաբեկչական պետության, որն ունի իր սեփական կառավարությունը և օրենքները:

Հատկանշական է, որ վերջին տասնամյակում Իրաքում տեղի ունեցած բազմաթիվ ահաբեկչական հարձակումների մեծ մասն ուղղված է կրոնական ատելության դեմ, մասնավորապես՝ քրիստոնյաների և եզդիների: Այդ առումով ժամանակագրությունը փաստում է հետևյալը. 2007 թ. օգոստոսի 14-ին Սինջարում վառելիքով բեռնված երկու տանկերի պայթյունի հետևանքով զոհվել է ավելի քան 800 եզդի, իսկ վիրավորվել՝ ավելի քան 300 մարդ: Այնուհետև՝ 2014 թ. օգոստոսի 3-ին, «Իսլամական պետության» զինված խմբերը հարձակվեցին եզդիներով բնակեցված Սինջար քաղաքի վրա, և միայն այդ հարձակման ընթացքում զոհերի քանակը եղել է ավելի

[1] Իրաքյան Քուրդիստանում քրդերի նկատմամբ վարած քաղաքականության նախաձեռնողն ու իրագործողը Սադամ Հուսեյինն էր: Այդ մասին մանրամասն տե՛ս **Кочои С.М.,** նշվ. աշխ., 8-12 էջեր:

քան երեք հազար մարդ: Անպատրաստ ու խաղաղ բնակչությունը առանց զենք թողեց իր տները և հեռացավ լեռներ: Լեռներում այդ մարդիկ հայտնվել էին աղետալի պայմաններում, որտեղ չդիմանալու նպատակով դիմում էին ողջ աշխարհին՝ օժանդակություն ցուցաբերելու խնդրանքով: Սովի, ծարավի և արևի 50 աստիճան ջերմության հետևանքով լեռներում մահացել էր մոտ հազար մարդ, ավելի քան 200 հազար եզդիներ դարձել էին փախստականներ: Ընդ որում, հաշվի չառնելով լեռներում և դրսում գտնվող ընտանիքների անելանելի ու անօգնական վիճակը՝ իսլամիստները եզդիների նկատմամբ իրականացնում էին անգամ հրետանային և հրթիռային հարձակումներ: Իհարկե, քրիստոնյաների նկատմամբ հալածանքը նոր երևույթ չէ Մերձավոր Արևելքում, այնուամենայնիվ այսօր էլ այդ տարածաշրջանում շարունակում է լուրջ վտանգի տակ մնալ նաև քրիստոնեության գոյությունը:

Նկարագրված իրավիճակները կարծես թե 1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ կատարված գործողությունների վերարտադրությունն են եղել: Պատճառը մեկն է. Ոճրագործները իրենց կատարածի համար նախկինում համարժեք պատժի չեն ենթարկվել, և ահա ուղիղ հարյուր տարի անց ականատեսն ենք այն ամենին, ինչի միջով անցել է հայ ժողովուրդը: Պետք է նշել, որ փախստական ու աննօթևան դարձած եզդիներին օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն, ի թիվ այլ պետությունների, հայտնեց նաև Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, որը ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով կազմակերպել էր մարդասիրական օգնության տեղափոխումը համապատասխան բնակավայրեր[1]: Ավելին, քաղաքացիական նախաձեռնությամբ հայաստանաբնակ եզդիների հետ հայ հասարակությունը նույնպես նախաձեռնեց օգնություն ցուցաբերելու գործընթաց, և շուրջ 20 օրվա ընթացքում հավաքված իրերն ու դրամական միջոցները տեղ հասցվեցին: Պարզ է մեկ ճշմարտություն. նախաձեռնության հիմքում դրված էր այն, որ ցե-

[1] Իրաքի հատվածում եզդիների թվաքանակը, ըստ տարբեր տվյալների, կազմում է մոտ 800.000 մարդ: Նրանցից, 500.000-ն ապրում են Սինջար թաղամասում, որը գտնվում է Իրաքի հյուսիսում, Սիրիայի և Թուրքիայի սահմանի մոտ և կազմում է Նինվեի նահանգի մաս, իսկ ևս 300.000 եզդիներ ապրում են Քուրդիստանի (Իրաքյան Քուրդիստանի) դաշնային շրջանում:

ղասպանություն տեսած հայ ժողովուրդը շատ ավելի լավ է պատկերացնում օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտությունը, քանի որ նման իրավիճակում հայտնվել են նրանց նախնիները։

Սույն գիտական աշխատության շրջանակներում անհրաժեշտ է բացահայտել հետևյալ իրավական հարցադրումները.

1. Տեղի ունեցած գործընթացները արդյո՞ք ընդգրկվում են «ցեղասպանություն» միջազգային-իրավական եզրույթի տակ,

2. Արդյո՞ք եզդիների նկատմամբ 2014 թ. օգոստոսին տեղի ունեցածը պատճառական կապի մեջ չի գտնվում այն հանգամանքի հետ, որ հարյուր տարի առաջ դեռևս հայերի նկատմամբ թուրքերի կողմից բարբարոսական գործողությունները չեն դատապարտվել և պետությունների կողմից չեն ճանաչվել որպես ցեղասպանություն։

Միանգամից կարող ենք փաստել, որ «իսլամական պետության» կողմից քաղաքացիական խաղաղ բնակչության դեմ ուղղված բարբարոսական գործողությունները ակնհայտորեն համընկնում են ցեղասպանություն եզրույթի հետ։ Ավելին, նման եզրահանգմանը հաջորդում է այն փաստարկումը, որ այս ոճրագործությամբ մենք ականատես ենք ժամանակակից պատմության առաջին ցեղասպանությանը, որը կատարվում է ոչ թե դասական իմաստով, պետության կամ նրա իշխանության կողմից, այլ կազմակերպության կողմից, որը չի վերահսկվում որևէ պետության կողմից և ճանաչվում է որպես ահաբեկչական։ Սա էլ է առանձնահատկություն՝ ի տա-րբ-երություն նախկինում գոյություն ունեցող ահաբեկչությունների, որոնց նպատակը միջազգային-իրավական առումով ահաբեկիչների կողմից պատասխանատվությունից խուսափելն է։

Գրականության մեջ «ցեղասպանություն» եզրույթն ունի հետևյալ բացատրությունը. այն բաղկացած է հունական «genos» (ռասսա, ցեղ) և լատինական «cide» (սպանություն) բառերից, որը, 1944 թ. լեհ իրավագետների կողմից օգտագործվելուց զատ, կիրառվել է նաև Ռաֆայել Լեմկինի կողմից՝ Նացիստական Գերմանիայի և հրեաների միջև տեղի ունեցածի վերաբերյալ կայացած Նյուրնբերգյան դատավարության ժամանակ։ Ընդ որում, այնտեղ այդ համատեքստում օգտագործվել է ոչ միայն գենոցիդ, այլ նաև էթնոցիդ եզրույթը, որոնց բացատրության մեջ կարծես թե եղել են որոշակի ընդհանրություններ։

Համաձայն 1948 թ. ընդունված «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և պատժելու մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 2-րդ հոդվածի՝ ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

(ա) այդ խմբի անդամների սպանությունը,

(բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,

(գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

(դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,

(ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին։

Եթե Թուրքիայի նկատմամբ Կոնվենցիայի դրույթները չկիրառելու կողմնակիցների կարծիքներին ի հակառակ խոսվում է ռետրոակտիվ էֆֆեկտի[1] (հետադարձ ուժ) մասին, ապա եզդիների նկատմամբ կատարվածը դասական ցեղասպանության օրինակ է։ Ավելին, Կոնվենցիայի 3-րդ հոդվածը ցեղասպանության պատժելի արարք է դիտարկում նույնիսկ այն կատարելու նպատակով դավադրությունը, հրահրումը, ցեղասպանությունը կատարելու փորձը և հանցակցելը։ Նշված հոդվածի արտացոլումը սույն աշխատության մեջ փաստում է այն մասին, որ բոլորովին պարտադիր չէ ցեղասպանության կատարումը պատժելի արարք դիտարկելը։ Նկատի ունենալով, որ օգոստոսյան իրադարձություններից հետո Թուրքիայի իշխանությունները ոչ միայն դատապարտեցին եզդիների նկատմամբ կատարվածը, այլև թույլատրելի «միջանցքներ» էին ստեղծում «Իսլամական պետություն» խմբավորման անդամների համար կարող ենք ասել, որ թուրքերն այս անգամ նույնպես անմասն չեն մնացել հա-

[1] Տե՛ս Վիգեն Քոչարյան, «Հայոց ցեղասպանության միջազգային իրավական որակումը և դրա ժխտման համար քրեական պատասխանատվությունը», «Օրինականություն», N 1, 2015 թ., (Հատուկ թողարկում։ ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), էջեր 41-44։

մաշխարհային այնպիսի ցավի պատճառումից, ինչպիսին է ցեղասպանությունը: Համենայնդեպս այդպիսի տեղեկատվությունն այնքան էլ աղքատիկ չի եղել, և անգամ միջազգային մամուլն է դրան անդրադարձել: Այսինքն՝ անգամ եթե ոչ կատարման, գոնե Կոնվենցիայի 3-րդ հոդվածում նշված դրսևորումները վերագրելի են Թուրքիային: Իսկ ինչպես միշտ, այս անգամ ևս Թուրքիան փորձել է «հեռու պահել» իրեն այդ գործընթացներից՝ դրանով իսկ նպատակ ունենալով խուսափել պատասխանատվությունից:

2014 թվականին եզդիների նկատմամբ տեղի ունեցած ոճրագործությունից հետո Հայոց եղեռնի 100-ամյա տարելիցի կապակցությամբ ցեղասպանությունը պատժելի արարք ճանաչելու վերաբերյալ բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել: Համաձայն դրանց՝ թուրքական իշխանության տեսակետները այդ փաստերով հարուցված քրեական գործերում ներառված ապացույցների և արձանագրությունների կորստի վերաբերյալ, ինչպես նաև այն կարծիքի մասին, որ Հայոց ցեղասպանության հարցը պետք է ուսումնասիրեն պատմաբանները, մեկ նպատակ են հետապնդում՝ հնարավորինս հարցը տեղափոխել իրավական հարթությունից դեպի պատմաքաղաքական հարթություն: Բացի դրանից՝ հեղինակներն արդարացիորեն եզրակացնում են, որ նպատակներից մեկն էլ այն է, որ թուրքերը դրանով ցանկանում են, ի թիվս այլ ձգտումների, սառեցնել Հայոց եղեռնի փաստի ճանաչման գործընթացը[1]:

Ինչ խոսք, ցեղասպանությունները երբեք էլ իրենց մեջ միայն իրավական տարրեր չեն պարունակել, դրանցում մշտապես առկա է եղել քաղաքական տարրը, առանց որի Կոնվենցիայում առկա նպատակներից որևէ մեկը չէր կիրառվելու: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ եզդիների նկատմամբ իրագործվածը ցեղասպանություն է Կոնվենցիայի հետևյալ դրսևորումների գոյությամբ.

1. ***Եզդիներին որպես կրոնական խմբի ոչնչացում:*** 2014 թ. օգոստոսի 3-ին ԻԼԻՊ-ի զինված խմբավորումները, գրավելով Մոսուլ բնակավայրը, ներխուժել են եզդիներով բնակեցված Սինջար քաղաք,

[1] Գևորգ Դանիելյան, «Հայոց Եղեռն» և «Ցեղասպանություն» եզրույթների փոխհարաբերությունը, «Օրինականություն», N 1, (ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), 2015 թ., էջ 21-30:

որը սահմանակից է Սիրիայի հետ: Սինջարում սպանվածների և մահացածների թիվը գերազանցել է 300 հազարը:

2014 թ. օգոստոսի 15. համաշխարհային լրատվամիջոցները տեղեկատվություն տարածեցին շուրջ 80 եզդիների մասին, որոնք զազանաբար սպանվել են իսլամիստների կողմից: Ինչպես հետագայում հաղորդել է BBC ռադիոկայանը, իսլամիստները եզդիներին 5 օր շարունակ ստիպում էին փոխել իրենց կրոնը և ընդունել իսլամը: Այնուհետև բնակչությանը կենտրոնացրել են գյուղի դպրոցում և ոչնչացրել հիմնականում տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին տարել են անհայտ ուղղությամբ[1]: Ավելի ուշ (Sky News) լրատվական աղբյուրը, հղում կատարելով վկաներին, հաղորդել է, որ իսլամիստները մահապատժի են ենթարկել մոտ 400 եզդիների:

«Իսլամական պետություն»-ը Իրաքի հարավում իրականացնում էր զանգվածային էթնիկ «մաքրումներ», որոնց անդրադարձել էր այնպիսի միջազգային հեղինակավոր իրավապաշտպան կազմակերպություն, ինչպիսին Amnesty International-ն է: Վերջինս իր տարբեր հրապարակումներում և տարածած հայտարարությունների մեջ նշում է, որ օգոստոս ամսվա ընթացքում Սինջար նահանգում սպանվել են եզդի համայնքի հազարավոր ներկայացուցիչներ:

Եզդիների նկատմամբ իրագործված ոճրի մասին պակաս տեղեկատվություն չի ունեցել նաև ՄԱԿ-ը, մասնավորապես ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը ներկայացնում է անգամ բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են այն վայրագությունների մասին, որոնք կատարվել են եզդիների նկատմամբ: ՄԱԿ-ը առաձնահատուկ շեշտադրում է կատարել այն հանգամանքի վրա, որ ըստ իրենց ունեցած տեղեկությունների՝ օգոստոսի 24-25-ն ընկած ժամանակահատվածում ԻԼԻՊ-ի գրոհայինների կողմից Շեյխա Մաննա հոգևոր կենտրոնում զնդակահարվել են եզդի համայնքի 14 ղեկավարներ:

Նշված գործողությունները ոչ այլ ինչ են, քան ցեղասպանություն, որտեղ նպատակը եզդիների ոչ իսլամական լինելու պատճա-

[1] Курдистан: исламисты зверски расправились с 80 езидами [Электронный ресурс]. URL: http://www.bbc.co.uk/russian/rolling_news/2014/08/140815_rn_iraq_yazidis_alleged_massacre.shtml (дата обращения: 01.10.2014).

ռով կրոնական հողի վրա ոչնչացնելն է եղել, ինչն էլ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հանգամանքներից մեկն է:

2. Ցեղասպանություն որակելու հաջորդ հանգամանքը եզդիներին՝ որպես խմբի ***անդամներին, մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս հասցնելն*** է: Այդ գործողությունները հիմնականում դրսևորվել են նրանում, որ Սինջարի և նրա մերձակա բնակավայրերի վրա իսլամական հարձակումները և հետագա զավթումները ողբերգական հետևանքներ են ունեցել եզդի կանանց և աղջիկների համար: Մասնավորապես Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանի պատգամավորների հայտնած տեղեկատվության համաձայն՝ գրոհայինների կողմից առևանգվել են 13-56 տարեկան շուրջ 5000 կին և աղջիկ[1]: Ընդ որում, դրանցից մեծ մասի ոչ միայն ճակատագիրը հայտնի չէ, այլև իսլամիստները փորձում էին կանանց վաճառքի հանել: Համաձայն ՄԱԿ-ի կողմից ներկայացված տվյալների՝ իսլամիստները առևանգված եզդի կանանց և աղջիկներին գնապիտակները վզներին տանում են Մոսուլ քաղաքի շուկա և բանակցում գնորդների հետ «ստրկուհիների» գնի շուրջ[2]: Նրանց կյանքի պահպանման պայմաններն են եղել իսլամի ընդունումը և ամուսնությունը ջիհադիստի հետ[3]:

Մեկ այլ՝ Իրաքյան Քուրդիստանի Կանանց գործերով բարձրագույն խորհրդի ղեկավարի պնդմամբ՝ Մոսուլի բանտում գտնվող առևանգված կանանց ջիհադիստները օրվա ընթացքում բազմաթիվ

---

[1] Действия «Исламского государства Ирака и Леванта» могут быть квалифицированы как преступления против человечности [Электронный ресурс]. URL: http://www.un.org/ russian/news/ story.asp? News ID=22232#.VCzwR_l_vng (дата обращения: 02.10.2014).

[2] Vian Dakhil's Acceptance Speech- Are We Really in the Third Millennium? [Электронный ресурс]. URL:http:// www. rawinwar.org/content/view/247/188/ (дата обращения: 10.10.2014). [20] Боевики используют езидских девушек в качестве «живого щита» [Электронный ресурс]. URL: http://kurdistan.ru/2014/ 09/25/news-22446_Boeviki_ ispolzuyut_ ezidskih_ devushek _v_ kachestve_zhivogo_schita.html (дата обращения: 04.10.2014).

[3] Yezidi MP: Militants Retreated from Villages to Escape Stench of Massacred Victims [Электронный ресурс]. URL: http://rudaw.net/english/world/10092014 (дата обращения: 05.10.2014).

անգամ ենթարկել են սեռական բռնության, իսկ երբեմն էլ ջիհադիստները կանանց խցից տարել են ու այլևս չեն վերադարձրել[1]։

Ա. Պոլիտկովսկայայի անվան միջազգային մրցանակի 2014 թ. մրցանակակիր, Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանի պատգամավոր Վիան Դահիլի փոխանցմամբ՝ 6 եզդի աղջիկ բանտում, չդիմանալով սեռական բռնություններին, կախվելու միջոցով ինքնասպան են եղել, իսկ երեք քույրեր ստորացումներից ու նվաստացումներից խուսափելու նպատակով կտրել են իրենց երակները և արնաքամ լինելով՝ մահացել։

Գիտագործնական հետազոտության տեսանկյունից հետաքրքրական են այն դիտարկումները, ըստ որոնց՝ Թուրքիան, իր աչքի առջև տեսնելով իսլամիստների նման վայրագությունները, ընդամենը քաղաքական հետևյալ մարտավարությունն է որդեգրել. եթե ցանկանան, եզդիները կարող են գալ և իջևանել Թուրքիայում՝ միջոցներ չձեռնարկելով պահման և գոյությունը պաշտպանելու ուղղությամբ։ Որևէ կասկած չի կարող հարուցել այն, որ եզդիական խմբի անդամներին մարմնական վնասվածքներ չեն հասցրել, չեն նվաստացրել և ստորացրել, հետևաբար տվյալ պարագայում անկախ նրանից՝ Թուրքական պետության թողտվությունն առկա է, թե ոչ, բոլոր դեպքերում արձանագրվում է ցեղասպանության փաստը։ Պարզապես Հայոց ցեղասպանության հետ զուգահեռներ անցկացնելու տրամաբանությունը մեկն է՝ ժամանակին համարժեք պատիժ չնշանակելը հենց հանգեցնում է իրական կյանքում նման ահասարսուռ դեպքերի։ Այս համատեքստում 2016 թ. ԵԽԽՎ կողմից «Վացլավ Հավելի մարդու իրավունքների մրցանակ»-ի արժանացած, Եզդինեբի ցեղասպանություն վերապրած, մարդու իրավունքների հայտնի ակտիվիստ Նադիա Մուրադը Հայաստանի Հանրապետություն այցելելու ժամանակ հայտնել է հետևյալ կարծիքը. «*Հայոց ցեղասպանության միլիոնավոր զոհերի ցավը շարունակվում է մեկ դար անց։ Վստահ եմ, որ տասնամյակներ հետո նույն ցավով պետք է ետ նա-*

[1] Islamic State accused of capturing Yazidi women and forcing them to convert, or else [Электронный ресурс]. URL: http://www.washingtonpost.com/national/religion/islamic-state-accused-of-capturing-yazidi-women-and-forcing-them-to-convert-or-else/2014/08/07/5e6080ba-1e70-11e4-9b6c-12e30cbe 86a3_story.html# (дата обращения: 05.10.2014).

յենք ու խոսենք ԻԼԻՊ-ի գործած ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին: Այս շրջանը շարունակելու է նույն պտույտը դեռ երկար ժամանակ, քանի դեռ մարդկությունը չգտնի նմանատիպ վայրագությունների կանխարգելման բանաձևը»:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գլխավոր հանձնակատարը, հանդես գալով հայտարարությամբ, մասնավորապես իր խորին մտահոգությունն է հայտնել ստեղծված այն իրավիճակի վերաբերյալ, որի զոհ են դարձել իսլամիստների կողմից առևանգված եզդի կանայք: Համաձայն որոշ տվյալների՝ նրանց վաճառում են ստրկության, ստիպողաբար ամուսնացնում իսլամիստների հետ կամ ենթարկում սեռական բռնության[1]: Այս պարագայում հարկ է նշել, որ Ռուանդայի միջազգային տրիբունալը մարդկության դեմ հանցանք կատարելու և ցեղասպանության մեջ մեղավոր է ճանաչել սեռական բռնություն կատարող անձանց: Մասնավորապես 1998 թ. Ժան Պոլ Աքայեզի գործի դատավճռում Տրիբունալը նշել է, որ խութու ցեղի գրոհայինների կողմից թութսի ցեղի կանանց նկատմամբ կատարած պարբերաբար սեռական բռնությունները ցեղասպանության ակտ են՝ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում պատճառելով[2]:

Բացի դրանից՝ Հռոմի Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը (հոդված 9) բացահայտում է, որ «մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում պատճառելու միջոցով ցեղասպանություն» հասկացությունն իր մեջ ներառում է «խոշտանգում, բռնաբարություն, սեռական բռնություն, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» հասկացությունները, սակայն չեն սահմանափակվում միայն թվարկվածով:

---

[1] Report: ISIS Puts Literal Price Tags on Abducted Girls [Электронный ресурс]. հասանելի է հետևյալ կայքէջում՝ URL:http://news.yahoo.com/report-isis-puts-literal-price-tags-abducted-girls-164302036—abc-news-topstories. html (дата обращения: 04.10.2014):

[2] ООН осуждает убийство женщин-активисток боевиками «ИГ» в Ираке [Электронный ресурс]. URL: http://www.svoboda.org/content/article/26605705.html (дата обращения: 01.10.2014).

Վերոշարադրյալ արձանագրված փաստերը, ինչպես նաև միջազգային-իրավական կարգավորումները մեկ անգամ ևս վկայում են ցեղասպանությունը բնորոշող հերթական հանգամանքի առկայության մասին:

3. Ցեղասպանությունը բնութագրող հաջորդ հատկանիշն է ***որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը:*** Եթե Հայոց ցեղասպանության ժամանակ ահավոր դժվար էին եղած փաստերը պահպանելը, դրանք հետագայում տնօրինելն ու օգտագործելը, ընդհուպ հրապարակելը, ապա ժամանակակից գիտատեխնիկական միջոցների հագեցվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածության մակարդակի պայմաններում կատարված բոլոր գործողությունները արտացոլված են ոչ միայն լուսանկարների տեսքով, այլ նաև տեսաձայնագրություններ, որոնք որպես անհերքելի, հանրահայտ փաստեր, ավելի մեծ հնարավորություն են տալիս համաշխարհային հանրությանը՝ համապատասխան հետևություններ անելու: Ինչպես նախորդ մյուս պայմանների, այնպես էլ այս պայմանի գոյության վերաբերյալ կարելի է հետևություններ անել բացառապես փաստական տվյալների հիման վրա: Ընդ որում, դրանց գոյության մասին վկայում են ինչպես տարբեր իրավապաշտպան, այնպես էլ միջազգային հեղինակավոր կազմակերպություններ:

Մասնավորապես ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ ԻԼԻՊ-ի հարձակումների հետևանքով շուրջ մեկ միլիոն մարդ տեղահանվել և դարձել է աստանդական: Միայն 2014 թ. օգոստոսի վերջին երկու շաբաթվա ընթացքում այս կամ այն կրոնական խմբին պատկանող 250.000 մարդ հարկադրված է եղել լքել իր տունը[1]: Հենց այս տվյալների հիման վրա էր, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի Մունը եզդիների և այլ փախստականների դրությունը կոչեց հուսահատ. «Նույնիսկ այն դեպքերում, երբ մարդկանց հաջողվում է դուրս պրծնել վտանգավոր գոտուց, այնուամենայնիվ նրանք դեռ ստիպ-

[1] Военные преступления/Под ред. Роя Гутмэна и Дэвида Риффа. Пер. с англ. – М., Текст, 2001, с. 119.

ված են հաղթահարել դժվարություններով լի ճանապարհ՝ կիզիչ արևի տակ»[1]:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) տվյալների համաձայն՝ օգոստոսի 3-4-ը Սինջարի լեռնային շրջաններում ջրազրկումից մահացել է 56 եզդի երեխա: Օգոստոսի 6-ին նրանց թիվը հասել է 150-ի: Ընդհանուր առմամբ շաբաթվա ընթացքում Սինջարի լեռներում զոհվել է 250 երեխա, ևս 25 հազար երեխա, ներառյալ ծնողներին կորցրած հարյուրավոր երեխաներին, մահվան շեմին է եղել[2]:

«Շատերին միանգամից սպանում են, մնացածին՝ զրկում հացից, ջրից և դեղորայքից»,- հայտնում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի տեղակալ Ֆլավիա Պանսիերին: Փախստականների շարքերում շատ են ծերերն ու երեխաները, որոնք, ուժասպառ լինելով, մահանում են[3]:

Համաձայն ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի խոսնակ Ադրիան Էդվարդսի՝ ջիհադիստների գործողությունները և փախստականների մոտ Սինջար լեռան վրա ջրի ու պարենամթերքի բացակայությունը ստիպում են դիտարկել իրավիճակը որպես պոտենցիալ ցեղասպանություն[4]: Միայն պաշտոնապես հայտարարված տվյալներն ու ՄԱԿ-ի կողմից արտահայտված դիրքորոշումներն արդեն իսկ վկայում են Կոնվենցիայով սահմանված ցեղասպանություն եզրույթի առկայության մասին, քանի որ իսլամիստները, ստեղծելով այնպիսի պայմաններ, ինչպիսիք են ջրի, հացի և պայմանների բացակայությունը, դրանով գործողությունները

---

[1] In squalid exile, Iraqi Yazidis hope for return [Электронный ресурс]. URL: http:// news. yahoo.com/squalid-exile-iraqi-yazidis-hope-return-072954852.html (дата обращения: 11.10.2014).

[2] Число погибших в горах Синджара будут расти [Электронный ресурс]. URL: http://kurdistan.ru/2014/08/07/news-21939_CHislo_ pogibshih_v_gorah_ Sindzhara_budet_ rasti.html (дата обращения: 04.10.2014).

[3] Езидские дети ищут родителей [Электронный ресурс]. URL: http:// kurdistan.ru/ 2014/10/06/news-22522_ Ezidskie_deti_ischut_roditeley.html (дата обращения: 04.10.2014).

[4] ООН об Ираке: жестокость непредставимых масштабов [Электронный ресурс]. URL: http://www.bbc.co.uk/russian/international/2014/09/140901_ iraq_massive_human_rights_abuses.shtml (дата обращения: 01.10.2014

ուղղվում են եզդիների լրիվ կամ մասնակի ոչնչացմանը և վերջապես եզդիական ցեղի վերացմանը, սպանությանը։

Հետաքրքրական է նաև այն, որ ցեղասպանությունը բնութագրող հանգամանքների մասին ոչ միայն Կոնվենցիան է անդրադառնում, այլ նաև Հռոմի Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը։ Համաձայն հիշյալ կանոնադրության 9-րդ հոդվածի՝ «կենսապայմաններ» հասկացությունն իր մեջ ներառում է «գոյատևելու համար անհրաժեշտ ռեսուրսներից՝ պարենամթերք, բժշկական խնամք, միտումնավոր զրկումը, կամ կացարաններից պարբերաբար հեռացնելն ու արտաքսումը», ինչն իհարկե այսքանով չի սահմանափակվում, պարզապես խնդրո առարկային վերաբերելի են հենց այս հանգամանքները։ Իսկ այն բոլոր տեղեկությունները, որոնք այս կամ այն զրկանքի մասին էին խոսում, միարժեքորեն ընդգրկվում են «կենսապայման» հասկացության մեջ։

4. Ցեղասպանություն եզրույթն ամբողջացնող այնպիսի հանգամանք, ինչպիսին ***այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումն է,*** ուղղակիորեն փոխկապակցված է նախորդ կետերի, մասնավորապես երկրորդ կետի հետ։ Ինչպես արդեն նշել ենք, սպանել ու կտտանքների են ենթարկվել տղամարդիկ, կանայք վաճառվել են իբրև ստրկուհիներ։ Այս պայմաններում սպանվել են մարդիկ, չկան կանայք և տղամարդիկ, չի կարող լինել նաև մանկածնություն։ Հետևաբար այս կետը նույնպես Ցեղասպանություն եզրույթը բնութագրող պայման է։

5. Ցեղասպանությունը բնութագրող վերջին հանգամանքը ***երեխաների բռնի փոխանցումն է մարդկային մի խմբից մյուսին:*** Ասվածը նշանակում է, որ եզդիների կրոնական խմբի երեխաներին այլ կրոնական խմբի մարդկանց փոխանցելով՝ դրանով իսկ կատարում են մարդկության դեմ ուղղված հանցագործություն, իսկ ավելի հստակ՝ ցեղասպանությունը։

Համաձայն Հյուսիսային Իրաքից ստացված տվյալների՝ եզդի կանանցից շատերը ծննդաբերել են Մոսուլի բանտում, սակայն գրոհայինները վերցրել են նրանցից երեխաներին։ *«Շարունակվող հակամարտությունը աղետալի հետևանքներ ունի երեխաների համար»*,- հայտարարել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի տեղակալ Ֆլավիա Պանսիերին։ Ընդ որում, առավել ծանր խախտումներ գրոհայինները կատարում են այլ կրոնական խմբերին

պատկանող երեխաների հանդեպ: ԻԼԻՊ-ն առևանգում է տղաներին, օգտագործում նրանց կամ որպես զինվոր, կամ կենդանի վահան: Նրանցից ոմանց ստիպում են դառնալ արյան դոնոր վիրավոր գրոհայինների համար[1]:

Վերոշարադրյալի համատեքստում կարելի է փաստել, որ եզդի երեխաների (18 տարեկանից ցածր անձանց) փոխանցումը այլ իսլամական խմբին հետևում է եզդիների՝ որպես կրոնական խմբի մասնակի կամ լրիվ ոչնչացման նպատակին:

Համաձայն 2014 թ. հոկտեմբերի 2-ի ՄԱԿ-ի կողմից Իրաքին աջակցության առաքելության և ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գլխավոր հանձնակատարի միացյալ զեկույցի՝ ԻԼԻՊ գրոհայինների գործողությունները այլ կրոնական խմբերի նկատմամբ նպատակ են հետապնդում ճնշել և ոչնչացնել այդ խմբերը կամ ազատել նրանցից օկուպացված տարածքները[2]:

Այս հանգամանքը, մեր կարծիքով, ապացուցում է ցեղասպանության մեկ տարրի առկայություն ԻԼԻՊ գրոհայինների գործողություններում՝ սուբյեկտիվ «մտադրություն՝ լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնել եզդիներին»:

Եզդիների փրկության համար, ում կյանքին վտանգ է սպառնում, անհրաժեշտ է անհապաղ միջազգային միջամտություն[3]:

Օգոստոսի 7-ին ԱՄՆ նախագահը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ ԱՄՆ-ն, համաձայն Իրաքի կառավարության խնդրանքի, սկսում է ռազմական գործողություն Սինջար լեռան վրա գտնվող խաղաղ իրաքցիներին փրկելու նպատակով:

---

[1] США направляют в Курдистан солдат, ООН говорит о геноциде [Электронный ресурс]. URL: http://newsru.co.il/mideast/13aug2014/ usiraq_a204.html (дата обращения: 04.10.2014).

[2] Совет по правам человека обсудил ситуацию в Ираке [Электронный ресурс]. URL: http: //www.un.org/russian/news/story.asp?NewsID=22203#.VCzravl_vng (дата обращения: 02.10.2014).

[3] Report on the Protection of Civilians in Armed Conflict in Iraq:6 July-10 September 2014. Pp.12-16 [Электронный ресурс]. URL: www.ohchr.org /Documents/Countries/IQ/UNAMI_OHCHR_POC_Report_FINAL_6July_ 10September2014.pdf (последнее посещение – 04.10.2014).

Նրա խոսքերով՝ ԻՀ ահաբեկիչները հատկապես դաժան են վարվում կրոնական փոքրամասնությունների, մասնավորապես քրիստոնյաների և եզդիների նկատմամբ:

Մի շարք հեղինակներ, որոնց թվում է նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն կոմիսարը Իրաքում կատարվող եզդիների նկատմամբ բռնությունները դասում են մարդկության դեմ հանցագործությունների շարքին:

Իրաքում կատարված միջազգային իրավունքի նորմերի խախտման և մարդու իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության մասին խոսել է նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը:

Մեր կարծիքով՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, որոնք կատարվել են և որոշ տվյալներով նաև շարունակում են կատարվել այսօր եզդիների նկատմամբ, պետք է համարվեն ցեղասպանություն, ինչի ապացույց կարող են հանդիսանալ ոչ միայն միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները կամ ականատեսների, լրագրողների և այլ անձանց վկայությունները, այլ նաև իսլամիստների կողմից համացանցում տեղադրված մի քանի տասնյակ տեսահոլովակները և լուսանկարները, որոնցում պատկերված են եզդիների սպանության և հարկադիր կրոնափոխության տեսարանները:

Վերոգրյալի կապակցությամբ գտնում ենք, որ Իրաքի կառավարությանն անհրաժեշտ է վավերացնել Հռոմյան համաձայնագիրը և ճանաչել միջազգային քրեական դատարանի իրավասությունը՝ դառնալով նրա լիիրավ անդամ:

Եզդիների ցեղասպանության և վայրագ գործողությունների կատարման ու անպատիժ մնալու մասին 2014 թ. սեպտեմբերին իր մտահոգություններն է ներկայացրել նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում[1]: Ըստ նրա՝ Հայաստանը բարձրաձայնել է Սիրիայի հայ բնակչության և Իրաքի հյուսիս-արևմուտքում բնակվող եզդի բնակչության պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը և ցանկալի է

[1] Ելույթն ամբողջապես հասանելի է http://www.president.am/hy/press-release/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-New-York-speech/ կայք էջում:

համարում միջազգային համայնքի միասնական դիրքորոշումն այս հարցում։

Ի տարբերություն Հայոց մեծ եղեռնի՝ ժամանակակից շատ հեղինակավոր միջազգային կազմակերպություններն ու հզոր գերտերությունները կատարել են և շարունակում են կատարել իրենց առջև դրված խնդիրը՝ անել ամենաանհնարինը ինչպես հայ ժողովրդի նկատմամբ կատարվածը, այնպես էլ դրան հաջորդող նման վայրագությունները ցեղասպանություն ճանաչելու ուղղությամբ։ Պետք է նշել, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը 2016 թ. մարտի 14-ին միաձայն ընդունել է բանաձև՝ հայտարարելով, որ Իրաքի և Սիրիայի իսլամական պետությունների կողմից քրիստոնյաների, եզդիների և այլ կրոնական ու էթնիկ փոքրամասնությունների դեմ իրականացվող վայրագությունները, ռազմական հանցագործությունները մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են, և պետք է կոչ անել, որպեսզի բոլոր նման անթույլատրելի արարքները կոչվեն իրենց օրինական անուններով, այն է՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և ցեղասպանություն։

Չափազանց կարևոր է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից ընդունված պատմական բանաձևն այն մասին, որ սկսելու է միջազգային հետաքննության իրականացումը Իրաքում ԻԼԻՊ-ի կողմից կատարված հանցագործությունների մասով ապացույցներ հավաքելու նպատակով, որոնք կարող են հետագայում օգտագործվել ԻԼԻՊ-ի դեմ անցկացվելիք դատավարությունների ժամանակ։

Այդ բանաձևը լիազորում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հատուկ խորհրդատուի նախաձեռնությամբ ստեղծել քննչական թիմ, որի նպատակն է հավաքել փաստեր այնպիսի գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են որակվել որպես ցեղասպանություն, պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ։ Ընդ որում, համաձայն բանաձևի հեղինակների՝ ապացույցները պետք է հավաքվեն «ամենաբարձր չափանիշներին համապատասխան» «արդար և անկախ» քրեական դատավարություններում օգտագործելու նպատակով։

Եվ վերջապես, ՄԱԿ-ը գտնում է, որ ԻԼԻՊ-ի կողմից ցեղասպանություն է իրականացվել եզդի ժողովրդի, ինչպես նաև շիաների, քրիստոնյաների, սունիների և այլ խմբերի նկատմամբ։ Իսկ այս պարագայում ամենամտահոգիչն այն է, որ, ըստ ՄԱԿ-ի բանաձևի, այդ-

պիսի ցեղասպանություն կատարած անձինք որևէ պատասխանատվության չեն ենթարկվել, բացի դրանից՝ օրըստօրե անհետանում են ապացույցները, պղծվում են գերեզմանները, անհայտ դառնում ականատեսները, ինչպես նաև ոչնչացվում հիմնավորող այլ փաստաթղթերն ու բժշկական ապացույցները։

Մեր առջև դրված իրավական երկու հարցադրումներից առաջինին կարելի է անդրադառնալ այն ծավալով, որ միջազգային իրավական նորմի վերլուծությունն ու փաստական հանգամանքների քննարկումը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ, այո՛, ինչպես 1915 թ. ապրիլին, այնպես էլ 2014 թ. օգոստոսին համապատասխանաբար հայերի և եզդիների նկատմամբ տեղի է ունեցել ցեղասպանություն։ Չկա որևէ հատկանիշ, որի բացակայության ուժով կարելի է հետևություն անել ցեղասպանության բացակայության մասին։

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ հարցադրմանը, մեր խորին համոզմամբ, 100 ամյա տարելիցին կրկին անգամ հիշելով Հայոց ցեղասպանության զոհերին, հարկ ենք համարում ևս մեկ անգամ կարևորել ցեղասպանության ճանաչման և դատապարտման անհրաժեշտությունը, ինչն ուղղված է հետագայում նմանատիպ հանցագործությունների կանխարգելմանը։ Պատահական չէ, որ անգամ գիտական հոդվածի վերնագիրն ինքնին տեղի ունեցածի ողջ արտացոլումն է, իսկ մենք, վերահաստատելով մեր դիրքորոշումը, արձանագրում ենք, որ ցեղասպանությունը չպետք է պատժելի արարք լինի միայն կոնվենցիոն մակարդակով, այլ ցեղասպանությունը պետք է համարվի մարդկության դեմ ուղղված ամենածանր ոճիրը, որի կատարման համար որևէ ազգի կամ խմբավորման պատասխանատվությունից խուսափելու կառուցակարգեր չպետք է գոյություն ունենան։ Եթե 1915 թ. կատարվածը միջազգային հանրույթի կողմից պատշաճ գնահատականի և պատժի արժանացած լիներ, վստահ ենք՝ 21-րդ դարում նման ոճիր գործելը եզդիների նկատմամբ կբացառվեր։ Նույնիսկ հայաստանաբնակ մեր հայրենակիցներից մեկը նշել էր, որ «ցեղասպանությունը ցեղասպանություն է ծնում», շարունակելով միտքը, վերջինս կայքէջերում առաջարկել էր հետևյալը. «եկեք վերջ դնենք մարդկային կոտորածներին, ... նրանք իրենց իսկ

հայրենիքում սպանվում են մի պատճառով, որ եզդի են, ինչպես հայերը՝ Օսմանյան կայսրությունում՝ հայ լինելու համար»[1]։

ГЕНОЦИД ЕЗИДОВ КАК ПОСЛЕДСТВИЕ МЕЖДУНАРОДНОГО НЕПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН

Рустам Махмудян
Депутат Национального Собрания РА,
заместитель Председателя постоянной комиссии
по государственно-правовым вопросам и защите прав человека,
доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В данной статье, основываясь на принципах международного права и мы квалифицировали действия, совершенные в 2014 году против езидов в Северном Ираке, как геноцид, отдельно анализируя элементы термина «геноцид», известные в международном праве. Кроме того, действия, описанные автором, проанализированы в систематической связи, продемонстрированы безнаказанность в рецидиве геноцидов, в частности, по мнению автора, геноцида против езидов в 1915 году, а также изучены действия, совершенные Османской Турцией против армян, которые еще не признаны на международном уровне и преступники оставлены безнаказанными.

[1] Տե՛ս http://blognews.am/arm/news/182866/cexasapanutyuny-cexaspanutyun-e-tsnum.html կայք էջ։ Հետաքրքրական է աղբյուրի այն տեղեկատվությունը, ըստ որի՝ ԻԼԻՊ-ում մեծամասնություն են կազմում հենց թուրքերը, այնուհետև՝ չեչեններն ու դաղստանցիները։

THE GENOCIDE OF THE YEZIDIS AS A RESULT OF THE NON-RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE

Rustam Makhmudyan
Member of the National Assembly of the RA,
Deputy Chairman of the NA Standing Committee on State and Legal Affairs and Human Rights Protection,
Docent at the YSU Chair of Constitutional Law,
Condidate of Legal Sciences

In the article "The Genocide of the Yezidi as a result of the International Recognition of the Armenian Genocide" the Author, based on the international principles of legal analysis, described the acts against the Yezidis in Northern Iraq in 2014 as genocide, separately analyzing the elements of the term genocide known in international law.

Besides, the described by the author actions have been analyzed already in a systematic connection, showing the impunity in case of recurrence of genocides, in particular, according to the author, the genocide against the Yezidis in 1915, as well as the fact that evil actions committed by the Ottoman Turkey against the Armenians have not yet been recognized internationally and the criminals have been left unpunished.

Բանալի բառեր - եզդի ժողովրդի, Սինջար, ցեղասպանություն, ահաբեկչական, ԻԼԻՊ, միջազգային-իրավական, բռնություն
Ключевые слова: езиды, Синджар, геноцид, терроризм, ILIP, международно-правовой, насилие
Keywords: Yezidi people, Sinjar, genocide, terrorist, ILIP, international-legal, violence

2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հասմիկ Ենգոյան
«Գնումների աջակցման կենտրոն» ՄՊԸ-ի հիմնադիր-նախագահ,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

2016 թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ նոր օրենք (այսուհետ նաև՝ Օրենք), որը ուժի մեջ է մտել օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը, այն է՝ 2017 թ. ապրիլի 25-ին:

«Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ վերանայվել է գնումների բողոքարկման արտադատական համակարգը, և ներդրվել նոր իրավական կարգավորմամբ նոր ինստիտուտ, որին վերապահվել է իրավունք արտադատական կարգով քննելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումների դեմ բերված բողոքները:

Համաձայն «Գնումների մասին» 2016 թ. ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքների քննումն իրականացնում է **ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը** (այսուհետ նաև՝ խորհուրդ):

«Գնումների մասին» 2016 թ. ՀՀ օրենքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի իրավական կարգավիճակին վերաբերող դրույթների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել որոշ հիմնախնդիրներ, որոնք նվազեցնում են գնումների բողոքարկման արտադատական համակարգի արդյունավետությունը:

Այսպես՝ Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***գնումների բողոքարկման խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է***, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ու-

սումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից՝ միանձնյա, ղեկավարվելով սույն օրենքով և նորմատիվ իրավական այլ ակտերով: Բողոքը քննելիս խորհրդի անդամը հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհուրդ:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Միևնույն ժամանակ Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Վերոհիշյալ իրավական նորմերից, նախ, անհասկանալի է, թե ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը կարելի՞ է դիտարկել որպես պետական մարմին, և ինչպիսի՞ կազմակերպաիրավական ձև ունի այն, ինչի վերաբերյալ Օրենքը որևէ նշում չի պարունակում:

Նշված օրենսդրական բացի հետևանքով պրակտիկայում ստեղծվել է մի փակուղային իրավիճակ, երբ անձը զրկվում է դատական կարգով գնումների բողոքարկման խորհրդի որոշումները բողոքարկելու հնարավորությունից:

Մասնավորապես ներկայումս շահագրգիռ անձինք, ղեկավարվելով Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, դատական կարգով բողոքարկում են խորհրդի որոշումները քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, սակայն դատարանը վարույթ չի ընդունում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումների դեմ ներկայացված հայցերը: Դատարանի հիմնավորմամբ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայցադիմու-

մում պետք է նշվեն գործին մասնակցող …իրավաբանական անձի անվանումը, նրանց գտնվելու վայրի հասցեները: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձն ունի իր անվանումը, որը ցուցում է պարունակում նրա կազմակերպական-իրավական ձևի մասին: Տվյալ դեպքում հայցվոր կողմը պահանջն ուղղել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ չնշելով իրավաբանական անձի ձևի մասին ցուցում պարունակող տեղեկություններ, որից հնարավոր կլիներ հանգել եզրակացության վերջինիս կազմակերպական-իրավական ձևի մասին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածը սահմանում է, որ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները»[1]:

Վերոհիշյալի արդյունքում անձը փաստացի չի կարողանում իրացնել Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով երաշխավորված գնումների բողոքարկման խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելու իր իրավունքը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի խախտմանը:

Երկրորդ, ինչպես արդեն նշվել է, Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը ճանաչում է որպես անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին:

Սակայն դրա հետ միաժամանակ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար խորհրդի անդամը ստանում է վարձատրություն պետական բյուջեի միջոցների հաշվին ***լիազորված մարմնի միջոցով*** **(տվյալ դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը):**

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ **օրենքով խորհրդին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններն ապահովում է լիազորված մարմինը:**

[1] Տե՛ս ԵԱՔԴ/3555/02.17., ԵԱՔԴ/2177/02/17, ԵԱՔԴ/3272/02/17 և այլ քաղաքացիական գործերով կայացրած որոշումները:

Այսպիսով՝ ստացվում է մի իրավիճակ, երբ օրենքով երաշխավորված անկախ մարմինը՝ ի դեմս գնումների բողոքարկման խորհրդի, օժտված չէ ֆինանսական ինքնուրույնությամբ, չունի սեփական բյուջե, իսկ խորհրդի անդամը վարձատրությունը ստանում է ՀՀ ֆինանսների նախարարության բյուջեից: Եվ ավելին, խորհրդին անհրաժեշտ աշխատանքային պայմաններն ապահովում է նույն ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Թվարկված դրույթներից ակնհայտ է, որ այն որպես պետական մարմին, օժտված չէ կազմակերպական ինքնուրույնությամբ և առանձնացվածությամբ, որպես սեփականություն չունի առանձնացված գույք և, որպես հետևանք, իր պարտավորությունների համար պատասխանատու չէ այդ գույքով, չի կարող իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Պետք է նշել, որ «Գնումների մասին» 2016 թ. ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը իրականացնում է գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումը: Որպես տվյալ ոլորտում լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի թիվս այլ լիազորությունների, պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործընթացի կազմակերպման հարցում, ինչպես նաև իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

Սակայն պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ մասնակիցների կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում վիճարկվում են պատվիրատուի կողմից կայացրած այնպիսի որոշումներ, որոնք կայացվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական պարզաբանումների հիման վրա, կամ մասնակցի կողմից բողոքարկվում են էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքի թերությունները, երբ, ինչպես նշվեց, այդ համակարգի սպասարկման և համակարգման գործառույթը իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Նման դեպքերը, անխոս, կասկածի տեղիք են տալիս, թե ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, լինելով ֆինանսական կախ-

վածության մեջ ՀՀ ֆինանսների նախարարությունից, արդյո՞ք կկարողանա իրականացնել բողոքի անկախ քննություն։

Մեր կարծիքով՝ նման իրավական կարգավորման պայմաններում հարցականի տակ է դրվում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի իրական անկախությունը, քանզի ֆինանսական անկախության բացակայությունը, ավելին, օրենքով անկախ ճանաչված մարմնի ֆինանսական կախվածությունը գնումների ոլորտում լիազորված պետական մարմնից, ինքնին, կարող են հանգեցնել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի իրավական անկախության խաթարմանը։

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անկախության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը այդ մարմնի ձևավորման կարգն է։

Այսպես՝ «Գնումների մասին» 2016 թ. ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ Խորհուրդը կազմված է մինչև երեք անդամից։ Խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով։ Խորհրդի առաջին կազմի անդամների նշանակման ժամկետներն են՝ մեկ անդամի համար՝ երեք տարի, մեկ անդամի համար՝ չորս տարի, մեկ անդամի համար՝ հինգ տարի։ Խորհրդի անդամներին նշանակում (հինգ տարի ժամկետով) և սույն օրենքով նախատեսված դեպքերում ազատում է Հայաստանի Հանրապետության նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ։

Մինչդեռ գնումների մասին նախկին օրենսդրությամբ նախատեսված էր ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ձևավորման միանգամայն այլ կարգ։

Մասնավորապես ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (ուժը կորցրել է) 104-րդ կետի համաձայն՝ բողոքարկման խորհրդի կազմում իրավասու մարմնի կողմից ներկայացված թեկնածուն ընդգրկվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմացությունը գնահատվելուց հետո, եթե վերջինս ունի բարձրագույն կրթություն և առնվազն 3 տարվա մասնագիտական գործունեության փորձ։ Գնահատումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը **թեստավորման միջոցով**։ Թեստը կազմվում է գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերից։

2010 թ. դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստացված յուրաքանչյուր բողոքը քննելու համար խորհրդի անդամներից ձևավորվում է երեք անձից բաղկացած հանձնաժողով: Յուրաքանչյուր դեպքում հանձնաժողովի կազմի ընտրությունը կատարվում է **ռոտացիոն կարգով**՝ պատահական ընտրությամբ:

Համադրելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ձևավորման ներկայացված երկու եղանակները՝ գտնում ենք, որ ***թեստավորման արդյունքում*** ձևավորված ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամներից յուրաքանչյուր բողոքի դեպքում ***ռոտացիոն կարգով*** ընտրված հանձնաժողովը օբյեկտիվորեն կարող է համարվել ավելի անկախ, անաչառ և ներգործությունից զերծ մարմին, քան կարող է լինել նշանակովի եղանակով ձևավորվածը:

Գնումների բողոքարկման արտադատական համակարգի արդյունավետության նվազմանը հանգեցնում է նաև 2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքով խորհրդի լիազորությունների շրջանակի կրճատումը:

Այսպես՝ «Գնումների մասին» թե՛ 2010 թ. և թե՛ 2016 թ. ՀՀ օրենքները սահմանում են, որ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: **Միևնույն ժամանակ երկու օրենքներն էլ արգելում են պատվիրատուներին կնքել պայմանագիր անգործության ժամկետում:**

Վերոհիշյալից ելնելով՝ 2010 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով **խորհրդին իրավունք էր վերապահվել չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը, եթե պատվիրատուն կնքել էր պայմանագիրը անգործության ժամկետում**՝ խախտելով օրենքով սահմանված պահանջը:

Մինչդեռ 2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի «բ» պարբերությամբ **խորհրդին արգելվել է ընդունել պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշում:**

Նշված նորմերի համադրումից ակնհայտ է դառնում, որ 2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքով խորհուրդը զրկվել է կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու իրավունքից այն դեպքում, երբ պայմանագիրը կնքվել է մինչև անգործության ժամկետը լրանալը,

այսինքն՝ երբ պայմանագիրը կնքվել է օրենքի պահանջների խախտմամբ:

Արդյունքում մինչև անգործության ժամկետը լրանալը օրենքի խախտմամբ կնքված պայմանագրի պայմաններում անձը զրկվում է նաև պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու իրավունքից, քանզի «Գնումների մասին» 2016 թ. ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը յուրաքանչյուր անձին իրավունք է վերապահում բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին **նախքան պայմանագրի կնքումը:**

Ելնելով վերոշարադրվածից՝ կարելի է եզրակացնել, որ 2016 թ. «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքով ներդրված պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները արտադատական կարգով բողոքարկելու համակարգում առկա են հիմնախնդիրներ, որոնք հանգեցնում են գնումների բողոքարկման արտադատական համակարգի արդյունավետության նվազմանը:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО СТАТУСА СОВЕТА ПО ОБЖАЛОВАНИЮ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК, ЗАКРЕПЛЕННОГО ЗАКОНОМ РА «О ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПКАХ» ОТ 13.12.2016 ГОДА

Асмик Енгоян

Президент-основатель ООО «Центра по содействию государственных закупок»,
доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В данной статье проведен сравнительный анализ досудебной системы обжалования процесса государственных закупок, предусмотренной законом РА «О государственных закупках» как от 22.12.2010 года, так и от 16.12.2016 года.

Нами выявлены некоторые недоработки при закреплении правового статуса Совета по обжалованию закупок законом РА «О государственных закупках» от 16.12.2016 года, которые по нашему мне-

нию, приводят к нарушению независимости Совета и в результате к понижению эффективности досудебной системы обжалования процесса государственных закупок.

SOME ISSUES ON THE LEGAL STATUS OF THE APPEAL COUNCIL OF THE STATE PROCUREMENTS STIMULATED BY THE LAW OF RA ON THE STATE PROCUREMENTS ADOPTED ON DECEMBER 16, 2016

Hasmik Yengoyan

President of the Procurement Support Center,
Docent of the YSU Cairs 0f Civil Law,
Condidate of Legal Scences

The article contains a comparative analysis of the pre-judicial system of appealing the State procurement procedure stipulated by the law of RA "on State Procurements" adopted both on December 22, 2010 and on December 16, 2016. Through a comparative analysis, the author has identified some flaws in securing the legal status of the Appeal Council of the State Procurements according to the law of RA on the State Procurements adopted on December 16, 2016. According to H. Yengoyan, the latter leads to violation of the Council's independence and, as a result, decreases the effectiveness of the pre-judicial system of appeals against the State Procurement procedure.

Բանալի բառեր - «Գնումների մասին» ՀՀ օրենք, գնման գործընթաց, գնումների բողոքարկման խորհուրդ, պատվիրատուի որոշումները բողոքարկելու կարգը
Ключевые слова: закон РА «О государственных закупках», процесс государственных закупок, Совет по обжалованию государственных закупок, порядок обжалования процесса государственных закупок
Keywords: State procurement laws of RA, state procurement disputes settlement procedure, The Appeal Council of State Procurement

ФУНКЦИЯ ОХРАНЫ ПРАВ И СВОБОД ГРАЖДАН И ИХ ОТВЕТСТВЕННОСТЬ ПЕРЕД ОБЩЕСТВОМ

Рита Арустамян
Заведующая кафедрой права Арцахского государственного университета, кандидат юридических наук, доцент

Происходящие в Республике Арцах процессы, направленные на развитие новой государственности и гражданского общества, в полной мере должны обеспечивать права человека, гражданские и политические свободы, тем более для Арцахского государства, цель которого – стать демократическим и правовым. Личность должна рассматриваться как высшая социальная ценность, и для ее развития и совершенствования должны быть созданы наиболее благоприятные условия. Поэтому особую актуальность в этой связи приобретает исследование деятельности государства, т.е. его функций и, прежде всего, главной из них – функции охраны прав и свобод граждан.

Важно отметить, что институт прав и свобод личности является важнейшим компонентом любой правовой системы. В этой связи хотелось бы привести весьма неоднозначную позицию М.И. Байтина, утверждающего, что «охрана интересов человека, его прав и свобод – это скорее не функция, а основная цель задачи, причем не только «цивилизованного», но и любых уважающих себя и своих граждан государства и общества»[1].

В юридической науке функции рассматриваются как одна из системных характеристик государства, отражающая его жизнесуществование[2]. Функция охраны прав и свобод граждан носит комплексный характер, который проявляется в существовании объективных потребностей, в их охране, которые вытекают из природы взаимоотношений между индивидами и между гражданином и государством; в наличии соответствующей нормативно-правовой базы, предусматривающей

[1] См.: Теория государства и права / Под ред. М.Н. Марченко, М., «Зеркало», 2004, С. 340.

[2] См.: Чиркин В.Е., Государствоведение, М., Норма, 1999, С. 100-104.

различные формы и способы защиты и охраны прав граждан; в функционировании системы правоохранительных государственных органов, непосредственно занимающихся охраной и защитой прав граждан: в существовании как внутригосударственного, так и международного механизма защиты прав и свобод граждан.

Характеризуя гуманистическую сущность теории и практики прав и свобод, необходимо сказать, что Конституция Республики Арцах придает решающее значение охране, обеспечению и гарантиям этих прав. Не только формально закрепить права и свободы, но и сделать их реальностью для каждого индивида – в этом смысл правового регулирования в целом.

Конституция Республики Арцах[1] в главе «Основные права и свободы человека и гражданина» впервые закрепила такие права и свободы, которые исходят из принципов демократии и закреплены в соответствующих международных документах. К их числу относятся: право на защиту персональных данных, права ребенка, право человека на физическую и психологическую неприкосновенность, неприкосновенность чести и доброго имени, право политического убежища и право на надлежащее администрирование, обязанность возмещения государством причиненного вреда и другие права и свободы.

Конституция Республики Арцах (ст. 3), признав человека высшей ценностью, впервые закрепила защиту прав и свобод человека и гражданина в качестве обязанности государства[2]. Тем самым охрана и развитие разносторонних прав и свобод граждан должны составлять смысл деятельности всех законодательных, исполнительных и судебных органов государственной власти. Поэтому в современном демократическом государстве на первый план выдвигается задача охраны прав и свобод граждан. Их приоритет должен признаваться те только формально в Конституции Республики Арцах или в иных законах, но и обеспечиваться реально. Главное заключается в том, что каждый гражданин нашей страны, независимо от его материального положения, национальности, вероисповедования и других социальных приз-

[1] Вторая Конституция Республики Арцах была принята 20 февраля 2017 года (ԼՂՀ ՊՏ 2017.02.28/04 (318)).

[2] См.: Конституция Республики Арцах, Степанакерт, 2017, С. 12.

наков, должен быть уверен в том, что все предоставленные ему конституционные права и свободы, он может реализовать беспрепятственно, независимо от усмотрения государственных органов, должностных и иных лиц, проживающих в Республике Арцах[1].

В демократических государствах их органы и должностные лица обязаны содействовать гражданам в осуществлении ими своих конституционных прав[2].

Реальность прав и свобод граждан обеспечивается не только средствами социальной политики государства, но и деятельностью всей системы правоохранительных органов. Однако какой бы энергичной не была правоохранительная деятельность государственных органов, она вовсе не исключает борьбы самих граждан за неуклонное претворение в жизнь предоставленных им прав и свобод. Сюда относятся права граждан вносить предложения в государственные органы (ст. 122 Конституции Республики Арцах), свободу иметь собственное мнение (ст. 42 Конституции Республики Арцах), право на судебную защиту и право на обращение в международные органы по защите прав человека (ст. 61 Конституции Республики Арцах). В этих конституционных положениях претворены в жизнь требования правовой государственности. Главное среди них – право граждан «воевать» за свои права и свободы.

Функция охраны прав и свобод личности в Республике Арцах – это комплексное направление деятельности государства по недопущению нарушений прав и свобод (их предупреждение; контроль и надзор за их соблюдением), а также подтверждению или восстановлению оспоренного или нарушенного права в целях нормализации процесса осуществления прав и свобод личности.

---

[1] Нередко в предоставленных Конституцией правах граждан видят лишь проявление их свободы, а в обязанностях – отражение только ответственности. При таком взгляде на права и обязанности искажается действительная их природа. Свобода и ответственность составляют единое и нераздельное целое, в каких бы формах они не выражались. И свобода, и ответственность с необходимостью наличествуют как в любом основном праве, так и в любой основной обязанности.

[2] См.: Чиркин В.Е., Сравнительное конституционное право, М., 2002, С. 167.

Важно отметить, что тенденции развития функции охраны прав и свобод личности в Республике Арцах видятся в существенном изменении правозащитной, правоохранительной сферы по следующим направлениям: совершенствование законодательства; усовершенствование и укрепление механизмов взаимодействия между всеми государственными структурами в правозащитной сфере; повышение уровня правосознания и правовой культуры граждан и должностных лиц, оказывающих им правовую помощь; дальнейшее обновление и усовершенствование материально-технического, информационного, а также научного обеспечения работы всех правозащитных и правоохранительных структур; развитие и стимулирование активной деятельности системы различных правозащитных органов и организаций, которые были бы доступны каждому гражданину, нуждающемуся в правовой помощи, консультации специалиста.

Вышеизложенное позволяет нам утверждать, что функция охраны прав и свобод личности занимает центральное, системообразующее место. С развитием общества, с дальнейшим усилением центральной роли личности в нем, ее ценности системообразующая роль функции охраны прав и свобод личности будет все возрастать и возрастать. Следует отметить, что чем более развиты и эффективнее осуществляются экономическая, социальная и другие основные функции государства, тем легче воплощаются в жизнь идеи прав человека и, соответственно, в полной мере реализуются охрана и защита прав и свобод личности.

Для осуществления данной функции выделим правовые и неправовые формы.

Среди правовых форм кратко рассмотрим правотворческую, правореализационную и правоохранительную формы. Правотворческую форму осуществления функции охраны прав и свобод граждан, которая связана с деятельностью компетентных государственных органов и должностных лиц по выработке, изданию, изменению и отмене нормативных правовых актов, направленных на нормализацию процесса охраны прав и свобод человека. Это требует, чтобы правотворчеством занимались компетентные в юридическом отношении лица,

т.е. профессионалы – правоведы, глубоко разбирающиеся в «лабиринтах» юриспруденции[1].

Правореализационную форму осуществления данной функции представляет собой деятельность компетентных государственных органов и должностных лиц, направленных на конкретизацию законов, посредством которых государство обеспечивает условия для нормальной реализации прав и свобод человека.

Правоохранительная форма осуществления функции охраны прав и свобод личности представляет собой деятельность компетентных государственных органов и должностных лиц (судебных, контрольно-надзорных, правоохранительных) по недопущению нарушений прав и свобод (их предупреждение, контроль и надзор за их соблюдением).

Рассмотрение форм реализации функции охраны прав и свобод человека без рассмотрения неправовых форм будет неполным.

К неправовым формам осуществления функции охраны прав и свобод человека и гражданина можно отнести:

- организационную форму, которая включает в себя текущую повседневную работу определенных структур по обеспечению функционирования органов государства, связанную с изучением и оценкой обстановки. В обеспечении прав и свобод личности данная форма имеет большое значение, т.к. она зависит от процесса управления;

- идеологическую (воспитательную форму, представляющую собой правовое воспитание населения, а также должностных лиц, цель которого – формирование юридически грамотной личности, знающей, соблюдающей и уважающей законы, конституционные права и свободы). Данная функция способствует формированию правосознания личности, а также соответствующих убеждений, которые определяют ее отношение к праву, т.е. формирует объективное общественное мнение. Можно отметить также, что идеология является одним из основных орудий достижения и продвижения в массы идеи прав человека, а государственная идеология выражает интересы всех граждан государства;

---

[1] См.: Апиян Н. А., Апиян С. Н., Правосознание, правовое воспитание, правовая культура, Е., 2001, С. 187.

- информационно-техническую форму, которая заключается в сборе, анализе, подготовке и обработке информационных данных (отчетов, справок, обзоров, опросов). Содержание данной формы заключается в анализе и прогнозировании нарушения основных прав и свобод личности в целях предупреждения и предотвращения их в будущем;

- экономическую форму, связанную с материальным обеспечением, стимулированием деятельности, направленной на охрану прав и свобод личности. Не секрет, что для полноценной реализации и гарантированности большинства прав и свобод личности необходима соответствующая экономическая основа государства, т.е. его способность материально обеспечить декларируемые им права и свободы.

В настоящее время тенденции развития функции охраны прав и свобод граждан в Арцахском государстве видятся в следующем:

- совершенствование законодательства, правового регулирования и процессов реализации охраны прав и свобод личности; качественная, а не количественная, переработка нормативно-правовой базы правозащитной и правоохранительной деятельности;

- усовершенствование и укрепление механизмов взаимодействия, сотрудничество между всеми государственными структурами, действующими в правозащитной сфере;

- повышение уровня, прежде всего, правовой культуры должностных лиц, сотрудников, оказывающих правовую помощь гражданам в охране и защите их прав и свобод, а также повышение уровня подготовленности, квалификации их как высокопрофессиональных специалистов своего дела. В этой связи хотелось бы отметить, что обучению правам человека и демократии, нужно начинать со средней школы, а также проводить подготовку и переподготовку педагогов средней и высшей школы, лидеров правозащитных организаций государственных служащих, повысить правовую и политическую культуру слушателей. Важно также подчеркнуть, что лишь подготовкой нового поколения юристов, для которых служение человеку станет главным принципом жизни, возможно будет эффективно осуществлять функцию охраны прав и свобод личности;

- повышение уровня правосознания и правовой культуры граждан, обучение их способам правовой защиты. Поэтому в повышении

уровня правовой культуры и правовых знаний граждан большое значение имеет реальная возможность получения ими нужной информации, доступность необходимых источников. В качестве источника информации могут выступать СМИ, а также различные телевизионные передачи с обсуждением всевозможных проблем (например, трансляция аналитических передач с участием специалистов в правозащитной и правоохранительной сфере, которые помогут гражданам найти пути решения возникших проблем в охране их прав или организовать круглые столы, напрямую задать интересующий их вопрос и получить квалифицированный ответ и выслушать мнение специалистов);

- развитие и стимулирование активной деятельности системы различных правозащитных органов и организаций, которые были бы доступны каждому гражданину, нуждающемуся в правовой помощи, консультации специалиста;

- заимствование положительного опыта правозащитной и правоохранительной деятельности зарубежных, международных органов и организаций с учетом особенностей нашего государства.

В Конституции Республики Арцах получил воплощение принцип органического сочетания прав, свобод и охраны личности. Он пронизывает по существу все содержание Основного Закона и представляется как одна из важнейших черт демократии[1]. Конечно, демократия находит выражение не только в правах и свободах, но и в обязанностях граждан, их ответственности перед обществом и государством. Осуществление прав и свобод, написано в Конституции Республики Арцах, неотделимо от исполнения гражданином своих обязанностей. Необходимо отметить, что Конституция Республики Арцах закрепила в Основном законе следующие обязанности:

- каждый гражданин обязан в установленном законом порядке участвовать в защите Республике Арцах (ст. 14, п. 3);

- каждый обязан уплачивать установленные в соответствии с законом налоги, пошлины, производить другие обязательные платежи, зачисляемые в государственный или общинный бюджет (ст. 60, п. 8).

---

[1] Идея единства прав, свобод и их охраны имеет основополагающее значение. Она выражает единство интересов гражданина и государства, личности и общества. Такое единство объективно свойственно правовому государству.

К сожалению, во второй Конституции Республики Арцах, которая была принята 20 февраля 2017 года, отсутствует такая обязанность граждан, как соблюдение Конституции и законов, уважение прав, свободы и законных интересов других лиц. Неуклонное соблюдение этих обязанностей – главная гарантия осуществления принадлежащих гражданам прав и свобод.

Предоставление всем одних только прав, без каких-либо обязанностей, означало бы упразднение всякой свободы и демократии, т.к. свобода одного неизбежно выступает как мера ограничения свободы других, как следствие их обязанностей. Вот почему необходимо, не забывая о правах и свободах, глубоко раскрывать вторую сторону неразрывного диалектического единства – обязанность, ответственность, общественный долг, дисциплину и организованность граждан, ибо те широкие права и свободы, которыми они располагают, могут быть успешно реализованы только при условии выполнения ими своих обязанностей. Без этого никакая демократия невозможна. Граждане свободны потому, что они взаимно обязаны. Разрушить эту связь – значит посягнуть на сами основы прав. Единство прав, свобод и обязанностей – важнейший принцип демократического общества, выражающий гармоническое сочетание личных и общественных интересов, взаимную ответственность и взаимные социальные требования, притязания гражданина и государства. Тезис о том, что «нет прав без обязанностей, нет обязанностей без прав», получает здесь реальное воплощение.

Следует отметить, что единство прав и обязанностей отнюдь не сводится только к тому, что в рамках конкретного правоотношения праву одного субъекта корреспондирует обязанность другого и наоборот. Это единство имеет более широкую основу, более широкое значение и более сложный характер. Оно богаче, многообразнее, диалектичнее. Принцип единства предполагает, что один и тот же субъект одновременно обладает определенным комплексом прав и обязанностей, что права и обязанности для всех равны (это тоже составляет момент единства), что в них сочетаются личные и общественные интересы, что они обеспечиваются единой системой гарантий. Наконец, в их основе лежит единый базис, социальное и морально-политическое единство нашего общества. Можно отметить также,

что у нашего государства существует одинаковая заинтересованность в реализации гражданами как своих прав, так и обязанностей.

Каждый гражданин Республики Арцах в силу своего общего юридического статуса обязан соблюдать законы, установленный порядок, предписания правовых норм, запреты, а государство может требовать такого соблюдения и в случае невыполнения или нарушения – наказывать, привлекать к ответственности. В свою очередь, гражданин нашей страны вправе рассчитывать на защиту со стороны государства, создание условий для реализации своих прав и возможностей. Определенные взаимосвязи складываются также между самими гражданами, в результате чего возникают общерегулятивные, статусные (статутные) правоотношения, которые создают общую гармонизацию прав, свобод и обязанностей. Все несут обязанность и ответственность перед государством, обществом и друг перед другом.

В единстве прав, свобод и обязанностей находит выражение идея социальной справедливости. Каждый имеет не только права, но и несет обязанности. Это разумно и справедливо.

В правовом государстве обязанности представляют собой комплекс морально-юридических требований, предъявляемых к личности и вытекающих из объективных потребностей развития и совершенствования общества, самой личности. В раскрытии сущности этих требований категория «необходимость» играет такую же роль, как и для субъективных прав категория «возможность». Однако необходимость не следует понимать как некую повинность, основанную на принуждении, или чужую волю, навязываемую извне. Отрадно отметить, что подавляющее большинство граждан Республики Арцах исполняют обязанности добровольно, сознательно, в силу своего внутреннего согласия, убеждения в их разумности и целесообразности. Обязанности – конкретная (нормированная) форма выражения ответственности. Будучи предписаниями о должном, они представляют собой четко зафиксированный в законодательном порядке реестр требований, предъявляемых обществом к личности. Этот реестр выражает минимум, а не максимум, т.к. законом нельзя охватить всего содержания и всех форм проявления ответственности. Юридическая обязанность – определенная законом мера должного поведения участника данного (конкретного) правоотношения – носителя этой обязан-

ности[1]. То есть юридические обязанности – лишь официальные определители вида и меры желательного поведения, выражение государственной необходимости. Общественно необходимое поведение постулируется в законе как юридическая обязанность, исполнение которой поддерживается авторитетом власти. В тоже время, это выражение свободы индивида, ибо свобода есть мера необходимости. Обязанности устанавливаются как в интересах общества, так и в интересах самого правообязанного субъекта. Конечно, отдельно взятая юридическая обязанность ограничивает в известней мере свободу индивида, его волю, желания; она может внешне восприниматься им как нечто стесняющее его действия, как форма принуждения. Тем не менее обязанность, наряду с правом – предпосылка свободы и в конечном счете выражает собственные интересы ее носителя, даже если он этого не осознает. Известно, что демократия – форма взаимодействия свободы и ответственности личности перед обществом. В современных условиях проблема ответственности стоит особенно остро, поскольку неизмеримо возросла роль отдельного человека в общественной жизни, расширилась его свобода и вместе с тем зависимость от внешней социальной и естественной среды. Чем шире границы свободы и прав личности, тем выше должна быть ее ответственность за использование этой свободы и прав, за все, на что простираются компетенция, полномочия и влияние индивида.

В основе взаимоотношений личности и общества в демократическом государстве лежит принцип, который предполагает, с одной стороны, неуклонное выполнение каждым требований, предъявляемых обществом к личности, а с другой – самостоятельность, инициативу и активность личности. Последовательное применение такого подхода может дать единственно правильное сочетание прав и обязанностей, свободы и ответственности, убеждения и принуждения, авторитета власти и подчинения, инициативы, с одной стороны, и строгой дисциплины, организованности, связанности членов общества требованиями правовых и моральных норм – с другой, т.е. органическое соединение двух неразрывных начал демократии.

---

[1] Большой юридический словарь, Под редакцией А.Я. Сухарева, В.Е. Крутских, Издание второе, переработанное и дополненное, М., 2002, С. 694.

Вопрос о свободе и ответственности личности – один из наиболее сложных в деле государственного строительства. Установление правильных отношений между личностью и обществом, создание условий и гарантий для использования прав и свобод, мера допустимых ограничений этих свобод во имя защиты общественных интересов, регулирование коллизий между личностью и обществом имеют большое практическое значение. В каком соотношении находятся свобода и ответственность гражданина в современном демократическом обществе? Известно, что совершенствование прав и их гарантий – это одна из сторон процесса развития личности в правовом государстве. В современный период необычайно повышается ее ответственность перед гражданским обществом. Социальная ответственность может рассматриваться как объективная система отношений и как определенное качество личности («чувство ответственности»). В качестве объективной системы ответственность выражается в системе взаимоотчетностей социальных общностей (государство, общество и т.д.) и индивидов и проявляется в деятельности членов общества, в отношениях между ними, зафиксированных в социальных нормах, в том числе, правовых. В них выражается определенная оценка поступков человека со стороны общества и государства, и в этом смысле ответственность выступает как регулятор общественных отношений, характеризует степень социальной свободы, сущность индивидуальной ответственности, систему санкций. Ответственность как социально-психологическое качество личности – это соизмерение возможных последствий своих поступков с господствующими в обществе нормами и осознание наступления отрицательных последствий в случае нарушения действующих норм. Повышение ответственности личности перед обществом и государством в наши дни выражается, во-первых, в усилении требовательности о неуклонном соблюдении юридических обязанностей всеми гражданами и должностными лицами, недопустимость осуществления прав в противоречии с их социальным назначением, а, во-вторых, в возрастании уровня сознательности граждан, т.е. повышении их чувства ответственности при исполнении юридических обязанностей и при реализации субъективных прав. Ответственный подход каждого гражданина к своим обязанностям, к интересам народа создает единственно надежную базу для наиболее

полного воплощения принципов демократизма, подлинной свободы личности. Хочется отметить, что ответственность гражданина за исполнение юридических обязанностей способствует наилучшему проявлению творческой индивидуальности самой личности, ибо дисциплина, высокая организованность общества ставят в более защищенное и свободное положение каждого гражданина, гарантируют незыблемость его прав. В единстве свободы и ответственности проявляется гармония интересов общества, государства и личности в общественных отношениях, возникающих в правовом государстве. Вместе с тем необходимо отметить, что исполнение юридической обязанности зависит не только от высокой сознательности граждан, силы общественного мнения, но и от юридически закрепленной возможности наступления отрицательных последствий для тех, кто уклоняется от выполнения такой обязанности. В данном случае мы говорим уже о юридической ответственности, которая наступает в строго установленных законом случаях, при совершении лицом правонарушений (т.е. за конкретный поступок), при наличии его вины. Юридическая ответственность может быть только ретроспективной (т.е. за прошлое). Она связана с государственным принуждением к исполнению требований права, с реализацией санкций правовых норм и выражает официальное порицание правонарушителя от имени государства. Существуют различные виды юридической ответственности: уголовная, административная, дисциплинарная, гражданская. Первая из них наступает при совершении лицом преступления, другие – при совершении иных, менее опасных правонарушений. Цель любого вида юридической ответственности- охрана общественного и государственного строя, правопорядка от посягательств правонарушителей, воспитание граждан. Необходимо также отметить, что возможность наступления юридической ответственности служит серьезным стимулом для воздержания от совершения нарушений закона. Юридическая ответственность – инструмент восстановления нарушенного правопорядка (в частности, нарушенных субъективных прав граждан), важное средство предупреждения правонарушений. Гуманистическая, подлинно демократическая природа юридической ответственности состоит в том, что она осуществляется на началах законности, справедливости и целесообразности. Её эффективность зависит от

быстроты и неотвратимости применения. Предупредительное значение наказания заключается не в его тяжести, а в его неотвратимости. Существует тесная связь и взаимодействие между всеми видами социальной ответственности, но юридическая ответственность остается неотъемлемым средством борьбы с преступностью за укрепление правопорядка и законности.

В юридической литературе ответственность рассматривается в двух аспектах – негативном (ретроспективном) и позитивном (перспективном). Негативный аспект ответственности, т.е. ответственности за уже совершенные противоправные действия, разработан правовой наукой весьма обстоятельно. Слабее изучен позитивный аспект ответственности, т.е. ответственности за надлежащее исполнение всеми субъектами обязанностей, возложенных функций, задач, гражданского долга. Следует отметить, что позитивная ответственность ассоциируется с долгом лица[1]. Этот аспект проблемы вызывает сейчас большой интерес не только у юристов, но и социологов, философов, ибо данный тип ответственности занимает наибольший удельный вес, по существу охватывает всех правоспособных субъектов и связан с их постоянным правомерным поведением, тогда как ответственность в ретроспективном смысле касается лишь правонарушителей. Если рассматривать позитивную ответственность, то речь идет не об ответственности за те или иные допущенные нарушения, сводящиеся по существу к наказанию, а об ответственности как об определенном внутреннем состоянии индивида, о его отношении к порученному делу, обществу, государству, к своему поведению (в настоящем и будущем), о его чувстве самодисциплины, сознательности. Она вытекает из фактического социально-правового положения (статуса) гражданина. Отсюда вытекает конституционное требование – повышать чувство ответственности каждого гражданина.

Именно позитивная ответственность, основанная на глубоком понимании каждым своего долга, характеризует в наибольшей степени демократию правового государства, ее основные принципы, перспективы развития. И общая тенденция такова, что в будущем этот вид

---

[1] Нерсесянц В.С., Проблемы общей теории права и государства, М., 1999, С. 489.

ответственности будет постепенно возрастать вслед за возрастанием уровня сознательности членов нашего общества. Позитивная ответственность непосредственно связана с повышением социальной активности личности, формированием у нее наиболее ценных качеств. Она способствует укреплению правовой и нравственной основы нашего общества, упрочению законности и правопорядка на территории нашего государства. Следует отметить, что юридическая ответственность независимо от ее видов, реализуется в строгом соответствии с установленными в рамках той или иной правовой системы принципами. Среди них общепризнанными являются такие принципы, как законность, обоснованность, справедливость, целесообразность[1].

Ответственное поведение – это такое поведение, которое характеризуется глубоким осознанием необходимости следовать требованиям правовых и моральных норм, уважением к закону, к праву. Заботясь о всемерном развитии личности, необходимо вместе с тем уделять должное внимание проблемам укрепления общественной дисциплины, соблюдению всеми гражданами их обязанностей перед обществом. Ибо без дисциплины и прочного общественного порядка в Республике Арцах демократия не осуществима. Именно ответственный подход каждого гражданина нашей страны к своим обязанностям, к интересам народа создает единственно надежную базу для наиболее полного воплощения принципов демократизма, подлинной свободы личности. Важно также отметить, что гражданин любого государства – это свободная личность, обладающая высокой социальной ответственностью. И такое сочетание свободы и ответственности находит юридическое воплощение в единстве прав и обязанностей гражданина. Причем было бы ошибочным ограничивать свободу личности лишь сферой субъективных прав, ответственность – сферой обязанностей. Как первые, так и вторые воплощают и свободу, и ответственность личности.

Из вышеизложенного следует, что осуществление субъективных прав граждан органически связанно в нашей стране с исполнением юридических обязанностей, прежде всего, конституционных: соблюдать Конституцию Республики Арцах и исполнять законы, блюсти

[1] См.: Марченко М.Н., Проблемы теорий государства и права, М., 2008, С. 713.

дисциплину, беречь и укреплять государственную и частную собственность. Выполнение задач, поставленных Арцахским государством, предполагает повышение чувства ответственности, честное, добросовестное исполнение юридических обязанностей, общественного долга всеми гражданами.

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Ռիտա Առուստամյան
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածում քննարկվում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության գործառույթը որպես պետության գործունեության համալիր ուղղության՝ ուղղված քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտման անթույլատրելիությունը: Հեղինակը նշում է, որ Արցախի պետության նպատակն է դառնալ ժողովրդավարական և իրավական, որտեղ անձը պետք է դիտարկվի որպես բարձր սոցիալական արժեք, ում զարգացման և կատարելագործման համար պետք է ստեղծվեն առավել բարենպաստ պայմաններ: Այդ պատճառով նշվածի կապակցությամբ հատուկ արդիականություն է ձեռք բերում պետության գլխավոր գործառույթի՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության հետապնդումը:

Վերլուծելով նշված գործառույթի իրականացման հիմնական ձևերը՝ հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ժողովրդավարությունը իր հայտնությունն է ստանում ոչ միայն իրավունքների և ազատությունների մեջ, այլ նաև քաղաքացիների պարտականությունների և վերջիններիս՝ հասարակության ու պետության առջև ունեցած պատասխանատվության մեջ:

THE FUNCTIONS OF PROTECTING THE RIGHTS AND FREEDOMS OF CITIZENS, AND THEIR RESPONSIBILITIES TO SOCIETY

Rita Arustamyan
Head of the ArSU Chair of Law, Candidate of Legal Sciences, Docent

The article considers the functions of protecting the rights and freedoms of citizens as a comprehensive direction of the state's activities to prevent violations of the rights and freedoms of citizens. The author notes that for the state of Artsakh (the goal of which is to become democratic and legal), an individual should be regarded as the highest social value and the most favourable conditions should be created for their development and enhancement. In this regard, the study of the main function of the state - the function of protection of an individual's freedoms, becomes of particular relevance. Analyzing the main forms of implementation of this function, the author comes to the conclusion that democracy finds expression not only in rights and freedoms, but also in responsibilities of the citizens, their accountability to the society and the state.

Բանալի բառեր - պետության գործառույթները, ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն, քաղաքացիների իրավունքները և ազատությունները, իրավունքների և ազատությունների պաշտպանություն, իրավաբանական պարտավորություն, իրավաբանական պատասխանատվություն
Ключевые слова: функция государства, демократия, гражданское общество, правовое государство, права и свобода граждан, защита прав и свободы, юридическая обязанность, юридическая ответственность
Key words: Democracy, Civil society, Constitutional state, Rights and freedoms of citizens, Function of the state, Protection of rights and freedoms, Legal obligation, Responsibility Subjective rights

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

Դավիթ Հակոբյան
Արցախի Հանրապետության պետական համալսարանի
իրավունքի ամբիոնի դասախոս

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում պետության խնդիրների և նպատակների վերլուծությունը նպատակահարմար է իրականացնել՝ հաշվի առնելով պետության՝ որպես սահմանադրական իրավունքի սուբյեկտի, գործառնական բնույթը: Պետության, ինչպես նաև օրենսդրության անցումը կայուն զարգացման մոդելի անխուսափելիորրեն պետք է իրականացվի սահմանադրական բարեփոխումների ճանապարհով: Ինչպես հայտնի է, Արցախի Հանրապետության պետական և հասարակական կյանքի սկզբունքային բարեփոխումներն իրականացվեցին 2017 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, որով Սահմանադրությունում ամրագրվեցին պետության հետագա զարգացման ժամանակակից նպատակները, խնդիրները, սկզբունքները, ինչպես նաև օրենսդրության զարգացման և կատարելագործման հիմնական ուղենիշները:

Տեսական գրականության մեջ պետության խնդիրները, նպատակները և գործառույթները դիտարկվում են որպես փոխկապակցված իրավական արժեքներ, որոնք, սակայն, կարծես թե գտնվում են տարբեր հարթություններում: Եվ եթե պետության գործառույթը բնորոշվում է որպես պետական կառավարչական ներգործություն, ապա դժվար թե արդարացված համարվի պետության գործառույթի տարանջատումը նրա խնդիրներից և նպատակներից: Առանձին հեղինակներ, օրինակ, գտնում են, որ պետության գործառույթը պայմանավորված է նաև պետության հիմնական նպատակներով[1]: Ի

[1] Տե՛ս **Чиркин В. Е.,** Современное государство, М., 2001, էջ 199:

վերջո, նպատակադրումը (այսինքն՝ նպատակի և խնդիրների որոշումը) կառավարման ցանկացած ներգործության միջուկն է[1]:

Կառավարման տեսությունում «կառավարում» հասկացությունը դիտարկվում է երեք հիմնական ուղղություններով, որոնք բովանդակային առումով հանդես են գալիս որպես կառավարման գործընթաց և կազմակերպչական որոշակի համակարգ, և որոնք, որպես կառավարման կառուցվածքի ներքին համակարգ, ունեն իրենց տարրերը: Դրանք են կառավարման մարմինները, օղակները և մակարդակները: Բովանդակային տեսանկյունից կառավարման գործընթացում անհրաժեշտ է առանձնացնել կառավարման տեսակները, որոնք կառավարման տեսության մեջ կոչվում են կառավարման գործառույթներ: Կառավարման կարևորագույն գործառույթներից է հանդիսանում պլանավորումը, որի էությունը կայանում է կառավարման նպատակի և խնդիրների, ինչպես նաև դրանց հասնելու միջոցների և ժամկետների որոշման մեջ: Ինչպես իրավացիորեն նշում է Ատամանչուկը, «հրաժարվել պլանավորումից նշանակում է հրաժարվել պետական կառավարման նպատակադրումից և, հետևաբար, կառավարումից որպես այդպիսին, քանի որ նմանատիպ դեպքերում առաջին պլան են մղվում կառավարման տարերային մեխանիզմները՝ բացարձակ անկանխատեսելի հետևանքներով»[2]: Այս առումով պետության խնդիրներն ու նպատակներն անհրաժեշտ է դիտարկել որպես պետության գործառույթի բովանդակային կարևորագույն տարրեր: Պետության գործառույթի իրավաբանական ձևակերպումը և դրան պաշտոնական կարգավիճակ տալը կյանքի են կոչվում գործառույթի իրավական ձևակերպմամբ, ինչը, սակայն, չի նշանակում պետության կողմից կառավարման գործունեության տարբեր ոլորտների մանրամասն իրավական կարգավորում: Այսպես՝ պետության կազմակերպչական գործունեությունը կանոնակարգվում է ոչ միայն իրավական նորմերով: Պետության գործառույթի իրագործման համար իրավական գործիքները չեն կարող լիներ կատարյալ և բացառիկ (օրինակ՝ վերահսկողական գործառույթը, կարգավորիչ գործա-

[1] Տե՛ս **Шамхалов Ф.**, Теория государственного управления. М., 2002, էջ 260-261:

[2] Տե՛ս **Атаманчук Г.В.**, Теория государственного управления: Курс лекций, М., 1997, էջ 113-114:

ռույթը՝ կապված վերջինիս խոչընդոտող գործոնների չեզոքացման և հասարակական հարաբերությունների կարգավորման ապահովման հետ): Միաժամանակ պետության խնդիրներն ու նպատակները չեն կարող գոյություն ունենալ առանց իրավական ձևակերպման, քանի որ վերջիններիս իրագործումն առանց պետության իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործառույթների իրականացման կդառնար անհնարին:

Պետության խնդիրներն ու գործառույթները բովանդակային առումով ամրագրվում են իրավունքի տարբեր ճյուղերի կողմից: Վերջիններիս մեջ իր առանձնահատուկ դերով և նշանակությամբ առանձնանում է սահմանադրական իրավունքը, քանի որ ի տարբերություն իրավունքի այլ ճյուղերի՝ սահմանադրական իրավունքը կոչված է ամրագրելու պետության խնդիրներն ու նպատակները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ուստի և հատուկ կարևորություն է ստանում պետության խնդիրների ու նպատակների հենց սահմանադրաիրավական ամրագրումը:

Որոշ իրավաբան-մտածողների կարծիքով, ի տարբերություն իրավունքի այլ ճյուղերի կողմից ամրագրվող նպատակների, սահմանադրական նպատակները ոչ միայն սահմանվում են պետության կողմից, այլև լեգիտիմացվում են ժողովրդի կամաարտահայտությամբ, ինչը հատկապես կարևորվում է նպատակների միջև հնարավոր կոլիզիաների հաղթահարման և իրավաստեղծ ու իրավակիրառ գործընթացներում: Վերջին հաշվով, այդ նպատակներն իշխող դիրք են զբաղեցնում ամբողջ իրավական նպատակների համակարգում և արտացոլում են անհատի, հասարակության և պետության առավել հիմնարար հետաքրքրությունները:

Արցախի Հանրապետության նպատակների և խնդիրների աստիճանակարգության որոշման համար կողմնորոշիչ են այն սոցիալական արժեքները, որոնք ամրագրված են Արցախի Հանրապետության Սահմանադրությունում:

Փիլիսոփայական սահմանման համաձայն՝ արժեքը «.... շրջապատող աշխարհի օբյեկտների սոցիալական սահմանումն է, որով

բացահայտվում է այդ օբյեկտների դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար»[1]:

Սահմանադրությունում ամրագրված արժեքների բովանդակությամբ որոշվում է նաև պետության և հասարակության հիմնական օրենքի՝ Սահմանադրության սոցիալական արժեքը: Ցանկացած Սահմանադրության գործառութային նշանակությունը, որով արտահայտվում են վերջինիս դերն ու նշանակությունը պետության և հասարակության կյանքում, կախված չէ սոցիալական համակարգից, քաղաքական ռեժիմից և պետության այլ բնութագրական հատկանիշներից: Որոշ հետազոտողների մոտ Սահմանադրության գործառույթների վերաբերյալ առկա են որոշակի տարակարծություններ, սակայն ընդհանրական ձևով բոլոր սահմանադրություններին հատուկ են հետևյալ գործառույթները՝ իրավական, քաղաքական և գաղափարական[2]: Առանձին հեղինակներ, ի թիվս թվարկված գործառույթների, հիշատակում են նաև կազմակերպչական, արտաքին քաղաքական գործառույթները[3]: Այդ գործառույթների կոնկրետ բովանդակությունը որոշվում է այն համակարգային արժեքներով, որոնք ամրագրվում են Սահմանադրության մեջ: Այստեղ սակայն առկա են որոշակի տարբերություններ:

Այսպես, օրինակ, ԽՍՀՄ 1977 թ. և 1978 թ. ՀԽՍՀ Սահմանադրության նորմերը (հոդված 6, 7), որոնցով ամրագրվել էին միակուսակցական համակարգը, ԽՄԿԿ ղեկավար դերն ու գերիշխանությունը պետական իշխանության մարմինների համակարգում, սկզբունքորեն հիմնվում էին ժողովրդավարության տվյալ ժամանակի արժեքների վրա: Դրան հակառակ՝ ՀՀ 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրությունը 2005 և 2015 թ. փոփոխություններով արձանագրեցին նոր իրականություն, որպես ժողովրդավարական արժեք ամրագրվեց իշխանությունների բաժանման սկզբունքը, գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը (հոդված 4, 8): Հիշյալ ժողովրդավարական արժեքներն իրենց ամ-

---

[1] Տե՛ս Философский словарь / Под ред. **И. Т. Фролова**, էջ 512-513: Философский энциклопедический словарь. М., 1997, էջ 507:

[2] Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, Գիրք առաջին, խմբ.՝ պրոֆ. Ն. Այվազյանի, Երևան, 2016, էջ 91:

[3] Տե՛ս **Авакьян С. А.**, Конституция России, էջ 11-15:

րագրումն են ստացել նաև Արցախի Հանրապետության 2006 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված և 2017 թ. փոփոխությունների ենթարկված Սահմանադրությունում (հոդված 4, 8):

Ժամանակակից աշխարհում միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքները և նորմերը մարդուն դիտում են որպես բարձրագույն արժեք: Այդ գաղափարն իր ամրագրումն ու զարգացումն է ստացել նաև բոլոր ժողովրդավարական երկրների սահմանադրություններում: Եվ այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետության Սահմանադրությունը (2017 թ. փոփոխություններով) մարդուն համարում է բարձրագույն արժեք, խոսում է հենց Սահմանադրության՝ որպես հիմնական արժեք լինելու մասին: Բարձրագույն արժեքը սահմանադրական իրավունքի բոլոր սուբյեկտների համար ընդհանուր է, այն կատարում է ինտեգրացիոն գործառույթ, որը միավորում և ուղղորդում է սահմանադրահիրավական հարաբերությունների բոլոր մասնակիցների ջանքերը՝ հասնելու հիմնական նպատակին, այսինքն՝ հասարակության և պետության գործունեության այնպիսի պայմանների ստեղծմանը, երբ անձը, նրա իրավունքներն ու ազատությունները պետության և հասարակության գործունեության ու զարգացման հիմնական նպատակներն են: Անկասկած, Սահմանադրության արժեքը կայանում է նրա՝ պետական իշխանության մարմինների գործունեության հստակ և ներդաշնակ իրականացման իրավական հիմք ստեղծելու մեջ:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը չեզոքացնում է պետության և անհատի շահերի հնարավոր հակադրման որևէ հնարավորություն, որը երբեմն թույլատրվում է իրավաբանական գրականության մեջ: Այս առումով պետք է նշել, որ ժամանակակից ժողովրդավարական պետությունը չպետք է և չի կարող ունենալ այնպիսի շահեր, որոնք հնարավոր է հակասեն մարդու և քաղաքացու շահերին, հետևաբար Արցախի Հանրապետության հիմնական օրենքի և պետության պարտքն է ապահովել Սահմանադրությամբ ամրագրված պայմաններ հասարակության զարգացման համար, որտեղ մարդը, նրա իրավունքները և ազատությունները, իսկապես, բարձրագույն արժեք են: Հատկանշական է, որ 2002 թվականին Յոհաննեսբուրգում կայացած միջազգային կոնֆերանսի արդյունքում ընդունված փաստաթղթերում ընդգծվել է, որ մարդը և մարդկային արժանապատվությունը պետք է լինեն ուշադրության

կենտրոնում[1]: Հարկ եմ համարում նշել, որ Արցախի Հանրապետության Սահմանադրությունը, բացի վերոհիշյալ արժեքներից, ամրագրում է այլ արժեքներ ևս, ինչպիսիք են՝ ժողովրդաիշխանությունը, ժողովրդավարությունը, իրավական, սոցիալական պետությունը և այլն (հոդված 1-3, 5), որոնք բարձրագույն արժեքի (հոդված 3) հետ Արցախի Հանրապետության սահմանադրական կարգի հիմքերից են:

Պետության գործառույթի և դրա կարևորագույն տարրերի, ինչպիսիք պետության սահմանադրական նպատակներն ու խնդիրներն են, հանդիսանում են պետության գործառույթների բարձր իրավական մակարդակի ձևակերպում (հաշվի առնելով սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, սահմանադրության դրույթների հիմնարար բնույթը և այլն):

Արցախի Հանրապետության Սահմանադրությունում պետության խնդիրներին ու նպատակներին վերաբերող նորմեր ամրագրված են Սահմանադրության 3-րդ՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» գլխում: Մասնավորապես այդ գլխի 85-րդ հոդվածը սահմանում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնք ուղղված են՝

1) գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը,

2) բնակչության զբաղվածության խթանմանը և աշխատանքի պայմանների բարելավմանը,

3) հայրենիքի պաշտպանության համար հաշմանդամ դարձած անձանց և զոհվածների ընտանիքների նկատմամբ առանձնահատուկ հոգածության դրսևորմանը,

4) բնակարանային շինարարության խթանմանը, կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանմանը,

5) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը,

[1] Տե՛ս http://as-hd.com/language/hy/14-2/2002-2/ «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի կայքէջ:

6) սպառողների շահերի պաշտպանությանը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությանը,

7) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանը:

Նշված հոդվածով սահմանված են պետության քաղաքականության այլ նպատակներ ևս:

Սահմանադրության 86-րդ հոդվածը սահմանում է այդ նպատակների իրագործմանն ուղղված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանրապետության նախագահը Սահմանադրությամբ նախատեսված հաղորդման շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 85-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ պետության նպատակների իրագործմանն ուղղված պատասխանատվության հիմնական պատասխանատուն հանրապետության նախագահին է, իսկ նման հանգամանքը այդ նպատակներին հաղորդում է քաղաքական բարձր մակարդակի պատասխանատվություն: Արցախի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նշեցինք վերևում, ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 10-ին, որը 1991 թ. սեպտեմբերի 2-ի Անկախության հռչակագրից հետո իր բնույթով պետության անկախության հիմքերը, անհատի իրավունքները, պետական իշխանության կազմակերպման և իրականացման ու պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները սահմանող իրավական հիմնական փաստաթուղթն է: 2017 թ. Սահմանադրության փոփոխություններից հետո առաջին անգամ սահմանվել է պետության, պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում՝ ուղղված այդ ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակների իրականացմանը: Հարկ է նկատել, որ Արցախի Հանրապետությունը, հետևելով մի շարք արտասահմանյան երկրների (Շվեյցարիայի Սահմանադրության 2-րդ հոդված, Բրազիլիայի Սահմանադրության 3-րդ հոդված) փորձին, Սահմանադրությունում ամրագրել է պետության նպատակները կոնկրետ ոլորտներում:

Արցախի Հանրապետության՝ որպես պետության նպատակներն ու խնդիրները որպես նրա սահմանադրաիրավական կարգավիճակի կարևորագույն տարր, անկասկած, իրենց ամրագրումն են գտել ոչ միայն Սահմանադրությունում, այլև մի շարք իրավական և իրավաքաղաքական փաստաթղթերում՝ մասնավորապես օրենքներում, հռչակագրերում և հայեցակարգերում: Որպես կանոն, օրենքներում խնդիրներն ու նպատակներն ամրագրվում են որպես համապատասխան օրենքի նպատակներ և խնդիրներ (օր.՝ աշխատանքային օրենսդրություն, կրթության ոլորտի օրենսդրություն)[1]: Այս առումով օրենսդրության խնդիրները տվյալ ոլորտում պետության խնդիրներն են:

Արցախի Հանրապետության նպատակներն ամրագրող առաջին կարևորագույն փաստաթուղթը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հռչակագիրն է՝ ընդունված 1991 թ. սեպտեմբերի 2-ին բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի կողմից: Նմանատիպ հռչակագրեր ընդունվել են նաև ԽՍՀՄ մի շարք երկրների կողմից[2]: Ցանկանում ենք նշել, որ հռչակագիր հասկացությունը, որպես իրավական ակտ, իրավագիտության մեջ քիչ ուսումնասիրված հարցերից է: Խոսելով «հռչակագիր» հասկացության մասին՝ կարող ենք ասել, որ այն փոխառված է միջազգային իրավական փաստաթղթերից: Հռչակագիր անվանումը լայնորեն կիրառվում է միջազգային իրավունքում, օրինակ՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»-ը՝ ընդունված 1948 թ. դեկտեմբերի 10-ին, Եվրոպական պառլամենտի

---

[1] Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ԼՂՀ-ում գործողության մեջ է դրվել **«Հայաստանի Հանրապետության 2004 թ. աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքով, ընդ. 27.04.2005 թ., «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, 15.03.2000 թ.:**

[2] Տե՛ս Декларация о государственном суверенитете РСФСР от 12 июня 1990 года, ՀՀ Անկախության հռչակագիր, ընդունված 1990 թ. օգոստոսի 23-ին, Բելոռուսի Հանրապետության պետական ինքնիշխանության մասին հռչակագիր, ընդունված 1990 թ. հուլիսի 27-ին և այլն:

1989 թ. ապրիլի 12-ի բանաձևը՝ «Հիմնական իրավունքների ու ազատությունների հռչակագիր»-ը, և այլն:

Հասարակական և պետական կյանքի տարբեր ոլորտներում Արցախի Հանրապետության նպատակներն ու խնդիրները մանրամասն կոնկրետացվում և ամրագրում են ստանում նաև օրենսդրական այնպիսի ակտերում, ինչպիսիք են հայեցակարգերը: Կոնկրետ ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակները, խնդիրները և ուղղությունները, ինչպես նաև դրանց հասնելու և իրագործելու եղանակներն ու միջոցները արտացոլվում են հայեցակարգերում[1]:

Իրավաբանական գրականության մեջ «հայեցակարգ»-ի՝ որպես իրավական ակտի իրավաբանական բնույթն ու առանձնահատկությունները նույնպես քիչ են ուսումնասիրված: Իրավական այս փաստաթղթի վերաբերյալ սահմանադրական իրավունքի աղբյուրներին նվիրված ուսումնասիրությունների հեղինակները կա՛մ լռում են, կա՛մ խոսում մակերեսորեն[2]: Սույն հոդվածով չփորձելով անդրադառնալ «հայեցակարգ»-ի իրավաբանական բնույթին ու առանձնահատկություններին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հայեցակարգերը իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և մեծ դեր են խաղում պետական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում պետական քաղաքականության նպատակային իրականացման հա-

---

[1] Տե՛ս, օրինակ, «**Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության 15 ապրիլի 2008 թ. N 273 որոշում, «**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին**» ԼՂՀ կառավարության 15 հուլիսի 2008 թ., N 497 որոշում, «**Գեղարվեստական կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին**» ԼՂՀ կառավարության 29 նոյեմբերի 2010 թ.,** N 784-Ն որոշում, «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության «28» դեկտեմբերի 2010թ. N 890-Ն որոշում, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը հաստատելու մասին» 27 մարտի 2013 թ. ՆԿ-3-Ն կարգադրություն:

[2] Տե՛ս **Колесников Е. В.**, Источники конституционного права. Саратов, 1998, էջ 78, **Пряхина Т. М.,** Конституционная доктрина современной России. Саратов, 2002, էջ 85:

մար, իսկ վերջիններիս ընդունման օրենսդրական հիմքերը առանձին դեպքում Սահմանադրությունը և տարբեր օրենքներն են:

Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում պետական կառավարման ռազմավարությունն ամրագրող օրենքները պետք է ապահովեն դրանց իրականացման ներքին և հանրային վերահսկողության մեխանիզմներ, ինչը ժողովրդավարական պետության կարևորագույն գործիքներից է: Պետության գործունեության ռազմավարական ուղղությունները, նպատակներն ու խնդիրները սահմանող օրենքների գործնական կիրառության և հիմնավորվածության բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրանք մշակվեն գիտության տարբեր ոլորտների առաջատար գիտնականների և մասնագետների ներգրավմամբ՝ գիտական համապարփակ հետազոտությունների հիման վրա:

Պետության կոնկրետ նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև դրանց իրականացման կապակցությամբ պետության պատասխանատվության բովանդակության բացահայտումը հնարավոր են միայն պետության սահմանադրաիրավական լիազորությունների վերլուծության արդյունքում, կոնկրետ սահմանադրաիրավական ինստիտուտների և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրմամբ: Այդուհանդերձ, սույն հոդվածով դժվար թե հնարավոր լինի վերլուծել և բացահայտել պետության սահմանադրական բոլոր լիազորությունների բովանդակությունը: Այդ ինստիտուտների նորմերով կարգավորվում են պետության և սահմանադրական իրավունքի այլ սուբյեկտների փոխհարաբերություններին վերաբերող սկզբունքային հարցեր: Այդ ինստիտուտները վճռորոշ նշանակություն ունեն Արցախի Հանրապետության՝ որպես պետության սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրման համար:

КОНСТИТУЦИОННОЕ ЗАКРЕПЛЕНИЕ ЗАДАЧ И ЦЕЛЕЙ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Давид Акопян
Преподаватель кафедры права АрГУ

Обеспечение стабильного развития государства невозможно без определения его задач и целей. Переход к новому этапу стабильного развития Республики Арцах станет реальным в результате конституционных реформ 2017 года. Задачи и цели государства являются важным элементом его конституционно-правового статуса. В результате конституционных реформ в Республике Арцах в разных сферах определились политические цели в государственной и общественной жизни. Для реализации этих целей также определились обязанности органов государства и местного самоуправления. Надо заметить, что цели и задачи государства закрепляются как Конституцией, так и другими правовыми документами (закон, декларация, концепция).

THE OBJECTIVES AND THE GOALS OF THE REPUBLIC OF ARSTAKH AS A STATE AND THEIR CONSTITUTIONAL ENSHRINEMENT

David Hakobyan
ArSU Law chair lecturer

The sustainable development of the state is impossible without the definition of its goals and objectives . The transition of The Republic of Artsakh to the new stage of sustainable development will be realized due to the constitutional changes of 2017.The objectives and goals of the state are the important elements of the constitutional and legal status of the state . In the result of the constitutional changes it was outlined the goals of the state policy in the different spheres of social and statelife, as well as the duties of the state and local government in the realization of these goals. Besides the constitutional enshrinement the objectives and the goals of the state are enshrined also in such legal documents as laws, declarations, conceptions.

Բանալի բառեր - պետություն, խնդիրներ, նպատակներ, սահմանադրություն, պարտականություն, պատասխանատվություն, օրենք, հռչակագիր, հայեցակարգ
Ключевые слова: задачи государства, цели государства, Конституция, ответственность, обязанность, закон, концепция, декларация
Key words: state, objectives, goals, constitution, duties, liabilities, law, declaration, conception

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Լիպարիտ Մելիքջանյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

2017 թ. մարտի 23-ին կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ քաղ. օր.) նախատեսվեցին սերվիտուտի նոր տեսակներ, որոնք, համալիր գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունից բացի, պահանջում են նախևառաջ վեր հանել անմիջականորեն ՀՀ քաղ. օր.-ում սերվիտուտի տեսակները սահմանելու իրավական նպատակահարմարությունը: Գաղտնիք չէ, որ սերվիտուտի տեսակների բաժանումը ոչ թե անմիջականորեն պետք է սահմանվի օրենսդրությամբ, այլ հանդիսանում է առավել շատ իրավունքի գիտության ուսումնասիրության առարկա[1], ուստի առավել քան արժևորվում է վերը նշված փոփոխությունների արդյունքում սահմանված սերվիտուտի տեսակների ուսումնասիրությունը:

Քանի որ սերվիտուտի տեսակները հիմնականում ՀՀ քաղ. օր.-ում նախատեսվել են առաջին անգամ (ինչպես, օրինակ, անձնական սերվիտուտը, ուզուֆրուկտը, բացասական սերվիտուտը և այլն), սույն հոդվածի շրջանակներում մենք կսահմանափակվենք բացառապես ՀՀ քաղ. օր.-ով նախատեսված սերվիտուտի տեսակների բացահայտմամբ՝ առանց յուրաքանչյուր տեսակի իրավական կարգավորման առանձնահատկություններին անդրադառնալու, քանի որ դրանցից յուրաքանչյուրը համալիր և ամբողջական վերլուծության կարիք ունի:

ՀՀ քաղ. օր.-ի 210-րդ հոդվածի համաձայն՝ սերվիտուտ են համարվում՝ 1) գույքային սերվիտուտը, 2) անձնական սահմանափակ սերվիտուտը, 3) անձնական լիարժեք սերվիտուտը (ուզուֆրուկտ), 4) բնակելի տարածության օգտագործման իրավունքը: Ինչպես նկատում ենք, մինչ փոփոխությունները նախատեսված միակ սերվիտու-

[1] Տե՛ս Гражданское право: Учебник: В 3 т. Т 1; под ред. А .П. Сергеева. М., Велби., 2008, էջ 767:

տը, երբ հողամասի սեփականատերը իրավունք ուներ հարևան հողամասի սեփականատիրոջից, իսկ անհրաժեշտության դեպքում այլ սեփականատերերից պահանջել տրամադրել այդ գույքի օգտագործման իրավունքը, ստացել է գույքային սերվիտուտ անվանումը: Առաջին հայացքից թվում է, թե կատարված փոփոխությունների արդյունքում ի հայտ են եկել սերվիտուտի նոր երեք տեսակներ:

Դեռևս հռոմեական մասնավոր իրավունքում գոյություն ուներ սերվիտուտի երկու տեսակ՝ հողային և անձնական սերվիտուտներ: Հողային սերվիտուտի ուժով հողամասի սեփականատիրոջն իրավունք էր տրվում հարևան հողամասի սեփականատիրոջից պահանջել տրամադրել այդ հողամասի սահմանափակ օգտագործման իրավունքը[1]: Այսինքն՝ գույքային սերվիտուտի դեպքում ծառայող գույքը ծանրաբեռնվում է գերակա գույքի օգտին: Այս առումով ողջունելի է ՀՀ քաղ. օր.-ով գերակա և ծառայող գույքի սահմանազատումը, որը ոչ միայն որոշակիացնում է գույքային սերվիտուտի էությունն ու բովանդակությունը, այլև առանձնահատուկ հստակեցնում է դրա գույքային (հողային) բնույթը և սերվիտուտի իրավունքը կրողին՝ մատնանշելով ոչ այնքան իրավունքի սուբյեկտին, այսինքն՝ անձին, ով սեփականության կամ կառուցապատման իրավունք ունի գերակա գույքի նկատմամբ (քանի որ հողամասի ծանրաբեռնումը կոնկրետ անձի նկատմամբ այլևս համարվում է անձնական սերվիտուտ), այլ ավելի շատ հենց գերակա գույքի՝ «հողամասի» իրավունքը սահմանափակ օգտագործել հարևան հողամասը: Այս պարագայում որևէ նշանակություն չունի գերակա հողամասի նկատմամբ իրավունք ունեցող անձը, քանի որ գույքային սերվիտուտի իմաստն այն է, որ սահմանափակ օգտագործման իրավունքը անբաժանելիորեն կպած է գերակա գույքին, և ում էլ այդ գույքը փոխանցվի, հենց գույքի այդ հատկանիշի շնորհիվ է իրավազոր անձը ձեռք բերելու սերվիտուտի իրավունք: Սերվիտուտի իրավունքի պատկանելության տեսանկյունից եթե գույքային սերվիտուտի վերացումը հնարավոր է միայն գերակա գույքի վերացմամբ, ապա անձնական սերվիտուտը՝ անձի մահով:

[1] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Դ. Ավետիսյան, Հռոմեական մասնավոր իրավունք, ԵՊՀ, 2010, էջ 62-66:

Չնայած որ կատարված փոփոխությունների արդյունքում 210-րդ հոդվածով նախատեսվել են սերվիտուտի չորս տեսակներ, դրանց ամբողջական վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ հողամասի գույքային (իրային) ծանրաբեռնումը (սահմանափակ օգտագործումը) հարևան հողամասի օգտին ստացել է գույքային սերվիտուտ անվանումը, այն դեպքում, երբ սերվիտուտի մնացած տեսակներում համապատասխան իրը ծանրաբեռնվում է ոչ թե գերակա հողամասի, այլ կոնկրետ որևէ անձի օգտին, ուստի, գլոբալ առումով, ի տարբերություն գույքային իրավունքի՝ թե՛ անձնական սերվիտուտը, թե՛ ուզուֆրուկտը և թե՛ բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարելի է դիտարկել որպես անձնական սերվիտուտի տարբեր դրսևորումներ:

Պատահական չէ, որ որոշ իրավական համակարգերում ուզուֆրուկտը կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը համարվում է անձնական սերվիտուտի տեսակ: Դեռևս հռոմեական մասնավոր իրավունքում ուզուֆրուկտը անձնական սերվիտուտ էր[1]:

Գերմանական իրավունքում ուզուֆրուկտը ինքնուրույն իրային իրավունք է: Իսկ ահա բնակելի տարածության օգտագործման իրավունքը Գերմանիայում համարվում է անձնական սերվիտուտ[2]: Իտալիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում բնակելի տարածության օգտագործման իրավունքը համարվում է ինքնուրույն գույքային իրավունք:

Ինչևէ, այս կամ այն իրավունքը անձնական սերվիտուտ թե ինքնուրույն գույքային իրավունք սահմանելը ինչ-որ տեղ իրավական ճաշակի խնդիր է, իսկ ՀՀ-ն սահմանել է սերվիտուտի չորս ինքնուրույն տեսակ, որոնցից անձնական սահմանափակ և անձնական լիարժեք սերվիտուտները նախատեսվում են առաջին անգամ:

Այն, որ անձնական սերվիտուտի նախատեսումը ՀՀ օրենսդրությամբ դարձել էր օբյեկտիվ հրամայական, դրանում երկու կարծիք լինել չի կարող, քանի որ սերվիտուտի պոտենցիալ կարիք ունեցող սուբյեկտները զրկված էին սերվիտուտ սահմանելու հնարավորությունից այնքանով, որքանով միայն գույքային սերվիտուտի առ-

[1] Տե՛ս Վ. Դ. Ավետիսյան, նշված աշխատությունը, էջ 64:

[2] Տե՛ս Гражданское и торговое право зарубежных стран. под ред. Е. А. Васильева, Том 1, М., 2004, էջ 386:

կայության պայմաններում սերվիտուտ կարող էր տրամադրվել բացառապես հարևան հողամասի սեփականատիրոջը: Այսպես օրինակ՝ բջջային օպերատորը, ուսումնասիրելով ալեհավաքների համար առավել նպաստավոր տարածքները, ստիպված պետք է սեփականության կամ կառուցապատման իրավունքով ձեռք բերեր այդ տարածքների հարևան հողամասերը, որպեսզի կարողանար սահմանել սերվիտուտ:

Բնականաբար, անձնական սերվիտուտի ներդրմամբ լուծվել է շատ կարևոր կոնցեպտուալ խնդիր՝ այլևս անշարժ գույքը կարող է ծանրաբեռնվել ցանկացած անձի օգտին:

ՀՀ քաղ. օր.-ի 211-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենսդիրը գույքային սերվիտուտի հասկացության մեջ տարանջատել է դրական և բացասական սերվիտուտները: Ըստ որում, եթե դրական սերվիտուտի իմաստը ծառայող գույքի սահմանափակ օգտագործման մեջ է, այսինքն՝ սերվիտուտ ունեցող անձի կողմից ի վնաս ծառայող հողամասի որոշակի գործողությունների կատարման մեջ, ապա բացասական սերվիտուտի իմաստը ծառայող գույքի սեփականատիրոջից անգործություն դրսևորելու պահանջի մեջ է:

Մինչ ՀՀ քաղ. օր.-ում փոփոխությունների կատարումը նախատեսվում էր միայն դրական սերվիտուտը, որի դեպքում անձն ինքն է իր գործողություններով իրականացնում իրեն վերապահված իրավունքը՝ կարիք չզգալով այլ անձի, ընդհուպ այդ գույքի սեփականատիրոջ գործողությունների: Այսինքն՝ դրական սերվիտուտի դեպքում իրավազոր անձը իրավունք չունի ծառայող գույքի սեփականատիրոջից պահանջել որոշակի վարքագծի դրսևորում, որպիսին ձեռք է բերում բացասական սերվիտուտի դեպքում: Բայց ասվածը չի նշանակում, որ բացասական սերվիտուտի դեպքում իրավազոր անձը ծառայող գույքի սեփականատիրոջից կարող է պահանջել որոշակի գործողությունների կատարում իր օգտին: Բացասական սերվիտուտի դեպքում պահանջը ոչ թե որոշակի գործողությունների կատարում պահանջելու մեջ է, այլ գույքից որոշակի ձևով օգտվելն արգելելու մեջ, ինչն էլ ինքըստինքյան նշանակում է նման եղանակով գույքից չօգտվելը, նման ձևով գործողություն չկատարելը: Հետևաբար իրավազոր անձը կարող է պահանջել միայն չանել կոնկրետ այդ բանը և ոչ թե կատարել ինչ-որ բան:

Պատկերացնենք այնպիսի իրավիճակ, երբ հարևանը անմիջապես պատի տակ գոմ է պատրաստել և խոզ է պահում: Հարևան հողամասից եկող ամենօրյա գարշահոտությունը կանխելու նպատակով անձին ոչինչ չի մնում, քան դիմել նեգատոր հայցի օգնությանը: Իսկ ահա ՀՀ քաղ. օր.-ի 277-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ: Այսինքն՝ նեգատոր հայցի պարտադիր պայմաններից է իրավունքի խախտման փաստի առկայությունը, իսկ ինչ իրավունքի խախտման մասին կարող է խոսք լինել, եթե անձը, վաստակի այլ ճանապարհ չունենալով, իր սեփական հողամասում գոմ է կառուցել և խոզ է պահում՝ ընտանիքի ծախսերը հոգալու համար:

Նեգատոր հայցը կարող է բավարարվել միմիայն այն դեպքում, եթե հայցվորի սեփականության իրավունքը խախտող պատասխանողի գործողությունները համարվում են ոչ իրավաչափ: Ուստի երբ սեփականատերը իր հողամասում կատարում է կառուցումներ՝ չխախտելով գործող օրենսդրությունը, ապա գործում է իր իրավունքների շրջանակներում: Եվ եթե դրա արդյունքում «շոշափվում» են հարևանի շահերը՝ զրկելով արևի լույսից կամ պատուհանների հաճելի տեսարանից, առկա է այնպիսի իրավիճակ, երբ մեկ անձի իրավունքների իրականացումը դժվարացնում կամ անհնարին է դարձնում մյուսի իրավունքների իրականացումը: Ահա այս հարցերը լուծելու համար էլ միշտ կիրառվել և կիրառվելու են բացասական սերվիտուտները: Ուստի ՀՀ քաղ. օր.-ում բացասական սերվիտուտների նախատեսելը ևս մեկ անգամ փաստում է մասնավոր իրավունքի անընդհատ կատարելագործման անհրաժեշտության մասին:

ՀՀ քաղ. օր.-ը ուղղակիորեն չի տարանջատում հանրային և մասնավոր սերվիտուտները, սակայն ՀՀ քաղ. օր.-ի սերվիտուտի վերաբերյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ Քաղ. օր.-ում նախատեսված են և՛ հանրային, և՛ մասնավոր սերվիտուտները: Մասնավոր սերվիտուտի դեպքում իրավահարաբերության մասնակիցների շրջանակը որոշակի է և սահմանվում է որոշակի պահանջմունքների բավարարման համար: Ի տարբերություն մասնավոր

սերվիտուտի՝ հանրային սերվիտուտը սահմանվում է անորոշ շրջանակի անձանց օգտին[1]:

ՀՀ քաղ. օր.-ի 214-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր գույքային սերվիտուտ կարող է սահմանվել հարևան կամ այլ հողամասով անցնելու, երթևեկելու, էլեկտրահաղորդման, կապի գծերի կամ խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման, հողաբարելավման, վերանորոգման, շինարարական աշխատանքներ կատարելու կամ գերակա գույքի սեփականատիրոջ այլ կարիքները բավարարելու համար, որոնք չեն կարող ապահովվել առանց սերվիտուտ սահմանելու, կամ որոնց ապահովումը կապված է անհամաչափ զգալի ծախսերի հետ: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հասարակական կարիքների համար մայրուղային-գծային ինժեներական ենթակառուցվածքների (էլեկտրահաղորդման և կապի գծեր, գազատարներ, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման համակարգեր), օդային և ստորգետնյա մալուխային գծերի ու խողովակաշարերի, հենասյուների և դրանց անվտանգ շահագործման հետ կապված այլ շինությունների պահպանման ու սպասարկման նպատակով համապատասխան հողամասերում, անկախ սեփականության իրավունքի սուբյեկտից, սահմանվում է անվճար, հարկադիր և մշտական սերվիտուտ:

Ինչպես նկատում ենք, ՀՀ քաղ. օր.-ի 214-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված սերվիտուտը մասնավոր սերվիտուտն է, իսկ 5-րդ կետով նախատեսվածը՝ հանրային, քանի որ այն սահմանվում է հասարակական կարիքների համար:

Նշված նորմերի համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ մասնավոր սերվիտուտը կարող է սահմանվել ինչպես կամավոր՝ կողմերի համաձայնությամբ, այնպես էլ հարկադիր՝ դատարանի վճռով, իսկ հանրային սերվիտուտը միշտ էլ հարկադիր է, որի պատճառով էլ հանրային սերվիտուտին առնչվող նորմը զետեղվել է «Հարկադիր գույքային սերվիտուտ» վերտառությամբ հոդվածում:

---

[1] Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть первая, (постатейный), под ред. доктора юридических наук, профессора А. П. Сергеева, М., 2012, էջ 622:

Հաջորդ առանձնահատկությունը հատուցելիության մեջ է, մասնավորապես եթե մասնավոր սերվիտուտը ենթադրվում է հատուցելի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, ապա հանրային սերվիտուտը միշտ էլ անվճար է: Չնայած ՀՀ քաղ. օր.-ի 214-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ հասարակական կարիքների համար հարկադիր գույքային սերվիտուտ կարող է սահմանվել օրենքով, այնուամենայնիվ, բովանդակային առումով հանրային նպատակների համար սահմանված հարկադիր սերվիտուտն օտարում է: Ուստի այն լինելով սեփականության ազատության նկատմամբ ծանրակշիռ միջամտություն, մեր կարծիքով, հանրային սերվիտուտի սահմանումը պետք է իրականացվի հատուկ նախատեսված ընթացակարգով՝ հնարավորինս բացառելով ծառայող գույքի սեփականատիրոջն անհարմարություններ պատճառելը:

Մյուս կողմից էլ անընդունելի է նաև հանրային սերվիտուտի անվճար լինելը: Ջրի ստորգետնյա խողովակի դեպքում գուցեև ճիշտ է, բայց ոչ այն դեպքում, երբ բարձր լարման կայան է կանգնեցվում: Գրեթե բոլոր երկրներում այն համարվում է հատուցելի, քանի որ պետությունն ինքն է շահագրգռված լինում հատուցելու իր շահերի համար մասնավորին պատճառած անհարմարությունների համար: Հուսանք, որ ՀՀ-ն էլ նախաձեռնություն կցուցաբերի և հանրային սերվիտուտը կդարձնի հատուցելի:

Հանրային և մասնավոր սերվիտուտի տարանջատման հաջորդ հատկանիշից անմիջականորեն բխում է ՀՀ քաղ. օր.-ով նախատեսված սերվիտուտի հաջորդ տեսակը՝ ժամկետային և մշտական սերվիտուտը: Ի տարբերություն մասնավոր սերվիտուտի՝ հանրային սերվիտուտը համարվում է մշտական: Քանի որ ՀՀ քաղ. օր.-ի 213-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ գույքային սերվիտուտ սահմանելու մասին պայմանագրում պետք է նշվեն սերվիտուտի առարկան, գործողության ժամկետը և պայմանները, նշանակում է, որ մասնավոր սերվիտուտը միշտ էլ ժամկետային է, ինչ հետ իհարկե դժվար է համաձայնել այն պարզ պատճառով, որ մասնավոր սերվիտուտի գույքային սերվիտուտ լինելը նշանակում է, որ այն հիմնականում առաջանում է հողամասերի բնական դասավորվածությունից, ուստի այն միշտ էլ համարվում է մշտական: Մասնավորապես, օրինակ, Ֆրանսիայի քաղ. օր.-ի 639-րդ հոդվածը սահմանում է, որ

սերվիտուտը առաջանում է՝ բնական դասավորվածությունից ելնելով[1]:

ՀՀ քաղ. օր.-ի 211-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գույքային սերվիտուտը կարող է լինել կամավոր կամ հարկադիր: ՀՀ քաղ. օր.-ի 213-րդ հոդվածի համաձայն՝ կամավոր սերվիտուտը սահմանվում է սերվիտուտ պահանջող անձի և հարևան կամ այլ հողամասի սեփականատիրոջ՝ նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ: Այսինքն՝ կնքվում է կամավոր սերվիտուտ սահմանելու մասին պայմանագիր, որը պարտադիր ենթակա է նոտարական վավերացման: Այս պայմանագրի էական պայմանները նախատեսվում են նույն հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ կամավոր սերվիտուտ սահմանելու մասին պայմանագրում պետք է նշվեն սերվիտուտի գործողության ժամկետը և պայմանները: Բացի դրանից՝ նույն կետով սահմանվում է նաև, որ պայմանագրին կցվում է սերվիտուտով ծանրաբեռնված անշարժ գույքի հատակագիծը՝ սերվիտուտի տեղակայման նշումով:

Ինչ վերաբերում է հարկադիր սերվիտուտին, ապա դրան է նվիրված ՀՀ քաղ. օր.-ի 214-րդ հոդվածը, որի առաջին մասով ամրագրված է, որ հարկադիր սերվիտուտը սահմանվում է դատարանով՝ սերվիտուտ պահանջող անձի հայցով՝ կամավոր սերվիտուտ սահմանելու կամ դրա պայմանների վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում: Այսինքն՝ հարկադիր սերվիտուտ սահմանելու համար անհրաժեշտ է, որ կողմերը փոխադարձ համաձայնության եկած չլինեն, ընդ որում, կարող է բացակայել ոչ միայն սերվիտուտ սահմանելու կամ չսահմանելու վերաբերյալ համաձայնությունը, այլ նաև համաձայնության առանձին պայմանների վերաբերյալ համաձայնությունը: Այսինքն՝ հնարավոր է դեպք, որ կողմերը համաձայնության գան սերվիտուտ սահմանելու մասին, սակայն նրանց միջև վեճ առաջանա՝ կապված այդ համաձայնության վճարի կամ ժամկետի հետ: Այլ կերպ ասած՝ հարկադիր սերվիտուտի սահմանման համար անհրաժեշտ է կամավոր սերվիտուտի բացակայությունը: Օրենսդիրը սահմանել է նաև, որ հարկադիր սերվիտուտ սահմանելու մասին դատարանի վճիռը պետք է պարունակի 213-րդ հոդվածի

[1] Տե՛ս Гражданский кодекс Франции (Кодекс Наполеона). пер. с фр. (Захватаева В.Н.) – М.: Инфотропик Медиа, 2012, էջ 212:

2-րդ կետում նշված պայմանները, այն է՝ սերվիտուտի գործողության ժամկետը և պայմանները:

Չնայած վերը նշվածին, մեր խորին համոզմամբ, գույքային սերվիտուտի կամավոր կամ հարկադիր տեսակները ոչ թե սերվիտուտի տարբեր տեսակներ են՝ տեսակին բնորոշ յուրահատուկ առանձնահատկությունների դրսևորմամբ, այլ պարզապես սերվիտուտի սահմանման տարբեր ռեժիմներ են:

ВИДЫ СЕРВИТУТА, ЗАКРЕПЛЕННЫЕ В ГРАЖДАНСКОМ КОДЕКСЕ РА

Липарит Меликджанян

Доцент кафедры гражданского права ЕГУ,

кандидат юридических наук

Будучи предметом изучения, классификация любого правового явления, создает предпосылки более предметного изучения непосредственно закрепленных в Гражданском кодексе РА видов сервитута, поскольку в результате проведенных 23-го марта 2017г. изменений в разделе Гражданского кодекса РА, посвященных сервитутам, возникли новые, неизвестные отечественному гражданскому праву, виды сервитутов.

В соответствии с этим в статье нами предпринята попытка системного анализа классификации видов сервитута в свете произведенных последних законодательных изменений без сущностного определения отдельных видов сервитута, и как следствие, обосновывается необходимость и первостепенное значение не только их комплексного и целостного анализа, но и непосредственного определения в Гражданском кодексе РА правовой целесообразности и эффективности классификации сервитутов.

TYPES OF SERVITUDE FIXED IN THE CIVIL CODE OF THE RA

Liparit Melikjanyan
Associate Professor, YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences

Classification of different types of any legal phenomenon, most of all being a subject of the research of the science, create bases for more detail analyzing of the types of servitude directly defined in the Civil Code of the RA, because as a result of amendments of the part of the Civil Code of the RA related to the servitude made in March 23, 2017, developed types of servitude, which are unfamiliar to domestic legislation.

According to this, in the article, the author made an attempt to systematically analyze the classification of the types of servitude in the light of the last legislative changes, without an essential definition of certain types of servitude, and as a result the need and preliminary importance not only their complex and complete analyses, but also the legal necessity and efficiency of classification of servitudes in the Civil Code of the RA are stated.

Բանալի բառեր – սերվիտուտի տեսակները, գույքային, անձնական, դրական, բացասական, ուզուֆրուկտ, հանրային, մշտական
Ключевые слова: виды сервитута, имущественный, личный, положительный, отрицательный, узуфрукт, общественный, постоянный
Key words: types of servitude, proprietary, personal, positive, negative, uzufrukt, public, permanent

ԱՆՎԱՎԵՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արսեն Թավադյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Որքան հին է անձանց ձգտումը ստեղծել որոշակի կառուցակարգ, որը կապահովի իրենց գործողությունների պահպանումը, այնքան էլ հին է դրան հակադիր ձգտումը՝ չեղարկել դրանք: Այդ ձգտման հիմք կարող է լինել ինչպես կողմի ցանկությունը՝ չարամտորեն խուսափել ստանձնած պարտավորության կատարումից, այնպես էլ այն, որ համապատասխան գործողությունը հակասում է օրենքին, բարոյականությանը, սոցիալական նորմերին:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվելու են հենց այն գործարքները, որոնց գործողությունը չեղարկվում է օրենսդրությանը հակասելու հիմքով: Կուսումնասիրվի՝ ինչ է անվավերությունը, ինչու է օրենսդիրը կիրառում առոչինչ և վիճահարույց գործարքների կարգավորումը, կներկայացվի անվավեր գործարքների իրավական բնույթի վերաբերյալ վերլուծություն:

Քաղաքացիական իրավունքի դասագրքերում հանդիպում է անվավեր գործարքների շատ պարզ հասկացություն, որը հանգում է հետևյալ մտքին՝ գործարքն ունի չորս վավերության պայման՝ սուբյեկտներին, կամահայտնությանը, բովանդակությանը և ձևին վերաբերող, և եթե պահպանված չեն այդ պայմանները, դրվում է դրա անվավեր ճանաչելու հարցը[1]: Սակայն անվավերությունը չի հանգում զուտ գործարքի արատներին: Դա այն հետևանքն է, որը ի հայտ է գալիս այդ արատների պատճառով: Բայց այդպիսինների առկայությունը որոշ դեպքերում կարող է չհանգեցնել գործարքի անվավերության:

[1] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, ԵՊՀ հրատ., Երևան, 2000 թ., էջ 209, Гражданское право: в 3 т. Том 1: под ред. Сергеева А. П., Толстого Ю. К., Изд-во Проспект, Москва, 2005, էջ 297:

Պետք է նշել, որ Հայաստանի քաղաքացիական օրենսդրության շրջանակներում գործարքի անվավերության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, եթե առկա է արատ գործարքի կնքման պահին՝ ab initio՝ ի տարբերություն որոշ այլ իրավական համակարգերի, որտեղ գործարքի կատարման ընթացքում օրենքի խախտումը նույնպես որոշ դեպքերում կարող է հանգեցնել անվավերության[1]:

Ըստ էության ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[2] 303-րդ հոդվածը նախատեսում է երկու առանձին հասկացություն՝ առոչինչ և վիճահարույց գործարքներ: Որքան էլ այս հասկացությունները նմանություններ ունեն, այնուամենայնիվ, դրանց միջև կա ինստիտուցիոնալ տարբերություն:

Առոչինչ և վիճահարույց գործարքները չի կարելի դիտարկել որպես անվավեր գործարքների տեսակներ, այլ ավելի շուտ որպես անվավերության հանգեցնող երկու տարբեր գործընթաց: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի՝ *«Գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք)»*:

Այսինքն՝ և՛ առոչինչ գործարքի, և՛ անվավեր ճանաչված վիճահարույց գործարքի հետևանքը նույն անվավերությունն է: Երկու դեպքում էլ գործարքը օրենսդրի կողմից չի ճանաչվում որպես իրավաբանական փաստ և չի կարող հանգեցնել այն քաղաքացիաիրավական հետևանքներին, որոնց կողմերը ակնկալում էին[3]: Վավեր գործարքը միշտ իրավաբանական փաստ է՝ որոշակի եղելություն, որի հետ օրենսդրությունը կապում է իրավահարաբերության ծագումը[4]:

Սակայն օրենսդիրը հստակ նշում է, որ առոչինչ գործարքն անվավեր է ի սկզբանե, այսինքն՝ առկա է ֆիզիկական աշխարհում եղե-

---

[1] Տե՛ս McKendrick E. Contract Law, Macmillan Press LTD, Houndmills, Basingstoke, Hampshire and London, 1997, էջ 288:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք № ՀՕ-239 ՀՀՊՏ 1998.08.10/17 (50), 05.05.1998 թ.:

[3] Տե՛ս Гражданское право. В 4 т. Т. 1: Общая часть: отв. ред. Суханов Е. А., Волтерс Клувер, Москва, 2006, էջ 480:

[4] Տե՛ս Красавчиков О. А. Юридические факты в советском гражданском праве, Госюриздат, Москва, 1958, էջ 116:

լություն, փաստացի կա որոշակի գործողություն կամ կողմերի միջև որոշակի համաձայնություն, այդ համաձայնությունը կարող է նույնիսկ ձևակերպված լինել «գործարք» վերնագրով փաստաթղթում, բայց քաղաքացիաիրավական տեսանկյունից չկա գործարք: Այս դեպքում գործարքի, այսինքն՝ իրավաբանական փաստի մասին որևէ խոսք չի կարող լինել՝ դրա գոյությունը իրավաբանորեն չի ճանաչվում՝ nihil actum est[1]:

«Անվավեր գործարք» հասկացությունը միայն լեզվաբանորեն մեկնաբանելիս կարելի է պնդել, որ առկա է հակասություն, քանի որ գործարքն իրավաբանական փաստ է, իսկ անվավերություն նշանակում է դրա բացառում: Այս առումով կարելի էր պնդել, որ «առոչինչ գործարք», «անվավեր գործարք» հասկացությունները օքսիմորոն են և կարող են կանգնել «սառը կրակ», «աղմկոտ լռություն» և նմանատիպ այլ հասկացությունների կողքին:

Ինչևէ, հեղինակը բավականին բացասական է վերաբերում օրենսդրական ակտերում կիրառվող հասկացությունների լեզվաբանական իմաստով մեկնաբանությանը: Վերջերս բավականին նորաձև է դարձել իրավական ակտերի տերմինները մեկնաբանելիս հղում կատարել տարբեր լեզվաբանական բացատրական բառարանների: Դա դրական տենդենց չէ, սակայն այս հարցի ուսումնասիրությունն այլ գիտական աշխատանքի առարկա կարող է դառնալ:

Այնուամենայնիվ, կարծում եմ, իրավական հասկացությունները պետք է մեկնաբանել իրավաբանական նշանակությամբ: Այս առումով անվավեր գործարքը նշանակում է որոշակի փաստ, որով կողմերը ցանկանում էին առաջացնել իրավաբանական հետևանքներ, սակայն օրենսդրի տեսանկյունից այն չի գնահատվում որպես իրավաբանական: Այլ կերպ ասած՝ այն չի դիտարկվում այնպիսի գործողություն, որից բխող հետևանքի կատարումը, իրականացումը և պահպանումը կերաշխավորվեն պետության կողմից: Եթե կողմերը կնքեն անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը չվավերացնեն նոտարական կարգով, և մի կողմը հրաժարվի գույքը փոխանցել, պետությունը չի երաշխավորի գույքը ստանալու հնարավորության

[1] Տե՛ս Мейер Д. И., Русское гражданское право / Чтения Д. И., Мейера, изданные по запискам слушателей, Издание Николая Тиблена, Санкт-Петербург, 1864, էջեր 189-190:

իրավական պաշտպանություն: Այդ հնարավորությունն իր էությամբ սուբյեկտիվ իրավունք չէ:

Պետք է նշել, որ տեսական գրականության մեջ անվավեր գործարքները մեկնաբանվում են նաև այլ կերպ: Գիտնականների որոշ մասը կարծում է, որ անվավեր գործարքները, անկախ արատներից, կարելի է համարել գործարք, մյուս մասը դիտարկում է անվավեր գործարքները որպես իրավախախտում[1]: Սակայն, կարծում եմ, անվավեր գործարքն ավելի ճիշտ կլինի դիտարկել ոչ թե որպես իրավախախտում, այլ օրենսդրական պահանջների չպահպանման արդյունք, որի պատճառով գործողության հետևանքը չի դիտարկվում որպես իրավական:

Առոչինչ գործարքի դեպքում ակնհայտ է, որ այն իրավաբանական փաստ չէ, և պետությունը չի երաշխավորում դրա կատարումը: Առոչնչությունը ի հայտ է գալիս ipso jure. եթե վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման համար դատական ակտն անհրաժեշտ պայման է, ապա առոչինչ գործարքի դեպքում յուրաքանչյուր շահագրգիռ անձ կարող է այն չընդունել և վերաբերել նրան որպես գոյություն չունեցող[2]: Առոչինչ ակտը կարող է մերժվել ցանկացած անձի կողմից, ում ներկայացված է պահանջ նշված ակտով[3]:

Վիճահարույց գործարքների կարգավորումն այլ տրամաբանություն է ենթադրում: Այդպիսի գործարքն ինքնին անվավեր չէ, այլ պետք է այդպիսին ճանաչվի դատարանի կողմից[4], այսինքն՝ ամեն դեպքում վիճահարույց գործարքը պետք է ճանաչել իրավաչափ, քանի դեռ այդ գործարքի վերաբերյալ դատարանը վճիռ չի կայացրել[5]:

---

[1] Տե՛ս Кот А. А., Категория недействительности сделок и её место в системе способов защиты гражданских прав// Гражданское общество и развитие гражданского права: сборник статей к юбилею Н. С. Кузнецовой, Юридическая практика, Киев, 2014, էջեր 386-387:

[2] Տե՛ս Тузов Д. О., Иски связанные с недействительность- сделок: теоретический очерк, «Пеленг», Томск, 1998, էջ 15:

[3] Տե՛ս Победоносцев К. П., Курс Гражданского права, ч. 3, «Статут», Москва, 2003, էջ 36:

[4] Տե՛ս Рабинович Н. В., Недействительность сделок и её последствия, Издательство Ленинградского университета, Ленинград, 1960թ, էջ 14:

[5] Տե՛ս Рабинович Н. В., Недействительность сделок и её последствия, Издательство Ленинградского университета, Ленинград, 1960, էջ 16:

Ուստի եթե որևէ գործարքի համար նախատեսված է, որ օրենքին հակասելու դեպքում այն կհամարվի վիճահարույց, պետք է նկատի ունենալ, որ այն կայացման պահից շարունակում է դիտարկվել որպես գոյություն ունեցող և բերում է այն հետևանքներին, որոնց ուղղված է[1], այսինքն՝ քանի դեռ առկա չէ դատարանի վճիռ, որը տվյալ գործարքը կճանաչի անվավեր, այն կհամարվի պայմանական իրավաչափ[2]:

Սա նշանակում է, որ մինչև համապատասխան վճռի առկայությունը՝ պետությունը երաշխավորում է այդ գործարքի կատարումը: Այդպիսի գործարքով կատարվածը պետք է դիտարկել իրավաչափ՝ վիճահարույց գործարքը մինչև դրա անվավեր ճանաչումը վավեր է:

Այս տրամաբանությունից բխում են բազմաթիվ հետևանքներ, այդ թվում՝ այն, որ գրեթե բոլոր երկրների օրենսդրություններում օրենքին հակասող գործարքների համար կիրառվում է «առոչինչության կանխավարկածը», ըստ որի՝ օրենքին հակասող գործարքը համարվում է առոչինչ, քանի դեռ օրենքով այլ հետևանք նախատեսված չէ: Մասնավորապես Սերգեևը նշում է, որ ըստ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի[3]՝ օրենքին հակասող բոլոր գործարքները, ընդհանուր կանոնի համաձայն, համարվում են առոչինչ, իսկ վիճահարույց՝ միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում[4], Էնեկցեռուսը նշում է, որ Գերմանիայի քաղաքացիական կանոնագրքի համաձայն՝ գործարքը առոչինչ է, եթե պարունակում է օրենքին հակասող բովանդակություն[5], Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքին նվիրված

---

[1] Տե՛ս Тузов Д. О., Теория недействительности сделок: опыт российского права в контексте европейской правовой традиции, М., 2007, էջ 155:

[2] Տե՛ս Ульянов И. А., Влияние законодательства о защите конкуренции на гражданско-правовые сделки, дисс. … к.ю.н., Москва, 2010, էջ 44:

[3] Ճիշտ է, 2013 թ. ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի փոփոխության արդյունքում սահմանվեց օրենքին հակասող գործարքի «վիճահարույցության կանխավարկածը», բայց դրա հետ մեկտեղ սահմանվեց, որ երրորդ անձանց իրավունքները և շահերը, հանրային շահերը խախտող գործարքն առոչինչ են:

[4] Տե՛ս Гражданское право, под ред. Сергеева А. П., Толстого Ю. К., Том 1, Проспект, Москва, 2005, էջ 310:

[5] Տե՛ս Эннекцерус Л. Курс германского гражданского права, полутом 1, Издательство иностранной литературы, Москва, 1950, էջ 118:

աշխատությունում Մորանդիերը նույնպես նշում է, որ գործարքի ոչ թույլատրելի հիմքը բերում է բացարձակ անվավերության,[1] այսինքն՝ առոչնչության:

Պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը տվյալ հարցում բավականին յուրօրինակ մոտեցում է դրսևորել: Մեզ մոտ կիրառվում է օրենքին հակասող գործարքի «վիճահարույցության կանխավարկածը»՝ եթե գործարքը չի կարող գնահատվել որպես առոչինչ, այն վիճահարույց է[2]: Այս մոտեցումը չի համապատասխանում իրավական համակարգի ինստիտուցիոնալ գործողությանը՝ բերելով ներքին հակասության: Դա հիմնավորելու համար պետք է վերլուծել, թե ինչից է ծագել առոչինչ և վիճահարույց գործարքների բաժանումը, և որն է դրա նպատակը:

Անվավեր գործարքների բաժանումը առոչնչի և վիճահարույցի հռոմեական իրավունքի միջնադարյան և նոր ժամանակների մեկնաբանման արդյունք է: Հին Հռոմում գործարքները կա՛մ անվավեր էին ցիվիլ իրավունքին հակասելու հիմքով՝ այդպիսի գործարքներն առոչինչ էին, կա՛մ էլ դադարում էին գործել պրետորական յուրիսդիկցիայի հիմքով՝ դիտարկվելով որպես վիճահարույց: Այդ բաժանումն ուժը պահպանեց, երբ ցիվիլ և պրետորական իրավունքների միջև տարբերությունը վերացավ[3]:

Բայց ո՞րն է այս բաժանման պահպանման նպատակը, ինչո՞ւ է օրենսդիրը պահպանում առոչինչ և վիճահարույց գործարքների բաժանումը: Տեսական գրականության մեջ առկա մոտեցումները կարելի է բաժանել հիմնականում երեք խմբի.

- Անվավեր գործարքները բաժանվում են նշված խմբերի, քանի որ օրենսդիրը գործարքի որոշ արատներ դիտարկում է ավելի ծանր, քան մնացածը:

---

[1] Տե՛ս Морандьер Л., Гражданское право Франции, том 2, Издательство иностранной литературы, Москва, 1960, էջ 280:

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ 3-1628(ՎԴ) քաղաքացիական գործով 26.10.2006 թ.-ի որոշում:

[3] Տե՛ս Дернбург Г., Пандекты, Том I, Университетская типография, Москва, 1906 թ., էջ 331:

- Բաժանումը կատարվում է՝ հիմք ընդունելով, թե ինչ շահ է խախտվում՝ մասնավոր, թե հանրային: Հանրային շահի խախտման դեպքում կիրառվում է առոչինչ գործարքի կարգավորումը:

- Երրորդ մոտեցման համաձայն՝ բաժանումը կատարվում է՝ գործարքի արատների ակնհայտությունից ելնելով: Եթե արատն ակնհայտ է, ապա այդպիսի գործարքը առոչինչ է[1]:

Կարծում եմ՝ վերոնշված բոլոր մոտեցումները թերի են: Դրանց բոլորի թույլ կողմերը երևում են հենց օրենսդրության ուսումնասիրությունից: Քննարկեմ դրանք առանձին-առանձին:

Արատների ծանրության մոտեցում: Բռնության ազդեցության տակ կնքված գործարքը համարվում է վիճահարույց, իսկ անգործունակ ճանաչված անձի կնքած գործարքը՝ առոչինչ: Ակնհայտ է, որ որպես գործողություն՝ բռնությունն ավելի վտանգավոր է, քան անգործունակ քաղաքացու հետ պայմանագիր կնքելը:

Հանրային և մասնավոր շահի մոտեցում: Ինչպես նշվեց, այս մոտեցման կողմնակիցները կարծում են, որ հանրության շահերը ոտնահարող գործարքն առոչինչ է, մնացած դեպքերում՝ վիճահարույց: Նախ՝ բավականին բարդ է գնահատել՝ որոշակի շահ զուտ մասնավոր է, թե նաև հանրային տարրեր ունի: Ցանկության դեպքում ցանկացած մասնավոր շահ կարելի է դիտարկել հանրային: Օրենսդրության վերլուծությունը նույնպես ստիպում է նշել, որ այս մոտեցումը չի հիմնավորվում: Անչափահաս անձի կնքած գործարքը, որը, կարծում եմ, վերաբերում է միայն այդ մասնավոր անձին, առոչինչ է, իսկ առանց լիցենզիայի կնքած գործարքը՝ վիճահարույց, և դա այն դեպքում, երբ լիցենզիայի հիմնական նպատակն այն է, որ որոշակի գործունեություն, հենց հանրային շահից ելնելով, պետք է առավել չափով կարգավորվի:

Արատի ակնհայտության մոտեցում: Այս մոտեցումը նույնպես շատ պարզ կարելի է մերժել: 14-ից 18 տարեկան անձի կնքած գործարքը վիճահարույց է, իսկ, օրինակ, շինծու և կեղծ գործարքները, որոնց առկայությունը բարդ է հիմնավորել՝ առոչինչ: Գերմանական օրենսդրությանը համաձայն՝ գործարքն առոչինչ է, եթե հակասում է

[1] Ավելի մանրամասն տե՛ս Тузов Д. О., Ничтожность и оспоримость юридической сделки: пандектное учение и современное право, Статут, Москва, 2006, էջեր 150-160:

այդ թվում՝ հանրային կարգին[1]: Հատկապես հանրային կարգին անհամապատասխանությունը շատ բարդ ապացուցողական խնդիր է, ուստի այս մոտեցումը ևս չի հիմնավորվում:

Այնուամենայնիվ, չի կարելի ընդհանրապես մերժել օրենսդրական որևէ տրամաբանություն և հղում կատարել միայն Հին Հռոմից եկած ավանդույթին: Դա կիսակասի իրավական կարգավորման հիմնական հատկանիշներից մեկին, որը տարբերում է այն սոցիալական այլ կարգավորիչներից՝ իրավական կարգավորումը միշտ ռացիոնալ է:

Կարծում եմ՝ այսպիսի բաժանման հիմնական հիմքը իրավական համակարգի ինստիտուցիոնալ գործողության ապահովումն է: Այսպիսի բաժանմամբ ապահովվում են այդ համակարգի աշխատանքը և անհակասականությունը: Փորձեմ բացատրել այս պնդումը:

Ինչպես նշվեց, առոչինչ գործարքը բնութագրում է այն գործողությունը, որը պետությունը չի դիտարկում որպես իրավաբանական փաստ: Վիճահարույց գործարքն այն գործարքն է, որը թեկուզ ունի արատ, սակայն պետությունը դիտարկում է այն որպես իրավաբանական փաստ՝ փաստ, որն առաջացնում է իրավական հետևանքներ, և պետությունն ապահովում ու երաշխավորում է դրանից ծագող սուբյեկտիվ իրավունքի գործողությունը:

Այս իսկ պատճառով քաղաքացիական իրավունքի երկրների մեծամասնությունում օրենքին հակասող գործարքը առոչինչ է: Եթե օրենքին հակասող գործարքը վիճահարույց է, նշանակում է՝ պետությունը մի կողմից նշում է, որ քանի դեռ այն անվավեր չի ճանաչվի, ինքը կերաշխավորի դրա կատարումը և դրա շրջանակներում կատարվող գործողությունը կդիտարկի օրինական, մյուս կողմից, սակայն, արգելում է նշված գործողությունը:

Դա իրականում կարող է հանգեցնել աբսուրդ հետևանքների: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանազիան[2]: Սակայն, քանի որ մեզ մոտ կիրառվում է օրենքին հակասող գործարքների վիճահարույցության կանխավարկածը, ստացվում է՝ եթե անձը կնքի պայմանագիր, որով պարտավորվի մյուս անձին

[1] Տե՛ս Basil S Markesinis, Hannes Unberath, Angus Johnston, The German Law of Contract, Hart Publishing, Oxford and Portland, Oregon, 2006, էջ 228:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» № ՀՕ-42, ՀՀԱԺՏ 1996/7-8, 04.03.1996 թ.:

կյանքից զրկել, պետությունը կդիտարկի այդ գործարքն օրինական և պարտավոր կլինի երաշխավորել դրա կատարումը։ Արդյունքում եթե կողմը կատարի իր պարտավորությունը՝ կյանքից զրկի մյուս կողմին, նրան դժվար կլինի պատասխանատվության ենթարկել, քանի որ նա կատարել է արարք, որը պայմանական, սակայն, օրինական է ճանաչվում պետության կողմից, ավելին՝ կյանքից զրկողը կարող է հատուցում պահանջել իր գործողության համար։

Այս օրինակը բավականին կոպիտ է, սակայն դրանով ես ցանկանում էի ցույց տալ, որ օրենքին հակասող գործարքը չի կարող վիճահարույց համարվել, այլապես խափանվում է իրավական համակարգի գործունեությունը։

Կարելի է բերել նաև զուտ քաղաքացիաիրավական օրինակ։ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածը հստակ նշում է, որ պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար։ Ստացվում է, որ եթե կնքվում է այդպիսի գործարք, այն հակասում է օրենքին, հետևաբար վիճահարույց է։ Այսինքն՝ պետությունն ամեն դեպքում երաշխավորում և ապահովում է դրա կատարումը՝ դրանից ծագող իրավունքի իրացումը մինչև դրա անվավեր ճանաչումը։ Արդյունքում, ներկայիս կարգավորման շրջանակներում, եթե առկա է գործարք, որը պարտավորություն է ստեղծում դրանում չմասնակցող անձի համար, վերջինս պետք է դիմի դատարան այդ գործարքն անվավեր ճանաչելու պահանջով, այլապես պետությունը կապահովի այդպիսի վիճահարույց գործարքով ծագած իրավունքի իրականացումը։ Իսկ հայցային վաղեմության մեկամյա ժամկետի անցնելու պարագայում երրորդ անձն ընդհանրապես կզրկվի այդպիսի հնարավորությունից։

Առոչինչ և վիճահարույց գործարքների ուսումնասիրության հիմնական մեթոդական սխալն այն է, որ հետազոտողների զգալի հատված ցանկանում է այսպիսի բաժանման հիմքը տեսնել դատավարական ապացուցման մեջ։ Իսկապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի նախնական ուսումնասիրությունից հնարավոր է ենթադրել, որ առոչինչ գործարքի դեպքում ապացուցում չի պահանջվում, իսկ վիճահարույց գործարքի պարագայում դատարանում պետք է բերվեն համապատասխան հիմնավորումներ։

Սակայն դա սխալ մեթոդաբանական մոտեցում է: Ե՛վ առոչինչ, և՛ վիճահարույց գործարքների պարագայում դատավարական տեսանկյունից առկա են որոշակի փաստեր, որոնք, անկախ ամեն ինչից, պետք է ապացուցվեն: Պետք է ապացուցվի, որ գործարքի կողմը մինչև 14 տարեկան է (ինչը իրականում ակնհայտ անձից չի երևում, ուստի և պետք է ներկայացվի և ուսումնասիրվի ծննդյան վկայականը), որ անձը անգործունակ է (ներկայացնելով համապատասխան վճիռը), այնպես էլ այն, որ կեղծ գործարքը կնքվել է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Օրենսդրի այն խոսքերը, որ առոչինչ գործարքն անվավեր է ի սկզբանե, իսկ վիճահարույցը՝ այդպիսին ճանաչվելուց հետո, չի կարելի մեկնաբանել այն իմաստով, որ մի դեպքում ապացուցված է, որ գործարքը անվավեր է, մյուս դեպքում պետք է դա ապացուցել: Սա պետք է մեկնաբանել այն տրամաբանությամբ, որ առոչինչ գործարքը, անկախ ամեն ինչից, չի առաջացնում իրավական հետևանքներ՝ չհանդիսանալով իրավաբանական փաստ, իսկ վիճահարույցն առաջացնում է: Անվավեր ճանաչման հայցով հայցվորը պահանջում է վիճահարույց գործարքի՝ որպես իրավաբանական փաստի վերացում:

Ինչպես նշվեց, ՀՀ-ում կիրառվում է օրենքին հակասող գործարքների վիճահարույցության կանխավարկածը, որի պարագայում հայց կարող է ներկայացնել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված անձը: Քանի որ այդպիսի անձ օրենսգրքով նշված չէ, ստացվում է, որ օրենքին հակասող գործարքի անվավեր ճանաչման հայց որևէ մեկը չի կարող ներկայացնել: ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 03.05.2013 թ. թիվ 133 որոշմամբ[1] փորձ է արվել որոշակի լուծում տալ այս խնդրին, մասնավորապես նշվել է, որ այդ դեպքում հայց կարող է ներկայացնել շահագրգիռ անձը:

Բաց թողնելով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ այսպիսի մեկնաբանություն տալու իրավասության վերաբերյալ

[1] Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 03.05.2013 թ. թիվ 133 որոշում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին» http://www.court.am/files/news/2521_am.pdf:

հարցը՝ պետք է նշել, որ սա միայն արտաքին լուծում է և չի վերացնում այն ինստիտուցիոնալ տարբերությունը, որ առկա է առոչինչ և վիճահարույց գործարքների միջև։

Այդ ինստիտուցիոնալ տարբերությունն այնքան ակնհայտ է, որ պրակտիկ գործունեության մեջ իրավակիրառ մարմինները օրենքին հակասող գործարքներին, ըստ էության, վերաբերում են որպես առոչինչ գործարքներ։ Համապատասխան իրավակիրառողը, իհարկե, կարող է չընկալել այս տարբերության տեսական հիմքը, սակայն վերջինս օրենքին հակասող գործարքին երբեք չի կարող վերաբերել որպես պայմանական վավեր՝ այնպիսի գործարք, որից ծագող իրավունքներն ապահովվում և երաշխավորվում են պետության կողմից։

Մեկ օրինակ բերեմ, որն ակնհայտ է պրակտիկայից։ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի[1] 6-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բոլոր վճարումները իրականացվում են ՀՀ դրամով։ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի[2] 165-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում վճարումը դրամով չիրականացնելու համար։ Այս պատասխանատվությունը լիազոր մարմինը բավականին ակտիվությամբ կիրառում է։ Սակայն իրականում արտարժույթով վճարում նախատեսող գործարքը վիճահարույց գործարք է, և պետությունը դրան պետք է վերաբերի, ինչպես նշվեց, որպես պայմանական վավեր գործարքի և երաշխավորի դրա կատարումը՝ դիտարկելով դրա շրջանակներում կատարված գործողությունները օրինական, քանի դեռ գործարքն անվավեր չի ճանաչվել։

Դրա հետ մեկտեղ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածը վարչական իրավախախտման տարրերից է դիտարկում հակաիրավականությունը։ Ստացվում է, որ քանի դեռ այդպիսի գործարքն անվավեր չի ճանաչվել, լիազոր մարմինը պատասխանատվություն չի կարող կիրառել։

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենք «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» № ՀՕ-135-Ն, ՀՀՊՏ 2004.12.28/72(371), հոդ. 1456, 24.11.2004 թ.։

[2] Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք ՀՍՍՀԳՍՏ 1985/23 06.12.1985 թ.։

Սակայն լիազոր մարմինը պատասխանատվություն կիրառում է առանց այդպիսի ճանաչման, իսկ այն անձինք, ում նկատմամբ կիրառվում է իրավախախտումը, չեն էլ վիճարկում պատասխանատվություն կիրառող ակտը հենց այս հիմքով: Արդյունքում ստացվում է, որ հասարակական ընկալման մեջ օրենքին հակասող գործողությունը գնահատվում է որպես առոչինչ՝ իրավական փաստ չհանդիսացող արարք, որն իրավական հետևանք չի կարող առաջացնել և չի կարող երաշխավորվել և ապահովվել պետության կողմից:

Արդյունքում ակնհայտ է դառնում, որ առոչինչ և վիճահարույց գործարքների բաժանման նպատակն իրավական համակարգի գործունեության ապահովումից է բխում: Այն դեպքում, երբ օրենքին հակասող գործարքի համար կիրառվում է «վիճահարույցության կանխավարկած», իրավական համակարգում ի հայտ է գալիս ներքին հակասություն (պետությունը մի կողմից արգելում է արարքը, մյուս կողմից՝ ապահովում և երաշխավորում դրա կատարումը մինչև անվավեր ճանաչումը), որն անհնար է հաղթահարել առանց օրենքին հակասող գործարքների համար «առոչնչության կանխավարկածի» սահմանման:

РЕГУЛИРОВАНИЕ НЕДЕЙСТВИТЕЛЬНЫХ СДЕЛОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Арсен Тажадян
Ассистент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук

В статье даётся определение недействительных сделок, описываются подходы к их регулированию. Нами анализируются ничтожные и оспоримые сделки, исторические причины возникновения этого деления, исследуются основные подходы, связанные с целью такого деления. На основе такого анализа, автор предлагает свой подход к логике деления недействительных сделок на ничтожные и оспоримые, утверждая, что такое деление исходит из необходимости обеспечения институционального действия правовой системы.

REGULATION OF INVALID CONTRACTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Arsen Tavadyan
Assistant at the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences

Description of invalid contract, main approaches of its regulation are given in the Article. Void and voidable contracts, historic reasons of such division are analyzed. Main approaches related to the purpose of such division are explored. Based on such analysis, the author suggests his approach to the logic of division of invalid transactions into void and voidable ones, claiming that such division is necessary, because of necessity to ensure the institutional action of the legal system.

Բանալի բառեր - գործարք, անվավերություն, առոչինչ, վիճահարույց
Ключевые слова: сделка, недействительность, ничтожность, оспоримость
Keywords: contract, invalidity, void, voidable

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՍԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ռաֆիկ Գրիգորյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Սպառողական վարկի կարգավիճակը ամբողջ աշխարհում տարբերվում է այլ վարկատեսակների կարգավիճակից: Դա հիմնականում պայմանավորված է պետության համար այդ վարկատեսակով կարգավորվող հարաբերությունների կարևորությամբ: Հայաստանի Հանրապետությունում 2008 թ. հունիսի 17-ին ընդունվեց օրենք «Սպառողական կրեդիտավորման մասին»[1], որով իմպերատիվ կարգավորումներ նախատեսվեցին մի շարք հարաբերությունների համար, որոնք մինչ այդ կարող էին թողնվել բանկերի և սպառողների միջև կնքվող պայմանագրային կարգավորմանը: Գաղտնիք չէ, որ այն դեպքերում, երբ օրենսդրությամբ նախատեսված չեն հստակ իմպերատիվ նորմեր, և լայնորեն չեն գործում սպառողների հետ հարաբերություններում անարդար պայմանների չկիրառման կառուցակարգերը[2], հաճախ են հանդիպում սպառողների իրավունք-

[1] Տե՛ս «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք (հոդվածում այսուհետ կօգտագործվի որպես «Օրենք»), ՀՀՊՏ 2008.07.23/47(637) ընդունված 17.06.2008 թ., ուժի մեջ մտած՝ 23.01.2009:

[2] «Անարդար պայմանների» չկիրառման օրենսդրության համար հիմնաքարային է հանդիսանում 1993 թ. ապրիլի 5-ին ԵՄ-ի կողմից ընդունված թիվ 93/13/EEC դիրեկտիվը՝ Unfair terms in consumer contracts: Դիրեկտիվը վերաբերում է միայն սպառողների հետ կնքված պայմանագրերին և անարդար (unfair) է համարում այն պայմանը, որը ի վնաս սպառողի զգալի անհավասարություն է առաջացնում կողմերի իրավունքների և պարտականությունների մեջ: Դիրեկտիվը սահմանում է, որ «անարդար» կարող է որակվել միայն այն պայմանը, որը պայմանագրի կնքման ժամանակ արդեն իսկ կազմված է եղել և չի բանակցվել սպառողի հետ: Դիրեկտիվի 6-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները պարտավոր են հետևել, որ սպառողների հետ կնքվող պայմանագրերում տեղ գտած անարդար պայմանները կիրառություն չունենան, իսկ պայմանագրերը հնարավորության դեպքում շարունակեն գործել մնացած մասով: ՀՀ օրենսդրությամբ անարդար պայմանների

ների խախտման դեպքեր: Սպառողական վարկը ընդգրկում է բոլոր այն վարկերը, որոնք տրվում են ոչ ձեռնարկատիրական նպատակով՝ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով: Ընդ որում, 21.12.2015 թ. Օրենքում կատարված փոփոխության ուժով որպես սպառողական վարկ որակվեցին նաև մինչև 2.000.000 ՀՀ դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության վարկերը[1]:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է. «1. Սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարել (մարել)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

2. Սպառողի կողմից կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է **սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը**:

3. Սպառողի՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավունքը սահմանափակող, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցներ սահմանող համաձայնությունն առ ոչինչ է:

4. Սպառողի՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավունքն իրականացնելու դեպքում կրեդիտավորողը չի կարող կիրառել պատասխանատվության միջոցներ (տուժանք կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոց):»

Վերը նշված հոդվածով սահմանվում է սպառողական վարկի հիմնական երաշխիքներից մեկը, որով սպառողը իրավունք ունի վճարել վարկը ժամկետից շուտ և չկրել այն բոլոր ծախսերը, որը նա

չկիրառման կամ փոփոխման կառուցակարգ նախատեսվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածով միանալու պայմանագրերի համար:

[1] Տե՛ս ««Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2016.01.13/2(1182), Հոդ. 6, ընդունված 21.12.2015 թ., ուժի մեջ մտած՝ 23.01.2016:

կկրեր, եթե պայմանագրի գործողությունը շարունակվեր մինչև վերջ: Ընդ որում, այս կանոնը հատուկ կանոն է, իսկ ընդհանուր կանոնը, որը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 2-րդ մասով, նախատեսում է, որ տոկոսներով տրամադրված փոխառության գումարը կարող է վաղաժամկետ հետ վերադարձվել միայն փոխատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ փոխառության պայմանագրով:

Վարկի վաղաժամկետ վճարման իրավունքը վերաբերում է ինչպես ամբողջ վարկին, այնպես էլ վարկի գումարի մի մասին: Այսինքն՝ սպառողը իրավունք ունի ժամկետից շուտ վճարել թե ամբողջ վարկի գումարը, թե՛ դրա մի մասը, որի դեպքում նույնպես անձը իրավունք ունի ստանալ կրեդիտավորման ընդհանուր ծախսի նվազեցում: Սպառողի համար այդպիսի իրավունք գործում է նաև Եվրոպական միության երկրներում, որը սահմանված է 2008/48/EC ԵՄ դիրեկտիվով[1] : Ընդ որում, 2008/48/EC ԵՄ դիրեկտիվի 16-րդ հոդվածը, ի տարբերություն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, մասնավորեցնում է, որ սպառողն իրավունք ունի ցանկացած ժամանակ վարկը վաղաժամկետ մարել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ:

Վարկի վաղաժամկետ վճարման իրավունքը ընձեռված է սպառողին անկախ նրանից՝ այն պայմանագրով սահմանված է, թե ոչ: Սակայն մյուս կողմից վարկի վաղաժամկետ վճարման իրավունքը համարվում է պայմանագրի էական պայման և պետք է ներառված լինի սպառողական վարկի պայմանագրում՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի ուժով: Այսինքն՝ օրենքը մի դեպքում որպես պայմանագրում առնվազն ներառվող պայման է նախատեսում վարկի վաղաժամկետ վճարման իրավունքի նախատեսումը, իսկ մյուս դեպքում նշում է, որ այդ իրավունքը կգործի անկախ այն հանգամանքից՝ պայմանագրի մեջ նշված է, թե ոչ: Պետք է նշել, որ պայմանագրում այդ իրավունքը ներառելը ֆինանսական կազմակերպության պարտականությունն

[1] Տե՛ս Directive 2008/48/EC of the European Parliament and of the Council of 23 April 2008 on credit agreements for consumers and repealing Council Directive 87/102/EEC, հոդված 16 (http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2008:133:0066:0092:EN:PDF):

է, այլ ոչ սպառողինը, քանի որ նախ՝ այդ պայմանագրերը, որպես կանոն, կազմվում են տիպային ձևերով բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից, և երկրորդ՝ այդպիսի պարտականություն նախատեսված է ««Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28.07.2009 թ. թիվ 229-Լ որոշման[1] Հավելվածի (այսուհետ՝ նաև Կանոնակարգ 8/05) 11-րդ կետով:

Սպառողական վարկը վաղաժամկետ վճարելու և դրա արդյունքում կրեդիտավորման ընդհանուր ծախսը նվազեցնելու իրավունքի կիրառումը չի կարող հանգեցնել որևէ պատասխանատվության միջոցի կիրառման, և այդպիսի միջոցի կիրառման նախատեսումը պայմանագրում առոչինչ է:

Սպառողական վարկի՝ ժամկետից շուտ վճարելու թերևս ամենակարևոր առավելությունը կրեդիտավորման ընդհանուր ծախսի նվազեցումն է: Ընդ որում, Օրենքը սահմանում է, որ կրեդիտավորման ընդհանուր ծախսը պետք է նվազեցվի ամբողջությամբ, կատարված վճարմանը համամասնորեն՝ առանց որևէ փոխհատուցման: Դրան հակառակ՝ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը թույլ է տալիս կրեդիտավորողին ստանալ օրենքով նախատեսված չափով փոխհատուցում վարկի վաղաժամկետ մարման դեպքում[2] : 2008/48/EC ԵՄ դիրեկտիվի 16-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը նշում է, որ վարկի վաղաժամկետ վճարման դեպքերում կրեդիտավորման ընդհանուր ծախսը պետք է նվազեցվի, ընդ որում, պետք է նվազեցվեն տոկոսը և այլ վճարումները վարկի մնացած ժամանակահատվածին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասը նշում է, որ վարկի վաղաժամկետ մարման դեպքում կրեդիտավորողը պետք է իրավունք

[1] Տե՛ս ««Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28.07.2009 թ. թիվ 229-Ն որոշում, ՀՀԳՏ 2009.10.01/27(345), հոդ. 311, ընդունված 28.07.2009 թ., ուժի մեջ մտած՝ 01.11.2009 թ.:

[2] Տե՛ս «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, ՀՀՊՏ 2017.11.22/69(1344) ընդունված 25.10.2017թ., ուժի մեջ մտած՝ 22.05.2018:

ունենա արդարացի և օբյեկտիվորեն հիմնավոր փոխհատուցման այն վնասների համար, որոնք կապված են վարկի վաղաժամկետ վճարման հետ և վճարվում են հաստատուն տոկոսադրույքով վարկի համար: Այդ փոխհատուցումը չպետք է գերազանցի վաղաժամկետ վճարված գումարի 1%-ը, եթե վարկի վաղաժամկետ վճարման և նախապես համաձայնեցված վարկի վճարման վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, իսկ եթե այդ ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա փոխհատուցումը չպետք է գերազանցի վաղաժամկետ վճարված գումարի 0.5%-ը: Այս ամենին հակառակ՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը չի նախատեսել որևէ փոխհատուցում և սպառողներին հնարավորություն է տվել առանց որևէ բացասական հետևանքի ժամկետից շուտ վճարելու վարկը:

Իսկ ի՞նչ է ներառում վաղաժամկետ մարման դեպքում նվազեցման ենթակա կրեդիտավորման ընդհանուր ծախսը: Օրենքը սահմանում է, որ կրեդիտավորման ընդհանուր ծախսը բոլոր տոկոսներն ու այլ վճարումներն են, որոնք սպառողը պարտավոր է վճարել (կատարել) կրեդիտավորման համար: Այլ կերպ ասած՝ կրեդիտավորման ընդհանուր ծախսը այն բոլոր վճարումներն են, որ վարկառուն կատարում է վարկի գումարը ստանալու համար: Օրենքը նաև օգտագործում է տարեկան փաստացի տոկոսադրույք եզրույթը (Annual Percentage Rate կամ APR), որը հենց սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով: ««Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.12.2008 թ. Կանոնակարգ 8/01-ը հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշմամբ[1] հաստատված Կանոնակարգ 8/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 8/01) 2.3-րդ կետը սահմանում է, որ կրեդիտավորման ընդհանուր ծախս են համարվում բոլոր տոկոսագումարներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճա-

[1] Տե՛ս ««Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» կանոնակարգ 8/01-ը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.12.2008 թ. թիվ 363-Ն որոշում, ՀՀԳՏ 2009.01.15/2(320), հոդ. 8, ընդունված 16.12.2008 թ., ուժի մեջ մտած՝ 24.01.2009 թ.:

րել (կատարել) կրեդիտավորման (կրեդիտի ստացման և գործողության ընթացքում) համար: Կանոնակարգ 8/01-ի 4-րդ կետի համաձայն՝ կրեդիտավորման ընդհանուր ծախսերի և, հետևաբար, տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվող **այլ վճարումները** ներառում են սպառողի կողմից կրեդիտավորման համար պարտադիր կատարման ենթակա հետևյալ վճարները (դրանց առկայության դեպքում)՝

1) կրեդիտի ձևակերպման վճարը,

2) նախկինում ստացված կրեդիտի ժամկետանց մարումներ ունենալու դեպքում տվյալ կրեդիտավորողից նոր կրեդիտի ձևակերպման վճարը,

3) կրեդիտավորման փաստաթղթերի պատրաստման վճարը,

4) կրեդիտի սպասարկման վճարը,

5) գրավի ձևակերպման համար վճարը,

6) կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե կրեդիտավորողը այդ կազմակերպությունների, միությունների կամ այլ խմբերի հիմնադիրն է կամ մասնակիցը, և կրեդիտի պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից,

7) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, եթե այդ ծառայություններից օգտվելը կրեդիտավորման պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման է և այդ ծառայությունների շահառուն կրեդիտավորողն է կամ կրեդիտավորողը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքել օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր,

8) կրեդիտավորման հետ կապված այլ վճարները, որոնք սպառողը պարտավոր է կատարել կրեդիտավորման համար՝ բացառությամբ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ չներառվող վճարների:

Իսկ Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է այն վճարումների ցանկը, որոնք չեն ներառվում կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ: Դրանք հիմնականում այն վճարումներն են, որ անձը կատարում է սեփական ցանկությամբ կամ իր գործողությունների արդյուն-

քում, օրինակ՝ պարտավորության ոչ պատշաճ կատարման արդյունքում հաշվարկված տուժանքը կամ սեփական ցանկությամբ ապահովագրությունը և այլն:

Ամփոփելով կարելի է նշել, որ կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվում են ինչպես կրեդիտավորողին վճարվող (տոկոս, վարկի սպասարկման վճար և այլն), այնպես էլ երրորդ անձանց վճարվող (ապահովագրավճար, գնահատման ծառայության վճար և այլն) այն բոլոր վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկ ստանալու համար: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ սպառողը պետք է պարտավոր լինի կատարել այդ վճարները, այլ ոչ իրավունք ունենա: Օրինակ՝ անձը իրավունք ունի հասարակ գրավոր ձևով կնքվող վարկային պայմանագրի կնքումը պահանջել նոտարական կարգով կնքել, որի դեպքում կառաջանան ծախսեր, որը, սակայն, չի մտնի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ և ենթակա չի լինի նվազեցման, քանի որ դա կատարվել էր սպառողի պահանջով, և վերջինս պարտավոր չէր կրել այդ ծախսերը:

Սահմանելով կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ընդգրկվող վճարումների շրջանակը՝ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես պետք է կատարվի վարկի վաղաժամկետ վճարման դեպքում կրեդիտավորման ընդհանուր ծախսի նվազեցումը: Նախ քննարկենք այն վճարների տեսակները, որոնք մտնում են կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ, սակայն վճարվում են ոչ թե վարկատուին, այլ երրորդ անձանց: Սովորաբար այդ վճարներն են ապահովագրության համար վճարվող ապահովագրավճարները, գույքի գնահատման համար վճարվող վճարները, գրավի ձևակերպման (նոտարական վավերացում) և գրավի իրավունքի պետական գրանցման համար վճարվող գումարները, ինչպես նաև կազմակերպությունների կամ այլ խմբերի անդամակցության վճարները: Ներկայիս կարգավորմամբ այդ բոլոր վճարները նույնպես պետք է նվազեցվեն վարկի վաղաժամկետ մարման դեպքում, և չկա որևէ բացառություն: Սակայն այդ վճարների նվազեցվելը առաջ է բերում մի շարք խնդիրներ և ինքնին տրամաբանական չէ: Մասնավորապես բոլոր այս դեպքերում բանկը կրում է վնասներ և փաստացի պետք է հատուցի այն գումարները, որոնք ինքը չի ստացել, այլ ստացել են երրորդ անձինք: Կարող են լինել իրավիճակներ, երբ բանկը հաճախորդի հետ պայմանագիր կնքելու արդյունքում միայն վնաս կրի: Օրինակ՝ բոլոր

այն դեպքերում, երբ սպառողը վարկը վաղաժամկետ ամբողջությամբ մարի շատ կարճ ժամանակամիջոցում և վճարի բանկին ավելի քիչ գումար՝ որպես տոկոս, քան պետք է հետ ստանա որպես երրորդ անձին (օրինակ՝ նոտարին վճարված պայմանագրի վավերացման համար վճարված գումարը) կատարված վճարի նվազեցում, ապա բանկը կրում է վնաս: Այսպիսի իրավակարգավորումը հակասում է ազատ շուկայական հարաբերությունների սկզբունքին, քանի որ բանկը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ և չի կարող իր իրավաչափ գործողությունների արդյունքում վարկ տալով կրել վնաս: Նման կարգավորումից խուսափելու համար ՀՀ կենտրոնական բանկը կազմել է նախագիծ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխության վերաբերյալ, որի համաձայն՝ չեն նվազեցվում կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այն վճարները, **որոնք չեն վճարվել անմիջապես կրեդիտավորողին (իրավունքի գրանցման վճարներ, նոտարին վճարվող վճարներ, պետական տուրք և այլն), և այն վճարները, որոնք, անկախ կրեդիտ տրամադրելու փաստից, կատարվել են անմիջապես կրեդիտավորողին**[1]**:** Այսինքն՝ այս նախագծով բոլոր այն վճարները, որոնք չեն տրվում բանկին, չեն նվազեցվում վաղաժամկետ մարման դեպքում: Չեն նվազեցվում նաև այն վճարները, որոնք, անկախ կրեդիտ տրամադրելու փաստից, կատարվել են անմիջապես կրեդիտավորողին, օրինակ՝ հաճախորդը ունի հաշիվ բանկում, և բանկի կողմից տրվել է վճարային քարտ, որի համար վճարում է սպասարկման վճար, այնուհետև դիմում է բանկին այդ վճարային քարտին վարկային գիծ տրամադրելու խնդրանքով, որը բավարարվում է, արդյունքում վաղաժամկետ վճարման դեպքում բանկը չի նվազեցնի հաճախորդի վճարային քարտի սպասարկման վճարը, քանի որ դա գանձվում էր՝ անկախ կրեդիտ տրամադրելուց:

Կրեդիտավորողին վճարվող վճարների նվազեցման համար պետք է տարանջատենք երկու դեպք. 1. երբ վարկառուն ժամկետից շուտ վճարում է ամբողջ վարկը, 2. երբ վարկառուն ժամկետից շուտ վճարում է վարկի գումարի մի մասը: Խնդիրը բավական դյուրին է վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում: Այդ դեպքում

[1] Տե՛ս https://www.e-draft.am/projects/408/about :

վարկատուն պետք է հաշվարկի, թե ամբողջական վճարումը ինչպիսի համամասնություն ունի վարկի ամբողջ գումարի հետ, և այդ չափով նվազեցնի կրեդիտավորման բոլոր ծախսերը: Օրինակ՝ վարկի ամբողջական մարմանը մնացել է վճարելու վարկի գումարի 30%-ը, և վարկառուն միանվագ վճարում է այդ 30% վարկը, այդ դեպքում նախապես վարկառուի վճարած հաստատուն ծախսերից պետք է հաշվարկվի 30 %-ը և վերադարձվի սպառողին, իսկ եթե վճարը պարբերական է, ապա վարկի ամբողջական մարումին հաջորդող ժամանակահատվածի պարբերական վճարները չեն վճարվի, որոնք էլ կհանդիսանան սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի նվազեցումները:

Քննարկենք այն դեպքը, երբ վարկառուն վճարում է վարկը ժամկետից շուտ, սակայն վճարում է ոչ ամբողջությամբ, այլ մասնակի: Այստեղ նախևառաջ պետք է քննարկվի, թե ինչ վճարումների մարմանը պետք է ուղղվի վարկառուի մասնակի վաղաժամկետ վճարման գումարը, որից էլ կախված է, թե ինչպես պետք է նվազեցվի կրեդիտավորման ընդհանուր ծախսը: Այստեղ կա երեք տարբերակ՝ կապված վարկի հիմնական (մայր) գումարի վճարման հետ.

1. ավել վճարված գումարը ուղղվում է առաջիկա հերթական մարումներին՝ թողնելով կրեդիտի մարման ժամկետը անփոփոխ,

2. ավել վճարված գումարի հաշվին համամասնորեն նվազեցվում են բոլոր հերթական մարումները՝ թողնելով կրեդիտի մարման ժամկետը անփոփոխ,

3. ավել վճարված գումարը ուղղվում է վարկի վերջին ամիսների վճարումների նվազեցմանը՝ նվազեցնելով վարկի մարման ժամկետը և առաջիկա հերթական ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը չի պատասխանում այս հարցին, թե ինչպես պետք է կատարվի վաղաժամկետ վճարումը: Այս հարցին անդրադարձ կա «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում, որի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նախատեսում է, որ վարկառուն է ընտրում վերը նշված 2-րդ և 3-րդ կետերից որևէ մեկը, սակայն անդրադարձ չկա 1-ին կետին:

Այս կապակցությամբ մեր կողմից հարցում է կատարվել ՀՀ-ում գործող բոլոր առևտրային բանկերին՝ պարզելու համար գործող գոր-

ծարար շրջանառության սովորույթը: Հարցումը պարունակել է հետևյալ հարցերը.

1. ինչ սկզբունքով է իրականացվում բանկում գործող սպառողական վարկերի վաղաժամկետ մասնակի մարումը վարկի հիմնական (մայր) գումարի մասով,

2. կախված վարկի հիմնական (մայր) գումարի վաղաժամկետ մասնակի մարման մեխանիզմից՝ ինչպես են իրականացվում վարկի ամսական սպասարկման վարձի նվազեցումներ,

3. ինչպես է իրականացվում կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների համամասնորեն նվազեցումը վարկի մասնակի վաղաժամկետ վճարման դեպքում (օրինակ՝ վարկի ձևակերպման վճար և այլն):

Պատասխան է ստացվել 12 բանկերից, որոնց պատասխանները ամփոփելով՝ հանգում ենք հետևյալին. գրեթե բոլոր բանկերը չեն վերադարձնում հաստատուն վճարները, որոնց հաշվարկը կախված չէ վարկի մնացորդի հետ: Բանկերը չեն վերադարձնում նաև այլ անձանց տրված վճարները: Իսկ թե ինչպես է ուղղվում վարկի մասնակի մարումը վարկի գումարի նվազեցմանը, ապա պետք է նշել, որ բանկերը հիմնականում նշում են, որ եթե չկա առանձին հանձնարարական, ապա կատարվում է վարկի հիմնական (մայր) գումարի առաջիկա հերթական վճարումների մարում:

Մեր կարծիքով նույնպես՝ վարկի վաղաժամկետ մասնակի մարման գումարը պետք է ուղղվի վարկի առաջիկա հերթական մասի (մասերի) վճարմանը: Կարծում ենք, որ այս դեպքում հենց պարտավորության մասի կատարումն է, որ վարկառուն կատարում է ժամկետից շուտ, քանի որ ամբողջ պարտավորությունը բաղկացած է այդ մասերի հանրագումարից: Այսինքն՝ եթե առկա չէ վարկառուի կոնկրետ հանձնարարականը՝ իր վաղաժամկետ վճարումը որևէ ամսի վճարմանը ուղղելու, ապա պետք է կատարվեն վարկի հիմնական գումարի առաջիկա մասերի նվազեցումներ այն չափով, որքան որ կբավարարի վաղաժամկետ վճարումը: Օրինակ՝ վարկառուն ունի 1.000.000 դրամի վարկ և պարտավորվել է ամսական վճարել 100.000 ՀՀ դրամ մարտ ամսից մինչև դեկտեմբեր ամիսը: Եթե մարտին վճարվելիք 100.000 ՀՀ դրամի փոխարեն վարկառուն վճարում է 300.000 ՀՀ դրամ, ապա պետք է վճարված համարել վարկի հիմնական (մայր) գումարի մարտ, ապրիլ և մայիս ամիսների վարկի հիմ-

նական (մայր) գումարի հերթական վճարումները, իսկ հունիս ամսից նորից կվերականգնվեն վարկի հիմնական գումարի հերթական վճարումները 100.000-ական դրամի չափով:

Այս դեպքում ինչպե՞ս պետք է կատարվի կրեդիտավորման ընդհանուր ծախսի նվազեցումը: Նախ պետք է նշել, որ տոկոսի հաշվարկը ՀՀ բոլոր բանկերում և վարկային կազմակերպություններում կատարվում է օրական կտրվածքով, այսինքն՝ տոկոսը միշտ հաշվարկվում է վարկի մնացորդի վրա, և անկախ այն հանգամանքից, թե ինչպես կուղղվի վարկի վաղաժամկետ մարումը վերը նշված երեք տարբերակներից մեկով, տոկոսի հաշվարկը կատարվում է նույն ձևով և նվազեցվում է նույն չափով: Այսինքն՝ եթե վերը բերված օրինակում մարտ ամսին վարկառուն վճարում է 300.000 ՀՀ դրամ 100.000-ի փոխարեն, ապա վճարման օրվանից սկսած՝ տոկոսները պետք է հաշվարկվեն 700.000 ՀՀ դրամի նկատմամբ: Օրենքը չի տրամադրում համամասնորեն նվազեցման բանաձև կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող տոկոսից տարբերվող այլ վճարումների համար: Համամասնորեն բառը ինքնին ենթադրում է, որ սպասարկման վարձի նվազեցումը պետք է լինի այնպիսի հարաբերակցությամբ, ինչպիսի հարաբերակցությամբ նվազել է վարկի գումարը վարկառուի կողմից վաղաժամկետ վճարելու պայմաններում: «Համամասնորեն» բառը հայերենում նշանակում է «համամասն կերպով», իսկ «համամասն» բառը՝ «մասերի համապատասխանություն՝ համաչափություն ունեցող, համաչափ»[1]: Այսինքն՝ այն պահից սկսած, երբ վարկառուն վճարել է վարկի գումարը ժամկետից շուտ, պետք է գործի այն տրամաբանությունը, որ վարկի հիմնական գումարը եղել է այդքանով քիչ: Ընդ որում, այդ տրամաբանության կիրառումը պետք է տարածել միայն վարկային պարտավորության **հետագա ժամանակահատվածի** վրա՝ սկսած վաղաժամկետ մարումը կատարելու պահից մինչև վարկային պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը, քանի որ մինչ այդ պահը վարկառուն բանկից կամ վարկային կազմակերպությունից վերցրած է եղել այլ գումար, իսկ այդ պահից սկսած՝ կատարել է որոշակի վաղաժամկետ մարումներ, իսկ նման պարագայում Օրենքի ուժով փոխվում են վար-

[1] Տե՛ս Է. Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 802:

կառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսը և վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը: Այլ կերպ ասած՝ վարկի ամսական սպասարկման վճարի համամասնորեն նվազեցումը նշանակում է գտնել, թե ինչ տեսակարար կշիռ ունի վարկի վաղաժամկետ վճարման չափը վարկի սկզբնական գումարի նկատմամբ, և այդ չափի հարաբերակցությամբ նվազեցնել ամսական սպասարկման վճարը՝ սկսած վաղաժամկետ մարում կատարելու պահից՝ հետագա ժամանակահատվածի համար: Ընդ որում, կրեդիտավորման ընդհանուր ծախսի համամասնորեն նվազեցումը պետք է գործի վարկային պարտավորության վաղաժամկետ մարում կատարելու պահից մինչև այնքան ժամանակ, որքան կրեդիտը համարվում է այդ չափով վաղաժամկետ մարված, իսկ եթե, օրինակ, պայմանագրով սահմանված հերթական մասի մարման օրը վարկառուն չի վճարում որևէ գումար կամ վճարում է ավելի քիչ, քան սկզբնապես պայմանագիրը կնքելիս նախատեսված է եղել, ապա այդ դեպքում հաճախորդի վաղաժամկետ մարած գումարը հաշվվում է որպես այդ հերթական մարման գումար, և այդ պահից սկսած՝ վարկը չի համարվում վաղաժամկետ մարված համապատասխան չափով, և ամսական սպասարկման վճարը նորից համամասնորեն բարձրանում է: Այս ամենը եթե կիրառենք վերը բերված օրինակում՝ սահմանելով ամսական սպասարկման վարձ 10.000 ՀՀ դրամի չափով, կստանանք հետևյալ պատկերը. օրինակ՝ մարտ ամսին վարկառուն պետք է վճարի 100.000 դրամ վարկի հիմնական գումար և 10.000 ՀՀ դրամ ամսական սպասարկման վարձ և կատարում է վճարում 310.000 ՀՀ դրամի չափով, ստացվում է՝ վարկառուն հաջորդ հերթական վճարման ժամանակ ունի ընդհանուր ավել վճարած 200.000 ՀՀ դրամի չափով գումար, համամասնորեն նվազեցումը նշանակում է, որ հետագա ժամանակահատվածի համար ամսական սպասարկման վարձը պետք է այն հարաբերակցությամբ նվազեցվի, որքան որ 200.000-ի հարաբերակցությունն է սկզբնական վարկի գումարին՝ 1.000.000 ՀՀ դրամին: Բանաձևով արտահայտելով՝ կստանանք հետևյալ պատկերը.

$$E = (L - K) * i$$

որտեղ՝ E – փաստացի վճարման ենթակա սպասարկման վճար,

L – վարկի հիմնական գումար (օրինակում՝ 1,000,000 ՀՀ դրամ),

K – ընդհանուր վաղաժամկետ մարումների հանրագումար (օրինակում՝ 200.000 ՀՀ դրամ),

i – պայմանագրով սահմանված ամսական սպասարկման վճարի հարաբերակցությունը վարկի հիմնական (մայր) գումարի նկատմամբ (օրինակում՝ 1%):

Արդյունքում այս օրինակում հերթական հաջորդ ամսին՝ ապրիլին, վարկառուն պետք է վճարի 8.000 ՀՀ դրամ ամսական սպասարկման վճար:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ այս ոլորտում առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն, քանի որ սպառողական վարկի վաղաժամկետ մարման դեպքում բանկերի և այլ վարկային կազմակերպությունների կողմից կիրառվող կարգավորումը գրեթե բոլոր դեպքերում տարբերվում է միմյանցից: Այս պայմաններում անհրաժեշտ են որոշակի օրենսդրական փոփոխություններ և միատեսակ դատական պրակտիկայի ձևավորում:

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ДОСРОЧНОГО ПОГАШЕНИЯ ПОТРЕБИТЕЛЬСКОГО КРЕДИТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Рафик Григорян

Ассистент кафедры гражданского права ЕГУ,

кандидат юридических наук

Потребительский кредит широко распространен в Армении. Досрочное погашение кредита является одним из самых важных прав потребителей. Несмотря на то, что наш закон дает потребителям право на досрочное погашение, есть много вопросов, которые остаются невыясненными, что дает банкам возможность произвольно применять закон. В статье рассматривается, как кредитор должен располагать досрочно выплаченными деньгами, как уменьшать конкретные виды уплат, которые включаются в полную стоимость потребительского кредита, и какие пробелы есть в законодательстве Армении в этой сфере.

THE LEGAL PROBLEMS OF EARLY REPAYMENT OF CONSUMER CREDITS IN THE REPUBLIC OF ARMENIA

Rafik Grigoryan
Assistant at the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences

The consumer credit is widespread in Armenia. The early repayment of the credit is one of the most important rights of consumers. Though our legislation has given the right of early repayment to consumers but there are many issues that remain unclear which gives the banks the opportunity to construe the law arbitrarily. The author discusses how should the creditor replace the early repayed money, how to reduce the certain types of payments which are included in the total cost of the credit and what gaps have the legislation of Armenia in this sphere.

Բանալի բառեր - սպառողական վարկ, վաղաժամկետ մարում, կրեդիտավորման ընդհանուր ծախս
Ключевые слова: потребительский кредит, досрочное погашение, полная стоимость потребительского кредита
Key words: consumer credit, early repayment, total cost of the credit

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Արա Գաբուզյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնախնդիրը մինչ այժմ բուռն քննարկումների ու վեճերի տեղիք է տալիս: Սրա հետ կապված բազում հարցեր են առաջանում, որոնք այդպես էլ դեռևս վերջնական լուծում չեն ստացել և միանշանակ չեն ընկալվում: Ընդ որում, մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության բոլոր մոդելները, որոնք ներկայումս առկա են տարբեր երկրների քրեական օրենսդրություններում, բազմաթիվ հարցեր են առաջացնում ու բազմաթիվ թերություններ ունեն[1]: Սույն հոդվածի շրջանակներում չենք անդրադառնա իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության անհրաժեշտության հարցին: Պարզապես որպես իրողություն պետք է ընդունել այն, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսելը ժամանակի պարտադրանքն է և գոնե ներկայումս՝ անխուսափելի: Ուստի պարզապես ներկայացնենք ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում առկա լուծումները այն ակնկալիքով, որ հարցը շահագրգիռ և կառուցողական քննարկումների առարկա կդառնա, ինչը կնպաստի հնարավորինս օպտիմալ լուծումներ գտնելուն:

Առաջին հարցը, որը ծագում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հետ կապված, այն է, թե որ հանցանքների համար իրավաբանական անձը կարող է պատասխանատվութ-

[1] Տե՛ս Anca Iulia Pop, Criminal Liability of Corporations – Comparative Jurisprudence, Michigan State University College of Law, 2006, http://www.law.msu.edu/king/2006/2006_Pop.pdf, էջ 3:

յուն կրել: Սրա հետ կապված կա երեք մոտեցում: Առաջինի դեպքում իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր հանցանքների համար: Այս մոտեցումն առկա է Անգլիայում, Նիդեռլանդներում, Կանադայում և Ավստրալիայում: Անգլիայում ընկերությունները պատասխանատու են գրեթե բոլոր տեսակի հանցագործությունների համար: Ֆրանսիայի, Հոլանդիայի, Բելգիայի, Հունգարիայի և Գերմանիայի օրենսդիրները ներառել են ամենամեծ թվով հանցագործությունները: Չնայած ընդհանուր կանոնն այն է, որ ընկերությունները կարող են պատասխանատվության ենթարկվել գրեթե բոլոր հանցագործությունների համար, այնուամենայնիվ առկա են որոշ սահմանափակումներ, ուստի իրավաբանական անձինք չեն կարող պատասխանատվության ենթարկվել այն հանցագործությունների համար, որոնք պատժվում են միայն ազատազրկմամբ, այն է՝ սպանություն, պետական դավաճանություն և այլն: Նույն սկզբունքով ընկերությունները պատասխանատու չեն այն հանցագործությունների համար, որոնք հստակ բացառվում են օրենսդրի կողմից, կամ այն հանցագործությունների համար, որոնք սկզբունքորեն չեն կարող կատարվել ընկերության կողմից: Օրինակ՝ ընկերությունը չի կարող կատարել այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են՝ երկկնությունը, արնապղծությունը, սուտ վկայությունը կամ բռնաբարությունը, թեև որոշ հեղինակներ պնդում են, որ ընկերությունները կարող են հրահրել նման հանցանքների կատարումը:

Երկրորդ մոտեցումը ենթադրում է, որ իրավաբանական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ օրենքը կամ կանոնակարգը հստակ սահմանում է նման պատասխանատվություն: Որոշ մասնագետներ գտնում են, որ այս համակարգը համապարփակ չէ: Փորձելով բացառել այն հանցագործությունները, որ ընկերությունները չեն կարող կատարել (օրինակ՝ Ֆրանսիայի օրենսդիրները) անզգուշորեն բաց են թողել որոշ աշխատանքային և տնտեսական հանցագործություններ[1]:

Երրորդը թվարկման մոդելն է, երբ օրենքում տրվում է այն հանցագործությունների ցանկը, որոնց համար իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Չեխիայի, Իտալիայի,

[1] Տե՛ս Anca Iulia Pop, նշվ. աշխ., էջ 23:

Լեհաստանի, Պորտուգալիայի և Իսպանիայի օրենսդիրները նախընտրել են սահմանափակել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը համապատասխան ցանկերին հղում անելու միջոցով: Թվարկման մոտեցումն արտացոլվել է նաև ամերիկյան օրենսդրության մեջ: ԱՄՆ պատիժների նշանակման ուղենիշներում ներառված է իրավախախտումների ընդարձակ ցանկ, որոնք կարող են կատարվել կազմակերպությունների կողմից[1]: Ըստ էության, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ներառում է բոլոր այն հանցանքները, որոնք կարող են կատարվել անհատների կողմից: Ուստի ընկերությունը կարող է դատապարտվել գողության, կեղծարարության, կաշառակերության, սպանության կամ ոչ դիտավորյալ սպանության (անզգուշությամբ մահ պատճառելու) համար: Ամերիկյան մոդելի առավելությունն այն է, որ թույլ է տալիս խուսափել շփոթությունից և տարբեր օրենքներում երկար փնտրտուքներից: Ուստի ամերիկյան մոդելը բավարարում է քրեական իրավունքի պարզության, կանխատեսելիության, արդյունավետության և հետևողականության ընդհանուր սկզբունքները:

ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը նույնպես որդեգրել է թվարկման մոդելը: Նախագծի 127-րդ հոդվածում թվարկվում են այն հանցագործությունները, որոնց համար իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Հանցագործությունները թվարկելիս հիմք են ընդունվել ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, այն համաձայնագրերը, որոնք որոշակի հանցատեսակների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության առաջարկ են պարունակում, ինչպես նաև այն հանցագործությունները, որոնք սկզբունքորեն կարող են կատարվել ի շահ իրավաբանական անձի:

Մյուս կարևոր հարցը, որը ծագում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հետ կապված, այն է, թե երբ է իրավաբանական անձը ենթակա քրեական պատասխանատվության, ինչ պայմաններ են անհրաժեշտ դրա համար, իսկ ավելի պարզ ասած՝ երբ է հանցանքը համարվում իրավաբանական անձի կողմից կատարված: Ճիշտն ասած, նախագծի հեղինակները փորձել են խուսափել վերջին ձևակերպումից: Մոտեցումն այն է, որ հանցանքը կատարում է ֆիզիկական անձը, իսկ իրավաբանական անձը հանցանք

[1] Տե՛ս U. S. Sentencing Guidelines Manual, 18 U.S.C.S. Appx. § 8A1.1 (2005):

չի կատարում, հանցագործության սուբյեկտ չէ, այլ քրեական պատասխանատվության սուբյեկտ է և պատասխանատվություն է կրում իր ներկայացուցչի կողմից կատարած հանցանքի համար:

Պետք է նշել, որ ներկայումս առկա են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության բազմաթիվ մոդելներ, որոնցից ոչ մեկը միանշանակ չի ընկալվում. բոլորն էլ ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության տարածված մոդելներից է նույնականացման մոդելը, որի համաձայն՝ ընկերության բարձրաստիճան պաշտոնյաները գործում են ոչ թե որպես ֆիզիկական, այլ որպես իրավաբանական անձ[1]: Հետևաբար բարձրաստիճան պաշտոնյաների հանցավոր մտադրությունը և հանցավոր արարքը ինքնաբերաբար համարվում են իրավաբանական անձի հանցավոր մտադրություն և հանցավոր արարք: Այս տեսության համաձայն՝ աշխատակիցը պետք է գործի իրավաբանական անձի անունից: Դա նշանակում է, որ աշխատակիցը պետք է գործի իրավաբանական անձի շահին ծառայելու մտադրությամբ, սակայն պարտադիր չէ, որ ընկերությունը, ըստ էության, օգուտ ունենա աշխատակցի արարքից: Եթե աշխատակիցը գործել է՝ ելնելով միայն իր կամ երրորդ անձանց շահերից, ընկերությունը պատասխանատվություն չի կրում: Եթե աշխատակիցը գործել է՝ ելնելով իր և իրավաբանական անձի շահերից, ընկերությունը ենթարկվում է քրեական պատասխանատվության: Այս տեսությունը քննադատվում է այն բանի համար, որ կիրառելի է միայն փոքր ընկերությունների կապակցությամբ, որտեղ միայն բարձրաստիճան ղեկավարներն են ներգրավվում որոշումների կայացման գործընթացում[2]:

Նույնականացման մոդելի սահմանափակումը և թերությունը վերացնելու նպատակով որոշ երկրներում կյանքի կոչվեց այսպես կոչված ընդլայնված նույնականացման մոդելը, որի դեպքում, բացի նույնականացման տեսությամբ սահմանված պատասխանատվութ-

[1] Տե՛ս Anca Iulia Pop, նշվ. աշխ., էջ 46:

[2] Տե՛ս **Mark Piet, Radha Ivory**, Corporate Criminal Liability Emergence, Convergence, and Risk Part I The Analytical Framework, Chapter 1 Emergence and Convergence: Corporate Criminal Liability Principles in Overview, Emergence: An Introduction to Corporate Criminal Liability Principles, 2011, supra n. 94, էջ 24-25:

յան պայմաններից, իրավաբանական անձը կարող է պատասխանատվության ենթարկվել նաև այն դեպքում, երբ դրա ղեկավար մարմինները պատշաճ հսկողություն չեն իրականացնում իրենց աշխատակիցների նկատմամբ, ինչը հնարավորություն է տալիս նրանց հանցանք կատարելու: Իհարկե, խոսքն այնպիսի հանցանքների մասին է, որոնք կապված են ընկերության աշխատակցի ծառայողական գործառույթների հետ:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հաջորդ տարածված մոդելը անուղղակի պատասխանատվության մոդելն է, համաձայն որի՝ իրավաբանական անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել իր յուրաքանչյուր աշխատակցի կողմից կատարված հանցանքի համար, եթե նա հանցանքը կատարել է իր լիազորությունների շրջանակում և ի շահ իրավաբանական անձի: Փաստորեն իրավաբանական անձի կողմից գործող անհատի հանցավոր արարքը և հանցավոր մտադրությունը մեխանիկորեն վերագրվում են իրավաբանական անձին: Ըստ էության իրավաբանական անձի ղեկավարի կամ ղեկավար մարմնի գիտությամբ կամ դրդմամբ կատարված հանցանքը վերագրվում է իրավաբանական անձին՝ պայմանով, որ այդ հանցանքը կատարված լինի ի շահ իրավաբանական անձի: Ընդ որում, պարտադիր չէ, որ անհատը հանցանքը կատարի՝ միայն իրավաբանական անձի շահերից ելնելով. նույնիսկ խառը մոտիվացիայի դեպքում, երբ անհատը հանցանքը կատարում է՝ թե՛ իր և թե՛ իրավաբանական անձի շահերից ելնելով, իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության[1]: Անուղղակի պատասխանատվության սկզբունքը թույլ է տալիս իրավաբանական անձանց վերագրել դրա աշխատողների կողմից իրականացված հանցագործությունները՝ անկախ նրանց անհատական գործառույթներից, կազմակերպությունում նրանց հիերարխիկ դիրքից կամ անհատների իրավախախտումները կանխարգելելու կազմակերպության փորձերից:[2]

---

[1] Տե՛ս **Cristina De Maglie**, Models of Corporate Criminal Liability in Comparative Law, 4 Wash, U. Glob. Stud. L. Rev. 547 (2005), http://digitalcommons.law.wustl.edu/globalstudies/vol4/iss3/4 /:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 22-23:

Ներկայումս իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության տարածված մոդելներից է կազմակերպականը, որի համաձայն՝ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը սահմանվում է՝ հիմք ընդունելով դրա կորպորատիվ մշակույթի թերությունները: Կազմակերպական մոդելը շեշտը դնում է կազմակերպության կառուցվածքի, գործելակերպի և քաղաքականության վրա: Կազմակերպական (ամբողջական) մոդելներում հաշվի են առնվում կազմակերպության քաղաքականությունը, կազմակերպական մշակույթը, կանխարգելիչ գործունեությունը: Կազմակերպական քաղաքականության մոդելի դեպքում կազմակերպության մեղավորությունը կարող է ծագել կազմակերպության ցանկացած քաղաքականության ներքո, որը միտումնավոր կամ կանխատեսելիորեն հնարավորություն է տալիս անօրինական արարքներ կատարելու: Նախ՝ իրավաբանական անձանց կողմից հանցանք կատարելը հնարավոր է, եթե կազմակերպության քաղաքականությունն ինքնին անօրինական է, քանի որ այն պարտադրում կամ թույլատրում է հանցավոր վարք: Երկրորդ՝ անօրինական գործողություններ կարող են տեղի ունենալ, եթե քաղաքականությունը և գործելակերպը, օրինական լինելով հանդերձ, խրախուսում են կազմակերպությունների հանցանքները: Կազմակերպական մշակույթի մոդելի ներքո մեղավորության փաստի արձանագրումը հենվում է այն ենթադրության վրա, որ ընկերության բնույթը իր գործակալներին թույլ է տալիս հանցանքներ գործել: Ինչ վերաբերում է կանխարգելիչ գործունեությանը, ապա պատասխանատվության հիմք է դառնում այն, որ կազմակերպությունը չի կարողանում ներդնել և գործարկել հսկողության ներքին ադեկվատ համակարգ, որը կկանխեր հանցանքների կատարումը: Որոշ մասնագետներ նախընտրում են կազմակերպական մոդելը, քանի որ այն կազմակերպությանը մեղք չի վերագրում՝ անհատի արարքներից ելնելով, այլ շեշտը դնում է կազմակերպության կառուցվածքի, մշակույթի և քաղաքականության վրա: Այս առումով կազմակերպության մեղավորության պատշաճ մեկնաբանության համար մեղքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ գործոններ՝ արդյոք կազմակերպական մշակույթը հանդուրժել է իրավախախտում կատարելը, արդյոք կազմակերպությունը չի իրականացրել համապատասխանության ծրագիրը կամ չի ցուցաբերել պատշաճ ժրաջանություն, որպեսզի կանխի իրավախախտումը,

արդյոք կազմակերպությունը չի կարողացել միջոցներ ձեռք առնել ի պատասխան իրավախախտումը կատարելուն, որպեսզի կանխի ապագայում նման իրավախախտումների կատարումը:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնավորմանը, ապա պետք է նշել, որ այստեղ որդեգրվել է խառը մոդել, որում առկա են նշված բոլոր մոդելների տարրերը: Սա, մեր կարծիքով, թույլ է տվել մանրամասն և ընդգրկուն կանոնակարգել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության պայմանները և ներառել բոլոր մոդելների դրական կողմերը: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի 128-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե.

1) հանցանքը կատարվել է այն ֆիզիկական անձի արարքով, որը օրենքի, այլ իրավական ակտի, պայմանագրի, կանոնադրության, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա լիազորված է ներկայացնել իրավաբանական անձին կամ գործել նրա անունից և արարքը կատարել է՝ այդ լիազորությունն իրականացնելով,

2) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի ծառայողի կողմից՝ կապված իր ծառայողական գործունեության հետ, եթե հանցանքի կատարումը հնարավոր է դարձել տվյալ կազմակերպությունում ներքին վերահսկողության, իր աշխատակիցների կողմից հանցանքների կատարումը կանխարգելելու մեխանիզմների բացակայության կամ դրանց անկատարության հետևանքով,

3) հանցանքը կատարվել է ի շահ իրավաբանական անձի՝ այն անձի կողմից, որը մասնակցություն ունի նշված կազմակերպության կառավարման կամ վերահսկող մարմիններում,

4) հանցանքը կատարվել է ի շահ իրավաբանական անձի ՝ այն անձի կողմից, որը օրենքի կամ այլ իրավական ակտի, պայմանագրի ուժով, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա կամ տվյալ կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով իրավունք ունի նշված կազմակերպության համար պարտադիր ցուցումներ տալ կամ այլ ձևով ազդել կազմակերպության գործունեության կամ դրա որոշումների վրա,

5) հանցանքը կատարվել է այլ անձի կողմից՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված անձի գիտությամբ կամ դրդմամբ՝ ի շահ նշված կազմակերպության:

Ինչպես նկատում ենք, հոդվածի առաջին մասի առաջին և երկրորդ կետերում նախատեսված դեպքերը կազմակերպական և ընդլայնված նույնականացման մոդելի, երրորդ և չորրորդ կետերում նախատեսվածները՝ նույնականացման և անուղղակի պատասխանատվության մոդելի, իսկ հինգերորդ կետով նախատեսվածը՝ անուղղակի պատասխանատվության մոդելի դրսևորումներ են:

Հոդված 128-ի երկրորդ մասում բացահայտվում է «ի շահ իրավաբանական աձի» հասկացության բովանդակությունը: Ըստ դրա՝ հանցանքը համարվում է ի շահ իրավաբանական անձի կատարված, եթե հանցագործության նպատակների մեջ է եղել նշված կազմակերպության համար գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում՝ եկամուտն ավելացնելը, ծախսերը կամ կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը:

Հոդվածի երրորդ մասում ձևակերպվել է մի կարևոր դրույթ, համաձայն որի՝ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Եթե հնարավոր չի եղել բացահայտել կամ նույնականացնել հանցանք կատարած ֆիզիկական անձին, ապա դա չի բացառում կատարված հանցանքի համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Վերջին դրույթը նկատի ունի այն դեպքերը, երբ հանցագործության փաստն առկա է, սակայն իրավաբանական անձի բարդ կառուցվածքի, դրա աշխատակիցների լիազորությունների ոչ հստակ սահմանման կամ այլ հանգամանքների բերումով հնարավոր չի լինում պարզել կոնկրետ մեղավորին: Պետք է նշել, որ այս մոտեցումը ներկայումս առկա է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսող երկրների մեծ մասում, ինչը, մեր կարծիքով, ավելի արդյունավետ է դարձնում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը և զրկում է դրանց՝ տարբեր հնարքների միջոցով պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունից:

Ամփոփելով ասվածը՝ այնուամենայնիվ պետք է փաստել, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը, որը նորույթ է մեր իրավական համակարգում, միանշանակ չի ընկալվում ու ընդունվում, կապված է որոշակի բարդությունների հետ, և միայն գործնական կիրառության ընթացքում կարող են բացահայտվել դրա արդյունավետությունը կամ անարդյունավետությունը, կանոնակարգման առավելություններն ու թերությունները:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РА

Ара Габузян

Заведующий кафедрой уголовного права ЕГУ,

доктор юридических наук, профессор

В статье обсуждаются некоторые аспекты уголовной ответственности юридических лиц по проекту нового уголовного кодекса РА. Анализируя модели уголовной ответственности юридических лиц по законодательству некоторых зарубежных стран, мы пришли к выводу, что в проекте нового уголовного кодекса РА предусмотрена смешанная модель уголовной ответственности юридических лиц: в некоторых случаях модель расширенной идентификации, в других – модели организационной и косвенной ответственности. По нашему мнению, это позволит устранить недостатки отдельно взятой модели уголовной ответственности юридических лиц и обеспечит эффективность ответственности.

SOME ISSUES ON ESTABLISHING CRIMINAL LIABILITY OF LEGAL ENTITIES BY RA DRAFT NEW CRIMINAL CODE

Ara Gabuzyan
Head of the YSU Chair of Criminal Law,
Doctor of Legal Sciences, Professor

Some issues on establishment of criminal liability of legal entities by RA draft new criminal code are discussed in the article presented. The author analyses the models of criminal liability of legal entities provided by the legislation of some forein countries and concludes that mixed model of criminal liability of legal entities is foreseen by RA draft new criminal code. The mixed model in armenian cas4e sometimes involves the model of extended identification, in the other cases – models of governance and indirect responsibility. The author`s point of view is that mixed model of criminal liability of legal entities will allow skipping deficiencies of individual models of criminal liability of legal entities and will ensure the efficiency of responsibility.

Բանալի բառեր – իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, նույնականացման մոդել, ընդլայնված նույնականացման մոդել, կազմակերպական մոդել, անուղղակի պատասխանատվության մոդել, հանցանքների թվարկման մոդել
Ключевые слова: уголовная ответственность юридических лиц, модель идентификации, модель расширенной идентификации, организационная модель, модель косвенной ответственности, модель перечисления преступлений
Key words: criminal liability of legal entities, identification model, extended identification model, governance model, indirect responsibility model, cumulative model

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

Աննա Մարգարյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Անչափահասների հանցավորության վիճակն ու միտումները գնահատելու առումով կարևոր նշանակություն ունի ոչ միայն անչափահասների հանցավոր վարքագծի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության, այլև նրանց կողմից դրսևորվող շեղվող վարքագծի վերաբերյալ առկա այլընտրանքային տեղեկատվության ուսումնասիրությունը: Որպես այդպիսիք հանդես են գալիս անչափահասների շեղվող վարքագծի բացահայտման նպատակով իրականացված ուսումնասիրությունները:

Նախ հստակեցման կարիք ունի «շեղվող վարքագիծ» հասկացությունը, քանի որ կրիմինալոգիական գրականության մեջ կարելի է հանդիպել «դեվիանտ», «դելինկվենտ», «հանցավոր» վարքագիծ բնորոշումներին, և անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե ինչ երևույթների մասին է խոսքը:

Հանցավոր վարքագծի բնորոշումը լուրջ խնդիր չի ստեղծում, քանի որ դրա ներքո հասկացվում է քրեական պատասխանատվության տարիքի հասած, մեղսունակ անչափահասի կողմից քրեական օրենսգրքով արգելված արարքի մեղավորությամբ կատարումը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 24-ի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը»: Միևնույն ժամանակ նույն հոդվածի 2-րդ մասում թվարկված են այն հանցավոր արարքները, որոնց կատարման դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության 14 տարեկանից, մասնավորապես սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112-116-րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), գողության (177-րդ հոդված), կողոպուտի (176-րդ հոդված), շորթման (182-րդ հոդված),

առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու (183-րդ հոդված), ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու (185-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր), զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու (238-րդ հոդված), թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու (269-րդ հոդված), տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու (246-րդ հոդված), խուլիգանության (258-րդ հոդված) համար:

Ներկայացված հանցավոր արարքների ցանկը սպառիչ է, և այն, ըստ էության, պետության կողմից դրսևորված քաղաքականության, պետական կամքի արդյունք է, քանի որ նշված ցանկում տեղ գտած արարքների շրջանակը կարող է ժամանակի ընթացքում փոփոխության ենթարկվել: Ընդ որում, նույնը կարելի է ասել նաև քրեական պատասխանատվության տարիքի մասին:

Պատահական չէ, որ չկա որևէ միջազգային իրավական փաստաթուղթ, որում հստակ սահմանված լինի քրեական պատասխանատվության տարիքը. միակ պահանջը, որը միջազգայնորեն ամրագրված է, վերաբերում է այդ տարիքը շատ ցածր չսահմանելուն և օրենսդրական մակարդակում ամրագրելուն (Պեկինյան կանոններ, հոդված 4):

Արդյունքում տարբեր երկրների քրեական օրենսդրությունները համեմատելիս կարելի է հանդիպել քրեական պատասխանատվության տարիքի սահմանման բևեռայնորեն իրարից տարբերվող մոտեցումների, մասնավորապես ԱՄՆ-ի տարբեր նահանգներում երեխան քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել սկսած 6, Եգիպտոսում՝ 7, Շոտլանդիայում՝ 8, Շվեյցարիայում՝ 10 (ընդ որում, մինչ 2006 թ. այս երկրում նույնպես երեխաները ենթակա էին քրեական պատասխանատվության 7 տարեկանից), Անգլիայում, Հյուսիսային Իռլանդիայում՝ 10, Իռլանդիայում, Պորտուգալիայում, Հունաստանում, Թուրքիայում՝ 12, Ֆրանսիայում՝ 13, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Իսպանիայում՝ 14, Դանիայում,

Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում՝ 15, Բելգիայում, Լյուքսեմբուրգում՝ 18 տարեկանից[1]:

Քրեական պատասխանատվության տարիքի սահմանումը ունի ոչ միայն քրեաիրավական, այլև կրիմինալոգիական նշանակություն. մի կողմից՝ այն կարևոր նշանակություն ունի տարբեր երկրներում անչափահասների հանցավորության տվյալները համեմատելիս, մյուս կողմից՝ այն սահմանում է երեխայի կողմից իրավախախտ վարքագծի դրսևորման պարագայում պետական արձագանքման միջոցների կիրառման սահմանները, օրինակ՝ պետությունը իրավունք չունի քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին ենթարկել քրեական պատասխանատվության, և եթե պետությունը օրենսդրական մակարդակով չի սահմանում քննարկվող կատեգորիայի անձանց նկատմամբ պետական ներգործության այլ ընթացակարգեր, ապա գործնականում, ինչպես ՀՀ պարագայում է, նման վարքագիծ դրսևորած երեխաների հետ աշխատանքը առավելապես ընթանում է չկանոնակարգված ձևով, կրում է ձևական բնույթ և ոչ միշտ է արդյունավետ լինում:

Եթե անչափահասի հանցավոր վարքագծի բնորոշումը մեծ դժվարություններ չի առաջացնում, ապա նույնը չի կարելի ասել դեվիանտ վարքագծի բնորոշման առումով: Կրիմինալոգիական, հոգեբանական, մանկավարժական գրականության մեջ կարելի է հանդիպել դեվիանտ վարքագծի տարբեր բնորոշումների. մի դեպքում՝ այն բնորոշվում է որպես օրենքներում, սոցիալական դիրքորոշումներում, կանոններում ու բարոյական նորմերում ամրագրում ստացած հասարակական պահանջներից շեղվող արարքների կատարում, որն առավելապես պայմանավորված է հասարակությունում իր տեղի վերաբերյալ անձի սխալ պատկերացմամբ[2], մյուս դեպքում՝ որպես սոցիալական և իրավական սանկցիաների հանգեցնող հասարակական նորմերից շեղվող վարքագիծ՝ պայմանավորված ոչ ադեկ-

[1] Տե՛ս **Muncie J**. The 'Punitive Turn' in Juvenile Justice: Cultures of control and rights compliance in Western Europe and the USA. Jouth Justice 2008, Volume 8, Issue 2, էջ 107-121; **D ü n k e l F.** Juvenile Justice Systems in Europe – Reform developments between justice, welfare and 'new punitiveness'. Kriminologijos studijos 2014/1 ; էջ 43-44:

[2] Տե՛ս **Клейберг Ю. А**. Психология девиантного поведения: М.: Просвещение, 2003, էջ 154:

վատ սոցիալիզացիայով, հասարակության արժեքներն ու սոցիալական նորմերի՝ մանկապատանեկան տարիքում ոչ բավարար չափով յուրացմամբ[1]:

Դեվիանտ վարքագիծը նաև բնութագրվում է որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, որը դրսևորվում է կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ հասարակությունում ընդունված միջանձնային փոխհարաբերությունների նորմերից շեղվող վարքագծով[2]: Է. Ռալնիկովան անձի դեվիանտ վարքագիծը դիտարկում է որպես հասարակություն ընդունված նորմերից շեղվող արարքի կատարում՝ պայմանավորված սեփական վարքագծի նկատմամբ բարոյագեղագիտական վերահսկողության բացակայությամբ[3]:

Դեվիանտ վարքագծի բնորոշման առավել լայն տարածում ստացած մոտեցման համաձայն՝ այն հասարակությունում ընդունված իրավական, բարոյական նորմերից ու կանոններից շեղված վարքագիծն է՝ պայմանավորված ինչպես երեխայի անձնային հատկանիշներով, այնպես էլ նրա դաստիարակության և զարգացման գործընթացում սոցիալական, ընտանեկան, կրթական գործոններով, շփման ոլորտով[4]: Ինչ վերաբերում է դելինկվենտ վարքագծին, ապա այն ավելի նեղ ընդգրկում ունի, դրսևորվում է իրավական նորմերի խախտմամբ և փաստացի նույնանում է իրավախախտ վարքագծի հետ[5]:

---

[1] Տե՛ս **Менделевич В. Д.,** Психология девиантного поведения. СПб.: Речь, 2005, էջ 445:

[2] Տե՛ս **Кондрашенко В. П.,** Девиантное поведение у подростка: социально - психологические и психиатрические аспекты. Минск, 1988, էջ 77:

[3] Տե՛ս **Ральникова Л. А.,** Девиантное поведение несовершеннолетних: причины и проявления. Северо-Кавказский психологический вестник. № 3 (13), 2015, էջ 34-41:

[4] Տե՛ս **Паатова М. Э., Бегидова С. Н., Хакунов Н. Х.,** Теоретико-методологический анализ социально- педагогических феноменов «девиантное поведение» и «делинквентное поведение» подростков. Вестник Адыгейского государственного университета. Серия 3: Педагогика и психология, № 1, 2012, էջ 96-104:

[5] Տե՛ս **Миннегалиев М. М.,** Типология и сущность понятия «девиантное поведение» в воспитательно-профилактической работе с несовершеннолетними**.** Вестник Башкирского университета, Т. 17, № 3, 2012, էջ 1416-1422:

Պետք է փաստել, որ բոլոր հեղինակները համակարծիք են մի հարցում. դեվիանտ կամ շեղվող վարքագիծը հասարակությունում ընդունված իրավական, բարոյական, համակեցության նորմերից ու կանոններից շեղվող վարքագիծն է, որի հիմքում ընկած են անձի սոցիալիզացիայի խնդիրները: Ընդ որում, դելինկվենտ և հանցավոր վարքագծերը նույնպես շեղվող վարքագծի տարատեսակ են. եթե առաջինը նույնանում է իրավախախտ վարքագծի հետ, ապա հանցավոր վարքագիծը շեղվող վարքագծի առավել վտանգավոր դրսևորումն է:

Ակնհայտ է, որ շեղվող վարքագծի ոչ բոլոր դրսևորումներն են հանգեցնում պատասխանատվության, սակայն կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ անչափահասի շեղվող վարքագիծը անտեսելը, դրա պատճառ հանդիսացող երևույթների բացասական ազդեցությունը չվերացնելը հետագայում հանգեցնում են այդ անձի կողմից հանցավոր վարքագծի դրսևորման[1]: Ի. Ուպորովի կարծիքով՝ անչափահասների հանցավորությունը ուղղակիորեն կոռելյացիայի մեջ է գտնվում շեղվող վարքագծի հետ[2]:

ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի ուսումնասիրության նպատակով 2006 և 2014 թթ. 12-17 տարեկան դպրոցականների շրջանում մեր կողմից անցկացվեցին ուսումնասիրություններ՝ ուղղված նրանց շեղվող վարքագծի և վիկտիմիզացիայի իրական վիճակի բացահայտմանը: Այդ ուսումնասիրությունները Կրիմինոլոգների եվրոպական միության նախաձեռնությամբ և աջակցությամբ կենսագործված, եվրոպացի գործընկերների հետ համատեղ մշակված հարցաթերթով 25-ից ավելի պետություններում իրականացված ISRD-2 և ISRD-3 հետազոտությունների մի մասն էին կազմում, ինչն էլ հնա-

[1] Տե՛ս **Weis J. G., Sakumoto K., Sederstrom J, Zeiss C.,** Jurisdiction and the elusive status offender: A comparison of involvement in delinquent behavior and status offences. Washington, 1980, էջ 96; **Kobrin S., Hellum F., Peterson J.,** Offence patterns of status offenders. Critical Issues in Juvenile Delinquency, 1980, էջ 211; **Shelden R.,Horwath J., Tracy S.,** Do status offenders get worse? Some clarifications on the question of escalation. Crime and delinquency 35, 1989, էջ 214-215:

[2] Տե՛ս **Упоров И. В.,** Девиантное поведение несовершеннолетних как предпосылка совершения ими преступных деяний. Общество и право, № 4 (41), 2012, էջ 312:

րավորություն ընձեռեց ՀՀ-ում ստացված արդյունքները համադրել այլ երկրներում ստացված արդյունքների հետ:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված էին հարցեր, որոնք նպատակ ունեին վեր հանել ինչպես անչափահասների շրջանում առավել հաճախ տեղ գտնող շեղվող վարքագծի դրսևորումները (օրինակ՝ ալկոհոլի գործածումը), այնպես էլ քրեական օրենքով արգելված արարքների կատարման կամ դրանցից տուժելու հաճախականությունը:

Կատարված ուսումնասիրությունը վեր հանեց մի ուշագրավ դիտարկում. իրենց կյանքի ընթացքում երբևիցե ալկոհոլ գործածած անչափահասների քանակը ՀՀ-ում շատ ավելի մեծ է, քան եվրոպական բազմաթիվ երկրներում: Մասնավորապես ISRD-2 հետազոտության շրջանակներում 66.3% ցուցանիշով ՀՀ-ն հայտնվել էր ալկոհոլի գործածման առավելագույն ցուցանիշներ արձանագրած երկրների հնգյակում՝ առաջ անցնելով ալկոհոլի գործածման մեծ ծավալներ ունեցող ՌԴ-ից և Ֆինլանդիայից, իրենից առջև թողնելով միայն Էստոնիային, Հունգարիային, Չեխիային և Լիտվային[1]: 2014 թ. ISRD-3 տվյալների համաձայն՝ իրենց կյանքի ընթացքում երբևէ ալկոհոլ գործածած անչափահասների քանակը նվազել էր՝ դառնալով 45.6%:

ISRD-2 ուսումնասիրության արդյունքները, սակայն, վկայում են, որ թեև ՀՀ-ում մեծ թիվ են կազմել իրենց կյանքում երբևէ ալկոհոլ գործածած անչափահասները, սակայն հարբածության վիճակում հայտնվածների թիվը շատ փոքր է եղել՝ 6.5%, մինչդեռ Էստոնիայում այդ ցուցանիշը եղել է շուրջ 49%:

Միաժամանակ ՀՀ անչափահասների կողմից ալկոհոլի գործածումը հաճախակի բնույթ չի կրել. վերջին մեկ ամսվա ընթացքում ալկոհոլի գործածման հաճախականության ցուցանիշով ՀՀ անչափահասները 25 երկրների տվյալների համեմատության ժամանակ հայտնվել են վերջին հնգյակում. ալկոհոլի գործածման ավելի ցածր

[1] Տե՛ս **Steketee M., Jonkman H., Berten H., Vettenburg N**., Alcohol use Among Adolescents in Europe, Utrecht 2013, էջ 59, http://www.verwey-jonker.nl:

հաճախականություն գրանցվել է միայն Իսլանդիայում, Ֆրանսիայում և Բոսնիա-Հերցեգովինայում[1]:

Թեև բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ վկայում են, որ ալկոհոլի և թմրանյութի գործածումը կոռելացված է անչափահասների շեղվող՝ հատկապես բռնի վարքագծի դրսևորման հետ[2], սակայն ՀՀ-ում այն նույն դետերմինացնող ազդեցությունը չունի, ինչի վկայությունը նաև ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվությունն է: Այդ տեղեկատվության համաձայն՝ 2003 թ. հանցանք կատարած անչափահասների 3.9%-ը հանցանքի կատարման պահին գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ, սակայն հետագա տարիներին նշված ցուցանիշը կայուն նվազում է արձանագրել՝ 2005 թ. եղել է 3.1%, 2007 թ.՝ 1.6%, 2009 թ.՝ 1.5%, 2011 թ.՝ 1.3%, 2013 և 2015 թթ.՝ 0%:

Պետք է նշել, սակայն, որ անչափահասների հանցավոր վարքագծում ալկոհոլի գործոնի ցածր դերակատարությունը ոչ թե պետական արդյունավետ քաղաքականության, այլ թեև թուլացող, սակայն դեռևս առկա ընտանեկան, սոցիալական հսկողության արդյունք է:

ՀՀ-ում անչափահասների կողմից ալկոհոլի գործածման արգելք սահմանված է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 178-ով, որով պատասխանատվություն է սահմանվում հասարակական վայրերում մինչև 16 տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալու, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելու համար: Ընդ որում, պատասխանատվությունը նախատեսված է ոչ թե երեխաների, այլ նրանց ծնողների համար: Միաժամանակ նույն օրենսգրքի հոդված 158-ը 50.000 դրամի չափով տուգանք է սահմանում 18 տարին չլրացած անձանց ծխա-

---

[1] Տե՛ս **Steketee M., Jonkman H., Berten H., Vettenburg N**., Alcohol use Among Adolescents in Europe, Utrecht 2013, էջ 61, http://www.verwey-jonker.nl:

[2] Տե՛ս **Barnes G., Welte J., Hoffmann J.** Relationship of Alcohol Use to Delinquency and Illicit Drug Use in Adolescents: Gender, Age, and Racial/Ethnic Differences. Journal of drug issues 2002, 32(1), էջ 153-178; **Зайко Т.М.** Психолого-криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. В книге: Меры борьбы с преступностью несовершеннолетних и молодежи: правовой и психолого-криминологический аспекты Тамбов, 2017, էջ 29:

խոտ, ալկոհոլային խմիչքներ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելու համար, իսկ 100.000 դրամի չափով տուգանք՝ նրանց նշված առարկաների և նյութերի վաճառքին ներգրավելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 166.1-ը պատասխանատվություն է սահմանում 18 տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը ներգրավելու համար: Այնուհանդերձ, ՀՀ դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ վերջին 10 տարիների ընթացքում նշված հոդվածով ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

Ներկայացված օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ ՀՀ-ում, ինչպես և Իտալիայում է, սահմանված չէ նվազագույն տարիք, որից սկսած երեխան կարող է ալկոհոլ գործածել. սահմանափակումները վերաբերում են մինչև 16 տարին լրանալը հասարակական վայրում ալկոհոլի գործածմանը, ինչպես նաև հասարակական վայրում հարբած վիճակում երևալուն:

Մինչդեռ Եվրոպական բազմաթիվ երկրներում՝ Դանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, որպես ալկոհոլի գործածման նվազագույն շեմ դիտվում է 15 տարեկանը, Շվեյցարիայում՝ 15 տարեկանը գարեջրի, գինու, իսկ 18 տարեկանը՝ այլ ալկոհոլի գործածման համար, Չեխիայում, ՌԴ-ում, Ֆրանսիայում, Հունգարիայում՝ 18 տարեկանը, Իսլանդիայում, Շվեդիայում՝ 20 տարեկանը: Ալկոհոլի իրացման պարագայում ևս պետությունները սահմանում են տարբեր տարիքային շեմեր, օրինակ՝ Բելգիայում, Իսպանիայում որպես այդպիսին սահմանվում է 16 տարեկանը, Գերմանիայում՝ 16 տարեկանը գարեջրի և գինու, իսկ 18 տարեկանը՝ ալկոհոլային այլ խմիչքների ձեռք բերման համար, Նորվեգիայում, Սլովենիայում, ՌԴ-ում, Ֆրանսիայում՝ 18 տարեկանը, Շվեդիայում՝ 20 տարեկանը[1]:

Թեև ՀՀ-ն հայտնի է ալկոհոլի, հատկապես գինու և կոնյակի արտադրությամբ, սակայն ալկոհոլի անվերահսկելի գործածման առու-

[1] Տե՛ս **Van den Toorn J., Steketee M., Jonkman H.,** Paper on Policies toward Alcohol among Juveniles in Europe. NL, 2012, էջ 7:

մով այն երբեք առաջատար դիրքեր չի զբաղեցրել: Դրա պատճառը, թերևս, ոգելից խմիչքների գործածման յուրահատուկ մշակույթն է (ալկոհոլի գործածումը զուգակցելով սննդի ընդունման, կենացների հետ), ինչպես նաև հարբած վիճակում հասարակության մեջ հայտնվելը, ինքնակառավարումը կորցնելը հասարակության անդամների մեծամասնության կողմից ամոթալի երևույթ դիտելը:

Այնուհանդերձ, վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում նկատվում է ալկոհոլի գործածման հաճախականության աճ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալների վերլուծությունը վկայում է՝ 2003 թ. համեմատ 2015 թ. «հարբեցողություն, հարբեցողային փսիխոզ» ախտորոշում ունեցող առաջնակի հիվանդների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ 100.000 բնակչի հաշվով գործակիցը 2003 թ. գրանցված 6.6-ից 2015 թ. դարձել է 12.6[1]:

Այս բացասական փոփոխությունը, բարեբախտաբար, դեռևս իր անմիջական արտացոլումը չի գտել անչափահասների շեղվող վարքագծում: Թեև մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում գրանցվել է ալկոհոլ գործածած անչափահասների տոկոսային բարձր ներկայացուցչականություն, սակայն ալկոհոլի գործածումը հիմնականում տեղի է ունեցել ծնողների կողմից վերահսկելիության պայմաններում, ընտանեկան միջոցառումների ժամանակ, երբ երեխային թույլ է տրվել փոքր քանակությամբ ալկոհոլ գործածել (փաստացի, նշվածը ալկոհոլի գործածման մշակույթի ուսուցանման դրսևորում է): Մեր ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ալկոհոլ գործածած անչափահասների միայն 12.7%-ն է նշել, որ ալկոհոլը գործածել է մենակ, 24.7%-ը նշել է, որ ալկոհոլ է գործածել իր հասակակիցների հետ, իսկ մյուսները ալկոհոլ են գործածել ընտանիքի անդամների վերահսկողությամբ:

Թեև հայ հասարակությունում առկա է հանդուրժողական մոտեցում անչափահասների կողմից ոգելից խմիչքների վերահսկելի գործածման նկատմամբ, սակայն բացարձակ անհանդուրժողակա-

[1] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, «Առողջապահություն», 2005, էջ 144, http://armstat.am/file/doc/527.pdf; Հայաստանի վիճակագրական տարեգիրք, «Առողջապահություն», 2016, էջ 161, http://armstat.am/file/doc/99499408.pdf:

նություն է դրսևորվում թմրամիջոցներ գործածողների հանդեպ, ինչով էլ, թերևս, պայմանավորված է մեր ուսումնասիրության շրջանակներում անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման տոկոսային ցածր ներկայացուցչականությունը:

Թմրամիջոցների գործածման, ապօրինի շրջանառության վերաբերյալ հայ երեխաների հաղորդումները շատ ավելի քիչ են, քան այլ երկրներից ստացված արդյունքները: Մասնավորապես եթե 2006 թ. ՀՀ-ում հարցվածների 0.2%-ն էր տեղեկացրել թմրամիջոցների իրացմանը ներգրավվելու մասին, ապա Շվեյցարիայում՝ 3.7%-ը, ԱՄՆ-ում՝ 5%-ը, Ֆինլանդիայում՝ 1.1%-ը[1]:

Աղյուսակ 1. ՀՀ անչափահասների շրջանում թմրամիջոցների գործածումը և ապօրինի շրջանառությունը՝ ISRD-2 և ISRD-3

	2006 թ. – ISRD-2	2014 թ. – ISRD-3
մարիխուանայի, հաշիշի գործածում	1.4%	2.2%
էքստազի գործածում	0.1%	0.8%
այլ թմրամիջոցի գործածում	0.2%	0.5%
թմրամիջոցի իրացում	0.2%	-

Այնուհանդերձ, վերջին տարիներին նկատվում է անչափահասների կողմից թմրամիջոցների օգտագործման տոկոսային հարաբերակցության մեծացում, որը վերաբերում է ինչպես մարիխուանայի, այնպես էլ այլ թմրանյութերի գործածմանը:

Երեխաների շրջանում թմրանյութի գործածման աճը անմիջական արդյունք է Հայաստան թմրամիջոցների ավելի հաճախ ներթափանցման, դրանց ապօրինի շրջանառության աճի: Թմրամիջոցների շրջանառության առումով հետաքրքիր դերակատարություն ունեն ՀՀ աշխարհագրական դիրքը և հարաբերությունները հարևանների հետ. ՀՀ-ն փակ սահմաններ ունի Ադրբեջանի և Թուրքիայի հետ, որոնք հայտնի են թմրամիջոցների շրջանառության ոլորտում իրենց

[1] Տե՛ս **Junger-Tas J, Marshall I., Enzmann D., Killias M**., etc. Juvenile Delinquency in Europe and Beyond. Results of the Second International Self-Reported Study, Springer 2010, էջ 83, 152, 165:

ակտիվ ներգրավվածությամբ: Նախկինում ՀՀ-ն փակ սահմաններ ուներ նաև իր մյուս հարևանի՝ թմրանյութերի շուկայի առաջատարների շարքին դասվող Իրանի հետ: Ներկայումս, սակայն, Իրանի հետ սահմանները բացվել են, ինչն էլ հնարավորություն է ընձեռել Իրանից ՀՀ թմրանյութերի ապօրինի ներթափանցման համար և անմիջականորեն խթանել է ՀՀ-ում թմրանյութերի գործածման աճը: 2003 թ. համեմատ 2015 թ. 3.7 անգամ աճել են նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության պաշտոնապես գրանցված դեպքերը՝ 134-ից դառնալով 492:

Վերջինս վկայում է, որ ՀՀ-ում մեծանում է նաև թմրամիջոցների շուկան, որը երկար ժամանակ թմրամիջոցների ցածր պահանջարկի պարագայում զարգացում չէր ապրում:

ՀՀ քրեական օրենսդրությունը պատասխանատվություն է սահմանում թմրանյութերի ապօրինի շրջանառության, բայց ոչ գործածման համար (ՀՀ քրեական օրենսգրքում մինչ 2008 թ. մայիսի 26-ի օրենքով կատարված փոփոխությունը թմրամիջոցներ գործածելը առաջացնում էր քրեական պատասխանատվություն), ուստի հանցագործությունների վերաբերյալ ՀՀ պաշտոնեական վիճակագրության ուսումնասիրությունը հնարավորություն չի ընձեռում հետևություններ կատարելու թմրամիջոցների գործածման առկա վիճակի մասին:

Փոխարենը ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության վերկայքում հասանելի են բնակչության առողջական վիճակին վերաբերող տվյալները, որոնց վերլուծությունը վկայում է, որ 2003 թ. համեմատ 2015 թ. գրանցվել է «թմրամոլություն» ախտորոշմամբ առաջնակի հիվանդների կտրուկ աճ. եթե 100.000 բնակչի հաշվով գործակիցը 2003 թ. եղել է 0.5, 2004 թ.՝ 0.2, 2008 թ.՝ 4.1, 2009 թ.՝ 6.2, ապա 2011 թ.՝ արդեն 11.3, 2012 թ.՝ 21.9, 2013 թ.՝ 24, 2014 թ.՝ 18.1, 2015 թ.՝ 19.3[1]: Ընդ որում, նման ցուցանիշները չնչին տոկոսն են կազմում թմրանյութ օգտագործողների իրական զանգվածի, որը մնում է լա-

[1] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, «Առողջապահություն», 2005, էջ 144, http://armstat.am/file/doc/527.pdf; Հայաստանի վիճակագրական տարեգիրք, «Առողջապահություն», 2016, էջ 161, http://armstat.am/file/doc/99499408.pdf:

տենտային: Մասնավորապես, առանձին փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀՀ-ում թմրամոլների թիվը 30.000-ից ավելի է[1]:

Եթե 2003-2004 թթ. գրանցված ցածր ցուցանիշները կարող են բացատրվել թմրամիջոցների գործածման համար այն ժամանակ գոյություն ունեցած քրեական պատասխանատվության պայմաններում այս երևույթի բարձր լատենտայնությամբ, թմրամոլների կողմից առողջապահական հիմնարկներ չդիմելով, իսկ 2008-2009 թթ. գրանցված աճը՝ թմրամիջոցների գործածման ապաքրեականացման արդյունքում առողջապահական հիմնարկներ դիմելիության աճով, ապա հետագա տարիներին «թմրամոլություն» ախտորոշմամբ անձանց քանակի ավելացումը վկայում է հասարակությունում այս արատավոր երևույթի տարածման մասին, ինչն իր ազդեցությունն է գործում նաև անչափահասների շեղվող վարքագծի վրա:

Անչափահասների շրջանում անցկացված ուսումնասիրությունները թույլ տվեցին գնահատել 2006 և 2014 թթ. ՀՀ անչափահասների շեղվող վարքագծի առանձին դրսևորումների փոփոխությունները:

Մասնավորապես, ինչպես և պաշտոնական վիճակագրության մեջ, նկատվում է երեխաների կողմից բռնի վարքագծի դրսևորման, հատկապես՝ առողջությանը վնաս պատճառելու հաճախականության աճ (p=0.000): Ինչ վերաբերում է գողություններին, ապա դրանց քանակը ևս չի նվազել: Միաժամանակ 2006 թ. համեմատ նվազել են երեխաների խմբային կռիվները (p=0.000), նրանց կողմից զենք կրելը (p=0.002), ինչպես նաև վանդալիզմի դեպքերը (p=0.001): Այնուհանդերձ, նույնիսկ նման նվազման պարագայում անչափահասների շրջանում խմբային կռիվների հաճախականությունը բարձր է միջին եվրոպականից:

[1] Տե՛ս ՀՀ-ում թմրամոլների քանակը 30 հազար է, որոնցից 12.700-ը ներերակային թմրանյութեր են օգտագործում, http://www.iravunk.com/ news/879, 13.11.2017, 1.03; Հայաստանում թմրամոլների թիվը տարեցտարի աճում է, https://armenpress.am/arm/news/862815/hayastanum-tmramolneri-tivy-tarectari-atchum-e.html; 13.11.2017, 00.59:

Աղյուսակ 2. Անչափահասների կողմից շեղվող վարքագծի դրսևորումները՝ ISRD-2 և ISRD-3

	2006		2014	
	երբևէ	վերջին 1 տարում	երբևէ	վերջին 1 տարում
Խմբային կռիվներ	23.5%	18.4%	13.2%	9.8%
Ձենք կրել	9.5%	5.8%	5.1%	3.4%
Առողջությանը վնաս պատճառել	2.7%	1.4%	4.2%	3.1%
Պայուսակ հափշտակել	0.5%	-	-	-
Կողոպուտ/ավազակություն/շորթում	0.5%	0.4%	2.5%	1.1%
Վանդալիզմ	8.3%	3.3%	2.7%	1.3%
Գողություն խանութից	2.1%	0.5%	1.4%	0.3%
Գողություն	-	-	0.9%	0.2%
Հեծանիվի գողություն	0.5%	0.2%	0.9%	0.2%
Բնակարան մուտք գործել	0.5%	0.2%	0.4%	0.1%
Մեքենայի գողություն	0.5%	0.3%	0.6%	0.4%
Հակերություն	4%	2.8%	14.8%	9.4%
Գրաֆիտի	-	-	12.8%	8.7%
Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք	-	-	5.6%	3.1%

ՀՀ-ում ստացված արդյունքների համադրումը ISRD-3 ուսումնասիրության մեջ ներգրավված մի շարք եվրոպական երկրների արդյունքների հետ ցույց տվեց, որ եվրոպական երկրների իրենց հասակակիցների համեմատ՝ ՀՀ անչափահասները ավելի հազվադեպ են խանութներից գողություններ կատարել կամ վանդալիզմ դրսևորել: Մնացած ցուցանիշներով, սակայն, ՀՀ անչափահասները էապես չեն զիջել եվրոպական երկրներում հարցման ենթարկված անչափահասներին:

Գծապատկեր 1. Անչափահասների շեղվող վարքագիծը եվրոպական մի շարք երկրներում՝ ISRD -2 և ISRD -3



Անչափահասների շեղվող վարքագծի գնահատման առումով կարևոր նշանակություն ունի նաև վիկտիմիզացիայի ուսումնասիրությունը, քանի որ այս երկու ցուցանիշների համադրումը հնարավորություն է տալիս առավել անաչառ հետևություն կատարելու անչափահասների շեղվող վարքագծի իրական պատկերի մասին: Բացի դրանից՝ բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ վեր են հանել վիկտիմիզացիայի և դրան ենթարկված երեխայի կողմից հետագայում շեղվող վարքագծի դրսևորման միջև կոռելյացիայի առկայությունը[1]:

[1] Տե՛ս **Carson D., Sullivan C., Cochran J.,** General strain theory and the relationship between early victimization and drug use. Deviant Behavior, 2008, Volume 30, Issue 1, էջ 54-88; **Zhang L, Welte J., Wieczorek W.,** Deviant lifestyle and crime victimization. Journal of Criminal Justice, 2001. Volume 29, Issue 2, էջ 133-143; **Hinduja S., Patchin J.,** Offline Consequences of Online Victimization. School Violence and Delinquency. 2007, Volume 6, Issue 3, էջ 89-112; **Smith C., Thornberry T.,** The relationship between childhood maltreatment and adolescent involvement in delinquencyCriminology, 1995, Volume 33, Issue 4, էջ 451-481:

Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ-ում անչափահասները, որպես կանոն, ավելի հազվադեպ են դառնում հանրորեն վտանգավոր ոտնձգության զոհ, քան նրանց եվրոպացի, մասնավորապես շվեյցարացի հասակակիցները: Ասվածն առավել հստակ կարելի է պնդել շահադիտական ոտնձգությունների կտրվածքով, մինչդեռ բռնության գործադրման, մասնավորապես առողջությանը վնաս պատճառելու կտրվածքով ՀՀ-ում վիկտիմիզացիայի ցուցանիշները ավելի բարձր են:

Աղյուսակ 3. Անչափահասների վիկտիմիզացիան ՀՀ-ում և Շվեյցարիայում՝ ISRD-2 և ISRD-3

	2006		2014	
	ՀՀ	Շվեյցարիա	ՀՀ	Շվեյցարիա
կողոպուտ, շորթում	1.1%	2.3%	1.1%	3.3%
առողջությանը վնաս պատճառել	4.6%	2.4%	5.5%	3.8%
գողություն	8.8%	22.7%	11.1%	26.9%
հալածանք, հետապնդում	2.6%	12.4%	-	-

Միաժամանակ կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ գողությունների տարածվածությունը անչափահասների շրջանում չի նվազել. եթե ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ գողությունից տուժել չէ հարցվածների 9%-ը, ապա ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 11.1%-ը, հետևաբար օբյեկտիվորեն անչափահասների շրջանում գողությունների քանակը չի նվազել, ինչն էլ հաստատելու է գալիս մեր այն ենթադրությունը, որ ՀՀ պաշտոնեական վիճակագրությունը չի արտացոլում անչափահասների շրջանում գողությունների իրական պատկերը:

Զարմանալի է թվում այն, որ Հայաստանում ISRD-2 ուսումնասիրության շրջանակներում հարցման ենթարկված անչափահասների միայն 2.6%-ն է նշել հալածանքի ենթարկվելու մասին, մինչդեռ 4.6%-ը հայտնել է, որ դարձել է առողջությանը վնաս պատճառելու զոհ: Որպես կանոն, եվրոպական երկրների մեծ մասում հալածանքի ենթարկված անչափահասների քանակը մի քանի անգամ գերազանցում է առողջությանը վնաս պատճառելուց տուժած անչափահասնե-

րի քանակը: Ասվածի վկայությունն է նույն Շվեյցարիան, որտեղ հալածանքի ենթարկված անչափահասների ցուցանիշը 5 անգամ գերազանցում է նրանց քանակը, ում առողջությանը վնաս է պատճառվել:

Նման տարբերակումը, թերևս, պայմանավորված է նրանով, որ ելնելով ազգային մենթալիտետի առանձնահատկություններից, հայերի բռնկուն բնավորությունից, ինչպես նաև կոնֆլիկտային իրադրությունների լուծման՝ մեր հասարակությունում տարածում ստացած, ինչու չէ նաև ծնողների վարքագծի արդյունքում երեխաների համար ստերեոտիպ դարձած վարքագծային մոդելներից, հայ երեխաները թույլ չեն տալիս, որ իրենց համար անցանկալի, ֆրուստրացնող իրադրությունը խորանա, և շատ արագ անցնում են բռնության գործադրման:

Ուշադրության են արժանի նաև այն տվյալները, որոնք վերաբերում են կատարված ոտնձգության մասին իրավապահ մարմիններին հայտնելուն, հետևաբար նաև՝ արարքների լատենտայնությանը: ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ շվեյցարացի անչափահասները իրենց հայ հասակակիցների համեմատ գրեթե 5 անգամ ավելի հաճախ են ոստիկանությանը տեղեկացրել կողոպուտի, շորթման, մարմնական վնասվածքի ենթարկվելու, գրեթե 7 անգամ՝ գողության զոհ դառնալու մասին: Նման բաշխումը, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններից ելնելով՝ մեր հասարակությունում ընդունված է խնդիրները լուծել սեփական ուժերով՝ առանց իրավապահ մարմիններին դիմելու, ինչն էլ իր անմիջական արտացոլումն է ստացել անչափահասների շրջանում:

Աղյուսակ 4. Վիկտիմիզացիայի վերաբերյալ իրավապահ մարմիններին հայտնելը՝ ՀՀ-ում և Շվեյցարիայում՝ ISRD-2

	2006	
	ՀՀ	Շվեյցարիա
կողոպուտ, շորթում	4.5%	22.3%
մարմնական վնասվածք	6.25%	32.4%
գողություն	3.7%	32.3%
հալածանք	-	7.8%

Միաժամանակ ISRD-3 ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բռնության զոհ դարձած երեխաները նման կենսափորձ չունեցածների համեմատ երկու անգամ ավելի հաճախ են կատարել իրավախախտումներ (համապատասխանաբար՝ 30.2 և 17.8%), 2.5 անգամ ավելի հաճախ՝ գողություն (համապատասխանաբար՝ 1.3 և 3.4%): Դժվար է միանշանակ պատասխանել այն հարցին, թե որն է եղել վիկտիմիզացիայի ենթարկված երեխաների կողմից շեղվող վարքագծի դրսևորման պատճառը, առավել ևս հնարավոր չէ միանշանակ պատասխանել, թե արդյոք վիկտիմիզացիայի ենթարկվելն է նրանց մոտ հանգեցրել շեղվող վարքագծի դրսևորման վճռականության, թե ընդհակառակը՝ շեղվող վարքագծի դրսևորումն է հանգեցրել նրանց վիկտիմիզացիային: Երկրորդ ենթադրությունն առավել իրատեսական է թվում:

Առավել հետաքրքրական են ISRD-3 ուսումնասիրության այն արդյունքները, որոնք վերաբերում են ծնողների կողմից դրսևորված բռնությունից կամ վատ վերաբերմունքից տուժելու և շեղվող վարքագծի միջև կապին:

Գծապատկեր 2. Ծնողների կողմից բռնության ենթարկված երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորումը



Մասնավորապես ուժեղ արտահայտված կապ է գրանցվել վերջին մեկ տարվա ընթացքում ծնողների բռնությունից, վատ վերաբերմունքից տուժելու և շեղվող վարքագիծ դրսևորելու, իրավախախտումներ կատարելու միջև. ծնողների կողմից բռնության ենթարկված անչափահասները գրեթե 2, վատ վերաբերմունքի ենթարկվածները՝ 2,5 անգամ ավելի հաճախ են նշել իրենց կողմից իրավախախտում կատարելու մասին: Ընդ որում, այդ կապը գրանցվել է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ հետազոտության մեջ ընդգրկված մյուս երկրներում:

Գծապատկեր 3. Ծնողների կողմից վատ վերաբերմունքի ենթարկված երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորումը



Առավել իրատեսական է թվում այն, որ ոչ թե երեխաները շեղվող վարքագիծ են դրսևորել, քանի որ ընտանիքում իրենց հանդեպ գործադրվել է բռնություն կամ վատ վերաբերմունք, այլ ընդհակառակը՝ բռնությունը, վատ վերաբերմունքը գործադրվել են ի պատասխան նրանց կողմից դրսևորված շեղվող վարքագծի:

Մասնավորապես նույն ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ երեխաները իրենց լավ են զգում ընտանեկան միջավայրում, լավ հարաբերություններ ունեն ծնողների հետ (հարցվածների 94,7%-ը նշել է, որ լավ հարաբերություն ունի հոր, 96,1%-ը՝ մոր

հետ, 95,4%-ը նշել է, որ ընտանիքում հուզական աջակցություն է ստանում): Հարցվածների միայն 4%-ն է նշել, որ ծնողները միմյանց նկատմամբ բռնություն են գործադրել, և 2,6%-ը նշել է, որ ծնողները ալկոհոլ կամ թմրանյութ են գործածել:

Ծնողների կողմից երեխաների շեղվող վարքագծին նման ոչ համարժեք արձագանքումը պայմանավորված է մի քանի գործոններով. նախ՝ ՀՀ-ում ընտանիքները ավանդաբար ձևավորվում են վաղ չափահասության տարիքում, և երիտասարդ ծնողները ոչ միշտ են տիրապետում երեխաներին դաստիարակելու, նրանց շեղվող վարքագծին արձագանքելու հոգեբանական, մանկավարժական գիտելիքներին ու հմտություններին, հետևաբար՝ երեխայի շեղվող վարքագծին արձագանքելու իրենց հասանելի ամենակարճ ու իրենց կարծիքով առավել արդյունավետ միջոցը բռնության գործադրումն է: Միևնույն ժամանակ երեխայի իրավահպատակ վարքագիծը ձևավորելու հիմնական պատասխանատվությունը ևս կրում է ընտանիքը. հասարակության արժեքային անոմիայի ներկայիս պայմաններում դպրոցը արդյունավետ չի իրականացնում երեխային դաստիարակելու պարտականությունը: Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին[1], ապա նրանց նկատմամբ ներկայումս առկա է վստահության պակաս, ուստի ընտանիքը և հասարակությունը նախընտրում են իրենք ստանձնել երեխայի շեղվող վարքագծին արձագանքելու պարտականությունը:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ.

1. Թեև ՀՀ անչափահասները եվրոպական շատ երկրների համեմատ ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում և վիկտիմիզացիայի ենթարկվում, սակայն իրենց եվրոպացի տարեկիցներից ավելի հաճախ են նախընտրում բռնություն գործադրել:

[1] Պետք է ընդունել, որ ՀՀ իրավապահ մարմինները առավելապես ուշադրություն են դարձնում այն երեխաներին, որոնք կամ նախկինում կատարված իրավախախտման հետևանքով հայտնվել են ոստիկանության տեսադաշտում, կամ զբաղվում են թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ, կամ դարձել են բռնության զոհ: Ընդ որում, այս ոլորտում որոշակի հաջողություններ արձանագրվել են, մասնավորապես նվազել է անչափահաս մուրացկանների քանակը: 2011 թ. ՀՀ ոստիկանությունում հաշվառված է եղել 20, 2016 թ.՝ 13 անչափահաս մուրացկան:

2. Անչափահասների կողմից գողությունների կատարման դինամիկան նվազման միտում չունի, հետևաբար ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված պաշտոնեական վիճակագրությունը չի արտացոլում անչափահասների կողմից գողությունների կատարման իրական վիճակը և ընդամենը վկայում է դրանց լատենտայնացման մասին:

3. Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում տեղ գտած բացասական փոփոխությունները, հատկապես՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, հասարակության խիստ բևեռացումը, գրեթե համատարած բնույթ կրող աղքատությունը, գործազրկությունը, արժեքային անոմիան, զուգակցվելով Իրանի հետ ՀՀ սահմանների բացման, թմրանյութերի գործածման համար քրեական պատասխանատվության վերացման հետ, հանգեցրին ՀՀ-ում թմրանյութ գործածողների, այդ թվում՝ թմրանյութ գործածող անչափահասների թվաքանակի աճի:

ХАРАКТЕРИСТИКА ДЕВИАНТНОГО ПОВЕДЕНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РА

Анна Маргарян

Доцент кафедры уголовного права ЕГУ,

кандидат юридических наук

В статье обсуждаются проблемы девиантного поведения несовершеннолетних в Республике Армения. Анализируя результаты исследований ISRD-2 и ISRD-3, проведенных в Армении в рамках международного проекта, и сопоставляя их с результатами аналогичных исследований, проведенных в некоторых зарубежных странах, автор приходит к заключению, что несовершеннолетние в Армении реже подвергаются виктимизации, но чаще прибегают к насилию. Также за последние 8-10 лет в Армении наблюдается распространение наркотиков, в том числе среди детей. Несмотря на то, что официальная статистика свидетельствует о снижении преступности и особенно краж среди детей, по мнению автора, это является всего лишь результатом все большей латентизации девиантного и преступного поведения несовершеннолетних.

STATE OF JUVENILE DEVIANCY IN RA

Anna Margaryan
Docent at the YSU Chair of Criminal Law,
Candidate of Legal Sciences

The problems of juvenile deviancy in Armenia are discussed in the article presented. Based on the analysis of surveys ISRD-2 and ISRD-3 conducted in Armenia in the frames of international project, as well as their comparison with the results of similar surveys conducted in some foreign countries, the author comes to the conclusion that juveniles in Armenia are less likely to be victimized, but more often resort to violence. Also, over the past 8-10 years, there has been a spreddening of drugs in Armenia, including among children. Although official statistics shows a decrease in juvenile criminality, including property crimes, however the author thinks that this is just the result of an ever-increasing latency of the deviant and criminal behavior of juveniles.

Բանալի բառեր – անչափահաս, շեղվող վարքագիծ, ալկոհոլ, վիկտիմիզացիա, թմրանյութ, գողություն, բռնություն, լատենտայնություն
Ключевые слова: несовершеннолетний, девиантное поведение, алкоголь, виктимизация, наркотики, кража, насилие, латентность
Key words: juvenile, deviancy, alcohol, victimization, drugs, theft, violence, latency

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ, ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВЫЕ, ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ МЕРЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ МОЛОДЕЖИ

Тигран Симонян
Доцент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук

Насколько бы эффективными не были предупредительные мероприятия, проводимые теми или иными государственными органами, они направлены на пресечение совершения конкретным лицом конкретного преступления и не содержат такую широкую систему действий, которая бы могла влиять на общие тенденции преступности. Конечно, невозможно недооценить роль специализированных государственных органов в деле предупреждения преступности. Каждодневная целенаправленная работа последних позволяет держать преступность в определенных рамках и не дать ей стихийно распространиться, но истинные причины и условия, порождающие преступность и способствующие ее росту, находятся в недрах общественной жизни и общественных отношений, и только влияя на них, можно хоть как-нибудь повлиять и на тенденции преступности, обусловить снижение ее уровня. Как отмечалось выше, основные причины преступности имеют социально-экономический характер, и только государственные и общественные усилия в социально-экономической сфере могут принести желаемый результат в деле предупреждения преступности и, в частности, молодежной преступности. В этом заключается основная причина того, что государство, осуществляя свои основные функции, которые должны быть направлены на преодоление экономического кризиса и поднятие экономики, обеспечение социального компромисса, должно уделять особое внимание предупреждению молодежной преступности социально-экономическими методами.

Социально-экономические методы предупреждения молодежной преступности представляют собой государственные мероприятия, которые обеспечивают нормальное развитие производства, сбыта,

экономических отношений и, вместе с этим, косвенно, а иногда и прямо, способствуют предупреждению правонарушений, преступлений и преступности в целом[1]. Борьба с молодежной преступностью социально-экономическими методами должна вестись в нескольких направлениях. Первым и главным из этих направлений является осуществление социально-экономических мероприятий и проведение государством такой политики, которая способствовала бы росту экономики, развитию промышленности и торговли, как внутренней, так и внешней, что позволит удовлетворить все растущие потребности населения и путем создания новых рабочих мест снизить уровень безработицы в РА. Такой прогресс будет способствовать снижению преступности в целом и молодежной в частности.

Следующее направление использования социально-экономических методов, призванных предупредить преступность молодежи – это решение первоочередных проблем, стоящих перед молодежью[2]. Такие мероприятия различны и могут быть осуществлены только при наличии государственной поддержки и заботы. Как было отмечено, важнейшей задачей является предоставление молодёжи работы, поскольку во многих случаях совершение противоправных или преступных деяний молодыми людьми связано с их финансовым состоянием. Безработица и, как следствие, лишение финансовых средств и самостоятельности формируют у молодого человека фрустрационное психологическое состояние, и чтобы избавиться от этого тягостного состояния, молодой человек может совершить антиобщественные деяния.

Говоря об обеспечении государством рабочих мест для молодёжи, нужно констатировать, что здесь речь не идёт о любом виде работы. Молодые люди ожидают от своей работы не только материального удовлетворения, что, конечно, очень важно, но и духовного, а также осуществления жизненных ожиданий. Выше уже говорилось, что тяжёлый физический труд, который не требует даже минимального интеллектуального уровня, никаким образом не способст-

---

[1] См.: Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 69.

[2] См.: Апарина А.В., Проблемы социально-правовой защиты детей и молодежи в современных условиях, М., 1998, С. 19.

вует предупреждению молодёжной преступности. Такая работа сама по себе может стать причиной формирования отрицательных психологических эмоций и иметь довольно большой криминогенный потенциал[1]. Если ко всему этому добавить, что такая работа в РА очень низко оплачивается и не решает финансовых проблем молодых людей, то становится ясно, что предупредить таким образом молодежную преступность невозможно.

Нынешний уровень развития науки и техники требует интеллектуализации труда. Внедрение новых, более совершенных технологий (нужно, конечно, отметить, что в нашей стране этот процесс продвигается очень медленно) требует наличия высококвалифицированных специалистов, образовательный и интеллектуальный уровень которых позволяет эффективно эксплуатировать новые технологии. Здесь ставится также вопрос усовершенствования образовательной системы, подготовки соответствующих кадров и их обеспечение работой. Только таким путем возможно достичь экономического роста и, тем самым, создать необходимые условия для предупреждения молодежной преступности. Повышение интеллектуального уровня молодых людей способствует не только их трудоустройству, но и позволяет им приобщиться к культурным и духовным ценностям, открывает новые горизонты для их интересов и потребностей, способствует раскрытию их творческих способностей и, тем самым, предупреждению антиобщественного поведения с их стороны.

Важнейшее значение имеет также правильная организация досуга молодых, проведение таких мероприятий, которые соответствуют их интересам и потребностям. Как говорил Бертран Рассел, разумная организация свободного времени – высшая степень цивилизации[2]. Досуг является важнейшей сферой жизнедеятельности молодежи и представляет собой отрезок времени, которым молодой человек распоряжается по своему усмотрению[3]. От того, как организует, проводит молодой человек свой досуг, во многом зависит его общественно-

---

[1] См.: Блинов В. М. Труд и молодежь. М., 1975. С. 29.

[2] См.: Бертран Рассел, Похвала праздности, С. 2.

[3] См.: Ермаков В., Крюкова Н., Несовершеннолетние преступники в России, М., 1999, С. 103.

полезное или антиобщественное поведение. Правильная организация досуга способствует физическому и духовному развитию молодого человека, нейтрализует его психическую напряженность, расширяет кругозор, он получает самообразование и приобретает необходимую информацию о существующей реальности, удовлетворяются его потребности в социальном общении и творческие интересы. Это может нейтрализовать или существенно ослабить негативные факторы, присутствующие в семье, трудовой или образовательной среде данного молодого человека, обеспечить его нормальное развитие и самоутверждение. Но в том случае, когда молодой человек все свое свободное время проводит на улице, подвергаясь влиянию различных лиц и групп, имеющих антиобщественную ориентацию, он почти лишается возможности естественно развиваться, приобщаться к духовным и интеллектуальным ценностям, и такое влияние может свести на нет все усилия семьи и общества, направленные на создание благоприятных условий для становления молодого человека.

По нашему мнению, просто необходимо, чтобы государство всеми возможными способами способствовало правильной и эффективной организации свободного времени молодежи, созданию спортивных и культурных комплексов, нормальной эксплуатации уже действующих объектов, вовлечению молодежи в культурную жизнь и т.д. Но сегодня мы видим противоположную картину. Имеет место множество случаев, когда кинотеатры и спортивные комплексы превратились в ярмарки, супермаркеты, казино, рестораны, отели и т.п. Вместе с этим нужно отметить, что в последнее время некоторые виды спорта в РА развиваются, некоторые усилия в этом направлении дали положительный результат, но это только первые ростки, и еще многое нужно сделать, чтобы спорт и культура стали приоритетными направлениями развития молодежи. Но если такие усилия не предпринимать, то при нынешних тенденциях мы будем иметь молодежь с деформированными взглядами, дикими страстями, стремящуюся только к физическим удовольствиям, а это является самой реальной предпосылкой для этнического уничтожения армянского народа. Исправление этой ситуации – первостепенная задача государства, общества и, особенно, молодежи, при решении которой компромиссы недопустимы.

По нашему мнению, в настоящих условиях очень важно создание специальных фондов поддержки молодежи. Если государство накопит достаточно средств в этих фондах, то сможет решить множество острейших проблем, стоящих перед молодежью. Но положительного результата можно добиться только при наличии надлежащего контроля над этими фондами. Эти фонды могут стать необходимой базой для организации отдыха и досуга молодежи, развития спорта и культуры, внедрения новых образовательных программ и осуществления других, важных для молодежи, мероприятий. Такие фонды можно создавать также на тех предприятиях и в государственных органах, где работают молодые люди. Своевременность и антикриминогенное значение этого очевидны.

Несмотря на то, что социально-экономические методы предупреждения молодежной преступности имеют не прямое, а косвенное воздействие, они влияют на основные причины зарождения преступности, чем и обусловлено их важнейшее значение[1]. Изучение некоторых социально-экономических методов предупреждения молодежной преступности позволяет нам выявить актуальные задачи, стоящие перед подрастающим поколением, от решения которых зависит успешное преодоление трудного переходного периода в нашей стране и устранение базисных причин молодежной преступности.

Как было отмечено, нынешнее положение в РА не содержит никаких предпосылок для преодоления этой ситуации. На преступности и, особенно, молодежной, негативно отражается также все продолжающаяся миграция. В настоящее время важнейшей задачей нашего государства должна стать нейтрализация всех этих отрицательных тенденций, иначе мы обречены на невиданный рост преступности и огромные социальные потрясения, которые могут иметь катастрофические последствия для страны. Возникает необходимость объединить усилия для того, чтобы трудовые, образовательные, духовные, правовые мероприятия проводились совместно и взаимосвязано и были направлены на оздоровление общественных отношений, их естественное развитие.

---

[1] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 76.

Предупреждение преступности среди молодежи – довольно сложный процесс, и все факторы, явления, которые участвуют в этом процессе, тесно взаимосвязаны и обусловлены друг другом. Пренебрежение или невнимательность к любым из этих факторов недопустимы и очень опасны. Практика борьбы с правонарушениями показала, что эта борьба бывает эффективной только в том случае, когда вместе с социально-экономическими, воспитательными, идеологическими мерами используются также государственно-правовые. Государственно-правовые меры – это установленные государством средства и способы, с помощью которых достигается точное исполнение норм правового положения личности, обеспечивается правомерное поведение участников регулируемых нормами права отношений, пресекаются и устраняются нарушения установленных прав и свобод граждан и т.д.[1] Государственно-правовые меры предупреждения молодежной преступности направлены на повышение уровня правосознания молодежи, ее воспитание в духе уважения государства и законов. Тем самым эти методы имеют огромное антикриминогенное значение[2]. Они также способствуют общему и личностному предупреждению молодежной преступности и диалектически взаимосвязаны друг с другом.

Законотворческая деятельность государства направлена на усовершенствование правовой системы так, чтобы эта система соответствовала нынешней социально-политической ситуации, и в этом контексте выработка правовых методов приобретает универсальный характер, поскольку одним и тем же правовым методом могут регулироваться разные общественные отношения. И правовые, и государственные методы направлены на решение одной и той же задачи, что определяет их общую направленность. Важность права для государства невозможно переоценить, поскольку оно является основой нормальной деятельности государственного механизма. Правовыми нормами регулируются взаимоотношения государственных органов, определяют-

---

[1] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 85.

[2] См.: Игошев К.Е., Социальный контроль и профилактика правонарушений, Горький, 1976, С. 48.

ся их полномочия, иерархические и координационные связи[1]. Правовыми нормами определяются сферы полномочий тех государственных органов, на которые возложена функция предупреждения молодежной преступности, и от результативности исполнения этой функции зависит эффективность предупреждения молодежной преступности в том числе.

В деле предупреждения молодежной преступности важное значение имеет также управленческо-организационная функция государства. Управление представляет собой целенаправленное и систематизированное воздействие, в данном случае влияющее на воспитание молодежи в духе общественно полезного поведения[2]. Меры по предупреждению молодежной преступности систематизируются и управляются разными государственными органами. Основная цель этих мер – устранение тех негативных влияний и факторов, которые присутствуют в непосредственной среде молодежи и могут обусловить ее противоправное поведение.

Таким образом, необходимо отметить, что в деле предупреждения молодежной преступности управление является целенаправленным, научно-обоснованным процессом, который систематизирует деятельность различных органов и структур, занимающихся предупредительной деятельностью. Нужно констатировать, что система общественных мероприятий, направленных на предупреждение преступности молодежи, использует воспитательные и профилактические методы, которые имеют цель не допустить совершение преступления теми молодыми людьми, которые находятся в криминогенной обстановке, когда есть большая вероятность проявления антиобщественного поведения с их стороны. Эти методы могут влиять на психологию молодого человека благоприятным образом, нейтрализовать негативные влияния в его микросреде, пресечь противоправ-

[1] Теория государства и права. Под ред. М.Н. Марченко, М., 1999, С. 233.

[2] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 90.

ное поведение[1]. Нейтрализация этих неблагоприятных факторов тесно связана с положительными социально-экономическими изменениями (которые находятся на очень раннем этапе).

Для успешной профилактики молодежной преступности нужно использовать данные и методы, разработанные социологией, криминологией и другими науками. Меры по предупреждению преступности молодежи должны быть систематизированы, и все звенья в этой системе мер должны быть тесно взаимосвязаны. Основной целью этой системы должно быть воспитание разносторонне развитой, интеллектуальной молодежи, и такое воспитание молодые люди должны получать и в семье, и в школе, и в трудовой среде[2]. Это имеет общепрофилактическое значение. Но в тех случаях, когда молодой человек не получает должного воспитания, образования, должна особенно возрастать роль специализированных государственных органов с тем, чтобы устанавливать эффективный социальный и правовой контроль над теми молодыми людьми, которые уже совершили правонарушения. В этом случае нужно обеспечить для молодого человека благоприятные условия, которые смогут помочь ему получить должное образование, приобщить к культурным и духовным ценностям, что, несомненно, будет иметь большое антикриминогенное значение. Таким образом, методы и средства предупреждения молодежной преступности должны быть строго научно обоснованными и основанными на закономерностях воспитательного процесса, а разработка и использование на практике этих методов должны нести эволюционный характер. Разработка новых методов не исключает использование старых. Нужно отказаться только от тех методов, которые исчерпали себя и не могут способствовать предупреждению молодежной преступности[3].

Важнейшими государственно-правовыми мерами, имеющими исключительно большое значение для профилактики правонаруше-

---

[1] См.: Герасимов С.И., Возрождение системы предупреждения преступлений. В сб.: Россия в третьем тысячелетии, Научные труды ИМПЭ им А.С. Грибоедова, М., 2001.

[2] См.: Ильинский И.М., О спасительной роли образования, М., 1998, С. 25.

[3] См.: Молодёжь и общество на рубеже веков. Под ред. И.М. Ильинского, М., 1999, С. 63.

ний среди молодежи, являются взаимодействие и координация деятельности различных государственных и общественных органов и организаций, занимающихся воспитанием несовершеннолетних и молодежи и предупреждением негативных явлений в их среде[1]. Говоря о взаимодействии и координации, нужно понимать основанную на законе, взаимосвязанную и целенаправленную деятельность государственных органов и общественных организаций, которая может иметь как долгосрочный, так и краткосрочный характер и преследует цель максимально сконцентрировать усилия и средства, направленные на достижение реальных результатов в деле предупреждения молодежной преступности. Существуют следующие виды взаимодействия: 1) внешнее (с другими государственными и общественными организациями); 2) внутреннее (между организациями одного ведомства); 3) постоянное (решение определенных проблем, рассчитанное на длительный период); 4) временное (для решения конкретного вопроса) и т.д.[2] Формы взаимодействия различны, что, конечно - положительное явление, поскольку они способствуют более эффективной и целенаправленной работе тех структур, которые занимаются предупреждением преступности молодежи. Практика создает необходимость разработки новых, более совершенных методов, которые должны быть основаны на научном анализе положительного опыта государственных органов и общественных организаций, занимающихся предупреждением молодежной преступности. Предупредительные мероприятия очень разнообразны как по своему характеру, так и по методам их осуществления. В этом причина того, что деятельность, направленная на предупреждение преступности молодежи, содержит следующие организационные мероприятия: а) изучение и анализ причин и условий преступности и, на ее фоне, молодежной преступности, разными структурами, занимающимися предупредительной деятельностью; б) с учетом особенностей предупредительных мероприятий принятие таких решений, которые способствовали бы максимальной

[1] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 90.

[2] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 92.

концентрации сил и средств для эффективной профилактики молодежной преступности; в) систематизация и координация совместных действий, эффективный контроль над осуществляемыми мероприятиями, целесообразное использование интеллектуального потенциала работников и т.д.[1]

В деле предупреждения молодежной преступности преимущество отдается правовым методам. Правовые методы – это методы воздействия на определенные варианты поведения с целью его регулирования, выработка вариантов дозволенного поведения, запрещение определенных видов действий. Конкретная норма права выступает не только в виде указателя того или иного варианта поведения, но и в качестве требования, предъявляемого государством и обществом к личности, вести себя определенным образом, действовать так, а не иначе. Говоря о правовом методе как об основном методе эффективного предупреждения молодежной преступности, нужно отметить его три важнейшие функции: 1) праворегулятивную; 2) охранительную; 3) воспитательную[2].

Выше говорилось о правовом регулировании деятельности тех государственных и общественных структур, которые занимаются предупреждением молодежной преступности. Однако нужно отметить, что имеет место правовое регулирование воспитания молодежи и несовершеннолетних в семье, школе, других социальных учреждениях. В этих случаях существуют правовые нормы, которые устанавливают ответственность, и даже уголовную, на случай тех правонарушений, которые совершают лица, занимающиеся воспитанием детей и несовершеннолетних. Это тоже имеет предупредительное значение, поскольку создаются реальные предпосылки для надлежащего воспитания подрастающего поколения, что почти гарантирует его правомерное поведение в дальнейшем, тем самым снижая вероятность совершения молодыми людьми преступлений.

В деле предупреждения преступности молодежи важнейшую роль играет охранительная функция. Для нее характерны специфи-

---

[1] См.: Там же, С. 94.

[2] См.: Радко Т.Н., Функции социалистического права, Советское государство и право, 1977, № 5, С. 52.

ческие методы, выражающиеся в запрещении определенного поведения, нежелательных обществу и государству действий и предусматривающие применение санкций, мер принуждения в случае совершения правонарушений. Эффективность этих функций довольно высока, поскольку множество молодых людей, именно боясь наказания, не совершают антиобщественных действий. Эта угроза является для них довольно сильным стимулом для того, чтобы выбрать общественно-полезные формы поведения.

Эффективность вышеназванных правовых функций очевидна, но предупреждение молодежной преступности является сложным процессом и не может быть ограничено только установлением определенной меры поведения или запретами. Эффективная профилактика молодежной преступности во многом связана с воспитательной функцией. Ее эффективность обусловлена тем, что она способствует поднятию уровня правосознания членов общества, формированию уважения к закону и, следовательно, к обществу и государству (воспитательные и идеологические методы имеют огромный антикриминогенный потенциал, о чем будет сказано ниже).

Законодательство, которое создается государством для предупреждения молодежной преступности, должно содержать такие положения, которые позволили бы успешно осуществлять воспитательный процесс, соответствовали бы интересам и потребностям молодежи, удовлетворяли бы их жизненные потребности и имели бы, тем самым, антикриминогенное значение. Такое законодательство в первую очередь должно быть направлено на повышение уровня правовой культуры и правосознания молодежи, способствовать ее эффективному воспитанию, оно не должно представлять собой совокупность запретов и ограничений. Любой правовой акт, предпринятый в интересах молодежи, должен всячески расширять права и свободы молодых людей, способствовать их участию в политической и общественной жизни общества, удовлетворению материальных и духовных потребностей.

С сожалением нужно отметить, что ныне в РА почти отсутствуют какие-либо законодательные акты, направленные на поддержку молодежи. Наша молодежь сегодня не является полноценным субъектом политической жизни, а действующие молодежные организации

малочисленны и разрознены. В нашей стране не существует государственной программы и политики, направленной на поддержку молодежи в этот трудный переходный период. Это состояние, по всей видимости, обусловлено постепенно ухудшающимся социально-экономическим состоянием. Перед большинством молодежи сегодня стоит задача удовлетворения минимальных жизненных потребностей, а нарастающие темпы безработицы не позволяют молодым людям подняться над повседневными проблемами и сказать свое слово на политической арене. Несмотря на все это, молодежь была и остается серьезной политической силой, и будем надеяться, что в ближайшем будущем станет возможно всестороннее участие молодежи в общественной жизни страны.

Обобщая сказанное, нужно отметить, что законодательство, направленное на поддержку молодежи, должно преследовать несколько целей, от достижения которых зависит эффективность предупреждения молодежной преступности. Эти цели следующие:

1) формирование у молодых людей общественно-полезных интересов, привычек и поведения;

2) нейтрализация отрицательных влияний на молодежь, осуществление воспитания молодежи в семье, учебном и трудовом коллективе;

3) организация отдыха и досуга молодых людей;

4) создание условий для получения образования и трудовой деятельности молодежи;

5) гарантии участия молодежи в общественной и политической жизни страны.

От четкого осуществления этих задач во многом зависит успех в деле предупреждения преступности молодежи. При достижении вышеназванных целей молодежное законодательство способствует формированию нравственного облика молодых граждан, их уверенности в завтрашнем дне, повышению чувства долга и ответственности, воспитанию в духе уважения к нормам общежития и т.д. Соответственно, можно сказать, что молодежное законодательство должно представлять собой мощный фактор воспитания подрастающего поколения, который пресекает неблагоприятные влияния в молодежной среде, способствует поднятию уровня правосознания молодежи, создает

реальные гарантии правомерного поведения в любых, даже самых сложных, жизненных ситуациях.

В связи с этим остановимся на проблемах правового обеспечения предупреждения преступлений молодежи. Давно общеизвестна мысль о том, насколько значим этот вид обеспечения профилактической деятельности. Не повторяя известных истин, ограничимся лишь констатацией: система правового регулирования первична, система предупредительной деятельности вторична. Иными словами, система предупреждения как структура и целенаправленная деятельность будет такова, какова будет система ее нормативного регулирования.

За этим тезисом не скрывается попытка принизить другие виды обеспечения такой деятельности: финансовое, материальное, информационное, кадровое и т.п. Но мы ставим на особое место именно правовое обеспечение потому, что в нормах права – законах и подзаконных актах – реально воплощаются (или, точнее говоря, должны воплощаться) научно обоснованная концепция деятельности, стратегия и тактика, методы и средства их достижения. Концепция, «овеществленная» в праве, делает соответствующую работу осмысленной, целостной при сохранении необходимого разнообразия направлений, приемов и др.

Как и система предупреждения преступлений молодежи, система правового обеспечения этой деятельности должна иметь в своей основе концепцию ее построения. Однако задача разработки такой концепции в силу многих причин сложна и труднопреодолима. Создание и систематизация профилактического законодательства, относящегося к сфере антиобщественного поведения молодежи –
дело не только трудное, но и длительное. В нем, наверняка, будут участвовать многие государственные и негосударственные организации, разнообразные специалисты. В связи с этим в криминологической доктрине отмечаются относительно значимые положения, которые могли бы способствовать более разумной организации и эффективному функционированию будущей системы предупреждения преступлений и которые полезно было бы зафиксировать и развить в нормативных актах.

Итак, в них следует отразить:

- обязанность центральных и местных органов власти и управления не только руководить деятельностью по предупреждению преступлений, но и непосредственно в ней участвовать с указанием их конкретных

функций в данной сфере;

- создание системы предупреждения преступлений, в которой основная часть субъектов этой деятельности находилась бы не в управленческом звене, а по месту жительства населения и расположения объектов профилактической защиты;
- приоритет индивидуальной профилактики, принимаемой как единство социального контроля и социальной помощи;
- недопустимость неоправданного нарушения прав, свобод и законных интересов личности в сфере профилактики;
- принципы соотношения центральной и региональной (в марзах) криминологической политики;
- поощрение государством участия в предупредительной работе предприятий и организаций независимо от форм собственности, а также частных лиц, создание различного рода фондов общественных формирований и т.д.;
- всестороннее обеспечение прав и законных интересов жертв преступлений (потерпевших), предупредительная виктимологическая работа как направление профилактики преступлений;
- выбор приоритетных направлений предупредительной деятельности с учетом прогностических оценок процессов преступности, характеристики причин преступного поведения личности преступника, социальных последствий преступности;
- право граждан на самозащиту от преступных посягательств;
- криминологическую экспертизу важнейших социальных и правовых проектов;
- налоговые льготы в сфере предупреждения преступлений, моральное и материальное стимулирование;
- подготовку профессиональных кадров в области предупреждения преступлений[1].

Конечно, этими положениями далеко не исчерпывается огромный круг идей и конкретных решений, подлежащих воплощению в будущей системе правового обеспечения предупредительной деятельности.

Приступая к строительству системы предупреждения молодежной преступности, следует четко представлять, каким требованиям она долж-

[1] Бабаев М.М., Крутер М.С., Молодежная преступность, М., 2006, С. 317.

на удовлетворять. Применительно к преступности в целом, на наш взгляд, удачно эти требования сформулировал С.И. Герасимов. Представляется полезным распространить предложенные им критерии и на систему профилактики преступлений молодежи.

Итак, система предупреждения преступлений «должна быть стабильной: ее функционирование должно быть рассчитано на достаточно длительную перспективу, и только отдельные элементы системы могут и должны претерпевать вполне объяснимые изменения. Система субъектов предупреждения преступлений должна быть по своей конструкции достаточно жесткой (в разумных пределах). Она должна исключать наличие излишних звеньев, не обладающих нужной работоспособностью. Жесткость конструкции достигается прежде всего за счет строжайшего отбора тех элементов, которые должны быть в ней представлены. Данная система должна иметь свой общий координирующий, организующий и направляющий центр. В структуре субъектов предупреждения преступлений должны быть представлены все их уровни, которые действовали бы на системной основе. В соответствии с этим требуется четкое определение вертикальных и горизонтальных связей субъектов относительно их уровней и системы в целом. Необходимо точное определение компетенции каждого субъекта предупреждения преступлений в этой области, своего рода их предметная специализация. Должен действовать принцип строгой дисциплины в выполнении предупредительной функции каждым субъектом»[1].

Следуя таким требованиям, дело предупреждения преступлений молодежи приобретает системные свойства по мере постепенного создания его структуры. Последняя понимается как внутренняя основа его организационного построения (организационная структура) и одновременно структура совокупности мер профилактического воздействия и условий их реализации (структура деятельности).

Очевидно, что система предупреждения преступности не может быть эффективной, если она строится не в согласии с ключевыми количественными и качественными характеристиками тех явлений и процес-

---

[1] Герасимов С.И., Возрождение системы предупреждений преступлений // Россия в третьем тысячелетии, Научные труды ИМПЭ им. А.С. Грибоедова, М., 2001, С. 183.

сов, на которые она должна реагировать для достижения стоящих перед ней целей. Применительно к предмету нашего исследования это означает, что система профилактики должна включать соответствующую подсистему, построенную с учетом возрастных и иных личностных особенностей молодых людей, а также специфики общей картины их преступного поведения. Такая подсистема должна быть в достаточной степени гибкой, чтобы оказаться способной адаптивно перенастраивать свои функции в соответствии с изменениями молодежной преступности.

«Предупреждение преступлений на уровне специально-криминологических мероприятий, — как писал А.Б. Сахаров, — должно разрабатываться и осуществляться по ряду взаимосочетаемых направлений, а именно: применительно к различным видам преступлений и типам преступного поведения (корыстные, насильственные, неосторожные и т.п.); применительно к различным сферам общественной жизни, в которых проходит нравственное формирование человека и складываются ситуации, детерминирующие его поведение (семья, школа, производство, быт, досуг и т.п.); применительно к разным социальным группам, характеризуемым специфическими криминогенными показателями (несовершеннолетние, молодежь, мигранты, алкоголики, ранее судимые, рецидивисты и т.п.)»[1].

Особенности структуры преступности молодежи в концентрированном виде отражают своеобразие комплекса актуальных для этого контингента криминогенных факторов. Последние в свою очередь адекватно отражают спонтанно возникающие, но чаще всего стабильно существующие проблемы в тех или иных сферах жизнедеятельности молодых людей. Отсюда следует, что при выстраивании системы предупреждения преступлений молодежи информация о структуре молодежной преступности должна широко использоваться как база для адаптации функций различного рода профилактических структур к решению соответствующих стоящих перед ними задач. Поскольку функция неразрывно связана с организационной структурой, реализующей эту функцию, то при изменении структуры преступности должна изменяться и структура профилактики[2]. «Функциональное развитие профилактики преступлений, – писал А.Э. Жалинский,

[1] Сахаров А.Б., Социальная система предупреждения преступлений // Советское государство и право, 1972, № 11, С. 70.

–позволит специализировать деятельность, усилит внимание к отдельным ее направлениям, интенсифицирует процесс саморегуляции и самосовершенствования, даст возможность развить непосредственное управление, ... создаст условия для действенного надзора и контроля»[1].

Не менее важна для построения и необходимой в дальнейшем коррекции структуры профилактики характеристика совокупности причин и условий совершения преступлений молодыми людьми.

Чтобы иметь возможность при необходимости варьировать, выбирая адекватные меры воздействия, блокировать, нейтрализовать, а в лучшем случае, видоизменять в желательном отношении криминогенно опасные мотивации, цели или даже поведение людей, блокирующая система, т.е. система предупреждения преступлений молодежи, должна быть способной обеспечить комплекс разнообразных реакций. Следовательно, требуется не только гибкость и адаптивность организационной структуры этой системы, но и повседневное деятельное участие в ее работе государственных и негосударственных структур, в том числе общественных и религиозных организаций, фондов, союзов различной направленности.

Систему предупреждения преступлений молодежи необходимо строить таким образом, чтобы в ней, как и в структуре ее функций, были бы представлены все основные виды и подвиды профилактики: общая, индивидуальная, ранняя, непосредственная, постпенитенциарная. Конечно, речь идет не о том, чтобы применительно к каждому виду и подвиду предупредительной деятельности обязательно был выделен собственный, отдельный организационный блок. Одна и та же структура (орган, общественное объединение и т.п.) может быть узкоспециализированной, либо одновременно вести профилактическую работу в нескольких направлениях. Важно, чтобы в совокупной компетенции, в общей зоне ответственности всех звеньев системы не потерялись бы какие-нибудь важные аспекты профилактической деятельности, во имя которой система и создается[2].

Одними из самых действенных методов предупреждения моло-

---

[1] Жалинский А.Э., Специальное предупреждение преступлений в СССР (вопросы теории), С. 177.

[2] Бабаев М.М., Крутер М.С., Молодежная преступность, М., 2006, С. 327.

дежной преступности являются воспитательные и идеологические методы. Влияние этих методов всеобщее и не направлено на конкретную личность или группу, совершающую правонарушения. Эффективность этих методов в том, что они направлены на повышение образовательного, культурного уровня населения, (особенно молодежи), на более интенсивное участие разных социальных групп в общественной и политической жизни страны. Повышение культурного и образовательного уровня населения способствует тому, что государство для достижения того или иного результата вместо принудительных методов все чаще использовало бы меры поощрения и убеждения, эффективность которых на порядок выше. Идеологическими и воспитательными методами государство положительно влияет на поведение, чувства, разум молодежи, что способствует предупреждению любых проявлений антиобщественного или преступного поведения со стороны молодых людей. Эти методы не только обеспечивают эффективное воспитание молодежи, но и непосредственно направлены на повышение общей и правовой культуры молодежи, формирование ее правосознания, уважения к государству и обществу[1].

Практика воспитания молодежи сформировала ряд научно обоснованных методов, которые призваны предупредить совершение антиобщественных действий молодыми людьми. Эти методы тоже нуждаются в обновлении и усовершенствовании, поскольку развитие общественных отношений, деформированный переход к рыночным отношениям создают новую действительность, в условиях которой все ранее действующие методы не могут успешно функционировать. Идеологическими и воспитательными методами государство и общество как бы направляют молодого человека на совершение общественно полезных действий. Но задача предупреждения молодежной преступности может быть решена только тогда, когда общественно полезные формы поведения превращаются во внутренние стимулы поведения данного молодого человека, в его убеждения.

Идеологические и воспитательные меры предупреждения молодежной преступности разделяются на следующие группы: методы

[1] См.: Раска. Э.Э., Ребане И.А., Методологические аспекты правового воспитания населения, Советское государство и право, 1977, № 7, С. 113.

убеждения, поощрения, государственного и общественного воздействия, критики и самокритики[1].

Содержание метода убеждения довольно разнообразно. Кроме того, что он является основным методом воспитания, воздействия со стороны государства и общества на сознание и поведение молодежи, в его рамках проводятся различные объяснительные и поощрительные мероприятия, цель которых убедить молодежь в том, что единственной правильной и приемлемой формой поведения является общественно полезное поведение, которое соответствует интересам как самого молодого человека, так и общества и государства[2].

Другие методы тоже направлены на формирование необходимых условий для правомерного поведения молодежи. Так, по средствам общественного воздействия люди, непосредственно окружающие молодого человека (будь это в семье, образовательной или трудовой среде), другие общественные формирования и организации напрямую воздействуют на психологию и сознание молодого человека, с тем чтобы он не совершал антиобщественных и антинравственных поступков. Но нужно отметить, что в нынешних условиях только такое воздействие недостаточно, поскольку возрастающие потребности молодых людей, их новые ценностные ориентации не позволяют только наставлениями предупредить их преступность. Нужно, чтобы молодые люди были материально достаточно обеспечены, и это должно стать одной из главных задач всех структур, которые занимаются предупреждением преступности молодежи. Только при обеспечении минимальных потребностей молодого человека методы общественного воздействия могут быть эффективными, поскольку в ином случае нравственно-психологическое воздействие образовательной, трудовой или любой другой общественной среды пройдет даром и никоим образом не будет способствовать предупреждению антиоб-

---

[1] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 92.

[2] См.: Лутовинов В., Родинов Е., О патриотическом воспитании молодежи, Обозреватель, 1997, № 3, С. 15.

щественного поведения молодежи[1].

Осуществление воспитательных и идеологических методов носит системный характер. Это обусловлено тем обстоятельством, что преступность связана с явлениями, факторами, которые присутствуют в различных сферах общественной жизни. Эти факторы могут иметь как общий, так и ситуационный характер. Они проявляются в сфере взаимодействия личности с государством, обществом, разными группами, с другими личностями, и именно от успешного осуществления воспитательных мероприятий в этих сферах зависит нейтрализация и ослабление негативных влияний, способствующих росту молодежной преступности.

Нужно отметить, что очень важно выбрать именно тот воспитательный или идеологический метод, который соответствует характеру правонарушения, совершенного конкретным молодым человеком, поскольку только в этом случае метод будет эффективным и действенным. В настоящее время имеется множество способов влияния на личность со стороны государства и общества, и в развивающихся общественных отношениях очень важно выбрать именно те методы предупреждения молодежной преступности, которые основаны на глубоком научном изучении общественных процессов, факторов, непосредственно влияющих на поведение молодежи[2].

Для эффективного предупреждения молодежной преступности важное значение имеет также изучение мировоззрения и убеждений молодых людей, поскольку таким образом мы можем выявить отношение молодого человека, совершившего преступление к государству, обществу.

Одной из главнейших задач метода убеждения является формирование у личности общественно-полезного мировоззрения. Это само по себе является реальной предпосылкой для проявления молодым человеком законопослушного поведения. Здесь нужно иметь в виду, что воспитательные мероприятия должны основываться не только на

---

[1] См.: Зубок Ю.А., Социальная интеграция молодежи в условиях нестабильного общества, М., 1998, С. 43.

[2] См.: Бабочкин П.И., Молодёжная политика и становление нового поколения, Молодёжная политика, 1995, № 98, С. 12.

передаче молодым людям соответствующих знаний, но и должны быть направлены на улучшение их психологического и эмоционального состояния, а этого можно достичь только тогда, когда органы, которые занимаются предупреждением преступности молодежи, владеют достаточными знаниями о возрастных, психологических, физиологических, социальных, культурных и других особенностях молодежи.

Формирование мировоззрения молодежи – сложный и многогранный процесс. У молодого человека, который только что вступил в общество, часто возникают конфликты, когда его личное противоречит общественному. Здесь главная задача состоит в том, чтобы, используя самые эффективные методы воспитания, достичь нейтрализации этих конфликтов, стабилизации психологического состояния молодых людей[1]. От успешного применения этих методов во многом зависит общественно полезная или, наоборот, общественно опасная направленность убеждений и мировоззрения молодого человека.

Молодой человек в течение своей жизнедеятельности подвергается различным влияниям, которые присутствуют в школе, семье, общественных местах, на улице и т.д. Некоторые из этих влияний понятны и приемлемы для него, а некоторые нет. Приемлемыми для молодого человека, как правило, становятся те влияния, которые непосредственно связаны с его интересами и потребностями. Воздействия окружающего мира, которые наиболее существенны для молодого человека, он пытается понять, оценить, вникнуть в их суть, и, тем самым, принять некоторые из них и отвергнуть остальные. По этой причине для правильного воспитания молодежи нужны системный подход, тесное взаимодействие семьи, образовательных учреждений, трудового коллектива. Эти мероприятия направлены на формирование и закрепление у молодого человека положительного мировоззрения, привычек[2].

Если по какой-либо причине воспитательный процесс временно

---

[1] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 105.

[2] См.: Апарина А.В., Проблемы социально-правовой защиты детей и молодежи в современных условиях, М., 1998, С. 19.

приостанавливается, то формируются открытые места, которые заполняются влияниями криминогенного характера. В этом причина того, что одной из главных задач всех звеньев, занимающихся предупреждением молодежной преступности, должно стать обеспечение непрерывности воспитательного процесса[1]. Характерно, что у молодежи в период перехода к рыночным отношениям формируется потребительская психология. Это приводит к возникновению эгоистических стремлений, что может приобрести огромное криминогенное значение (об этом говорилось выше). Для исправления этой ситуации нужны серьезные положительные общественные и экономические перемены, которых, по всей видимости, придется ждать долго.

Именно сейчас становится крайне важным налаженное взаимодействие всех субъектов, занимающихся воспитательной деятельностью, чтобы идеологическими методами дать молодым людям надежду на будущее, объяснить, что только совместными усилиями и правомерным поведением возможно приоткрыть дверь в будущее нашей страны. С сожалением нужно отметить, что такая идеология отсутствует, и очень немногие сейчас настроены оптимистично и предпринимают усилия для возрождения былой мощи нашего государства. В таких условиях кажется сомнительным воспитание такого подрастающего поколения, которое имело бы здравый смысл и государственное мышление.

Молодой человек, впервые сталкиваясь с жизненными трудностями, часто не может выбрать правильную линию поведения, не ориентируется в объективной действительности. Причиной этого, как правило, является эмоциональное состояние, связанное с такими возрастными особенностями молодых людей, как возбудимость, чувствительность, нерешительность, стремление к самоутверждению и самостоятельности, которые приводят к тому, что молодые люди начинают проявлять антиобщественное поведение, игнорируя нормы права, нравственности и общежития. Действительно, воздействия окружающего мира различны как по своим формам, так и по проявлениям, и для человека, который не имеет достаточного жизненного опыта,

---

[1] Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 105.

иногда очень трудно выбрать правильные и общепринятые формы поведения. Поэтому очень важно, чтобы над молодым человеком, который совершил преступление или находится в криминогенной среде, был установлен эффективный контроль теми государственными и общественными организациями, которые занимаются предупреждением молодежной преступности. В таких случаях огромное значение имеет демонстрация правильных форм поведения со стороны старших, объяснение молодым людям полезности и целесообразности такого поведения. Это становится особенно эффективным тогда, когда общепринятые формы поведения демонстрируются теми людьми, которые пользуются уважением у данного молодого человека[1].

Вместе с тем, нужно констатировать, что только демонстрация положительного примера недостаточна для предупреждения преступности молодежи. Нужно повлиять на психологию молодого человека такими воспитательными и идеологическими методами, которые смогут помочь ему освоить культурные и интеллектуальные блага с тем, чтобы общественно полезные формы поведения превратились в стереотип, мотивацию поведения.

Личность выбирает ту или иную форму поведения в зависимости от возможностей, которые ей предоставили. Выбор порой бывает очень сложным, что обусловлено противоречиями мотиваций. В этих противоречиях выигрывает та мотивация поведения, которая наиболее актуальна для данного молодого человека, соответствует его ценностным ориентациям, мировоззрению, жизненной позиции. Не каждая личность с рождения наделена высокими нравственными свойствами, положительной сущностью, хорошим характером, но в результате правильного общественного воздействия общепринятые формы поведения могут стать привычкой конкретного молодого человека, стать его психологическим свойством, мотивацией поведения. Усвоение молодым человеком положительных норм происходит намного быстрее, когда у данной личности присутствует соответствующий уровень культурного, духовного, образовательного развития, когда данная личность имеет широкий кругозор и всесторонние знания.

---

[1] См.: Ветров Н.И., Профилактика правонарушений среди молодёжи, М., 1980, С. 106.

Идеологические и воспитательные меры приводят к росту уровня правосознания молодежи, что тоже имеет большое антикриминогенное значение. Ранее уже отмечалось, что молодые преступники, как правило, имеют низкий образовательный уровень, негативное, отрицательное отношение к законам и правопорядку. Такое отношение к государству и законам имеет огромный криминогенный потенциал и является реальной предпосылкой для демонстрации противоправного и антинравственного поведения молодыми людьми. Именно для предупреждения такого поведения очень важно правильное применение идеологических и воспитательных методов.

В теории отмечается, что правосознание у личности формируется позднее, чем нравственность, но даже при наличии дефектов в нравственной сфере личности путем правового воспитания можно повлиять на ее психологию и сознание таким образом, чтобы были выбраны правильные формы поведения, не совершались противоправные и антинравственные действия и т.д.[1] Отсюда становится очевидным то огромное влияние, которое может иметь правовое воспитание в деле предупреждения молодежной преступности. Здесь повышается роль образовательной системы, поскольку только путем разработки новых программ обучения можно реально способствовать повышению правосознания молодежи[2].

Вместе с тем нужно отметить, что только наличие правовых знаний недостаточно для эффективного предупреждения молодежной преступности. Необходимо, чтобы молодой человек не только знал содержание законов, но и усвоил, уважал нормы, которые содержатся в этих законах. Важно, чтобы правовые знания превратились в устойчивое внутреннее убеждение личности, стали мотивацией его поведения[3].

Применение воспитательных и идеологических методов предупреждения молодежной преступности может быть эффективным только в том случае, когда все государственные и общественные органы,

---

[1] Долгова А., Кожевникова А., Медведев А., Правовое воспитание несовершеннолетних, М., 1977, С. 64.

[2] См.: Ильинский И.М., О спасительной роли образования, М., 1998, С. 37.

[3] См.: Там же, С. 43.

занимающиеся воспитательной деятельностью, будут уделять большое внимание правовому воспитанию молодежи, поднятию уровня ее правосознания.

В деле предупреждения преступности молодежи, а также для применения воспитательных и идеологических методов и поднятия уровня правосознания молодежи огромную роль играют средства массовой информации. В настоящее время средства массовой информации наделены огромным потенциалом для влияния на сознание, психологию людей, и роль СМИ все возрастает. Все более растет число таких телевизионных программ, которые освещают деятельность правоохранительных органов и проповедуют идеи правильного и общепринятого поведения, но этого пока недостаточно. Телевидение и другие СМИ должны сконцентрировать свои усилия для того, чтобы более глубоко и основательно объяснить суть законов и других правовых норм, выявить их целевое назначение, способствовать уважительному отношению к государству и закону со стороны молодежи, а также способствовать ее правовому воспитанию[1].

В этом деле особая роль принадлежит телевидению. По нашему мнению, нужно создать ряд телепрограмм, которые бы способствовали правовому воспитанию именно несовершеннолетних и молодежи. Причем в этих программах должно не только освещаться содержание правовых норм, но и должна обосновываться необходимость применения этих норм.

Важное значение имеет также поднятие патриотического духа молодежи, внедрение государственного мышления.

Но сегодня наше телевидение заполнено насилием, эротикой, проповедованием чуждых культур. Нашей молодежи демонстрируется пример «правильного» образа жизни, и налицо факт, что она, словно губка, воспринимает его, забывая обо всем национальном, нравственном, правильном.

В этом смысле как настоящую катастрофу можно воспринимать огромные масштабы рекламы различных лото, тотализаторов и азартных игр по телевидению. Такие игры «оккупировали» телевидение и зазывают весь народ стать «миллионерами». Молодые люди в настоя-

[1] См.: Шапинский В.А., Телевидение и молодежь, Диалог, 1998, № 9, С. 7.

щее время заняты не решением повседневных проблем, получением образования, приобретением работы, а все свое внимание сконцентрировали на различных тотализаторах, покупке билетов лотерей, чтобы «на них с неба свалились деньги, автомобили и отдельные квартиры». По нашему мнению, это может привести к деградации нации и особенно самой чуткой и динамичной ее части – молодежи.

Все вышеперечисленное также является серьезным криминогенным фактором, и государство должно бороться с этими явлениями, а не способствовать их развитию и получать от этого кажущуюся выгоду.

Обобщая сказанное, нужно отметить, что в деле предупреждения преступности молодежи воспитательные и идеологические меры имеют особое место. Эффективное применение последних не призвано предупреждать совершение преступления конкретным молодым человеком (хотя это возможно), а имеет общее благоприятное влияние на психологию и сознание молодежи, способствует повышению уровня ее правосознания и совершенствованию нравственного облика, что, в свою очередь, является реальной предпосылкой для правомерного поведения молодежи, уважения ею норм общежития.

Важно отметить также, что эти методы являются первичным рубежом предупреждения молодежной преступности. Другие методы, как правило, направлены на исправление тех молодых лиц, которые уже совершили правонарушение или находятся на грани его совершения. Их целью является нейтрализация отрицательного влияния в молодежной среде, а идеологические и воспитательные методы направлены на воспитание молодежи в духе уважения государства и законов, имеют целью поднятие нравственного и духовного уровня молодежи, формирование здравой психологии.

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տիգրան Սիմոնյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվել երիտասարդների հանցավորության կանխարգելման մի շարք կարևորագույն միջոցների, ինչպիսիք են՝ սոցիալ-տնտեսական, պետաիրավական, գաղափարախոսական և դաստիարակչական միջոցները: Առանձին քննարկվել են այս միջոցների կիրառման և կատարելագործման առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը երիտասարդների հանցավորության արդի միտումների վրա: Կատարված հետազոտության արդյունքում մշակվել են առաջարկություններ, որոնք միտված են երիտասարդների հանցավորության կանխարգելման վերոհիշյալ միջոցների և մեթոդների արդյունավետության բարձրացմանը:

SOCIO-ECONOMIC, STATE-LEGAL, IDEOLOGICAL AND EDUCATIONAL MEASURES OF YOUTH CRIME PREVENTION

Tigran Simonyan
Docent at the YSU Chair of Criminal Law,
Candidate of Legal Sciences

The main idea of the article is the analysis of socio-economic, state-legal, ideological and educational measures of youth crime prevention. The author scrutinizes thoroughly these measures and considers their peculiarities and influance to contemporary trends of youth crime. Analising these measures autor gives some reccomendations to increase the efficiency of these measures and methods.

Բանալի բառեր - երիտասարդների հանցավորության կանխում, սոցիալ-տնտեսական, պետաիրավական, գաղափարախոսական և դաստիարակչական միջոցներ, աշխատանքի ինտելեկտուալացում, հանգստի կազմակերպում, հատուկ-կրիմինալոգիական միջոցառումներ, երիտասարդների հանցավորության կառուցվածք, երիտասարդների դաստիարակություն, հանրօգուտ աշխարհայացք, իրավագիտակցություն

Ключевые слова: предупреждение преступности молодежи, социально-экономические, государственно-правовые, идеологические, воспитательные меры, интеллектуализации труда, организация досуга, специально-криминологические мероприятия, структура преступности молодежи, воспитание молодежи, общественно-полезное мировоззрение, правосознание

Key words: prevention of youth crime, socio-economic, state-legal, ideological, educational measures, intellectualization of labor, organization of leisure, special-criminological events, the structure of youth crime, education of youth, socially-useful worldview, legal conscience

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԷԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԲԵԿԱՆՄԱՆ ՀԻՄՔ

Սամվել Դիլբանդյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Քրեական դատավարության խնդիրների իրականացումը ենթադրում է դատավարության այնպիսի ձևի սահմանում, որը պետք է ապահովի ոչ միայն հանցագործությունների բացահայտումը, այլև դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Օրինականության սկզբունքը ենթադրում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացում: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միշտ չէ, որ նշված մարմիններն ու պաշտոնատար անձինք քրեական գործով վարույթի ընթացքում անվերապահորեն պաշտպանում են քննչական և դատավարական գործողությունների իրականացման՝ օրենքով սահմանված ընթացակարգը: Այսինքն՝ քրեական գործով վարույթի ընթացքում հաճախ թույլ են տրվում դատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով և ծանրության աստիճանով կարող են լինել տարբեր: Այդ խախտումներին կարելի է հանդիպել քրեական դատավարության տարբեր փուլերում, այսինքն՝ ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ դատական վարույթներում: Այսպես՝ քրեական գործերով վարույթի ընթացքում առաջին ատյանի դատարանում թույլ են տրվում սխալներ ոչ միայն գործի փաստական հանգամանքները հաստատելիս, այլև նյութական և դատավարական այս կամ այն նորմը կիրառելիս: Իհարկե, վերադաս դատական ատյանների կողմից դատական ակտերի օրինականության, հիմնավորվածության և արդարացիության ստուգումն իրականացվում է ոչ միայն սխալներն ի հայտ բերելու նպատակով, որոնք թույլ են տրվել գործի քննության և լուծման ընթացքում, այլև միջոցներ ձեռնարկելու համար դրանք վերացնելու ուղղությամբ[1]:

[1] Տե՛ս Червоткин А. С., Аппеляция и кассация, Пособие для судей, М., 2010, М., էջ 24-25:

Իհարկե, քրեական գործով վարույթի ընթացքում թույլ տրված յուրաքանչյուր խախտում պետք է ստանա համապատասխան արձագանք, քանի որ օրինականության սկզբունքը ենթադրում է քրեադատավարական ձևի պահպանում: Անկասկած հարց է առաջանում՝ արդյոք քրեադատավարական օրենքի ցանկացած խախտում կարող է հանգեցնել վերաքննության կամ վճռաբեկության: Նման հարցադրումը, կարծում ենք, որ կարող է խնդիրներ առաջացնել պրակտիկայում, մասնավորապես այն էապես կարող է ազդել առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտերի կայունության վրա: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ քրեական դատավարության օրենսգրքում նշվում է քրեադատավարական օրենքի էական խախտման մասին: Դատավարական օրենքի խախտումներին տրված նման դասակարգումն ունի կարևոր նշանակություն, սակայն դրանից չի կարելի հետևություն անել, որ վարույթն իրականացնող մարմինները կարող են թույլ տալ ոչ էական խախտումներ: Իհարկե, օրենքի ցանկացած խախտման նկատմամբ պետք է ցուցաբերել որոշակի մոտեցում՝ դրանից բխող հետևանքներով: Միանգամայն արդարացի է Մ. Ս. Ստրոգովիչի այս պնդումը. «Քրեական գործերի քննության և լուծման ընթացքում դատավարական նորմերի խստագույնս պահպանումը օրինականության անվերապահ պահանջն է, քրեական գործը ճիշտ լուծելու անհրաժեշտ պայմանը»[1]:

2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված էր հետևյալը. *«Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումը»:* Սահմանադրական այս կարգավորումը բխում է օրինականության սկզբունքից, որից հետևում էր, որ օրենքի ցանկացած խախտում հանգեցնում է ապացույցի անթույլատրելիության: Նշված կարգավորումը որոշակի հակասության մեջ էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին նորմերի հետ, մասնավորապես ՀՀ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածի, որը չի բացառում դատավարական օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործման հնարավորությունը: Օրինականության սկզբունքի ապահովման տեսանկյունից միգուցե

[1] **Строгович М. С.,** Курс советского уголовного процесса. Т. II: Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, с. 382.

սահմանադրական կարգավորումը ճիշտ է, բայց այն արդարացված չէ, քանի որ ցանկացած խախտում չէ, որ կարող է անվավեր դարձնել քրեական գործով իրականացված վարույթը:

Սահմանադրական բարեփոխումների շրջանակներում որոշակի լուծում տրվեց նաև այս խնդրին: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:* Նշված նորմից հետևում է, որ օրենքի խախտման հետևանքները կարող են լինել տարբեր: Սահմանադրությունն արգելում է այնպիսի ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել հիմնական իրավունքների խախտմամբ, կամ եթե դրանց ձեռք բերման արդյունքում խաթարվել է արդար դատաքննության իրավունքը: Ինչպես տեսնում ենք, հիմնական օրենքում արդեն որոշակի սահմանազատում է տրվում օրենքի խախտման, որը բացառում է դատավարական օրենսդրության հետ ունեցած հակասությունները:

Միաժամանակ պետք է նշել, որ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայումը՝ օրենքի համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող են ազդել գործի արդյունքի վրա»: Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործվում է երկու հասկացություն՝ «հիմնական խախտումներ» և «հիմնարար թերություններ»: ՀՀ Սահմանադրության մեջ հիմնական իրավունքի խախտումը վերաբերում է ապացույցների ձեռք բերմանը, իսկ հիմնարար թերությունները՝ նաև գործի քննությանը:

Քրեական դատավարության իրավունքում «քրեադատավարական օրենքի էական խախտում» հասկացությունը ենթադրում է, որ խախտումները կարող են լինել ինչպես *էական*, այնպես էլ *ոչ էական*, իսկ սահմանադրական կարգավորմամբ՝ նաև *հիմնական* և *հիմնարար*: Դրանք իրենց բնույթով, սուբյեկտային կազմով, առաջացող իրավական հետևանքներով կարող են լինել տարբեր: Իհարկե, ճիշտ չէր լինի քրեական վարույթի ընթացքում թույլ տրված յուրաքանչյուր խախտման համար նախատեսել միևնույն իրավական

հետևանքները: Իրականում քրեական գործով վարույթի ընթացքում հնարավոր են ոչ միայն խախտումներ, այլև սխալներ, որոնք իրենց բովանդակությամբ չեն կարող նույնացվել խախտման հետ: Այս հանգամանքը ենթադրում է, որ քրեադատավարական օրենքի խախտումը պետք է ստանա օրենսդրական հստակ կարգավորում:

«Քրեադատավարական օրենքի էական խախտում» հասկացությունը քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվող հասկացություններից է և ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 398-րդ հոդվածով. «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»[1]: Իհարկե, սահմանադրական կարգավորումը, ինչպես նաև միջազգային պայմանագրերի առկայությունը մեզ հիմք է տալիս պնդելու, որ օրենսդրական կարգավորումը կրում է սահմանափակ բնույթ, քանի որ նրանում տեղ գտած ձևակերպումը հիմնականում վերաբերում է քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտմանը: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության մեջ և միջազգային պայմանագրերում ամրագրված անձի իրավունքների և ազատությունների խախտումները դուրս են մնացել էական խախտումից: Իհարկե, վերը նշված ձևակերպումը չպետք է հասկանալ նեղ իմաստով, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի 1-ին հոդվածում քրեական գործերով վարույթը կարգավորող օրենսդրության տակ հասկանում ենք ՀՀ Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, դատական օրենսգիրքը և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքները:

Վերը նշվածը նշանակում է, որ ենթաօրենսդրական ակտերը չեն կարող քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման աղբյուր լինել: Միայն օրենքի շրջանակներում այդ

[1] Նախագծում տրվում է դատավարական օրենքի էական խախտման հետևյալ բնորոշումը՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտում է դատական վարույթի ընթացքում քրեական վարույթի որևէ սկզբունքի խախտումը» /Նախագծի 359-րդ հոդված, մաս 4/:

հարաբերությունների կարգավորումը վկայակոչում է քրեական դատավարությունում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորության մասին: Նաև այլ օրենքների կիրառումը քրեական դատավարության հարաբերությունների կարգավորման ոլորտում նշանակում է, որ «քրեադատավարական օրենք» հասկացությունը պետք է հասկանալ լայն իմաստով, այսինքն՝ այդ հասկացության մեջ ներառելով բոլոր այն օրենքները, որոնք բովանդակում են քրեադատավարական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

Վերը նշված իրավական կարգավորումից արդյո՞ք հետևում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները չեն կարող լինել քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման աղբյուր: Հաշվի առնելով հանրապետությունում նախադեպային իրավունքի կիրառումը կարող ենք ասել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները նույնպես քրեական դատավարության իրավունքի աղբյուրներ են, իհարկե, այդ որոշումներով իրավունքի նոր նորմեր չեն ստեղծվում[1]:

Անկասկած, ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի, այնպես էլ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներն ունեն կարևոր նշանակություն, քանի որ դրանց շնորհիվ իրավական դաշտից վերացվում են ոչ սահմանադրական օրենքները: ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ընդունվել են տասնյակից ավելի որոշումներ, որոնց ուժով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին նորմեր ճանաչվել են հակասահմանադրական, և դադարեցվել է այդ նորմերի կիրառությունը: Իհարկե, կապ չունի՝ ՀՀ Ազգային ժողովը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարել է, թե ոչ: Քննիչները, դատախազներն ու դատարանը հաճախ են իրենց որոշումներում հղում կատարում ՀՀ Սահմանադրական դատարանի ոչ միայն որոշումներին, այլև այդ որոշումներում տեղ գտած իրավական դիրքորոշումներին: Այսօր տեսական և գործնական կարևորություն է ներկայացնում այն հարցը, թե արդյո՞ք իրավական դիրքորոշումները իրավունքի աղբյուր են և կարող են կիրառվել, կամ դրանց չկիրառումը կարո՞ղ է համարվել

[1] Չնայած պետք է նշել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանն առանձին դեպքերում կայացնում է որոշումներ, որոնք ակնհայտ նորմաստեղծ բնույթ ունեն:

խախտում: Այս հարցին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի քանի որոշումներում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ: Որպես սահմանադրական իրավունքի կարևոր աղբյուր՝ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ (նորմաստեղծ) գործունեության համար:

Ելնելով ՀՀ Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի ու իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական ուժի և բնույթի առանձնահատկություններից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները.

ա/ անմիջականորեն բխում են Սահմանադրական դատարանի լիազորություններից, հետևաբար կրում են պաշտոնական բնույթ,

բ/ ունեն կոնկրետ իրավական հետևանք, հասցեագրված են ինչպես տվյալ գործով կոնկրետ, այնպես էլ հանրային-իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին (համընդգրկուն են),

գ/ ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, կարող են փոփոխվել միայն Սահմանադրական դատարանի որոշումներով,

դ/ կոչված են ՀՀ իրավահամակարգում և իրավակիրառական պրակտիկայում նպաստելու իրավական անորոշության վերացմանը, դրվում են իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմքում, ունեն նախադեպային բնույթ,

ե/ մինչև վեճի առարկա հարաբերության նորմատիվ կարգավորումը, որոշ դեպքերում նաև իրավակարգավորման ժամանակավոր միջոց են,

զ/ ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են[1]:

Առանձնահատուկ են նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները՝ որպես քրեական դատավարության իրավունքի աղբյուր: Վճռա-

[1] ՀՀ Սահմանադրական դատարանի 25.02.2011 թ. թիվ 943 որոշումը:

բեկ դատարանի որոշումների իրավական բնույթը բխում է նրա սահմանադրաիրավական վիճակից, մասնավորապես ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը,

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:

ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ՝ բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»: Ինչպես տեսնում ենք, Վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիրությունն արդեն իսկ խոսում է օրենքի խախտման առկայության մասին, եթե դրանք չեն պահպանվել վարույթն իրականացնող մարմինների կողմից:

Բացի վերը նշվածից՝ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով բողոքը վարույթ ընդունելու և բեկանելու հիմք է բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, որը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Այսինքն՝ քրեադատավարական օրենսդրության մեջ այն ընդունվում է որպես բողոքարկման հիմք: Իհարկե, բոլոր դեպքերում խախտումը վերաբերում է օրենքի այն նորմին, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում:

Միանգամայն ակնհայտ է, որ «էական դատական խախտումները, որոնք կարող են ազդել օրինական, հիմնավորված ու արդար դատավճռի կայացման վրա, հարկ է համարել միայն նրանք, որոնք այսպես թե այնպես խաթարում են մրցակցային դատավարության

ելակետային, հիմնարար հիմքերը»[1]: Սակայն օրինաչափորեն հարց է ծագում, թե որոնք են մրցակցային դատավարության ելակետային, հիմնարար հիմքերը: Ա. Վ. Սմիռնովի և Կ. Բ. Կալինովսկու կարծիքով՝ դրանք են կողմերի հավասարության և դատարանի անկախության սկզբունքները: Քրեական դատավարության հիմնարար հիմքերի սակավաթվությունը նրանք բացատրում են այն բանով, որ «հանրագումարում այդ սկզբունքները ձևավորում են մրցակցային դատավարության գլխավոր կառուցվածքը»[2]: Մ. Ս. Ստրոգովիչը փոքր-ինչ այլ կերպ է բնորոշում քրեադատավարական օրենքի էական խախտումները: Նրա կարծիքով՝ «Դատավարական էական խախտումներ են համարվում դատավարական նորմերի այնպիսի խախտումները, որոնք, զրկելով կամ սահմանափակելով կողմերի՝ օրենքով երաշխավորված իրավունքները, կամ այլ եղանակով խոչընդոտել են դատարանին բազմակողմանիորեն քննելու գործը և ազդել են կամ կարող էին ազդել օրինական և հիմնավորված դատավճռի կայացման վրա»[3]: Քրեադատավարական գրականության մեջ դատավարական օրենքի էական խախտման հասկացության վերաբերյալ հանդիպում ենք խմբագրական տարբերությամբ նույնանման բնորոշումների, որոնք այն հիմնականում հանգեցնում են քրեական դատավարության սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտման: Իրականում միշտ չէ, որ սկզբունքի կամ ընդհանուր դրույթի խախտումը կարող է հանգեցնել անձի իրավունքների սահմանափակման կամ քրեական գործի ելքի համար ունենալ վճռորոշ նշանակություն:

Ելնելով դատական պրակտիկայի ուսումնասիրությունից՝ կարող ենք ասել, որ դատավճռի բեկանման կամ փոփոխման համար որպես դատական ակտը բեկանելու հիմնավորում պետք է նախատեսել ոչ թե քրեադատավարական օրենքի էական խախտումները, այլ պարզապես քրեադատավարական օրենքի խախտումը: Ընդ

---

[1] **Смирнов А. В., Калиновский К. Б.**, Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный. М.: КНОРУС, 2007, с. 846.

[2] Նույն տեղում:

[3] **Строгович М. С.,** Курс советского уголовного процесса. Т. II: Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. М.: Издательство «Наука», 1970, с. 382.

որում, պետք է նշել, որ քրեադատավարական օրենքի ոչ բոլոր խախտումները կարող են հանգեցնել դատական որոշման բեկանման կամ փոփոխության: Այսինքն՝ Վճռաբեկ ատյանի կողմից դատական որոշման բեկանման կամ փոփոխման համար հիմք պետք է ծառայեն քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումները, որոնք քրեական դատավարության մասնակիցներին սույն օրենսգրքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու ճանապարհով, դատավարության ընթացակարգը չպահպանելու կամ այլ եղանակով ազդել են կամ կարող էին ազդել օրինական, հիմնավորված և արդարացի դատավճռի կայացման վրա: Քրեադատավարական օրենքի *էական* խախտումների հասկացությունից հրաժարումը հիմնավորվում է այն բանով, որ շեշտը պետք է դնել քրեադատավարական օրենքի խախտման հետևանքների վրա: Վճռաբեկության կարգով դատական որոշման բեկանման կամ փոփոխման համար հիմք կարող է դառնալ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի ցանկացած խախտում, որը քրեական դատավարության մասնակիցներին իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու միջոցով, դրա ընթացակարգը չպահպանելու կամ այլ եղանակով ազդել է կամ կարող էր ազդել օրինական, հիմնավոր և արդարացի դատավճռի կայացման վրա»[1]:

Կարծում ենք, որ նշված հարցի օրենսդրական կարգավորման դեպքում հիմնական շեշտը պետք է դնել ոչ թե ձևական կարգավորման վրա, այլ բովանդակային, այսինքն՝ որոշել, թե այս կամ այն խախտումը դասվում է էականների շարքին, թե ոչ, հնարավոր է միայն կոնկրետ քրեական գործի հանգամանքներից ելնելով:

Կարծում ենք՝ քրեադատավարական օրենքի խախտումների առնչությամբ «էական» հասկացության կիրառումը անխուսափելիորեն կհանգեցնի այդ խախտումների ձևականացմանը, այսինքն՝ օրենսդրորեն կամ այլ կերպ կսահմանվի խախտումների ցանկը, որոնք կարող են դիտվել որպես էական: Անկասկած, դա շատ հարմար է դատավորի համար, որն առանց կոնկրետ քրեական գործի մանրամասն վերլուծության, առանց դրա առանձնահատկությունները հաշվի առնելու կլուծի քրեադատավարական օրենքի էական խախտումների մասին հարցը, որը հնարավորություն կտար փոփո-

[1] Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Отв. ред. Д.Н. Козак, Е.Б. Мизулина. М.: Юристъ, 2003, с. 620-621.

խելու կամ բեկանելու դատարանների որոշումները: Սակայն այսօրինակ մոտեցումը հազիվ թե ընդունելի լինի, քանի որ միևնույն խախտումը կարող է էական համարվել մի դեպքում և ոչ էական՝ մյուս դեպքերում: Պայմանավորված այն բանով, թե որքանով է ազդել քրեադատավարական օրենքի խախտումը հիմնավոր դատավճիռ կայացնելու վրա, պետք է լուծվի այն հարցը, թե արժե արդյոք այն հիմք ընդունել դատարանի կայացրած որոշումը փոփոխելու կամ բեկանելու համար: Ուստի, կարծում ենք, որ տվյալ համատեքստում քրեադատավարական օրենքի խախտումները դիտարկելիս անիմաստ է դառնում այնպիսիների առանձնացումը, որոնք հարկ լինի բնորոշել որպես էական[1]:

Կարծում ենք, որ այս հարցում դատական հայեցողությունը կարևոր է, պետք է վստահել դատավորին, վերջինս պետք է որոշի, թե քրեադատավարական օրենքի որ խախտումները կարող էին ազդել դատավճռի օրինականության վրա: Դա հնարավորություն է ընձեռում դատավորին դատավճռի բեկանման կամ փոփոխման հնարավորության հարցը լուծել՝ կոնկրետ քրեական գործի առանձնա-

---

[1] Արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ «քրեադատավարական օրենքի էական խախտում» հասկացությունը ստացել է տարբեր կարգավորում: Որոշ երկրների քրեադատավարական օրենսդրության մեջ նշում է կատարվում քրեական դատավարական օրենքի էական խախտման մասին՝ առանց այն խախտումների առանձնացման, որոնք անվերապահորեն հանգեցնում են դատական ակտի բեկանման: Այդպիսի իրավական կարգավորումը հանգեցնում է դատական հայեցողության, այսինքն՝ դատարանն ինքն է որոշում, թե դատավարական օրենքի խախտումն ինչպիսի ազդեցություն է ունեցել դատավճռի կայացման վրա: Այլ երկրների օրենսդրությամբ սահմանված են, ինչպես «քրեադատավարական օրենքի էական խախտման» հասկացությունը, այնպես էլ վերաքննության կամ վճռաբեկության կարգով դատական ակտի բեկանման անվերապահ հիմքերը: Ավելին, պետք է նշել, որ որոշ երկրների քրեադատավարական օրենսդրությամբ (օրինակ՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի) նախապատվությունը տրվում է *«պատժի հիմնավորվածության տեսությանը»*, այսինքն՝ եթե նշանակված պատիժը համարժեք է այն պատժին, որը օրենքով սահմանված կարգով պետք է կիրառվեր այդ հանցագործության համար, ապա ոչ ոք իրավունք չունի պահանջելու դատական ակտի բեկանում այն պատճառաբանությամբ, որ տեղի է ունեցել օրենքի նորմերի կիրառման խախտում:

հատկություններից ելնելով, այսինքն՝ ցուցաբերել անհատական մոտեցում: Ուստի միանգամայն տրամաբանական է հետևյալ քայլը՝ *քրեադատավարական օրենքի խախտում* տերմինը գործածել առանց «էական» բառի: Առավել ևս, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և Նախագծի հիշատակված նորմում կոնկրետացված չեն այն խախտումները, որոնք անառարկելիորեն պետք է համարվեն էական՝ հանգեցնելով դատավճռի բեկանմանը կամ փոփոխմանը:

Կարծում ենք, որ օրենքը դատարանին իրավունք է վերապահում, կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններից կախված, որոշել այն հարցը, թե արդյոք էական են քրեադատավարական օրենքի կոնկրետ խախտումները և դրա հիման վրա հանգեցնում են դատական որոշումը վերանայելու: Սա ճիշտ մոտեցում է, քանզի միևնույն խախտումը, կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված, կարող է տարբեր կերպ անդրադառնալ որոշման վրա: Օրենսդրորեն հնարավոր չէ հաշվի առնել նշված առանձնահատկությունների ամբողջ բազմազանությունը: Հետևաբար, էական է արդյոք քրեադատավարական օրենքի խախտման հարցի լուծումը դատարանին վստահելը այդ հիմնախնդրի միանգամայն ողջամիտ լուծում է: Ճիշտ է, միանգամայն տեղին կլիներ կիրառել ոչ թե ՀՀ քր. դատ. օր.-ի 398-րդ հոդվածում տեղ գտած «քրեադատավարական օրենքի էական խախտումներ» բառակապակցությունը, այլ պարզապես «քրեադատավարական օրենքի խախտումներ» ձևակերպումը: Դա ավելի շատ կարտացոլեր օրենսդրի նոր մոտեցումը քրեադատավարական օրենքի խախտումների նկատմամբ՝ որպես դատական որոշումը փոխելու հիմքի:

Ուշագրավ է նաև այն, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ դատավարական օրենքի էական խախտումներ են համարվում միայն այն խախտումները, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, կարծում ենք, որ նշված սահմանափակումն արդարացված չէ, որովհետև այդ խախտումները կարող են լինել նաև մինչդատական վարույթի ընթացքում, հետևաբար էական են համարվում նաև այն խախտումները, որոնք թույլ են տրվել մինչդատական վարույթի ընթացքում:

Քրեական գործով վարույթի կարգի չպահպանումը առաջացնում է համապատասխան իրավական հետևանքներ ինչպես քրեա-

կան գործի համար, այնպես էլ դատավարության մասնակիցների համար, որոնք թույլ են տվել այդ խախտումները, մասնավորապես բեկանվում են այն որոշումները, որոնք կայացվել են դրանց արդյունքում, կամ ձեռք բերված ապացույցները ճանաչվում են անթույլատրելի: Առանց դատավարական ձևի պահպանման միևչդատական վարույթի և դատական քննության իրականացումը, թեկուզ այն հանգեցրել է քրեական գործով ճշմարտության բացահայտման, հանգեցնում է դատավարության մասնակիցների իրավունքների խախտման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերլուծելով քրեադատավարական օրենքի էական խախտումները, որոնք կարող են հանգեցնել դատական որոշման բեկանմանը, հարկ է նկատել, որ դրանցից ոչ բոլորն են ոտնահարում քրեական դատավարությանը մասնակից անձանց իրավունքներն ու ազատությունները: Սրանից հետևում է, որ քրեադատավարական ձևը ևս ոչ միշտ է պետք դիտարկել որպես քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների երաշխիք: Ասել է թե՝ քրեադատավարական ձևը չի կարելի համարել լոկ որպես քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ու ազատությունների երաշխիք, քանի որ այն ունի նաև մի շարք այլ նշանակություններ[1]:

Քրեադատավարական օրենքի էական խախտման հետ միաժամանակ քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվում է «հիմնարար խախտում» հասկացությունը, որի բովանդակությունը չի բացված քրեական դատավարության օրենսդրությունում: Մասնավորապես ՀՀ քր. դատ. օր.-ի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել *նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ*, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»: Նյութական և դատավարական իրավունքի հիմնարար խախտումները նույնպես պետք է դատական որոշումների բեկանման անվերապահ հիմք հանդիսանան: Իհարկե, պետք է հաշվի

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թ. սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշման 15-րդ կետը:

առնել այն հանգամանքը, որ էական խախտումներից ոչ բոլորն են, որ համարվում են հիմնարար խախտում: Կարծում ենք, որ հիմնարար են համարվում օրենքի այն խախտումները, որոնք վերաբերում են քրեական դատավարության հիմքերին, որի հետևանքով անօրինական է ճանաչվում քրեական գործով վարույթն ամբողջությամբ վերցրած (օրինակ՝ եթե գործի քննությունն իրականացվել է դատարանի անօրինական կազմով կամ օրենքով չստեղծված դատարանի կողմից, կամ խախտվել է տվյալ գործի քննության ընդդատությունը): Հիմնարար խախտումների արդյունքում խախտվում են մրցակցային դատավարության հիմքերը, կողմերի իրավահավասարությունը և դատարանի անկախությունը:

Հիմնարար խախտում պետք է համարել դատավարության մասնակիցների արդար դատաքննության իրավունքի և դատական պաշտպանության իրավունքի խախտումները: Կարծում ենք, որ այդ խախտումները պետք է լինեն իրական, այսինքն՝ դրանք ազդել են քրեական գործի ելքի, այսինքն՝ անձի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ դատարանի համոզմունքի վրա: Հիմնարար խախտումները պետք է խաթարեն արդարադատության բուն էությունը և խախտեն սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

СУЩЕСТВЕННОЕ НАРУШЕНИЕ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО ЗАКОНА КАК ОСНОВАНИЕ ДЛЯ ОТМЕНЫ СУДЕБНОГО АКТА

Самвел Дилбандян

Заведующий кафедрой уголовного процесса и криминалистики ЕГУ, доктор юридических наук, профессор

В уголовном судопроизводстве часто допускаются разные по характеру и степени тяжести нарушения процессуального закона. Эти нарушения могут допускаться на различных стадиях уголовного судопроизводства, т.е. как в досудебном, так и в судебном производстве.

До принятия нового Уголовно-процессуального кодекса важно изучить теоретические и практические вопросы, связанные с нарушением уголовно-процессуального закона. Для сравнениямы рассмотрели понятия «существенное нарушение уголовно-процессуального закона», «основное нарушение» и «фундаментальное нарушение».

A SUBSTANTIAL VIOLATION OF THE CRIMINAL-PROCEDURAL LAW AS A BASIS FOR THE ANNULMENT OF THE JUDICIAL ACT

Samvel Dilbandyan
Head of the Department of Criminal Procedure and Criminalistics, YSU, Doctor of Law, Professor

A lot of violations of the procedural law are frequently made during criminal proceedings, which may vary by their nature and severity. These violations can be met at the various stages of criminal proceedings both in the pre-trial proceedings and during the litigation.

Before the adoption of new Code of Criminal Procedure, it is important to study the theoretical and practical issues relating to the violation of criminal-procedural law. In the comparison, the author has examined the definitions of "substantial violation of criminal-prcedural law", "major violation" and "fundamental violation".

Բանալի բառեր – քրեադատավարական օրենք, խախտում, հիմնական խախտում, հիմնարար խախտում, դատական ակտ, վերանայում

Ключевые слова: уголовно-процессуальный закон, нарушение, основное нарушение, фундаментальное нарушение, судебный акт, пересмотр

Key words: criminal-procedural law, violation, fundamental violation, major violation, judicial act, review

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Վահե Ենգիբարյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր

Դատական փորձաքննությունն իրենից ներկայացնում է գիտական հետազոտության տարատեսակ, որը քրեական դատավարությունում ուղղված է հատուկ գիտելիքների կիրառմամբ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալների տրամադրմանը:

Քննարկվող տեսանկյունից դատական փորձագիտական-հետազոտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալով:

Որպես քննչական գործողության՝ դատական փորձաքննությունների նշանակման և կատարման հիմքերն ու կարգը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ): Սակայն հարկ է նկատել, որ ի տարբերություն ՀՀ ՔԴՕ-ով սահմանված մյուս քննչական գործողությունների՝ փորձաքննության նշանակումը և կատարումն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնք էլ պայմանավորում են այս քննչական գործողության յուրահատուկ բնույթը: ՀՀ ՔԴՕ-ի նորմերի ու պրակտիկայի (քննչական, դատական և փորձագիտական) վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել փորձաքննության նշանակմանը և կատարմանն առավել բնորոշ որոշակի առանձնահատկություններ, մասնավորապես.

- փորձաքննությունը նշանակում է վարույթն իրականացնող մարմինը, կատարում է փորձագետը,
- փորձաքննությունը կատարող անձը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների,

- փորձաքննությունը կարող է նշանակվել և կատարվել մինչև քրեական գործի հարուցումը,
- որոշակի հանգամանքների հաստատման համար փորձաքննության նշանակումը և կատարումը պարտադիր են: Ընդ որում, դա պայմանավորված է ոչ միայն ՀՀ ՔԴՕ-ի պահանջներով, այլ նաև քննվող հանցագործության բնույթով, օրինակ՝ դատավտոտեխնիկական փորձաքննության նշանակումը և կատարումը՝ ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ քրեական գործերով, փաստաթղթաբանական փորձաքննությունները՝ կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու և իրացնելու վերաբերյալ գործերով և այլն:

Անդրադառնալով դատական փորձաքննությունների իրավական կարգավորման հիմնախնդիրներին՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատահիրավական բարեփոխումների շրջանակում մշակված և շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), ի տարբերություն գործող ՀՀ ՔԴՕ-ի, դատական փորձաքննությունների հարցում որդեգրել է նորովի, գործող իրավակարգավորումներից էականորեն տարբերվող մոտեցումներ:

Քննարկենք դրանցից առավել նշանակալիները:

Այսպես՝ ի տարբերություն գործող ՀՀ ՔԴՕ-ի՝ Նախագիծը, կարևորելով դատական փորձաքննությունների ինստիտուտի դերն ու նշանակությունը, արդարացիորեն փորձաքննության նշանակումը չի համարում քննչական գործողություն, այլ դիտում է քրեական դատավարության առանձին ինստիտուտ, ապացուցողական գործողություն: Որպես ապացուցողական առանձին գործողություն՝ Նախագծով փորձաքննությանը վերաբերող հարցերը կարգավորված են առանձին՝ գլուխ 32-ով, որը վերնագրված է «Փորձաքննությունը»:

Ընդ որում, ՀՀ ՔԴՕ գլուխ 35-ը կոչվում էր *«Փորձաքննություն կատարելը»,* որը հետագայում արդարացիորեն փոփոխության ենթարկվեց և անվանվեց *«Փորձաքննություն նշանակելը և կատարելը»,* չնայած որ ՀՀ ՔԴՕ 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում, ինչպես նաև 180-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվում է միայն *«փորձաքննություն նշանակել»* արտահայտությունը:

Ուշագրավ է նաև այն, որ Նախագիծը նշված գլխի 254-րդ հոդվածով միևնույն ժամանակ կարգավորում է նաև փորձաքննության

համար նմուշներ ստանալու կարգը, տեսակները, մինչդեռ ՀՀ ՔԴՕ-ն հետազոտման համար նմուշներ ստանալը համարում է առանձին քննչական գործողություն, որին նվիրված է առանձին գլուխ *(գլուխ 36)*:

Հարկ է ընդգծել, որ թեև Նախագիծը հետազոտման համար նմուշների ստացումը որպես առանձին քննչական գործողություն չի նախատեսում, այնուամենայնիվ չի բացառում փորձաքննության համար նմուշ ստանալու հնարավորությունը մյուս քննչական գործողությունների կատարման ընթացքում: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ Նախագծով հետազոտման կամ փորձաքննության համար նմուշ ստանալու համար առանձին քննչական գործողություն նախատեսված չէ, այնուամենայնիվ քննիչն իրավունք ունի ցանկացած քննչական գործողության ընթացքում վերցնելու փորձաքննության համար նմուշներ՝ բացառությամբ մարդուց ստացվող նմուշների: Թեև Նախագծով ուղղակիորեն սահմանված չէ, բայց ենթադրվում է, որ քննիչը մարդուց նմուշներ կարող է ստանալ միայն փորձագետի մասնակցության դեպքում, կամ էլ մարդուց նմուշներ կարող է ստանալ միայն փորձագետը, հակառակ դեպքում մարդուց նմուշների ստացումը ևս թույլատրելի կլիներ քննչական գործողությունների ընթացքում:

Ըստ այդմ՝ Նախագծի 254-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ մինչև փորձաքննություն նշանակելը կամ դրա կատարման ընթացքում քննիչը կամ նրա հանձնարարությամբ փորձագետը իրավասու է վերցնել մարդու, դիակի, կենդանու, նյութի կամ այլ օբյեկտի հատկությունները բնութագրող նմուշներ, եթե դրանք անհրաժեշտ են փորձաքննության կատարման համար: Նմուշ կարող են լինել արյունը, սերմնահեղուկը, մազը, եղունգների կտրվածքները, մաշկի մանրադիտակային քերծվածքները, թուքը, քրտինքը և այլ արտաթորանքները, մաշկի գծանախշերի դրոշմը, ատամների և վերջավորությունների կաղապարները, ձեռագիրը, ստորագրությունը, մարդու հմտությունն արտահայտող այլ նյութերը, ձայնագրությունը, պատրաստի արտադրանքի, հումքի, նյութերի փորձնական նմուշները, զենքը, պարկուճը, գնդակը, փամփուշտը, այլ նյութերը և առարկաները:

Փորձաքննության համար նմուշ ստանալու մասին որոշումը կայացնում է քննիչը: Այդ որոշման մեջ պետք է նշվեն նմուշ ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, եթե նմուշը ստացվում է ան-

ձից, ապա նրա անունը, ազգանունը և կարգավիճակը, եթե նմուշը ստացվում է նյութից կամ այլ օբյեկտից, ապա դրա գտնվելու վայրը և դրա մասին այլ վերաբերելի տվյալներ, ստացման ենթակա նմուշի տեսակը, չափը կամ քանակը, եթե նմուշը ստացվում է անձից, ապա նմուշ հանձնելու համար նրա ներկայանալու տեղը և ժամանակը, նմուշը ստանալու նպատակը:

«Համեմատական հետազոտման նմուշ» հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականությունում տարբեր տեսակետներ կան: Անշուշտ, յուրաքանչյուր հրատարակված սահմանում պարունակում է համեմատական հետազոտման նմուշի հասկացության ճիշտ ընկալման համար հիմնական բնութագրումներ[1]: Այնուամենայնիվ, ոչ բոլոր առաջարկված սահմանումներին կարելի է համաձայնել:

Որոշ ձևակերպումներում այնքան էլ հաջող օգտագործված չեն եզրույթները, չի պարունակվում «նմուշ» հասկացությունը՝ առարկաների առումով, կամ էլ մեկնաբանությունը հաշվի չի առնում այն բոլոր քննչական գործողությունները, որոնց ընթացքում կարող են նմուշներ վերցվել[2]:

Այսպես՝ համեմատական հետազոտման նմուշ ասելով՝ հասկացվում է՝ *«...նյութական օբյեկտ, որն անկասկած սերում է այլ օբյեկտից և հանդիսանում է նրա մասը կամ արտացոլում է նրա հատ-*

---

[1] Տե՛ս **Дулов А. В**., Права и обязанности участников судебной экспертизы. Минск, 1962, էջ 165; **Петрухин И. Л.,** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе. М., 1964, էջ 37; **Жбанков В. А.,** Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования. Минск, 1965, էջ 71; **Винберг А. И.,** Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе// Соц. Законность, № 3, 1966, էջ 22; **Грамович Г. И.,** Тактика использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений. Минск, 1987, էջ 32:

[2] Տե՛ս **Дулов А. В**., Права и обязанности участников судебной экспертизы. Минск, 1962, էջ 165; **Петрухин И. Л.,** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе. М., 1964, էջ 37; **Жбанков В. А.,** Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования. Минск, 1965, էջ 71; **Винберг А. И.,** Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе// Соц. Законность, № 3, 1966, էջ 22:

կությունները, որոնք ստացվում են հատուկ հետազոտությունների անցկացման համար, ճանաչվող օբյեկտի սեռային (խմբային) պատկանելության վերականգնման և ինքնության ճանաչման նպատակով, ինչպես նաև քննվող հանցագործության այլ հանգամանքների վերականգնման համար»[1]:

Նշենք, որ այլ օբյեկտից անկասկած ծագման դեպքում ոչ բոլոր համեմատելի օբյեկտները կարող են համարվել նմուշներ: Օրինակ՝ ֆոնոգրաման մարդու ձայնի ձայնագրումն է մագնիսային կրիչի վրա, և այն չի ծագում այլ օբյեկտից: Նմանապես եթե դատաձգաբանական փորձաքննության իրականացման ընթացքում որպես համեմատական նյութ ներկայացվի հրազեն, ապա այն չի ծագում այլ օբյեկտից, այլ պատրաստված է արտադրական պայմաններում որպես սկզբնական օբյեկտ, և այդ դեպքում կհամեմատվեն հրազենի չափանիշները:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ *«Նմուշներն առարկաներ են, որոնք ստեղծվել կամ փոփոխվել են իրեղեն ապացույցների ձևավորման եղանակին նման ձևով և հենց այդ օբյեկտի ազդեցության ներքո»*[2]:

Գրեթե բոլոր սահմանումներում տրված է նմուշի գլխավոր ատրիբուտը՝ համեմատական հետազոտության համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունը նմուշում: Անկախ նրանից՝ դրանք ստեղծվել են, թե ստացվել այլ օբյեկտից, նմուշը պետք է իր մեջ պարունակի համեմատության համար բավարար և օգտակար տվյալներ իդենտիֆիկացիայի խնդիրների իրականացման համար:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ անկախ համեմատական հետազոտման նմուշի տարաբնույթ սահմանումներից՝ համեմատական հետազոտման նմուշը նյութական առարկա, օբյեկտ է, որն ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով պիտանի է համեմատական հետազոտում իրականացնելու համար:

---

[1] Տե՛ս **Долженко Н. И.,** Понятие образцов для сравнительного исследования и их природа//Вестник криминалистики. Вып. 1, М., 2000, էջ 47:

[2] Տե՛ս **Орлов Ю. К.,** Гносеологическая сущность и процессуальная форма образцов для сравнительного исследования// Труды ВНИИСЕ. Вып. 5, М., 1973, էջ 178:

Քննարկման առիթ է հանդիսանում համեմատական հետազոտման նմուշների դատավարական բնույթի խնդիրը: Գործող օրենսդրությունը չի սահմանում, թե արդյոք դրանք ինքնուրույն ապացույցի արժեք ունեն: Գոյություն ունեն երկու տեսակետներ: Ըստ առաջինի՝ համեմատական հետազոտման նմուշներն ապացույցի ինքնուրույն տեսակ են և բնորոշվում են որպես իրեղեն ապացույցի տարատեսակ[1]: Համաձայն երկրորդի՝ համեմատական հետազոտման նմուշներն ինքնուրույն ապացույցի արժեք չունեն[2]:

Մեր կարծիքով՝ պետք է ելնել հենց իրեղեն ապացույցի հասկացությունից: Ըստ ծագման բնույթի՝ իրեղեն ապացույց են այն նյութական օբյեկտները, որոնք ծագել են հանցագործության ընթացքում կամ օգտագործվել են հանցագործության իրականացման ժամանակ, հանցագործության նախապատրաստվելիս և այլն: Կարծում ենք, որ համեմատական հետազոտման նմուշների ձևը կախված է հենց օբյեկտի բնույթից: Նմուշների սահմանման ժամանակ կարելի է հիմք ընդունել ձևավորման գործընթացը:

Նմուշները, որոնք հատկապես ձեռք են բերվել համեմատական հետազոտման իրականացման համար, իրեղեն ապացույց չեն: Ճիշտ չէ իրեղեն ապացույցների թվին դասել այն օբյեկտները, որոնք ծագել են մինչև հետազոտվող դեպքի տեղի ունենալը և կապված չեն դրա հետ: Համեմատական հետազոտման նմուշները միայն առանձին դեպքերում կարող են լինել իրեղեն ապացույցներ, եթե մինչ այդ դրանք բնորոշվել են որպես այդպիսին:

Պետք է նշել, որ գործող ՀՀ ՔԴՕ-ն թվարկում է գիտելիքների այն բնագավառները, որոնց գիտական տվյալները կարող են կիրառվել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացա-

---

[1] Տե՛ս **Дулов А. В**., Права и обязанности участников судебной экспертизы. Минск, 1962, էջեր 168-169; **Галкин В. М.,** Средства доказывания в уголовном процессе. Ч. 1, М., 1967, էջ 32; **Рахунов Р. Д.,** Вещественные и письменные доказательства в советском уголовном процессе//Ученые записки ВИЮН. Вып. 10, М., 1959, էջեր 208-209:

[2] Տե՛ս **Белкин Р. С**., Эксперимент в следственной, судебной и экспертной практике. М., 1964, էջեր 166-167; **Винберг А. И.,** Образцы для сравнительного исследования. М., 1962, էջեր 45-49; **Жбанков В. А.,** Получение образцов для сравнительного исследования. М., 1992, էջ 5; **Селиванов Н. А.,** Вещественные доказательства. М., 1971, էջեր 12, 15:

հայտման համար փորձաքննություն նշանակելու և կատարելու, ինչպես նաև վարույթին այլ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու ճանապարհով: Այդ բնագավառներն են *գիտությունը, տեխնիկան, արհեստը և արվեստը:*

Տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական փորձաքննության իրականացման գործընթացում կիրառման ենթակա հատուկ գիտելիքների պատկանելիության ոլորտների թվարկման վերաբերյալ պետությունների մոտեցումները տարբեր են: Օրինակ՝ Գերմանիայում այդ բնագավառներն են գիտությունը, արվեստը և առևտուրը, Ֆրանսիայի քրեական դատավարությունում ընդամենը խոսքը գնում է տեխնիկական բնույթի հարցերի մասին, Շվեյցարիայի քրեադատավարական օրենսդրությամբ հատուկ գիտելիքների կամ դրանց պատկանելիության բնագավառների մասին ընդհանրապես չի նշվում: ԱՄՆ-ում հատուկ գիտելիքների պատկանելիության բնագավառը սահմանվում է ոչ սպառիչ թվարկումով՝ գիտության, տեխնիկայի կամ այլ բնագավառի հատուկ գիտելիքներ[1]:

Այս իմաստով Նախագծի 252-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Փորձաքննություն կատարվում է, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ»:*

Ինչպես նկատում ենք, ի տարբերություն գործող ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածի 1-ին մասի, որը սահմանում է փորձաքննության կատարման համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների սպառիչ շրջանակը՝ *«... գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ»,* Նախագիծը չի սահմանափակել հատուկ գի-

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007; ***Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ա.,*** Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները), գիտական ձեռնարկ, խմբ.՝ ***Վ. Գ. Ենգիբարյան***, Երևան, «Անտարես» հրատ., 2012, էջեր 36-43:

տելիքների բնագավառները՝ օգտագործելով *«կամ այլ բնագավառում»* արտահայտությունը:

Կարծում ենք՝ ՀՀ օրենսդրությամբ հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտների սպառիչ թվարկումն արդարացի չէ: Բանն այն է, որ քրեադատավարական հարաբերություններում կարող է անհրաժեշտություն առաջանալ գործի որոշակի հանգամանքների բացահայտման համար կիրառել այնպիսի գիտելիքներ, որոնք չպատկանեն գիտության, տեխնիկայի, արհեստի կամ արվեստի ոլորտին, սակայն որպես այդպիսին՝ հանդիսանան հատուկ գիտելիքներ՝ իրենց ոչ հանրամատչելիության և տվյալ մասնագիտությանը, որակավորմանը, փորձին կամ հմտություններին որոշակի անձի կողմից տիրապետելու ուժով, և ենթակա լինեն կիրառման որոշակի գործով: Ավելին, հատուկ գիտելիքների բնագավառների սպառիչ թվարկումը կարող է արգելք հանդիսանալ դատական պրակտիկայում այդ բնագավառներից դուրս այլ հատուկ գիտելիքների կիրառման համար, ինչը ճիշտ չէ:

Նախագծի 252-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ փորձաքննությունը կատարվում է անկախ վարույթին ներգրավված այլ անձանց մոտ հատուկ գիտելիքների առկայությունից: Համանման դրույթ ամրագրված է նաև գործող ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածում: Հետևաբար փորձաքննության նախաձեռնման տեսանկյունից հատուկ գիտելիքների հասկացության և շրջանակի ճշգրտումն ուղղակի անհրաժեշտություն է: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թե՛ հայրենական, թե՛ արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ երկար ժամանակ հատուկ գիտելիքների հասկացության ու բովանդակության հարցը առանձին քննարկման առարկա է, ընդ որում, խնդրո առարկայի վերաբերյալ գիտնականների մոտ դեռևս միասնական ձևավորված մոտեցում գոյություն չունի[1]:

---

[1] Հատուկ գիտելիքների հասկացության սահմանման վերաբերյալ մանրամասն տե՛ս **Белкин Р. С.,** Криминалистическая энциклопедия. М., 2000; **Додин Е. В.,** Доказивание и доказательства в правоприменительной деятельности органов советского государственного управления. Киев; Одесса, 1976; Энциклопедия судебной экспертизы/ Под ред. **Т. В. Аверьянова и Е. Р. Россинской**. М., 1999; **Надгорный Г. М.,** Гнесеологические аспекты понятия «специальные знания»// Криминалистика и судебная экспертиза. Вып. 21, Киев, 1980, էջ 37; **Махов В. Н.**, Использование знаний сведущих лиц при расследо-

Նկատի ունենալով, որ հայրենական մասնագիտական գրականության մեջ դատական փորձագիտության տեսության ոլորտի տարբեր հետազոտությունների շրջանակներում խնդիրն առավել հանգամանորեն վերլուծվել է[1], միայն նշենք, որ միանգամայն ընդունելի է Ա. Չախոյանի տեսակետը, համաձայն որի՝ բոլոր դեպքերում «հատուկ գիտելիքը»՝

- չի կարող լինել քրեական և քրեադատավարական գիտելիքը,
- չի կարող հանդիսանալ հանրահայտ կամ հանրամատչելի գիտելիքը,
- մարդու մասնագիտական պատրաստվածության և մասնագիտական փորձի արդյունք է,
- այն կիրառվում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ ապացուցողական կամ կողմնորոշիչ տեղեկություններ ստանալու նպատակով[2]:

вании преступлений. М., 2000, էջեր 38-39; **Сахнова Т. В.,** Судебная экспертиза. М., 2000, էջեր 9-10; **Корухов Ю. Г.,** Правовые основания применения научно-технических средств при расследовании преступлений, М., 1974, էջեր 17-78; **Эксархопуло А. А.,** Специальные знания и их применение в исследовании материалов уголовного дела. СПБ, 2005, էջեր 62-92; **Россинская Е. Р.,** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе. М., 2005, էջ 17; **Россинская Е. Р.,** Специальные познания и современные проблемы их использования в судопроизводстве// Журнал Российского права. № 5, 2001, էջեր 5-7; **Нестеров А. В.,** Концептуальные основы использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений. Автореф. дисс. М., 2001, էջեր 15-16; **Махов В. Н.,** Использование знаний сведущих лиц при расследовании преступлений. М., 2000, էջեր 46-47 և ուրիշներ:

[1] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007; ***Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ա.,*** Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները), գիտական ձեռնարկ, խմբ.՝ ***Վ. Գ. Ենգիբարյան***, Երևան, «Անտարես» հրատ., 2012 և այլն:

[2] Տե՛ս **Չախոյան Ա. Ս.,** Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 80:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ «հատուկ գիտելիքներ» եզրույթի հետ սերտորեն կապված է նաև «հմտություններ» հասկացությունը, որը պայմանավորված է փորձաքննությունների կատարման համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների կիրառական նշանակությամբ: Անշուշտ, հատուկ գիտելիքների կիրառումը փորձագետից պահանջում է նաև նշված բնագավառում որոշակի հմտություններ: Ընդ որում, վերջինս անհրաժեշտ պայման է նաև փորձագետի ձեռնհասության ապահովման, ինչու չէ նաև՝ եզրակացության գնահատման նպատակով:

Այս տեսանկյունից որոշ հեղինակներ հատուկ գիտելիքների սահմանման մեջ ընդգրկում են նաև որոշակի հմտությունները: Մասնավորապես Գ. Ի. Գրամովիչը հատուկ գիտելիքները բնորոշում է հետևյալ կերպ. «Քրեական դատավարության իմաստով հատուկ գիտելիքները համակարգված գիտական գիտելիքներ, ունակություններ և հնարքներ են մարդկային գործունեության որոշակի ոլորտում (բացառությամբ դատավարական իրավունքի ոլորտի գիտելիքների), որոնք ձեռք են բերվում նպատակաուղղված մասնագիտական նախապատրաստության և աշխատանքի փորձի շնորհիվ, կիրառվում են ապացույցների և հանցագործության մասին կողմնորոշող տեղեկություն ստանալու նպատակով, ինչպես նաև նպաստում են տեխնիկական միջոցների և գործի համար կարևորություն ունեցող էական հանգամանքների հայտնաբերմանը և ապացույցներին վերաբերող աշխատանքային հնարքների բացահայտմանը»[1]:

Իսկ Ա. Ա. Զատակովը և Յու. Ն. Օրոպայը պնդում են, որ «դատավարությունում հատուկ գիտելիքներ ասելով՝ պետք է հասկանալ իրազեկ անձանց պրակտիկայում ստուգված մասնագիտական գիտելիքները, նրանց կարողությունը՝ օգտագործելու գիտատեխնիկական միջոցներ, և հնարքներ՝ քննչական գործողության ընթացքում ապացույցների հայտնաբերման, ամրագրման և ուսումնասիրության նպատակով»[2]:

---

[1] Տե՛ս **Грамович Г. И.,** Тактика использования специальных знаний в раскрытии и расследовании преступлений. МВШ МВД СССР, 1987, էջ 12:

[2] Տե՛ս **Затаков А. А., Оропай Ю. Н.,** Использование научно-технических средств и специальных знаний в расследовании преступлений. Киев, 1980, էջ 81:

Ինչպես նկատում ենք, վերը նշված հեղինակները միանգամայն արդարացիորեն հատուկ գիտելիքների հասկացության բնորոշումը կապում են գործնական հմտությունների հետ, որը կարևոր նախապայման է պատշաճ փորձագիտական հետազոտության իրականացման համար: Թերևս այս տրամաբանությամբ է Նախագծի տարբեր հոդվածներում օգտագործվում «հատուկ գիտելիքներ և հմտություններ» արտահայտությունը:

Մասնավորապես Նախագծի 59-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Փորձագետը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, ով, վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի մասնավոր մասնակցի կողմից ներգրավվելով, հատուկ գիտելիքների **կամ հմտությունների** օգտագործմամբ օժանդակում է վարույթին...»:*

Ընդ որում, նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի ***բավարար*** հատուկ գիտելիքների:

Կարծում ենք, հատուկ գիտլիքների բավարար լինելը որոշակիորեն պայմանավորված է նաև տվյալ բնագավառում հմտությունների, այսինքն՝ որոշակի փորձի, աշխատանքային ստաժի, մասնագիտացման և այլ ձեռքբերումների տիրապետման հետ:

Այս ենթատեքստում նշենք, որ վերը ներկայացված և մյուս հեղինակների արտահայտած կարծիքների, ինչպես նաև ՀՀ քրեադատավարական օրենսդրության ընդհանուր վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հատուկ գիտելիքները իրավունքի հետ կապ չունեցող գիտելիքներ են, քանի որ ՀՀ ՔԴՕ 84-րդ և 85-րդ հոդվածների 3-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են. *«Քրեական գործով վարույթում իրավաբանական հարցերով մասնագետ չի ներգրավվում», «Քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում»:* Մինչդեռ Նախագծի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Քրեական գործով վարույթին Հայաստանի Հանրապետության իրավունքի կամ միջազգային իրավունքի հարցերով փորձագետ չի ներգրավվում»:*

Իհարկե մասնագիտական գրականության մեջ վիճելի է իրավաբանական որոշ գիտելիքների՝ հատուկ գիտելիքներին վերագրման հարցը, սակայն վերջին տարիներին իրավաբանական գրականության մեջ գերակշռում են հանցագործությունների քննության ընթաց-

քում իրավագիտության բնագավառի գիտելիքների՝ հատուկ գիտելիքներին վերագրման հարցի կապակցությամբ տեսակետները[1]:

Խնդրո առարկայի վերաբերյալ խիստ բացասական վերաբերմունքը վերջին տարիներին աստիճանաբար իր տեղը զիջում է առավել հանդուրժողական մոտեցմանը: Տ. Վ. Ավերյանովան[2], ով խիստ դեմ է արտահայտվել իրավական որոշ գիտելիքներ հատուկ գիտելիք համարելուն, վերջիվերջո խոստովանում է, որ հետաքրքիր է Յու. Գ. Օրլովի այն տեսակետը, որի համաձայն՝ *«Իրավաբանական փորձաքննության առարկա, եթե այդպիսին կպահանջվի, կարող է լինել միայն հարցն այն մասին, թե որ օրենքը կամ ենթաօրենսդրական ակտն է ենթակա կիրառման տվյալ գործով»*[3]:

Իսկ Ե. Ռ. Ռոսինսկայայի կարծիքով էլ՝ «հասունացել է անհրաժեշտությունը օրինականացնելու իրավաբանական փորձաքննությունների կատարումն այն դեպքերում, երբ քրեական, քաղաքացիական կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անհրաժեշտ են ուսումնասիրություններ հատուկ իրավաբանական գիտելիքների կիրառմամբ, որոնց չեն տիրապետում քննիչը, դատարանը կամ վարչական իրավախախտում քննող անձը»[4]:

Իրավաբանական գրականության մեջ կարծիքներ կան փորձագետներին իրավական հարցեր առաջադրելու թույլատրելիության

---

[1] Տե՛ս **Эксархопуло А. А.,** Специальные знания и их применение в исследовании материалов уголовного дела. СПБ, 2005, էջեր 62-92; **Россинская Е. Р.,** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе. М., 2005, էջ 17; **Россинская Е. Р.,** Специальные познания и современные проблемы их использования в судопроизводстве// Журнал Российского права. № 5, 2001, էջեր 5-7; **Չախոյան Ա. Ս.,** Հատուկ գիտելիքների հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում//«Պետություն և իրավունք», № 2, (28), Երևան, 2005, էջեր 76-77:

[2] Տե՛ս **Аверьянова Т. В**., Судебная экспертиза. Курс общей теории. М., «Норма», 2006, էջ 81:

[3] Տե՛ս **Орлов Ю. К.,** Судебная экспертиза как средство доказывания в уголовном судопроизводстве. М., 2005, էջ 20:

[4] Տե՛ս **Россинская Е. Р.,** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе. М., 2005, էջ 17:

վերաբերյալ[1], և առաջարկվում է հանցագործության առանձին տեսակների քննության ժամանակ «իրավական փորձաքննության» նշանակելու թույլատրելիությունը, չնայած իրավաբանական գիտելիքների օգտագործման հարցը փորձագետի եզրակացության մեջ չպետք է նշվի[2]:

Այսպես, օրինակ, Գերմանիայի Դաշնության օրենսդրությունը, այս կամ այն կերպ չսահմանափակելով հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտը, թույլատրում է փորձաքննություն նշանակել նաև իրավաբանական բնույթի հարցերի պարզաբանման համար, երբ դատավորը բավարար գիտելիքներ չունի տվյալ իրավական ոլորտի վերաբերյալ[3]: Նման մոտեցումը արդարացի է այն պարզ պատճառով, որ դատավորը չի կարող տիրապետել հայրենական և օտարերկրյա իրավունքի բոլոր աղբյուրներին, և նման դեպքերում ավելի արդյունավետ կլինի դատավորին իրավական օգնություն ցուցաբերել, քան վերջինիս թողնել ինքնուրույն պարզաբանել, ենթադրենք, իրեն քիչ հայտնի օտարերկրյա իրավունքի որևէ օրենսդրական ակտ:

Մեր կարծիքով՝ հանցագործությունների քննության և լուծման ընթացքում քննիչները և դատավորները իրավական խնդիրները պետք է կարողանան ինքնուրույն լուծել, և «հատուկ գիտելիքներ» հասկացությունը պետք է թույլատրվի միայն առանձին իրավաբանական գիտելիքների հետ կապված:

Քննարկվող հարցի վերաբերյալ մեզ համար ընդունելի է Վ. Ն. Մախովի առաջարկը, համաձայն որի՝ «հատուկ գիտելիքների» թվին պետք է դասել նաև որոշ իրավական գիտելիքներ՝ բացառելով քննիչների և դատավորների մասնագիտական գիտելիքները: «…Քննիչի

---

[1] Տե՛ս **Арсеньев В. Д., Заболоцкий В. Г.,** Использование специальных знаний при установлений фактических обстоятельств уголовного дела. Красноярск, 1986, էջեր 1-5; **Грамович Г. И.,** Тактика испоьзования специальных знаний в раскрытии и расследовании преступлений. МВШ МВД СССР, 1987, էջեր 10-11:

[2] Տե՛ս **Нестеров А. В.,** Концептуальные основы использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений. Автореф. дисс. М., 2001, էջեր 15-16:

[3] Տե՛ս **Давтян А. Г.,** Гражданский процесс в Германии и странах СНГ. Ереван, 2000, էջ 168:

(դատավորի) մասնագիտական գիտելիքներն իրավական գիտելիքներ են, բայց ոչ բոլորը, այլ ամենից առաջ քրեական իրավունքի, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի գիտելիքները: Բուհում ուսումնասիրելով տնտեսական, աշխատանքային, միջազգային իրավունք և մի շարք այլ ճյուղային իրավական գիտություններ քննիչները կարող են իրենք իսկ տիրապետել իրավունքի համապատասխան ճյուղերի ոչ բարդ իրավաբանական հարցերում: Բայց իրավաբանների մեջ նույնպես կա մասնագիտացում: Սխալ կլիներ քննիչի կողմից անտեսել իրավական գործունեության նեղ ոլորտում մասնագիտացող իրավաբանների՝ իրենց մասնագիտական գործունեության սահմաններից անցնող խորը գիտելիքները»[1]:

Մ. Կ. Տրեուշնիկովի բնորոշմամբ՝ «Դատավորները գիտեն օրենքը և իրավունքը», այդ իսկ պատճառով նորմերի մեկնաբանության, կիրառման և այլ իրավաբանական հարցերի լուծումը պետք է իրականացնեն հենց նրանք, իսկ փորձագետները «փաստերի վկաներն են». վերջիններս միայն փաստերն են հաստատում կամ ժխտում[2]:

Այս մոտեցման հիմքում հատկապես ընկած է թե՛ ռոմանագերմանական և թե՛ անգլոսաքսոնական իրավական համակարգերում ավանդաբար գործող *jura (iura) novit curia* սկզբունքը (կանխավարկածը), որը լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ *«դատավորները գիտեն իրավունքը», «դատարանին իրավունքը հայտնի է»:* Միևնույն ժամանակ *jura novit curia* սկզբունքը թույլ է տալիս որոշակի բացառություններ, որոնք են, մասնավորապես, օրենքի սահմանադրականության որոշումը մասնագիտացված դատարանների կողմից կամ միջազգային իրավունքի կիրառման հիմնավորումը միջազգային իրավական վեճերով և այլն:

Մեր օրենսդրության պայմաններում նույնպես գործում է *jura novit curia* կանխավարկածը, այդ իսկ պատճառով իրավունքի հարցերի ընկալման և մեկնաբանման համար դատավարությունում նախատեսված չէ իրավական փորձաքննության նշանակման կամ փորձագետի ներգրավման հնարավորություն:

---

[1] Տե՛ս **Махов В. Н.,** Использование знаний сведущих лиц при расследовании преступлений. М., 2000, էջեր 46-47:

[2] Տե՛ս **Треушников М. К.,** Судебные доказательства, М., 2004, էջ 190:

Կարծում ենք՝ ժամանակակից պայմաններում քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարությունում իրավունքի հարցերով փորձաքննության նշանակման և անցկացման հնարավորությունը վերանայման կարիք ունի, հատկապես եթե հաշվի առնենք նաև, որ *jura novit curia* սկզբունքը թույլ է տալիս մի շարք բացառություններ դրանից: Այս առումով պետք է նշել, որ, օրինակ, Անգլիայի 1972 թ. «Ապացույցների մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ով համապատասխան որակավորում ունի իր գիտելիքների կամ փորձի համաձայն, իրավասու է տալ փորձագիտական եզրակացություն օտարերկրյա պետության իրավունքի կապակցությամբ: Այսինքն՝ Անգլիայում օտարերկրյա իրավունքի հարցերով թույլատրվում է ստանալ փորձագետի (մասնագետի) եզրակացություն, որը *jura novit curia* սկզբունքի բացառություններից է[1]: Ավելացնենք նաև, որ օտարերկրյա իրավունքի հարցերով փորձաքննության նշանակման և նման փորձագիտական եզրակացության թույլատրելիությունը բնորոշ է հատկապես ընդհանուր իրավունքի երկրներին՝ Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա և այլն[2]:

Մեր կարծիքով՝ հատկապես քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում իրականացվող հանցագործությունների քննության գործընթացում ծագող իրավական հարցերով ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ վարույթն իրականացնող մարմնին պետք է իրավունք վերապահել այդ հարցերով փորձագետ ներգրավելու՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները համապատասխան փորձագիտական եզրակացությամբ կամ կարծիքով հաստատելու համար: Նման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է միջազգային հանցավորության զարգացման տեմպերով, ինչպես նաև այն հանգամանքով, որ օտարերկրյա և միջազգային իրավունքը, դրանց բովանդակությունը կազմող դրույթները և միջազգային իրավական եզրաբա-

[1] Jura novit curia սկզբունքի բացառություններից է նաև, օրինակ, օրենքի սահմանադրականության որոշումը մասնագիտացված դատարանների կողմից կամ միջազգային իրավունքի կիրառման հիմնավորումը միջազգային իրավական վեճերով և այլն:

[2] Տե՛ս **Freckelton I** . **Selby H.** Expert evidence. Holmes Beach, Florida, 1993, էջեր 1/1558-1/1560:

նությունը կազմում են հատուկ գիտելիքների առանձին բնագավառներ, որոնց լավագույնս կարող են տիրապետել այդ բնագավառում մասնագիտացված (որակավորված) իրավագետները: Չնայած այդ գիտելիքները վերաբերում են իրավունքի հարցերին և իրենց բնույթով իրավաբանական են՝ այնուամենայնիվ նպատակահարմար չէ սահմանափակել այդ հարցերով փորձաքննություն նշանակելու կամ այլ կերպ փորձագետ ներգրավելու վարույթն իրականացնող մարմնի իրավունքը: Օտարերկրյա իրավունքի հարցերով փորձագետ ներգրավելու իրավասության սահմանման անհրաժեշտությունը բխում է նաև գործի արդարացի քննության և ողջամիտ ժամկետում որակյալ արդարադատության իրականացման շահերից:

Այսպիսով, կարծում ենք, նպատակահարմար կլիներ Նախագծի 59-րդ հոդվածի 4-րդ մասում *jura novit curia* սկզբունքից սահմանել բացառություն՝ վարույթն իրականացնող մարմնին թույլ տալով ներգրավելու փորձագետ օտարերկրյա իրավունքի հարցերով՝ սահմանելով հետևյալ կերպ. «Քրեական վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում՝ *բացառությամբ օտարերկրյա իրավունքի հարցերով փորձագետի ներգրավման դեպքերի»:*

Նախագծի 86-րդ հոդվածի 1-ին մասում քրեական վարույթում ապացույցների տեսակների շարքում, որպես ապացույցների ինքնուրույն տեսակներ, ի թիվս այլոց, նախատեսված են նաև փորձագետի եզրակացությունը, փորձագետի կարծիքը և փորձագետի ցուցմունքը, ինչը պայմանավորված է փորձագետի՝ որպես քրեական դատավարության սուբյեկտի քրեադատավարական դերի ու կարգավիճակի որոշակի փոփոխության հետ:

Ինչպես նկատում ենք, Նախագծով վարույթին փորձագետի մասնակցությունը ամփոփվում է դատավարական այնպիսի փաստաթղթերով, ինչպիսիք են՝ *փորձագետի եզրակացությունը, կարծիքը և ցուցմունքը:* Նման մոտեցումը առանձնահատուկ է նրանով, որ ապացույցների այսպիսի տեսակների ամբողջական ցանկը տարբեր երկրների քրեադատավարական օրենսդրության մեջ չի հանդիպում:

Փորձագետի ներգրավման արդյունքում ձեռք բերվող ապացույցի տեսակի վերաբերյալ իրավական կարգավորումները տարբեր իրավական համակարգերում տարբեր են: Օրինակ՝ ԱՄՆ-ում փորձագետի եզրակացությունը այդ բառի մայրցամաքային իրավական իմաստով հայտնի չէ: Այստեղ ընդունված է փորձագետի եզրակա-

ցությունն անվանել expert testimony[1], Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և ընդհանուր իրավունքի այլ երկրներում՝ expert report կամ expert opinion[2]: Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը շեշտելու համար արտասահմանյան երկրներում օգտագործվում են նաև expert evidence, forensic evidence կամ scientific evidence եզրույթները[3]: Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե փորձագետի եզրակացությունն ինչ անվանում ունի այս կամ այն երկրում, թե՛ ռոմանագերմանական, թե՛ անգլոսաքսոնական իրավական համակարգերում այն քրեական գործով վարույթի ընթացքում օգտագործվում է որպես ապացույց:

Անշուշտ, փորձագետի եզրակացության, կարծիքի, ինչպես նաև ցուցմունքի՝ որպես ապացույցների առանձին տեսակների մասին կարելի է երկար դատողություններ անել, սակայն հարկ ենք համարում հատկապես անդրադառնալ ապացույցների նշված տեսակների ձևի հարցին:

Այսպես՝ թե՛ փորձագետի եզրակացության և թե՛ կարծիքի համար Նախագիծը սահմանում է պարտադիր գրավոր ձև:

Արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ փորձագետի եզրակացության ձևի որոշումը հիմնականում թողնված է քննիչ դատավորի կամ դատարանի իրավասությանը (Հոլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա)՝ բացառությամբ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրողի կամ նախնական քննություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննության, որի դեպքում եզրակացությունը տրվում է գրավոր: Այս իմաստով, թերևս, նպատակահարմար կլիներ քրեադատավարական օրենսդրությամբ փորձագետի եզրակացության ձևի ընտրությունը դատական քննության փուլում թողնել դատարանին, իսկ մինչդատական վարույթի ընթացքում սահմանել փորձագետի եզրակացության պարտադիր գրավոր ձև: Դա հնարավորություն կտա խուսափելու փորձաքննություն նշանակելու և կատարելու հետ կապված դատավարական և հետազո-

---

[1] Տե՛ս **Henderson C.** Expert witness. In **Siegel J. A., Saukko P. J., Knupfer G.C. (Eds.)** Encyclopedia of Forensic Sciences. New York, 2000, Volume 2, էջեր 724-729:

[2] Տե՛ս **Freckelton I** . **Selby H.,** Expert evidence. Holmes Beach, Florida, 1993, էջեր 1/5021-1/5026:

[3] Տե՛ս **Giannelli P. C., Imwinkelried E. J.,** Scientific evidence, Virginia, 1986, էջեր 149-174:

տական գործընթացի ձգձգումներից այն դեպքերում, երբ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար երկարատև և բարդ հետազոտություններ կատարելու անհրաժեշտություն չկա, և փորձագետը կարող է, դատական քննության ընթացքում նյութերը հետազոտելով, հանգել որոշակի հետևությունների և բանավոր կերպով դրանք արտահայտել դատարանում, որոնք էլ մտցվում են դատական նիստի արձանագրության մեջ և օգտագործվում որպես ապացույցներ:

Նույնը վերաբերում է նաև փորձագետի կարծիքին: Իր մասնագիտական գիտելիքների կիրառման միջոցով քննչական և դատավարական գործողությունների կատարմանն աջակցելու արդյունքում որոշակի հետևությունների հանգելու դեպքում փորձագետին պետք է իրավունք վերապահվի մինչդատական վարույթում իր կարծիքը ներկայացնել գրավոր, իսկ դատական քննության փուլում՝ բանավոր՝ դատարանի թույլտվությամբ:

Ինչ վերաբերում է փորձագետի ցուցմունքի ձևին, ապա, ի տարբերություն Նախագծի 86-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ցուցմունքների մյուս տեսակների, որոնք, ըստ Նախագծի, կարող են լինել բանավոր կամ գրավոր, փորձագետի եզրակացության մասին որևէ նշում չկա: Կարծում ենք՝ փորձագետի ցուցմունքների համար նույնպես պետք է սահմանել այլընտրանքային ձև՝ *գրավոր կամ բանավոր,* որի ընտրությունը կարող է թողնվել վարույթն իրականացնող մարմնին՝ նախնական քննության կամ դատական քննության մարմիններին՝ ելնելով գործի հանգամանքներից:

Նախագծով փորձագետի ցուցմունքը որպես ապացույցի ինքնուրույն տեսակ սահմանելը միանգամայն տեղին է և արդարացված, որը լրացնում է քրեադատավարական օրենսդրության՝ տարիներ շարունակ գոյություն ունեցող բացը: Այդուհանդերձ, փորձագետի ցուցմունքի՝ Նախագծով սահմանված նպատակը, այն է՝ եզրակացությունը կամ կարծիքը ճշգրտելը կամ պարզաբանելը, խիստ սահմանափակ է թվում, քանի որ գործնականում կարող է անհրաժեշտություն առաջանալ փորձագետին հարցաքննելու և նրանից ցուցմունք վերցնելու ոչ թե արդեն իսկ տրված եզրակացությունը կամ կարծիքը պարզաբանելու կամ ճշգրտելու նպատակով, այլ գործի համար նշանակություն ունեցող այնպիսի փաստեր հաստատելու համար, որոնք եզրակացության կամ կարծիքի առարկան չեն կազմել: Այդ փաստերը կարող են լինել այնպիսի հանգամանքներ, որոնց

վրա հիմնվել է փորձագետը եզրակացությունը կազմելիս կամ կարծիքը շարադրելիս: Ընդ որում, այդ փաստերի առկայության կամ բացակայության հավաստումը պահանջում է հատուկ գիտելիքներ:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք հավաստել, որ դատական փորձաքննությունների քրեադատավարական ինստիտուտի իրավական հիմքերի կատարելագործման առումով Նախագիծը, ի տարբերություն գործող քրեադատավարական օրենսդրության, լուրջ առաջընթաց է արձանագրել, սակայն, կարծում ենք, գործնականում Նախագծի դրույթների լիարժեք իրագործման, ինչպես նաև փորձագիտական գործունեության արդյունքների քրեադատավարական արժանահավատության ապահովման համար դեռևս անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում մշակել և ընդունել փորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրություն, որը կկարգավորի պետական վերահսկողության կառուցակարգերը, գործունեության այս տեսակի կազմակերպման սկզբունքներն ու չափանիշները, առանձին տեսակներին ներկայացվող պահանջները և այլն:

ИНСТИТУЦИОНАЛЬНОЕ УСОВЕРШЕНСТВОВАНИЕ СУДЕБНЫХ ЭКСПЕРТИЗ В КОНТЕКСТЕ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ваге Енгибарян

Профессор кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, доктор юридических наук

В рамках судебно-правовых реформ в РА разработан проект нового Уголовно-процессуального кодекса РА. Проект нового УПК РА, в отличие от действующего, содержит новые подходы к аспекту повышения роли судебных экспертиз, в частности, назначение экспертизы рассматривается не как следственное действие, а как отдельное доказательственное процессуальное действие, претерпел изменение статуса и роли эксперта, в числе доказательств будет содержаться не только заключение эксперта, но и мнение и показание эксперта. Мы провели сравнительный правовой анализ действующего УПК РА и Проекта нового УПК РА. По мнению автора, предусматриваемые

изменения значительно увеличат возможности использования специальных знаний в процессе расследования, но тем не менее необходима разработка и принятие в РА соответствующих законодательных актов, регулирующих процесс организации экспертной деятельности.

INSTITUTIONAL DEVELOPMENT OF FORENSIC EXPERTISE IN THE CONTEXT OF CRIMINAL-PROSEDURE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Vahe Yengibaryan
Professor at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Doctor of Legal Sciences

Within the framework of the judicial reforms in the RA, the Draft of new Criminal Procedure Code of the RA is prepared. The Draft includes new approaches towards the judicial expertise, in particular, initation of forensic expertise is not investigative action any more, it is evidenciary-prosedural action, changed in the status and role of the forensic expert, types of evidences include not only expert conclusion, but also expert opinion and testimony. The author provides a comparative legal analyses between the current Criminal Procedure Code of the RA and the Draft of the new Criminal Procedure Code. According to the author`s opinion, planned changes will make a significant change during usage of special knowledge in the process of the investigation, but any way the preparation of new relevant legislation is also needed.

Բանալի բառեր - դատական փորձաքննություն, հատուկ գիտելիքներ, քրեական դատավարության օրենսգիրք, օրենսդրական փոփոխություններ, փորձագետ
Ключевые слова: судебная экспертиза, специальные знания, уголовно-процессуальный кодекс, законодательные поправки, эксперт
Key words: forensic expertise, special knowledge, criminal procedure code, legal amendments, expert

ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԱՂՏՆԻ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տաթևիկ Սուջյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հաղորդակցության ազատությունը անձի հիմնարար իրավունքներից է, որը երաշխավորված է թե՛ մեր երկրի հիմնական օրենքով և թե՛ բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերով:

Այսպես՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածը, սահմանելով նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքը, հստակեցնում է նաև այն իրավաչափ նպատակները, որոնց առկայության դեպքում այն կարող է սահմանափակվել: Բացի դրանից՝ երկրի հիմնական օրենքով նախատեսված է բացառապես դատարանի որոշմամբ այս իրավունքը սահմանափակելու պահանջ:

Այս հիմնարար իրավունքը նախատեսված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում[1], Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա)[2], Քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության մասին միջազգային դաշնագրում[3]:

---

[1] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն, ուժի մեջ է մտել 10.12.1948) http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/eng.pdf:

[2] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (ընդունվել է 04.11.1950 թ., ուժի մեջ է մտել 03.09.1953 թ., ՀՀ-ի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 26.04.2002 թ.) //http://conventions.coe.int/treaty/ rus/treaties/html/005.htm (10.09.2014 թ.):

[3] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 16.12.1966 թ. 2200 Ա (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 23.03.1976) https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/005/03/IMG/ NR000503.pdf?OpenElement:

Այս իրավունքին և դրա սահմանափակման իրավաչափության պայմաններին անդրադարձել է նաև դատական պրակտիկան: Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, 2010 թ. նոյեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-926 որոշման մեջ մեկնաբանելով 2005 թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ, արձանագրել է, որ այն նախատեսում է այս իրավունքի սահմանափակման երեք **համաժամանակյա նախապայման՝**

ա/ օրենքով սահմանված դեպքերում,

բ/ օրենքով սահմանված կարգով,

գ/ դատարանի որոշմամբ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այս իրավունքի սահմանափակմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացման օրինականության նկատմամբ դատական վերահսկողության պահանջը նպատակ է հետապնդում կանխել հնարավոր չարաշահումները և պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից (տե՛ս ավելի մանրամասն ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վերը հիշատակված որոշման 4-5-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանը *Վ. Խաչատրյանի* գործով 2012 թ. հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0666/10/11 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել հետևյալի մասին «(…) [Ա]նձնական կյանքի, այդ թվում՝ հաղորդակցությունների անձեռնմխելիության իրավունքը անձի՝ ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությամբ երաշխավորված կարևոր իրավունքներից է, որը պետք է պաշտպանվի կամայական և անօրինական միջամտությունից: Ընդ որում այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով (…) իրավաչափ հիմքերի՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության և բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտության դեպքում (…)՝ դատարանի որոշման

հիման վրա (...)» (տե՛ս Վահագն Հրաչիկի Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշման 13-րդ կետը):

Քրեադատավարական գործող օրենսդրությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ, 279-րդ, 281-րդ, 284-րդ հոդվածներ), վերոշարադրյալ հիմնարար պահանջներին համապատասխան, առավելապես կանանակարգում է վարույթի հանրային մասնակիցների կողմից համապատասխան քննչական գործողություններ (օպերատիվ-հետախուզական միջոցառումներ) իրականացնելու եղանակով անձի այս հիմնարար իրավունքի սահմանափակման հիմքերն ու ընթացակարգը՝ նախատեսելով նաև առանձին դատավարական երաշխիքներ (օրինակ՝ նախնական դատական վերահսկողություն): Դրանով իսկ օրենսդիրը իրավական հիմքեր է ստեղծել իրավասու պետական մարմինների կողմից դատավարական որոշակի երաշխիքների պահպանմամբ օրենքին համապատասխան իրականացված միջամտության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության համար[1]:

---

[1] «Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի» գործով, սակայն, Եվրոպական դատարանը կոնվենցիոնալ պահանջների տեսանկյունից քրեադատավարական օրենսդրությունը («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը դեռևս ընդունված չէր) խնդրահարույց է համարել այն՝ արձանագրելով հետևյալը. «(…) Օրենքով սահմանված չեն եղել ո՛չ իրավախախտումների տեսակները, ո՛չ էլ այն անձանց շրջանակը, որոնց դեպքում կարելի է թույլատրել գաղտնալսումը: Այն նաև չի մանրամասնել այն հանգամանքները կամ հիմքերը, որոնց առկայության պայմաններում կարելի էր նման միջոցառման իրականացման որոշում կայացնել: Այս առումով հարկ է նշել, որ նման մանրամասնությունների բացակայությունը կարող էր հանգեցնել լուրջ հետևանքների՝ հաշվի առնելով այն, որ սույն միջոցառման իրականացման թույլտվություն կարելի էր տալ որևէ քրեական վարույթի բացակայության պայմաններում:

Օրենքով նաև նախատեսված չէր գաղտնալսման համար հստակ առավելագույն ժամկետ: Այսպիսով՝ թեպետ գաղտնալսման իրականացում թույլատրող դատական որոշման գործողության ժամկետը սովորաբար սահմանափակվել է վեց ամսով, այդուհանդերձ, դատավորն ազատ է եղել կայացնելու այլ որոշում:

Ավելին, օրենքով նախատեսված չէր միջոցառման իրականացման նկատմամբ պարբերական վերահսկողություն կամ դրա կիրառման նկատմամբ

Հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը, սակայն, կարող է սահմանափակվել ոչ միայն վարույթի հանրային սուբյեկտների, այլև խոսակցությունների կամ այլ ձևաչափով հաղորդակցության մասնակիցներից մեկի կողմից այդ խոսակցության կամ հաղորդակցության ձայնագրման եղանակով: Ողջամտորեն հաղորդակցության վերահսկման՝ օրենքով սահմանված կարգը վարույթի մասնավոր մասնակիցների կողմից չի կարող պահպանվել, քանի որ վերջիններս համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու իրավասություն չունեն: Ուստի հարց է ծագում, թե արդյոք անձի հաղորդակցության ազատության սահմանափակման համապատասխան դատավարական պահանջները պահպանելու օբյեկտիվ անհնարինությունը մեխանիկորեն բացառում է անձի կողմից իրականացված գաղտնի ձայնագրության արդյունքում ստացված՝ գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցը:

Այս խնդրին անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ *Մելինե Մարգարյանի* գործով 2012 թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0081/01/11 որոշման մեջ եզրահանգում անելով այն մասին, որ գործի քննության ընթացքում տուժող կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացված՝ իր ամուսնու կողմից կատարված՝ իր և ամբաստանյալի միջև տեղի ունեցած խոսակցության ձայնագրառումը պարունակող լազերային սկավառակն անթույլատրելի ապացույց է այն հիմնավորմամբ, որ ձայնագրությունը կատարվել է քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ

դատական կամ նմանաբնույթ այլ անկախ հսկողություն կամ տվյալներն ուսումնասիրելու, օգտագործելու, պահելու և ոչնչացնելու որևէ կանոն: Ոչ էլ պահանջվում էր գաղտնալսումը դադարեցնելուց հետո ծանուցել այն անձին, ում նկատմամբ այն կիրառվել էր՝ այն *դեպքերում, երբ նման ծանուցումն այլևս չէր վտանգի գաղտնալսման նպատակը (…)»* (տե՛ս «Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճռի 130-132-րդ կետերը): Այս խնդիրների մեծ մասն իր լուծումն է ստացել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով սահմանված գաղտնի քննչական գործողությունների օրենսդրական կարգավորման համատեքստում: Նշված խնդիրներին, սակայն, սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ չի կատարվի, քանի որ դրանք առանձին քննարկման առարկա կարող են դառնալ:

դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ վկայի կողմից, չի պահպանվել այդ գործողության՝ օրենքով սահմանված կատարման կարգը, քանի որ ամբաստանյալի և տուժողի խոսակցությունների լսման և ձայնագրառման միջնորդություն դատարան չի ներկայացվել, դատարանը համապատասխան որոշում չի կայացրել: Դեռ ավելին, Վճռաբեկ դատարանն անթույլատրելի ապացույց է ճանաչել նաև տեսաձայնագրառման փորձաքննության եզրակացությունը, քանի որ եզրակացության հիմքում ընկած փաստական տվյալը՝ լազերային սկավառակի բովանդակությունը կազմող տեղեկատվությունը, ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշման հիմքում ըստ էության ընկած է իրավաչափ այն տրամաբանությունը, որ օրենսդիրը նախատեսել է հստակ նշված սուբյեկտների կողմից հաղորդակցության ազատության սահմանափակման որոշակի ընթացակարգ: Եվ այնքանով, որքանով այս ընթացակարգը մասնավոր անձի կողմից պահպանվել չի կարող, վերջինիս կողմից ձեռք բերված փաստական տվյալները չեն կարող դիտարկվել որպես թույլատրելի ապացույց, քանի որ չեն բավարարում օրենքով դրա համար լիազորված սուբյեկտի կողմից և օրենքով սահմանված կարգով ձեռք բերված լինելու պահանջին:

Սակայն այս խնդրի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը թերևս հակառակ եզրահանգումն անելու որոշակի իրավական հիմքեր է տալիս:

Մասնավորապես Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախատեսելով նամակագրության (հեռախոսային հաղորդակցության[1]) գաղտնիության իրավունքի իրավաչափ սահմանափակման չափանիշներ կամ այլ կերպ՝ երաշխիքներ պետական մարմինների և պաշտոնա-

[1] Եվրոպական դատարանը «Կլասն ընդդեմ Գերմանիայի» գործով սահմանել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով նամակագրությունը ներառում է ոչ միայն փոստով ուղարկված նյութերը, այլև հեռախոսային հաղորդակցությունը (տե՛ս *Klass v. Germany* գործով Եվրոպական դատարանի 1978 թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, 41-րդ կետ):

տար անձանց հնարավոր չարաշահումներից և կամայական վարքագծից[1], այդուհանդերձ դրանք մեխանիկորեն չի տարածում նաև մասնավոր անձանց վրա։ Այլ կերպ՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում հանրային և մասնավոր անձանց գործողությունների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը դրանք նույն հարթության մեջ չի դիտարկում։ Այսպես՝ «Վան Վոնդելն ընդդեմ Նիդեռլանդների» գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ մասնավոր (հեռախոսային) խոսակցության ձայնագրումը զրուցակցի կողմից և նման ձայնագրությունների անձնական օգտագործումն ըստ էության (per se) չեն խախտում Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, եթե դա իրականացվել է մասնավոր միջոցներով։ Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ այս իրավիճակն իր բնույթով տարբերվում է քրեական կամ այլ գործի քննության համատեքստում և ի շահ այդ քննության մասնավոր անձի կողմից հաղորդակցության գաղտնի դիտարկումից և դրա ձայնագրումից, որն իրականացվում է քննություն իրականացնող պետական մարմինների լռելյայն համաձայնությամբ և վերջիններիս տեխնիկական աջակցությամբ։ Կոնկրետ գործի առնչությամբ Եվրոպական դատարանը գտել է, որ չնայած դիմումատուի խոսակցությունները ձայնագրվել էին մեկ այլ անձի կողմից վերջինիս նախաձեռնությամբ և իր անձնական նպատակներից ելնելով, այդուհանդերձ ձայնագրող սարքը տրամադրվել էր իրավապահ մարմինների կողմից, և վերջիններս առնվազն մեկ անգամ ցուցում էին տվել, թե ինչ տեղեկություններ պետք է ստացվեն դիմումատուից։ Այս հանգամանքներում Եվրոպական դատարանը եզրահանգել էր, որ առկա է խախտման առկայության գնահատման՝ իր կողմից արդեն իսկ ձևավորած չափանիշը, այն է՝ համապատասխան գործողությունների սխեմայի իրացման գործում հանրային մարմինների որոշիչ դերակատարումը (տե՛ս Եվրոպական դատարանի՝ A. v. France գործով 1993 թ. նոյմբերի 23-ի վճիռը, 36-րդ կետ, M.M. v. The Netherlands գործով 2003 թ. ապրիլի 8-ի վճիռը, գանգատ թիվ 39339/98, 39-րդ կետ)։ Հակառակ մեկնաբանությունը Եվրոպական դատարանի գնահատմամբ կենթադրեր լիազորել իրավապահ մարմիններին մասնավոր գործակալներ օգտագործելու ճանապար-

[1] Տե՛ս Guide on Article 8 of the European Convention on Human Rights, Right to respect for private and family life 1st edition Council of Europe/European Court of Human Rights, 2017, http://www.echr.coe.int/Documents/ Guide_Art_8_ENG.pdf:

հով խուսափել իրենց կոնվենցիոնալ պարտականությունների կատարումից (տե՛ս V.Vondel v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 2007 թ. հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 38258/03, 49-րդ կետ):

Դեռ ավելին, «Նեչիպորուկը և Յոնկալոն ընդդեմ Ուկրաինայի» գործով Եվրոպական դատարանը ոչ իրավաչափ էր համարել դատարանի կողմից գործի ըստ էության քննության փուլում վկայի կողմից քննիչին ներկայացված՝ իր և մեղադրյալի խոսակցությունների ձայնագրությանը պատշաճ գնահատական չտալը (տե՛ս Nechiporukand Yonkalo v. Ukraine գործով Եվրոպական դատարանի 2011 թ. ապրիլի 24-ի վճիռը, գանգատ թիվ 42310/04, 276-րդ կետ):

Քննարկվող հարցի առնչությամբ բավական հետաքրքրական է կանադական և ամերիկյան փորձը:

Այսպես, օրինակ, Կանադայում քրեական պատասխանատվություն է սահմանված մասնավոր հաղորդակցության գաղտնալսման (ձայնագրման) համար բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է հաղորդակցության մասնակիցներից մեկի համաձայնությունը (Կանադայի քրեական օրենսգրքի 184-րդ հոդված[1]): Սակայն այս կանոնը վերաբերում է միայն հաղորդակցության մասնակցիներից մեկի կողմից իրականացված գաղտնալսման իրավաչափությանը: Միևնույն ժամանակ «Իրավունքների և ազատությունների մասին» կանադական խարտիան (այսուհետ՝ Խարտիա) երաշխավորում է անձի՝ անօրինական խուզարկությունից[2] և առգրավումից զերծ մնալու իրավունքը, որը կարող է իրավաչափորեն սահմանափակվել միայն նախնական դատական թույլտվությամբ: Եվ *R. v. Duarte* գործով Կանադայի Գերագույն դատարանը հստակ սահմանել է, որ պետության ներկայացուցչի (ոստիկանության աշխատակցի) կողմից խոսակցության ձայնագրումը ցանկացած իրավիճակում առանց նախնական դատական թույլտվության խախտում է Խարտիայի 8-րդ բաժնի պահանջները: Սույն գործով Կանադայի Գերագույն դատարանը, ընդունելով, որ անկախ ձայնագրում իրականաց-

[1] Տե՛ս Criminal Code (R.S.C., 1985, c. C-46)
http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/page-41.html#h-63:

[2] Հեռախոսային հաղորդակցության վերահսկումը ներառվում է խուզարկության հասկացության մեջ:

նելու հանգամանքից՝ ոստիկանության աշխատակիցը կարող էր ցուցմունքներ տալ և մանրամասն պատմել այն, ինչ ասվել էր (այլ կերպ՝ միշտ վտանգ կա, որ հաղորդակցության մասնակիցներից մեկը դրա բովանդակությունը կարող է փոխանցել երրորդ անձանց կամ ցուցմունք տալ այդ մասին), գտել է, որ ձայնագրված լինելու վտանգը նույնական չէ հաղորդակցության մյուս մասնակցի կողմից դրա բովանդակության հնարավոր բացահայտման վտանգի հետ: Դատարանի գնահատմամբ՝ էլեկտրոնային ձայնագրումը արժեզրկում է զրուցակցին ընտրելու, այլ կերպ՝ ունկնդիրների շրջանակը որոշելու իրավունքը: Եթե անձեռնմխելիությունը կարող է բնորոշվել որպես անձի իրավունքը՝ ինքնուրույն որոշելու՝ երբ, ինչպես և ինչ չափով տարածել իր մասին անձնական տեղեկությունները, ապա անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիքը պահանջում է, որ անձը ելնի այն կանխավարկածից, որ պետության կողմից իր այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն այնպիսի փաստական տվյալների հիման վրա, որոնք բավարար են եղել դատարանի համար եզրահանգելու, որ հանցանք է կատարվել կամ կատարվելու, և որ համապատասխան ձայնագրությունն ապացուցելու է այդ իրավախախտման փաստը[1]:

Կանադայի Գերագույն դատարանի այս դիրքորոշումը, սակայն, վերաբերում է միայն այն դեպքերին, երբ գաղտնալսումն իրականացվում է վարույթի հանրային մասնակցի կողմից: Մինչդեռ կանադական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ գործերով ձևավորվել է մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները՝ որպես ապացույց ընդունելու դատական պրակտիկա, եթե նշված անձինք ձայնագրումն իրականացնելիս չեն գործել որպես պետության գործակալներ (*R. v. Tam* (1993), 80 C.C.C. (3d) 476 (B.C.S.C.); *R. v. Fegan* (1993), 62 O.A.C. 146 (CA); *R. v. Strano* (2001) 80 C.R.R. (2d) 93 (Ont. C.J.)): Դեռ ավելին, գործերից մեկով նույնիսկ սահմանվել է, որ ձայնագրությունն անգամ այն ոստիկանությանը փոխանցելու նպատակով կատարելու փաստը ձայնագրում իրականացրած անձին չի դարձնում պետության գործակալ (*R. v. Coburn* (2003), 108 C.R.R. (2d) 173 (B.C.S.C.)[2]:

[1] Տե՛ս https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/559/index.do:

[2] Տե՛ս https://legaltree.ca/node/908:

Մասնավոր անձանց կողմից կատարված գաղտնալսումների արդյունքների՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության խնդիրները լայն քննարկման առարկա են դարձվել ամերիկյան դատական պրակտիկայում: Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք մասնավոր անձի կողմից մեկ այլ անձի մասնավոր կյանքին կանխամտածված կամ ոչ կանխամտածված ձևով միջամտության արդյունքները կարող են օգտագործվել իրավապահ մարմինների կողմից, դատական պրակտիկան արձանագրել է, որ ԱՄՆ Սահմանադրության մեջ կատարված 4-րդ լրացումը, որն արգելում է անօրինական խուզարկությունը և առգրավումը, բացառում է պետության կողմից իրականացված ոչ իրավաչափ խուզարկության և առգրավման արդյունքների օգտագործումը, սակայն չի բացառում մասնավոր անձանց կողմից իրականացված խուզարկության և առգրավման արդյունքների օգտագործումը: Ըստ այդմ, քննարկման առարկա է դարձվել այն հարցը, թե արդյոք այս կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ խուզարկությունը և առգրավումը վերաբերում են հաղորդակցության վերահսկմանը, և եթե իրավապահ մարմինները կարող են օգտագործել նման գաղտնալսման արդյունքները, ապա ինչ չափով դա կարող է օգտագործվել, և արդյոք նշանակություն ունի այն, որ կանխամտածված կամ ոչ կանխամտածված միջամտությունն այլ անձանց մասնավոր կյանքին կատարվել է օրենքի խախտմամբ[1]:

Այսպես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ֆեդերալ օրենքի[2] մակարդակով հստակ արգելվում է անօրինական գաղտնալսման արդյունքում ձեռքբերված ապացույցի օգտագործումը: Չնայած ֆեդերալ օրենքի՝ առկա ոչ այնքան լայնորեն ընդունված մեկնաբանությանը, որ այս արգելքը տարածվում է նաև մասնավոր անձանց կողմից իրականացված գաղտնալսումների վրա, այդուհանդերձ բազմաթիվ նահանգային դատարանների կողմից մի շարք դեպքե-

[1] Տե՛ս Clifford S. Fishman (2012) "The Interception of Communications Without a Court Order: Title III, Consent, and the Expectation of Privacy," St. John's Law Review: Vol. 51: Iss. 1, Article 2
https://scholarship.law.stjohns.edu/cgi/viewcontent.cgi?referer=https://www.google.ru/&httpsredir=1&article=2552&context=lawreview:

[2] Տե՛ս Title III of the Omnibus Crime Control and Safe Streets Act of 1968,1
https://transition.fcc.gov/Bureaus/OSEC/library/legislative_histories/1615.pdf:

րում հնարավոր է համարվել նահանգային օրենսդրության վերլուծության հիման վրա մասնավոր անձանց կողմից իրականացված գաղտնալսումները ոստիկանության կողմից օգտագործելու թույլատրելիությունը։

Այս առումով նահանգային դատարանների որդեգրած մոտեցումը տարբեր է՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք գաղտնալսումը ոչ կանխամտածված (բարեխիղճ) է, թե դիտավորյալ (անօրինական)։ Ընդ որում, վերջինի դեպքում ևս մոտեցումը միանշանակ չէ, ինչի մասին կխոսվի ստորև։

Առաջինի դեպքում ընդհանուր մոտեցումն այն է, որ եթե անձը պատահաբար գաղտնալսում (ձայնագրում) է այլ անձանց հանցավոր հաղորդակցությունը և արդյունքները ներկայացնում իրավասու մարմիններին, ապա վերջիններս կարող են օգտագործել այն[1]։

Ինչ վերաբերում է գաղտնալսման երկրորդ տեսակին, ապա այս հարցում նահանգային օրենսդրությունը և հետևաբար դատարանների կողմից դրանց մեկնաբանությունը միատեսակ չեն։

Այսպես, օրինակ, Կալիֆոռնիայում քրեական պատասխանատվություն է նախատեսված մասնավոր անձի կողմից գաղտնի հաղորդակցության գաղտնալսման համար, եթե հաղորդակցության բոլոր մասնակիցներն իրենց համաձայնությունը չեն տվել։ Միևնույն ժամանակ նույն օրենսգրքի 633.5-րդ հոդվածի համաձայն՝ նշված կանոնը չի արգելում գաղտնի հաղորդակցության մասնակիցներից մեկի կողմից հաղորդակցության ձայնագրումը մյուս մասնակցի կողմից կատարված շորթման, առևանգման, կոռուպցիոն հանցագործության կամ անձի դեմ ուղղված ցանկացած բռնի արարքի վերաբերյալ ապացույց ձեռք բերելու նպատակով[2]։ Այսպես, օրինակ, Կալիֆոռնիայի Գերագույն դատարանը *People v. Ayers* գործով թույլատրելի ապացույց էր համարել վարձու մարդասպանների կողմից պատվիրատուների հետ ունեցած խոսակցությունների ձայնագրությունները։ Նմանատիպ փաստական հանգամանքներով մեկ այլ գործով նույն իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև Միչիգանի Գերագույն դատարանը։ Սակայն, օրինակ, Ֆլորիդա նահանգում միևնույն հեռախոսագծին միացված հեռախոսով անձը գաղտնալսել

[1] Տե՛ս Clifford S. Fishman, նշված աշխատությունը, էջեր 67-70։

[2] Տե՛ս http://codes.findlaw.com/ca/penal-code/pen-sect-633-5.html։

էր իր կոլեգայի և նրա ամուսնու հեռախոսային խոսակցությունները, որից կարճ ժամանակ անց իր կոլեգան սպանվել էր, և այդ գործով մեղադրյալ էր ներգրավվել նրա ամուսինը: Ֆլորիդայի Գերագույն դատարանն անթույլատրելի ապացույց էր համարել գաղտնալսված խոսակցության վերաբերյալ ցուցմունքները, քանի որ գաղտնալսումն ինքնին անօրինական է համարվել կողմերից մեկի համաձայնության և համապատասխան թույլտվության բացակայության հիմքով[1]:

Այս առումով բավական հետաքրքիր է Վաշինգտոնի Գերագույն դատարանի որոշումը *State v. Smith* գործով: Այսպես՝ Վաշինգտոնի օրենսդրությամբ արգելվում է առանց բոլոր հաղորդակցվողների համաձայնության մասնավոր հաղորդակցության ձայնագրումը ցանկացած սարքով: Սակայն վերը նշված գործով Վաշինգտոնի Գերագույն դատարանը թույլատրելի ապացույց էր ճանաչել տուժողի կողմից իր մոտ եղած գաղտնի ձայնագրող սարքով կատարված ձայնագրությունը: Դատարանը նշված ապացույցը թույլատրելի էր համարել այն պատճառաբանությամբ, որ այն ձայնագրել էր կրակոցներ, վազքի ձայն, տուժողի բղավոցը, ինչը, սակայն, օրենքի իմաստով մասնավոր խոսակցություն չէ: Այս որոշման մեկնաբանության համաձայն՝ այն օրենքով սահմանված բացարձակ կանոնից որոշակի իրավաչափ բացառություն նախատեսելու նպատակ է հետապնդում՝ ելնելով հանցավորության դեմ պայքարի հանրային շահից: Միևնույն ժամանակ կա նաև այն մեկնաբանությունը, որ դատական պրակտիկան չի գնացել բոլոր գործերի նկատմամբ կիրառելի հստակ բացառություն նախատեսելու ճանապարհով՝ ելնելով ոստիկանության կողմից այս կանոնի հնարավոր չարաշահման և այս գործընթացին քաղաքացիների զանգվածային մասնակցության ճանապարհով օրենսդրական արգելքը քողարկված շրջանցելու մտավախությունից[2]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք՝ նպատակահարմար չէ մասնավոր անձի կողմից կատարված գաղտնի ձայնագրության արդյունքները՝ որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության բացարձակ կանոն սահմանելը, ինչի մասին վկայում է նաև ներ-

[1] Տե՛ս Clifford S. Fishman, նշված աշխատությունը, էջեր 71-73:

[2] Տե՛ս Clifford S. Fishman, նշված աշխատությունը, էջեր 74-75:

կայացված միջազգային փորձը: Մեր կարծիքով՝ նման բացարձակ արգելք սահմանելն արդարացված չէ հանցավորության դեմ պայքարի իրավաչափ հանրային շահի տեսանկյունից: Բացի դրանից՝ վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների գործողությունների իրավաչափությունը նույն տեսանկյունից գնահատելն իրավաչափ չէ այն պատճառով, որ խիստ տարբեր են նշված սուբյեկտների կողմից այս հիմնարար իրավունքին միջամտության շրջանակները: Անձի կողմից իր հաղորդակցության ձայնագրումը չի կարող նույնականացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ անձի՝ անձանց անորոշ շրջանակի հետ տարվող հաղորդակցության երկարաժամկետ վերահսկումից: Առաջին դեպքում անձն ըստ էության իրացնում է իր ունկնդրին ընտրելու իրավունքը, և վերջինս պետք է ելնի ողջամիտ այն կանխավարկածից, որ իր զրուցակիցը, եթե անգամ չձայնագրի խոսակցությունը, դրա բովանդակությունը կարող է բացահայտել երրորդ անձանց, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնին: Այլ կերպ՝ անձի հաղորդակցության ազատությունը, մասնավոր գաղտնիք կազմող տեղեկությունների հասցեատիրոջը ընտրելու իրավունքն այս դեպքում չեն խախտվում:

Խնդրո առարկա քննչական գործողությունն իրականացնելու՝ օրենքով սահմանված կարգը պահպանելու պահանջը վերաբերում է իրավասու պետական այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որը որոշակի միջամտություն է իրականացնում անձի մասնավոր կյանքին հենց այդ գործողությունն իրականացնելու ճանապարհով: Մինչդեռ մասնավոր անձն այս դեպքում որևէ քննչական գործողություն չի իրականացնում և իրավասու էլ չէ իրականացնել: Կոնկրետ քննչական գործողությունն իրականացնելիս որոշակի դատավարական երաշխիքների նախատեսումը իրավաչափ նպատակ ունի ապահովելու քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը, այն է՝ բացառել պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների կողմից հնարավոր չարաշահումները և անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումները: Մինչդեռ մասնավոր անձի կողմից այդ չարաշահման վտանգը բացակայում է, քանի որ ձայնագրության եղանակով վերջինս սոսկ առարկայացնում է (նյութականացված ձևակերպում է տալիս) արդեն իսկ զրուցակցի կողմից իր համար մատչելի դարձված տեղեկությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ անձի կողմից իր իսկ մասնակցությամբ հաղորդակցության ձայնագրությունը, որը վերաբերում է մյուս մասնակցի կողմից կատարված հանցավոր արարքին, այդ թվում՝ նաև ոչ անմիջականորեն իր դեմ ուղղված, պետք է դիտարկել որպես թույլատրելի ապացույց: Հակառակ կարգավորումը, կարծում ենք, ընդունելի չէ ոչ միայն հանցավորության դեմ պայքարի հանրային շահի, այլ նաև ձայնագրումն իրականացնողի մասնավոր շահի ապահովման տեսանկյունից, ով, օրինակ, չի կարողանա մեկ այլ կողմից իր կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքի մասին հայտարարությունները հիմնավորել նաև այդ սպառնալիքները պարունակող համապատասխան ձայնագրությամբ: Եվ այս առումով անհրաժեշտ է նաև համապատասխան բացառություն նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածում, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելու համար: Իհարկե այս կարգավորումը չի գործելու այն պահից, երբ գործընթացին կմիջամտի իրավասու պետական մարմինը (պաշտոնատար անձը):

Ինչ վերաբերում է երրորդ անձի կողմից հաղորդակցության ձայնագրությանը, ապա մեր կարծիքով, իբրև հաղորդակցության գաղտնիության իրավունքի և հանցավորության դեմ պայքարի իրավաչափ շահի հավասարակշռված կարգավորում, անհրաժեշտ է նախատեսել դրա թույլատրելիությունը բացառապես այն դեպքերում, երբ այն կրում է ոչ պարբերաբար և ոչ կանխամտածված բնույթ: Մեր կարծիքով՝ երրորդ անձի կողմից հանցանքի մասին տեղեկություններ պարունակող հաղորդակցության մեկանգամյա պատահական ձայնագրությունը կարող է որպես ապացույց օգտագործվել: Այս դեպքում մեխանիզմն այն է, որ երրորդ անձը պետք է դիմի իրավապահ մարմիններին, ովքեր համապատասխան ընթացակարգերի պահպանմամբ պետք է անհրաժեշտության դեպքում շարունակեն համապատասխան միջամտության իրականացումը: Անձի կողմից իր իսկ հաղորդակցության ձայնագրության և երրորդ անձի կողմից այդ նույն հաղորդակցության ձայնագրության նկատմամբ նման տարբերակված մոտեցում դրսևորելը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին դեպքում շարունակական ձայնագրումը հա-

ղորդակցության մյուս մասնակի՝ հաղորդակցության գաղտնիության իրավունքը չի սահմանափակում, իսկ ինչ վերաբերում է երրորդ անձի կողմից այդ հաղորդակցության շարունակական ձայնագրությանը, ապա այս դեպքում խախտվում է հաղորդակցության ազատության կարևոր բաղադրամասը կազմող՝ հաղորդակցին ընտրելու իրավունքը:

Քննարկման կարիք ունի նաև այն հարցը, թե ապացույցի ինչ տեսակ է մասնավոր անձի կողմից կատարված գաղտնալսման արդյունքը: Առհասարակ քրեադատավարական տեսության մեջ չկա մեկ միասնական մոտեցում այն հարցի առնչությամբ, թե ապացույցի ինչ տեսակ է հեռախոսային հաղորդակցության վերահսկման և գաղտնալսման ձայնագրությունը: Ընդ որում, տեսության մեջ այն առավելապես դիտարկում են որպես իրեղեն ապացույց կամ այլ փաստաթուղթ:

Լ. Մ. Կարնեևայի կարծիքով՝ ձայնագրության՝ ընթերակաների մասնակցությամբ զննությունից հետո, ինչն ամրագրվում է արձանագրության մեջ, որոշում է կայացվում դրանում պարունակվող տեղեկությունների՝ քրեադատավարական պահանջներին համապատասխանելու և քրեական գործի նյութերին որպես իրեղեն ապացույց կցելու մասին: Անհրաժեշտության դեպքում զննությունից հետո, սակայն, մինչև այն քրեական գործին կցելու մասին որոշում կայացնելը ձայնագրությունը կարող է ուղարկվել փորձաքննության՝ դրա կեղծված լինելը բացառելու կամ ձայնով նույնականացում իրականացնելու համար[1]:

Վ. Կոմլևը ձայնագրության ապացուցողական նշանակությունը դիտարկում է հետևյալ կերպ. արձանագրության մեջ նշվում է, որ դրան կցվում է վերծանված ձայնագրությունը, որը պետք է պատշաճ փաթեթավորված լինի: Այդ պահից սկսած՝ ձայնագրությունը ձեռք է բերում իրեղեն ապացույցի կարգավիճակ[2]:

---

[1] Տե՛ս Карнеева Л. М., Доказательственные значения материалов видео- и звукозаписи. Вестник Верховного суда СССР, №7, 1991, էջեր 31-32:

[2] Տե՛ս Комлев В., О порядке прослушивания телефонных переговоров. //Социалистическая законность, №7, 1991, էջ 54:

Նույն տեսակետի կողմնակիցն է նաև Տ. Վ. Մոիսևան[1]:

Հակառակ տեսակետի կողմնակիցները գտնում են, որ առավել նպատակահարմար է այն այլ փաստաթղթերի շարքին դասելը, քանի որ օրենքը ձայնագրությունը՝ որպես իրեղեն ապացույց, գործի նյութերին կցելու պահանջ չի նախատեսում, հետևաբար օրենսդիրն այն դիտարկում է որպես փաստաթուղթ[2]: Վերջիններիս կարծիքով՝ ձայնագրությունը չունի իրեղեն ապացույցի հատկանիշներ, այլ վերջինս համապատասխան սուբյեկտի կողմից իրականացված որոշակի քննչական գործողության կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունք է, որն արձանագրում է գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ[3]:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ***Ալեքսեյ Մկրտչյանի*** գործով 2009 թ. փետրվարի 17-ի թիվ ՎԲ-01/09 որոշման մեջ անդրադառնալով այլ փաստաթղթի՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակի հատկանիշներին, առանձնացրել է այն, որ այլ փաստաթղթերի՝ ապացույցի կարգավիճակ ձեռք բերելու համար որևէ քննչական գործողության կատարում չի պահանջվում. անհրաժեշտ է կոնկրետ փաստաթուղթն ապացույց ճանաչելու և գործի նյութերին կցելու մասին որոշման ընդունում (տե՛ս այդ մասին Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշման 27-րդ կետը):

Տեսության մեջ արտահայտվել է նաև այն տեսակետը, որ մի կողմից՝ ընթերակաների ներկայությամբ համապատասխան ձայնագրությունը զննելու և վերծանելու, արձանագրություն կազմելու և այդ արձանագրությանը ձայնագրությունը կցելու դատավարական կարգն առավել բնութագրական է իրեղեն ապացույցներին, մյուս կողմից՝ ձայնագրությունն իր արտաքին հատկանիշներով թերևս կարող է դասվել այլ փաստաթղթերի շարքին: Միևնույն ժամանակ ձայնագրությունն այլ փաստաթղթերի շարքին դասելու թերությունն

---

[1] Տե՛ս Моисеева Т. В., Судебный контроль за соблюдением права граждан на тайну телефонных переговоров и иных сообщений, էջ 6:

[2] Տե՛ս Чувилёв А. А., Использование следователем оперативной информации. М., 1992. էջ 19:

[3] Տե՛ս Попов А. И., Процессуальные аспекты контроля и записи телефонных и иных переговоров: Дис.... к. ю. н., Челябинск, 2003, էջեր 171-172, Черенков А. В., Использование контроля и записи переговоров в раскрытии и расследовании преступлений. Дисс. ... к.ю.н., М., 2005, էջ 103:

ապացույցների այս տեսակի շարքին դասվող տեղեկությունների աղբյուրի հստակ նորմատիվ բնորոշման բացակայությունն է: Ըստ այդմ, առաջ է քաշվում ձայնագրությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, այլ փաստաթուղթ չհամարվող, տեղեկությունների էլեկտրոնային կրիչ նախատեսելու հարցը[1]:

Մեր կարծիքով՝ գործող օրենսդրական կարգավորումների պարագայում առավել հիմնավոր է հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունը և մասնավորապես անձի կողմից իրականացված գաղտնալսման ձայնագրությունը որպես այլ փաստաթուղթ, քան թե որպես իրեղեն ապացույց դիտարկելը: Այն իրեղեն ապացույց չի կարող դիտարկվել՝ ելնելով այն հանգամանքից, որ տվյալ դեպքում ապացուցողական նշանակություն ունի ոչ թե ինքնին ձայնագրությունն իր արտաքին հատկանիշներով, այլ դրա բովանդակությունը, դրանում առկա ձայնագրված խոսակցությունը: Այսինքն՝ այս դեպքում գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունների աղբյուրը ոչ թե կրիչն է իր տարբերակիչ հատկանիշներով, այլ դրանում պարունակվող ձայնագրությունը: Ձայնագրությունը հանցագործության նյութական հետք չէ, ինչը, ինչպես նշվում է տեսության մեջ, իրեղեն ապացույցներն այլ ապացույցներից տարբերակող կարևոր հատկանիշ է[2]:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ մասնավոր անձի կողմից հաղորդակցության ձայնագրումը որևէ քննչական գործողության կատարում չի ենթադրում, և գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալները ձեռք են բերվում վարույթից դուրս, իսկ այլ փաստաթղթի տարբերիչ հատկանիշն այն է, որ ապացույցի այս տեսակը ձեռք բերելու համար որևէ քննչական գործողության կատարում չի պահանջվում. անհրաժեշտ է կոնկրետ փաստաթուղթն ապացույց ճանաչելու և գործի նյութերին կցելու մասին որոշման ընդունում: Իհարկե այս դեպքում իբրև հակափաստարկ կարող է դիտարկում արվել առ այն, որ ձայնագրությունը պետք է զննության ենթարկվի և վերծանվի: Սակայն այս դեպքում զննության նպատակը

[1] Տե՛ս Ширев Д. А., Контроль и запись телефонных и иных переговоров и их доказательственное значение в уголовном судопроизводстве России, дисс. канд. юрид. наук, Москва, 2009, էջ 175:

[2] Տե՛ս Петрухин И. Л., Уголовный процесс. М., 2001, էջեր 187-188:

ոչ թե կրիչի արտաքին հատկանիշներն արձանագրելն է, այլ դրանում պարունակվող տեղեկությունները վերհանելը:

ПРОБЛЕМА ДОКАЗАТЕЛЬСТВЕННОЙ СИЛЫ ЧАСТНОЙ ЗАПИСИ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

Татевик Суджян
Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук

В статье обсуждается вопрос приемлемости записи, осуществленной частным лицом, в качестве доказательства. В статье анализируется внутригосударственная судебная практика, прецедентное право Европейского суда по правам человека, американская и канадская практика об условиях правомерного ограничения свободы общения. В результате исследования сделан вывод о том, что запись, сделанная частным лицом, не идентична ограничению свободы общения с государственным органом или должностным лицом путем осуществления следственных действий, и поэтому процессуальный порядок, определенный законом, не может быть распространен на действия частного лица. В статье также затрагивался вопрос о виде доказательств, полученных в результате частной записи. И на основе изучения теоретических источников, сделан вывод о том, что в свете действующих регулирований эти материалы можно рассматривать как иной документ.

THE ISSUE OF EVIDENTIARY VALUE OF THE PRIVATE RECORDING IN THE CRIMINAL PROCEDURE

Tatevik Sujyan
Assistant Professor at the YSU Chair of Criminal procedure and Criminalistics, Candidate of Legal Sciences

The subject of the article is the issue of the admissibility of recording by a private person as the evidence in the criminal proceedings. The article analyzed domestic judicial practice, the case law of the European Court of Human Rights, American and Canadian judicial practice on the

conditions of limitation of freedom of communication, In the result, the conclusion is made that recording by a private person is not adequate to the limitation of the freedom of communication by a state body or official, and that is why the procedural order defined by law cannot be disseminated on it. The article also turns to the question of the type of evidence obtained as a result of the recording, and comes to the conclusion that, within existing regulations, it could be considered as another document.

Բանալի բառեր - հաղորդակցության ազատություն, ձայնագրություն, մասնավոր անձ, իրեղեն ապացույց, այլ փաստաթուղթ
Ключевые слова: свобода общения, запись, частное лицо, вещественное доказательство, иной документ
Key words: freedom of expression, recording, private person, material evidence, another document

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Արմեն Հովհաննիսյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական

Նոր երևան եկած և նոր հանգամանքների հիմքերով վարույթի հարուցման նախադրյալների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում այդ հիմքերով բողոքի ներկայացման ժամկետների հետ կապված հիմնահարցերը:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ՝ նաև Գործող օրենսգիրք) 426.3-րդ հոդվածի 2-րդ և 426.4-րդ հոդվածի 3-րդ մասերի ուսումնասիրությունը վկայում է, որ նոր երևան եկած հանգամանքներով բողոք կարող է բերվել չորս, իսկ նոր հանգամանքներով՝ երեք ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին[1]:

Ասվածը նախ վկայում է, որ օրենսդիրը նախատեսել է բացառիկ վերանայման համապատասխան հիմքերով բողոք ներկայացնելու որոշակի ժամկետային սահմանափակումներ:

Հարկ է նշել, որ այս սահմանափակումները Գործող օրենսգրքում ամրագրվել են միայն 2007 թվականի օրենսդրական փոփոխություններից հետո (28.11.2007, ՀՕ-270-Ն), իսկ մինչ այդ (նաև ՀՀ

[1] Նկատենք, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ նաև Նախագիծ) «նոր երևան եկած հանգամանքներ» և «նոր հանգամանքներ» տերմինների միասնականացման արդյունքում սահմանվել են նաև միասնական ժամկետներ: Մասնավորապես համաձայն Նախագծի 404-րդ հոդվածի 1-ին մասի՝ նոր հանգամանքներով բողոք կարող է ներկայացվել 4 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերած անձն իմացել է կամ կարող էր իմանալ այդ հանգամանքների առաջացման կամ հայտնաբերման մասին: Ինչևէ, Նախագծի նման կարգավորումը առավել ընդունելի է թվում, քանի որ մեր կարծիքով՝ Գործող օրենսգրքում համապատասխան հանգամանքների միջև ժամկետների հարցում դրսևորված ոչ միասնական մոտեցումը չի բխում որևէ հիմնավոր պատճառներից:

քրեական դատավարության նախկին օրենսգրքերում) նման դրույթներ նախատեսված չեն եղել:

Այդ առումով հետաքրքիր են նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները: Մասնավորապես որոշ երկրների, օրինակ՝ Լատվիայի[1], Վրաստանի[2], Բելառուսի[3] քրեադատավարական օրենսդրությունները վկայում են, որ այդ երկրներում ընդհանրապես բացակայում են բողոքի ներկայացման նման ժամկետային սահմանափակումներ, սակայն ի տարբերություն դրանց՝ օրինակ՝ Ուկրաինայի[4] կամ Էստոնիայի[5] քրեադատավարական օրենսգրքերում[6] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նման նախատեսված են այդ սահմանափակումները:

Կարծում ենք՝ իրավական որոշակիության հիմնարար դրույթի ապահովման տեսանկյունից ընդհանուր առմամբ նոր երևան եկած հանգամանքների հիմքերի մասով արդարացված է այդ հանգամանքների ի հայտ գալուց հետո միայն որոշակի ժամկետի շրջանակներում բողոքի ներկայացման հնարավորության նախատեսումը, ինչը, սակայն, չի կարելի ասել նոր հանգամանքների մասին:

Մեր կարծիքով՝ այստեղ խնդիրը բավականին բարդ է, որն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ օրենսդիրը նոր հանգամանքների ցանկացած հիմքով վերջնական ակտերի վերանայման համար նախատեսել է բողոքի ներկայացման պարտադիր կարգ՝ որևէ կերպ բացառիկ վերանայումը չդիտարկելով որպես պետության պոզիտիվ պարտականություն:

Դրա հետ կապված՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «*Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը ևս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազա-*

[1] http://likumi.lv/doc.php?id=107820

[2] https://matsne.gov.ge/ru/document/download/90034/69/ru/pdf

[3] http://mvd.gov.by

[4] http://zakon4.rada.gov.ua

[5] www.juristaitab.ee

[6] Տե՛ս Ուկրաինայի և Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքերի՝ համապատասխանաբար 461-րդ և 368-րդ հոդվածները:

տությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով[1]»:

Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ նոր հանգամանքներով բացառիկ վերանայումը ոչ թե պետք է մշտապես կախված լինի համապատասխան անձանց կողմից բողոքի պարտադիր ներկայացումից, առավել ևս՝ նրանց կողմից միայն որոշակի ժամկետներում բողոք բերելուց, այլ այդ ակտերի վերանայումը առանձին դեպքերում պետք է իրականացվի իրավունքի ուժով:

Ինչևէ, արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ վերը նշյալ որոշման պահանջների կատարման ուղղությամբ ո՛չ Գործող օրենսգրքում, ո՛չ էլ Նախագծում տեղաշարժեր դեռևս չեն կատարվել, ներկայացնենք այդ պահանջների իրագործման անհրաժեշտության մասին վկայող որոշ այլ հանգամանքներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ անձի վիճակը բարելավող օրենքն ունի հետադարձ ուժ, իսկ ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասի՝ քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը հակասահմանադրական ճանաչելիս այդ դրույթը ուժը կորցնում է ընդունման պահից: Ասվածից հետևում է, որ այդ դրույթը հակասահմանադրական ճանաչելը կամ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը ենթադրում են, որ եթե չկա քրեական օրենքը, որի հիման վրա անձինք ենթարկվել են քրեական պատասխանատվության, և չեն անցել դրա հետևանքները (վաղեմություն, դատվածությունը մարված կամ հանված չէ), ապա այդ անձանց նկատմամբ կայացված ակտերը ենթակա են անհապաղ վերանայման: Մինչդեռ քանի որ Սահմանադրական դատարանի որոշումը, իսկ ՀՀ Սահմանադրական դատարանի 2017 թ. փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում նաև արարքի պատժելիությունը վերացնող օ-

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թ. հուլիսի 15-ի թիվ ՍԴՈ-984 որոշումը, կետ 11:

րենքը համարվում են նոր հանգամանք, իսկ նոր հանգամանքի դեպքում թե՛ Գործող օրենսգիրքը, թե՛ Նախագիծը նախատեսում են գործի ելքով շահագրգռված անձանց կողմից բողոքի ներկայացման պարտադիր կարգ, ավելին՝ բողոք բերելու առավելագույն ժամկետներ, ապա ստացվում է, որ առանց բողոքի կամ բողոքարկման այդ ժամկետներն անցնելուց հետո հնարավոր չէ վերանայել[1] համապատասխան վերջնական ակտերը[2]:

Այսինքն, օրինակ, եթե դատապարտյալը ինչ-ինչ պատճառներով տեղյակ չի լինում իրավական համակարգում տեղի ունեցած զարգացումների մասին և եռամսյա ժամկետում բողոք չի ներկայացնում իր նկատմամբ կիրառված և դե յուրե չգործող քրեական օրենքի հիման վրա կայացված մեղադրական դատավճռի վերանայման համար, ապա այդ դատավճիռը, որպես կանոն, չի կարող վերանայվել[3]:

Այդ առումով տեղին է նշել ՀՀ Սահմանադրական դատարանի հետևյալ դիրքորոշումը. «*… Այն դեպքում, երբ դատական ակտի համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում Սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը, ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետև արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի*

---

[1] Տե՛ս նաև **Մարաբյան Ս. Ռ.**, Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման որոշ հիմնախնդիրներ (Օրենսդրական առկա կարգավորումների և զարգացման միտումների մասին իրավական վերլուծություն), «Դատական իշխանություն», թիվ 4/129/, ապրիլ, 2010, էջեր 27-28:

[2] Փաստենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1348 որոշման եզրափակիչ մասում թեև սահմանեց, որ **արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք,** սակայն միաժամանակ արձանագրելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով**, խնդրո առարկա հարցին լուծում չտրվեց:

[3] Ընդ որում, խնդրի լուծում չի կարող համարվել նույնիսկ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդության ներկայացումը, քանի որ համապատասխան միջնորդության բավարարումը կամ մերժումը այդ ժամանակ կկապակցվի դատարանի դիսկրեցիոն լիազորության հետ:

ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմ[1]», իսկ մասնագիտական գրականության մեջ իրավաչափորեն նշվում է նաև, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավող օրենքի կիրառման առումով դատարանը կամ օրենքը կիրառող մյուս մարմիններն օժտված չեն դիսկրեցիոն լիազորություններով, այսինքն՝ բացառվում է նման օրենքին հետադարձ ուժ չտալը, եթե նույնիսկ անձը, ում իրավական վիճակը պետք է բարելավվի, չի դիմում այդպիսի խնդրանքով[2]:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ հատկապես այն դեպքերում, երբ ՀՀ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչում քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը, կամ երբ ուժի մեջ է մտնում արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենք[3], կայացված վերջնական ակտերի վերանայումը չպետք է կախված լինի համապատասխան անձանց կողմից բողոքի պարտադիր ներկայացումից, ինչպես նաև չպետք է լինեն ժամկետային սահմանափակումներ այդ անձանց կողմից բողոք ներկայացնելու համար:

Կարծում ենք՝ նման դեպքերում վերջնական ակտերը պետք է վերանայվեն առաջին հերթին պետության նախաձեռնությամբ, այսինքն, օրինակ, քրեական գործով դատախազի կամ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված բողոքի կամ դատարանի սեփական նախաձեռնությամբ, ինչպես դա գործում է, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում:

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թ. սեպտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-758 որոշումը, կետ 13:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (խմբագրությամբ՝ **Գ. Գ. Հարությունյանի, Ա. Գ. Վաղարշյանի**), «Իրավունք», Երևան, 2010, էջ 272:

[3] Կարծում ենք՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքին զուգահեռ պատիժը մեղմացնող օրենքը նույնպես որպես նոր հանգամանքի հիմք չդիտարկելը կարող է առաջացնել իրավական անորոշություն, քանի որ փաստացի ստացվում է, որ այդ օրենքն ունի հետադարձ ուժ (տե՛ս ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը), սակայն դրա ընդունումը հիմք չէ օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման համար:

Մասնավորապես ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ այն դեպքերում, երբ դատարանի կիրառած համապատասխան քրեական օրենքը ՌԴ Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական է ճանաչվում կամ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում է արձանագրում՝ կապված այն քրեական գործի հետ, որը քննվել էր ՌԴ դատարանի կողմից, ապա կայացված դատական ակտերի վերանայումը իրականացվում է ՌԴ Գերագույն դատարանի նախագահության (Президиум Верховного Суда) կողմից ՌԴ Գերագույն դատարանի նախագահի (Председатель Верховного Суда) ներկայացմամբ:

Շարունակելով նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքերով բողոքի ներկայացման ժամկետների քննարկումը՝ նշենք, որ Գործող օրենսգրքի 426.3-րդ և 426.4-րդ հոդվածների համապատասխանաբար 2-րդ և 3-րդ մասերից հետևում է, որ դրանցում նախատեսված ժամկետների հաշվարկման սկիզբը սահմանվել է՝ հիմք ընդունելով սուբյեկտիվ (իմացել է) կամ օբյեկտիվ (կարող էր իմանալ) հանգամանքները:

Ընդ որում, նշենք, որ այս հանգամանքների համատեքստում Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված հիմքերի համար համապատասխան չորսամսյա ժամկետի հաշվարկման մեկնակետ, մեր կարծիքով, պետք է համարել դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրը՝ նկատի ունենալով ՀՀ դատական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև 20-րդ հոդվածի 4-րդ մասը:

Ինչ վերաբերում է նոր հանգամանքներին, ապա նշենք, որ որպես համապատասխան եռամսյա ժամկետի հաշվարկման սկիզբ՝ օրենսդիրը ՔԴՕ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի համար փաստացի դիտարկել է համապատասխանաբար ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու օրը և ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով[1] սահմանված կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրը (վերջինը ուղղակիորեն ամրագրված է Գործող

[1] Տե՛ս http://www.echr.coe.int/Documents/Rules_Court_ENG.pdf (Եվրոպական դատարանի վճիռների մասով):

օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 4-րդ մասում)[1]:

Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերից հետևում է նաև, որ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու ժամկետները պետք է հասկանալ ոչ միայն համապատասխան հանգամանքի ի հայտ գալու, այլև դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու հարաբերությամբ[2]:

Այսպես՝ Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված է. *«Այն դատական ակտի վերանայումը, որով մեղադրական դատավճիռ է կայացված այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ժամկետներով սահմանափակված չէ»*: Ընդ որում, նույնիսկ դատապարտյալի մահն արգելք չէ նոր երևան եկած հանգամանքներով քրեական գործով վարույթը նորոգելու համար, եթե դա արվում է դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով (Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 6-րդ մաս):

Փաստորեն օրենսդիրը որևէ ժամկետներով չի սահմանափակել նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայումը՝ ի շահ դատապարտյալի:

Դեռևս 1864 թվականի քրեական դատավարության կանոնադրությունում, ինչպես նաև 1923, 1934, 1961 թվականների քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսված այս դրույթի առումով դժվար թե կարելի լինի ներկայացնել որևէ առարկություն, քանի որ նման կարգավորումը, ըստ էության, ուղղված է դատապարտյալի խախտված իրավունքների վերականգնմանը և արդար դատաքննության իրավունքի ապահովմանը, ինչը նշում են նաև որոշ հեղի-

---

[1] Հարկ ենք համարում նշել, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների բացառիկ վերանայման համապատասխան ժամկետների հաշվարկման պահի հետ կապված հարցերին անդրադարձել են նաև մի շարք հեղինակներ (տե՛ս **Темушкин О. П.,** Расследование вновь открывшихся обстоятельств // Соц. Законность, №8, 1975, էջեր 30, **Анашкин Г. З., Перлов И. Д.,** Возобновление дел по вновь открывшимся обстоятельствам, М., Юрид. лит. 1982, էջեր 65-66 և այլք):

[2] Այդ մասին տե՛ս Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, /հեղ. խումբ/, Երևան, «Ասողիկ» հրատ., 2010, էջ 362:

նակներ[1]:

Նման դրույթ նախատեսված է նաև արտասահմանյան բազմաթիվ երկրների քրեադատավարական օրենսգրքերում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն, Ուզբեկստան, Մոլդովա, Ուկրաինա և այլն):

Հարկ է նշել, որ ի տարբերություն ՔԴՕ 426.3-րդ հոդվածի 5-րդ մասի՝ օրենսդիրը նույն հոդվածի 4-րդ մասով սահմանել է որոշակի կոնկրետ ժամկետներ, եթե նոր երևան եկած հանգամանքներով վերանայումը կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացմանը:

Մասնավորապես նշված մասում ամրագրված է. *«Արդարացման դատավճռի և գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում»*:

Դատավարագետները նման դրույթի նախատեսումը, մեր կարծիքով, իրավաչափորեն պայմանավորում են՝ ելնելով մարդասիրական, անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև իրավական որոշակիության հիմնադրույթի ապահովման նկատառումներից[2]:

Ընդունելի համարելով այս տեսակետները՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ վերը նշված նկատառումների տեսանկյունից այնքան էլ ճիշտ չէ օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները անձի վիճակի վատթարացման բոլոր դեպքերի վրա չտարածելը[3]:

Այսինքն, օրինակ, եթե անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, սակայն ի հայտ եկած համապատասխան հանգամանքները վկայում են նրա կատարած հանցանքի կամ նրա նկատմամբ նշանակված պատժի ավելի ծանր լինելը, քան այն, որի համար

---

[1] Տե՛ս, օրինակ, **Давыдов В.А.**, Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, М., 2011, էջ 167:

[2] Տե՛ս նույն տեղը, էջեր 167-168, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, «Հատուկ մաս» (2-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), դասագիրք բուհերի համար (խմբագրությամբ՝ **Գ. Ս. Ղազինյանի**), ԵՊՀ հրատ., Երևան, 2006, էջ 419:

[3] Ընդ որում, նույնը վերաբերում է նաև Նախագծի 410-րդ հոդվածի 3-րդ մասին:

դատապարտվել է, ապա այդ դեպքերում նույնպես համապատասխան հիմքերով բացառիկ վերանայումը, մեր կարծիքով, պետք է թույլատրվի միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում։

Այդ տեսանկյունից առավել ընդունելի է թվում ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան կարգավորումը։

Հարկ է նշել, որ քննարկվող ժամկետային կանոնները որոշակիորեն այլ լուծում են ստացել Նախագծում։

Այսպես՝ Նախագծի 404-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերից հետևում է, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ Նախագծով «նոր երևան եկած հանգամանքներ» և «նոր հանգամանքներ» եզրույթների միասնականացման արդյունքում այդ կանոնները սահմանվել են թե՛ փաստական, թե՛ իրավական հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքերի համար։ Այսինքն՝ դրանք տարածվել են Գործող օրենսգրքով սահմանված ոչ միայն նոր երևան եկած, այլև նոր հանգամանքների նկատմամբ։

Կարծում ենք՝ Նախագծով նախատեսված նման մոտեցումը արդարացված է և բխում է արդար դատաքննության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից։ Այդպիսի մոտեցումը համապատասխանում է նաև մի շարք օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսգրքերով[1] սահմանված կարգավորումներին։

Վերոգրյալի հիման վրա կարծում ենք՝ արդարացված կլինի, եթե Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 4-6-րդ մասերում սահմանված կանոնները հավասարապես վերաբերեն նաև նոր հանգամանքներին։

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կարծում ենք.

1. Թե՛ Գործող օրենսգրքում, թե՛ Նախագծում ճիշտ կլինի կատարել փոփոխություններ՝ նկատի ունենալով, որ հատկապես այն դեպքերում, երբ ՀՀ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչում քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթը, կամ երբ ուժի մեջ է մտնում արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղ-

[1] Տե՛ս, օրինակ, Ուկրաինայի, Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքերի՝ համապատասխանաբար 461-րդ և 414-րդ հոդվածները կամ Լատվիայի քրեական դատավարության օրենքի 656-րդ հոդվածը։

մացնող օրենք, վերջնական ակտերի վերանայումը ոչ թե պետք է կախված լինի գործի ելքով շահագրգռված անձանց կողմից բողոքի պարտադիր ներկայացումից, այլ այդ ակտերի վերանայման նպատակով միջոցների ձեռնարկումը պետք է լինի առաջին հերթին պետության պոզիտիվ պարտականությունը: Իսկ այն դեպքերում, երբ պետությունն ինչ-ինչ պատճառներով քայլեր չի ձեռնարկում համապատասխան անձանց խախտված իրավունքները վերականգնելու համար, ապա նրանք կարող են բողոք ներկայացնել, սակայն դրա համար չպետք է լինի ժամկետային սահմանափակում:

2. Ճիշտ կլինի, եթե դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու հարաբերության տեսանկյունից բացառիկ վերանայման բողոք բերելու ժամկետները Գործող օրենսգրքում ունենան հետևյալ տեսքը.

«Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով մեղադրական դատավճռի վերանայումը, ի շահ դատապարտյալի, ժամկետներով սահմանափակված չէ:

Եթե նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական ակտերի վերանայումը հանգեցնում է արդարացվածի կամ դատապարտյալի, կամ այն անձի վիճակի վատթարացմանը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել և/կամ գործով վարույթը կարճվել է, ապա դա թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում:

Դատապարտյալի մահն արգելք չէ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական ակտերը վերանայելու համար»:

3. Նպատակահարմար է Նախագծի 410-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Եթե նոր հանգամանքներով բացառիկ վերանայումը հանգեցնում է արդարացվածի կամ դատապարտյալի, կամ այն անձի վիճակի վատթարացմանը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել, և/կամ գործով վարույթը կարճվել է, ապա դա թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում:

5. Մեղադրական դատավճռի բացառիկ վերանայումը, ի շահ դատապարտյալի, ժամկետներով սահմանափակված չէ»:

ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ СО СРОКАМИ ПОДАЧИ ЖАЛОБЫ ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ И НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ

Армен Оганесян
Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук,
советник председателя Кассационного Суда РА

Настоящая статья посвящена анализу ряда вопросов, связанных со сроками подачи жалоб по вновь открывшимся и новым обстоятельствам. В частности, были изучены проблемы, которые могут возникнуть, когда Конституционный суд признает неконституционным закон, предусматривающий уголовную ответственность, или когда вступает в силу закон об устранение наказания за деяния или закон, смягчающий наказание. Кроме того, подверглись анализу вопросы, связанные с началом расчета сроков подачи жалобы по вновь открывшимся и новым обстоятельствам, а также проблемы, возникшие со сроками пересмотра судебных актов по этими же обстоятельствам.

В ходе исследования соответствующие положения Уголовно-процессуального кодекса РА и проекта нового кодекса подверглись сравнительно-правовому анализу, были рассмотрены правовые позиции Конституционного Суда, а также представлены регулированияв зарубежном законодательстве.

В заключении автор представляет ряд рекомендаций для внесения изменений в Законодательство.

ISSUES, RELATED TO THE DEADLINES FOR LODGING COMPLAINT DUE TO NEWLY DISCOVERED OR NEW CIRCUMSTANCES

Armen Hovhannisyan
Assistant at the YSU Chair of Criminal procedure and
Criminalistics, Candidate of Legal Sciences,
Adviser to the Chairman of RA Cassation Court

The present article is devoted to the analysis of a number of issues, related to the deadlines for lodging complaint due to newly discovered or new circumstances. In particular, there have been examined the problems

that can arise when the Constitutional Court recognizes as unconstitutional the law providing for criminal responsibility, or when the law on eliminating punishment for an act or softening punishment enters into force. In addition, questions have been analyzed, links to the beginning of the calculation of the deadlines for lodging complaint due to newly discovered or new circumstances, as well as the terms of review of judicial acts on the same circumstances.

In the course of the study, the relevant provisions of RA Criminal Procedure code and the New code are subjected to a comparative legal analysis, there have been examined the legal positions of the Constitutional Court, as well as the regulations of foreign legislation is presented.

In conclusion, the author presents a number of recommendations for legislative changes.

Բանալի բառեր - նոր երևան եկած հանգամանք, նոր հանգամանք, բողոք բերելու ժամկետներ, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշում, արարքի պատժելիությունը վերացնող օրենք, պատիժը մեղմացնող օրենք

Ключевые слова: вновь открывшиеся обстоятельства, новое обстоятельство, сроки подачи жалоб, решение Конституционного Суда РА, закон об устранении наказания за деяния, закон, смягчающий наказание

Keywords: newly discovered circumstance, new circumstance, deadlines for lodging complaint, Decision of the Constitutional court of RA, law on the elimination of punishment for an act, law on softening punishment

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ[1]

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Նախագծի, միջազգային իրավական ակտերի համեմատական վերլուծություն)

Մերգեյ Մարաբյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Անչափահասների վերաբերյալ քրեական արդարադատության հարցերին վերջին շրջանում բավականին մեծ ուշադրություն է դարձվում գիտության մեջ և պրակտիկայում[2], հաճախակի են դարձել նաև անչափահասների գործերով դատավարական գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող մոնիտորինգներն ու հետազոտությունները[3]: Ստեղծված իրավիճակն արդարացված է, քանի որ գիտնականները, իրավապաշտպանները և իրավակիրառողները

[1] Այսուհետ՝ Նախագիծ:

[2] Տե՛ս, օրինակ, նախկին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի ելույթը ԵԴԽԽ 5-րդ լիագումար նիստին՝ «Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով արդարադատության իրականացման ընթացքում դատախազության դերը» թեմայով //http://www.genproc.am/am/169/item/6424/ և այլն:

[3] Տե՛ս Անչափահասների արդարադատության համատեքստում Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների ուսումնասիրություն, Երևան, 2013 (ուսումնասիրությունն իրականացվել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից), Անչափահասների գործերով արդարադատությունը Հայաստանում. օրենսդրության վերլուծություն (քաղաքացիական հասարակության ինստիտուտ), Երևան, 2012, Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում (հաշվետվություն), Երևան, 2011 և այլն:

լուրջ մտահոգված են անչափահասների վերաբերյալ քրեական գործերով արդարադատության խնդիրներով և փորձում են գտնել այդ խնդիրների արդյունավետ լուծումներ: Դա ծայրահեղ անհրաժեշտություն է, եթե հաշվի առնենք Հայաստանի կողմից անչափահասների արդարադատության վերաբերյալ հարցերով միջազգային մի շարք պարտավորությունների ստանձնումը, որոնք դեռ չեն կատարվել, և այդ ոլորտում առկա հիմնարար խնդիրները: **ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն** որոշման[1] համաձայն՝ անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելման գործը հասարակական մեծ կարևորություն ունեցող խնդիր է, քանզի եթե հանցավորությունն ընդհանրապես ոտնձգություն է մարդկանց կյանքի, առողջության, գույքի դեմ, ապա անչափահասների հանցավորությունը ոտնձգություն է նաև ապագայի, հատկապես՝ իրավական պետությունում օրինապահ հասարակություն ունենալու նպատակի իրագործման դեմ (84-րդ կետ): Նույն որոշմամբ նաև արձանագրված է, որ չնայած վերջին տարիներին անչափահասների գործերով արդարադատության ոլորտում և իրավախախտ անչափահասների շրջանում տարվող կանխարգելիչ աշխատանքներին, մասնավորապես արձանագրված շոշափելի առաջընթացին այս բնագավառում առկա հիմնախնդիրները շարունակում են օրակարգային մնալ (85-րդ կետ):

ՀՀ կառավարության տարբեր որոշումներից հստակ երևում է, որ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում առաջնային են համարվում իրավակարգի ամրապնդումը և հանցավորության դեմ պայքարի կազմակերպումը, ինչն իր մեջ ներառում է նաև անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների և հանցագործությունների կանխարգելման և բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքների համապարփակ ծրագրի իրականացման հիմնախնդիրները: Այս ոլորտում իրականացվող բարեփոխումներն ընդգրկում են հասարակությունում գտնվող և հա-

[1] **«Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:**

սարակությունից մեկուսացված իրավախախտ անչափահասներին վերաբերող խնդիրները, ինչպես նաև իրավախախտումներից տուժած անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Բարեփոխումների ընթացքում հաշվի է առնվում միջազգային և տեղական փորձը՝ միևնույն ժամանակ չանտեսելով ազգային առանձնահատկությունները[1]:

Գործնականում բոլոր այն պետությունները, որոնց համար անչափահասների արդարադատության հարցերի հրատապ և արդիական լինելն ակնհայտ է, իրենց քրեաիրավական և քրեադատավարական օրենսդրության կատարելագործման ժամանակ հիմք են ընդունում համընդհանուր ճանաչում ստացած դրույթներ այն մասին, որ անչափահաս մեղադրյալներին տրվող իրավունքներն ու պարտականությունները պետք է նախատեսեն առավել բարձր երաշխիքներ, քան չափահասների դեպքում: Այս պահանջն ուղղակիորեն ամրագրված է *ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով հաստատված «Անչափահասների գործերով արդարադատության իրականացման Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոններում» (Պեկինյան կանոններ)*, որի 2.3-րդ կանոնը յուրաքանչյուր անդամ պետության պատվիրակում է ներպետական իրավական համակարգում ջանքեր գործադրել այնպիսի օրենքներ, կանոններ և դրույթներ ընդունելու ուղղությամբ, որոնք հատկապես կվերաբերեն անչափահաս իրավախախտներին, անչափահասների գործերով արդարադատության իրականացման իրավասություն ունեցող հաստատություններին ու մարմիններին, և որոնք կոչված են. ա) բավարարելու անչափահաս իրավախախտների զանազան պահանջմունքները՝ միաժամանակ պաշտպանելով նրանց հիմնական իրավունքները, բ) բավարարելու հասարակության պահանջները, գ) անշեղորեն և անաչառ կենսա-

[1] «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիրը հաստատելու մասին» 2003 թ. դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշում, որը **«Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն որոշմամբ** ուժը կորցրած է ճանաչվել:

գործելու սույն կանոնները։ Նույն կանոնների իմաստով անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որպեսզի անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտների առանձնահատկություններին և թե՛ իրավախախտման հանգամանքներին (5.1. կանոն)։

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 1997 թ. հուլիսի 21-ի թիվ 1997/30 բանաձևով առաջարկված «Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշների[1]» 11-րդ կետի «ա» ենթակետում ամրագրված է, որ պետք է ձեռնարկվեն քաղաքականությանը, որոշումներ կայացմանը, առաջնորդությանը և բարեփոխումներին վերաբերող միջոցառումներ, որոնց նպատակը պետք է լինի ապահովել, որպեսզի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի սկզբունքներն ու դրույթները և անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի ստանդարտներն ու նորմերն ամբողջությամբ արտացոլված լինեն համապետական և տեղական օրենսդրությունում, քաղաքականության մեջ և պրակտիկայում, մասնավորապես անչափահասների գործերով արդարադատության այնպիսի երեխայամետ համակարգ ձևավորելու միջոցով, որը կերաշխավորի երեխաների իրավունքները, կկանխի երեխաների իրավունքների խախտումները, կխթանի երեխաների մոտ արժանապատվության ու կարևորության զգացողությունը և լիովին կհարգի նրանց տարիքը, զարգացման աստիճանը և հասարակական կյանքում իմաստալից մասնակցություն ունենալու և հասարակությանը նպաստ բերելու՝ վերջիններիս իրավունքը։ Նույն փաստաթղթի 13-րդ կետում ամրագրված հատուկ նպատակներից հետևյալը. «Անկախ այն բանից, թե քրեական պատասխանատվության, չափահասության և գործունակության տարիքներն ինչպես են սահմանված ներպետական օրենսդրությունում, պետությունները պետք է ապահովեն, որպեսզի երեխաներն օգտվեն միջազգային իրավունքով երաշխավորված իրենց բոլոր իրավունքներից, հատկապես Կոնվենցիայի 3-րդ, 37-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված իրավունքների համատեքստում»։

[1] Այսուհետ՝ ՄԱԿ-ի ուղենիշներ։

Անչափահասների արդարադատության նման մոտեցումը հիմնավորում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որն իր 1999 թ. ***«V-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»*** գործով վճռում նշում է՝ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ հանցագործության մեջ մեղադրվող երեխայի նկատմամբ վերաբերմունքը պետք է հիմնված լինի նրա տարիքի, հասունության մակարդակի, մտավոր և զգայական կարողությունների վրա՝ ներառելով նաև քայլեր, որոնք խրախուսում են նրա՝ դատավարությունն ըմբռնելու և դատավարությանը մասնակցելու կարողությունը (կետ 86):

Դատարանի այս նախադեպը հիմքում ունի նաև մի շարք միջազգային իրավական ակտերի պահանջներ, այդ թվում՝ Պեկինյան կանոնները, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և այլն: Այսինքն՝ դատարանի այս դիրքորոշումից և այլ միջազգային իրավական ակտերից հստակ երևում է, որ անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել անչափահասների վերաբերյալ քրեական գործերով դատավարություններին, մասնավորապես օրենսդրորեն սահմանել և գործնականում ապահովել այնպիսի ընթացակարգեր, որոնք հիմնված են անչափահաս իրավախախտի խոցելի վիճակի վրա և հնարավորություն են ընձեռում նրան առավելագույնս ներկայացնելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Այլ կերպ ասած՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքում և միջազգային իրավական ակտերի պահանջներում հստակ ընդգծվում է այն գաղափարը, որ անչափահասները, ելնելով իրենց հասունության աստիճանից, ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և այլ հատկանիշներից, համարվում են քրեաիրավական և քրեադատավարական հարաբերությունների հատուկ սուբյեկտներ, որի ուժով նրանց մասնակցությամբ վարույթը պետք է լինի պաշտպանիչ, վերականգնողական և երեխայամետ[1]:

---

[1] Այս երեք պահանջները, ի թիվս այլնի, համարվում են անչափահասների արդարադատության հիմնարար սկզբունքները //այս մասին մանրամասն տե՛ս Кузьмина О.Л. Процессуальная форма судопроизводства по уголовным делам в отношении несовершеннолетних. Канд. дисс., Калининград, 2005, էջ 65-66, Концептуальные основы ювенального уголовного судопроизводства: докт. дисс., Оренбург, 2011, էջ 41-94, Мельникова Э.Б. Ювенальная юстиция. Проблемы уголовного права, уголовного процесса и криминологии. М., 2000, էջ 90-92:

Մի շարք պետությունների իրավական համակարգերում, հիմք ընդունելով միջազգային իրավական ակտերով ամրագրված չափանիշները և մասնավորապես Պեկինյան կանոնները[1], ստեղծվել են այնպիսի քրեաիրավական և քրեադատավարական հատուկ ինստիտուտներ, որոնք նախատեսում են անչափահասների վերաբերյալ քրեական գործերով արդարադատության հատուկ կարգ:

Հայաստանի Հանրապետությունում անչափահասների գործերով արդարադատության համակարգ (Juvenile Justice) միջազգային իրավունքի դասական իմաստով[2] գոյություն չունի, և մոտ ապագայում ստեղծվելու հույս չկա, սակայն, ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսգրքի, Նախագծում հեղինակներին հաջողվել է սահմանել միջազգային չափանիշներին համապատասխանող դատավարական կառուցակարգեր: Այս առումով անչափահասների վերաբերյալ վարույթը կարելի է բնութագրել որպես բարդ դատավարական ձև:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները» կանոնակարգող հոդվածների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ անչափահասների վերաբերյալ վարույթն սկզբունքային

---

[1] Մասնագիտական գրականության մեջ Պեկինյան կանոնները ընդունված է համարել անչափահասների արդարադատության ոլորտում համաշխարհային ճանաչում ունեցող և ամենահիմնարար իրավական ակտը:

[2] Հայաստանում չկան անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ առանձին օրենսդրություն, մասնագիտացված դատարաններ, չկան հատկապես անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում մասնագիտացված մասնագետներ (դատավորներ, դատախազներ, փաստաբաններ, քննիչներ և այլն): Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում կան դրույթներ, որոնք անհամատեղելի են առաջադեմ հասարակություններում անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում ընդունված պրակտիկային: Այս հանգամանքն ուղղակիորեն արձանագրված է **«Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն որոշման մեջ:**

առանձնահատկություններ չունի, որոնց շնորհիվ կտարբերվեր չափահասների վերաբերյալ վարույթից: Նախագծում անչափահասների վերաբերյալ վարույթի կարգի կանոնակարգումները մի շարք սկզբունքային առանձնահատկություններով են օժտված՝ ընդհանուր կամ չափահասների վերաբերյալ վարույթի համեմատ: Այլ կերպ ասած՝ Նախագծում ամրագրված անչափահասների վերաբերյալ վարույթի կարգը կանոնակարգող նորմերը ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով տարբերվում են գործող քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումներից: Ի տարբերություն գործող օրենսգրքի, որն ընդամենը չորս հոդված է նվիրում անչափահասների վերաբերյալ վարույթի կարգին, Նախագիծը այդ հարցերի կարգավորմանը նվիրել է 12 հոդված, ընդ որում, էականը ոչ թե հոդվածների քանակն է, այլ «որակը», քանի որ դրանցում փորձ է արված հանգամանորեն կանոնակարգելու անչափահասների վերաբերյալ վարույթի բոլոր առանձնահատկությունները: Մասնավորապես միջազգային չափանիշներին համապատասխան Նախագծում սահմանված են՝

ա) անչափահասությունը՝ որպես հատուկ կարգ (անչափահասների վերաբերյալ վարույթի կարգը) կիրառելու դատավարական հիմք[1],

բ) անչափահասների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքների առավել լայն շրջանակ[2],

գ) անչափահասների վերաբերյալ վարույթի արագ և առանց անհարկի ձգձգումների քննության պահանջ և դրանով պայմանավորված՝ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամկետների երկարացման արգելք[3],

---

[1] Տե՛ս Մարաբյան Ս., Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը և առանձնահատկություններն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Նախագծի, միջազգային իրավական ակտերի համեմատական վերլուծություն) // **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 525-533:**

[2] Նույն տեղում, էջեր 533-542:

[3] Նույն տեղում, էջեր 540-542:

դ) անչափահասների վերաբերյալ վարույթը չափահասների վարույթից առանձնացնելու, անչափահասի վերաբերյալ վարույթի նյութերը հրապարակելու կամ առանց անհրաժեշտության վարույթի բոլոր մասնակիցներին տրամադրելու արգելք[1],

ե) անչափահասների վերաբերյալ դատական նիստերի առանձնահատկությունները[2],

զ) անչափահասների վերաբերյալ վարույթին պաշտպանի և օրինական ներկայացուցչի պարտադիր մասնակցություն[3],

է) անչափահասի ձերբակալման և կալանավորման կիրառման առանձնահատուկ կանոններ (հիմքերի, պայմանների, ժամկետների և կարգի տեսանկյունից)[4],

ը) անչափահաս մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները[5],

թ) դաստիարակչական կամ պատժից բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով քրեական հետապնդումը դադարեցնելու առանձնահատկություններ։

Սույն հոդվածի շրջանակներում նպատակ ենք դրել հիմնականում քննարկել անչափահասի նկատմամբ դաստիարակչական կամ պատժից բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով քրեական հետապնդումը դադարեցնելու առանձնահատկությունները։

Ինչպես նշվեց, անչափահասների վերաբերյալ արդարադատության միջազգային չափանիշները պահանջում են առավելապես ուշադրությունը սևեռել անչափահասների դաստիարակչական ներգործության միջոցների կիրառմանը, քան պատժին։ Նույն չափանիշները պահանջում են նախատեսել նաև հայեցողական լիազորություններ ոստիկանության, դատախազության համար, որպեսզի վեր-

---

[1] Նույն տեղում, էջեր 542-545։

[2] Նույն տեղում, էջեր 545-553։

[3] Նույն տեղում, էջեր 553-559։

[4] Տե՛ս Աղաբաբյան Ն., Անչափահասի ձերբակալման և կալանավորման առանձնահատկություններն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի// **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 562-575։**

[5] Տե՛ս Մարաբյան Ս., նշված աշխատությունը, էջեր 559-560։

ջինները ևս կարողանան լուծել անչափահասի նկատմամբ քրեական պատժին այլընտրանքային միջոց կիրառելու հարցը։

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 40-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ մասնակից պետությունները ձգտում են նպաստել մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող երեխաների նկատմամբ հատկապես կիրառելի օրենքների, ընթացակարգերի, մարմինների և հաստատությունների ստեղծմանը, մասնավորապես … /բ/ անհրաժեշտության և ցանկալիության դեպքում նման երեխաների նկատմամբ միջոցներ ձեռնարկել՝ առանց դատաքննության դիմելու, մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանման պայմանով։ Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ է այնպիսի բազմազան միջոցառումների առկայությունը, ինչպիսիք են՝ խնամքի, խնամակալության և հսկողության մասին հրահանգները, խորհրդատվական ծառայությունները, փորձաշրջանի նշանակումը, դաստիարակությունը, կրթական և մասնագիտական պատրաստության ծրագրերը և առանձին հաստատություններում բարեկեցությանը, ինչպես նաև դրությանն ու հանցագործության բնույթին համապատասխանող վերաբերմունք։

Պեկինյան կանոնների 5.1-ին կետի համաձայն անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որպեսզի անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտների առանձնահատկություններին և թե՛ իրավախախտման հանգամանքներին։

Այս կանոնի պաշտոնեական մեկնաբանություններում նշվում է, որ նրանում արտացոլված են անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելու առավել կարևոր նպատակները։ Առաջին նպատակը անչափահասի բարեկեցությանը նպաստելն է։ Դա գլխավոր նպատակն է իրավական այն համակարգերում, որոնցում անչափահաս իրավախախտների գործերով զբաղվում են ընտանեկան գործերով դատարանները կամ վարչական մարմինները, սակայն անչափահասների բարեկեցությանը պետք է ձգտեն նաև այն համակարգերը, որոնք առաջնորդվում են քրեական դատարանի մոդելով՝ նպաստելով բացառապես պատժիչ միջոցներին դիմելու

պրակտիկայից խուսափելուն: Երկրորդ նպատակը «համարժեքության սկզբունքի» պահպանումն է: Այս սկզբունքը հայտնի է որպես պատժամիջոցների կիրառումը զսպելու միջոց, որը հիմնականում արտահայտվում է արարքին համարժեք հատուցման սկզբունքով՝ ելնելով իրավախախտման ծանրությունից: Երիտասարդ իրավախախտների արարքների նկատմամբ արձագանքը պետք է հիմնվի ոչ միայն իրավախախտման ծանրության, այլև անձի առանձնահատկությունների վրա: Իրավախախտի անձնական հանգամանքները (օրինակ՝ սոցիալական կարգավիճակը, ընտանեկան դրությունը, իրավախախտմամբ պատճառված վնասը և այլ՝ իրավախախտի անձի հետ կապված գործոններ) պետք է ազդեն արձագանքի համարժեքության վրա: Կարող են լինել դեպքեր, երբ երիտասարդ իրավախախտի բարեկեցության ապահովմանն ուղղված պատասխան գործողությունները դուրս կգան անհրաժեշտության սահմաններից և դրանով վնաս կպատճառեն տվյալ երիտասարդի հիմնական իրավունքներին: Հետևաբար 5-րդ կանոնը, ըստ էության, կոչ է անում անչափահասի կողմից կատարված հանցագործության դեպքում, ոչ ավել, ոչ պակաս՝ արդարացի պատասխան գործողություններ ձեռնարկել:

Պատժիչ միջոցներից խուսափելու, սակայն միաժամանակ համարժեք պատասխան գործողություններ ձեռնարկելու կոչ է արվում կանոնների 6-րդ և 11-րդ կետերում: Այսպես՝ 6-րդ կետը սահմանում է. «6.1. Նկատի ունենալով անչափահասների զանազան հատուկ պահանջմունքները, ինչպես նաև առկա միջոցների բազմազանությունը, գործի քննության բոլոր փուլերում և արդարադատության իրականացման տարբեր մակարդակներում, այդ թվում՝ նախաքննության, դատաքննության, դատավճռի կայացման և կատարման փուլերում անհրաժեշտ է հայեցողական լիազորությունների համապատասխան շրջանակ նախատեսել: 11-րդ կետի համաձայն՝ «11.1. Անչափահաս իրավախախտների գործերի քննության ժամանակ հնարավորության սահմաններում պետք է ձեռնպահ մնալ ստորև՝ 14.1. կանոնում նշված իշխանության իրավասու մարմինների կողմից գործի պաշտոնական դատական քննությունից: 11.2. Ոստիկանությունը, դատախազությունը կամ անչափահասների գործեր քննող այլ մարմինները պետք է լիազորված լինեն սեփական հայեցողությամբ այդ գործերը լուծել առանց պաշտոնական դատական

լսումների՝ համապատասխան իրավական համակարգում այդ նպատակով սահմանված չափահասների, ինչպես նաև սույն կանոններում ամփոփված սկզբունքների համաձայն։ 11.4. Անչափահասների գործերի քննության ընթացքում հայեցողական որոշումներին նպաստելու նպատակով հարկավոր է ջանքեր գործադրել համայնքային ծրագրեր առաջարկելու ուղղությամբ, ինչպիսիք են՝ ժամանակավոր հսկողությունը կամ ուղղորդումը, տուժողին պատճառված վնասի հարթումը կամ փոխհատուցումը»։

Հիշյալ կանոնների պաշտոնական մեկնաբանություններում նշվում է, որ գործի արտադատական լուծումը, այդ թվում՝ քրեական վարույթը կարճելը, հաճախ նաև գործի հանձնումը համայնքային աջակցության ծառայություններին, իրավական շատ համակարգերում սովորաբար գործածվում է պաշտոնական և ոչ պաշտոնական հիմունքներով։ Այդ պրակտիկան թույլ է տալիս սահմանափակել անչափահասների գործերով արդարադատության իրականացման հետագա ընթացակարգերի բացասական հետևանքները (օրինակ՝ դատվածության և պատժի հետ կապված խարանումը)։ Շատ դեպքերում չմիջամտելը կարող է լավագույն արդյունքը տալ։ Այսպիսով՝ օպտիմալ տարբերակ կարող է հանդիսանալ գործն ի սկզբանե արտադատական կարգով լուծելը՝ առանց այն այլընտրանքային (սոցիալական) մարմիններին հանձնելու։ Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ իրավախախտումների հետ կապված գործերին, երբ ընտանիքը, դպրոցը և սոցիալական վերահսկողության ոչ պաշտոնական այլ հաստատություններն արդեն արձագանքել են դեպքին կամ պատրաստվում են ներգործության պատշաճ միջոցներ ձեռնարկել։

Պեկինյան կանոնների 17.4-րդ կանոնի համաձայն՝ «Իրավասու մարմինը պետք է իրավունք ունենա ցանկացած ժամանակ կասեցնելու կամ կարճելու գործի քննությունը»։

Սույն կանոնի մեկնաբանությամբ արձանագրվում է, որ ցանկացած ժամանակ դատաքննությունը կարճելու կամ կասեցնելու իրավունքը անչափահաս իրավախախտների նկատմամբ վերաբերմունքը չափահասների նկատմամբ վերաբերմունքից տարբերող հատկանիշ է։ Իրավասու մարմինը կարող է ցանկացած պահի տեղեկանալ այնպիսի հանգամանքների մասին, որոնց հիման վրա գործի լիակատար կարճումը կարող է լավագույն որոշումը լինել։

Անչափահասների նկատմամբ այլընտրանքային միջոց կիրառելու և դրանք արտադատական կարգով լուծելու պահանջ է սահմանում նաև ԵԽՆԿ թիվ R(87)20 հանձնարարականը, որի 2-րդ բաժնի 2-րդ կետի համաձայն՝ «[պետք է] խրախուսվի գործերի արտադատական լուծման և մեդիացիայի ընթացակարգերի ձևավորումը դատախազության (վարույթը կարճելու մասով) կամ ոստիկանության մակարդակում՝ այն երկրներում, ուր ոստիկանությունն օժտված է քրեական հետապնդում իրականացնելու լիազորություններով՝ կանխելու համար անչափահասների առնչությունը քրեական արդարադատության համակարգին և դրանից բխող հետևանքները...: Նույն բաժնի 3-րդ կետը սահմանում է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի այդ ընթացակարգերում արտացոլված լինի հետևյալը. ա) ապահովել անչափահասի համաձայնությունն այն միջոցների վերաբերյալ, որոնցով պայմանավորված են գործերի արտադատական լուծման տվյալ եղանակը և, անհրաժեշտության դեպքում, նրա ընտանիքի համագործակցությունը, բ) պատշաճ ուշադրություն դարձնել անչափահասի, ինչպես նաև տուժողի իրավունքներին ու շահերին: Քննարկվող խնդրի տեսանկյունից կարևոր պահանջ է բովանդակում նաև հիշյալ հանձնարարականի 3-րդ բաժնի 4-րդ կետը՝ մասնավորապես սահմանելով, որ պետք է ապահովվի անչափահասների գործերով դատավարության արագությունը՝ խուսափելով անհարկի ձգձգումներից կիրառված միջոցի կրթական ազդեցությունն ապահովելու նպատակով:

Քննարկվող հարցերի տեսանկյունից ուշագրավ են նաև Տոկիոյի կանոններում ամրագրված կանոնակարգումները, մասնավորապես Տոկիոյի կանոնների 1-ին բաժնի 1.1. կետի համաձայն՝ այդ ստանդարտ կանոններում շարադրված է հիմնական սկզբունքների ամբողջություն, որի նպատակն ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառումը խթանելն է, ինչպես նաև բանտարկության այլընտրանքների ենթարկվող անձանց վերաբերյալ նվազագույն երաշխիքներ սահմանելը: Կարևոր սկզբունքներ են նախատեսված նաև կանոնների 1.4-րդ և 1.5-րդ կետերում, որոնց համաձայն՝ կանոններն իրականացնելիս անդամ երկրները պետք է ձգտեն ապահովել պատշաճ հավասարակշռությունն անհատ իրավախախտների իրավունքների, տուժողների իրավունքների և հանրային անվտանգության և հանցավորության կանխարգելման կապակցությամբ հա-

սարակության մտահոգությունների միջև: Անդամ երկրները պետք է իրենց իրավական համակարգերում որպես այլընտրանք ձևավորեն ազատությունից զրկելու հետ չկապված այլ միջոցներ՝ դրանցով կրճատելով բանտարկության կիրառումը և բարելավելով քրեական արդարադատության քաղաքականությունները՝ հաշվի առնելով մարդու իրավունքները, սոցիալական արդարության պահանջները և իրավախախտի վերականգնման հետ կապված կարիքները:

Առաջին բաժնի 2.1. կետը սահմանում է, որ սույն կանոնների համապատասխան դրույթները պետք է կիրառվեն քրեական հետապնդման, դատաքննության կամ դատավճռի կատարման ենթակա բոլոր անձանց նկատմամբ քրեական արդարադատության իրականացման բոլոր փուլերում: Նույն բաժնի 2.3. կետի համաձայն, իրավախախտման բնույթի և ծանրության, իրավախախտի անձի և կենսագրության, ինչպես նաև հասարակության պաշտպանության նկատառումներից ելնելով, առավել ճկունություն ապահովելու և բանտարկության անհարկի կիրառումից խուսափելու նպատակով քրեական արդարադատության համակարգը պետք է ապահովի ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների առկայությունը՝ մինչդատական փուլից մինչև դատավճռի կայացումից հետո ընկած ժամանակահատվածը կիրառելու համար: Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների թիվը և տեսակները պետք է նշանակվեն այնպես, որպեսզի հետագայում պատժի կիրառումը հնարավոր լինի:

Նույն կանոնների 2-րդ բաժնի 5.1. կետի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում, և եթե դա սահմանված է իրավական համակարգով, դատախազությունը կամ քրեական գործերով զբաղվող այլ գերատեսչությունները պետք է իրավունք ունենան իրավախախտներին ազատելու պատասխանատվությունից, եթե գտնում են, որ հասարակության պաշտպանության, հանցավորության կանխարգելման, օրինապահ վարքագծի կամ տուժողների իրավունքների նկատմամբ հարգանքը խթանելու տեսակետից գործին ընթացք տալն անհրաժեշտ չէ: Պատասխանատվությունից ազատելու կամ վարույթը կարճելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով յուրաքանչյուր իրավական համակարգում պետք է մշակվեն չափանիշներ: Ոչ ծանր իրավախախտումների դեպքերում դատախազը կարող է ըստ անհրաժեշտության կիրառել

ազատությունից զրկելու հետ չկապված համապատասխան միջոցներ: Նույն կանոնների 3-րդ բաժնի 8-րդ կետը սահմանում է, որ դատական իշխանության մարմինը, իր տրամադրության տակ ունենալով ազատությունից զրկելու հետ չկապված բազմաթիվ միջոցներ, իր որոշումը կայացնելիս պետք է հաշվի առնի իրավախախտի՝ վերականգնման հետ կապված կարիքները, հասարակության պաշտպանությունը և տուժողի շահերը, վերջինիս հետ հարկավոր է խորհրդակցել բոլոր անհրաժեշտ դեպքերում:

Այլընտրանքային միջոցների մասով՝ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 1997 թ. հուլիսի 21-ի թիվ 1997/30 բանաձևով առաջարկված «Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղեցույցների» 15-րդ կետը սահմանում է. «Անհրաժեշտ է գործող ընթացակարգերի վերանայում ձեռնարկել, իսկ հնարավորության դեպքում՝ մշակել գործերի լուծման արտադատական կամ քրեական արդարադատության դասական համակարգերից տարբերվող այլընտրանքային այլ նախաձեռնություններ՝ քրեական հանցանք կատարած երիտասարդ անձանց քրեական արդարադատության համակարգեր ուղղորդելուց խուսափելու համար: … Համապատասխան դեպքերում պետք է գործի դրվեն երեխաներին առնչվող վեճերի լուծման ոչ պաշտոնական եղանակներ՝ ներառյալ մեդիացիան և վերականգնողական արդարադատության գործընթացները, հատկապես այն դեպքերում, երբ տուժողները ևս ներգրավված են: … Պետություններըը պետք է ապահովեն այլընտրանքային միջոցների համապատասխանությունը Կոնվենցիային (Երեխաների իրավունքների մասին), անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի սահմանած ստանդարտներին և նորմերին, ինչպես նաև հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտի այլ գործող ստանդարտներին ու նորմերին, ինչպիսիք են ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոնները)՝ առանձնակի ուշադրություն դարձնելով նման միջոցների կիրառման պատշաճ ընթացակարգերի, և նվազագույն միջամտության սկզբունքի պահպանումը»:

Միջազգային իրավական ակտերի պահանջները պայմանականորեն կարելի է դասակարգել երկու հիմնական մեծ խմբի՝ առաջինը՝

ներպետական իմաստով քրեաիրավական հարցերին վերաբերող չափանիշներն են, մասնավորապես քրեական պատասխանատվությանը և պատժին այլընտրանքային միջոցներ ունենալը և առավելապես այդ միջոցներին դիմելը, այդ թվում՝ դատավճռի կատարման փուլում, երկրորդը՝ դատավարական հարցերին վերաբերող չափանիշներն են, որոնք ներառում են վարույթի պարզեցման, արագության, քրեական վարույթի ցանկացած փուլում անչափահասների վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինների հայեցողական լիազորությունների նախատեսման, արտադատական կարգով անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ հարցերի լուծման և այլ պահանջները։ Մեր նպատակն է հիմնականում անչափահասների արդարադատության վերաբերյալ միջազգային չափանիշների դատավարական կողմին վերաբերող որոշ հարցերի քննարկումը։

Անդրադառնալով ՀՀ ներպետական օրենսդրությունը վերոնշյալ միջազգային չափանիշներին համապատասխանելու հարցին՝ նկատենք, որ եթե անչափահաս հանցանք կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության և պատժին այլընտրանքային միջոցներով ներգործելու առումով գործող քրեական օրենսգիրքը ոչ ամբողջությամբ, այդուհանդերձ համապատասխանում է միջազգային չափանիշներին, քանի որ նախատեսում է մի քանի ներգործության միջոցներ, որոնք ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ և 93-րդ հոդվածներում, ապա նույնը չի կարելի ասել դրանց կիրառման դատավարական կարգի մասին։ Գործող քրեական դատավարության օրենսգրքում ընդամենը սահմանված է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ (հոդված 443-րդ)։ Այսինքն՝ գործող քրեական դատավարության օրենսգրքում խոսվում է միայն դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ պատժից ազատելու մասին՝ բաց թողնելով բժշկական-դաստիարակչական և ուսումնադաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ պատժից ազատելու հարցերը, ընդ որում, գործող օրենսգիրքը չի անդրադառնում ինչպես քրեական պատասխանատվությունից ազատելու հար-

ցի լուծմանը, այնպես էլ դատավարության տարբեր փուլերում իրավասու մարմինների հայեցողական լիազորության վերաբերյալ հարցերին. հանգամանք, որը ցույց է տալիս, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը ոչ միայն հակասում է միջազգային չափանիշներին, այլև համերաշխության մեջ չի գտնվում նաև գործող քրեական օրենսգրքի դրույթների հետ՝ տարբերակված մոտեցում չնախատեսելով քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու դեպքերում:

Քննարկվող հարցերի տեսանկյունից Նախագիծն էական փոփոխությունների է ենթարկվել: Միջազգային վերոգրյալ չափանիշներին համապատասխան Նախագիծը նախատեսում է մի շարք սկզբունքային լուծումներ՝ անչափահասների վերաբերյալ վարույթի ինչպես արագության, այնպես էլ նրանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ հարցերը արտադատական կարգով լուծելու, ինչպես նաև իրավասու մարմինների հայեցողական լիազորության և այլ հարցերի հետ կապված, որոնց շրջանակներում փորձ է արվել երաշխավորելու նաև իրավախախտ անչափահասի և տուժողի շահերի պաշտպանությունը: Մեր քննարկման թեմայի տեսանկյունից մասնավորապես կարևոր են Նախագծում սահմանված քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու դատավարական կարգին վերաբերող հարցերը: Դրանք են՝

1) մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելով:

Նախագծի 423-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին անգամ հանցանք կատարած անչափահաս մեղադրյալի ուղղումը հնարավոր է առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, ապա հսկող դատախազը քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին»:

Այս նորմից երևում է, որ միջազգային չափանիշներին համապատասխան դատախազին հնարավորություն է տրված նախաքննության փուլում գնահատելու անչափահասի ուղղված լինելու հանգամանքը և դադարեցնելու քրեական հետապնդումը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու նպատակով: Ճիշտ է, դատախազին հնարավորություն չի տրված անձամբ կիրառելու դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցը, սակայն միայն այդ նպատակով քրեական հետապնդումը դադարեցնելու և դատարան միջնորդություն ներկայացնելու հնարավորությունն արդեն իսկ սկզբունքային առաջադիմական մոտեցում է: Թեև պետք է նկատել, որ այստեղ խնդիրը միայն դատավարական չէ, այլև քրեաիրավական է, քանի որ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածից երևում է, որ քրեական պատասխանատվությունից ազատելը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառմամբ դատարանի բացառիկ լիազորությունն է: Ինչևէ, կարևորն այն է, որ արագացված ընթացակարգ է նախատեսված, ինչը միայն դրական մոտեցում է: Ընդ որում, նախատեսված են նաև անչափահասի իրավունքների լրացուցիչ երաշխիքներ քրեական հետապնդումը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու նպատակով դադարեցնելու դեմ՝ անչափահաս մեղադրյալի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից առարկելու և այդ գործընթացի նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելու ձևով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Նախագծում սահմանված է դատախազի միջնորդության քննության դատավարական արագացված կարգ, քան ընդհանուր հիմունքներով դատաքննության կարգն է: Մասնավորապես Նախագծի 423-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատախազի միջնորդությունը և վարույթի նյութերը դատարանը պետք է քննարկի Նախագծի 294-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով, որը վերաբերում է խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթի իրականացման կարգին, որը, ի տարբերություն նախագծով նախատեսված ընդհանուր հիմունքներով դատական վարույթների, էական պարզեցված վարույթ է, քանի որ չի անցնում նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների փուլեր:

2) Մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելը առանց որևէ ներգործության միջոց կիրառելու:

Նախագծի 423-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հսկող դատախազն իրավասու է անչափահաս մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել առանց դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն հարուցելու, ինչպես նաև նրա նկատմամբ չհարուցել քրեական հետապնդում, եթե առկա են սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները:

Այսպիսով՝ մինչդատական վարույթում քրեական պատասխանատվությունից ազատելու երկրորդ տարբերակն առանց դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդություն հարուցելու իրականացվում է դատախազի հայեցողական քրեական հետապնդման լիազորության շրջանակներում, ընդ որում, այս դեպքում դատախազը միանձնյա է որոշում անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը, եթե իհարկե առկա են հայեցողական քրեական հետապնդման լիազորության կիրառման համապատասխան պայմանները: Նախագծի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե հսկող դատախազը, հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթը, վտանգավորության աստիճանը, առաջացրած հետևանքները, հանցանք կատարած անձի հատկանիշները, գտնում է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը նպատակահարմար չէ, քանի որ սոցիալական արդարության վերականգնման, այդ անձի ուղղման և հանցագործությունների կանխման համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը բացակայում է, ապա իրավասու է չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել քրեական հետապնդումը հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում՝ 1) անձն առաջին անգամ կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք, 2) հանցագործությամբ պատճառված վնասի առկայության դեպքում անձը հատուցել կամ այլ կերպ հարթել է այն, 3) անձն աջակցել է հանցագործության հանգամանքների բացահայտմանը:

Գործող օրենսգիրքը նույնպես դատախազին հնարավորություն է տալիս հայեցողական քրեական հետապնդման լիազորության շրջանակներում անձին ազատելու քրեական պատասխանատվությունից (37-րդ հոդված), այդ թվում՝ անչափահասին, սակայն Նախագծի համեմատ՝ դրա կիրառման շրջանակները խիստ սահմանափակ են: Դա հիմնականում թույլատրվում է ՀՀ քրեական օրենսգրքի

72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներում սահմանված հիմքերի և պայմանների առկայության դեպքում: Ավելին, կարևորագույն տարբերություններից մեկն այն է, որ Նախագիծը հատուկ սահմանում է անչափահասների մասով հայեցողական քրեական հետապնդման լիազորության կիրառումը՝ գործող քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածն ընդհանուր կանոն է սահմանում:

Դատախազի հայեցողական լիազորությունների սոցիալական նշանակությունը հանգում է ոչ թե քրեական օրենքով արգելված արարքը կատարած անձի մեղավորության կամ անմեղության հաստատմանը, այլ դրանց նպատակն է հանցանք կատարած անձի սոցիալական ռեաբիլիտացիան: Չկա որևէ կասկած ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դրական նշանակության մասին, ի վերջո, նպատակահարմար չէ անձին ենթարկել քրեական պատասխանատվության, եթե արդարադատության իրականացման առջև դրված նպատակները արդեն իսկ նվաճված են: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով քրեական հետապնդումը դադարեցնելու առանձնահատկությունները պայմանավորված են անչափահասների նկատմամբ քրեական դատավարության տարբերակիչ հատկանիշների, այդ անձանց հոգեբանական առանձնահատկությունների և նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների առկայությամբ:

3) Դատարանում քրեական հետապնդումը դադարեցնելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով:

Անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու հաջորդ տարբերակը նախատեսված է դատարանում՝ քրեական գործի ըստ էության քննելու փուլում: Այս հարցի կարգավորմանը մասնավորապես նվիրված է Նախագծի 425-րդ հոդվածը, որի համաձայն՝ «1. Եթե մեղադրական եզրակացությամբ կամ մեղադրական ակտով դատարան ուղարկված վարույթի արդյունքում պարզվում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատասխանատվության ենթարկվելու, ապա դատարանը որոշում է կայացնում անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված դաստիարակչա-

կան բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին։ 2. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի պահանջների կատարումն ապահովելու նպատակով որոշումն ուղարկվում է կողմերին, ինչպես նաև անչափահասի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին»։

Ինչպես տեսնում ենք վերոգրյալ նորմից, այն, ըստ էության, նույնանում է Նախագծի 423-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված կանոնակարգման հետ, հիմնական տարբերությունը դատավարական կարգի մեջ է։ Առաջին դեպքում՝ խոսքը մինչդատական վարույթում դատախազի կողմից այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և դատարան միջնորդություն հարուցելու մասին է, երկրորդ դեպքում՝ դատարանում սեփական նախաձեռնությամբ նման որոշում կայացնելու մասին է։ Այդուհանդերձ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման հիմքերը, պայմանները և նպատակները նույնական են։

4) Պատժից ազատելը՝ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելով։

Անչափահասների նկատմամբ պատժին այլընտրանքային միջոց կիրառելու դատավարական կարգը կանոնակարգված է Նախագծի 426-րդ և 427-րդ հոդվածներով։ Կարևոր է նկատել, որ 426-րդ հոդվածը նախատեսված է որպես ընդհանուր կարգով դատավճիռ կայացնելու նորմերին լրացնող նորմ, որի նպատակն է, ըստ էության, անչափահասի նկատմամբ դատավճիռ կայացնելիս նրան պատժից ազատելու կամ նրա նկատմամբ ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերի, ինչպես նաև հանցանքի կատարման պատճառների և դրան նպաստող պայմանների ու դրանց վերացմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու վրա հատուկ դատարանի ուշադրությունը սևեռելը։ Ի տարբերություն Նախագծի 426-րդ հոդվածի՝ 427-րդ հոդվածը սահմանում է. «Եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթի արդյունքում պարզվում է, որ այդ հանցանքը կատարած անչափահասը կարող է ուղղվել առանց պատիժ նշանակելու, ապա դատարանն իրավասու է դատավճիռ կայացնելիս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածի հիման վրա մեղադրյալին ազատել պատժից և

նրան տեղավորել ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում»:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Նախագիծը քննարկվող հարցերի տեսանկյունից մոտեցվել է միջազգային չափանիշներին: Այդուհանդերձ կարևոր է նաև նշել, որ մի շարք հարցերում այն ունի որոշակի հակասական և թերի լուծումներ:

Նախևառաջ անհրաժեշտ է նշել Նախագծի 423-րդ և 425-րդ հոդվածների հակասականության հանգամանքը: Երկու հոդվածում էլ խոսքը վերաբերում է անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու, ընդ որում, երկու դեպքում էլ կարգավորումն այնպիսին է, որ նման միջոց կիրառելու համար քրեական հետապնդումը դադարեցվում է: Սակայն նույն հարցի վերաբերյալ տրված միևնույն լուծումը սահմանված է տարբեր հոդվածներով, որի «պատճառը» դատավարության տարբեր փուլերն են՝ առաջինը վերաբերում է նախաքննությանը, երկրորդը՝ դատաքննությանը: Գտնում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ: Ավելին, 423-րդ հոդվածը վերնագրված է «Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելը», ինչը առաջին հայացքից տպավորություն է ստեղծում, որ նրանում համակարգված ձևով ներկայացված է անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ողջ ինստիտուտը, մինչդեռ այդ հոդվածի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ այդպես չէ: 423-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանում կարգավորված են քրեական հետապնդումը դադարեցնելու երկու մասնավոր դեպքեր, այն է՝ հայեցողական քրեական հետապնդման լիազորության շրջանակներում քրեական հետապնդումը դադարեցնելը և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը, այն էլ մինչդատական վարույթում: Բացի դրանից՝ անհասկանալի է նման վերտառությամբ հոդված առանձնացնելու տրամաբանությունը, երբ նույն հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը դատական քննության փուլում դրանում ներառված չէ: Գտնում ենք, որ նման վերտառությամբ հոդվածի նախատեսման տեսանկյունից առնվազն պետք է 425-րդ հոդվածի լուծումը ներառված լիներ դրանում՝ չհաշված, որ դրանում պետք է ամբողջությամբ կանոնակարգված լինեին քրեական հետապնդումը դադարեցնելու բոլոր հիմքերը, կամ գոնե պետք է հղում լիներ Նա-

խագծի 12-րդ հոդվածին։ Ընդ որում, որոշակի կանոններ պետք է լինեն քրեական հետապնդումը դադարեցնելու այլ հիմքերի հետ հիշյալ երկու հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու հարաբերակցության մասին, օրինակ՝ գործուն զղջալու, իրադրության փոփոխության, տուժողի հետ հաշտվելու և այլն։

Անհասկանալի է նաև այն մոտեցումը, որ հոդվածը վերնագրված է որպես քրեական հետապնդումը դադարեցնելը, սակայն դրանում կարգավորված է դատախազի միջնորդության հիման վրա դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վարույթի կարգը։ Ակնհայտ է, որ առկա է հոդվածի վերնագրի և բովանդակության հակասություն, ինչն անթույլատրելի է ոչ միայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից, այլև անտրամաբանական է՝ վերևում նշված պատճառներով։ Անհրաժեշտ է լուծել նաև այս հարցը[1]։

Դրական գնահատելով ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու դատավարական կարգի հստակեցման Նախագծի մոտեցումը, միաժամանակ նկատենք, որ այս նորմն ունի նաև իրավակարգավորման որոշակի թերություններ, քանի որ դրանում ամբողջությամբ հաշվի չեն առնվել ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի կարգավորումները։ Հիշյալ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափում է, ապա տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու **մարմնի միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար**։ Այսինքն՝ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահման-

[1] Այս առումով կարելի է ընդօրինակել ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի լուծումը, որը նախ՝ վերնագրված է «Քրեական հետապնդումը դադարեցնելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով», ինչից հստակ երևում է հոդվածի կողմից կարգավորվող հարցերի շրջանակը, երկրորդ՝ այն հստակ ընդգծում է անչափահասների վերաբերյալ գործերով առանձնահատուկ հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքը։

ված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը օժտված է որոշակի պայմանականությամբ, որով պայմանավորված՝ նաև օրենքը հնարավոր է համարում նորոգելու վարույթը։ Մինչդեռ Նախագծում բացակայում է անչափահասի կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում քրեական պատասխանատվությունից պայմանական ազատվելը վերացնելու միջնորդության քննարկման, դրա արդյունքում քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը լուծելու դատավարական կարգը։ Հետևաբար պարզ չէ, թե ինչպես պետք է վերացվի դատարանի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, որպեսզի հնարավոր լինի լուծել անձի նկատմամբ կիրառված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցը վերացնելու և հետագա վարույթի հարցերը։ Նույն խնդիրն առաջանում է նաև 423-րդ հոդվածում սահմանված կարգով քրեական հետապնդումը դադարեցնելիս։ Այս դեպքում ևս հաշվի չի առնվել ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը։

Բացի դրանից՝ որոշակի խնդիր է առաջանում նաև կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի հետ, քանի որ հիշյալ որոշումների վերացման և դրանով պայմանավորված՝ վարույթը շարունակելու մասին դրանում խոսք չկա։

Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է սահմանել հիշյալ հարցերի լուծման դատավարական կարգին վերաբերող կանոնակարգումները, մասնավորապես անհրաժեշտ է նախևառաջ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը սահմանող հոդվածում ամրագրել, որ կրկին դատվել չէ նաև նախագծի 423-րդ և 425-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումների վերացումը դատարանի կողմից՝ քրեական վարույթը նորոգելով։ Երկրորդ՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 5-րդ մասի լուծման օրինակով անհրաժեշտ է Նախագծում սահմանել, որ անչափահասի կողմից իր վրա դրված պարտականությունները պարբերաբար չկատարելու դեպքում համապատասխան մարմնի միջնորդության հիման վրա դատարանը վերացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշումը և քրեական գործի նյութերն ուղարկում է դատախա-

զին՝ քրեական գործով հետագա վարույթը շարունակելու համար, որն իրականացվում է ընդհանուր կարգով: Դատարանի կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը վերացնելու դեպքում վարույթը շարունակվում է ընդհանուր հիմունքներով:

Երրորդ՝ Նախագծի 187-րդ հոդվածում խոսվում է նախաքննության ավարտման 4 ձևերի մասին, դրանք են՝ մեղադրական եզրակացություն, մեղադրական ակտ, եզրափակիչ ակտ կամ վարույթը կարճելու մասին որոշում կազմելը: Ելնելով նրանից, որ Նախագծով թույլատրվում է նախաքննությունն ավարտել՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելով, կարող ենք եզրակացնել, որ նախագծով առկա է նախաքննությունն ավարտելու մեկ այլ ձև ևս՝ քրեական հետապնդումը դադարեցնելը և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ քրեական գործի նյութերը դատարան ուղարկելը: Հետևաբար անհրաժեշտ է նախագծում սահմանել նախաքննության ավարտման այս ձևը ևս:

ОСОБЕННОСТИ ПРЕКРАЩЕНИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ ПО ОТНОШЕНИЮ К НЕСОВЕРШЕННОЛЕТНЕМУ В РЕЗУЛЬТАТЕ ПРИМЕНЕНИЯ ПРИНУДИТЕЛЬНЫХ МЕР ВОСПИТАТЕЛЬНОГО ИЛИ КАРАТЕЛЬНОГО ВОЗДЕИСТВИЯ В СООТВЕТСТВИИ С ПРОЕКТОМ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

(сравнительный анализ Уголовно-процессуального кодекса РА, проекта нового уголовно-процессуального кодекса РА и международных правовых актов)

Сергей Марабян

Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, кандидат юридических наук

Автор рассматривает вопросы применения принудительных мер воспитательного воздействия или наказания к несовершеннолетним

и, соответственно, прекращения уголовного преследования, которые регулируются Уголовно-процессуальным кодексом РА, и проводится сравнительный анализ с положениями проекта нового Уголовно-процессуального Кодекса и с международно-правовыми актами по этим вопросам. В результате автор приходит к выводу, что действующее уголовное законодательство не только не соответствует международным стандартам, но и противоречит положениям Уголовного кодекса РА. Автор также обсуждает регулирования проекта нового Уголовно-процессуального кодекса, сравнивает их с требованиями международно-правовых актов и, кроме принятия положительных аспектов, поднимает вопросы, которые могут возникнуть в результате применения нового законодательства, а также предлагает внести в них изменения.

THE PECULIARITIES OF TERMINATION OF THE CRIMINAL PROSECUTION AGAINST JUVENILE WHEN APPLYING DISCIPLINARY OR PUNITIVE COERCIVE MEASURES AGAINST A MINOR IN ACCORDANCE WITH THE DRAFT NEW CODE OF CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA (COMPARATIVE ANALYSIS OF THE RA CRIMINAL PROCEDURE CODE, THE DRAFT NEW CODE OF CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA, INTERNATIONAL LEGAL ACTS)

Sergey Marabyan
Assistant at the Chair of Criminal Procedure and Criminalistics, Candidate of Legal Sciences

The author of the article focuses on the issues of applying disciplinary coercive measures to a juvenile and, pursuant to that, the termination of criminal prosecution, which are regulated by the current Criminal Procedure Code of the Republic of Armenia, and makes a comparison with the regulations of the Draft New Code of Criminal Procedure and the international legal acts. As a result, the author concludes that the current criminal-procedural law neither comply with international standards, nor to the provisions of the Criminal Code of the

Republic of Armenia. The author also discusses the draft regulations, compares them with the requirements of international legal acts, and apart from the positive aspects, reveals the issues that may arise in the result of the application of the new legislation and suggests amendments to them.

Բանալի բառեր – անչափահաս, քրեական հետապնդում, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, պատժից ազատել, քրեական պատասխանատվությունից ազատել, ուսումնադաստիարակչական հաստատություն, բժշկական-դաստիարակչական հաստատություն

Ключевые слова: несовершеннолетний, уголовное преследование, принудительные меры воспитательного воздействия, освобождение от наказания, освобождение от уголовной ответственности, учебное заведение, медико-образовательное учреждение

Key words: Juvenile, criminal prosecution, disciplinary coercive measures, exemption from punish, exemption from criminal liability, educational institution, medical-educational institution

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հրայր Ղուկասյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի ղեկավար,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Անահիտ Հարությունյան
ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս

Քրեական պաշտպանությունը՝ որպես փաստաբանության բաղադրատարր, բավական բարդ, բազմաբովանդակ, ստեղծագործական, իմացաբանական և ճանաչողական գործունեություն է: Եվ թերևս այդ է պատճառը, որ այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ պաշտպանի վարքագիծը տարբեր իրավիճակներում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման ձևերը, պաշտպանությունն իրականացնելու մեթոդներն ու միջոցները, թույլատրելի հնարքների կիրառումը, դուրս են օրենսդրության կարգավորման շրջանակներից: Նմանատիպ հարցերի կարգավորման համար պաշտպանը կիրառում է մի շարք այլ գիտությունների կողմից մշակված հանձնարարականները, որոնց շարքում կարևորվում է կրիմինալիստիկան, որն ըստ էության կոչված է աջակցելու հանցագործությունների բացահայտմանը:

Եվ չնայած գրականության մեջ արտահայտվել է կարծիք, համաձայն որի՝ կրիմինալիստիկայի կողմից մշակված հանձնարարականները չեն կարող հավասարապես կիրառելի լինել պաշտպանի գործունեությունում, այն պատճառաբանությամբ, որ կրիմինալիստիկան գիտություն է, որը կոչված է բացահայտելու հանցագործությունները, ուստի և այն պետք է զինի միայն մեղադրանքի կողմին[1],

[1] Տե՛ս Профессиональная деятельность адвоката как объект криминалистического исследования, под ред. **Л.А. Зашляпина,** Екатиринбург, 2002, էջ 156, **Варфоломеева Т.В.**, Криминалистика и профессиональная деятельность защитника, Киев, 1987, էջ 36, **Матричев С.П.**, Криминалистика, Москва, 1973, էջ 5:

այնուամենայնիվ, կարծում ենք, նշված կարծիքը բավական միակողմանի է և միանշանակ ենթակա քննադատման ներքոնշյալ հիմնավորումների լույսի ներքո:

Նախ՝ կրիմինալիստիկայի՝ որպես գիտության և ոչ մի բնորոշումից էլ չի բխում, որ այն գիտություն է, որը պետք է ծառայի կոնկրետ որոշակի սուբյեկտներին[1]: Ինչպես իրավացիորեն նշել է Օ. Յա. Բանը, կրիմինալիստիկական տակտիկայի կիրառման ոլորտն ապացուցողական գործընթացի կարգն ու պայմաններն են[2]: Հետևաբար այն տրամադրում է ապացուցողական տեղեկատվության հայտնաբերման, ամրապնդման, հավաքման, ուսումնասիրման և օգտագործման միջոցների և մեթոդների համակարգի ամբողջություն[3]:

Իսկ պաշտպանի մասնակցությունը քրեական դատավարությանն ինքնըստինքյան ենթադրում է ակտիվ գործունեություն հենց ապացուցման ոլորտում[4]: Այս ընթացքում քրեական հետապնդման մարմնի և պաշտպանի գործողությունները ձեռք են բերում փոխպայմանավորված բնույթ, և մեկը մյուսից կախվածության մեջ են դրվում: Հենվելով տարբեր աղբյուրներից ստացած տեղեկատվության, գործի նյութերում եղած փաստերի վրա՝ պաշտպանն առաջ է քաշում քննվող իրադրության վերաբերյալ իր վարկածը: Համաձայն չլինելով մեղադրանքի հետ՝ պաշտպանը բերում է համապատասխան հակափաստարկներ, ապացուցում է իր պաշտպանյալի անմեղությունը կամ նվազ մեղավորությունը: Այսքանը միանգամայն բավարար է փաստելու համար, որ պաշտպանի գործունեությունը ևս ապացուցողական ուղղվածության է:

Կրիմինալիստիկական տակտիկայի հարցերը զինում են մե-

---

[1] Կրիմինալիստիկայի՝ որպես գիտության հասկացությունը տե՛ս, օրինակ, **Яблоков Н.П.,** Криминалистика, Москва 2006, էջ 14, **Аверьянова Т.В., Белкин Р.С. и др**. Криминалистика, Москва, 2007, էջ 41:

[2] Տե՛ս **Баев О.Я.**, Содержание и формы криминалистической тактики, Воронеж, 1975, էջ 9:

[3] Տե՛ս **Аверьянова Т.В., Белкин Р.С. и др**. Криминалистика, Москва, 2007, էջ 493:

[4] Տե՛ս **Кульберг Я.**, Адвокат как субъект доказывания в уголовном процессе // Советскав юстиция, № 2, 1966, էջեր 16-17:

ղադրանքի և պաշտպանության կողմերին «ինչպես անել» հարցի բազմաթիվ պատասխաններով. այդ է պատճառը, որ Ա. Ռ. Ռատինովը հետևյալ կերպ է արտահայտվել. «*Ողջ քրեական դատավարությունը մի յուրահատուկ դաշտ է, որն ամբողջությամբ հագեցած և լցված է տակտիկական հնարքներով. չկա մի սուբյեկտ, ով իր գործունեության առանձնահատկությունների շրջանակներում չկիրառի տակտիկական հնարքներ: Ընդ որում, դրանց կիրառման համար որևէ թույլտվության անհրաժեշտություն չկա, դրանց կիրառումը կրում է օբյեկտիվ բնույթ*»[1]:

«*Տակտիկայի կիրառման իրավասությամբ օժտել միայն պետական մարմիններին հնարավոր չէ, քանզի նախ և առաջ վերջինիս բազում տարատեսակներից ի հայտ է եկել պատերազմական գործողությունների տակտիկան, իսկ քրեական դատավարությունը յուրօրինակ պատերազմական ճատրակ է, որտեղ երկու կողմն էլ հավասարապես իրավասու են կիրառել տակտիկական հնարանքներ. սա ապահովում է կողմերի հավասար հնարավորությունները, իսկ մրցակցության էությունը ձևական կաղապարներ չի ստանում*», - իրենց հերթին մեջբերում էին ամերիկյան իրավաբանները դեռևս 20-րդ դարի սկզբներին[2]:

Փաստորեն պաշտպանի գործունեությունում կրիմինալիստիկական տակտիկայի[3] դրույթների կիրառումը մեծապես կապված է

---

[1] Տե՛ս **Ратинов А.Р.**, Теория рефлексивных игр в проложении к следственной практике // Правовая кибернетика М, Наука, 1970. с. 185-197: Մեջբերումն ըստ **Зорин Г.А.**, Использование криминалистических игр, инверций, эффектов и тактических ловушек при расследовании, обжинении и защите по уголовным делам, Москва, 2002, էջ 11:

[2] Տե՛ս **Hirschl A.J.**, Trial Tactics, Chikago, 1906, էջ 12:

[3] Կրիմինալիստիկա գիտության մեջ տակտիկա հասկացությունը ներկայիս ըմբռնմամբ առաջին անգամ օգտագործել է *Ա. Վայնգարտը* 1910 թվականին իր «*Քրեական տակտիկա*» գրքում: Նրա նպատակն էր կրիմինալիստին տալ այն, ինչ զինվորականին տալիս է ռազմավարությունը (տե՛ս **Баев О.Я.,** Тактика преследования и профессиональной защиты от него, Москва, 2008, էջ 14):

այդ գործունեության առանձնահատկությունների հետ[1]:

Պետք է նկատել, որ պաշտպանը հենց այնպես ուղղակի չի կարող կիրառել կրիմինալիստիկայի կողմից մշակված հանձնարարականները, քանի որ դրանք հիմնականում մշակվել են քննիչի պրոֆեսիոնալ գործունեության համար: Ուստի դրանք պետք է համապատասխան ձևափոխման ենթարկվեն և հարմարեցվեն պաշտպանի դատավարական գործունեության առանձնահատկություններին: Այդ ձևափոխությունների արդյունքում էլ ձևավորվում է պաշտպանության տակտիկան՝ որպես կրիմինալիստիկական տակտիկայի բաղադրամաս: Պաշտպանության տակտիկան պաշտպանի՝ որպես պաշտպանության կողմի արհեստավարժ ներկայացուցչի գործունեության անհրաժեշտ տարր է, որն ունի իր սեփական բովանդակությունը, ինչը մեծապես պայմանավորված է գործի փաստական և իրավական հանգամանքներով:

Հատկանշական է, որ պաշտպանի կողմից տակտիկական հնարքներ կիրառելու համար հիմք է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 68-րդ հոդվածը, համաձայն որի՝ պաշտպանը կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն է ցույց տալիս օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Արդյունավետ պաշտպանության տեսանկյունից պաշտպանի համար առանցքային նշանակություն ունի տակտիկական հնարքների կիրառման թույլատրելիության հարցի որոշումը: Չնայած դրանք պաշտպանին անհրաժեշտ են իր առջև դրված խնդիրների լուծման

---

[1] Հավելենք նաև, որ Օ. Յա. Բաևն առանձնացրել է «*փաստաբանագիտություն*» անվամբ մի եզրույթ, որի հիմնական առաքելությունն է մշակել փաստաբանական տակտիկական և ստրատեգիական ուղղությունները (տե՛ս **Баев О. Я.,** Криминалистическая адвокатология как подсистема науки криминалистики // Професиональная деятельность адвоката как объект криминалистических исследований, Екатиринбург, 2002: Մեջբերումն ըստ **Милова И. Е.,** Основы тактики адвокатского параллельного расследования // Вопросы экономики и права, № 1, 2010, էջ 15):

Սակայն զուգահեռաբար առկա է նաև տեսակետ, համաձայն որի՝ պաշտպանության տակտիկան գիտության ճյուղի ինքնուրույն ուղղություն չէ և երբևէ չի էլ լինելու (տե՛ս **Бородин С. В.**, К вопросу о методах и методиках в профессиональной защите по уголовным делам // Воронежский адвокат № 5 (34), 2006, էջ 12):

համար, սակայն չպետք է մոռանալ, որ ամեն դեպքում պաշտպանը չպետք է կիրառի օրենքին և բարոյականությանը հակասող միջոցներ և մեթոդներ, ոտնահարի այլ մասնակիցների իրավունքներն ու իրավաչափ շահերը, խախտի առանձին քննչական կամ այլ դատավարական գործողությունների իրականացման կարգը, չարաշահի իր լիազորություններն ու խոչընդոտի վարույթի բնականոն ընթացքը[1]:

Իրավաբանի պարտականությունն է պաշտպանություն իրականացնելիս կիրառել այնպիսի տակտիկական հնարքներ, որոնք օրինական են, ազնիվ և հարգալից: Սա ուղղակիորեն բխում է փաստաբանի՝ բարեխիղճ լինելու պարտականությունից: Փաստաբանի՝ դատարանի առջև ունեցած պարտականությունների համատեքստում պաշտպաններն առաջին հերթին պատասխանատու են դատարանին մոլորեցնող կամ խաբող տակտիկական հնարքներ չկիրառելու համար, ինչը հավասարապես վերաբերում է գործի թե՛ փաստական հանգամանքներին, թե՛ արարքի իրավաբանական որակմանը[2]:

Ուստի միանշանակ է, որ պաշտպանության ընթացքում կիրառվող տակտիկական հնարքները ոչ միայն պետք է լինեն օրինականության սահմաններում, այլև դրանք պետք է համահունչ լինեն *փաստաբանական էթիկայի* կողմից սահմանված պահանջներին:

Առաջին հայացքից բավական պարզ թվացող այս կանոնն իրականում փաստաբանական պրակտիկայում բավական խնդրահարույց և միանշանակ լուծում չունեցող դիլեմաներ է առաջադրում, որոնց ընթացքում ոչ միայն անխուսափելի կարող են լինել էթիկայի, այլև օրենսդրական որևէ պահանջի խախտումները:

Ստորև փորձ ենք արել առանձնացնել, վերլուծել դրանց համար փաստաբանական պրակտիկայում հանդիպող հատկապես խնդրահարույց իրավիճակները:

---

[1] Այս առումով դեռևս 15-րդ դարում Իսպանիայում սահմանվել էր, որ պաշտպանը պետք է իր պաշտպանյալին պաշտպանի միայն օրինական միջոցներով, հակառակ դեպքում նրան խիստ պատիժ էր սպասվում (տե՛ս **Пикар Эдм**., Об адвокате (парадокс), Москва, 2000, էջ 37):

[2] Տե՛ս **R. Bell and C. Abela**, A Lawyer's Duty to the Court.
http://www.advocates.ca/assets/files/pdf/bibliography/Duty_to_Court.pdf :

1. Առաջադրված հարցադրման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն խնդիրը՝ արդյոք փաստաբանական էթիկայի մեջ տեղավորվում են այն իրավիճակները, երբ պաշտպանը պաշտպանությունը կառուցում է վարույթն իրականացնող մարմնի սխալների վրա: Այս հարցի շուրջ գրականության մեջ կա երկու իրարամերժ մոտեցում. դատավարագետ Մ. Ս. Ստրոգովիչի համոզմամբ՝ պաշտպանին թույլատրվում է մասնակցել մինչդատական վարույթին հենց այն բանի համար, որ որոշակի սխալներ հայտնաբերելիս տեղյակ պահի քննիչին՝ նրան ընձեռելով դրանք ուղղելու հնարավորություն[1]: Այս տեսակետի հակառակորդները պարզապես նշում են. «Եթե պաշտպանը հայտնաբերել է դատավարական սխալներ, անհրաժեշտություն չկա անմիջապես միջնորդություն ներկայացնել դրանք վերացնելու համար, քանի որ դրանք քննիչի սխալներն են, և նա օբյեկտիվ հնարավորություն ուներ դրանք չանելու»[2]:

Քննարկվող խնդրի առնչությամբ եվրոպական դատավարագետները գտնում են, որ եթե հակառակորդ կողմի թույլ տված սխալներն այդքան էլ էական չեն և չեն ազդում գործի ելքի վրա, ապա պարզապես չարժե դրանք բարձրաձայնել և ավելորդ խախտել էթիկայի պահանջները: Պաշտպանը դատավորի վստահությունը կշահի միայն այն դեպքում, եթե համբերատար գտնվի իր վստահորդի համար նվազ վտանգ ներկայացնող սխալների և բացթողումների նկատմամբ[3]: Իսկ ԱՄՆ Գերագույն դատարանն իր մեկնաբանություններում պարզապես նշել է, որ անձը չպետք է դատապարտվի ոստիկանության աշխատակիցների կոպիտ և չմտածված սխալների հիման վրա[4]:

Մեր դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ մի փոքր այլ է:

---

[1] Տե՛ս **Строгович М.С.,** Проблемы судебной этики, Москва, 1974, էջ 249:

[2] Տե՛ս **Чашин А.Н.**, Стратегия и тактика адвокатской деятельности, Москва, 2008, էջ 188:

[3] Տե՛ս **Roger J. Vanberg G.**, Ressurecting Lochner of unprincipled judicial activism // The journal of law, economics and organization, № 2, 2007, էջ 7:

[4] Տե՛ս **Mayers L.,** The American legal system, New York, London, 1964, էջ 42-43, **Файрстоун Т**., Сравнительный анализ США и РФ по недопустимости показаниий подозреваемого/обвиняемого, полученных с нарушением закона // Адвокатская палата, № 2, 2009, էջ 6:

Չենք կարծում, որ որևէ խնդիր կառաջանա, եթե պաշտպանը լինի առավել զգոն և այդ հնարավորությունները չօգտագործի վարույթն իրականացնող մարմնին վարկաբեկելու կամ քննության համար արհեստական խոչընդոտներ ստեղծելու նպատակով: Ինչպես նշում է Պ. Սերգեիչը, պետք է սովորել չանել այնպիսի սխալներ, որոնցից հնարավոր է խուսափել[1]:

Ուստի ելքը տարբերակված մոտեցման մեջ է: Եթե սխալների հետևանքով խախտվել են պաշտպանյալի իրավունքները կամ իրավաչափ շահերը (օրինակ՝ ձերբակալված անձին արգելանքի տակ են պահել 72 ժամից ավելի), ապա անիմաստ է այդպիսի սխալները պահել մինչև դատական վարույթ, հատկապես եթե դրանց ներկայացումը դատարանին պաշտպանության կողմին տակտիկական որևէ առավելություն չի տալու: Սակայն, եթե թույլ տրված սխալների հետագա վիճարկումը դատարանում կարող է փոխել ապացույցների հարաբերակցությունը (օրինակ՝ օրենքի խախտումով կատարված քննչական գործողության արձանագրության թույլատրելիությունը վիճարկելը), ապա նման մոտեցումը՝ որպես տակտիկական հնարքի կիրառում, մեր խորին համոզմամբ, ամբողջապես տեղավորվում է փաստաբանական էթիկայի մեջ:

Վիճարկվող հարցի տեսանկյունից արդիական է նաև քննարկման առարկա դարձնել այն դեպքերը, երբ պաշտպաններն իրենց վստահորդի պաշտպանությունը փորձում են կառուցել վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս խոշտանգման կամ այլ դաժան վերաբերմունքի ենթարկելու վարկածի վրա: Մասնավորապես պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջին տարիներին մեղադրյալի կողմից խոշտանգման դեպքերի հաղորդման աճ է նկատվում հատկապես այն պահից սկսած, երբ վարույթին ներգրավվում է նրա պաշտպանը: Բնական է, որ պաշտպանի նման վարքագիծը, եթե իրականում բացակայում է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքը, ընդունելի չէ փաստաբանական էթիկայի տեսանկյունից:

2. Անվիճելի է, որ պաշտպանի կողմից պաշտպանությունը սուտ կամ կեղծված ապացույցների վրա կառուցելը որևէ արդարացում ունենալ չի կարող: Սակայն այլ իրադրություն է, երբ պաշտ-

[1] Տե՛ս **Сергеич П.**, Искусство речи на суде. Тула, 1999, էջ 9:

պանն ուղղակի կասկածում է ներկայացվող ապացույցների սուտ կամ ոչ հավաստի լինելու մեջ: Թեև այս հարցը մասնագիտական տարբեր քննարկումների առարկա է եղել, սակայն դրա շուրջ միասնական մոտեցում այդպես էլ չի ձևավորվել:

Այսպես՝ Ն. Պ. Կանի կարծիքով՝ «*եթե պաշտպանը պաշտպանությունն իրականացնելիս հիմնվի կասկածելի փաստարկների և ապացույցների վրա, ապա անմիջապես կվերածվի արդարադատության դեմ պայքարողի, ինչն անհարիր է նրա կոչմանը*»[1]: Հակառակ դիրքորոշումն ունի Ն. Ն. Պոլյանսկին. «*Պաշտպանը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է կասկածելի փաստարկներ ներկայացնել. դա բխում է նրա առաքելությունից*»[2]: Հատկանշական է, որ այս հարցին միանշանակ պատասխան չի տալիս նաև արտասահմանյան երկրների փորձը:

Այսպես՝ *Եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանների կանոնների ընդհանուր* կանոնագրքի 4.4-րդ կանոնի համաձայն՝ «*պաշտպանն իրավունք չունի դատարանին հայտնել ոչ հավաստի և կասկածելի կամ սուտ տեղեկություններ*»: Իսկ *ամերիկյան փաստաբանների մասնագիտական էթիկայի տիպային* կանոնների 3.3-րդ կանոնի համաձայն՝ «*պաշտպանը դատարանին չպետք է ներկայացնի այնպիսի ապացույցներ, որոնց կեղծված լինելու մասին ինքը հաստատապես գիտի*»: Այս կանոնագրքում, ի տարբերություն նախորդի, կասկածելի ապացույցների մասին ոչինչ չի ասվում:

Այս հարցի վերաբերյալ մեր դիրքորոշումը հետևյալն է. պաշտպանը քրեական վարույթին մասնակցում է իր պաշտպանյալի օգտին խոսող բոլոր ապացույցները վեր հանելու համար, իսկ այն ապացույցները, որոնց ճշմարիտ լինելը կասկած է հարուցում, բնականաբար, կարող են հավասարապես և՛ ճիշտ լինել, և՛ սուտ: Խնդի-

---

[1] Տե՛ս **Кан Н.П**. Некоторые вопросы адвокатской этики. §Вопросы зашиты по уголовним делам¦: Մեջբերումը՝ ըստ **Строгович М.С**, Проблемы судебной этики, Москва, 1974, էջ 263:

[2] Տե՛ս **Полянский Н.Н.**, Правда и ложь в уголовной защите. Москва, 1927, էջ 47, համակարծիք են նաև **Баев М.О.,** Этичность как критерий допустимости тактических средств профессиональной защиты // Воронежский адвокат № 5, 2004, էջ 6, **Воробьев А.В.,** Можно ли доверять адвокату // Вопросы адвокатуры № 35, 2004, էջ 8, **Бойков А.Д.,** Основы профессиональной этики адвоката, Москва, 2007, էջ 27:

րը հենց այն է, որ ի տարբերություն դատավարությանը մասնակցող պետական մարմինների, պաշտպանը հնարավորություն չունի իր վարկածների ճիշտ կամ սխալ լինելը ստուգելու, քանի դեռ ՀՀ օրենսդրությունը նրան քննություն կատարելու հնարավորություն չի ընձեռել: Ի վերջո, պաշտպանին կասկածելի ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից զրկելն ինքնին սահմանափակում է անմեղության կանխավարկածի կարևորագույն բաղադրիչներից մեկի կիրառումը, ըստ որի՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Ուստի միանգամայն արդարացված և թույլատրելի է, որ մեղադրյալի պաշտպանությունը կառուցվի նաև կասկած հարուցող փաստարկների ու ապացույցների վրա:

3. Ինչպես արդեն նշվեց, միանշանակ է, որ պաշտպանի կողմից պաշտպանությունը սուտ կամ կեղծված ապացույցների վրա կառուցելը որևէ արդարացում ունենալ չի կարող: Սակայն միանշանակ թվացող այս կանոնն իր բարդություններն ունի բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանին չի հաջողվում իր պաշտպանյալին հետ պահել պաշտպանությունն անօրինական միջոցներով չիրականացնելու մտադրությունից:

Այսպես՝ փաստաբանական պրակտիկային խորթ չեն այնպիսի իրավիճակները, երբ պաշտպանյալը պնդում է, որ իր պաշտպանության համար որպես ապացույց ներկայացվեն կեղծված փաստաթղթեր կամ ակնհայտ սուտ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, պաշտոնատար անձանց կամ վկաներին կաշառք առաջարկվի կամ կիրառվեն այլ անօրինական միջոցներ:

Այդուհանդերձ, թեև պաշտպանության ընթացքում պաշտպանները բավական հաճախ կարող են հանդիպել անօրինական միջոցներով գործելու վստահորդի հանձնարարականներին[1], կարծում ենք, այս պահանջին դիմակայելու հնարավորություններն այդքան էլ սահմանափակ չեն: Նախ՝ հաշվի առնելով, որ պաշտպանի համար

[1] Լատինական Ամերիկայի փաստաբանների էթիկայի միասնական կանոնագրքի 31-րդ հոդվածն ուղղակի հնարավորություն է նախատեսում պաշտպանի համար հրաժարվել պաշտպանությունից, եթե իրեն չի հաջողվում իր պաշտպանյալին համոզել չկիրառել անօրինական և օրենքին հակասող միջոցներ (տե՛ս Código de ética, Colegio de abogados y procuradores de Mendoza):

միևնույն չէ վստահորդի վարքագիծը, որը, շատ հաճախ կոնֆլիկտներ առաջացնելուց բացի, կարող է խոչընդոտել պաշտպանության արդյունավետ իրականացմանը, առաջինը, ինչ պետք է փորձի պաշտպանը, իր մասնագիտական, հոգեբանական հմտությունների օգնությամբ պաշտպանյալի մոտ ճիշտ դիրքորոշում ձևավորելն է: Դեպքերի մեծամասնությամբ չենք կարծում, որ դա դժվարություն ներկայացնի, քանի որ եթե պրոֆեսիոնալ պաշտպանը ոչ պրոֆեսիոնալ վստահորդին առաջարկի ընդհանուր նպատակին հասնելու ռացիոնալ այլընտրանք, պաշտպանյալը պետք է որ համաձայնի վերջինիս հետ:

Սակայն եթե արդյունքում պաշտպանը, այնուամենայնիվ, չկարողանա պաշտպանյալի մոտ ձևավորել «իրավահպատակ» դիրքորոշում, անհրաժեշտ է պաշտպանյալին բացատրել ընտրված միջոցների անօրինականության մասին, ինչպես նաև տեղեկացնել, որ ինքը՝ պաշտպանը, անկարող է ընտրել գործունեության նման ուղի: Եթե սրանից հետո էլ չի հաջողվում մտափոխել պաշտպանյալին, ապա պաշտպանը պետք է հայտարարի, որ առաջնորդվելու է սեփական դիրքորոշմամբ[1]: Հարկ է նշել, որ անգամ այս դեպքում գործող կարգավորումների պարագայում պաշտպանն իրավասու չէ հրաժարվել պաշտպանությունից, բայց միաժամանակ իրավունք չունի նաև առաջնորդվել պաշտպանյալի նախագծած ուղիով: Ուստի եթե այս պարագայում պաշտպանը հրաժարվի առաջարկված միջոցների օգտագործումից, չմասնակցի կեղծված կամ սուտ ապացույցների հետազոտմանը, ապա դա չպետք է համարվի պաշտպանությունից «քողարկված հրաժարում»:

Ռուսաստանի Դաշնության փաստաբանների վարքագծի կանոնագրքի 10-րդ հոդվածը սահմանում է. «*Փաստաբանական գործունեությունում օրենքն ու բարոյականությունը բարձր են վստահորդի կամքից: Վստահորդի ոչ մի ցանկություն, խնդրանք կամ պահանջ,*

[1] Գրականության մեջ առաջարկվում է տեսակետ, համաձայն որի՝ հակասությունների դեպքում պաշտպանի ուղղակի պարտքն է այդ մասին տեղյակ պահել դատարանին (տե՛ս **Стецовский Ю.И.,** Адвокатура и государство, Москва, 2007, էջ 190), ինչը, բնականաբար, անթույլատրելի է, քանի որ դատարանի մոտ անխուսափելիորեն կանխակալ դիրքորոշում կձևավորվի, ընդ որում ոչ հօգուտ մեղադրյալի:

որոնք ուղղված են օրենսդրական կամ վարքագծի կանոնների պահանջների խախտմանը, չեն կարող բավարարվել փաստաբանի կողմից»:

Ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանյալը համառորեն պնդում է իր պաշտպանությունն իրականացնելիս կիրառել անօրինական միջոցներ և մեթոդներ, պաշտպանի՝ առավելապես պասիվ պաշտպանություն իրականացնելն ամբողջապես արդարացված է էթիկայի պահանջների տեսանկյունից: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ պաշտպանության գործառույթն արդարադատությանն օժանդակելն է և ոչ թե դրա դեմ պայքարելը[1]:

Ավելին, գործող կարգավորումների պայմաններում պասիվ պաշտպանության հայեցակարգն արդարացված է այնքանով, որքանով պետք է ելակետ ընդունել այն, որ պաշտպանի՝ վարույթին մասնակցելու միակ առաքելությունը պաշտպանյալին արդարացնելը կամ նրա պատասխանատվությունը մեղմացնելը չէ: Հետևաբար սուտ կամ կեղծված ապացույցներ չներկայացնելու կամ դատարանում դրանց հետազոտմանը չմասնակցելու հետ միաժամանակ պաշտպանը պետք է հետևի ու թույլ չտա, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից իր պաշտպանյալի շահերի ու իրավունքների ոտնահարում տեղի ունենա, վերջինս խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային վերաբերմունքի ենթարկվի, իսկ ենթարկվելու դեպքում անմիջապես արձագանքի նման դեպքերին, վեր հանի դատավարության ընթացքում առկա խախտումները, բացթողումները և այլն: Թերևս միակ պայմանն այն է, որ իր՝ պասիվ պաշտպանություն իրականացնելու մտադրության մասին պաշտպանն անպայման նախապես հայտնի պաշտպանյալին:

Բարձրացված հարցի համատեքստում արժանահիշատակ է նաև Եվրոպական դատարանի՝ մեղադրյալի պաշտպանության իրա-

[1] Այս տեսանկյունից ուշագրավ է, որ *Փաստաբանների պրոֆեսիոնալ վարքագծի ԱՄՆ մոդելային* կանոնների 3.3-րդ կանոնը սահմանում է, որ եթե փաստաբանը տեղյակ է այն մասին, որ իր հաճախորդը նպատակ ունի սուտ ցուցմունք տալու կամ կեղծ ապացույց ներկայացնելու, ապա վերջինս պետք է ամեն կերպ փորձի համոզել իր պաշտպանյալին հետ կանգնել իր մտադրությունից: Եթե, այնուամենայնիվ, համոզման մեթոդն անարդյունավետ է, ապա պաշտպանն ինքը պետք է հրաժարվի այդ ապացույցը ներկայացնելուց:

վունքի սահմանների հարցի առնչությամբ դիրքորոշումը: Այսպես՝ *«Բրանդշտետերն ընդդեմ Ավստրիայի»* գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետը չի նախատեսում պաշտպանության նպատակով ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք[1]:

Նմանատիպ իրավիճակների լուծման այլ տարբերակ է առաջարկվել՝ հիմք ընդունելով Նախագծի արմատական փոփոխությունն առ քրեական գործերով պաշտպանի՝ արդեն իսկ ստանձնած պաշտպանությունից հրաժարվելու բացարձակ արգելքը: Մասնավորապես, եթե ի վերջո պաշտպանին այդպես էլ չհաջողվի համոզել իր պաշտպանյալին պաշտպանությունը չիրականացնել անօրինական միջոցներով ու մեթոդներով, ապա դա ստանձնած պաշտպանությունից հրաժարման հիմք է: Կարծում ենք՝ նման լուծումը կանխարգելիչ նշանակություն կունենա այնքանով, որքանով պաշտպանյալն այդուհետ կգիտակցի, որ ամեն անգամ պաշտպանին ստիպելով իր պաշտպանությունն իրականացնել անօրինական միջոցներով ու մեթոդներով՝ վտանգի տակ է դնում ոչ միայն իր՝ պաշտպան ունենալու սահմանադրական իրավունքը, այլև գործի քննության ողջամիտ ժամկետների սկզբունքը:

Սույն հիմնախնդրի շրջանակներում հարկ ենք համարում անդրադարձ կատարել մեղադրյալի ցուցմունքներ տալու հիմնախնդրին, հատկապես Նախագծի կարգավորման համատեքստում:

Այսպես՝ գործող օրենսդրությամբ մեղադրյալն իր պաշտպանությունն իրականացնելիս, որպես պաշտպանության միջոց, լռելուց բացի, իրավունք ունի նաև սուտ ցուցմունքներ տալու: Ընդ որում, մեղադրյալի սուտ ցուցմունքներ տալու իրավունքն ամենևին հակասության մեջ չէ Եվրոպական կոնվենցիայի և դրա առնչությամբ ձևավորված Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ[2]:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագիծն այս հարցի առնչությամբ որդեգրել է ամբողջովին նոր հայեցակարգային մոտեցում: Այսպես՝ Նախագծի 228-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանվում է, որ եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում,

---

[1] Տե՛ս *Brandstetter v. Austria* գործով 1991 թ. օգոստոսի 28-ի վճիռը, գանգատներ թիվ *11170/84, 12876/87, 13468/87*, կետեր 52-53:

[2] Տե՛ս Report on the Second Consultation Meeting on the Draft Criminal and Criminal Procedure Codes of Armenia, Yerevan, 15-16 April 2016, կետ 32:

ապա քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունքներ տալու պարտականության և նախազգուշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այսինքն՝ Նախազծով նախատեսվում է կանոն, ըստ որի՝ եթե մեղադրյալը կամավոր համաձայնում է հանդես գալ որպես վկա, ապա նրա նկատմամբ կիրառելի են վկայի համար սահմանված կանոնները:

Մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու քրեականացումն առավելապես հայտնի է Ամերիկայի Միացյալ Նահանգների և Միացյալ Թագավորության իրավական համակարգերում, որտեղ պաշտպանության իրավունքը չի ընկալվում որպես քրեական վարույթի ընթացքում ստելու իրավունք[1]: Այս դատավարական կանոն-

---

[1] Մասնագիտական շրջանում որոշակի տարակարծությունների տեղիք է տվել մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության հարցը: Այնուամենայնիվ, անգլոսաքսոնական երկրներում մեղադրյալը վաղուց արդեն սուտ ցուցմունք տալու հանցակազմի սուբյեկտ է:

Այսպես, օրինակ, Մեծ Բրիտանիայում գործում է «*Երդմնազանցության մասին*» *օրենք* (“Prejury Act”), որն ընդունվել է 1911 թ. և կարգավորում է սուտ վկայություն տալու հետ կապված առաջացող հնարավոր հարաբերությունները:

ԱՄՆ-ում Սահմանադրության ընդունումից առ այսօր ենթադրյալ հանցագործության մեջ մեղադրվող անձի համար ճիշտ ցուցմունք տալը եղել է պարտականություն: Ավելին, անկախ անձի կողմից կատարված հանցագործության փաստից, եթե վերջինս մինչդատական վարույթի կամ քրեական հետապնդման ընթացքում խոչընդոտել է արդարադատությանը՝ տալով սուտ ցուցմունքներ, ապա իր կողմից կատարված այս արարքի համար ևս քրեական պատասխանատվություն է սահմանվում՝ ընդհուպ ազատազրկում առավելագույնը 4 տարի ժամկետով:

Սրա հետ կապված՝ ԱՄՆ Գերագույն Դատարանը *«ԱՄՆ-ն ընդդեմ Դուննիգանի»* և *«ԱՄՆ-ն ընդդեմ Մակքինլեյի»* գործերում առավել հստակեցրել ու արձանագրել է, որ մեղադրյալը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե վերջինս խոչընդոտել է իր դատավարությանը՝ տալով սուտ ցուցմունքներ: Ընդ որում, Գերագույն դատարանն այս առումով որևէ տարբերակում չի դնում մինչդատական և դատական վարույթների մեջ: Այսպես՝ պաշտպանյալը կենթարկվի քրեական պատասխանատվության, եթե, նպատակ ունենալով խոչընդոտել արդարադատությանը, (F) կեղծ տեղեկություններ է հաղորդել դատարանին կամ մագիստրոսին, (G) կեղծ տեղեկություններ է հաղորդել քրեական հետապնդման մարմնին (*United States v. Dunnigan*, 507 U.S. 87, 98 (1993), *United States v. McKinley*, 732 F.3d 1291, 1297-298 (11th Cir.2013):

ները մեծապես ենթարկվել են երդվյալ ատենակալների պատմական մոդելի ազդեցությանը. չէ՞ որ երդվյալ ատենակալների ժյուրին պետք է պաշտպանված լինի սուտ ապացույցներից:

ՀՀ-ում մեղադրյալի սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության նախատեսումը նպատակ ունի երկրում բարձրացնել մեղադրյալի ցուցմունքների արժանահավատության աստիճանը:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ այս հայեցակարգը կարող է որոշակի դժվարություններ ի հայտ բերել պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման տեսանկյունից: Այս համատեքստում պետք է նշել, որ եվրոպական մայրցամաքային իրավական համակարգերի մեծ մասը նման դրույթ չի նախատեսում՝ նախընտրելով պաշտպանության իրավունքի առավել լայն ընկալումը: Բացի դրանից՝ վտանգ կա, որ մեղադրյալի հետագա քրեական հետապնդումը գործնականում կպահանջի երկրորդ դատավարություն:

Ավելին, հարցն իր դժվարություններն է ունենալու նաև փաստաբանական էթիկայի համատեքստում: Ակնհայտ է, որ մեղադրյալի սուտ ցուցմունքի քրեականացումն անխուսափելիորեն հանգեցնելու է փաստաբանի գործունեության ընթացքում փաստաբանական գաղտնիքի պահպանման և դատարանին կեղծ ապացույցներ չներկայացնելու փաստաբանական էթիկայի անկյունաքարային սկզբունքներից որևէ մեկի խախտմանը: Ընդ որում, այս սկզբունքներից որին էլ առաջնայնություն տա փաստաբանն իր գործունեության ընթացքում, միևնույն է, հարցը համապարփակ լուծում չի ստանալու:

Հիմք ընդունելով, որ պաշտպանի ինֆորմացիոն միակ աղբյուրը պաշտպանյալն է, քանի դեռ պաշտպանյալը կոնֆիդենցիալ կարգով չի խոստովանել, որ սուտ ցուցմունք է տվել կամ մտադիր է սուտ ցուցմունքներ տալ, պաշտպանը հնարավորություն չի ունենալու գնահատել վերջինիս ցուցմունքների հավաստիությունը: Նման իրավիճակներն ինքնին խնդրահարույց չեն:

Խնդիրն այն է, որ իրական դժվարություններն ի հայտ են գալու այն ժամանակ, երբ պաշտպանը հաստատապես տեղյակ լինի իր պաշտպանյալի՝ կեղծ ցուցմունքներ տալու մտադրության մասին: Հարցի ստանդարտ պատասխանը, ինչպես պաշտպանությունն անօրինական միջոցներով և մեթոդներով չիրականացնելու դեպքում, այն է, որ պաշտպանյալը պետք է համոզի մեղադրյալին կա՛մ

տալ ճշմարտացի ցուցմունքներ, կա՛մ առհասարակ ցուցմունքներ չտալ: Սակայն մեղադրյալին համոզել սուտ ցուցմունքներ չտալ ոչ միշտ է արդյունավետ լինելու[1]: Կարծում ենք՝ այս դեպքում ևս լավա-

[1] Նշված հարցին պատասխան տալու համար ԱՄՆ մասնագիտական շրջանում տարիների ընթացքում ձևավորվել են տարբեր մոդելներ: Առաջին մոդելը «շահերի ամբողջական պաշտպանության» մոդելն է, համաձայն որի՝ պաշտպանը, հավատարիմ մնալով գաղտնիության անկյունաքարային սկզբունքին, կամավոր կարող է սուտ ցուցմունքներ ներկայացնող վկային հարցաքննել, եթե, իհարկե, վերջինիս չի հաջողվել համոզել իր պաշտպանյալին սուտ ցուցմունքներ տալուց հրաժարվելու մասին (տե՛ս ***Freedman***, *Professional Responsibility of the Criminal Defense Lawyer: The Three Hardest Questions, 64 Mich. L. Rev 1469 (1966)):*

Մյուսը «պատմողական» մոդելն է: Այս հայեցակարգի կողմնակիցներն առաջարկում են, որ սուտ ցուցմունք տվող մեղադրյալն ուղղակի պատմողական շարադրի իր ցուցմունքները: Եթե պաշտպանին չի հաջողվել համոզել իր վստահորդին սուտ ցուցմունք չտալ, ուրեմն նա իրավասու է չիրականացնել իր պաշտպանյալի հարցաքննությունը: Այս տարբերակում ստացվում է, որ մեղադրյալը, այնուամենայնիվ, տալիս է ցուցմունքներ, որի արդյունքում չի խախտվում նրա՝ ցուցմունք տալու սահմանադրական իրավունքը, փոխարենը պաշտպանն անձամբ չի մասնակցում այդ կեղծ ապացույցի հետազոտմանը: Այս մոդելի ներդրման և դրա հետագա զարգացման գործում մեծ դեր ունի ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Գերագույն դատարանը «Ֆլորիդայի փաստաբանական գրասենյակն ընդդեմ Ռուբինի» գործով (*The Florida Bar v. Rubin*, 549 So. 2d 1000 (1989)): Սույն գործով Գերագույն դատարանի կողմից առաջ քաշված հայեցակարգը կարծես հավասարակշռություն է ապահովում պաշտպանյալի սահմանադրական իրավունքի ու պաշտպանին ներկայացվող էթիկայի պահանջների միջև: Նմանատիպ դիրքորոշում է արձանագրվել նաև շրջանային Վերաքննիչ դատարանի կողմից «ԱՄՆ-ն ընդդեմ Լոնգի» գործով (*United States v. Long*, 857 F.2d 436):

Չբավարարվելով վերոշարադրյալ երկու մոդելների կարգավորումներով՝ մասնագիտական շրջանում ձևավորվել է նաև «գիտելիքի վրա հիմնված» երրորդ մոդելը: Այս մոդելը մասնավորապես մշակվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից: Իրականում այն մերժում է վերոշարադրյալ երկու մոդելների ամբողջականության հարցը: Այսպես՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության տիպային կանոնների 3.3-րդ կետը պահանջում է բացահայտել սուտ ցուցմունք տալու հանգամանքը, եթե դա անհրաժեշտ է իրավիճակը շտկելու համար: Մասնավորապես կեղծ ապացույցներ ներկայացնելու արգելքը գործում է միայն այն ժամանակ, երբ իրավա-

գույն լուծումը պետք է լինի պաշտպանի կողմից մեղադրյալի սուտ ցուցմունքների հետազոտմանը հնարավորինս պասիվ մասնակցություն ունենալը, առավել ընդհանուր բնույթի հարցադրումներ անելը:

Ամերիկյան փորձն այս դեպքում տանում է նրան, որ կա՛մ պետք է վաղ փուլում հրաժարվել ստանձնած պաշտպանությունից, կա՛մ բացահայտել փաստաբանական գաղտնիքը՝ թույլ չտալով պաշտպանյալին կատարել հանցագործություն[1]: Անվիճելի է, որ այս երկու տարբերակներից և ոչ մեկն էլ մեր իրավական համակարգի պայմաններում կիրառելի չէ, հատկապես հիմք ընդունելով, որ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվությունն իր էությամբ նորույթ է մեր իրավական համակարգում, և, բնականաբար, դրա՝ իրավակիրառ պրակտիկայում իրացվելուց հետո գուցե և բացահայտվի ու ներդրվի առավել ճկուն և արդարացված մոտեցում:

Ամերիկյան տեսաբանների կողմից առաջարկվող առաջին տարբերակի ժխտման հիմնավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմք ընդունելով, որ փաստաբանության ինստիտու-

---

բանը հաստատապես գիտի, որ ապացույցը կեղծ է: Կանոնները նաև չեն արգելում մեղադրյալի կեղծ ցուցմունքներ ներկայացնելն այն դեպքում, եթե պաշտպանը ողջամտորեն կասկածում է, սակայն հաստատապես չգիտի դրանց կեղծ լինելու մասին: Ստացվում է, որ այս հայեցակարգի հիմքը գիտելիքն է: Սակայն քննադատելով հայեցակարգը՝ նշենք, իսկ ինչպես պետք է պաշտպանը որոշի՝ ցուցմունքները ճիշտ են, թե ոչ: Բացի դրանից՝ միայն այն պատճառով, որ պաշտպանն ասել է, որ ինքը ստելու է, արդյոք նա ամեն դեպքում սուտ ցուցմունք կտա:

Բարձրացված հարցի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս, օրինակ, **L. Timothy Perrin**, The Perplexing Problem of Client Perjury, Fordham Law Review, 2007, Volume 76, Issue 3, էջեր 1707-1743:

[1] Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մոդելային կանոններն ու Կանադայի մասնագիտական վարքագծի օրենսգիրքն արգելում են իրավաբանին ներկայացնել ապացույց, որի կեղծ լինելը վերջինիս հայտնի է: Իսկ եթե վստահորդն արդեն կեղծ ապացույց է ներկայացրել, ապա իրավաբանը պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկի, ներառյալ անհրաժեշտության դեպքում դատարանին հայտնել, եթե անգամ այդ փաստն իրավաբանին հայտնի է դարձել խորհրդապահական հանդիպումների ընթացքում (տե՛ս **M. Asimow**, When the Lawyer Knows the Client is Guilty: Legal Ethics, and Popular Culture, March, 2006 http://www.lsuc.on.ca/media/ sith_colloquium_asimow_michael.pdf):

տը ՀՀ-ում դեռևս կայացման փուլում է, նման իրավիճակներում փաստաբանական գաղտնիքի բացահայտումը հանգեցնելու է պաշտպանյալի՝ իր պաշտպանից հրաժարվելու գործընթացին՝ հաջորդող բոլոր բացասական հետևանքներով: Իսկ առավել լայն հեռանկարում առաջարկվող լուծումը հանգեցնելու է փաստաբանական գաղտնիքի հրապարակման անթույլատրելիության սկզբունքի կայուն հիմքերի, հետևաբար և փաստաբանության ինստիտուտի խարխլմանը:

Խոսելով մեղադրյալի՝ սուտ ցուցմունք տալու մտադրություն ունենալու դեպքում պաշտպանի կողմից իր լիազորությունները դադարեցնելու տարբերակի մասին՝ հարկ է նշել, որ ճիշտ կլինի՝ պաշտպանյալի սուտ ցուցմունք տալու մտադրությունը կամ սուտ ցուցմունք տալը (թե՛ մինչդատական, թե՛ դատական քննության փուլում) չհավասարեցվի պաշտպանությունն անօրինական միջոցներով և մեթոդներով իրականացնելու դեպքերին, հետևաբար ստանձնած պաշտպանությունից հրաժարման հիմք չպետք է դիտարկվի: Չնայած որ արդեն իսկ ստանձնած պաշտպանությունից հրաժարման հիմք առաջարկում ենք պաշտպանին պաշտպանությունն անօրինական միջոցներով և մեթոդներով իրականացնելու հարկադրման դեպքերը, այդուհանդերձ, տարբերակված մոտեցումն արդարացված է այնքանով, որքանով արտասահմանյան շատ երկրներ, ինչպես նաև միջազգային մի շարք չափանիշներ սուտ ցուցմունք տալը դիտարկում են պաշտպանության լրիվության համատեքստում: Ի վերջո, ցուցմունք տալը պաշտպանության իրավունքի բաղադրատարր է, և եթե մեղադրյալը, գիտակցելով վրա հասնող քրեական պատասխանատվության մասին, այնուամենայնիվ որոշում է իր պաշտպանությունն իրականացնել սուտ ցուցմունք տալու միջոցով, ապա միակ բանը, որ պաշտպանը պետք է անի, հնարավորինս չմասնակցելն է այդ ապացույցների հետազոտմանը:

Կարծում ենք՝ հարցի նման լուծումը համահունչ է մեր իրավական համակարգին այնքանով, որքանով պաշտպան-պաշտպանյալ փոխադարձ վստահության, ինչպես նաև խորհրդապահական հանդիպումների գաղտնիության վտանգումն ի վերջո հանգեցնելու է մրցակցության սկզբունքի էության խաթարմանը: Մ. Ֆրիդմենը կարծում է, որ նման իրավիճակներում փաստաբանական գաղտնիքի բացահայտումն ամենևին չի կրճատելու սուտ ցուցմունք տալու դեպ-

քերը. չէ՞ որ սուտ ցուցմունք տալու ցանկություն ունեցող մեղադրյալն ուղղակի իր պաշտպանին չի տեղեկացնի իր մտադրության մասին[1]:

Վերջին տարիներին նկատելի է մեկ իրավական համակարգի կողմից այլ իրավական համակարգ (խոսքն առավելապես վերաբերում է անգլոսաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգերին) իրավական տարրերի ներմուծման միտումը: ՀՀ-ում ասվածի վառ օրինակ է Նախագծով համագործակցության վարույթի ներդնումը[2]: Միանշանակ է այն, որ համագործակցության վարույթը պաշտպանի համար իր պաշտպանյալի իրավաչափ շահերի պաշտպանության տեսանկյունից նախընտրելի տարբերակ է այնքանով, որքանով վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցությունը հնարավորություն է ընձեռում պաշտպանյալի պատասխանատվությունը հասցնել նվազագույնի: Սակայն առաջին հայացքից թվում է, որ համագործակցության վարույթի կիրառման հետևանքով կարող է ավելանալ կեղծ մատնությունների և այլ անձանց զրպարտումների թիվը: Բնական է, որ փաստաբանական էթիկայի համատեքստում, պաշտպանի առաջին քայլը, ինչպես և նախորդ դեպքերում, պետք է լինի սեփական անձը փրկելու համար այլ անձանց անհիմն մեղադրելը կամ մատնանշել փորձող մեղադրյալի մտադրությունը փոխելը: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ կձախողվեն պաշտպանի՝ պաշտպանյալի մոտ «իրավահպատակ» վարքագիծ դրսևորելու փորձերը, լուծումը տեսնում ենք նույն հարթակում, ինչ անօրի-

---

[1] Տե՛ս **S. Gillers**, Monroe Freedman's Solution to the Criminal Defense Lawyer's Trilemma Is Wrong As a Matter of Policy and Constitutional Law, 2006, էջ 826, http://law.hofstra.edu/pdf/academics/journals/lawreview/lrv_issues_v34n03_cc8.gillers.final.pdf:

[2] Նախագծի 55-րդ գլխով կարգավորման են ենթարկվել այսպես կոչված համագործակցության վարույթի հետ կապված իրավահարաբերությունները:

Հարկ է նկատել, որ այս ինստիտուտի գոյությունը համապատասխանում է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 26-րդ հոդվածին, «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 37-րդ հոդվածին, ինչպես նաև «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերաբերյալ» 2008 թ. նոյեմբերի 28-ի Եվրոպայի խորհրդի թիվ 2008/84/JHA շրջանակային որոշման 4-րդ հոդվածի բ) կետին:

նական միջոցներով և մեթոդներով պաշտպանություն չիրականացնելու պարագայում:

4. Պաշտպանության տակտիկայի համատեքստում արդիական է քննարկել պաշտպանի այլընտրանքային դիրքորոշման հիմնահարցը: Մասնագիտական գրականության մեջ հեղինակների մի մասը կտրականապես մերժում է այլընտրանքային հարցադրման առաջադրման հնարավորությունը[1] (օրինակ՝ երբ պաշտպանը դատարանից խնդրում է արդարացնել իր պաշտպանյալին, իսկ չարդարացնելու դեպքում՝ գոնե մեղմացնել պատիժը): Մյուս մասը գտնում է, որ այլընտրանքային հարցադրման առաջադրումն այն դեպքերում, երբ մեղադրյալը հերքում է մեղքը, բայց փաստաբանն անմեղության հիմնավորման հնարավորություն չի գտնում, պաշտպանն ուղղակի պարտավոր է ներկայացնել այլընտրանքային պահանջ՝ անմեղության հարցին չանդրադառնալով, ինչը, մասնավորապես, բխում է պաշտպանության լրիվության պահանջից[2]:

Կարծում ենք՝ այս հարցին միանշանակ պատասխան տալն այդքան էլ ճիշտ չէ: Ընդհանուր առմամբ չի կարելի ժխտել այն փաստը, որ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և մեթոդներով պաշտպանություն իրականացնելու՝ օրենքի պահանջի տեսանկյունից մեղքը հերքելու հետ մեկտեղ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները պաշտպանի կողմից չօգտագործելը, դատարանին չմատնանշելն ինքնին օրենքի խախտում են, քանի որ հանգեցնում են պաշտպանության ոչ լրիվությանը և ոչ արդյունավետությանը: Այս տեսանկյունից այլընտրանքը կարծես յուրահատուկ ապահովագրություն է սխալի հնարավորությունից: Միաժամանակ ընդունելի է այն փաստարկը, որ եթե պաշտպանը մի կողմից պնդում է պաշտպանյալի անմեղ լինելը և խնդրում նրան արդարացնել, իսկ մյուս կողմից՝ ներկայացնում պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ, ապա այն տպավորությունն է ձևավորում, որ ինքը կասկածներ ունի պաշտպանյալի մեղավորության վերաբերյալ, և այս տպավորությունը, անխոս, թուլացնում է պաշտպանության դիր-

[1] Տե՛ս Адвокатская деятельность, под ред. **Н.В. Буробина**, Москва, 2003, էջ 395:

[2] Տե՛ս **Вуколов В.**, Формирование процессуальной позиции защитника // Советская юстиция, № 1, 1990, էջ 26:

քերը: Ուստի այս ծայրահեղություններից որին էլ նախապատվություն տրվի, պաշտպանությունը, միևնույն է, տուժելու է:

Հարցը պետք է լուծել որևէ միջանկյալ տարբերակով: Ամբողջապես ընդունելի ենք համարում այն տեսակետը, որ պաշտպանն ամեն դեպքում պետք է առիթ գտնի մատնացույց անելու բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են բարելավել իր պաշտպանյալի վիճակը, բայց դա պետք է իրականացվի թաքնված տարբերակով և երբեք չվերածվի ակնհայտ այլընտրանքի, այսինքն՝ խնդիրը զուտ մատուցման եղանակի մեջ է:

Այդուհանդերձ, այս հիմնախնդիրը կկորցնի իր արդիականությունը Նախագծի ընդունվելու պարագայում: Այսպես՝ Նախագծի վերաբերելի հոդվածների վերլուծությունը վկայում է, որ Նախագծում տարբերակված մոտեցում է ցուցաբերված անձի մեղավորության կամ անմեղության և նրա նկատմամբ պատիժ, այդ թվում՝ համապատասխան պատժատեսակ և պատժաչափ կիրառելու, չկիրառելու հարցերին: Նախագծով առաջարկվում է սահմանել դատական ակտի կայացման և հրապարակման երկփուլ կարգ: Մասնավորապես առաջին փուլում կողմերի և դատարանի համար քննարկման առարկա է դառնում միայն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, որի լուծումից կախված էլ հաջորդ փուլում որոշվում են դատավճռի կոնկրետ տեսակից (արդարացման կամ մեղադրական) տրամաբանորեն բխող մյուս հարցերը:

Առաջարկվող կառուցակարգը պաշտպանության կողմին թույլ է տալիս մշակել և իրացնել ավելի ճկուն, երկաստիճան մարտավարություն՝ առանց դիրքորոշման մեջ ներքին հակասություն ունենալու վտանգի: Դրանով առավել ամբողջապես է իրացվում անձի սահմանադրական իրավունքը:

5. Փաստաբանական բարեխղճության տեսանկյունից դրական պետք է մեկնաբանվի նաև այն հարցը, երբ պաշտպանը չի անդրադառնում իր պաշտպանյալի համար ոչ ձեռնտու հանգամանքներին, հատկապես պաշտպանական ճառի բովանդակության մեջ: Չպետք է մոռանալ, որ պաշտպանը քրեական դատավարությանը մասնակցում է մեղադրյալի օգտին ամեն ինչ վեր հանելու առաքելությամբ՝ ի տարբերություն մեղադրանքի կողմի, ով պետք է իրականացնի գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ վեր հանելով ինչպես կողմ, այնպես էլ դեմ խոսող հանգամանքները:

Համապատասխանաբար, պաշտպանը ոչ միայն իրավունք ունի, այլ նաև բարոյականության և օրենքի ուժով պարտավորված է լռություն պահպանել պաշտպանյալի վերաբերյալ ցանկացած բացասական փաստի մասին: Այս նույն սկզբունքով էլ պետք է կառուցվեն կողմերի ճառերը, դատախազը բոլոր հանգամանքները պետք է ներկայացնի (ըստ Ա. Ֆ. Կոնիի՝ նա պետք է լինի «խոսող դատավոր»), իսկ պաշտպանը՝ միայն ամբաստանյալի օգտին խոսողները: Օրինակ՝ եթե պաշտպանյալը ռեցիդիվիստ է, ապա միանշանակ թույլատրելի է չհրապարակել այդ հանգամանքը, եթե հակառակորդ կողմը այդ տեղեկությանը, ենթադրենք, չի տիրապետում, քանի որ պաշտպանը սուտ չի խոսում:

Իրավացի էր Օտտո ֆոն Բիսմարկը, երբ ասում էր. «Ամբողջ ճշմարտությունն ասել հնարավոր չէ, սակայն այն, ինչ ասվում է, պետք է համապատասխանի իրականությանը»:

6. Փաստաբանական պրակտիկայում չեն բացառվում նաև այնպիսի իրավիճակները, երբ փաստաբանին խորհրդատվություն ստանալու նպատակով դիմի արդեն հանցանք կատարած անձը, ում կատարած հանցանքը դեռևս բացահայտված չէ, կամ հարուցված է քրեական գործ, սակայն հանցանք կատարած անձը դեռևս հայտնի չէ: Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքով փաստաբանին դիմի հետախուզման մեջ գտնվող անձը:

Կարծում ենք՝ նման դեպքերում պետք է առաջնորդվել այն կանխավարկածով, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունի: Ուստի փաստաբանի կողմից նման պայմաններում իրավաբանական օգնություն ցույց տալն ամենևին չի հակասի փաստաբանական էթիկայի որևէ պահանջի: Ի տարբերություն քրեական հետապնդման մարմինների՝ հանցավորության դեմ պայքարը փաստաբանական գործունեության խնդիրներից չէ: Հետևաբար փաստաբանը, հիմք ընդունելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, պետք է իրավաբանական օգնություն ցույց տա իրեն դիմած ցանկացած անձի: Հակառակ դեպքում իրավաբանական օգնության իրավունքը կարող է վտանգավոր լինել ցանկացած անձի, ինչպես նաև արդարադատության համար:

Այդուհանդերձ, դեռևս չբացահայտված հանցագործություն կատարած անձին իրավաբանական օգնություն ցույց տալիս փաստաբանն առաջին հերթին պետք է վերջինիս բացատրի, որ իր կատա-

րած արարքի բացահայտման հավանականությունը բավական բարձր է, պետք է պարզաբանի, որ նրա ներկայանալը կդիտվի որպես մեղմացնող հանգամանք:

Իրականում փաստաբանական գործունեությունում էթիկական բոլոր խնդիրներն առաջանում են փաստաբանի՝ մի կողմից իր վստահորդի, մյուս կողմից՝ իրավական համակարգի հանդեպ ունեցած պատասխանատվության, ինչպես նաև սեփական շահերի առ բարոյապես ճիշտ անձնավորություն մնալու բախման հետևանքով[1]:

ДОПУСТИМЫЕ ПРЕДЕЛЫ ТАКТИЧЕСКИХ ПРИЕМОВ, ИСПОЛЬЗУЕМЫХ ПРИ ЭФФЕКТИВНОЙ УГОЛОВНОЙ ЗАЩИТЕ

Грайр Гукасян

Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, кандидат юридических наук

Анаит Арутюнян

Преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Одним из самых важных вопросов для адвоката, осуществляющего защиту, является вопрос о целях и задачах, которые доверитель ставит перед ним. Исходя из этого, адвокат вырабатывает позицию и тактику по делу. 68-ая статья Уголовно-процессуального кодекса РА, предусматривающая, что защитник по уголовному делу оказывает Подозреваемому и обвиняемому юридическую помощь всеми не запрещенными законом средствами, является основой для применения тактических приемов, которые, очевидно, могут использоваться в определенных пределах. Прежде всего, тактический прием должен быть не только законным, но и отвечать требованиям адвокатской этики. На первый взгляд, это правило кажется простым, но на самом деле в адвокатской практике оно выдвигает довольно сложные дилеммы, не имеющие однозначных ответов.

[1] **R. K. Flowers**, The Role of the Defense Attorney: Not Just an Advocate http://moritzlaw.osu.edu/osjcl/Articles/Volume7_2/Flowers-FinalPDF.pdf

В данной научной статье рассматриваются проблемные аспекты допустимых пределов тактических приемов, а также предлагаются решения особо проблемных ситуаций, возникающих в адвокатской практике.

ADMISSIBLE LIMITS OF TACTICS USED IN EFFECTIVE CRIMINAL DEFENSE

Hrayr Ghukasyan
Docent at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Candidate of Legal Sciences

Anahit Harutyunyan
Lecturer at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

During criminal defense, the defense attorney uses tactics based on the Article 68 of the Criminal Procedure Code of RA, according to which defense attorney is the lawyer who at the proceedings of criminal case offers the suspect or the accused legal assistance by all means and manners, not prohibited by law. It is obvious that tactics can be used within certain limits. In this context, first of all, tactics should not only be legal, but also meet the requirements of advocate ethics. However, this rule seems to be quite simple, but actually in the scope of advocate ethics it poses rather complicated dilemmas which even do not have precise responses.

In this article, some problematic aspects of the tactics' admissible limits are considered, as well as some solutions for particularly problematic situations arising during the advocate practice are proposed.

Բանալի բառեր - քրեական պաշտպանություն, քրեական դատավարություն, հակասություն, փաստաբանի էթիկա, արդարադատություն, շահ

Ключевые слова: уголовная защита, уголовное судопроизводство, противоречие, этика адвоката, правосудие, интерес

Key words: criminal defense, criminal justice, contradiction, advocate ethics, justice, interest

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գուրգեն Ներսիսյան

Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի դասախոս

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց անվտանգության և նրանց պաշտպանության իրականացումը քրեական դատավարության արդյունավետության ապահովման առանցքային ուղղություններից մեկն է: Դրան են նվիրված միջազգային մի շարք փաստաթղթեր՝ «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի 31.10.2003 թ. կոնվենցիան, «Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին» 27.01.1999 թ. ԵԽ կոնվենցիան[1], «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 15.11.2000 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան և այլն[2]: Միջազգային իրավունքի տեսանկյունից պետությունը պարտավոր է պաշտպանել իր իրավասության ներքո գտնվող մարդու կյանքը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի մարդու կյանքը և առողջությունը չվտանգվեն:

Դատավարության մասնակիցների անվտանգության ապահովումը ուղղակիորեն փոխկապակցված է տվյալ դատավարության արդյունավետության հետ: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության արդյունավետությունը շատ դեպքերում պայմանավորված է նաև քրեական դատավարությունում տեղեկատվական անվտանգության ապահովմամբ[3]: Միջազգային փորձագետները նշում են, որ իրավապահ մարմիններին աջակցող անձանց նկատմամբ գործադրված սպառնալիքները և բռնությունները քրեական դատավարության համակարգի փլուզման

[1] https://sk.ru/news/m/wiki/11677.aspx.

[2] https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/palermo_convention_on_transnational_crime_arm.pdf.

[3] Տե՛ս Зуев С. В. Информационное обеспечение уголовного процесса: Автореф. дисс. канд. юрид. наук - Челябинск. 2002:

ամենատարածված միջոցներից են[1], նշված անձանց պաշտպանությունը վերաբերում է հանցավորության դեմ պայքարի գլոբալ հիմնախնդիրների ոլորտին[2]:

Դատավարության մասնակցի անվտանգության ապահովման հարցը առավել կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով սահմանված (այսուհետ՝ Նախագիծ) համագործակցության վարույթում, որի ներառումը նպատակ է հետապնդում ակտիվացնել ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունը՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձանց հետ համագործակցելու միջոցով: Ակնհայտ է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցությունը կարող է համագործակցող անձի անվտանգությանն ուղղված սպառնալիք ստեղծել, հետևաբար որքան պաշտպանված է զգում իրեն քրեական վարույթին ներգրավված անձը, այնքան մեծ է իրավապահ մարմինների հետ համագործակցելու հավանականությունը, իսկ այս պայմանը առանցքային դերակատարություն ունի հատկապես համագործակցության վարույթում: Ինչպես իրավացիորեն նշել է Ի. Վ. Տիխանինը, մինչդատական վարույթի լրիվությունն ու օբյեկտիվությունը կլինեին անհնարին, եթե մեղադրյալը, վախենալով իր կամ մերձավոր ազգականի նկատմամբ բռնությունից կամ դրա սպառնալիքից, զերծ մնար վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցությունից[3]:

Դատավարական օրենսդրությունը դրա մասնակիցների պաշտ-

---

[1] Выводы и рекомендации Совещания Специальной группы экспертов по уменьшению риска насилия в системе уголовного правосудия//Док. E/CN/15/1994/4/Add. 3. 25 february. 1994. P. 10.

[2] Уголовная юстиция: проблемы международного сотрудничества. - М.: 1995. С. 187.

[3] Тиханин И. В., Некоторые актуальные проблемы применения мер безопасности к лицу, с которым заключено досудебное соглашение о сотрудничестве // Проблемы государственной защиты участников уголовного судопроизводства: материалы Межведомственной научно-практической конференции. М., 2012, ст. 211.

պանության առումով շարունակական զարգացման ու կատարելագործման կարիք ունի, իսկ համագործակցության վարույթում այն պետք է պարունակի այնպիսի իրավադրույթներ, որոնք բավարար երաշխիք կծառայեն քրեական վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցելու ցանկություն ունեցող անձանց անվտանգության ապահովման համար:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել համագործակցող մեղադրյալի անվտանգության ապահովման հետ կապված որոշ հարցեր, որոնց կապակցությամբ Նախագիծը որոշակի լրացման կարիք ունի: Այսպես.

1. Պաշտպանության ենթակա՞ է արդյոք մեղադրյալն այն դեպքում, երբ դատախազի կողմից որոշում է կայացվել նրա ներկայացրած՝ համագործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին:

«Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի 31.10.2003 թ. կոնվենցիայի 3-րդ գլխի 32-33-րդ հոդվածներում ամրագրված է. «Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր ներքին իրավական համակարգին համապատասխան և իր հնարավորությունների սահմաններում, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որ հնարավոր վրեժից և վախեցնելուց արդյունավետ պաշտպանություն ապահովի այն վկաների և փորձագետների, համապատասխան դեպքերում՝ նրանց հարազատների և մերձավոր այլ անձանց նկատմամբ, ովքեր ցուցմունքներ են տալիս իրավախախտումների կապակցությամբ, և որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան: Յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է քննարկի իր ներքին իրավական համակարգի մեջ բոլոր անձանց որևէ անարդարացի վերաբերմունքից պաշտպանության ապահովման համար պատշաճ միջոցներ ներառելու հնարավորությունը, ովքեր բարեխղճորեն և խելամիտ հիմքերով իրավասու մարմիններին հայտնում են այն իրավախախտումների հետ կապված փաստերի մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան[1]»: Նույնաբնույթ պահանջներ են սահմանված նաև «Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին» 27.01.1999 թ. ԵԽ կոն-

[1] http://www.un.am/res/UN%20Treaties/XI_9.pdf

վենցիայի 22-րդ հոդվածով[1], «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 15.11.2000 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ և 26-րդ հոդվածներով [2]:

Հանցագործությունների կանխման և իրավախախտների հետ վերաբերմունքի ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսում ընդունվել է «Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի միջոցառումների» մասին ակտ, որում պահանջ սահմանվեց, որ վկայի նկատմամբ հակաիրավական ներգործության սպառնալիքի առկայության դեպքում անհրաժեշտ է գաղտնի պահել վկայի անձի մասին տեղեկությունները, պահպանության տակ գտնվող անձին տրամադրել բնակարան, ապահովել նրա անձնական պահպանությունը և ցուցաբերել ֆինանսական օգնություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Օսմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի» գործով անդրադարձել է դատավարության մասնակցի անվտանգության հարցին: Հիշյալ գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ մարդու կյանքի իրավունքի պահպանության ապահովման պարտականությունը ներառում է ոչ միայն քրեական օրենսդրության ստեղծումը և դրա արդյունավետ կիրառումը, այլև կյանքի պաշտպանության ***նախականխիչ միջոցների*** հիմնումը: Անձի կամ անձանց պաշտպանությանն ուղղված նախականխիչ միջոցառումների ձեռնարկման պետության պոզիտիվ պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ մարդու կյանքի իրական և անմիջական ռիսկի գոյության մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ[3]: Եթե իրավապահ մարմինը, տեղեկացված լինելով կոնկրետ անձի կյանքի նկատմամբ ոտնձգության փորձի հնարավորության մասին, չի ձեռնարկել նրա անվտանգության ապա-

[1] https://sk.ru/news/m/wiki/11677.aspx.

[2] https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/palermo_convention_on_transnational_crime_arm.pdf.

[3] Бессарабов В. Г., Быуова Е. В., Курочкина Л. А., Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. - М.: Изд. Юрлитинформ. 2005. С. 54-55, Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика. Сб. аналитических статей. - М.: Под ред. М.Р. Воскобитовой. «Анахарсис», 2005, С. 71.

հովման արդյունավետ միջոցներ, որի հետևանքով տվյալ անձը սպանվել է, ապա կարելի է արձանագրել պետության կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) խախտում[1]:

Նախագծի 73-րդ հոդվածով հատուկ պաշտպանության միջոց կիրառելու հնարավորություն նախատեսված է քրեական վարույթին ներգրավված ցանկացած անձի, այդ թվում՝ նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի համար, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին սպառնում է իրական վտանգ:

Թեև քրեական դատավարության գործող օրենսդրությունը պաշտպանության կարիք ունեցողների ցանկին է դասում հիմնականում վկաներին, տուժողներին ու նրանց ընտանիքի անդամներին, այդուհանդերձ Նախագծով առաջարկվող համագործակցության վարույթի շրջանակում պաշտպանության կարիք ունի նաև համագործակցող մեղադրյալը, քանզի վերջինս ստանձնում է նաև ենթադրյալ այլ հանցագործների հանդեպ ապացույցներ ներկայացնելու միջոցով նրանց մերկացնելու պարտավորություն, իսկ նման վարքագիծը ենթադրաբար կարող է նրա կամ նրա ընտանիքի անդամի կյանքը կամ սեփականությունը վտանգելու սպառնալիք ստեղծել *(«վկա» հասկացությունը պետք է ընկալել Եվրոպական կոնվենցիային համապատասխան, այսինքն՝ վկա է ցանկացած անձ, ով տիրապետում է գործի համար նշանակություն ունեցող տեղեկատվության, և ում ցուցմունքները դատական մարմինների կողմից կարող են հաշվի առնվել մեղադրանքի քննության ընթացքում[2]*): Համագործակցող մեղադրյալի պաշտպանությանն ուղղված միջոց է նաև Նախագծի 458-րդ հոդվածի 2-րդ մասում (*սահմանվում է համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը)* տրված կարգավորումը, համաձայն որի՝ «Համագործակցության համաձայնագիր կազմե-

[1] Ղամբարյան Ա. Ս., Երեմյան Ա. Վ., ՀՀ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006, էջ 16-17:

[2] Ղամբարյան Ա. Ս., Երեմյան Ա. Վ., ՀՀ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006, էջ 48:

լուց հետո տվյալ մեղադրյալի **վերաբերյալ վարույթն անջատվում է**: Անջատված վարույթի նյութերին պարտադիր կցվում են ***համագործակցության միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին հսկող դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության համաձայնագիրը***»:

Նույն հոդվածի 4-րդ մասում ասվում է հետևյալը. «Մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապված այլ անձի անվտանգության սպառնալիքի առկայության դեպքում քննիչը որոշում է կայացնում ***սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը կնքված փակ ծրարում պահելու, ինչպես նաև համապատասխան անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված հատուկ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին***»:

Այսպիսով՝ Նախագիծը բովանդակող վերոհիշյալ իրավանորմերից բխում է, որ համագործակցության համաձայնագիր կազմելուց և համագործակցող մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատելուց հետո նախատեսված հիմքերի առկայության դեպքում քննիչը որոշում է ընդունում Նախագծի 458-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված փաստաթղթերը գաղտնավորելու մասին՝ դրանք փակ ծրարում պահելու տեսքով: Թեև նշվածը կատարվում է հիշյալ փաստաթղթերում առկա տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու, հետևաբար նաև համագործակցող մեղադրյալի համար դրանց հրապարակման արդյունքում ենթադրաբար ակնկալվող վտանգի սպառնալիքները վերացնելու համար, ու թեև պաշտպանության այդ միջոցը ներառված չէ Նախագծի 74-րդ հոդվածում, այդուհանդերձ ակնհայտ է, որ այն ուղղված է համագործակցող մեղադրյալին նաև վերահաս վտանգից պաշտպանելուն:

Սակայն հարց է ծագում, թե ինչո՞ւ Նախագիծը չի պարունակում նույնպիսի պահանջ այն դեպքում, երբ համագործակցության միջնորդությունը դատախազի կողմից մերժվում է:

Ինչպես նկատելի է համագործակցության վարույթի՝ Նախագծով հռչակված նպատակից, այն ուղղված է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտմանը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն: Հաշվի առնելով, որ քրեական արդարադատության հիշյալ խնդիրները քրեական վարույթն իրականացնող մարմինը ինքնուրույն իրականացնել չի կարողացել և դրան փորձում է հասնել «զի-

ջումների» հաշվին՝ օգտվելով մեղադրյալի համագործակցությունից, ակնհայտ է դառնում, որ համագործակցող մեղադրյալը իր վրա է վերցնում որոշակի ռիսկեր, որովհետև համագործակցության վարույթի նպատակին հասնելու համար համագործակցողը ստանձնում է ակտիվ դերակատարություն ապացույցներ ներկայացնելու միջոցով, ինչն ուղղակիորեն կարող է հանգեցնել դրա արդյունքում մերկացվող ու համագործակցող անձանց միջև հակադրության իրական վտանգի ձևավորմանը: Այդ է պատճառը, որ համագործակցության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու շուրջ որոշումը մեղադրյալն ընդունում է, ի թիվս այլոց, նաև հարցը բարոյահոգեբանական ու իրավական հարթությունում մանրակրկիտ վերլուծության ենթարկելու միջոցով: Եթե իրավական անալիզը կատարվում է մեծապես պաշտպանի հետ խորհրդակցելու միջոցով, վերջինիս խորհրդատվություններն ու հմտությունները օգտագործելու ճանապարհով, ապա հարցի բարոյահոգեբանական կողմն առավելապես ծանրացած է մեղադրյալի վրա, քանի որ դրա բացասական հետևանքների կրողն ու պատասխանատուն հենց ինքն է: Համագործակցության միջնորդությունը մերժելու դեպքում միջնորդության, քննիչի կարծիքի ու դատախազի որոշման անհասանելիությունն ապահովելու՝ քննարկվող դեպքում այն գաղտնավորելու՝ քննիչի դատավարական լիազորության բացակայությունը կարող է էապես խոչընդոտել հիշյալ գործընթացը նախաձեռնելու՝ մեղադրյալի հոգեբանական մտորումների կայացմանն ու վճռականության ձևավորմանը: Նման պարագայում տարբեր սոցիալական և բարոյական «արժեքների» միջև ընտրություն կատարելու համար համագործակցելու ցանկություն ունեցող մեղադրյալը ստիպված կլինի նախընտրել առավել անցնցում ու անվտանգ ճանապարհը և ոչ թե միջնորդությունը մերժվելու դեպքում սեփական անձը կամ մերձավոր շրջապատի անվտանգությունը խոցելու սպառնալիք ստեղծելու տարբերակը, իսկ դա կհանգեցնի համագործակցության վարույթին ապավինելու դեպքերի նվազմանը կամ առհասարակ բացառմանը:

Նախքան համագործակցության միջնորդություն ներկայացնելը համագործակցելու ցանկություն ունեցող մեղադրյալի համար պետք է երաշխավորված լինի, որ միջնորդությունը մերժվելու դեպքում այդ մասին դատավարության այլ մասնակիցներ չեն տեղեկանալու, իսկ բավարարվելու դեպքում դրանց մանրամասնությունները պահվելու

են գաղտնի: Նախագիծը պարունակում է երկրորդ պայմանը բավարարող անհրաժեշտ իրավակարգավորում, իսկ համագործակցության միջնորդությունը մերժվելու դեպքում միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը և միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը գաղտնի պահելու պայման՝ ոչ: Այդ առումով Նախագիծը մեղադրյալին պետք է ընձեռի համագործակցության վարույթ նախաձեռնելու հետևանքով ակնկալվող բոլոր տեսակի բարոյական և իրավական վտանգներից ազատ ու անկաշկանդ լինելու հնարավորություն: Անհրաժեշտ է նաև փաստել, որ Նախագծի 459-րդ հոդվածի ուժով մեղադրյալն ունի նաև համագործակցությունից հրաժարվելու իրավունք, ուստի համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունները դեռևս չեն վկայում այն մասին, որ վերջինս այն կկատարի ամբողջ ծավալով և չի հրաժարվի համագործակցությունից՝ այդ կերպ պահանջելով համագործակցության վարույթում կատարված գործողությունների ու դրանց բովանդակության հրապարակայնության սահմանափակում, իսկ նշված պահանջին ի պատասխան՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է ունենա ցանկացած պահի մեղադրյալի անվտանգությունն ապահովելու կամ նրա անվտանգությանը սպառնացող վտանգները կամ դրանց ծագման հիմքերը չեզոքացնելու բավարար հնարավորություն՝ այդ թվում որոշակի փաստաթղթեր գաղտնավորելու եղանակով: Հետևաբար առավել նպատակահարմար են ոչ թե վտանգի ծագման հիմք ստեղծելն (*այսինքն՝ համագործակցության նախաձեռնության մասին բարձրաձայնելը կամ այդ տեղեկատվությունը հրապարակելը*) ու այն վերացնելուն ուղղված Նախագծի 74-րդ հոդվածով նախատեսված միջոցներ ձեռնարկելը, այլ դրա առաջացման հնարավորությունը բացառելը՝ այդպիսով կատարված համարելով վտանգի ծագումը ***կանխելու գործառույթը***:

Նախագծի 74-րդ հոդվածը սահմանում է դատավարության մասնակցի անվտանգությունն ապահովելու որոշակի միջոցներ, և համագործակցության վերաբերյալ միջնորդությունը մերժված մեղադրյալի անվտանգությունը հիշյալ հոդվածով սահմանված կարգով ապահովելու համար քրեական վարույթն իրականացնող մարմինը նախ **պետք է արձանագրի մեղադրյալի անվտանգությանն ուղղված սպառնալիքի առկայություն, որից հետո ձեռնարկի 74-րդ**

հոդվածով նախատեսված պաշտպանության հատուկ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ զրկված լինելով հավանական վտանգի ծագումը զսպելուն ուղղված ***նախականխիչ միջոցառումներ*** կատարելու հնարավորությունից:

Թեև ենթադրվում է, որ համագործակցության միջնորդությունը դատախազի կողմից մերժվելուց հետո միջնորդությունը, քննիչի գրավոր կարծիքը և միջնորդությունը մերժելու մասին որոշումը պետք է դիտարկվեն որպես Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական վարույթի նյութեր և պահվեն քրեական գործում, սակայն Նախագիծը այդ մասին ևս որևէ կարգավորում չի նախատեսում:

Վերը բերված պատճառաբանություններից հետևում է, որ համագործակցության ցանկություն ունեցող մեղադրյալի համար պետք է երաշխավորված լինի, որ՝

ա) *համագործակցության վարույթ նախաձեռնելու դեպքում միջնորդություն ներկայացնելու փաստը և դրա բովանդակությունը չեն հրապարակվի,*

բ) միջնորդությունը բավարարվելու կամ մերժվելու դեպքում միջնորդությունը, քննիչի գրավոր կարծիքը և դատախազի որոշումը վարույթի մասնավոր մասնակիցների ու օժանդակող անձանց համար կլինեն անհասանելի:

Ինչպես միջնորդությունը բավարարելու, այնպես էլ այն մերժելու դեպքում վերոհիշյալ փաստաթղթերի գաղտնավորումը պետք է կատարվի քննիչի որոշմամբ, որը պետք է լինի պատճառաբանված: Ընդ որում, քննիչի որոշումը բովանդակային առումով կարող է տեղեկություններ պարունակել համագործակցող կամ նման ցանկություն ունեցող մեղադրյալին անհատականացնող տվյալների, համագործակցության ուղղությունների և նպատակահարմարության տեսանկյունից հրապարակման ոչ ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ: Ինքնին քրեական գործի նյութերին կից կնքված փակ ծրարի առկայությունը նույնպես որոշակի ինֆորմատիվ է, այսինքն՝ առնվազն վկայում է այն մասին, որ գործով առկա էր համագործակցության միջնորդություն, որը մերժվել է: Եվ եթե քրեական գործով կա ընդամենը մեկ մեղադրյալ, և վարույթի մասնավոր մասնակիցները քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում արձանագրել են գործին կից փակ ծրարի առկայությունը, ապա բոլորի հա-

մար ակնհայտ է, որ մեղադրյալը համագործակցության միջնորդություն էր ներկայացրել (*Նախագիծը փակ կնքված ծրարում փաստաթղթեր պահելու հնարավորություն նախատեսել է միայն համագործակցության վարույթում*)։ Այդ կապակցությամբ քննիչը պետք է ունենա նաև հիշյալ որոշումը և կնքված փակ ծրարը վարույթի մասնակիցներից գաղտնի պահելու իրավունք։ Պատահական չէ, որ Վ. Գ. Գլեբովը և Ն. Ս. Կոստենկոն առաջարկում են լրացնել ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 317-րդ հոդվածը և կնքված ծրարում պահել, ի թիվս այլոց, նաև քրեական գործից մաս անջատելու մասին որոշումը, որը պետք է լինի նաև հիմնական քրեական գործում[1]։

Հետևաբար կարծում ենք, որ Նախագիծը պետք է պարունակի նաև համագործակցության միջնորդությունը մերժվելու դեպքում միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, դատախազի որոշումը գաղտնավորելու հնարավորություն։

Քննարկվող հարցը համադրվել է նաև «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի շուրջ Եվրոպական դատարանի նախադեպային եզրահանգումներին։ Նշված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք պետք է ունենա ***բավականաչափ ժամանակ ու հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,*** *որից բխում է նաև քրեական մինչդատական վարույթն ավարտվելու պահին գործի բոլոր նյութերին ծանոթանալու իրավունքը*։ Պաշտպանության կողմի՝ քրեական գործում առկա փաստաթղթերի հասանելիության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) ընդունել էր մի շարք նախադեպային վճիռներ։ «Բրանդշտետտերը ընդդեմ Ավստրիայի» և «Ռոուն ու Դեվիսը ընդդեմ Միացյալ Թագավորության» գործերով ՄԻԵԴ-ը արձանագրել էր գործի նյութերին ծանոթանալու մեղադրյալի իրավունքի կարևորությունը՝ այդ իրավունքի առարկա հռչակելով սակայն գործով ձեռք բերված ապացույցները միայն։ Եվրոպական դատարանը նաև ընդգծել է որոշակի հանգա-

[1] Глебов В. Г., Костенко Н. С., Проблемы выделения уголовного дела в отношении лица, с которым заключено досудебное соглашение о сотрудничестве // Российский следователь. 2011. № 24.

մանքներում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետում նախատեսված իրավունքը ներպետական օրենսդրությամբ սահմանափակելու հնարավորություն[1]՝ «Վան Մեխելենը Նիդեռլանդների դեմ» գործով նման սահմանափակման հիմք ճանաչելով նաև անվտանգության միջոցներ կիրառելու բավարար հիմքերի առկայությունը[2]:

ՄԻԵԴ-ի վերը ներկայացված դիրքորոշումը ուղղակիորեն վերաբերում է մեղադրանքի կողմի ունեցած ապացույցների մասին տեղեկացված լինելու՝ պաշտպանության կողմի իրավունքին, այսինքն՝ Եվրոպական դատարանը արձանագրել է որոշակի հանգամանքների առկայության պարագայում գործով ձեռք բերված որոշակի ***ապացույցների*** հասանելիությունը սահմանափակելու հնարավորություն՝ այն համարելով իրավաչափ ու Կոնվենցիայի 6-րդ հոդվածին համահունչ: Համագործակցության միջնորդությունը, դրա շուրջ քննիչի գրավոր կարծիքը և միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը ապացուցողական որևէ նշանակություն չունեն և Նախագծի 86-րդ հոդվածի ուժով չեն կարող դիտարկվել որպես ապացույց, հետևաբար պաշտպանության կողմի համար դրանց հասանելիությունը սահմանափակելը չի կարող դիտարկվել որպես պաշտպանության իրավունքի խախտում:

Դատավարության մասնակցի անվտանգության ապահովման տեսանկյունից արտասահմանում կիրառվում են անվտանգության մի շարք միջոցներ, որոնք ՄԻԵԴ-ի կողմից նույնպես ճանաչվել են Կոնվենցիային համահունչ: Դրանցից են պաշտպանվող անձանց հարցաքննության տեսանկարահանումը և դրանք դատաքննության ժամանակ վերարտադրելը, նախնական քննության ավարտից հետո ծանոթացման համար մեղադրյալին ու նրա պաշտպանին ներկայացվող նյութերի սահմանափակումը, դատական նիստերի դահլիճից դուրս անձանց կապի միջոցներով հեռահար հարցաքննությունը, դատարանում վկաների ու տուժողների փոխարեն իրավապահ

[1] Добавление к третьему докладу Комиссии по правам человека ЭКОСОС ООН «Права на справедливое сидебное разбирательство:признание в современных условиях и меры по его укреплению»//Док. E/N.4/Sub.2/1992/Add,1, 15 may.1992. P. 27.

[2] Европейский суд по правам человека. Избранные решения. Т. 2. М.: Норма, 2000. С. 440 – 454.

մարմինների հարցաքննությունը, ովքեր հայտնում են ծառայողական գործունեության ընթացքում տուժողներից ու վկաներից իրենց հայտնի դարձած տեղեկությունները և այլն:

Ելնելով վերոգրյալներից՝ համագործակցության միջնորդությունը մերժվելու դեպքում մեղադրյալի անվտանգության ապահովման տեսանկյունից մեր կողմից առաջարկվում է Նախագծում կատարել հետևյալ բովանդակային լրացումները.

1) Համագործակցության միջնորդությունը մերժելու մասին դատախազի կողմից որոշում ընդունելուց հետո մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապված այլ անձի անվտանգության սպառնալիքի առկայության կամ մեղադրյալի կամ մեղադրյալի պաշտպանի միջնորդության դեպքում քննիչը որոշում է կայացնում միջնորդությունը, դրա կապակցությամբ քննիչի գրավոր կարծիքը, միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը կնքված փակ ծրարում պահելու մասին:

2) Համագործակցության միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին դատախազի կողմից որոշում ընդունվելու դեպքում միջնորդությունը, դրա կապակցությամբ քննիչի գրավոր կարծիքը և միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը կնքված փակ ծրարում պահելու մասին քննիչի որոշումը և ծրարը չպետք է ներկայացվեն դատավարության մասնակիցներին Նախագծի 200-րդ հոդվածով նախատեսված կարգով քրեական գործը ծանոթացման ներկայացնելու ժամանակ:

2. *Դատավարության օժանդակող մասնակիցներ փորձագետը, թարգմանիչը և ընթերական պարտավո՞ր են արդյոք պահպանել համագործակցության ցանկություն հայտնած մեղադրյալի և համագործակցության առարկայի վերաբերյալ իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը:*

Գործող քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածից հետևում է, որ քննիչը և հետաքննության մարմինը իրավասու են վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականերին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնել նախնական քննության տվյալներն առանց թույլտվության հրապարակելու անթույլատրելիության մասին:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածում նախատեսված կարգավորման համաձայն՝ նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին քննիչը կարող է նախազգուշացնել դատավարության բոլոր մասնակիցներին: Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննության տվյալների հրապարակման թույլտվություն կարող է տալ դատախազը, իսկ մինչդատական վարույթն իրականացնող սուբյեկտը կարող է դատավարության մասնակիցներին զգուշացնել այդ տվյալների հրապարակման դեպքում քրեական պատասխանատվության մասին:

Կարևորելով մինչդատական վարույթի իրավաչափ գաղտնիության ապահովման հարցը՝ «Վեբերն ընդդեմ Շվեյցարիայի» գործով (§33-34) Եվրոպական դատարանը արձանագրել է, որ մինչդատական վարույթում անհրաժեշտ է տարբերակել մի կողմից այն անձանց (օրինակ՝ դատավորներ, իրավաբաններ և մնացած բոլոր այն անձինք, ովքեր սերտորեն առնչվում են դատարանների գործունեությանը), ովքեր, ամեն ինչից անկախ, պարտավորվում են պահպանել մինչդատական վարույթի գաղտնիությունը, և մյուս կողմից՝ այն մասնակիցներին, որոնց նկատմամբ դատական համակարգի կարգապահական ոլորտը չի կիրառվում: Վերջին դեպքում քրեական վարույթի ընթացքում անհրաժեշտ է որոշակի ներգործություն՝ դատավարության մասնակիցներին նախազգուշացնելու կամ պարզաբանելու տեսքով:

Նախագծի 6-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ վարույթի մասնավոր մասնակից են համարվում մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը:

Նույն հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ վարույթին օժանդակող անձինք են վկան, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը, փորձագետը, թարգմանիչը, ընթերական, դատական նիստի քարտուղարը:

Նախագծի 186-րդ հոդվածում ասվում է հետևյալը.

«1. **Վարույթի մասնավոր մասնակիցները**, **վկան** և **նրա փաստաբանն** իրավունք ունեն հրապարակել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրենց հայտնի դարձած նախաքննութ-

յան տվյալները, եթե քննիչը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով գրավոր չի արգելել դրանց հրապարակումը: Այս դեպքում քննիչը պարտավոր է վարույթի մասնավոր մասնակցին, վկային և նրա փաստաբանին գրավոր նախազգուշացնել նախաքննության տվյալների հրապարակման համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, ի թիվս այլոց, նաև այն դեպքերում, երբ դա կարող է դառնալ հանցանքի կատարման պատճառ, վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը»:

Նկարագրվածից հետևում է, որ քննիչը կարող է նախաքննության տվյալների հրապարակման արգելք սահմանել բացառապես վարույթի մասնավոր մասնակիցների և օժանդակող մասնակիցներից վկայի և նրա փաստաբանի համար, ընդ որում, Նախագծի 186-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

Գործող քրեական դատավարության օրենսդրության համաձայն ընթերական, փորձագետը և թարգմանիչը առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության իրավունք չունեն հրապարակել իրենց մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրենց հայտնի դարձած տեղեկությունները: Նախագիծը նման պարտականություն նախատեսում է միայն ընթերակայի համար՝ վերջինս պարտավոր է չհրապարակել ապացուցողական գործողությանը մասնակցելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները (հոդված 62): Բացի դրանից՝ գործող քրեադատավարական օրենսդրությունը դռնփակ նիստում հայտնի դարձած տվյալների հրապարակման արգելք է սահմանում նաև դատական նիստի քարտուղարի համար, իսկ Նախագիծը դատավորին հնարավորություն է տալիս դռնփակ դատական նիստին ներկա անձանց, այդ թվում՝ քարտուղարին նախազգուշացնելու դրա ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության մասին (հոդված 267): Փաստորեն քննիչը իրավասու չէ արգելել հրապարակելու դատավարությանը մասնակցելու արդյունքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները փոր-

ձագետին և թարգմանչին, վերջիններիս համար Նախագիծը չի սահմանել նաև այդ տվյալների հրապարակման անթույլատրելիության պայման:

Գիտակցելով համագործակցության վարույթում մեղադրյալի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը՝ վերջինիս ու քրեական վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցելու ուղղությունների ու համագործակցության առարկայի շուրջ տեղեկությունները գաղտնի պահելն ապահովելու պարտականությունը կրում է քննիչը, ընդ որում, այդ պարտականությունը պետք է ծագի համագործակցության միջնորդություն ներկայացնելու պահից: Հատկանշական է սակայն, որ համագործակցության վարույթին կարող են մասնակցել դատավարական մի շարք օժանդակող սուբյեկտներ, որոնք նշված չեն Նախագծի 186-րդ հոդվածում, և որոնց համար Նախագիծը չի սահմանել դատավարության վերաբերյալ ստացված տեղեկությունները բարձրաձայնելուց զերծ մնալու պարտականություն, բայց որոնք կարող են ստանալ համագործակցության վերաբերյալ տեղեկություններ ու հրապարակել դրանք: Ինչպես արդեն նշվել է վերը, այդպիսիք են ***փորձագետը*** և միջնորդության ներկայացման կամ համաձայնագրի կազմման ժամանակ կամ դրանից հետո քրեական վարույթին ներգրավված՝ դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի ***թարգմանիչը***: Հիշյալ սուբյեկտներն ազատ են նախաքննության ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները հրապարակելու հարցում, իսկ նման մոտեցումը հղի է համագործակցող մեղադրյալի կամ նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապված այլ անձի համար իրական վտանգներով ու սպառնալիքներով և նման իրավակարգավորումը կարող է էական խոչընդոտ հանդիսանալ համագործակցության վարույթին ապավինելու հարցում: [1]

[1] Օրինակ՝ Նախագծի 255-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալը ունի քննիչի թույլտվությամբ և փորձագետի համաձայնությամբ փորձաքննության կատարմանը ներկա գտնվելու, փորձագետին պարզաբանումներ տալու իրավունք: Համագործակցող մեղադրյալը կարող է օգտվել իր այդ իրավունքից, և այդ ընթացքում փորձագետը կարող է տեղեկություններ ստանալ համագործակցող անձի ու համագործակցության առարկայի վերաբերյալ: Տարբեր վարութային գործողությունների մասնակցելու ընթացքում նույնպիսի տեղեկություններ կարող է ստանալ նաև թարգմանիչը:

Նույնպիսի կարծիք է արտահայտել նաև Մ. Ե. Կուբրիկովան, ում դիրքորոշման համաձայն՝ անձինք, ովքեր մասնակցում և ստորագրում են համագործակցության համաձայնագիրը, պետք է պարտավորվեն չհրապարակել իրենց հայտնի դարձած տեղեկությունները, ընդ որում, դրանց թվում պետք է լինի նաև թարգմանիչը:[1] Այդ նպատակով վերջինս առաջարկել է լրացնել ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 317.3-րդ հոդվածը հետևյալ բովանդակությամբ. «Համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի պաշտպանին և թարգմանչին քննիչը նախազգուշացնում է գործով համագործակցության համաձայնագիր կնքելու, ինչպես նաև դրա հետ կապված՝ իրենց հայտնի դարձած այլ տեղեկությունները հրապարակելու անթույլատրելիության վերաբերյալ, որից հետո նրանցից վերցնում է քրեական պատասխանատվության մասին նախազգուշացվելու վերաբերյալ ստորագրություն»:

Համագործակցության վարույթում կամ այն նախաձեռնելու փուլում մեղադրյալը պետք է պաշտպանված լինի նաև իր անձն անհատականացնող տվյալների և իր մտադրությունների հրապարակումից բխող վտանգից: Այդ տեղեկությունները ոչ միայն կարող են հրապարակային դառնալ վարութային փաստաթղթերի տեսքով, այլև վարույթին օժանդակող մասնակիցների միջոցով, հետևաբար քննիչը պետք է ունենա նաև այդ վտանգը բացառելու դատավարական լիազորություն:

Մինչդատական վարույթի գաղտնիությունը խախտելն արգելելու քննիչի լիազորությունը սակայն բացարձակ բնույթ չի կրում: «Միխեեվը և Իմակաեվան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործերով Եվրոպական դատարանը պատասխանող երկրի քրեական դատավարության օրենսգրքի (*УПК РФ Статья 161. Недопустимость разглашения данных предварительного расследования*) 161-րդ հոդվածի կիրառմամբ քրեական վարույթից տեղեկություններ հրապարակելու արգելքը ճանաչել էր անհիմն դրա պատճառաբանված չլինելու համար: Այսինքն՝ Եվրոպական դատարանը մինչդատական

[1] Кубрикова, М. Е., К вопросу обеспечения безопасности подозреваемого (обвиняемого), заключившего досудебное соглашение о сотрудничестве, //Вестник Южно-Уральского государственного университета. -2013.Том 13. № 2. С. 26-30.

վարույթի վերաբերյալ տեղեկությունները հրապարակելու արգելք սահմանելու համար առաջ է քաշել դրա պատճառաբանված լինելու պայմանը:

Քննարկելով քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու տուժողի իրավունքի սահմանափակման հետ կապված հարցերը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 24.01.2012 թ. ՍԴՈ-1008 որոշմամբ արտահայտել էր հետևյալ իրավական դիրքորոշումը. «**Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ»:**

Ինչ վերաբերում է համագործակցության վարույթին, ապա սույն հոդվածով առաջարկվող սահմանափակումը վերաբերում է բացառապես համագործակցող մեղադրյալին անհատականացնող տվյալների, համագործակցության փաստի և ուղղությունների շուրջ տեղեկություններին, որոնք վարույթին օժանդակող մասնակիցների՝ փորձագետի և թարգմանչի կողմից հրապարակելը պետք է ճանաչվի անթույլատրելի:

Վերը ներկայացված փաստարկների ու պատճառաբանությունների հիման վրա կարծում ենք, որ Նախագծի 186-րդ հոդվածում պետք է նշվեն նաև փորձագետը և թարգմանիչը՝ որպես վարույթին օժանդակող սուբյեկտներ, ովքեր իրավասու չեն հրապարակել նախաքննության ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները քննիչի կողմից դրանք հրապարակելը արգելելու դեպքում: Ընդ որում եթե Նախագծի 186-րդ հոդվածով տվյալների հրապարակումը արգելելու գործառույթը քննիչի համար կրում է հայեցողական բնույթ (Նախագծի 186-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում), ապա համագործակցության վարույթում կամ դրա նախաձեռնման փուլում այն պետք է լինի պարտադիր՝ քննիչի պարտականության տեսքով:

ПРОБЛЕМЫ БЕЗОПАСТНОСТИ ОБВИНЯЕМОГО ПРИ ЗАКЛЮЧЕНИИ ДОСУДЕБНОГО СОГЛАШЕНИЯ О СОТРУДНИЧЕСТВЕ

Гурген Нерсисян
Преподаватель кафедры права Арцахского государственного университета

В данной статье была сделана попытка обосновать идею о том, что в производстве сотрудничества есть много обстоятельств, угрожающих безопасности обвиняемого, для устранения которых необходимо внести поправки в проект. В связи с этим была представлена точка зрения, согласно которой после принятия решения прокурора об отказе ходатайства о сотрудничестве, при наличии угрозы безопасности обвиняемого, его близкого родственника или связанного с ним другого лица или при ходатайстве обвиняемого или его защитника, следователь должен принять решение о хранении в опечатанном конверте ходатайства и связанного с этим письменного мнения следователя, а также решение прокурора. При принятии прокурором решения об отказе или удовлетворении ходатайства о сотрудничестве, ходатайство, связанное с ним письменное мнение следователя, решение прокурора и решение следователя о хранении документов в опечатанном конверте и сам опечатанный конверт не должны быть представлены участникам судебного разбирательства во время ознакомления с материалами уголовного дела, что предусмотрено 200-й статьей проекта. Кроме того, в целях обеспечения безопасности обвиняемого, существенное значение имеет также установление запрета на оглашение сведений, которые стали известны во время участия в уголовном производстве некоторых участников судебного процесса. Для осуществления данного запрета было предложено в 186-ой статье также отметить эксперта и переводчика, которые не должны оглашать известные им сведения, если следователь запретил оглашать их.

SECURITY ISSUES OF THE CULPRIT IN THE COOPERATION PROCEEDINGS

Gurgen Nersisyan
Lecturer of Artsakh state university of chair of rigft

In this article an attempt has been made to substantiate that there are some circumstances threatening the security of a culprit in the cooperation proceedings and for eliminating these some addition must be done in the projekt.

The first viewpoints is that in case of the prosecutor's decision to refuse the mediation, the investigator must make a decision in the case of existence of a security threat of a culpit, his close relative or in the event of the threat of another person's security or in the case of mediation of the culprit, or mediator's mediation, the investigator must make a decision to keep the motion, the written opinion of the investigator concerning it, and the decision of refusing the motion, sealed in a closed envelope. In case of deciiding to reject or satisfy the cooperation mediation, the investigator's written opinion over it and the prosecutor's decision of refusing the motion, the investigator's decision on holding in a cealed close envelope and the envelope must not be submitted to the participant's of the proceedings when filing the criminal case under the procedure provided by article 200 of the draft.

Besides it is also crucial for some participants of the trial to issue a ban on the publication of the information they have learned during the criminal proceedings, for the implementation of which it is recommended that Article 186 of the draft law also include the expert and the translator as subjects supporting the proceedings who are not eligible to publish the preliminary investigation in the event of disclosure of the information disclosed to them by the investigator.

Բանալի բառեր - Նախագիծ, համագործակցության վարույթ, դատավարություն, թարգմանիչ, փորձագետ, մեղադրյալ, անվտանգություն, արգելք, գաղտնիություն, փակ կնքված ծրար

Ключевые слова: проект, производство о сотрудничестве, судебный процесс, переводчик, эксперт, обвиняемый, безопасность, запрет, секретность, опечатанный закрытый конверт
Keywords: Project, production cooperation, judicial process, translator, expert, accused, security, barrage, confidentiality, sealed envelope

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ. ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Սերգեյ Մեղրյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

I. Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները և նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է 1998 թ. հունիսի 17-ին և գործողության մեջ է դրվել 1999 թ. հունվարի 1-ից[1]: Այն փոխարինելու եկավ 1964 թ.-ից գործող ՀԽՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Նոր օրենսգրքի ընդունումը, նախևառաջ, պայմանավորված էր անկախության հռչակումից հետո հանրապետությունում տեղի ունեցող տնտեսական, քաղաքական, իրավական և գաղափարախոսական փոփոխություններին, ինչպես նաև 1995 թ. հանրաքվեով ընդունված Սահմանադրությանը և միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերին քաղաքացիական դատավարությունը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Պետք է նշել, սակայն, որ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ընդունման օրվանից սկսած, դատավարագետների արդարացի քննադատության ենթարկվեց, քանի որ դրանում առկա էին և՛ հայեցակարգային բնույթի թերություններ, և՛ բազմաթիվ բացեր, սխալներ ու հակասություններ[2]:

Պատմահիրավական և իրավահամեմատական վերլուծությունը բերում է այն համոզման, որ ՔԴՕ-ի ընդունման ժամանակ գրեթե անտեսվել է Հայաստանի քաղաքացիական դատավարության զարգացման պատմությունը, մեզանում ավանդաբար ձևավորված քա-

[1] Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53), ՀՕ-247 (այսուհետ՝ Օրենսգիրք կամ ՔԴՕ):

[2] Տե՛ս, օրինակ, **Պետրոսյան Ռ. Գ.,** Հայաստանի քաղաքացիական դատավարություն, ԵՊՀ հրատ., 2003, էջ 38-40:

ղաքացիական դատավարության ռոմանագերմանական բնույթը, և շեղում է կատարվել քաղաքացիական ու քաղաքացիական դատավարության օրենսգրքերի երկմիասնության, փոխպայմանավորվածության ու փոխկախվածության ավանդական կարգից։ Ակնհայտ է նաև, որ դատավարության իրավունքի տարբեր համակարգերի մերձեցման, դատավարության ինստիտուտների կամ սկզբունքների փոխառման ու փոխհարստացման քողի տակ ստեղծվել է այսպես կոչված «խառնակույտ» մի համակարգ, բազմաթիվ հարցերի լուծումը թողնվել է դատական հայեցողության կամ ընդհանրապես դուրս է մնացել իրավական կարգավորման տիրույթից՝ վեճերի լուծման դատական ընթացակարգը դարձնելով խիստ անարդյունավետ[1]։

Վերը նշվածը, ինչպես նաև ՔԴՕ-ի բազմաթիվ բաժիններում ու հոդվածներում առկա մասնագիտական ոչ ճիշտ ձևակերպումները, դատավարական հարաբերությունների մակերեսային կարգավորվածությունը, իսկ ապա նաև դատական համակարգում մի քանի անգամ կատարված արմատական փոփոխությունները ՔԴՕ-ում 2000-2015 թթ. ընթացքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ավելի քան 40 օրենքների ընդունման հիմք են դարձել։

Քաղաքացիադատավարական իրավահարաբերությունները կարգավորող օրենսգրքում բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացի վրա նշանակալից ազդեցություն ունեցավ նաև դատական պրակտիկան, որի ընթացքում բացահայտված մի շարք թերություններ ու բացթողումներ իրենց գնահատականը ստացան ՄԻԵԴ-ի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում։

Պետք է նշել սակայն, որ շատ հաճախ արված փոփոխությունները ոչ թե շտկել են վիճակը, այլ ընդհակառակը՝ ավելացրել են օրենսգրքում առկա անճշտությունները, թերությունները և հակասությունները։ Ընդ որում, փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը կատարվել է հապճեպ, պահի ազդեցության տակ, մյուսները զուրկ են եղել գիտական հիմնավորվածությունից կամ հակասում են դատավարագիտության զարգացման ժամանակակից միտումներին։ Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ կատարված փոփոխությունների

[1] Տե՛ս նույն տեղում։

արդյունքում արմատապես փոփոխվել է այս կամ այն ինստիտուտի հիմքում դրված հայեցակարգը։ Օրինակ՝ լրիվ վերաքննությունը փոխարինվել է դրան տրամաբանորեն հակառակ ոչ լրիվ վերաքննության հայեցակարգով։ Որոշ դեպքերում էլ կատարված փոփոխությունները նպատակ են հետապնդել վերականգնելու սկզբնապես նախատեսված, բայց հետագայում փոփոխված իրավանորմերը և ինստիտուտները։

Կատարված բազմաթիվ փոփոխությունների և լրացումների արդյունքում օրենսգրքի ներկայումս գործող խմբագրությունը էականորեն տարբերվում է 1999 թ. գործողության մեջ դրվածից, սակայն այն ներկայումս կառուցվածքային և բովանդակային տեսանկյունից ավելի հեղհեղուկ ու գիտականորեն չհիմնավորված է դարձել՝ հիմքում չունենալով որևէ հայեցակարգ ու նմանվելով «ռմբակոծության ենթարկված տարածքի»։ Ցուցիչ հոդվածների բազմաթվությունը գրեթե անհնարին է դարձնում օրենսգրքի հոդվածների հստակ թիվը պարզելը, բազմաթիվ բաժիններ և գլուխներ ուժը կորցրել են, փոխարենն օրենսգրքում տեղ են գտել մի շարք ցուցիչով բաժիններ ու գլուխներ (օրինակ՝ բաժիններ երրորդ[1], երրորդ[3], չորրորդ[1], վեցերորդ[1], գլուխներ 26[1], 29.[1], 36[1] և այլն)։ Միայն նման իրավիճակն իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից անմխիթար պետք է համարել։

Բարեփոխումների մի քանի ալիք տեսած օրենսգրքում այդպես էլ չի լուծվել ի սկզբանե առկա բազմաթիվ թերությունների (կարելի է ասել դրանց մեծամասնության) վերացման խնդիրը։

Ակնհայտ է, որ Օրենսգրքի ներկայումս գործող խմբագրության շրջանակներում բազմաթիվ հրատապ խնդիրներ շուտափույթ լուծման կարիք ունեն։ Այդպիսի խնդիրների պարզ թվարկումն անգամ սույն զեկույցի շրջանակներում գրեթե անհնարին է։

Առավել առանցքային նշանակություն ունեն հետևյալները՝

- ✓ քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացումը և դատավարական խնայողության սկզբունքի ներդրումը,
- ✓ «ողջամիտ ժամկետում» գործի քննության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
- ✓ մրցակցային դատավարության այնպիսի մոդելի ներդրումը, որի շրջանակներում գործը քննող դատավորը հանդես կգա որ-

պես ակտիվ դեր ունեցող «գործի կառավարիչ»՝ ձեռքի տակ ունենալով ապացուցման գործընթացը կառավարելու և դատավարության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ հավասարակշռված, որոշակի և կանխատեսելի գործիքակազմ,

- ✓ քաղաքացիական դատավարությունում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ընդլայնումը,
- ✓ դատական ծանուցումների ինստիտուտի բարելավումը, դատավարական փաստաթղթերը կողմերին ուղարկելու կառուցակարգերի մշակումը,
- ✓ քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու փուլի մանրակրկիտ և հաշվենկատ իրավական կարգավորումը,
- ✓ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ընթացքում վերաբերելի փաստական և ապացուցողական նյութն օպերատիվ և լրիվ ծավալով հավաքելու դատարանի գործառույթը կատարելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
- ✓ կողմերի տնօրինչական գործողությունների հաշվենկատ կանոնակարգումը՝ հնարավորինս նվազեցնելով իրավունքների և այլ դատավարական հնարավորությունների չարաշահման հնարավորությունը,
- ✓ ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնների հստակեցումը և հատուկ կանոնների ամրագրումը,
- ✓ առանձին տեսակի ապացույցների հետազոտման դատավարական կարգի կատարելագործումը,
- ✓ դատական ակտերի պատշաճ դասակարգումը և դատական ակտերին ներկայացվող միասնական պահանջների սահմանումը,
- ✓ նոր էժան ու արագ ընթացակարգերի ներդրումը,
- ✓ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների հարուցման հիմքերի հստակեցումը և առկա անհիմն սահմանափակումների վերացումը,
- ✓ վերաքննության և վճռաբեկության սահմանների, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների հստակեցումը,
- ✓ գործի նոր քննության, նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգերի պատշաճ կանոնակարգումը,
- ✓ այլ իրավական ակտերի գործողությամբ պայմանավորված

վարույթների նոր տեսակների ներդրումը (օրինակ՝ արբիտրաժային դատարանի վճիռը և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու մասին դիմումներով վարույթները):

Նման խնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն նպատակահարմար ենք համարում սահմանափակվել նշվածով:

Քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների դատական պաշտպանության բնագավառում քաղաքացիական դատավարության օրենսգրքի ունեցած դերն ու նշանակությունը միանշանակ թույլ են տալիս եզրակացնել, որ նման իրավական ակտում առկա առանցքային թերություններն ու բացթողումներն առանձին կամ ինքնաբուխ փոփոխությունների և լրացումների միջոցով շտկվել չեն կարող:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում վաղուց արդեն հասունացել է անհրաժեշտություն ընդունելու նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրք, որն իր մեջ կներառի ժամանակակից դատավարագիտության ձեռքբերումները, Մասնավոր իրավունքի միասնականացման միջազգային ինստիտուտի (ՄԻՄՄԻ) և Ամերիկյան իրավունքի ինստիտուտի (ԱԻԻ) կողմից դեռևս 2004 թվականին ընդունված «Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքներ»-ում[1] ձևակերպված անդրազգային ստանդարտները, հաշվի կառնի Եվրոպայի խորհրդի հանձնարարականները և եվրոպական երկրների լավագույն փորձը, կարտացոլի քաղաքացիական դատավարության ոլորտին վերաբերող ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում, Եվրոպական կոնվենցիայի դրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ՄԻԵԴ-ի որոշումներում տեղ գտած հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակություն ունեցող ակտերում տեղ գտած բազմաթիվ առաջադիմական լուծումները և գաղափարները:

II. Առաջարկվող հիմնական լուծումները

Ի կատարումն ՀՀ նախագահի 30.06.2012 թ. թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի՝ ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի փորձագիտական

[1] Տե՛ս http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf:

խմբի[1] կողմից մշակված և ներկայումս ՀՀ Ազգային ժողովի օրակարգ ընդգրկված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծով[2] (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվել են հետևյալ հարցերը՝

Օրենսգրքի կառուցվածքը.

Նախագիծը մշակվել է իրավունքի պանդեկտ համակարգի օրենսգրքերին բնորոշ համակարգով՝ ընդհանուրից դեպի հատուկը: Նախագծով Օրենսգիրքը բաժանված է ինը բաժինների:

Նախագծի **առաջին բաժինը**, որն ընդգրկում է թվով 11 գլուխներ, նվիրված է ընդհանուր նշանակության հարցերի կարգավորմանը (օրենսգրքի գործողության ոլորտ, դատարան դիմելու իրավունք, դատավարական իրավունակություն և գործունակություն, քաղաքացիական դատավարության սկզբունքներ, քաղաքացիական գործերի ենթակայություն և ընդդատություն, դատարանի կազմ, քաղաքացիական դատավարության մասնակիցներ, ապացուցում, դատական ծանուցումներ, դատավարական փաստաթղթերն ուղարկելու/հանձնելու կարգ, դատական ծախսեր, դատավարական ժամկետներ):

Երկրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է առաջին ատյանի դատարանում գործերի քննության կարգին: Այն իր հերթին բաժանված է **յոթ ենթաբաժինների**՝

1) Առաջին ատյանի դատարանում գործերի քննության ընդհանուր կարգ (հայցային վարույթ).

2) Հատուկ-հայցային վարույթներ.

3) Հատուկ վարույթներ.

---

[1] Սույն զեկույցի հեղինակը նշված փորձագիտական աշխատանքային խմբի համակարգող անդամն է 2012 թվականից:

[2] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը (01.12.2017 թ. դրությամբ) տե՛ս https://www.e-draft.am/projects/502:

Հարկ է նշել, որ Նախագիծն անցել է Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված երկու միջազգային փորձաքննություն, որոնց արդյունքներով գնահատվել է որպես բավականին առաջադիմական և հաջողված փաստաթուղթ, երկու անգամ դրվել է պաշտոնական շրջանառության մեջ և ներկայիս տեսքն է ստացել՝ հաշվի առնելով թե՛ Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետների և թե՛ բոլոր շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների առաջարկությունները և դիտողությունները:

4) Պարզեցված ընթացակարգեր.

5) Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթներ.

6) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթներ.

7) Օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթ:

Երրորդ և չորրորդ բաժինները համապատասխանաբար նվիրվել են վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում վարույթի կարգավորմանը:

Հինգերորդ բաժինը կարգավորում է բեկանված դատական ակտով գործերի նոր քննության առանձնահատկությունները:

Վեցերորդ բաժինը նվիրվել է դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթին:

Յոթերորդ բաժինը սահմանում է օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով վարույթի առանձնահատկությունները:

Ութերորդ բաժինը կարգավորում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան քաղաքացիական գործերով իրավական օգնության հարցերը:

Իններորդ բաժինը նվիրված է անցումային դրույթներին:

Դատարան դիմելու իրավունքը: Դատավարական իրավասուբյեկտությունը.

1. Ի տարբերություն գործող Օրենսգրքի՝ Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվել է դատարան դիմելու իրավունքից լրիվ կամ մասնակիորեն հրաժարվելուն ուղղված գործարքների անվավերություն: Նման կարգավորումն օբյեկտիվորեն պահանջում է վերանայել տարբեր նորմատիվ-իրավական ակտերում տեղ գտած այն դրույթները, որոնք անհարկի սահմանափակում են անձի դատական պաշտպանության իրավունքը՝ հիմք ընդունելով պայմանագրով կամ միակողմանի գործարքով դատարան դիմելու իրավունքից հրաժար-

վելու փաստը[1]:

2. Ինքնավար կամք դրսևորելու ազատության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման, մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության և պայմանագրի ազատության քաղաքացիաիրավական սկզբունքների և քաղաքացիական դատավարական կարգավորումների ներդաշնակությունն ապահովելու, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը խթանելու և դատարանների ծանրաբեռնվածության խնդիրը որոշակիորեն լուծելու նկատառումներից ելնելով՝ նույն հոդվածով սահմանվել է ընդհանուր դրույթ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման արտադատական կարգ, վեճը կարող է հանձնվել դատարանի քննությանն այն արտադատական կարգով լուծելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու, ներառյալ նախապահանջ ներկայացնելու օրվանից երեսուն օրացուցային օր հետո, եթե այլ կարգ կամ ժամկետ սահմանված չէ օրենքով կամ պայմանագրով:

3. Նախագծում ձևակերպում են ստացել դատավարական իրավունակության ու դատավարական գործունակության հասկացությունները, կոնկրետացվել են դատավարական իրավասուբյեկտությամբ օժտված անձանց շրջանակը, քաղաքացիական դատավարությանն անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների մասնակցության առանձնահատկությունները, սահմանվել է նրանց լսված լինելու, իսկ առանձին դեպքերում նաև դատարան դիմելու իրավունքը:

Քաղաքացիական դատավարության սկզբունքները.

Նախագծում հստակեցվել են քաղաքացիական դատավարության սկզբունքներն ու դրանց իրացման պայմանները: Ի տարբերություն գործող Օրենսգրքի՝ ուղղակիորեն նախատեսվել են քաղաքացիական դատավարության այն սկզբունքները, որոնք թեև նախատեսված չեն գործող օրենսգրքով, այդուհանդերձ բխեցվում են առկա կարգավորումներից, միջազգային իրավական փաստաթղթերից, և որոնց գոյությունն ու անհրաժեշտությունը բազմիցս հիմնավորվել

[1] Տե՛ս, օրինակ, «Ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը:

են դատավարագիտության մեջ, ինչպես նաև ՄԻԵԴ-ի, ՍԴ-ի և Վճռաբեկ դատարանի դատական ակտերում: Բացի դրանից՝ Նախագծում ոչ միայն հռչակվել է այս կամ այն սկզբունքը, այլ նաև հնարավորինս բացահայտվել է դրա բովանդակությունը: Հիմնական փոփոխությունները հանգում են հետևյալին.

1. Առանձին դրույթով ուղղակի ամրագրում է ստացել տնօրինչականության սկզբունքը, և բացահայտվել է դրա բովանդակությունը:

2. Բացահայտվել է մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքների բովանդակությունը, այդ սկզբունքների պատշաճ իրացումը քաղաքացիական դատավարությունում ապահովելու համար դատարանի վրա դրվել է գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձանց նրանց իրավունքները և պարտականությունները պարզաբանելու, դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին նախազգուշացնելու, նրանց իրենց իրավունքների իրացման հարցում աջակցելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և օրենսդրության ճիշտ կիրառման համար պայմաններ ստեղծելու պարտականություն: Թերևս տվյալ դրույթն է հիմք հանդիսացել Նախագծի հետագա հոդվածներում դատարանի մի շարք կազմակերպչական բնույթի գործառույթների ամրագրման համար: Մասնավորապես կատարված փոփոխությունների ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ դատարանը ոչ միայն պետք է հավասար պայմաններ ստեղծի, այլ նաև ամեն կերպ նպաստի, որպեսզի կողմերը ժամանակին և լրիվ ծավալով ներկայացնեն իրենց պահանջները, առարկությունները, հակափաստարկները և այլն: Եթե կողմը չի ներկայացրել իր դիրքորոշումը, կամ ներկայացված դատավարական նյութը պարունակում է էական թերություններ, օրինակ՝ ձևակերպված պահանջը հստակ չէ, չի վկայակոչվել նման պահանջ կամ առարկություն ներկայացնելու համար նյութական օրենսդրությամբ կարևորվող փաստը, չեն պահպանվել հայցադիմումի պատասխանի բովանդակությանը ներկայացվող պահանջները և այլն, դատարանը պետք է մատնացույց անի այդ բացթողումները, պարզաբանի կողմին նրա իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնի դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու

հետևանքների մասին, այլ ոչ թե բավարարվի որոշակի թերությունների արձանագրմամբ: Փաստը, որը վրիպել է կողմի ուշադրությունից, կամ որը կողմը չի արժևորել, կարող է դրվել վճռի հիմքում միայն այն դեպքում, երբ դատարանը նախնական նիստում կողմերի հետ քննարկել է դրա գործի լուծման համար էական նշանակության հարցը, մտցրել է այն ապացուցման առարկայի մեջ և կողմին տվել է հնարավորություն դրա վերաբերյալ ներկայացնելու իր դիրքորոշումը:

3. Որպես քաղաքացիական դատավարության կարևորագույն սկզբունք նախատեսվել է դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը, այդ սկզբունքի պատշաճ իրացումը քաղաքացիական դատավարությունում ապահովելու համար դատարանին վերապահվել է իրավունք՝ դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառելու չարաշահմանը համաչափ՝ օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ իրավական ներգործության այլ միջոցներ:

4. Թեև պահպանվել է գործերի քննության բանավորության սկզբունքը, այդուհանդերձ նախատեսվել է առանձին կատեգորիայի գործերով գործի քննության գրավոր ընթացակարգեր կիրառելու հնարավորություն:

5. Մանրակրկիտ կարգավորման է ենթարկվել դատավարության լեզվի սկզբունքը: Նախատեսվել են օտարալեզու փաստաթղթերը դատարան ներկայացնելու դատավարական կարգը և այն չպահպանելու հետևանքները, Հայաստանի Հանրապետության հաշվին գործին մասնակցող անձանց թարգմանչի ծառայություններով ապահովելու հիմքերը և կարգը, լսողական կամ խոսակցական խանգարումներ ունեցող անձանց իրավունքը՝ ծանոթանալու գործի նյութերին, օգտվելու այլ դատավարական իրավունքներից սուրդոթարգմանչի միջոցով, դատարանի պարտականությունը՝ ապահովելու դատական ակտերի հասանելիությունը տեսողական խանգարումներ ունեցող անձանց մատչելի եղանակով:

6. Դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը Սահմանադրության կարգավորումներին համապատասխան ստացել է նոր բովանդակություն: Ընդ որում, օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հնարավոր «արտահոսքը» բացառելու նպատակով նախատեսվել է դրույթ, ըստ որի՝ գործը կամ դրա մի

մասը դռնփակ նիստում քննելու հարցը դատարանը պետք է լուծի դռնփակության պայմաններում: Նախագծի կարևոր նորամուծություններից է այն, որ եզրափակիչ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերի հրապարակումը նախատեսվում է կատարել էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով:

7. Նախագծում սկզբունքի մակարդակի են բարձրացված դատական ակտերին ներկայացվող պահանջները: Սահմանվել է, որ ցանկացած դատական ակտ (անկախ այն կայացնող ատյանից) պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Բացի դրանից՝

- ✓ բացահայտվել են այն նվազագույն պահանջները, որոնց պետք է բավարարի ցանկացած եզրափակիչ կամ միջանկյալ դատական ակտ՝ օրինական, հիմնավորված և պատճառաբանված համարվելու համար,
- ✓ նախատեսվել է դատարանի պարտականությունը՝ դատական ակտում անդրադառնալու գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին,
- ✓ ուղղակիորեն արգելվել են վերացական դատողություններով դատական ակտ պատճառաբանելը, դատական ակտի հիմքում ենթադրություններ դնելը՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքով ամրագրված կանխավարկածներով,
- ✓ նախատեսվել է, որ այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, դատական ակտում պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Գործերի ենթակայությունը և ընդդատությունը.

Նախագծով առաջարկվում է վերականգնել «քաղաքացիական գործի ենթակայություն» հասկացությունը՝ հնարավորինս հստակ սահմանելով այն որոշելու չափանիշները և այն սահմանազատելով «ընդդատության» ինստիտուտից: Այդ նպատակով՝

1) քաղաքացիական գործերի ենթակայությունը որոշելու համար հստակ սահմանվել է, թե որ գործերն են օրենսգրքի իմաստով հանդիսանում քաղաքացիական.

2) քաղաքացիական դատավարության արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներից ելնելով՝ վերանայվել են քաղաքացիական գործերի տարածքային ընդդատության կանոնները, լուծվել է միաժամանակ բացառիկ և այլ տարածքային ընդդատություն ունեցող պահանջներով գործի ընդդատության հարցը.

3) վերանայվել են մեկ դատարանից մեկ այլ դատարան գործերը հանձնելու հիմքերը, կարգը և հետևանքները, նախատեսվել է ընդդատության մասին վեճերի լուծման կարգ:

Դատարանի կազմը.

1. Պահպանելով գործերի միանձնյա և կոլեգիալ քննության սկզբունքը՝ Նախագծում հստակեցվել է այն գործերի (հարցերի) շրջանակը, որոնք Վերաքննիչ դատարանում քննվում են կոլեգիալ կազմով:

2. Նախագծում սահմանազատվել են «դատավորի ինքնաբացարկ» և «դատավորի բացարկ» հասկացությունները:

3. Նախատեսվել է կանոն առ այն, որ նույն հիմքով հայտնված բացարկը ենթակա չէ քննության, եթե չի ներկայացվել բացարկի հիմքը հիմնավորող նոր ապացույց:

Քաղաքացիական դատավարության մասնակիցները.

1. Ի տարբերություն գործող ՔԴՕ-ի, Նախագծում առանձին գլուխ է նվիրվել դատավարության մասնակիցներին: Ընդ որում, նշված գլխի շրջանակներում սահմանվել է ոչ միայն գործին մասնակցող, այլ նաև գործի քննությանն օժանդակող սուբյեկտների դատավարական կարգավիճակը, հստակեցվել են նրանց վարույթ ներգրավելու հիմքերը և դատավարական կարգը, նրանց իրավունքների ու պարտականությունների շրջանակը:

2. Նորովի են սահմանվել վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց գործի քննությանը ներգրավելու հիմքերը և դատավարական կարգը: Մասնավորապես ի թիվս այլի՝

✓ սահմանվել է, որ եթե առաջին ատյանի դատարանը գտնում է, որ դատական ակտը կարող է անխուսափելիորեն ազդել որոշակի անձանց իրավունքների և պարտականությունների վրա,

ապա ծանուցում է տվյալ անձանց՝ որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու նրանց իրավունքի և դրա իրականացման կարգի վերաբերյալ.

✓ նախատեսվել է կանոն, համաձայն որի՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, եթե նա չի միջնորդում գործի քննությունը վերսկսելու մասին.

✓ հստակեցվել է այն դատավարական գործողությունների շրջանակը, որոնք չեն կարող կատարվել ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց կողմից.

✓ նախատեսվել է դատարանի իրավունքը՝ մինչև դատաքննության ավարտը ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին հանել գործին մասնակցող անձանց կազմից, եթե ներգրավման հիմքերը վերացել են:

3. Դատավարության մասնակիցների թվում նախատեսվել է նոր սուբյեկտ՝ մասնագետ՝ տեսական կամ կիրառական գիտելիքներ ունեցող անձը, որը գործին մասնակցող անձի միջնորդությամբ հրավիրվում է դատական նիստին գործի քննության համար նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ առանց նախնական հետազոտությունների իրականացման մասնագիտական բացատրություններ տալու համար:

5. Նախագծում հստակ առանձնացվել են ներկայացուցչության տեսակները, կարգավորման է ենթարկվել «ի պաշտոնե» ներկայացուցչությունը, հստակեցվել է որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունեցող անձանց շրջանակը, նախատեսվել են սահմանված պահանջների խախտմամբ ներկայացուցչություն իրականացնող անձին գործի քննությունից հեռացնելու դատարանի իրավունքը, հիմքերը և կարգը, սահմանվել է ներկայացուցչի լիազորությունները հավաստելու կարգը, և սպառիչ թվարկվել են ներկայացուցչի հատուկ լիազորությունները:

Ապացուցում և ապացույցներ.

1. Նախագծում հստակեցվել են ապացույցի հասկացությունը, ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության ընդհանուր կանոնները, ամրագրվել են գործի լուծման համար նշանակութ-

յուն ունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի (ապացուցման առարկայի) շրջանակը որոշելու կանոնները:

2. Նախագծով որոշակիորեն ընդլայնվել են դատական ակտերի նախադատելիության օբյեկտիվ սահմանները: Ի տարբերություն գործող ՔԴՕ-ի՝ նախադատելի նշանակություն է տրվել նաև նախկինում քննված սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերին: Բացի դրանից՝ նախադատելիության հատկանիշով են օժտվել նաև վերաքննիչ դատարանի դատական ակտերը, որոնցով Վերաքննիչ դատարանն իր լիազորությունների սահմաններում հաստատված է համարել որոշակի փաստական հանգամանքներ:

3. Նպատակ հետապնդելով ներդաշնակեցնել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի և ՔԴՕ-ի համապատասխան կարգավորումներն ու բարձրացնել նոտարիատի դերը և արժևորել նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի ապացուցողական ուժը՝ Նախագծում սահմանվել է, որ նոտարական գործողություն կատարելու արդյունքում նոտարի կողմից հաստատված փաստն ապացուցման ենթակա չէ, եթե նոտարական կարգով վավերացված փաստաթղթի իսկությունը վիճարկված չէ սահմանված կարգով, կամ նոտարական գործողությունը չի ճանաչվել ոչ իրավաչափ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Նախագծում հստակ իրավական կարգավորման է ենթարկվել անվիճելի փաստերի ինստիտուտը: Մասնավորապես սահմանվել է, որ գործին մասնակցող անձն ազատվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն ապացուցելու պարտականությունից, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են առաջին ատյանի դատարան ներկայացված դատավարական փաստաթղթով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում (անվիճելի փաստեր): Ընդ որում, Նախագծում սպառիչ թվարկվել են այն դեպքերը, երբ դատարանն ընդունված փաստերը կարող է հաստատված չհամարել:

5. Նախագծի շրջանակներում էապես կատարելագործվել են ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնները: Նախա-

տեսվել են ոչ միայն ապացուցման բեռը բաշխելու ընդհանուր կանոնի չափազանց կարևոր մասնավորեցումներ (օրինակ՝ փաստը ժխտող անձի վրա չի կարող դրվել այդ փաստի բացակայությունն ապացուցելու պարտականություն, պարտավորության բովանդակությունը կազմող գործողության կատարված լինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պարտապանը, պարտավորությունը ոչ պատշաճ կատարված լինելու փաստը պետք է ապացուցի այդ փաստը վկայակոչող գործին մասնակցող անձը), այլ նաև սահմանվել են ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոններ, ինչպես նաև նախատեսվել է վիճելի իրավահարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ օրենսգրքի այլ ինստիտուտներով կամ նյութական իրավունքի նորմերով այլ հատուկ կանոններ սահմանելու հնարավորություն:

6. Նախագծի շրջանակներում փորձ է կատարվել վերահսկելի դարձնել գործով առաջին ատյանի դատարան ապացույցներ ներկայացնելու ընթացակարգը՝ բացառելով ապացույցներ ներկայացնելու դատավարական իրավունքը չարաշահելու հնարավորությունները, վարույթն անարդյունավետ կազմակերպելու և ողջամիտ ժամկետում ավարտելու վտանգը: Ապացուցողական նյութը ժամանակին՝ մինչև նախնական դատական նիստի ավարտը, ներկայացնելուն դրդելու և կողմերի դատավարական կարգապահության մակարդակը բարձրացնելու նկատառումներից ելնելով՝ նախատեսվել են ապացույցները ներկայացնելու ժամկետային սահմանափակումների հավասարակշռված, որոշակի և կանխատեսելի համակարգ, այդ թվում՝ սահմանված ժամկետների խախտմամբ ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու դատավարական հետևանքներ: Հիմնական փոփոխությունները հանգում են հետևյալին.

ա. Նախագծի 64-րդ հոդվածը որպես ապացույցներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը: Ընդ որում, ապացույցները դատարանի կողմից սահմանված ժամկետում ներկայացնելու պարտականությունը Նախագիծն ամրապնդել է դատավարական սանկցիայով, այն է՝ ժամկետի խախտմամբ ներկայացված ապացույցները, անկախ գործի համար դրանց նշանակությունից, չեն ընդունվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ներկայացնողը հիմնավորում է դատարանի կողմից սահ-

մանված ժամկետում տվյալ ապացույցը կամ այն ձեռք բերելուն ուղղված միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

բ. Հատկանշական է, որ ի տարբերություն գործող ՔԴՕ-ի՝ Նախագիծը ապացույցներ ներկայացնելու կարգը (ներառյալ ժամկետային սահմանափակումները) ուղղակիորեն տարածում է նաև ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների վրա (ապացույցներ պահանջելու, փորձաքննություն նշանակելու, վկա կանչելու, գործին մասնակցող անձին՝ որպես վկա հարցաքննելու, տեղազննություն կատարելու մասին և այլն): Ապացուցողական նյութի ձեռքբերմանն ուղղված նման միջնորդությունները ևս պետք է ներկայացվեն մինչև ապացուցման պարտականություն բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը, հակառակ պարագայում նման միջնորդություն ներկայացնող անձը պետք է հիմնավորի դատարանի կողմից սահմանված ժամկետում տվյալ միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

գ. Նախագծի շրջանակներում որոշակի ժամանակային սահմանափակումներ են նախատեսվել ոչ միայն ապացուցողական նյութը ներկայացնելու, այլ նաև ապացուցման պարտականության բաղադրատարր հանդիսացող «հաստատման» պարտականությունը՝ պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելու պարտականությունը, կատարելու համար: Մասնավորապես սահմանվել է, որ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշումը կայացնելուց հետո գործին մասնակցող անձինք զրկվում են իրենց նյութահիրավական պահանջները և առարկությունները հիմնավորելու համար նոր փաստ վկայակոչելու իրավունքից՝ բացառությամբ օրենսգրքով նախատեսված բացառիկ դեպքերի:

7. Վերանայվել են առանձին տեսակի ապացույցների շրջանակը, դրանց ներկայացման, հետազոտման առանձնահատկությունները: Մասնավորապես նախատեսվել են վկայի հարցաքննության, առերես հարցաքննության կանոններ, սահմանվել են փաստաթղթերի պատճեններ ներկայացնելու կարգը, գրավոր ապացույցները վիճարկելու կարգը և ժամանակային սահմանափակումները, գրավոր ապացույցները տեխնիկական միջոցների կիրառմամբ դատական

նիստում հետազոտելու հնարավորությունը և այլն:

9. Կատարելագործվել են փորձաքննություն նշանակելու և փորձաքննության անցկացման դատավարական կարգը, փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջները: Կարգավորվել է փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ նմուշները վերցնելու, փորձաքննության անցկացմանը կողմերի մասնակցելու կարգը: Սահմանափակվել է փորձագետի եզրակացության դեմ առարկելու իրավունքը, մասնավորապես նախատեսվել է կանոն առ այն, որ գործին մասնակցող անձը փորձագետի եզրակացության վերաբերյալ գրավոր առարկությունը պարտավոր է առաջին ատյանի դատարանին ներկայացնել մինչև նախնական դատական նիստի ավարտը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առարկելու հիմքերն ի հայտ են եկել դատաքննության ընթացքում, կամ առարկություն ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում այն ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Դատական ծանուցումները, դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կարգը.

Ողջամիտ ժամկետում գործի քննությունն ավարտելու սահմանադրական պահանջը կատարելու համար անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծելու, դատավարության մասնակիցների դատավարական կարգապահությունը բարձրացնելու, վարույթի արդյունավետությունը բարձրացնելու և դատավարական խնայողություն ապահովելու նկատառումներից ելնելով՝ էապես վերանայվել է դատական ծանուցումների համակարգը: Մասնավորապես՝

1) հստակեցվել է այն անձանց շրջանակը, ում կարող են հանձնվել պատվիրված նամակով ուղարկված ծանուցագրերը և այլ դատավարական փաստաթղթերը.

2) հստակեցվել են դատական ծանուցագիրը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով գործին մասնակցող անձին ծանուցելու պայմանները.

3) նախատեսվել է դատական ծանուցագրերը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ուղարկելու կարգ: Ընդ որում, ուղղակիորեն ամրագրվել է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմնին, իրավաբանական անձին, ինչպես նաև գործին մասնակցող անձի՝ փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուց-

չին հասցեագրված դատական ծանուցագիրն ուղարկվում է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստին: Միաժամանակ նախատեսվել է, որ նշված սուբյեկտները կրում են իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստին կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված դատական ծանուցագիրը չկարդալու անբարենպաստ հետևանքները.

4) սահմանվել է դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կարգը, ինչպես նաև նախատեսվել է գործին մասնակցող անձին հանձնման ենթակա փաստաթղթերի դեպոնացման մասին հրապարակային ծանուցման կարգ.

5) սահմանվել են այն դեպքերը, երբ անձը քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով համարվում է պատշաճ ծանուցված կամ դատավարական փաստաթղթերը ստացած՝ անկախ ծանուցագիրը կամ դատավարական փաստաթուղթը փաստացի ստանալու հանգամանքից:

Դատական ծախսեր.

1. Նախատեսվել է, որ դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

2. Սահմանվել է կանոն առ այն, որ դրամական պահանջներով հայցի ներկայացման համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնից: Միևնույն ժամանակ որոշակիացվել են հայցագինը որոշելու կանոնները:

3. Ամրագրվել է դրույթ, ըստ որի՝ հիմնական պահանջի հետ մեկտեղ ներկայացված ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

4. Հայցի առարկան փոփոխելու դեպքում նախատեսվել է պետական տուրքի գումարի չբավականացնող մասը հայցի առարկան փոփոխելիս վճարելու պահանջ:

5. Նախատեսվել է, որ եթե հայցապահանջն իր բնույթով այնպիսին է, որ հայցադիմում ներկայացնելու պահին անհնար է որոշել հայցագնի չափը, ապա հայցվորը պարտավոր է վճարել օրենքով ոչ դրամական պահանջներով հայցադիմումներ ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի չափը: Ընդ որում, դատարանի վրա դրվել է պարտականություն՝ դատական ակտով անդրադառնալու գործի քննության ընթացքում որոշված հայցագնին համապատասխան լրացուցիչ պետական տուրք գանձելու հարցին:

6. Ընդլայնվել է գործի քննության հետ կապված դատական ծախսերի շրջանակը: Մասնավորապես դրանց կազմում են ընդգրկվել նաև մասնագետներին վճարվելիք գումարները, գործին մասնակցող անձանց՝ գործի քննության վայր ժամանելու, ինչպես նաև նրանց՝ դատարան ներկայանալու կապակցությամբ ժամանակավոր կացարանով ապահովելու հետ կապված ծախսերը, դատարանի պահանջները և դատական հանձնարարությունները կատարելու հետ կապված՝ գործին մասնակցող անձանց ծախսերը, իրեղեն ապացույցների պահպանման ծախսերը, հաշտարարության հետ կապված ծախսերը:

7. Կանոնակարգվել են վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարվելիք գումարների չափը որոշելու, դրանք վճարելու հարցերը:

8. Սահմանվել են փաստաբանի վարձատրության չափի խելամտությունը որոշելու չափանիշներ՝ որպես այդպիսիք դիտարկելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված՝ փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունը:

9. Հստակեցվել է դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացնելու կարգը: Ամրագրվել է կանոն առ այն, որ նման պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում: Ընդ որում, սահմանվել է գործի քննության ավարտից հետո դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացնելու արգելք:

10. Նոր լուծումներ են նախատեսվել դատական ծախսերի բաշխման կանոններում:

Դատավարական ժամկետներ.

Նախագծի շրջանակներում կատարելագործվել է դատավարական ժամկետների ինստիտուտը: Այդ նպատակով կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Սահմանվել է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

2. Վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելու, դատավարության մասնակիցների և դատարանի հայեցողության սահմանները նեղացնելու, դատավարական կարգապահության մակարդակը բարձրացնելու նկատառումներով նախատեսվել են մի շարք դատավարական գործողությունների կատարման ժամկետներ:

3. Որոշակիացվել է բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելու և այն քննելու դատավարական կարգը:

4. Առանձին գործերի քննության և լուծման համար սահմանվել են հատուկ ժամկետներ (հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճեր, ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործեր, պարզեցված վարույթ, վերաքննիչ վարույթ, արբիտրաժի և ֆինանսական հաշտարարության հետ կապված վարույթներ և այլն):

Առաջին ատյանի դատարանում գործերի քննության ընդհանուր կարգը.

Նախագծով հստակ իրավական կարգավորման են ենթարկվել հայցի հարուցման, գործը դատաքննության նախապատրաստելու, դատաքննության և վճռահատության փուլերը: Կատարված փոփոխությունները հիմնականում հանգում են հետևյալին.

1. Հստակեցվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը, դրան կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները, հայցադիմումի ընդունումը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու հիմքերը, կարգը և հետևանքները: Մանրամասն կանոնակարգվել են հայցադիմումը վարույթ ընդունելու կարգը և այդ կապակցությամբ դատարանի կողմից կատարվող գործողությունները: Նախատեսվել է հայցադիմումը և կից փաստաթղթերը գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելու հայցվորի պարտականությունը:

2. Ամբողջությամբ վերանայվել է հայցի ապահովման ինստիտուտը՝

- ✓ կարևորվել է հայցի ապահովման հարցը լուծելիս համապատասխան հիմքերի առկայության հարցը.
- ✓ ընդլայնվել է ապահովման միջոցների շրջանակը.
- ✓ մանրամասն կանոնակարգվել է հայցի ապահովման միջոց կիրառելու, մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, ապահովման միջոցը ձևափոխելու կամ վերացնելու վերաբերյալ միջնորդութ-

յան քննության դատավարական կարգը.

✓ նախատեսվել է հայցի ապահովման միջնորդությունը մերժելու, հակընդդեմ ապահովում տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու, ինչպես նաև հայցի ապահովումը վերացնելու մասին դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու հնարավորություն.

✓ ներմուծվել է հայցի նախնական ապահովման ինստիտուտը, որը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման պարտադիր արտադատական կարգ (նեբառյալ արտադատական հաշտարարություն).

✓ նախատեսվել են հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման հետ կապված վնասների հատուցման պահանջով նույն դատարան հայց ներկայացնելու իրավունքը և դրա իրականացման կարգը:

3. Վերանայվել են հայցադիմումի պատասխանին վերաբերող կարգավորումները: Վարույթի սկզբնական փուլում հայցի կապակցությամբ լիարժեք դիրքորոշում ներկայացնելուն դրդելու նկատառումներից ելնելով՝ սահմանվել է, որ հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին չհամապատասխանող պատասխան ներկայացնելու դեպքում այն համարվում է չներկայացված, սակայն առաջին ատյանի դատարանը պարտավոր է պատասխան ներկայացրած անձին տեղեկացնել այդ մասին՝ նրան պարզաբանելով մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը նշված խախտումները վերացնելու իրավունքը: Միաժամանակ Նախագծով վերացվել է գործող օրենսգրքի այն դրույթը, համաձայն որի՝ հայցադիմումի դեմ պատասխան չներկայացնելը կարող է դիտարկվել որպես հայցի հիմքում ընկած փաստերի ընդունում: Նախագծի հայեցակարգային մոտեցումներից մեկն այն է, որ չվիճարկված փաստերն ընդունված համարվել չեն կարող:

4. Հակընդդեմ հայցին նվիրված իրավակարգավորումներում նորույթն այն է, որ այդպիսի հայց կարող է ներկայացվել մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելը: Բացի դրանից՝ նախատեսվել է «պարտադիր հակընդդեմ հայցի» ինստիտուտը: Սահմանվել է, որ եթե հայցի դեմ պաշտպան-

վելու նպատակով պատասխանողը կարող է ներկայացնել սկզբնական հայցի բավարարումը ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառող հակընդդեմ հայց, սակայն տվյալ գործի շրջանակներում նա հայց չի ներկայացրել, ապա նա զրկվում է հետագայում այդպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է սահմանված կարգով հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Ընդ որում, «պարտադիր հակընդդեմ հայց» ներկայացնելու պահանջի խախտմամբ հետագայում հայցադիմում ներկայացնելը Նախագծում դիտարկվում է որպես հայցադիմումի ընդունումը մերժելու և գործի վարույթը կարճելու հիմք:

5. Ի տարբերություն գործող ՔԴՕ-ի՝ Նախագծում առանձին գլխի շրջանակներում կանոնակարգվել են դատական նիստի ընդհանուր կանոնները, որոնք կիրառելի կլինեն դատական վարույթի բոլոր փուլերում անցկացվող նիստերի նկատմամբ:

6. Նախագծի դատական նիստի ընդհանուր կանոններին նվիրված գլխում նախատեսվել է նաև՝

- ✓ դատավարության մասնակիցների իրավունքը՝ մասնակցելու դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ.
- ✓ դատավարության մասնակիցների իրավունքը՝ դատարանին ներկայացնելու իրենց ուժերով կատարված դատական նիստի ձայնագրությունը, տեսագրությունը կամ սղագրությունը:

Համապատասխանաբար Նախագծում կարգավորվել են այդ իրավունքների իրացման պայմանները և/կամ դատավարական կարգը:

7. Նախագծի շրջանակներում էապես բարձրացվել է նախնական դատական նիստի նշանակությունը, և վերանայվել են դրան նվիրված կարգավորումները: Մասնավորապես՝

- ✓ նախնական դատական նիստը պարտադիր է ճանաչվել հայցային վարույթի բոլոր գործերով.
- ✓ հստակ սահմանվել են նախնական դատական նիստի ընթացքում դատարանի կողմից կատարվող գործողությունները և դրանց կատարման հաջորդականությունը.
- ✓ գործը դատաքննության նախապատրաստելու որոշակի ժամկետ չի սահմանվել, նախնական դատական նիստի տևողությու-

նը չի սահմանափակվել, սակայն ողջամիտ ժամկետում գործը դատաքննության լիարժեք նախապատրաստելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նկատառումներից ելնելով՝ գործը քննող դատարանին վերապահվել են մի շարք կազմակերպչական բնույթի լիազորություններ, իսկ գործին մասնակցող անձանց համար սահմանվել են իրենց պահանջները և առարկությունները, ինչպես նաև դրանց հիմքում դրված փաստական և ապացուցողական նյութը ներկայացնելու, նաև լրացնելու և ճշգրտելու, ապացույցներ ձեռք բերելու նպատակով միջնորդություններ ներկայացնելու այնպիսի պայմաններ, որոնք հնարավորինս կբացառեն հայցը փոփոխելու, վարույթի ընթացքում նոր պահանջներ ներկայացնելու, հայցի դեմ առարկելու, այդ առարկությունների դեմ առարկելու, ապացույցներ ներկայացնելու և մի շարք այլ դատավարական իրավունքների հնարավոր չարաշահումները, որոնք դատավարությունը տևական դարձնող հիմնական գործոններից են.

✓ կարևորվել է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը բացառապես նախնական դատական նիստում որոշելու անհրաժեշտությունը, ինչի կապակցությամբ նախատեսվել են այնպիսի կարգավորումներ, որոնք դատարանին թույլ կտան մինչև ապացուցման բեռը բաշխելու մասին որոշում կայացնելը գրեթե վերջնական պատկերացում կազմել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակի վերաբերյալ: Մասնավորապես սահմանվել է, որ՝

ա. հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը,

բ. հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը պատասխանողին տրամադրում է փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ողջամիտ ժամկետ,

գ. պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ

քննելու համար,

դ. վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են հայցադիմում ներկայացնելու միջոցով գործի մեջ մտնել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը,

ե. ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշումը կայացնելուց հետո, որպես ընդհանուր կանոն, գործին մասնակցող անձինք զրկվում են իրենց նյութաիրավական պահանջները և առարկությունները հիմնավորելու համար նոր փաստ վկայակոչելու իրավունքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նոր փաստ վկայակոչելու անհրաժեշտությունն առաջացել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո սահմանված կարգով կատարված դատավարական գործողության կամ միջնորդության քննության արդյունքում,

զ. գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Թվարկված իրավանորմերի նպատակը կողմերի տնօրինչական բնույթի գործողությունների իրականացման ժամկետային սահմանների ռացիոնալ սահմանափակումն է, որը պայմանավորված է վարույթի ընթացքում նոր պահանջներ ներկայացնելու, հայտարարված պահանջները փոփոխելու, ներկայացված պահանջների դեմ առարկելու և, որպես հետևանք, նոր նյութաիրավական փաստեր դատական քննության առարկա դարձնելու և այդպիսով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակի վրա ազդելու՝ հաճախ չհիմնավորված ու ոչ հազվադեպ չարաշահվող հնարավորությունը սահմանափակելու անհրաժեշտությամբ:

Նախագիծը, փաստորեն, պահանջներ ներկայացնելու, ինչպես նաև դրանք հիմնավորելու համար նյութաիրավական փաստեր վկայակոչելու համար սահմանել է որոշակի վերջնաժամկետ, որի լրանալուց հետո, ընդհանուր կանոնի համաձայն, ներկայացված պահանջները դառնում են վերջնական, իսկ կողմերի վրա դրված «հաստատման բեռը»՝ իրենց պահանջները և առարկությունները հիմնավորելու համար նյութաիրավական նշանակություն ունեցող

փաստեր վկայակոչելու հնարավորությունը՝ իրացված.

✓ որպես նման վերջնաժամկետ դիտարկվում է ապացուցման պարտականության բաշխելու մասին որոշման ընդունումը, որով դատարանը սահմանում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, ապացուցման կարիք չունեցող փաստերը, ապացուցման ենթակա փաստերը, գործին մասնակցող յուրաքանչյուր անձի վրա դրված ապացուցման պարտականությունը, ինչպես նաև գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու վերջնաժամկետը.

✓ հստակեցվել են նախնական դատական նիստն ավարտելու հիմքերը և գործը դատաքննության նշանակելու կարգը: Միաժամանակ սահմանվել են նախնական դատական նիստից անմիջապես հետո գործի դատաքննությանն անցնելու պայմանները:

7. Նախագծի շրջանակներում հստակեցվել են հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու և վարույթը կարճելու հիմքերը, կարգը և հետևանքները: Նախատեսվել են նշված դատավարական գործողությունները կատարելու նոր հիմքեր:

8. Վերացվել է հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճելուց հետո նույն անձի դեմ, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու հնարավորությունը:

9. Իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից ելնելով՝ նախատեսվել է, որ՝

ա) հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը նախնական դատական նիստում քննվում է առաջնահերթության կարգով, այն բավարարելու դեպքում առանց գործի այլ փաստերին անդրադառնալու վճռահատության անցնելու նպատակով,

բ) հայցը կամ դիմումն առանձին պահանջի մասով առանց քննության թողնելու կամ գործի վարույթի մի մասը կարճելու հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանն իրավասու է այդ մասով առանձնացնել գործի վարույթը և առանձնացված մասով համապատասխանաբար հայցը կամ դիմումը թողնել առանց քննության կամ կարճել գործի վարույթը,

գ) գործին մասնակցող անձանց մի մասի կողմից հաշտության համաձայնություն ձևակերպելու և ներկայացվելու դեպքում դատա-

րանը գործին մասնակցող այդ անձանց մասով կարող է առանձնացնել գործի վարույթը և գործի առանձնացված մասով կայացնել վճիռ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին:

10. Նախագծում կատարելագործվել են դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, նախատեսվել են գործին մասնակցող անձանց իրավունքն առաջին ատյանի դատարանին ներկայացնելու դատական ակտերի նախագծեր, սահմանափակվել է գործի քննությունը վերսկսելու դատարանի իրավունքը (այն կարող է կատարվել միայն մեկ անգամ), վերանայվել են առաջին ատյանի դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները (հաշտության համաձայնությունը հաստատող վճիռը՝ հրապարակման պահից, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու որոշումը՝ յոթնօրյա ժամկետում):

Հատուկ հայցային վարույթները.

Հատուկ հայցային վարույթների թվին են դասվել և որոշակի առանձնահատկություններով (ներառյալ ի պաշտոնե քննության տարրերով և գործի քննության կրճատ ժամկետներով) կարգավորվել են՝

1) ընտանեկան գործերը,

2) Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերը,

3) առանձին աշխատանքային վեճերով գործերը,

4) կորպորատիվ վեճերով գործերը,

5) խմբային հայցի հիման վրա քննվող գործերը,

6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և անվճարունակ բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային ֆոնդի կառավարչի և ապահովագրական ընկերության ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկումը:

Ի դեպ, թվարկված վարույթները, բացառությամբ վերջինի, նորույթ են Հայաստանի դատավարական օրենսդրության համար:

Հատուկ վարույթները.

Որպես հատուկ վարույթների նոր տեսակ նախատեսվել են՝

1) քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և

(կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործերը,

2) արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ գործերը:

Պարզեցված ընթացակարգեր.

1. Նախագծով նախատեսվել են հետևյալ նոր պարզեցված ընթացակարգերը՝

1) **Հեռակա դատաքննություն,** որն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես քաղաքացիական գործի քննության և լուծման պարզեցված կարգ, որը հայցվորի համաձայնությամբ կիրառվում է այն դեպքերում, երբ դատական նիստի ժամանակի ու վայրի մասին պատշաճորեն ծանուցված պատասխանողը չի ներկայացել դատարան և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու, գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն: Ընդ որում, վարույթի պարզեցումը կատարվում է այն բանի հաշվին, որ դատարանը ստանում է նախապատրաստական փուլում գործի դատաքննությանն անցում կատարելու և գործում առկա ապացույցների հետազոտության արդյունքներով վեճն ըստ էության լուծելու հնարավորություն՝ չկաշկանդվելով պատասխանողի և/կամ նրա դիրքորոշման բացակայությամբ[1]:

2) **Պարզեցված վարույթ,** որը նախատեսված է որոշակի պայմանների առկայության դեպքում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման և օրենքով նախատեսված այլ պահանջներն առանց դատական նիստ հրավիրելու՝ կողմերի ներկայացրած փաստաթղթերի և ապացույցների հիման վրա քննելու համար: Ընդ որում, պարզեցված վարույթը ենթադրում է գործի ըստ էության քննություն և լուծում օրենքով սահ-

[1] Վարույթը մշակելիս հիմք են ընդունվել Քաղաքացիական դատավարության անդրազգային սկզբունքների համապատասխան կարգավորումները, ինչպես նաև եվրոպական երկրների լավագույն փորձը: Տե՛ս http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի փորձագետ, Մաաստրիխտի համալսարանի պրոֆ. Վան Ռիի զեկույցը ՀՀ ՔԴՕ նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ՝ Reform of the Armenian Code of Civil Procedure, **Report by prof. dr. C.H. van Rhee**, Maastricht University, November 2015:

մանված կրճատ ժամկետում և կողմերի մրցակցության ու իրավահավասարության մի շարք երաշխիքների պահպանմամբ[1]:

2. Նախագծում պահպանվել են արագացված դատաքննության ինստիտուտը և վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը, որոնք, սակայն, էապես վերանայվել են: Մասնավորապես հստակեցվել են արագացված դատաքննության կիրառման հիմքերը, կարգը և ժամկետները: Կարգադրության վարույթում կատարելագործվել են վճարման կարգադրություն արձակելու թույլատրելիության պայմանները, հստակեցվել են վճարման կարգադրություն արձակելու դիմումը մերժելու հիմքերը, վճարման կարգադրությունը վերացնելու հիմքերը և կարգը, նախատեսվել են օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությունը բողոքարկելու հիմքերը և կարգը, սահմանվել են վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության կրճատ ժամկետ և պարզեցված կարգ:

Քաղաքացիական դատավարության այլ տարբերակված ձևերը.

Որպես առանձին վարույթներ մանրամասն կանոնակարգումներ են նախատեսվել երեք նոր վարույթներով, որոնք են՝

1) արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու և օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները,

2) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթները,

3) օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը:

Վարույթը Վերաքննիչ դատարանում.

---

[1] Վարույթը մշակելիս հիմք է ընդունվել Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կողմից 2007 թ. հուլիսի 11-ին ընդունված թիվ 861/2007 կանոնակարգը՝ «Փոքր չափի պահանջների քննության մասին», տե՛ս Regulation (EC) No 861/2007 of the European Parliament and of the Council of 11 July 2007 establishing a European Small Claims Procedure,
http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32007R0861&from=EN:

1. Սպառիչ սահմանվել է առաջին ատյանի դատարանի այն դատական ակտերի ցանկը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով:

2. Հստակեցվել են վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը, կարգը և հետևանքները:

3. Ընդլայնվել է այն դատական սխալների շրջանակը, որոնք դատական ակտերի բեկանման անվերապահ հիմք են հանդիսանում:

4. Վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով սահմանվել է վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու հնարավորություն, կարգավորվել են գրավոր ընթացակարգի առանձնահատկությունները:

5. Առանձին դեպքերում Վերաքննիչ դատարանին վերապահվել է իրավունք նիստում հետազոտել ապացույցներ և (կամ) ընդունել նոր ապացույցներ:

6. Վերանայվել են վերաքննության սահմանները, մասնավորապես նախատեսվել են այն դեպքերը, երբ Վերաքննիչ դատարանն իրավունք ունի դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից ու բեկանել դատական ակտը՝ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

7. Ընդլայնվել է Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը: Նախատեսվել է վերաքննիչ բողոքը բավարարելու և առանց վճռի եզրափակիչ մասին անդրադառնալու՝ դրա պատճառաբանական մասը փոփոխելու լիազորությունը: Վերաքննիչ դատարանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել վճիռը՝ առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտած ապացույցների հիման վրա հաստատելով նոր փաստ կամ չհաստատված համարելով դատարանի կողմից հաստատված փաստը, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վարույթը Վճռաբեկ դատարանում.

1. Ամրագրվել են Վճռաբեկ դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված նոր՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառույթից բխող իրավա-

նորմեր՝ հնարավորություն տալով անձանց վճռաբեկ բողոք ներկայացնելու նաև այդ հիմքով:

2. Վերանայվել են վճռաբեկության սահմանները, մասնավորապես նախատեսվել են այն դեպքերը, երբ Վճռաբեկ դատարանն իրավունք ունի դուրս գալ բողոքի հիմքերից և հիմնավորումներից ու բեկանել դատական ակտը՝ անկախ վճռաբեկ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

3. Ընդլայնվել է Վճռաբեկ դատարանի լիազորությունների շրջանակը: Նախատեսվել է վճռաբեկ բողոքը բավարարելու և առանց բողոքարկվող ակտի եզրափակիչ մասին անդրադառնալու դրա պատճառաբանական մասը փոփոխելու լիազորությունը:

Գործերի նոր քննությունը.

1. Սահմանվել են դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանվելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացվելու դեպքում գործը համապատասխան դատարան նոր քննության ուղարկելու կանոններ՝ գործը վարույթ ընդունելու և գործի քննության կարգավորումներ:

2. Սահմանվել են վերադաս դատական ատյանի կողմից բեկանված և նոր քննության ուղարկված գործի քննության ընթացքում փաստական և ապացուցողական նյութեր ներկայացնելու կանոնները: Մասնավորապես ամրագրվել է, որ՝

ա. գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով տվյալ վարույթի համար սահմանված առանձնահատկությունները,

բ. գործի նոր քննության ժամանակ չի կարող փոփոխվել հայցի առարկան կամ հիմքը, ինչպես նաև չի կարող ներկայացվել հակընդդեմ հայց,

գ. դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով,

դ. գործի նոր քննության ժամանակ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար՝ բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում

է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ,

ե. մինչև գործի նոր քննությունը գործով հաստատված փաստերը գործի նոր քննության ժամանակ պարտադիր են դատարանի համար՝ բացառությամբ գործն ամբողջ ծավալով քննելու դեպքերի:

3. Սահմանվել է, որ գործի նոր քննության ժամանակ գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել նոր ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ միայն այն դեպքում, երբ՝

ա. հիմնավորում է, որ ներկայացված նոր ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի նախորդ քննության ժամանակ չի ներկայացվել իր կամքից անկախ պատճառներով.

բ. դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելիս այդ անձի վրա դրել է այնպիսի փաստ ապացուցելու պարտականություն, որը գործի նախորդ քննության ժամանակ նրա վրա չէր դրվել:

4. Նախատեսվել է, որ գործի նոր քննության ժամանակ նոր ապացույց թույլատրելու դեպքում դրանով ապացուցման ենթակա փաստը հաստատող կամ մերժող նոր ապացույց կարող են ներկայացնել նաև գործին մասնակցող մյուս անձինք՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործի նախորդ քննության ժամանակ այդ փաստի ապացուցման պարտականությունը դրված է եղել նրանց վրա:

5. Սահմանվել է կանոն առ այն, որ գործի նախորդ քննությունների ժամանակ չթույլատրված ապացույցները նոր քննության ժամանակ ենթակա չեն հետազոտման և գնահատման՝ բացառությամբ այն դեպքի, երբ դատական ակտը բեկանվել է տվյալ ապացույցը թույլատրված չլինելու հիմքով:

Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած և նոր հանգամանքներով.

Նախագծով առանձնակի ուշադրություն է դարձվել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես քաղաքացիական դատավարության բացառիկ փուլի համապարփակ իրավակարգավորման հիմնահարցերին: Մասնավորապես առաջարկվող լուծումները հանգում են հետևյալին.

1. Սահմանվել է դատական ակտերի սպառիչ շրջանակը, որոնք կարող են վերանայվել այս վարույթի շրջանակներում:

2. Հստակեցվել է վերանայման վարույթի հարուցման համար բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանից բացառելով ՔԴՕ-ում առկա անորոշությունը:

3. Նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի հիմքերը վերանայվել և վերաբաշխվել են այն մեթոդաբանությամբ, որ ի տարբերություն նոր հանգամանքի՝ նոր երևան եկած հանգամանքները պետք է օբյեկտիվ իրականության մեջ առկա լինեն դեռևս գործի քննության ժամանակ: Բացի դրանից՝ նոր հանգամանքների շարքին է դասվել վարչական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչումն այն դեպքում, երբ այդ ակտը դրված է եղել վերանայման ենթակա դատական ակտի հիմքում:

4. Ելնելով վերանայման յուրաքանչյուր հիմքի առանձնահատկություններից՝ նախատեսվել են բողոքարկման ժամկետի հաշվարկման առանձին կարգավորումներ:

5. Համակարգային ամբողջականության մեջ կարգավորվել են վերանայման բողոքի բովանդակության և կից ներկայացվող փաստաթղթերի ցանկին ներկայացվող պահանջները:

6. Ամրագրվել են վերանայման բողոքը վերադարձնելու հիմքերը, կարգը, ինչպես նաև բողոքը կրկին ներկայացնելու կանոնակարգումներ՝ հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի արտահայտած՝ համանման իրավիճակների վերաբերյալ դիրքորոշումները:

7. Հստակ կարգավորում են ստացել վերանայման բողոքի քննության հետ կապված դատավարական իրավահարաբերությունները՝ հնարավորություն նախատեսելով վերանայման բողոքի հիմնավորվածությունը պարզելու նպատակով հետազոտել և գնահատել գործում առկա ապացույցները:

8. Հստակեցվել՝ են դատական ակտը վերանայող դատարանի լիազորությունները՝ ամրագրելով դատական ակտի բեկանման, ինչպես նաև բեկանման և փոփոխման համար ուղենշային կարգավորումներ:

9. Քննարկվող ինստիտուտի դերի և նշանակության հաշվառմամբ այն զետեղվել է վերաքննիչ և վճռաբեկ վարույթներից հետո՝ ընդգծելով քննարկվող ինստիտուտի բացառիկությունը և դատավարական իրավահարաբերությունների զարգացման տրամաբանությունը:

III. Ակնկալվող արդյունքը

Նախագծի շրջանակներում ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու ընթացակարգի կատարելագործման նպատակով նախատեսված իրավակարգավորումները, միտված լինելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ընթացքում վերաբերելի փաստական և ապացուցողական նյութն օպերատիվ և լրիվ ծավալով հավաքելու դատարանի գործառույթը կատարելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն, բավականին լուրջ առաջադիմական քայլ են վարույթի ընթացքի կանխատեսելիության, դատարանի կազմակերպչական գործառույթների ուժեղացման, կողմերի դատավարական կարգապահության աստիճանի բարձրացման, ինչպես նաև դատարանի ու կողմերի դատավարական վարքագծի արդյունքում անհարկի ձգձգվող դատավարությունները կանխելու, ողջամիտ ժամկետում գործի քննություն ու լուծումն իրականացնելու խնդիրների լուծման տեսանկյունից: Նման կարգավորումը, վերջին հաշվով, զգալի չափով կնպաստի նաև դատավորների գերծանրաբեռնվածության, դատական պաշտպանության արդյունավետության և որակի բարձրացման հիմնախնդրի լուծմանը:

Նախագծի ընդունման արդյունքում կստեղծվեն քաղաքացիական դատավարությունում մրցակցության, կողմերի իրավահավասարության, դատավարական խնայողության և գործի՝ ողջամիտ ժամկետում քննության սկզբունքների իրացման, ինչպես նաև գործերի քննության արդյունավետությունը և քաղաքացիական դատավարության կանխատեսելիությունը երաշխավորող նախադրյալներ՝ նպաստելով դատարանի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավմանը:

ПРОЕКТ НОВОГО ГРАЖДАНСКОГО ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: НЕОБХОДИМОСТЬ ПРИНЯТИЯ И ПРЕДЛАГАЕМЫЕ РЕШЕНИЯ

Сергей Мегрян
Заведующий кафедрой гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук, доцент

В рамках представленного доклада рассматривается текущее состояние действующего Гражданского процессуального кодекса Республики Армения, необходимость принятия нового кодекса, а также основные изменения в правовом регулировании гражданско-процессуального порядка судебной защиты, предлагаемые в рамках разработанного при содействии Совета Европы проекта нового ГПК РА.

Обосновывается вывод о том, что разработанный на основе транснациональных стандартов гражданского процесса опыта зарубежных стран, новейших достижений доктрины и анализа практики применения действующего законодательства проект нового ГПК РА можно считать достаточно удачным и в целом соответствующим транснациональным стандартам разрешения гражданских дел. По мнению автора, в случае принятия обсуждаемого кодекса, он будет способствовать повышению эффективности гражданского судопроизводства, существенному снижению судебной нагрузки, сокращению временных и финансовых затрат лиц, участвующих в деле, ускоренному получению судебной защиты и в целом реализации важнейших задач судопроизводства – процессуальной экономии и оптимизации рассмотрения и разрешения гражданских дел.

THE NEW DRAFT CIVIL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA: NECESSITY OF ADOPTION AND SUGGESTED SOLUTIONS

Sergey Meghryan
Head of the YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences, Associate Professor

The current report covers issues in relation to the present Civil Procedure Code of the Republic of Armenia and explains the need for an

adoption of a new code, as well as it examines the main changes with regard to the judicial protection order which have been suggested in the draft code elaborated via the assistance by the Council of Europe.

It has been concluded that the draft Civil Procedure Code which is based on trans-national standards of civil procedure and international practice, as well as the contemporary theoretical approaches complies with the criteria of the Council of Europe and may be generally deemed as successful.

According to the Author, should the draft Civil Code be passed on, it will enhance the efficiency of civil litigation, signifiacntly reduce the workload of the courts, cut the financial costs for the parties and save time both for the court and the parties. It will also help provide judical protection without unreasonable delays through procedural economy, as well as optimisation of examination and settlement of civil cases, and, thus, reach the goals of the lawsuit in an effective fashion.

Բանալի բառեր - քաղաքացիական դատավարություն, դատական պաշտպանություն, արդարադատության արդյունավետություն, քաղաքացիական դատավարության տեսակներ, դատավարության փուլեր, ապացուցման հիմնախնդիրներ, փաստական և ապացուցողական նյութի ներկայացում

Ключевые слова: Гражданский процессуальный кодекс, судебная защита, эффективность правосудия, предсказуемость судопроизводства, виды гражданского судопроизводства, стадии производства, проблемы доказывания, своевременное представление фактического и доказательственного материала

Key words: civil procedure code, judicial protection, effectiveness of justice, predictability of legal proceedings, types of civil litigation, stages of litigation, problems of proof, timely submission of factual and evidence material

ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վահե Հովհաննիսյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի[1] (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության[2] 63-րդ հոդվածի 1-ին մասը, արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ առանձնացնելով ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, պետության համար իրավական համակարգում այն ապահովելու ուղղակի պարտականություն են սահմանում: Ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, հանդիսանալով արդար դատաքննության իրավունքի ֆունկցիոնալ տարր, նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը[3]: Հետևաբար հայրենական իրավական համակարգում պետք է անհրաժեշտ և բավարար կառուցակարգեր ներդրվեն, որոնք ուղղված կլինեն այս իրավունքի ապահովմանը, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի նշված ֆունկցիոնալ տարրի խախտումը կանխարգելելու կամ էլ խախտման բա-

---

[1] Ընդունվել է 4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ: ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:

[2] Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեի միջոցով: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:

[3] Տե՛ս Нешатаева Т.Н. Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт. М.: изд. <Городец>, 2007, էջեր 83-101: Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of the article 6 of Europian Convention on Human Rights. Human rights handbooks, No. 3. Directorate General of Human Rights Coucil of Eorope> 2006, էջեր 25-27: Տեր-Վարդանյան Հ. Մ., Արդար դատաքննության իրավունքի սահմանադրահիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, էջ 111:

ցասական հետևանքները վերացնելու, իրավունքը վերականգնելու արդյունավետ միջոցներ կպարունակեն։

ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությամբ որպես արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանության հիմնական ձև ամրագրվել է դատական ակտի բողոքարկումը։ Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է ինչպես խախտված կամ վիճարկվող նյութական իրավունքի պաշտպանության և վերականգնման խնդրով դատարան դիմելու, այնպես էլ դատական ակտերը բողոքարկելու՝ պետականորեն երաշխավորված հնարավորություն։ Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ անձը գտնում է, որ խախտվել է արդար դատաքննության իր սահմանադրական իրավունքը, այդ թվում՝ դրա օրգանական և ֆունկցիոնալ տարրերից որևէ մեկը, դատական ակտի բողոքարկման միջոցով կարող է պաշտպանել այն։ Ուստի արդար դատաքննության իրավունքը ևս ենթակա է դատական պաշտպանության[1]։ Սակայն գործնականում արդար դատաքննության իրավունքի ոչ բոլոր տարրերն են, որ ներպետական դատական ատյաններում բողոքարկման միջոցով ենթակա են պաշտպանության, կամ էլ բողոքարկումը տվյալ դեպքում կոնվենցիոն իմաստով չի կարող իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց հանդիսանալ։ Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի իրավակարգավորումը սահմանող ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրության, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ նաև ՔԴՕ նախագիծ) նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719, 2010 թ. սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 և 2010 թ. նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշումների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ հայրենական իրավական համակարգում նախատեսված անմիջական կամ ոչ անմիջական «հետաձգված» բողոքարկման ձևերն ուղղված են դատարանի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու միջոցով անձի արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերի դատական պաշտպանությանը։ Ընդ որում, դատարանի անգործությունը վիճարկելու հնարավորության օրենսդրական ամրագրման անհրա-

[1] Առավել մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., 2013, էջեր 100-116։

ժեշտությունն իմաստազուրկ է, այն չունի առարկայական բեռ, քանի որ բողոքարկման օբյեկտ են դատական ակտերը, որոնք բովանդակային առումով ներառում են քաղաքացիական գործի քննության և լուծման հետ կապված դատական գործունեության արդյունքները, ինչպես նաև վարույթի ծագման և արդարադատության իրականացման ընթացքում ընթացակարգային հարցերի կապակցությամբ դատարանի դատողություններն ու եզրահանգումները: Այսինքն՝ դատական ակտի կայացումը ինքնին դատական գործընթացի արդյունք է, որի բացասական հետևանքների իրավաչափությունը կամ անձի իրավունքի վրա ներգործությունը կարելի է վիճարկել և՛ անմիջականորեն, և՛ գործն ըստ էության լուծող (ըստ ՔԴՕ նախագծի՝ նաև ըստ էության չլուծող) դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Ընդ որում, ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրության՝ դատական ակտերի բողոքարկման իրավակարգավորումը սահմանող նորմերի բովանդակությունն ուղղակիորեն բացառում է մինչև գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի կայացումը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հիմքով դատական ակտի բողոքարկման հնարավորությունը: Այս տրամաբանությունն ընկած է նաև ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի հիմքում, իսկ նման պայմաններում գործի քննության ողջամտությունը որոշելու այնպիսի իրավական չափորոշիչներ են սահմանվել (գործի կոնկրետ հանգամանքները՝ ներառյալ իրավական և փաստական բարդությունը, դատավարության մասնակիցների վարքագիծը, և դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը և Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը), որոնք կիրառելի են բացառապես քաղաքացիական գործով վարույթը եզրափակող վերջնական դատական ակտի կայացումից հետո: Հետևաբար ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը գնահատելու և հնարավոր բացասական հետևանքները վերացնելու մասին կարող ենք խոսել միայն վերջնական դատական ակտի կայացումից հետո: Մինչդեռ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման համար անհրաժեշտ է պահպանել ՀՀ քաղաքացիադատավա-

րական օրենսդրությամբ ամրագրված ձևական և բովանդակային պահանջները, որոնք խնդրո առարկայի հետազոտման առումով կարևորվում են հատկապես գործի ելքի վրա ազդեցություն ունեցող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները հիմնավորելու տեսանկյունից, ինչը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման պարագայում անհնար է: Բացի դրանից՝ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում գործի կոնկրետ հանգամանքները՝ նեբառյալ …, *գործի քննության ընդհանուր տևողությունը*: Հետևում է, որ վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյաններում բողոքների քննության ժամանակահատվածը ևս հաշվարկվում է գործի քննության ընդհանուր տևողության մեջ, որի պարագայում դատական ակտի բողոքարկումը ավելի է խորացնելու քննարկվող իրավունքի խախտումը: Եթե կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ապա ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հիմքով դատական ակտը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելը չեն կարող վերացնել իրավունքի խախտումը, կձգձգեն վարույթը, կհակասեն քաղաքացիական դատավարության տրամաբանությանն առ այն, որ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը ձևական նկատառումներով բեկանել չի կարելի:

Իրավաբանական գրականության մեջ բազմիցս քննարկվել և վերլուծվել են քաղաքացիադատավարական վարույթի իրականացման ընթացքում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտող վարքագծի դեմ բողոք բերելու կամ դրանք վիճարկելու իրավակարգավորման առանձնահատկությունները[1], որոնք սակայն, մեր կարծիքով, կարող են խախտել դատավորների անկախության սկզբունքը և խոչընդոտել կոնկրետ քաղաքացիական գործով դատավորի կողմից ներքին համոզմունքի ձևավորմանը: Գործի քննության

[1] Տե՛ս Жмурко С.Е. Поправки в процессуальное законодательство: Федеральным законом от 30.04.2010 N 69-ФЗ «О внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации в связи с принятием Федерального закона «О компенсации за нарушение права на судопроизводство в разумный срок или права на исполнение судебного акта в разумный срок» были внесены изменения в Гражданский процессуальный кодекс РФ. ya-advokat.ru/grazhdanskiy-processrazumnyy-srok-razbiratelstva:

ընթացքում դատավորի գործողությունների դանդաղության դեմ բողոք բերելու հնարավորությունը նախատեսված էր դեռևս Ռուսական Կայսրության քաղաքացիական դատավարության 1864 թ. կանոնագրքով (Գիրք 1-ին, 10-րդ գլուխ, 166-168 հոդվածներ), որտեղ սահմանվել էր այս հիմքով հաշտարար դատավորների ընդհանուր ժողով գանգատ բերելու հնարավորությունը[1]: Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության ժամանակակից օրենսդրության դատավարական նորմերով ևս խնդրո առարկայի նմանատիպ իրավակարգավորում է նախատեսված: Մասնավորապես ««Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կամ ողջամիտ ժամկետում դատական ակտի կատարման իրավունքի խախտման համար հատուցման մասին» ՌԴ օրենքի ընդունման հետ կապված՝ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 30.04.2010 N 69-ՖՕ ՌԴ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվել է, որ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո, եթե երկար ժամանակ գործի դատաքննությունը չի սկսվում, և դատավարությունը ձգձգվում է, շահագրգիռ անձինք իրավունք ունեն դատարանի նախագահին դատավարությունն արագացնելու վերաբերյալ դիմում-բողոք ներկայացնել: Դատարանի նախագահի կողմից դիմում-բողոքի քննությունն իրականացվում է այն ստանալու պահից հնգօրյա ժամկետում, ինչի արդյունքում կայացվում է պատճառաբանված որոշում, որտեղ կարող են նշվել գործով դատական նիստի օրը և (կամ) այն գործողությունները, որոնք անհրաժեշտ է կատարել գործի դատական քննությունն արագացնելու համար[2]: Նման իրավակարգավորումն աներկբայորեն հանգեցնելու է գործը քննող դատավորի անկախության և ինքնուրույնության աստիճանի նվազման, իսկ դատարանի նախագահի կողմից քաղաքացիական գործով կատարման ենթակա դատավարական գործողությունների շրջանակ սահմանելն ընդհանրապես ուղղակի միջամտություն է գործի քննությանը և դատավորի ներքին համոզմունքի ձևավորման գործընթացին: Գտնում

[1] Տե՛ս https://www.prlib.ru/item/372592: Судебные уставы 20 ноября 1864 года: с изложением рассуждений, на коих они основаны: Ч. 1- /изданные Государственной канцелярией. - 2-е издание, дополненное. - С. Петербург : в типографии 2 отделения Собственной Е. И. В. Канцелярии, 1867:

[2] Տես http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_99920/5bdc78bf7e3015a0ea0c0ea5bef708a6c79e2f0a/:

ենք, որ օրենսդրական նման կարգավորում նախատեսելը սահմանադրաիրավական տեսանկյունից ևս չի կարող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց կամ իրավական կառուցակարգ հանդիսանալ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է, որը դատավորի ինստիտուցիոնալ, այդ թվում՝ ներքին անկախությունը երաշխավորող կարևոր հիմնադրույթ է:

Խնդրահարույց է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության կառուցակարգ դիտարկելու վերաբերյալ պնդումը[1]: Ինչպես նախկինում նշել ենք, այս իրավական կառուցակարգը միանշանակորեն կարող է կանխարգելող նշանակություն ունենալ, սակայն իրավունքի խախտումը վերացնելու կամ իրավունքը վերականգնելու արդյունավետ միջոց հանդիսանալ չի կարող, քանի որ դատավորին իր սահմանադրաիրավական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթը բոլորովին այլ խնդրային նշանակություն ունի, իսկ քննարկվող վարույթի արդյունքում էլ այս հիմքով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը դատական ակտի վերանայման և բեկանման համար հիմք հանդիսանալ չի կարող այն պարզ պատճառով, որ իրավական նորմի խախտումը, այդ թվում՝ նոր հանգամանքը հանգեցնում է դատական ակտի բեկանման, եթե ազդել կամ կարող էր ազդել գործի ելքի վրա[2]: Մինչդեռ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը վիճելի նյութական իրավունքի կարգավորման վերաբերյալ դատարանի կողմից արված եզրահանգումների հիմնավորվածության վրա ազդեցություն ունենալ չի կարող, ինչպես և չի կարող կանխորոշել քաղաքացիական գործի ելքը: Այսինքն՝ եթե կարգապահական վարույթի շրջա-

[1] Տե՛ս Տեր-Վարդանյան Հ. Մ., Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2009, էջեր 119-120:

[2] Առավել մանրամասն տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում:

նակներում հաստատվի դատավորի կողմից ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտման փաստը, միևնույն է, նոր հանգամանքով դատական ակտի բեկանման հանգեցնել այն չի կարող, քանի որ բացակայում է գործի ելքի վրա ազդեցությունը կամ նման հնարավորությունը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ իրավական համակարգում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի դատական պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգ կարելի է դիտարկել ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ շահագրգիռ անձի կողմից արդար դատաքննության իրավունքի փաստը հաստատելու և պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դատարան դիմելու հնարավորության իրացումը, որն ուղղված է իրավունքի խախտման բացասական հետևանքների վերացմանը և այս առումով կարող է նաև կանխարգելող նշանակություն ունենալ: Սակայն անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ ***այս կառուցակարգն ուղղված չէ խախտված իրավունքի վերականգնմանը, այլ կրում է կոմպենսացիոն բնույթ և ապահովում է իրավունքի խախտման հետևանքով կրած վնասների հատուցումը***: Ընդ որում, հատուկ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, թե ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը որքանով կարող է գործին մասնակցող անձի իրավունքի խախտման համար ***արդարացի*** փոխհատուցում ապահովել: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցման սկզբունքները: Օրենսգրքի 162.1-ին հոդվածի համաձայն՝ ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ: Եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (սույն օրենսգրքի իմաստով՝ կոնվենցիոն իրավունքների

խախտում), ապա այդ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

Ոչ նյութական վնասի հասկացության և հատուցման սկզբունքների համապարփակ ուսումնասիրությունն ու վերլուծությունը միշտ էլ իրավաբանական գրականության մեջ հայրենական և արտասահմանյան հեղինակների ուշադրության կենտրոնում գտնվող հիմնահարցերից են, իսկ նման պայմաններում ոչ նյութական վնասը բնորոշվում է որպես օրենքով պահպանվող՝ պետության, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների ու շահերի ոտնահարման կամ խախտման հետևանք կամ անբարենպաստ բացասական հետևանք, որ վրա է հասնում օրենքով պահպանվող իրավունքի կամ ոչ նյութական բարիքի խախտման դեպքում[1]: Հետևաբար հարց է առաջանում, թե ոչ նյութական վնասի բնորոշման և հատուցման սկզբունքների օրենսդրական սահմանման պայմաններում որքանով է երաշխավորված խախտված սուբյեկտիվ իրավունքի լիարժեք վերականգնումը: Խնդրո առարկայի քաղաքացիաիրավական վերլուծության և գնահատման արդյունքում Գ. Բեքմեզյանը նշում է, որ ոչ նյութական վնասի հատուցման սահմանումը խիստ սահմանափակ դեպքերի համար, այն էլ բավական սիմվոլիկ գումարով, չի բխում արդարության շահերից, ինչպես նաև չի ապահովում տուժողներին պատճառված վնասի ամբողջական հատուցում: Նման կարգը չի ապահովում նաև վնասի հատուցման ինստիտուտի կանխարգելիչ բնույթը, որի արդյունքում հեղինակն առաջարկում է հայրենական իրավական համակարգ ներդնել կանխարգելիչ վնասի հատուցման ինստիտուտը, ինչը ենթադրում է գումարային հատուցում, որը շնորհվում է տուժողին, դուրս է վնասի պատճառման արդյունքում վերջինիս կրած իրական վնասներից, իսկ դրա նպատակը

[1] Տե՛ս Малеин Н.С., Возмещение вреда, причиненного личности. М. 1965, էջ 5, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երկրորդ մաս, էջ 603, Флейшиц Е.А., Обяазательства из причинения вреда и из неосновательного обогащения. М. 1951г. էջ 20, Белякова А.М., Имущественная ответственность за причинение вреда. М. Юрид. Лит., 1979, էջ 7:

իրավախախտին պատժելն է[1]: Կարևոր է նշել, որ պատժիչ կամ կանխարգելիչ վնասը՝ որպես վնասի հատուցման տեսակ, բխելով ընդհանուր իրավական համակարգից, բացակայում է եվրոպական մի շարք առաջատար երկրների օրենսդրություններում, մասնավորապես՝ Ավստրիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Սկանդինավյան երկրներում և ընդունված չէ նաև Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում: Բացի դրանից՝ այս ինստիտուտի կիրառումը չի կարող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար արդարացի հատուցման արդյունավետ կառուցակարգ հանդիսանալ, քանի որ այն դատական պրակտիկայում կիրառվում է, որպես կանոն, ծառայություններ մատուցող կամ ապրանքներ արտադրող մասնավոր ընկերությունների նկատմամբ (այլ ոչ թե պետության), իսկ որպես պատասխանատվության ենթարկելու չափանիշներ դիտարկվում են իրավունքի կոպիտ չարաշահումը, անբարեխղճությունը, խաբեությունը, բռնությունը, արարքի կամ իրավունքի խախտման հասարակական վտանգավորությունը և այլն: Ուստի կարող ենք եզրակացնել, որ պատժիչ կամ կանխարգելիչ վնասի ինստիտուտը չի կարող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հետևանքով արդարացի հատուցում ապահովելու իրավական կառուցակարգ համարվել այն պարզ պատճառով, որ պետությունը քաղաքացիահիրավական պատասխանատվության այս տեսակի սուբյեկտ չի հանդիսանում:

Բացի դրանից՝ հարկ է նշել նաև, որ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված միայն ոչ նյութական վնասի հատուցումը կոնվենցիոն իմաստով չի կարող դատարան դիմողի համար արդարացի հատուցում ապահովել: Մասնավորապես Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ ձևավորած նախադեպային պրակտիկայում «Վասսերմանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության»[2] գործով նշել է, որ արդարացի հատուցումը ներառում է դիմողին պատ-

[1] Տե՛ս Գ. Բեքմեզյան, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ոչ նյութական վնասի հատուցման մի շարք հարցերի շուրջ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ Եր., ԵՊՀ, 2015, էջեր 190-204:

[2] https://roseurosud.org/r/st-6/st-6a-7/vasserman-protiv-rossii-2.

ճառված նյութական և ոչ նյութական վնասի, ինչպես նաև իրավունքի դատական պաշտպանության հետ կապված ծախսերի հատուցումը, այդ թվում՝ իրավունքի խախտման հետևանքով գույքի արժեքի ամբողջական կամ մասնակի կորուստը, իրական հնարավորության կորուստը, հարկադիր կարգով իրացված կամ օտարված գույքի շուկայական արժեքի և տրամադրված հատուցման բացասական տարբերությունը, անհրաժեշտության դեպքում՝ հաշվարկվող տոկոսագումարները, գործի տևական քննության արդյունքում դիմողի հուզմունքների և ապրումների, կրած տառապանքների, երկարատև անորոշ վիճակի, գործարար համբավին հասցված վնասի հետևանքները, փաստաբաններին վճարված, դատական թղթակցության և գործի վարման հետ կապված ողջամիտ ծախսերը: Ընդ որում, Եվրոպական դատարանի կողմից հատուցման վերաբերյալ որոշման կայացումն ուղղված է իրավունքի խախտման հետևանքների վերացմանը կամ կոմպենսացմանը, եթե իրավունքի խախտման հետևանքները չեն կարող պատասխանող պետության կողմից վերացվել այլ եղանակներով: Եվրոպական դատարանի կողմից իրավունքի խախտման փաստի արձանագրումը պատասխանող պետության համար խախտումը դադարեցնելու և խախտման բացասական հետևանքները փոխհատուցելու պարտավորություն են առաջացնում այնպիսի պայմաններով, որ հնարավորին չափով վերականգնվի մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը (restitutio in integrum), հատուցվեն իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (damnum emergens), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (lucrum cessans)[1]: Հատուցման նպատակը դիմողի համար այնպիսի պայմանների ապահովումն է, որոնք առկա կլինեին, եթե իրավունքի խախտման փաստը տեղի չունենար[2]: Դատարանի կողմից արդարացի հատուցում տրամադրելու

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի «Հունաստանի նախկին թագավորը և ուրիշներն ընդդեմ Հունաստանի» գործով թիվ 25701/94 վճիռ, կետ 72:

[2] Տե՛ս Եվրոպական դատարանի «Պրոդանն ընդդեմ Մոլդովայի» գործով թիվ 49806/99 վճիռ, կետ 70:

չափը որոշելու համար հիմք են հանդիսանում իրավունքի խախտման այն հետևանքները, որոնք պատասխանող պետությունն այլ եղանակներով վերացնել չի կարող[1]:

Հարկ է նշել, որ Եվրոպական դատարանի կողմից իրավունքի խախտման փաստի արձանագրումն ինքնին պատասխանող պետության նկատմամբ *իրավական ներգործության* միջոց է դիտարկվում, և պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հետևանքների վերացման այլ եղանակների առկայության պայմաններում դատարանը բավարարվել է միայն խախտման փաստը հաստատելով՝ առանց հատուցում տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու: Այսինքն՝ դատարանի կողմից դիմողին արդարացի հատուցում տրամադրելն առավելապես ուղղված է ոչ թե պատասխանող պետությանը պատժելուն, այլ դիմողի խախտված իրավունքի վերականգնմանը և խախտման հետևանքները վերացնելուն: Ընդ որում, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման պատասխանատվություն կրում է պետությունը, որից վերջինս կարող է ազատվել, եթե *անհապաղ* ձեռնարկել է հետագա խախտումները բացառելուն ուղղված *արդյունավետ* միջոցներ, որոնք գնահատելու իրավասությունը վերապահված է Եվրոպական դատարանին[2]: Բացի դրանից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման, եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (կոնվենցիոն իրավունքների խախտում): Ինչ-

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի «Սկոզզարին և Գիունտան ընդդեմ Իտալիայի» գործով թիվ 39221/98 և թիվ 41963/98 վճիռներ:

[2] Տե՛ս Եվրոպական դատարանի «Կուդլոն ընդդեմ Լեհաստանի» գործով 26 հոկտեմբերի 2000 թ. թիվ 30210/96 վճիռ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, գիտական խմբագիր՝ Գ. Հարությունյան, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2005, էջեր 212-214:

պես տեսնում ենք, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման մասին այս տեքստում հիշատակում չկա։ Հետևում է, որ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով ոչ նյութական վնասի հատուցման իրավունքն ամրագրելիս հաշվի չեն առել գործի տևական քննության արդյունքում պաշտպանության ենթակա իրավունքի բացասական տրանսֆորմացիայի դեպքերը։

Բացի դրանից՝ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ոչ նյութական վնասի հատուցումը կոնվենցիոն իմաստով ոչ միայն չի կարող դատարան դիմողի համար արդարացի հատուցում ապահովել, այլև խնդրահարույց է իրավականության և դատական ատյանների գործառութային համակարգայնության, ներքին անկախության ապահովման տեսանկյունից։ Մասնավորապես ըստ Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ շահագրգիռ անձի կողմից արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը ճանաչելու և պատճառված ոչ նյութական վնասը հատուցելու պահանջ ներկայացնելու օրենսդրական հնարավորության ամրագրումը ենթադրում է, որ այդպիսի պահանջները ներկայացվելու են առաջին ատյանի դատարան, նման պայմաններում դատարանը պետք է գնահատի հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով քաղաքացիական գործով վճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը՝ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում դատական ակտի վերանայման ժամանակահատվածը ներառյալ։ Եռաստիճան դատական համակարգի գործառնության պարագայում ստացվում է, որ առաջին ատյանի դատարանը արձանագրելու է առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացած դատարաններում, վերաքննիչ դատարաններում և վճռաբեկ դատարանում արդար դատաքննության իրավունքի խախտումները՝ որոշելով գործի քննության տևողության ողջամտությունը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները՝ ներառյալ իրավական և փաստական բարդությունը, դատավարության մասնակիցների վարքագիծը, և դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, հնարավոր սեղմ ժամկետում

գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը և Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

Գտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը ենթակա է վերանայման, նման պայմաններում անհրաժեշտ է ապահովել շահագրգիռ անձանց կողմից ողջամիտ ժամկետում գործի քննության և վերջնական դատական ակտի հարկադիր կատարման իրավունքների խախտման համար արդարացի հատուցումը, ինչպես նաև դատական ատյանների գործառութային համակարգայնությունն ու ներքին անկախությունը:

ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ПРАВА НА РАССМОТРЕНИЕ ДЕЛА В РАЗУМНЫЙ СРОК В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Ваге Оганесян

Профессор кафедры гражданского процесса ЕГУ,

доктор юридических наук

Являясь функциональным элементом права на справедливое разбирательство, право на рассмотрение дела в разумные сроки имеет цель защитить лицо от длительного неопределенного состояния и обеспечить исполнение правосудия без задержек, что может подвергнуть опасности эффективность и надежность рассмотрения дела. В рамках статьи автором проанализированы правовые механизмы защиты права на рассмотрение дела в разумный срок, при этом были выявлены имеющиеся недостатки и законодательные пробелы в отечественной правовой системе касательно предмета проблемы.

Подвергнув системному анализу нормы Гражданского процессуального кодекса РА и проекта судебного кодекса РА, сравнив их с Конституцией РА и Европейской конвенцией, а также с правовыми позициями, имевшими место в решениях Конституционного суда РА и прецедентной практике Европейского суда, было отмечено, что предусмотренное национальным законодательством РА правовое ре-

гулирование является не полным и проблематичным для осуществления эффективной защиты права на рассмотрение дела в разумный срок. При этом, автор удостоил особым вниманием механизмы защиты права на рассматривание дела в разумный срок посредством обжалования судебного акта и привлечения к ответственности судью и пришел к выводу, что в контексте значения предмета проблемы они не могут быть эффективными.

Автор обнаружил, что компенсация нематериального ущерба, предусмотренная частью 4 статьи 12 проекта Судебного кодекса РА, в смысле конвенции не только не в состоянии обеспечить справедливую компенсацию для заявителя в суд, но и проблематична с точки зрения легальности и функциональной системности судебных инстанций и обеспечения внутренней независимости. Было предложено пересмотреть часть 4 статьи 12 проекта Судебного кодекса РА, при этом необходимо обеспечить справедливую компенсацию за нарушение заинтересованными лицами прав на рассмотрение дела в разумный срок и принудительное исполнение окончательного судебного акта, а также функциональную системность и внутреннюю независимость судебных инстанций.

ISSUES REGARDING THE PROTECTION OF THE RIGHT TO HEARINGS WITHIN REASONABLE TIME IN CIVIL PROCESS

Vahe Hovhannisyan
Professor of the YSU Chair of Civil Procedure,
Doctor of Legal Sciences

Being an element of the right to fair hearings, the right to hearings within reasonable time aims to safeguard the stakeholder from a long-lasting uncertainty and to provide the administration of justice without delays so as not to harm the efficiency and credibility of the hearing.

The Author has analysed legal mechanisms in relation to the protection of the right to hearings within reasonable time and, thus, he has demonstrated the relevant legal gaps and shortcomings that exist in the domestic legal system. Through a systematic analysis of the draft Civil

Process and Judicial Codes of the Republic of Armenia, as well as their comparison with the Constitution of the RA, the European Convention, the approaches laid down in the decisions of the Constitutional Court of the RA and the precedents of the ECHR, it has been established that the regulation which is set forth in the Armenian domestic law has gaps and it is problematic in terms of providing effective protection for the right to hearings within reasonable time. What is more, the Author has stressed the legal mechanisms in respect with the protection of the right to hearings within reasonable time through both appealing and imposing disciplinary punishment and, accordingly, he has concluded that they cannot be valuable for the issue in question from the perspectives of its efficiency.

The Author has come to an opinion that the non-material damage envisaged in the draft Judicial Code, Article 12 (4) would not only prevent an applicant from receiving a fair compensation from the perspectives of the Convention, but also this may be considered problematic from the viewpoint of the rule of law, system-based functional activity of the court instances, as well as the independence of the judges. It has been suggested to edit the draft Judicial Code, Article 12 (4) in a fashion as to make it possible a) for the stakeholder to be awarded a fair compensation with regard to violations of the right to hearings within reasonable time and inability of enforcement of final court ruling, and b) to provide system-based functional activity of the court instances and independence of the judges.

Բանալի բառեր - ողջամիտ ժամկետ, իրավունքի խախտում, պաշտպանություն, կարգապահական վարույթ, արդարացի հատուցում, բողոքարկում, ոչ նյութական վնաս
Ключевые слова: разумный срок, нарушение права, защита, дисциплинарное производство, справедливая компенсация, обжалование, нематериальный ущерб
Key words: reasonable time, violation of right, protection, disciplinary proceedings, fair compensation, appealing, non-material damage

ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարդուշ Եսայան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հայցը կառուցվածքային բարդ իրավական կազմավորում է, որի իրավական բնույթը որոշվում է ոչ միայն արտաքին հատկանիշներով, այլև ներքին կառուցվածքով: Յուրաքանչյուր հայց, ուղղված լինելով այս կամ այն անձի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, անհատականացվում է իր տարրերով՝ առարկայով ու հիմքով:

Վերջիններս որոշելու իրավունքը տնօրինչականության սկզբունքի ուժով պատկանում է բացառապես հայցվորին, որն իր կամ, օրենքով նախատեսված դեպքերում, այլ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ դիմում է դատարան:

Դատարան դիմելու սահմանադրական իրավունքը ենթադրում է, որ հայցվորն ինքն է որոշում ընդդեմ ում դիմել դատարան, ինչու և ինչպիսի պահանջով: Ընդ որում, քաղաքացիական դատավարության օրենսդրությունը, հայցը դիտարկելով որպես գործի հարուցման հիմք (ՔԴՕ 3-րդ հոդվ.), նախատեսում է վարույթի ընթացքում այն փոփոխելու հնարավորություն: ՔԴՕ 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի փոխել հայցի հիմքը և առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը:

Փոփոխելով հայցի տարրերը՝ հայցվորը, ըստ էության, հրաժարվում է սկզբնապես ներկայացված հայցից և պահանջում է առանց սկզբնապես ներկայացված պահանջով վարույթը կարճելու քննել փոփոխված հայցը: Հրաժարվելով սկզբնապես առաջադրված պահանջի իրավաչափության վերաբերյալ դատարանի պատասխանը ստանալու իրավունքից՝ հայցվորը միաժամանակ ձեռք է բերում

փոփոխված հայցով վճռահատություն պահանջելու իրավունք[1]:

Ներկայումս դատավարական օրենսդրությունը հայցվորին թույլ է տալիս հայցը փոփոխել առանց կրկնակի հայց ներկայացնելու և պետական տուրք վճարելու՝ դրանով իսկ վերջինիս հնարավորություն տալով վարույթի ընթացքում ուղղելու թույլ տված թերացումները և ամրապնդելու իր իրավական դիրքորոշումը:

Հարուցված հայցը կարող է փոփոխվել ինչպես դրա տարրերը (առարկան, հիմքը) փոփոխելով, այնպես էլ հայցապահանջների չափը ավելացնելով կամ նվազեցնելով: Ընդ որում, առաջին դեպքում, ըստ էության, տեղի է ունենում հայցի որակական, իսկ երկրորդ դեպքում՝ քանակական փոփոխություն[2]: Տվյալ դեպքում խոսքը պատասխանողի դեմ ուղղված նյութահիրավական պահանջն իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված այլ եղանակներով լրացնելու կամ սկզբնապես հայցված պաշտպանության եղանակների մի մասից հրաժարվելու մասին է:

Իրավունքի պաշտպանության եղանակների ավելացման (լրացման) մասին կարելի է խոսել, օրինակ, այն դեպքերում, երբ կնքված գործարքն անվավեր ճանաչելու անվավերության ընդհանուր հետևանքները կիրառելու վերաբերյալ հայցը լրացվում է պատճառված վնասը հատուցելու մասին պահանջով (Քաղ. օր. 307-րդ հոդվ., մաս 1-ին, պարբ. 3-րդ, 308-րդ հոդվ., մաս 1-ին, պարբ. 2-րդ, 309-րդ հոդվ., մաս 1-ին, 310-րդ հոդվ., մաս 1-ին, պարբ. 2-րդ և այլն), փոխառության պարտքը բռնագանձելու մասին հայցը՝ փոխառության պայմանագրով, ինչպես նաև Քաղ. օր. 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու պահանջով (Քաղ. օր. 881-րդ հոդվ., մաս 1-ին), աշխատանքում վերականգնելու մասին հայցը՝ հարկադիր պարապուրդի համար վճարելու պահանջով (Աշխ. օր. 265-րդ հոդվ., մաս 1-ին) և այլն:

Նշված բոլոր դեպքերում իրավունքի պաշտպանության մեկ եղանակը մյուսով չի փոխարինվում, նոր պաշտպանության եղանակները սկզբնապես հայցված եղանակների կիրառումը չեն բացա-

---

[1] Տե՛ս **Русинова Е. Р.,** Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс… к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 113:

[2] Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանցի» հրատ., էջ 259:

ռում: Ընդլայնվում են միայն հայցի առարկայի շրջանակները, և դատարանի մոտ ծագում է ոչ միայն սկզբնապես, այլ նաև լրացուցիչ հայցված պաշտպանության եղանակների իրավաչափությունը ստուգելու և հայցվորի ընդլայնված պահանջներին վճռով պատասխանելու պարտականություն: Հարկ է, սակայն, նկատել, որ լրացուցիչ ներկայացված պահանջները տվյալ վարույթի ընթացքում չներկայացնելը չի բացառում հետագայում դրանք ինքնուրույն հայցի շրջանակներում ներկայացնելու հնարավորությունը: Այսպես՝ աշխատանքում վերականգնվելու պահանջի բավարարումը չի բացառում հետագայում ընդդեմ գործատուի հարկադիր պարապուրդի համար վճարելու, փոխառության գումարը վերադարձնելու պահանջի բավարարումը՝ պայմանագրով և Քաղ. օր. 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու պահանջներ ներկայացնելու հնարավորությունը և այլն:

Ընդ որում, նոր հայցով պաշտպանության լրացուցիչ եղանակները հայցելու հնարավորությունը մեծապես կախված է նախորդ գործով քննված հայցապահանջի իրավաչափությունից, որը պետք է հաստատված լինի հայցը բավարարող վճռով: Այսպես՝ եթե դատարանը մերժել է իրավաբանական անձի մարմնի՝ իր լիազորությունների սահմանազանցմամբ կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջը, հետագայում անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ հայցի ներկայացումն իմաստազրկվում է, թեև դատավարական առումով չի բացառվում:

Իրավունքի պաշտպանության եղանակների շրջանակը պակասեցնելու միջոցով հայցի առարկան փոփոխվում է այն ժամանակ, երբ հայցվորը գործի քննության ընթացքում հրաժարում է սկզբնապես հայցված պաշտպանության եղանակների մի մասից: Հայցի առարկան փոփոխելու տվյալ եղանակի օրինակ կարող է ծառայել այն իրավիճակը, երբ փոքրահասակի կնքած առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու և պատճառված իրական վնասը հատուցելու պահանջներ ներկայացրած հայցվորը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում ինչ-ինչ շարժառիթներով հրաժարվում է փոքրահասակի իրավունքների պաշտպանության այնպիսի եղանակից, ինչպիսին պատճառված իրական վնասի հատուցումն է (Քաղ. օր. 309-րդ, 307-րդ հհ.): Այս դեպքում ևս հայցի էության փոփոխություն տեղի չի ունենում, պաշտպանության ենթա-

կա իրավունքն այլ իրավունքի չի տրանսֆորմացվում: Այդուհանդերձ տեղի է ունենում հայցի առարկայի որակական փոփոխություն այն առումով, որ նեղանում են դրա շրջանակները և, որպես հետևանք, դատական քննության առարկան:

Իրավունքի պաշտպանության եղանակները պակասեցնելու միջոցով հայցի առարկան փոփոխելու կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ պաշտպանության հայցված եղանակից հրաժարվելը չի բացառում այն հետագայում ներկայացնելու հնարավորությունը:

Հայցի առարկայի փոփոխությունը, մասնավորապես՝ դրա նեղացումը, չի կարող նույնացվել հայցից մասնակիորեն հրաժարվելու հետ: Դրանք տարբեր դատավարական գործողություններ են, կատարվում են դատավարության տարբեր կանոնների պահպանմամբ և, համապատասխանաբար, առաջացնում են տարբեր դատավարական հետևանքներ: Այդ կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ հայցի առարկան փոփոխելը՝ դրանից որոշակի պահանջներ հանելու եղանակով չի կարող գնահատվել որպես տվյալ հայցապահանջից հրաժարում[1]:

Հայցից հրաժարվելը նույնական հայցով դատարան դիմելու տեսանկյունից իրավադադարեցնող փաստ է: Հայցի փոփոխումը, ի տարբերություն հայցից հրաժարվելու, ուղղված է իրավունքի պաշտպանության նպատակով հարուցված հայցին օպտիմալ բովանդակություն տալուն և խախտված իրավունքների պաշտպանության դատական միջոցի արդյունավետությունը բարձրացնելուն[2]: Այն միաժամանակ կոչված է ապահովելու դատավարական խնայողության սկզբունքի կենսագործումը:

Դատական պրակտիկայում տեսակետ է ձևավորվել, թե հայցի առարկայի փոփոխություն պետք է համարել նաև վարույթի ընթացքում սկզբնապես ներկայացված հայցապահանջի հետ փոխկապակցված նոր պահանջներ հայցվորի կողմից ներկայացնելը: Նման դիրքորոշումը, մեր կարծիքով, անընդունելի է:

---

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0451/05/08 վարչական գործով 22.04.2010 թ. որոշումը:

[2] Տե՛ս նույն տեղում:

Իրավունքի պաշտպանության եղանակների ավելացման միջոցով հայցի առարկան փոփոխելուց տվյալ իրավիճակը տարբերվում է նրանով, որ այս դեպքում խոսքը գնում է ոչ թե տվյալ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության լրացուցիչ եղանակներով հայցը լրացնելու մասին, այլ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում սկզբնական հայցապահանջների հետ փոխկապակցված, սակայն այլ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված և այլ հիմքեր ունեցող հայցապահանջներ ներկայացնելու մասին:

Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ, օրինակ, սկզբնապես ներկայացված ամուսնալուծության պահանջով վարույթի ընթացքում դատարանները թույլ են տալիս հայցի առարկայի փոփոխման կարգով ներկայացնել նաև ընդհանուր գույքը բաժանելու, երեխային հայցվորի խնամքին հանձնելու կամ ալիմենտ բռնագանձելու պահանջներ:

ՔԴՕ 89-րդ հոդվածի 1-ին մասը հայցվորին իրավունք է վերապահում մեկ հայցադիմումում միացնել միմյանց հետ կապված մի քանի պահանջներ: Տվյալ նորմի ուժով դատարան դիմողը հնարավորություն ունի հայցելու տարբեր՝ միմյանց հետ կապված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանություն՝ իրենց հատուկ պաշտպանության եղանակներով:

Բոլոր այն դեպքերում, երբ միևնույն հայցադիմումի շրջանակներում հայցվորը պատասխանողին ներկայացնում է միմյանց հետ կապված, սակայն միևնույն ժամանակ որոշակի ինքնուրույնությամբ օժտված երկու և ավելի հայցապահանջներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործ է ունենում հայցվորի նախաձեռնությամբ միևնույն հայցադիմումի մեջ միացված երկու և ավելի ինքնուրույն, բայց փոխկապակցված հայցերի, հետևաբար նաև՝ հայցերի առարկաների հետ: Հենց այդ նկատառումներից ելնելով է, որ դատավարագիտության մեջ նման միացումը հաճախ կոչվում է «հայցերի օբյեկտիվ միացում» կամ «միացում ըստ վեճի առարկայի կամ օբյեկտի»[1]:

Ինչպես նշում է Ռ. Գ. Պետրոսյանը, հայցապահանջների նման միացումը հետապնդում է պահանջների բովանդակությամբ և կող-

[1] Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանցի» հրատ., էջ 257:

մերի կազմով միմյանց հետ կապված մի քանի պահանջների, հետևաբար և՝ մի քանի գործերի միաժամանակյա, արագ և ճիշտ քննության, ինչպես նաև միմյանց հետ կապված վեճերով հակասական վճիռների կայացումից խուսափելու նպատակ[1]: ՔԴՕ 89-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը, մեր կարծիքով, միաժամանակ համահունչ է ՀՀ Սահմանադրության 61-րդ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներով սահմանված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներին ու չափորոշիչներին, որոնք իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը: Քննարկվող դրույթը նպատակաուղղված է մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ հայցվորի նախաձեռնությամբ հարուցված գործի շրջանակներում խախտված իրավունքների վերականգնմանը:

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ՔԴՕ 89-րդ հոդվածի 1-ին մասը, հայցվորին իրավունք վերապահելով մեկ հայցադիմումում միացնել միմյանց հետ կապված մի քանի պահանջներ, տվյալ հնարավորությունը նրան տալիս է բացառապես հայցադիմում ներկայացնելիս: Հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո հայցերի օբյեկտիվ միացում կատարելու, սկզբնապես ներկայացված հայցի հետ համատեղ մեկ վարույթի շրջանակներում քննելու նպատակով այլ, թեկուզև փոխկապակցված հայց ներկայացնելու հնարավորություն գործող ՔԴՕ-ն հայցվորի համար չի նախատեսում: Տվյալ իրողությունը, մեր կարծիքով, կարելի է դիտարկել որպես օրենքի էական բաց: Կարծում ենք, որ անձի փոխկապակցված իրավունքների պաշտպանությանն ուղղված փոխկապակցված հայցապահանջներն անխտիր բոլոր դեպքերում որպես միմյանցից տարանջատված առանձին և ինքնուրույն գործերի հարուցման հիմքեր դիտարկելը կարող է հանգեցնել անձի իրավունքների պաշտպանության արդյունավետության, նրա գործի ամբողջական և բազմակողմանի քննության ապահովման դատավարական երաշխիքների խախտման:

[1] Տե՛ս նույն տեղում:

Թերևս դրանով կարող է բացատրվել այն փաստը, որ գործնականում հայցվորները վարույթի ընթացքում նոր, սկզբնականի հետ փոխկապակցված, սակայն այլ իրավունքի պաշտպանությանն ուղղված հայցապահանջները փորձում են «քողարկել» հայցի առարկայի փոփոխման դատավարական ակտով, իսկ դատարաններն էլ, իրենց հերթին, հաճախ թույլատրում են նման փոփոխությունը:

Չնայած կարծում ենք, որ վերը շարադրված նկատառումներից ելնելով՝ հայցվորին նպատակահարմար է վերապահել վարույթի ընթացքում ևս հայցերի օբյեկտիվ միացում կատարելու հնարավորություն, այնուամենայնիվ ձևավորված դատական պրակտիկան համարում ենք անընդունելի: Մեր խորին համոզմամբ՝ հայցերի օբյեկտիվ միացումը չի կարելի դիտարկել որպես հայցի առարկայի փոփոխություն առնվազն այն պատճառով, որ վարույթի ընթացքում այլ, թեկուզև սկզբնականի հետ փոխկապակցված իրավունքի պաշտպանության նպատակով ներկայացված պահանջը ոչ թե որակական փոփոխության է ենթարկում հայցադիմումի շրջանակներում ներկայացված հայցապահանջը, այլ հանդես է գալիս որպես ինքնուրույն հայցի առարկա, որը, ի դեպ, ունի իր հիմքերը:

Այսպես՝ ամուսնալուծության պահանջով հայցը, ուղղված լինելով ամուսնությունը դադարեցնելու սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանը, որևէ որակական փոփոխության չի կարող ենթարկվել նույն վարույթի ընթացքում ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու մասին պահանջ ներկայացնելու պարագայում: Վերջինս, ուղղված լինելով ընդհանուր համատեղ սեփականության մասնակցի՝ իր բաժինն ընդհանուր գույքում որոշելու և այն առանձնացնելու իրավունքի պաշտպանությանը, որևէ կերպ չի ազդում ամուսնալուծության վերաբերյալ հայցի էության վրա, չի խաթարում նրա ներքին նույնությունը, այն որևէ որակական փոփոխության չի ենթարկում:

Կարծում ենք, որ դատավարական օրենքի քննարկվող բացը լրացնելու ընդունելի տարբերակ կարող է համարվել հայցը փոփոխելու իրավունքի հետ մեկտեղ հայցվորին սկզբնական հայցի հետ փոխկապակցված հայց ներկայացնելու իրավունք վերապահելը:

Ընդ որում, նշված հնարավորությունն Օրենսգրքում ամրագրելու դեպքում հարկ կլինի դատարանին վերապահել հայեցողական իրավունք չընդունելու հայցերի նման միացումը, եթե դրանց միջև

առկա չէ փոխադարձ, կապ կամ դրանց համատեղ քննությունը նպատակահարմար չէ: Նման կարգավորումը հնարավորություն կտա բացառելու (չթույլատրելու), օրինակ, գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու մասին (վինդիկացիոն) հայցի հետ համատեղ քննելու նպատակով պայմանագիր կնքելուն հարկադրելու մասին հայցապահանջ ներկայացնելը, կամ աշխատանքում վերականգնելու մասին պահանջով գործի շրջանակներում ընդհանուր բաժնային սեփականությունը բնեղենով բաժանելու պահանջ ներկայացնելը և այլն:

Քաղաքացիադատավարական օրենքում առաջարկվող նման լրացումը, կարծում ենք, լիովին համահունչ է տնօրինչականության և դատավարական խնայողության սկզբունքներին, ինչպես նաև խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության (վերականգնման) միջոցների արդյունավետությունն ապահովելու, սահմանադրական ու միջազգային-իրավական պահանջներին:

Դատավարագիտության մեջ կարծիք կա, որ հայցի առարկան փոփոխվում է նաև այն դեպքերում, երբ հայցվորն ավելացնում կամ նվազեցնում է հայցապահանջների չափը[1]:

ՔԴՕ 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայցվորն իրավունք ունի ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը: Ռ. Գ. Պետրոսյանի բնորոշմամբ՝ տվյալ նորմով օրենսդիրը հնարավորություն է տվել հայցվորին ճշտելու, իրականությանը համապատասխանեցնելու իր պահանջի ծավալը: Ուշագրավ է, որ հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու դեպքում հայցի առարկայի որակական փոփոխություն չի կատարվում, այն սուբյեկտիվ իրավունքը (շահը), որի պաշտպանությամբ հայցվորը դիմել է դատարան, մնում է անփոփոխ, որևէ փոփոխության չեն ենթարկվում այդ իրավունքի պաշտպանության հայցվող միջոցները,

[1] Տե՛ս, օրինակ, **Осокина Г. Л.,** Гражданский процесс: общаячасть. 3-еизд. М., Норма, 2013, էջ 482-483: Ուշագրավ է, որ տվյալ դիրքորոշումն իր արտացոլումն է գտել նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 168-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը:

փոփոխության է ենթարկվում միայն հայցի առարկայի քանակական կողմը:

Դատավարագետները հայցապահանջների չափի ավելացման և նվազեցման հարցի քննարկման ժամանակ ուշադրության առարկա են դարձնում պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքի օբյեկտը՝ այն նյութական կամ ոչ նյութական բարիքները, որոնց կապակցությամբ ծագել է վեճը (վեճի առարկան):

Այդ օբյեկտները հաճախ դիտարկվում են որպես վեճի առարկա: Այդպիսիք են իրերը, դրամը, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները, աշխատանքները, ծառայությունները, ոչ նյութական բարիքները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները, դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները և այլն: Այսպես՝ եթե հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, որպես տվյալ հայցի նյութական օբյեկտ պետք է դիտարկվի հայցադիմումում նշված, անհատականացված անշարժ գույքը, գումարի բռնագանձման մասին հայցում՝ համապատասխան գումարը: Ծնողական իրավունքներից զրկելու մասին հայցապահանջի շրջանակներում որպես հայցի առարկայի անհրաժեշտ տարր (ոչ նյութական բարիք) դիտարկվում են կոնկրետ անձի ծնողական իրավունքները կոնկրետ երեխայի նկատմամբ, ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու պահանջով հայցում՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքները և այլն:

Գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ հայցի նյութական կամ ոչ նյութական օբյեկտը (վիճելի իրավահարաբերության օբյեկտը) չի կարելի նույնացնել հայցի առարկայի հետ: Միևնույն օբյեկտի նկատմամբ կարող են ծագել տարբեր իրավունքներ և պարտականություններ, դրա կապակցությամբ կարող են ներկայացվել տարբեր պահանջներ՝ գույքը հանձնելու, գույքի նկատմամբ իրավունքը ճանաչելու, գույքի կապակցությամբ կնքված գործարքն անվավեր ճանաչելու և այլն, հետևաբար յուրաքանչյուր դեպքում առկա են հայցի տարբեր առարկաներ միևնույն գույքի նկատմամբ: Ուստի հայցի նյութական կամ ոչ նյութական օբյեկտը (վիճելի իրավահարաբերության օբյեկտը) պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքն անհատականացնող տարր է, այն հանդես է գալիս որպես հայցապահանջի բաղկացուցիչ մասերից մեկը:

Բնականաբար վիճելի իրավահարաբերության նյութական կամ ոչ նյութական օբյեկտի փոխարինումը մեկ այլ օբյեկտով ինքնաբերաբար հանգեցնում է հայցի էության փոփոխության, քանի որ արդյունքում փոխվում է այն սուբյեկտիվ իրավունքը, որի պաշտպանության նպատակով ներկայացվել է հայցը: Այս տեսանկյունից նման եղանակով հայցի որակական փոփոխությունն անթույլատրելի է: Այսպես, օրինակ, չի կարող ավտոմեքենան ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու վերաբերյալ հայցը փոփոխվել մեկ այլ գույքի վինդիկացիայի պահանջով:

Երբ ՀՀ ՔԴՕ 32-րդ հոդվածը խոսում է հայցապահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու մասին, նկատի է առնվում բացառապես վեճի նյութական օբյեկտի քանակական կողմի փոփոխությունը: Հասկանալի պատճառներով վեճի ոչ նյութական օբյեկտի քանակական կողմի փոփոխություն տեղի ունենալ չի կարող:

Հետևաբար հայցի առարկայի քանակական կողմի փոփոխությունը հնարավոր է բացառապես գույքային բնույթի պահանջներով՝ այնպիսի պահանջներով, որոնց շրջանակներում հայցվորը պահանջում է պատասխանողից բռնագանձել դրամական միջոցներ, վերցնել տեսակային հատկանիշներով որոշվող գույք, իրավունքում կամ գույքում որոշել բաժնեմաս և այլն: Ընդ որում, մեր կարծիքով՝ թեև հայցապահանջի չափի ավելացումը կամ նվազեցումը հանգեցնում է հայցի առարկայի առերևույթ փոփոխման, վերջինս, ըստ էության, մնում է անփոփոխ: Նման դեպքերում դատարանը գործ է ունենում ոչ թե հայցի առարկայի փոփոխման, այլ գույքային բնույթի պահանջի չափերի պարզ հստակեցման հետ[1]: Այդ մասին է վկայում նաև այն իրողությունը, որ ՔԴՕ 32-րդ հոդվածի 1-ին մասում հայցապահանջի չափն ավելացնելու կամ նվազեցնելու հայցվորի իրավունքը չի ներառվել հայցի առարկան փոփոխելու իրավունքի մեջ, ամրագրվել է առանձին: Դրանով իսկ օրենսդիրը հստակ արտահայտել է դիրքորոշում, որ հայցապահանջի չափն ավելացնելը կամ նվազեցնելը հայցի առարկայի փոփոխության մասնավոր դրսևորում չէ, այն ներ-

[1] Տե՛ս **Ярошенко Т. В.,** Принцип диспозитивности в современном российском гражданском процессе. Дисс… к.ю.н. М., 2007, էջ 102:

կայացված հայցի փոփոխման եղանակ է, որի արդյունքում ավելանում կամ նվազում է պահանջի քանակական կողմը[1]:

Միևնույն ժամանակ հայցապահանջի չափն ավելացնելը կամ նվազեցնելը պետք է համարել ինքնուրույն տնօրինչական գործողություն, քանի որ հայցապահանջը նման եղանակով հաստակեցնելու արդյունքում դատարանի մոտ ծագում է ավելացված կամ նվազեցված չափով հայցվորի պահանջները քննելու և դրանց շրջանակներում վեճը լուծելու պարտականություն: Բացի դրանից՝ հաստակեցված պահանջով վեճի վերաբերյալ նույն անձանց մասնակցությամբ վարույթի կամ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը ՔԴՕ 91-րդ և 109-րդ հոդվածների իմաստով արգելք է հանդիսանում ավելացված կամ նվազեցված չափով նույնական պահանջով միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու համար: Այդ դեպքում քննված (քննվող) և կրկին դատարան ներկայացված հայցերի առարկաների արտաքին նույնությունն ակնհայտ է, քանի որ երկրորդ դեպքում պահանջի չափի ավելացման կամ նվազեցման արդյունքում չեն փոխվում նյութական բարիքի նկատմամբ պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը և ոչ էլ դրա պաշտպանության եղանակը:

Քննարկվող հարցի կապակցությամբ կիսում ենք այն հեղինակների կարծիքը, որոնք հայցի առարկայի փոփոխություն չեն համարում նաև հայցի առարկայի ձևակերպման համապատասխանեցումը փաստացի ներկայացված պահանջին[2]:

Այսպիսով՝ հաշվի առնելով քննարկվող ինստիտուտի վերաբերյալ քաղաքացիական դատավարությունում առկա մոտեցումները և դատական պրակտիկան՝ կարելի է եզրահանգել, որ հայցապահանջի չափն ավելացնելու կամ նվազեցնելու դատավարական գործողությունը ինքնուրույն տնօրինչական ակտ է, քանի որ հայցապահանջը նման եղանակով հաստակեցնելու արդյունքում դատարանի մոտ ծագում է ավելացված կամ նվազեցված չափով հայցվորի պա-

---

[1] Բնականաբար չենք կիսում Գ. Լ. Օսոկինայի այն կարծիքը, ըստ որի՝ հայցապահանջի չափի ավելացումը կամ նվազեցումը հայցի առարկայի փոփոխման տարատեսակներից մեկն է: Տե՛ս **Осокина Г. Л.,** Гражданский процесс: общая часть. 3-е изд. М.: Норма, 2013, էջ 482-483:

[2] Տե՛ս **Արզումանյան Գ. Մ.**, Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ատենախոսություն, Եր., 2006, էջ 126:

հանջները քննելու և դրանց շրջանակներում վեճը լուծելու պարտականություն: Հայցի առարկայի փոփոխման հետ այն նույնացվել չի կարող, քանի որ հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու դեպքում հայցի առարկայի որակական փոփոխություն չի կատարվում, այն սուբյեկտիվ իրավունքը (շահը), որի պաշտպանությամբ հայցվորը դիմել է դատարան, մնում է անփոփոխ, որևէ փոփոխության չեն ենթարկվում այդ իրավունքի պաշտպանության հայցվող միջոցները, փոփոխության է ենթարկվում միայն հայցի առարկայի քանակական կողմը:

ПРОБЛЕМЫ ИЗМЕНЕНИЯ ИСКОВОГО ТРЕБОВАНИЯ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Вардуш Есаян
Доцент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

Работа посвящена изучению проблемы изменения искового требования в гражданском процессе.

Изменяя элементы иска, истец, по существу, отказывается от первоначального искового заявления и без заранее предъявленного требования о прекращении производства, требует рассмотреть видоизменный иск.

В статье утверждается, что возбужденный иск может быть видоизменен посредством изменения его элементов (предмета, основания) и увеличения или уменьшения размера исковых требований. При этом, в первом случае, по существу, происходит качественное, а во втором случае количественное изменение иска.

THE CONCEPTION OF CHANGING THE CLAIM BY ADDING OR DECREASING THE SIZE OF CLAIM IN THE CIVIL PROCEDURE

Vardush Yesayan
Associate Professor at the YSU Chair of the Civil Procedure,
Candidate of Legal Sciences

The presented work concerns the conception and essence of the changing the claim by adding or decreasing the size of claim.

In essence, by changing of the elements of the claim the claimant refuses the originally presented claim and demand to investigate the changed claim without quashing originally presented proceedings of the cases(claims). It is discussed in the work ,that the sued claim can be changed both by changing its elements(subject,basis) and adding or decreasing the size of the claim.

Moreover, in the first case ,in essence, the claim is changed in quality, in the second case it is changed in quantity.

Բանալի բառեր- քաղաքացիական դատավարություն, հայցի առարկա, հայցի փոփոխում, հայցադիմում, հայցի տարրեր, հայցվոր
Ключевые слова: гражданский процесс, предмет иска, измененияиска, исковое заявления, элементы иска, истец
Keywords: civil procedure, subjects matters of claim, change of subject matters of the claim, elements of the claim, claimant

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վահագն Դալլաքյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀՀ Ազգային ժողովը 13.12.2017 թ. ընդունեց «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-309-Ն), որն ուժի մեջ մտավ 08.01.2018 թ.: Օրինագծերի փաթեթը, որում ներառված էին փոփոխություններ և լրացումներ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքում, ուղղված էր կատարողական վարույթի մի շարք խնդիրների լուծմանը, որոնց թվում էր նաև հայցի ապահովման կատարման ժամանակ պատասխանողի գույքի վրա դրվող արգելանքների համաչափության ապահովումը: Նշված խնդիրը ձևակերպվել էր ՀՀ կառավարության 2017 թ. մարտի 2-ի նիստին ՀՀ վարչապետի հնչեցրած հանձնարարականով, որով ՀՀ արդարադատության նախարարին հանձնարարվել էր առաջարկ ներկայացնել հայցի ապահովման շրջանակներում կիրառվող արգելանքների համաչափությունն ապահովելու ուղղությամբ[1]: Ընդունված օրենքի նախագծի հիմնավորման մեջ հղում է կատարված ՀՀ վարչապետի նշված հանձնարարականին, և կրկին ընդգծված է արգելանքների համաչափության ապահովման անհրաժեշտությունը[2]:

Քննարկվող փոփոխություններն ինքնին հիմնականում հաջողությամբ են լուծել առաջադրված՝ արգելանքների համաչափության նորմատիվ կարգավորման հարցը, սակայն հայցի ապահովման կատարման բարեփոխումը, մեր համոզմամբ, պահանջում էր ավելի լայն շրջանակի խնդիրների առաջադրում և լուծում: Հայցի ապահով-

[1] Տե՛ս ՀՀ կառավարության նիստի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը. http://www.gov.am/am/news/item/12851/ (վերջին մուտք՝ 14.01.2018 թ.):

[2] Տե՛ս http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9061&Reading=0 (վերջին մուտք՝ 14.01.2018 թ.):

ման կատարումը՝ որպես ամբողջական ինստիտուտ, դեռևս ունի մի շարք թերություններ, որոնք էապես նվազեցնում են այդ գործընթացի և դրանում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Սույն հոդվածում, բացի օրենսդրական փոփոխություններով տրված լուծումներից, կքննարկենք նաև օրենսդրական և իրավակիրառ այն խնդիրները, որոնք դեռևս առկա են հայցի ապահովման կատարման գործընթացում՝ ընդհանրապես, և հայցի ապահովման կարգով պատասխանողի գույքի վրա արգելանք դնելիս՝ մասնավորապես:

Հայցի ապահովման «գաղտնիության» ապահովումը:

Հայցի ապահովման հիմքը հնարավոր դատական ակտի կատարման դժվարացման կամ վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացման ռիսկն է (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք[1], հոդված 97, 1-ին մաս): Այդ ռիսկն էապես կմեծանա, եթե մինչև հայցի ապահովման կատարումը պատասխանողը տեղեկանա հայցի ապահովման որոշման մասին: Ըստ այդմ, ՔԴՕ-ն նախատեսում է, որ հայցադիմումի հետ միասին ներկայացված հայցի ապահովման միջնորդությունը բավարարվելու դեպքում դատարանը հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին է ուղարկում միայն **հայցի ապահովման որոշումը կատարվելուց հետո** (93-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերություն): Համանման կանոններ նախատեսված են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծում[2]: Փաստորեն նշված նորմերը կոչված են ապահովելու ոչ միայն հայցի ապահովման որոշման, այլ նաև հենց դատական վարույթի գոյության գաղտնիությունը պատասխանողից: Ընդ որում, այդ կանոններից բխում է, որ դատարանը չի կարող շարունակել վարույթը, քանի դեռ չի տեղեկացել հայցի ապահովման կատարման մասին: Այս առումով պետք է պատասխանել երկու հարցի. **ա) ո՞րն է հայցի ապահովման որոշման կատարման պահը, բ) ի՞նչ կարգով պետք է դատարանը տեղեկանա այդ փաստի մասին:**

---

[1] Ընդունվել է 17.06.1998 թ., ՀՕ-247, այսուհետ՝ ՔԴՕ:

[2] Տե՛ս http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=46922 (վերջին մուտք՝ 14.01.2018 թ.), այսուհետ՝ նոր ՔԴՕ նախագիծ:

Առաջին հարցին հստակ պատասխանող իրավական նորմ կամ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում չկա: Առաջին հայացքից հայցի ապահովման որոշման կատարման պահ կարող է համարվել համապատասխան կատարողական վարույթի ավարտը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի[1] 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով (ավարտվել են հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթի պահանջների կատարմանն ուղղված կատարողական գործողությունները): Սակայն պետք է նկատի ունենալ, որ մինչ այդ պատասխանողն արդեն իսկ տեղեկացվում է կատարողական վարույթի ընթացքի մասին՝ սկսած վարույթի հարուցման որոշումից (ԴԱՀԿ մասին օրենք, հոդված 28, 3-րդ մաս), և, ըստ այդմ, իմաստազրկվում են նաև հայցային վարույթի մասին պատասխանողին չծանուցելն ու այն չշարունակելը: Բացի դրանից՝ պատասխանողի գույքի վրա արգելանք դնելու մասին դատարանի որոշումը կատարելիս հարկադիր կատարողը գույքային հիմնական զանգվածի (բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, բաժնետոմսեր, բաժնեմասեր և գրանցվող/հաշվառվող այլ գույք) նկատմամբ արգելանքներ կիրառելու որոշումները կայացնում է կատարողական վարույթ հարուցելու հետ միաժամանակ: Այդ հանգամանքը գրեթե բացառում է պատասխանողի կողմից իր գույքն օտարելու և դրանով հայցի ապահովումն անհնար դարձնելու հնարավորությունը: Այդ հնարավորությունը պատասխանողը տեսականորեն պահպանում է միայն գրանցման ոչ ենթակա գույքի մասով, սակայն պատասխանողի նման վարքագծի կանխումն արդեն հարկադիր կատարողի պատասխանատվության տիրույթում է, քանի որ մեծապես կախված է գրանցման ոչ ենթակա գույքը բացահայտելուն և անհրաժեշտության դեպքում արգելադրելուն ուղղված կատարողական գործողությունների օպերատիվությունից և արդյունավետությունից: Այսպիսով՝ կարծում ենք, որ **ՔԴՕ 93-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման նպատակներով հայցի ապահովման որոշման կատարման պահ պետք է համարել կատարողական վարույթ հարուցելու որոշման օրը:**

[1] Ընդունվել է 05.05.1998 թ., ՀՕ-221, այսուհետ՝ ԴԱՀԿ մասին օրենք:

Ինչ վերաբերում է հայցի ապահովման կատարողական վարույթի հարուցման մասին դատարանի տեղեկացմանը, ապա ոչ ՔԴՕ-ն, ոչ էլ ԴԱՀԿ մասին օրենքը նման տեղեկացման պարտականություն որևէ սուբյեկտի վրա չեն դնում: Արդյունքում կատարողական վարույթի հարուցման մասին դատարանին տեղեկացնելու բեռն ըստ էության մնում է քաղաքացիական գործի վարույթի շարունակմամբ առավել շահագրգռված կողմի վրա. ենթադրվում է, որ կա՛մ հայցվորը, կա՛մ պատասխանողը (որն արդեն հարկադիր կատարողից տեղեկացել է հայցի ապահովման մասին), կա՛մ երկուսն էլ միասին պետք է շահագրգռված լինեն դատական վարույթի շարունակման հարցում, ուստի նրանք էլ կամ նրանցից մեկը դատարանին կներկայացնի կատարողական վարույթ հարուցելու որոշման պատճենը: Իրավակիրառ պրակտիկայում հենց այս տրամաբանությամբ էլ դատարանները հայցի ապահովման որոշումը և կատարողական թերթ(եր)ը հայցվորին ուղարկելիս նշում են կատարողական վարույթի հարուցման մասին դատարանին տեղեկացնելու անհրաժեշտության մասին:

Մինչդեռ վերը նշված տեսական ենթադրությունն իրականում ոչ միշտ է աշխատում: Նախ՝ ինչպես դատարանների, այնպես էլ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գերծանրաբեռնվածության պատճառով դատարանի և հարկադիր կատարողի որոշումները հասցեատերերին հաճախ հասնում են էական ուշացումներով: Երկրորդ՝ ամենևին բացառված չէ, որ հայցվորը, ստանալով հայցի ապահովման կատարողական թերթը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, այն չներկայացնի կատարման, և այս պարագայում, առկա իրավակարգավորումների պայմաններում անհասկանալի է մնում, թե դատարանը որ պահից սկսած պետք է շարունակի վարույթը[1]: Եվ ամենակարևորը՝ դատական վարույթի շարունակմամբ շահագրգռված կարող են լինել նաև գործին մասնակցող այլ անձինք՝ համահայցվորները, համապատասխանողները, երրորդ անձինք, որոնք չեն մասնակցում կատարողական վարույթին և,

[1] Պետք է նշել, որ նոր ՔԴՕ նախագծով այս խնդիրը չի առաջանում, քանի որ դատարանն ինքն է հայցի ապահովման միջնորդության հիման վրա կատարողական թերթն ուղարկում կատարման:

փաստորեն, դատական վարույթի շարունակման հարցում կախված են մնում կատարողական վարույթի կողմերի կամքից:

Թերևս հենց նկարագրված պատճառների համակցության արդյունքում ՔԴՕ 93-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը պրակտիկայում փաստացի չի կիրառվում. դատարանները թեև որոշ դեպքերում, ինչպես վերևում նշվեց, հայցվորին տեղեկացնում են կատարողական վարույթի հարուցման մասին դատարանին տեղեկացնելու անհրաժեշտության մասին, սակայն գործնականում բոլոր դեպքերում դատական վարույթը շարունակում են առանց կատարողական վարույթի հարուցման մասին տեղեկանալու: Այս իրավիճակը, մեր համոզմամբ, վեր է հանում առավել ընդհանուր բնույթի հիմնախնդիր, այն է՝ **դատական գործի (քաղաքացիական կամ վարչական) վարույթի և միջանկյալ դատական ակտի հարկադիր կատարման վարույթի ոչ բավարար փոխհամաձայնեցման խնդիրը**: Հաջորդիվ քննարկենք այդ հարցը:

Դատարանի և քաղաքացիական գործին մասնակցող անձանց (վարչական դատավարության մասնակիցների) ներգրավվածության խնդիրը հայցի ապահովման կատարողական վարույթում:

Հայցի ապահովման որոշումը քաղաքացիական կամ վարչական դատավարությունում կայացվող միջանկյալ դատական ակտ է, իսկ կատարում ենթադրող միջանկյալ դատական ակտերի կատարումը, որպես կանոն, ընթանում է դատավարությանը զուգահեռ և վերջինիս ածանցյալն է: Միջանկյալ դատական ակտերով անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում դատավարության հետագա զարգացման ու գործի (վեճի) ըստ էության լուծման, վճռահատության, դատավարության վերջնական նպատակներին հասնելու համար[1]: Այդ ակտերի վերջնական նպատակը համընկնում է դատավարության վերջնական նպատակների հետ[2]:

Ըստ այդմ, հայցի ապահովման՝ որպես միջանկյալ դատական ակտի կատարման ընթացքն ու արդյունքները կարևոր նշանակութ-

[1] Տե՛ս **Жилин Г. А.,** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. - М.: «Городец», 2000, էջ 59:

[2] Տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 46:

յուն ունեն դատավարությունում նյութաիրավական շահ ունեցող անձանց՝ կողմերի և երրորդ անձանց համար: Վերջիններս, կախված հայցի ապահովման փաստացի ընթացքից, կարող են, օրինակ, դատարանին միջնորդել կիրառել հայցի ապահովման նոր միջոցներ, ձևափոխել կիրառված միջոցները, փոփոխել իրենց նյութաիրավական պահանջները կամ առարկությունները, հրաժարվել դրանցից, նախաձեռնել հաշտության բանակցություններ և այլն: Հաշվի առնելով կողմերի և երրորդ անձանց նյութաիրավական շահերը՝ դատավարական օրենսգրքերը նրանց համար սահմանում են համապատասխան դատավարական իրավունքներ (ՔԴՕ, հոդված 28, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք[1], հոդված 18, հոդված 19, 7-րդ մաս): Մինչդեռ ԴԱՀԿ մասին օրենքը կատարողական վարույթին մասնակցելու համանման իրավունքներ սահմանում է միայն վարույթի կողմերի՝ պահանջատիրոջ և պարտապանի համար (հոդված 8). հայցի ապահովման պարագայում այդպիսիք են հայցվորը, որի պահանջն ապահովելու համար ձեռնարկվել է հայցի ապահովման միջոցը, և պատասխանողը, որի նկատմամբ կիրառվում է հայցի ապահովումը: Այսինքն՝ կատարողական վարույթի կողմ չհանդիսացող համահայցվորները, համապատասխանողները և երրորդ անձինք կատարողական վարույթին մասնակցելու որևէ հնարավորություն չունեն:

Նման նորմատիվ կարգավորումը, մեր համոզմամբ, խախտում է նշված անձանց արդար դատաքննության իրավունքը, քանի որ նրանք հայցի ապահովման կատարման վարույթում զրկվում են իրենց նյութաիրավական շահերը պաշտպանելու ընթացակարգային հնարավորություններից: Կարծում ենք՝ ԴԱՀԿ մասին օրենքը պետք է լրացնել նորմերով, որոնք հայցի ապահովման կատարողական վարույթներին մասնակցելու հնարավորություն կսահմանեն նաև դատական գործի բոլոր կողմերի և երրորդ անձանց համար՝ առանց տնօրինչական գործողություններ կատարելու իրավունքի:

Նմանապես հարկադիր կատարողի համար պետք է սահմանել պարտականություն՝ կատարողական վարույթի հարուցման որոշումն ուղարկելու նաև հայցի ապահովման որոշումը կայացրած դատարանին. ինչպես վերևում քննարկեցինք, նման տեղեկացման ան-

[1] Ընդունվել է 05.12.2013 թ., ՀՕ-139-Ն:

հրաժեշտությունը նախատեսված է ՔԴՕ-ով, սակայն դրա իրականացման արդյունավետ ընթացակարգ ներկայումս չկա:

Արգելանքների կիրառման հերթականություն և համաչափություն: Արգելանքների կիրառման հերթականությունն անհատ ձեռնարկատիրոջ պարագայում:

Ինչպես նշվեց սույն հոդվածի սկզբում, ԴԱՀԿ մասին օրենքում 13.12.2017 թ. ընդունված փոփոխությունների և լրացումների՝ հայցի ապահովման կատարմանը վերաբերող դրույթները հիմնականում ուղղված էին հայցի ապահովման կարգով կիրառվող արգելանքների համաչափությունն ապահովելուն: Մասնավորապես օրենքը լրացվել է 44.3-րդ հոդվածով, որը կարգավորում է հայցի ապահովման կարգով արգելանքների կիրառման առանձնահատկությունները: Նշված հոդվածի 13-րդ մասի ուժով այդ հատուկ կանոնները կիրառվում են նաև վճռի կատարման ապահովման և վարչական մարմնի կողմից կայացված արգելանքի որոշումները կատարելիս: Նախքան օրենսդրական փոփոխությունները քննարկելը հակիրճ անդրադառնանք մինչ այդ գործող այն կարգավորումներին, որոնք կիրառելի էին հայցի ապահովման կարգով պատասխանողի գույքի վրա արգելանքներ կիրառելիս:

Այսպես՝ հայցի ապահովման կատարման դեպքում հարկադիր կատարողը պարտավոր էր կիրառել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հերթականության ընդհանուր կանոնները (ԴԱՀԿ մասին օրենք, հոդված 43, 3-4-րդ մասեր), քանի որ հատուկ կանոններ նախատեսված չէին: Ընդհանուր կանոնների համաձայն՝ առաջին հերթին բռնագանձման ենթակա են պարտապանի դրամական միջոցները, որոնց անբավարարության դեպքում բռնագանձումը տարածվում է այլ գույքի վրա՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանված հերթականության առանձին կանոններով: Այս կանոնները, հիմնականում արդարացված լինելով դրամական միջոցների բռնագանձման կատարողական վարույթների դեպքում, բավական լուրջ խնդիրներ էին առաջացնում հայցի ապահովման ժամանակ, քանի որ դրանց կիրառմամբ պատասխանողի դրամական միջոցները և առավել լիկվիդային այլ գույքը տևական ժամանակով դուրս էին բերվում շրջանառությունից՝ առանձին դեպքերում էապես խոչընդոտելով պարտապանի (հատկապես՝ գործարարական գործունեությամբ զբաղվող) ընթացիկ գործու-

նեությունը: Բացի դրանից՝ թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 18.07.2014 թ. որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման (մեր կարծիքով՝ խիստ վիճելի) համաձայն՝ հարկադիր կատարողն իրավունք չուներ որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքը վերացնել, եթե նույնիսկ վարույթի ընթացքում պարզվում էր, որ արգելանքները կիրառվել են պահանջի չափին անհամաչափ մեծ արժեքով գույքի վրա: Այս դիրքորոշումը լուրջ խոչընդոտ էր կատարողական վարույթում արգելանքների համաչափությունն ապահովելու առումով, քանի որ արգելադրված գույքի արժեքը կարող է պարզվել միայն արգելանքը կիրառելուց հետո՝ վարույթի ընթացքում, և հարկադիր կատարողը պետք է հնարավորություն ունենա արգելադրված գույքի մի մասը հանելու արգելանքից, եթե պարզվի, որ կիրառված արգելանքներն անհամաչափ են: Ասվածը հիմնավորվում է ինչպես **հայցագնի չափով** արգելանք դնելու վերաբերյալ դատավարական նորմով, այնպես էլ ԴԱՀԿ մասին օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընդհանուր նորմով, ըստ որի՝ պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է **այն չափով,** որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար՝ ներառյալ կատարման ծախսերը:

Ինչևէ, կարող ենք փաստել, որ կատարված օրենսդրական փոփոխություններով, համենայնդեպս հայցի ապահովման կատարման մասով, հաղթահարվեց վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշման ազդեցությունը, և ընդհանուր առմամբ նախատեսվեցին հայցվորի և պատասխանողի շահերի արդարացի հավասարակշռություն ապահովող կանոններ, որոնք նախատեսում են հայցի ապահովման կարգով ֆիզիկական և իրավաբանական անձի գույքի վրա արգելանք դնելու հատուկ հերթականություն, ինչպես նաև պատասխանողի միջնորդությամբ արգելադրված գույքն այլ գույքով փոխարինելու, անհամաչափ կիրառված արգելանքների մի մասը վերացնելու կանոններ:

Այնուամենայնիվ, այստեղ ևս մեկ չլուծված խնդիր է մնում: Խոսքն այն դեպքի մասին է, երբ պարտապանը (պատասխանողը) անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ է. ԴԱՀԿ մասին օրենքը չի նախատեսում անհատ ձեռնարկատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելու (արգելանք դնելու) առանձնահատկություններ՝ տեղ թողնելով առավել ընդհանուր նորմերի մեկնաբանութ-

յանը: Մասնավորապես հարց է առաջանում, թե բռնագանձում տարածելու (արգելանք դնելու) ո՞ր հերթականությունն է կիրառելի անհատ ձեռնարկատիրոջ պարագայում՝ ֆիզիկակա՞ն, թե՞ իրավաբանական անձի համար նախատեսված հերթականությունը: «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի[1] 1-ին հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից: Հետևաբար իրավական կարգավորում պահանջող յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշել՝ արդյոք անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ ֆիզիկական անձին բնորոշ իրավական ռեժիմ կիրառելու անհրաժեշտություն բխում է որևէ օրենքից, այլ իրավական ակտից կամ իրավահարաբերության էությունից. եթե ոչ, ապա կիրառելի են իրավաբանական անձանց վերաբերող նորմերը:

Չենք կարող համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք առաջարկում են կատարողական վարույթում առանձնացնել անհատ ձեռնարկատիրոջ՝ անձնական նպատակներով օգտագործվող և գործարարական նպատակներով օգտագործվող գույքը և, ըստ այդմ, անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարկադիր կատարման դեպքում բացառել նրան՝ որպես ֆիզիկական անձի պատկանող գույքի նկատմամբ բռնագանձումը[2]: Ֆիզիկական անձը, հաշվառվելով որպես անհատ ձեռնարկատեր, քաղաքացիական իրավահարաբերությունների նոր սուբյեկտ չի ստեղծում, այլ ընդամենն իրավունք է ստանում զբաղվելու գործարարական գործունեությամբ: Հետևաբար նաև անհատ ձեռնարկատիրոջ գույքը չի առանձնացվում ֆիզիկական անձի գույքից՝ նույն կերպ, ինչպես չի առանձնացվում անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատվությունը ֆիզիկական անձի պատասխանատվությունից: Գույքի և պատասխանատվության առանձ-

[1] Ընդունվել է 03.04.2001 թ., ՀՕ-167:

[2] Տե՛ս **Смола Д. Н.**, Исполнение решений арбитражных судов, дисс. … кандидата юрид. наук. Москва-2006, էջեր 8, 140:

նացումը բնորոշ է իրավաբանական անձին (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք[1], հոդված 50), բայց ոչ անհատ ձեռնարկատիրոջը:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ պարտապան (պատասխանող) անհատ ձեռնարկատիրոջ պարագայում անհրաժեշտ է օրենքով սահմանել նրա գույքի վրա բռնագանձում տարածելու (արգելանք դնելու) հատուկ հերթականություն, քանի որ անհատ ձեռնարկատիրոջ անձնական և գործարարական շահերը համադրված պաշտպանություն են պահանջում: Հակառակ պարագայում, երբ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ կիրառելի ենք համարում ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի համար նախատեսված բռնագանձման (արգելադրման) հերթականությունը, անհատ ձեռնարկատիրոջ անձնական և գործարարական շահերից մեկն անխուսափելիորեն տուժում է՝ ի հաշիվ մյուս շահի[2]:

Հայցի ապահովման վերացումը հայցը բավարարվելու և վճռի հարկադիր կատարման պահանջի բացակայության դեպքում:

ՔԴՕ 101-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Թիվ ԱՐԴ1/0694/02/09 քաղաքացիական գործով 02.05.2012 թ. որոշմամբ մեկնաբանելով նշված դրույթը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է, որ այն պարագայում, երբ հայցը բավարարելու մասին վճռի հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվել, վճիռը կատարվելու դեպքում հայցի ապահովման միջոցը պետք է վերացվի գործը քննած դատարանի որոշմամբ: Իրավակիրառ պրակտիկայում այս դիրքորոշումը կարող է մեկնաբանվել նաև այն կտրվածքով, որ հայցը բավարարվելու, վճիռը կատարվելու և վճռի հիման վրա կատարողական վարույթ հարուցված (վերսկսված) չլինելու պարագայում հարկադիր կատարողը չի կարող իր որոշմամբ վերացնել հայցի ապահովման կարգով կիրառված արգելանքները, այլ դրա համար պետք է պահանջի դատարանի համապատասխան որոշում: Նման մեկնաբանության օգտին անուղղակիորեն կարող է վկայել նաև

---

[1] Ընդունվել է 05.05.1998 թ., ՀՕ-239:

[2] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Դալլաքյան Վ.**, Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ որպես դատական ակտերի հարկադիր կատարման միջոց, ԵՊՀ, Եր., «Հայրապետ» հրատ., 2015, էջեր 122-126:

ԴԱՀԿ մասին օրենքում 13.12.2017 թ. կատարված փոփոխություններով լրացված 67-րդ հոդվածի 11-րդ մասը, որի համաձայն՝ «դատական ակտը հարկադիր կատարման չներկայացնելու ... դեպքում հայցի ապահովմանն ուղղված կատարողական վարույթի կատարողական ծախսերը բռնագանձվում են **հայցի ապահովման վերացման վերաբերյալ դատական ակտի** (ընդգծումը մերն է՝ Վ. Դ.) կատարման վարույթում»: Արդյո՞ք նման իրավիճակում հայցի ապահովման վերացումը հնարավոր է **բացառապես** առանձին դատական ակտի (որոշման) հիման վրա: Նման մեկնաբանությունն անհարկի բեռ կլինի վճիռը կատարած պատասխանողի համար՝ երկարաձգելով արգելանքների վերացումը, և բացի դրանից՝ անտեղի կավելացնի դատարանի ծանրաբեռնվածությունը: Կարծում ենք՝ ՔԴՕ 101-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությունը հայցի ապահովման վերացումն է **օրենքի ուժով՝ առանց դատարանի առանձին որոշման,** հակառակ պարագայում հոդվածի այդ մասի նախատեսումն իմաստազրկվում է, և օրենսդիրը կարող էր սահմանափակվել միայն ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ գործը քննող դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կարող է վերացնել հայցի ապահովումը:

Հարկ է նշել, որ նոր ՔԴՕ նախագիծը չի վերացնում այս անորոշությունը: Մասնավորապես նախագծի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ»: Անհասկանալի է մնում՝ արդյո՞ք մեջբերված դրույթի երկրորդ նախադասությունը վերաբերում է նաև այն դեպքին, երբ վճիռը կատարվել է. եթե այո, ապա ինչու՞ նման միջնորդություն չի կարող ներկայացնել առավել շահագրգիռ անձը՝ պատասխանողը:

Մեր համոզմամբ՝ ՔԴՕ-ն և ԴԱՀԿ մասին օրենքը պետք է նախատեսեն դրույթներ, ըստ որոնց՝

ա) հայցի ապահովումը և դրա հիման վրա կիրառված արգելանքները ցանկացած պարագայում (ինչպես գործի քննության ընթացքում, այնպես էլ վճռի կայացումից հետո), ելնելով տնօրինչականության սկզբունքից, պետք է վերացվեն հայցի ապահովում պահան-

ջած անձի միջնորդությամբ, որը կարող է ուղղվել ինչպես դատարանին, այնպես էլ հարկադիր կատարողին.

բ) հայցը բավարարվելու և վճիռը կատարվելու դեպքում հայցի ապահովման կարգով կիրառված արգելանքները պետք է վերացվեն կողմերից ցանկացածի միջնորդությամբ հարկադիր կատարողի կողմից առանց այդ մասին դատարանի առանձին որոշում պահանջելու:

Կարգավորում պահանջող մեկ այլ դեպք է այն իրավիճակը, երբ հայցի ապահովում կիրառվելուց և հայցը բավարարվելուց հետո պահանջատերը կատարման վաղեմության ընթացքում ինչ-ինչ պատճառներով չի պահանջում վճռի հարկադիր կատարում. արդյո՞ք հայցի ապահովման միջոցներն այս պարագայում պետք է պահպանվեն, և եթե այո, ապա ի՞նչ ժամկետով: Առավել ևս, որ տվյալ իրավիճակում պատասխանողի կողմից վճիռը չկատարելը կարող է պայմանավորված լինել նաև հենց հայցի ապահովման կարգով կիրառված արգելանքներով: Կարծում ենք որ սա ևս մեկ հիմք պետք է լինի հայցի ապահովումն օրենքի ուժով վերացած համարելու համար, քանի որ պահանջատերը, բաց թողնելով վճռի կատարման վաղեմության ժամկետը, արդեն իսկ զրկվում է կիրառված արգելանքների հիման վրա վճռի հարկադիր կատարում պահանջելու հնարավորությունից:

ПРОБЛЕМЫ ИСПОЛНЕНИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ИСКА

Ваагн Даллакян
Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

В статье рассматриваются вопросы исполнения судебных определений по обеспечению иска, в том числе в свете вступивших в силу в начале 2018 г. законодательных изменений касательно данного процесса. Отмечается недостаточный уровень согласования двух взаимосвязанных процессов – гражданского (административного) судопроизводства и исполнительного производства по обеспечению иска. Предлагается установить правила уведомления суда принудительным исполнителем о возбуждении исполнительного производства по обеспечению иска, а также об участии в данном исполнительном производстве всех сторон и третьих лиц судебного процесса. В статье показывается необходимость установления правил об особой очередности наложения ареста на имущество индивидуального предпринимателя с целью уравновешивания личных и предпринимательских интересов последнего. Также в свете судебной практики рассматривается вопрос о снятии арестов после удовлетворения иска в случаях, когда решение суда было исполнено, либо когда взыскатель пропустил срок исполнительной давности.

THE PROBLEMS OF ENFORCEMENT OF PRELIMINARY INJUNCTION

Vahagn Dallakyan
Assistant Professor of the YSU Chair of Civic Procedure,
Candidate of Law

The article deals with the enforcement of court rulings on preliminary injunction including in the framework of the legislative amendments regarding this process that entered into force in the beginning of 2018. The insufficient level of coordination between the two interrelated processes, which are civil (administrative) procedure and enforcement proceedings of preliminary injunction, is highlighted. It is

proposed to set rules on the notification of the court by the enforcement officer regarding the initiation of enforcement proceedings of preliminary injunction as well as on participation to this enforcement proceeding of all parties and third parties of the judicial process.

The necessity of the establishing rules on the special order of arresting the property of the individual entrepreneur is showed having an aim to balance the personal and entrepreneurial interests of the latter. Also, in the light of judicial practice, the issue of removal of arrests is considered in cases when the judgment was executed after the satisfaction of the claim or when the creditor missed the limitation of action.

Բանալի բառեր - հայցի ապահովում, կատարողական վարույթ, արգելանքների համաչափություն
Ключевые слова: обеспечение иска, исполнительное производство, соразмерность арестов
Key words: preliminary injunction; enforcement proceedings; proportionality of arrests

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Օլիմպիա Գեղամյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Ջրօգտագործման հարաբերությունները, հանդիսանալով յուրաքանչյուր պետության տնտեսության ու շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրամասերից մեկը, մշտապես գտնվել ու ներկայումս էլ պետության և հասարակության ուշադրության կենտրոնում են: ՀՀ Սահմանադրության՝ սեփականության երաշխավորման հոդվածում սահմանված է, որ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են[1]: Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունն ու Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած մի շարք միջազգային պայմանագրերը ևս ուղղված են ջրօգտագործման ոլորտի արդյունավետության բարձրացմանն ու ջրային ռեսուրսների պահպանությանը: Իհարկե, թվարկված բոլոր իրավական ակտերը կոչված են համապատասխան գլոբալ ու լոկալ խնդիրների լուծմանը նպաստելու, դրանց հնարավորինս անխոչընդոտ կարգավորմանը, քննարկվող ոլորտում հստակ նպատակների իրագործմանը, բայց և այնպես, առանձին դեպքերում հնարավոր չէ խուսափել համապատասխան սուբյեկտների միջև ծագող վեճերի առաջացումից: Դրանք հիմնականում կապված են վերոհիշյալ ոլորտի բազմաշերտ ու խիստ ծանր հետևանքներ առաջացնող բնույթի հարաբերություններով, իսկ առանձին դեպքերում՝ է կոլոգիական ու տնտեսական շահերի հնարավոր կամ փաստացի բախումով:

Ի տարբերություն, օրինակ, ընդերքի հանքարդյունաբերական պաշարների, որոնք հանդիպում են ընդերքի կոնկրետ, առանձին վայրերում, կամ ի տարբերություն մթնոլորտային օդի, որը տարած-

[1] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510

վում է Երկիր մոլորակից որոշակի հեռավորության վրա, ջրային ռեսուրսները, հսկայական մակերևույթներով տարածված են թե՛ վերգետնյա, թե՛ ստորգետնյա հատվածներում: Հանդիսանալով շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրիչ՝ յուրաքանչյուր երկրում ջրային ռեսուրսները, կապված լինելով բնության մյուս բոլոր բաղադրիչների հետ, կամ որոշակի ազդեցություն են կրում մյուսներից, կամ իրենք կարող են լուրջ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի մյուս բաղադրատարրերի վրա: Խոսքը վերաբերում է ոչ միայն նվազ հետևանքներ առաջացնելու գործընթացներին, այլև, օրինակ, ջրերի կենսածին աղտոտմանը, որը կարող է հանգեցնել անծայրածիր ծանր հետևանքների մարդկանց կյանքի ու առողջության, շրջակա միջավայրի վրա: Դա հիմնականում կարող է առաջանալ մարդկային գործունեության հետևանքով, այսինքն՝ անթրոպոգեն ազդեցությամբ ջրավազաններում մեծ քանակությամբ կենսածին տարրերի (ազոտ, ֆոսֆոր, այլ սննդատարրեր) կուտակման հետ է կապված: Արդյունքում վատանում է ջրի որակը, նվազում է ջրային ավազանի կենսաբազմազանությունը, տեղի է ունենում ընդհուպ գենոֆոնդի կորուստ, նվազում է էկոհամակարգերի ինքնավերականգնման ընդունակությունը: Այս հսկայածավալ գործընթացները ևս կարող են լինել վեճի առարկա: Բնականաբար, բակտերիալ աղտոտված ջրերի հետ անմիջապես շփման դեպքում կարող է զարգանալ համաճարակային հիվանդությունների շարք (խոլերա, դիզենտերիա, բծավոր տիֆ և այլն): Ակնհայտ է, որ ջրօգտագործման բնագավառում թե՛ նախկինում, թե՛ ներկայումս էլ ծագել ու շարունակում են ծագել բազմաթիվ վեճեր, որոնք պարտադիր կարգով պետք է գտնեն համապատասխան լուծումներ: Ընդ որում, ելնելով յուրաքանչյուր պետության և անհատի համար ջրային ռեսուրսների կատարած գերկարևոր գործառույթից, նմանատիպ խնդիրները, առավել ևս դրանցից որոշները, պետք է հնարավորության սահմաններում լուծվեն երկարատև գործընթացներ չպահանջող կանոնակարգով: Ելնելով վերոգրյալ անհրաժեշտությունից՝ ջրօգտագործման հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերը սահմանում են համապատասխան մարմինների ստեղծման և նրանց գործունեության իրավակարգավորումները: ՀՀ ջրային օրենսգրքում[1] օգտագործվող հիմնական հաս-

[1] ՀՀՊՏ 2002.07.10/24 (199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

կացությունները վերտառությամբ 1-ին հոդվածում վեճեր լուծող հանձնաժողով հասկացությունը սահմանված է որպես Ջրի ազգային խորհրդի կազմում գործող հանձնաժողով, որը լուծում է ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճերը, իսկ ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները կանոնակարգող խորհուրդը ՀՀ կառավարությանն առընթեր մարմին է, որը, ըստ նույն օրենսգրքի 111-րդ հոդվածի, ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների գործունեության ընթացքում ծագած վեճերը լուծող մարմին է: Նախ և առաջ անդրադառնալով Վեճեր լուծող հանձնաժողովին՝ նշենք, որ ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 8-ի համաձայն՝ Ջրի ազգային խորհուրդը ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին է, որը միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Ջրի ազգային խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է: Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկված են ՀՀ բնապահպանության նախարարը, ՀՀ գյուղատնտեսության նախարարը, ՀՀ առողջապահության նախարարը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը և մի շարք այլ պետական մարմինների ներկայացուցիչներ:

Ջրի ազգային խորհրդի կազմում ստեղծվում է վեճեր լուծող հանձնաժողովը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ ջրի ազգային խորհրդի կանոնակարգն ու կազմը հաստատվել են ՀՀ վարչապետի 2002 թ. սեպտեմբերի 16-ի N532-Ն որոշմամբ[1], ապա 2017 թ. հունվարի 31-ին կրկին վարչապետի կողմից որոշում է[2] ընդունվել վերոհիշյալ որոշման N 2 հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ: Տեղին ենք համարում ներկայացնել, որ վերոհիշյալի հիման վրա 2002 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ վարչապետն ընդունել է N 614-Ն որոշումը Վեճեր լուծող հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կա-

[1] ՀՀՊՏ 2002.09.25/41 (216), ընդունվել է 16.09.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:
[2] ՀՀՊՏ 2017.02.03/8 (1283), ընդունվել է 31.01.2017, ուժի մեջ է մտել 04.02.2017:

նոնակարգը և կազմը հաստատելու մասին[1], որտեղ մասնավորապես նշվում է, որ հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ջրային օրենսգրքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

Հիշյալ կանոնակարգով սահմանված այլ լիազորությունների շրջանակում կարևոր ենք համարում մատնանշել հետևյալը.

ա. լուծում է ջրային հարաբերություններում ծագած վեճերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որպես կողմ հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը,

բ. առաջարկում է կողմերին փոխադարձ համաձայնությամբ, մինչև հանձնաժողովի կողմից վեճի լուծման մասին որոշում ընդունելը, ձեռնպահ մնալ դատական կարգով լուծելուց…..,

դ. ...անհրաժեշտության դեպքում համապատասխան մարմիններից կարող է պահանջել և ստանալ վեճի լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ…:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի (նախագահի բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալի) ձայնը վճռորոշ է:

Հանձնաժողովի որոշումների չկատարման դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

Հանձնաժողովի որոշումները ստորագրվում են հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Հանձնաժողովի որոշումներին դեմ քվեարկած անդամի կարծիքը կցվում է որոշմանը:

Հանձնաժողովը գործի քննությունը սկսելուց հետո տաս օրվա ընթացքում պարտավոր է ընդունել որոշում:

Կանոնակարգով բավարար հստակությամբ սահմանված են նաև Վեճեր լուծող հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների լիազորությունները[2]:

---

[1]ՀՀՊՏ 2002.11.06/47 (222), ընդունվել է 21.10.2002, ուժի մեջ է մտել 07.11.2002:
[2]ՀՀՊՏ 2002.11.06/47 (222), ընդունվել է 21.10.2002, ուժի մեջ է մտել 07.11.2002:

Ինչպես տեսնում ենք, համապատասխան որոշումը լիովին բովանդակում է օրենքով սահմանված՝ Վեճեր լուծող հանձնաժողովի ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները: Սակայն, պետք է նշել, որ այս մարմնի գործունեության պրակտիկայի վերլուծությունը որոշակի բարդություն է ներկայացնում այն պատճառով, որ այս մարմնի գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն որևէ պաշտոնական էջում տեղադրված չէ, ինչը արդեն իսկ հիմք է տալիս եզրակացնելու, որ կամ քննարկվող ոլորտում վեճեր չեն առաջանում, կամ համապատասխան մարմինը, մեղմ արտահայտված, ոչ կանոնավոր կերպով է իրականացնում իր գործառույթները: Կարծում ենք՝ թե՛ Ջրի ազգային խորհուրդ ստեղծելու, թե՛ Վեճեր լուծող հանձնաժողով ստեղծելու քայլն ի սկզբանե նպատակ է հետապնդել համապատասխան հարցերի կարգավորումը տանել ավելի արդյունավետ ու դինամիկ դաշտ, սակայն, ցավոք, այսօր փաստացի ունենք հետևյալ պատկերը. Ջրի ազգային խորհուրդը ձևավորվելուց հետո իրականացրել է խիստ սահմանափակ գործունեություն, որը բավարարվել է ընդամենը թվաքանակով մի քանի նիստեր գումարելու ձևով: Պետք է նշել, որ Ջրի ազգային խորհրդի վերջին նիստը գումարվել է 2012 թ., ինչը ևս մեկ անգամ հաստատում է այս ոլորտում այս կառույցի ոչ արդյունավետ գործունեության մասին: Ավելին, ինչ վերաբերում է Վեճեր լուծող հանձնաժողովին, ապա այս մարմինը երբևէ որևէ նիստ չի գումարել, ինչը ցավալիորեն ապացուցում է, որ ջրօգտագործման հետ կապված որևէ վեճ այս մարմնի կողմից չի քննարկվել ու լուծում չի ստացել: Մեր խորին համոզմամբ՝ Վեճեր լուծող հանձնաժողովը, ձևավորվելով Ջրի ազգային խորհրդի շրջանակներում, առավել մասնագիտական մոտեցում պետք է ցուցաբերի ոլորտում առաջացող խնդիրներին ու դրանց շուրջ ծագող վեճերին: Այն, համալրված լինելով մասնագիտական բարձր գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներով, կարող է վեճի կողմերի համար առավել ընթեռնելի դարձնել վեճի առարկան: Առավել ևս պետք է հաշվի առնել, որ ջրօգտագործման բնագավառում վեճերը կարող են լինել ամենատարբեր բնույթի, որոնք կարող են պահանջել խորքային գիտելիքներ կոնկրետ բնագավառում: Պրակտիկայի վերլուծությունից պարզ է դառնում, որ այս բնագավառում առաջացող վեճերը կամ ընդհանրապես չեն քննարկվել, կամ խիստ եզակի դեպքերում քննարկվել են դատարանների

կողմից, ինչը ևս այնքան էլ նպատակահարմար չէ, եթե հաշվի առնենք դատարանների ծանրաբեռնվածությունն ու շատ դեպքերում, ցավոք, առանձին նեղ բնագավառի խնդիրներին դատավորների՝ ջրային հարաբերությունների ոլորտում մասնագիտական խորքային գիտելիքների լիակատար չտիրապետելու հանգամանքը: Ջրօգտագործման բնագավառի վեճերի արտադատական լուծման եղանակների հետ կապված՝ ուշադրության արժանի է նաև ՀՀ ջրային օրենսգրքի 111-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության ընթացքում ծագած վեճերը լուծվում են ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները Կանոնակարգող խորհրդի կողմից: Կանոնակարգող խորհրդում կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Ու թեև ՀՀ կառավարությունը 2002 թ. հոկտեմբերի 17-ին ընդունած N1678-Ն որոշմամբ[1] ստեղծել է ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ, հաստատվել է նրա կազմը, սակայն նախ և առաջ պետք է նշել, որ օրենքով ու որոշմամբ նախատեսված և ստորև ներկայացված գործունեության ուղղություններից որևէ մեկը նպատակաուղղված չէ վեճերի լուծմանը: Եվ պետք է ենթադրել, որ այս լիազորությունը ներառված է «օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների» շրջանակում: Ինչ վերաբերում է Կանոնակարգող խորհրդի գործունեության պրակտիկային՝ որպես ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության ընթացքում ծագող վեճերի լուծման մարմնի, ապա, ցավոք, պետք է նշել, որ այս մարմինը ևս պրակտիկայում երբևէ չի քննարկել և լուծել համապատասխան վեճեր: Այս հանգամանքն առավել ակնհայտ է դարձնում, որ ջրօգտագործման բնագավառում ծագող վեճերի լուծման ճակատագիրը ՀՀ-ում հեռու է կայացած լինելուց: Կանոնակարգող խորհրդի գործունեությունը, առավել ևս կոնկրետ վեճերի լուծման ուղղությամբ արվող քայլերի բացակայությունն ապացուցում են, որ այս մարմնի գործունեությունը ևս գնահատվում է, մեղմ ասած, ա-

[1]ՀՀՊՏ 2002.11.13/48(223), ընդունվել է 17.10.2002, ուժի մեջ է մտել 14.11.2002:

նարդյունավետ: Ցանկանալով անդրադառնալ նաև ջրօգտագործողների միջև ծագող հնարավոր վեճերին՝ ներկայացնենք նաև ջրօգտագործողների ընկերությունների անդամների և ընկերության անդամների ու ընկերության վարչական խորհրդի և (կամ) տնօրինության միջև ընկերության գործունեության առարկայի վերաբերյալ ծագած վեճերի քննարկման և լուծման համար ստեղծվող վեճեր լուծող հանձնաժողովները: Մասնավորապես «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների մասին» ՀՀ օրենքի[1] համաձայն՝ կոնկրետ ջրօգտագործողների ընկերությունում և կոնկրետ ջրօգտագործողների ընկերությունների միությունում ստեղծվում է վեճեր լուծող հանձնաժողով: Մասնավորապես ընկերությունների կազմակերպական կառուցվածքը նախատեսող հոդված 12-ի համաձայն՝ ընկերության ժողովն ընտրում է առնվազն 3 անդամից կազմված Վեճեր լուծող հանձնաժողով: Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունների շրջանակում օրենքը սահմանում է Վեճեր լուծող հանձնաժողովի անդամներին ընտրելն ու նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը, Վեճեր լուծող հանձնաժողովի կատարած ծախսերը հատուցելը, վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգը հաստատելը: Ընկերությանը մատակարարված ոռոգման ջրի վճարի, անդամավճարի կամ այլ վճարի պարտք ունեցող անդամները չեն կարող ընտրվել Վեճեր լուծող հանձնաժողովի կազմում: Փաստորեն Վեճեր լուծող հանձնաժողովի անդամների լիազորությունների սահմանները, գործունեության ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ, իսկ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատվող՝ Վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգով: Վեճեր լուժող հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության՝ ընկերության անդամ(ներ)ի դիմումով կամ Ընկերության վարչական խորհրդի և (կամ) տնօրինության նախաձեռնությամբ: Որպես այս մարմնի գործունեության հրապարակայնությունն ապահովող երաշխիքներից մեկը՝ գործում է այն նորմը, ըստ որի՝ Վեճեր լուծող հանձնաժողովի նախագահը պարտավոր է յուրաքանչյուր ջրօգտագործողի ներկայացնել Վեճեր լուծող հանձ-

[1]ՀՀՏՊ 2002.07.10/24 (199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

նաժողովի կանոնակարգը, եթե վերջինս նման ցանկություն է հայտնել: Իրենց խախտված իրավունքը վերականգնելու մասին դիմումներն ընկերության անդամները գրավոր հանձնում են հանձնաժողովի նախագահին, որը տասնօրյա ժամկետում դիմումի քննարկման նպատակով հրավիրում է հանձնաժողովի նիստ: Դիմումի քննարկումը կազմակերպվում է դռնբաց, որի ժամանակ կարող են մասնակցել ընկերության յուրաքանչյուր ջրօգտագործող անդամ, տնօրինության աշխատակից կամ որևէ այլ անձ:

Վեճեր լուծող հանձնաժողովը գործը քննարկում է մեկ նիստով: Անհրաժեշտության դեպքում այն կարող է քննարկել մի քանի նիստով, սակայն ոչ ավել, քան քննարկումը սկսելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, որից հետո հանձնաժողովը կայացնում է որոշում: Կողմերը տեղեկացվում են նիստի անցկացման նպատակի, տեղի ու ժամանակի մասին և պարտավոր են մասնակցել նիստի աշխատանքներին, իսկ եթե հնարավորություն չունեն անձամբ մասնակցելու, ապա նրանց շահերը կարող են ներկայացնել այլ անձինք համապատասխան լիազորագրի առկայության դեպքում: Այն դեպքերում, երբ լսվում է Վեճեր լուծող հանձնաժողովի անդամին վերաբերող վեճը, վերջինս՝ որպես հանձնաժողովի անդամ, չի մասնակցում նիստին և որոշման կայացմանը: Վեճեր լուծող հանձնաժողովի նիստի ընթացքում լսվում են վեճի կողմերի փաստարկները, որոնք կարող են ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Վեճի կողմերը Վեճեր լուծող հանձնաժողովին կարող են ներկայացնել իրենց կարծիքը հիմնավորող ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը: Վեճեր լուծող հանձնաժողովը կարող է կիրառել ընկերության կանոնադրությամբ, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կամ հաստատել համապատասխան պայմանների հիման վրա վեճի կողմերի հաշտությունը: Վեճեր լուծող հանձնաժողովը որոշում է կայացնում՝ հիմք ընդունելով վեճի կողմերի կարծիքները և հիմնավորումները: Վեճեր լուծող հանձնաժողովը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

ա. վերացնել, փոփոխել կամ թողնել առանց փոփոխության վարչական խորհրդի և (կամ) տնօրինության կողմից ընկերության անդամի նկատմամբ կայացված որոշումը,

բ. վերականգնել ընկերության անդամի խախտված իրավունքը, այդ թվում՝ պարտավորեցնել այդ իրավունքը խախտողին կատարել համապատասխան գործողություններ:

Այս մարմնի գործունեության կարևորագույն առավելություններից մի քանիսն ամփոփելով՝ նշենք, որ վեճի քննությունն ու որոշման կայացումը չեն պահանջում երկարատև ժամանակահատված, գործընթացն էլ իրականացվում է հրապարակայնության սկզբունքի առավելագույնս պահպանմամբ: Բացի վերոհիշյալներից՝ կարևոր ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ ջրօգտագործողների ընկերություններում ստեղծված վեճեր լուծող հանձնաժողովները, գործելով տեղում և ավելի քաջատեղյակ լինելով իրավիճակին ու հանգամանքներին, կարող են առավելագույնս նպաստել վեճի լուծմանն ու կողմերի իրավունքների վերականգնմանը: Չնայած օրենքով և բոլոր ջրօգտագործողների ընկերությունների կանոնադրություններում նախատեսված՝ ընկերության վեճեր լուծող հանձնաժողովների դե յուրե գոյությանը՝ պետք է նշել, որ ջրօգտագործողների ընկերություններում նման մարմիններ դե ֆակտո չեն ձևավորվում, և պրակտիկայում դրանք որևէ վեճի լուծում չեն տալիս: Դրա վառ ապացույցն են նրանց պասիվ գործունեությունը, նիստերի արձանագրությունների իսպառ բացակայությունը: Նման հանձնաժողովների բացակայությունը կամ վստահության բացակայությունը դրանց նկատմամբ փաստում է, որ ՀՀ-ում դեռևս ձևավորված չէ ջրօգտագործողների ընկերություններում կազմավորված Վեճեր լուծող հանձնաժողովների կողմից վեճերի լուծման պրակտիկա, ինչը, անկախ պատճառներից, շարունակում է մնալ որպես գերխնդիր:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք փաստել, որ ՀՀ ջրային օրենսգքի, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի և օրենսդրության հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ջրօգտագործման հետ կապված վեճերի քննարկումն ու լուծումը վերապահված են Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովին (ջրօգտագործման թույլտվությունների հետ կապված վեճեր), ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները Կանոնակարգող խորհրդին (ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության

ընթացքում ծագած վեճեր) և ջրօգտագործողների առանձին ընկերությունների և միությունների կազմում ձևավորված վեճեր լուծող հանձնաժողովներին (ընկերության անդամների, ընկերության անդամների և վարչական խորհրդի և (կամ) տնօրինության միջև ընկերության գործունեության առարկայի վերաբերյալ ծագած վեճեր): Ստացվում է, որ դե յուրե ստեղծված են ոլորտի վեճերի լուծման երեք հարթության մարմիններ, մինչդեռ դրանցից ոչ մեկը պրակտիկայում լուծում չի տվել որևէ վեճի:

Հիմք ընդունելով այն պարզ հանգամանքը, որ ջուրը եղել ու մնում է կյանքի ու գործունեության աղբյուր, այն յուրաքանչյուր երկրի տնտեսության ու շուկայական հարաբերությունների կարևորագույն բաղադրատարրերից է, ինչի հետ կապված վեճերը պետք է պարտադիր կարգով գտնեն խելամիտ ու արդյունավետ լուծումներ, գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել արդյունավետ պայմաններ ստեղծել ջրօգտագործողների ընկերություններում վեճեր լուծող հանձնաժողովների ձևավորման և գործունեության համար: Քննարկվող հարցի լուծման համար հնարավոր ուղղություն ենք համարում նաև հաշտարարի ինստիտուտի ներմուծումը, որը՝ որպես իրավական ինստիտուտ, որպես առավել քաղաքակիրթ ու ժամանակակից պահանջներին բավարարող կառույց, հնարավոր է, որ կոչվի հնարավորինս լիարժեք լուծելու մարդու էկոլոգիական իրավունքների ջրային բաղադրիչում ծագող վեճերը: Այս կառույցը, մեր պատկերացմամբ, պետք է ունենա անկախ կառավարման և ֆինանսավորման համակարգ, ինչը հիմնական գրավականն ու երաշխիքը կհանդիսանա ջրօգտագործողների իրավունքների պաշտպանության, վեճերի լուծման գործընթացում: Ավելին, այն լիովին կհամապատասխանի նաև ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի կոնվենցիայի պահանջներին[1], որը Կոնվենցիայի 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների ոչ պատշաճ իրականացման համար նախատեսում է դատարանում կամ օրենքին համապատասխան ստեղծված այլ անկախ և անկողմնակալ մարմնում ընդունված որոշման վերանայման հնարավորություն:

[1] https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf.

Զևավորվելով վերջին ժամանակահատվածում՝ հաշտարարի ինստիտուտը ողջ աշխարհում իր գործունեությունն է ծավալում ամենատարբեր բնագավառներում, այդ թվում՝ ֆինանսական, աշխատանքային, առևտրային, ընտանեկան վեճերի լուծման ուղղությամբ՝ ստանձնելով կենսունակ և նախընտրելի այլընտրանքային կառույցի դեր:

Ի տարբերություն դատական գործընթացների՝ հաշտարարի գրասենյակը գործում է առավել անմիջականության սկզբունքով, վեճերի լուծումն իրականացվում է առավել փակ, որը հանրային քննարկումների առարկա չի դառնում: Ժամկետային առումով ևս հաշտարարի միջնորդությունով վեճի լուծումն իրականացվում է համեմատաբար ավելի սեղմ ժամկետում և պահանջում է ավելի քիչ ծախսեր:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ВНЕСУДЕБНОГО ПОРЯДКА РАЗРЕШЕНИЯ СПОРОВ, СВЯЗАННЫХ С ВОДОПОЛЬЗОВАНИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Олимпия Гегамян
Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

Водные ресурсы являются одной из важнейших составляющих экономики и окружающей среды каждой страны. В связи с этим они всегда были и остаются в центре внимания как отдельных государств, так и международного сообщества. В свою очередь споры, возникающие в сфере водопользования, будучи связанными с существованием и функционированием человека, общества и государства, требуют особого внимания и повышения эффективности механизмов решения.

Данная научная статья посвящена изучению особенностей некоторых механизмов внесудебного разрешения споров, связанных с водопользованием. На основе изучения законодательства данной сферы нами представлены правовые нормы, регулирующие деятельность соответствующих органов. Изучение практики в данной сфере также является основой для более подробного изложения пробелов и недостатков в этой области. В данной научной статье подчерки-

вается необходимость улучшения механизмов, применяемых в данной сфере.

PECULIARITIES OF EXTRAJUDICIAL DISPUTE RESOLUTION IN WATER USE CASES IN THE REPUBLIC OF ARMENIA

Olympia Geghamyan
Lecturer of the YSU Chair of Civil Procedure
Candidate of Legal Sciences

Water resources are vital elements of environment and represent a major economic factor in any country. This explains the enormous attention water resources have historically been exposes to both domestically and internationally. Accordingly, water use disputes require particular focus to improve the efficiency of dispute resolution mechanisms as they are closely linked to existential foundations of humans, societies and states.

The present article is devoted to certain features of extrajudicial dispute resolution mechanisms in water usage trial cases. Based on the analysis of the pertaining legislation an attempt has been made to present regulatory framework applicable to the relevant institutions. In addition, the analysis of the practices being applied in this field allowed us to reveal the gaps and shortcomings in legal regulation. Finally, based on the aforementioned, proposals are made aimed at improving certain mechanism in this field.

Բանալի բառեր - ջրօգտագործման հետ կապված վեճեր, Վեճեր լուծող հանձնաժողով, Ջրի ազգային խորհուրդ, Կանոնակարգող խորհուրդ
Ключевые слова: споры о водопользовании, Комиссия по разрешению споров, Национальный водный совет, Регулирующий совет
Key words: disputes in water use cases, Disputes resolution commission, National water council, Regulatory Board

ԵԱՏՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տիգրան Խաչիկյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Եվրասիական տնտեսական միության *(այսուհետ՝ Միություն)* իրավունքում շարունակաբար տեղի ունեցող փոփոխություններն օբյեկտիվորեն պահանջում են դրանց համարժեք արձագանքում առնվազն առկա խնդիրների վերհանման և դրանց համար համապատասխան լուծումներ առաջադրելու տեսանկյունից: Ասվածն առավել արդիական է թվում հատկապես այն իրողության հաշվառմամբ, որ Հայաստանի Հանրապետության կողմից վարվող մաքսային քաղաքականությունն այլևս իրականացվում է միութենական համագործակցության հիմունքների հաշվառմամբ, իսկ նման իրավիճակի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում հստակորեն զատորոշել մաքսային գործի կազմակերպման և իրավական կարգավորման միութենական և ներպետական ելակետերը:

Հարկ է նկատել, որ արդի պայմաններում Հայաստանի Հանրապետության մաքսային գործի իրավակարգավորմանը վերաբերող գիտագործնական հենքի ձևավորումը և համալրումը դարձել են հրատապ անհրաժեշտություն: Մտահոգությամբ պետք է արձանագրել, որ, թերևս, նաև հենց այդ բազայի սակավության պատճառով է, որ մաքսային մարմին-հայտարարատու հարաբերություններում իրավական կարգավորման կոնկրետ ուղենիշների փոխարեն երբեմն կիրառվում են իրադրային և համակողմանիորեն չմշակված լուծումներ, որի արդյունքը իրավակիրառ պրակտիկայում առաջացող բազմապիսի խնդրահարույց իրավիճակներն են: Խնդիրն ակնհայտորեն համակողմանի է և իրավականից զատ՝ պահանջում է նաև ինստիտուցիոնալ և համալիր լուրջ փոփոխություններ մաքսային վարչարարության շրջանակներում: Այսուհանդերձ, նկատի ունենալով մաքսային գործի իրավակարգավորման հիմքերը որոշակիացնելու և առկա օրենսդրական խնդիրները վերհանելու անհրաժեշտությունը՝ խնդրո առարկա հետազոտության շրջանակներում

առաջնային ուշադրություն է դարձվել հենց մաքսային գործի իրավական կարգավորման ինստիտուտին՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով, «Եվրասիական տնտեսական միության մասին» 29.05.2014 թ. պայմանագրով սահմանված միութենական և ներպետական իրավակարգավորումների համատեքստում:

Պետք է նկատել, որ դեռևս 2009 թ. նոյեմբերի 27-ին ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների մակարդակով ընդունված «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» համաձայնագրի հավելված համարվող Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)[1] 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Մաքսային միությունում մաքսային կարգավորումն իրականացվում է Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան, իսկ այդ օրենսդրությամբ չկարգավորված մասով՝ մինչև Մաքսային միության մաքսային օրենսդրության մակարդակով համապատասխան իրավահարաբերությունների հաստատումը՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:*

Միության օրենսգրքի հիշյալ դրույթի բովանդակությունն առավել ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ է այն վերլուծության առարկա դարձնել «Մաքսային միության օրենսդրություն» հասկացութային բովանդակությունը կազմող բաղադրիչների վերհանման համատեքստում, որոնք ամրագրված են Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ *Մաքսային միության մաքսային օրենսդրությունը բաղկացած է՝*

1) սույն Օրենսգրքից.

2) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերից, որոնցով կարգավորվում են մաքսային իրավահարաբերությունները Մաքսային միությունում.

3) Մաքսային միության հանձնաժողովի՝ Մաքսային միությունում մաքսային իրավահարաբերությունները կարգավորող որոշումներից, որոնք ընդունվում են սույն Օրենսգրքին և Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

---

[1] Ընդունվել է 27.11.2009 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015 թ., ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092):

Վերը հիշատակված օրինադրույթների բովանդակային-համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործի իրավական կարգավորումն ամբողջապես իրականացվում է Միության իրավապայմանագրային բազայի շրջանակներում ձևավորված համապատասխան իրավական ակտերի միջոցով և միայն այն պարագայում, երբ դրանցով կոնկրետ հարցի կարգավորում դեռևս ամրագրված չէ, կիրառելի են համարվում անդամ պետության մաքսային օրենսդրության դրույթները:

Հարկ է նկատել սակայն, որ Օրենսգրքով «Մաքսային միության մաքսային օրենսդրության» հասկացության նման սահմանափակ մեկնաբանումը որևէ կերպ չէր թղթակցում «Եվրասիական տնտեսական միության մասին» 29.05.2014 թ. պայմանագրի *(այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր)* 6-րդ հոդվածի 1-ին մասին, որտեղ Եվրասիական տնտեսական միության իրավունքի շրջանակներում, ի թիվս այլնի, ներառվում են նաև երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերը, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներն ու կարգադրությունները, որոնք ընդունվել են նշված պայմանագրով ու Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում[1]:

Այլ կերպ ասած՝ ստացվում էր, որ Օրենսգրքով մաքսային օրենսդրության շրջանակներում ներառվում էին Միության իրավունքի բաղադրիչ համարվող միայն խիստ որոշակի ակտեր, իսկ նման իրավիճակն ինքնին ընդունելի չէր այն իմաստով, որ ներկայումս մաքսային հարաբերություններ կարգավորվում են նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումներով: Հետևապես ակներև է, որ Օրենսգրքով սահմանված բնորոշումը որևէ կերպ համահունչ չէր առավել բարձր իրավական ուժ ունեցող «Միության մասին» պայմանագրով սահմանված դրույթներին:

[1] Ընդունվել է 29.05.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015 թ., ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092), հոդ. 24:

Քննարկվող տեսակետից պետք է առաջադիմական համարել Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, որի Միությունում մաքսային կարգավորումն իրականացվում է մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին համաձայն (ներառյալ սույն Օրենսգիրքը), և Միության իրավունքի մաս կազմող ակտերին համապատասխան, ինչպես նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան (այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր)[1]:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով չկարգավորված մաքսային իրավահարաբերությունները մինչև այդպիսի միջազգային պայմանագրերով ու ակտերով համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումը կարգավորվում են Միության անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ[2]:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակային-համադրված վերլուծությամբ կարելի է փաստել, որ ներպետական մաքսային օրենսդրությամբ հնարավոր է համապատասխան կարգավորումներ նախատեսել ստորև թվարկված իրավիճակներից որևէ մեկում.

երբ կոնկրետ հարաբերությունը կարգավորված չէ Միության օրենսդրությամբ,

երբ կոնկրետ հարաբերության կարգավորումը թողնված է անդամ պետության օրենսդրությանը:

Առկա իրավիճակում, սակայն, պետք է նկատել, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով համարժեքորեն տեղայնացված չեն խնդրի իրավակարգավորմանը վերաբերող մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով սահ-

[1] Ընդ որում, հատկանշական է, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով «Միության մաքսային օրենսդրություն» եզրույթի փոխարեն արդարացիորեն օգտագործվում է «մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրեր ու ակտեր» հասկացությունը՝ վերացնելով մինչ այդ առկա եզրութաբանական խառնաշփոթը:

[2] Տե՛ս www.eaeunion.org Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայք:

մանված իրավակարգավորումները: Ավելին, դրանով երբեմն սահմանվում են Միության օրենսդրությամբ նախատեսված մոտեցումներից էապես շեղվող կանոնակարգումներ:

Այսպես՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *եթե Միության մաքսային օրենսդրությամբ սահմանված են սույն օրենքով նախատեսված դրույթներից տարբերվող դրույթներ, ապա գերակայությունը տրվում է Միության մաքսային օրենսդրությանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Միության օրենսդրությամբ այդ դրույթների սահմանումը վերապահված է Հայաստանի Հանրապետության ներքին օրենսդրությանը*[1]:

Փաստորեն ներպետական մաքսային օրենսդրությամբ Միության իրավունքի գերակայության սկզբունքը գործում է բացառապես այն պարագայում, երբ Միության օրենսդրությամբ այդ դրույթների սահմանումը վերապահված չէ Հայաստանի Հանրապետության ներքին օրենսդրությանը: Հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության ներքին օրենսդրությամբ սահմանված կարգավորումներն ինքնին գերակա են միութենական կարգավորումների նկատմամբ: Խնդիրն այն է սակայն, որ Օրենքով սահմանված հիշյալ բացառությունն իրականում չի կարող ունենալ գործնական արժեք այնքանով, որքանով եթե որևէ կոնկրետ հարաբերություն կարգավորված չէ Միության օրենսդրությամբ, ապա այլևս չի էլ կարող առաջանալ ներպետական մաքսային օրենսդրության և Միության մաքսային օրենսդրության դրույթների տարբերություն և հակասություն: Հետևապես կարծում ենք, որ Օրենքով սահմանված նշված կարգավորումը չի լուծում որևէ գործնական խնդիր:

Ավելին, Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով ամրագրվել է տրամագծորեն հակառակ մոտեցման մասին ազդարարող դրույթ, որի համաձայն՝ սույն օրենքով *(«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք)* չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում:

[1] Ընդունվել է 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015 թ., ՀՀՊՏ 2014.12.30/76 (1089).1:

Ակներև է, որ յուրաքանչյուր պարագայում Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգավորումը կիրառելի է բացառապես այն դեպքում, երբ կոնկրետ հարցը կարգավորված չէ միութենական օրենսդրությամբ:

Մինչդեռ ներպետական մաքսային օրենսդրությամբ փաստորեն առկա են ճիշտ հակառակ ելակետի իրավական հիմքերը. ներպետական մաքսահիրավական կարգավորումները սոսկ լրացուցիչ նշանակություն ունեն և գործում են բացառապես միութենական կարգավորումների բացակայության պարագայում:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *մինչև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքում անհրաժեշտ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելը չեն կիրառվում միջազգային կազմակերպության մարմնի որոշման այն դրույթները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքին:*

Մինչդեռ Օրենքով սահմանված իրավակարգավորումը հիմնվում է այն սկզբունքի վրա, որ Միության իրավունքը կազմող բոլոր ակտերը, որոնցով կարգավորվում են մաքսային հարաբերություններ, գերակա են ազգային մաքսային օրենսդրության համեմատ:

Կարծում ենք, որ քննարկվող խնդրի պատշաճ իրավակարգավորումն ունի չափազանց կարևոր նշանակություն Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ գործնականում առաջացող զանազան խնդիրներին օպերատիվ լուծում տալու անհրաժեշտությամբ պայմանավորված: Ասվածն առավել արդիական է թվում հատկապես այն իրողության հաշվառմամբ, որ մաքսային իրավունքի ոլորտում կոնկրետ խնդրի իրավակարգավորման հնարավորության մասին վերլուծություններում միշտ չէ, որ առաջնային քննարկման առարկա է դառնում այն հարցադրումը, թե իրավական տեսակետից նշված հարցը հնարավոր է արդյոք կարգավորել ներպետական մակարդակում, թե արդեն իսկ այն հանձնված է Միության իրավասությանը: Այս իմաստով ուշագրավ է, որ Գ. Բ. Դանիելյանը, անդրադառնալով ներպետական իրավական համակարգում ԵԱՏՄ որոշումների իրավական արժեքի հետ կապված մի շարք խնդրահարույց հարցադրումներին, արձանագրում է, որ նշված հարցադրումները ձեռք են բերել աննախադեպ հրատապություն, իսկ

դրանց առնչությամբ համալիր հետազոտական նյութի բացակայությունը գործնականում հանգեցրել է մի իրավիճակի, երբ լուծումներ ակնկալվում են այն հարթությամբ և այնպիսի եղանակներով, որոնք խոսում են ոչ այնքան խնդրի լուծումը համակարգված պատկերացնելու, որքան սոսկ իրավիճակային տարբերակներ առաջադրելուն նախապատվություն տալու մասին[1]:

Ուշագրավ է նաև, որ վերը հիշատակված իրավիճակն Օրենքով սահմանված և մաքսային գործի կարգավորման տեսակետից տարընթերցում հարուցող միակ դեպքը չէ:

Այսպես՝ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան, իսկ Միության օրենսդրությամբ չկարգավորված մասով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:*

Միաժամանակ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքին, Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան:*

Վկայակոչված օրինադրույթների բովանդակային-համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ դրանք թեպետ վերաբերում են միևնույն կարգավորման առարկային, այսուհանդերձ մատնանշում են սկզբունքորեն տարբեր կարգավորումներ: Եվ սա այն պարագայում, երբ «Միության մաքսային սահման» և «Հայաստանի Հանրապետության մաքսային սահման» հասկացությունները հարաբերակցվում են որպես մասը և ընդհանուրը:

Այսպես՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Միության մաքսա-*

[1] Տե՛ս Գ. Բ. Դանիելյան, ԵԱՏՄ մարմինների որոշումների իրավական արժեքը ներպետական իրավական համակարգում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 70:

չին սահմանն են համարվում Միության մաքսային տարածքի սահմանագծերը (…):

Նույն հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ Միության մաքսային տարածքը կազմում են անդամ պետությունների տարածքները *(…):*

Ուստիև գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործի կազմակերպման հարցում առկա հիշյալ անորոշությունը ևս ենթակա է վերացման: Հակառակ դեպքում ստացվում է, որ սկզբունքորեն նույն, ընդ որում, խիստ էական հարցի առնչությամբ Օրենքում առկա են տրամագծորեն իրար հակասող երկու դրույթներ:

Միության իրավունքի և ներպետական մաքսային օրենսդրության հարաբերակցության հարցի պարզաբանման իմաստով էական է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ԵԱՏՄ մարմինների որոշումների անմիջական գործողության հարցի քննարկումը: Ավելորդ չէ հիշատակել այն իրողությունը, որ խնդրո առարկա հանգամանքը ևս ունի առանցքային նշանակություն մաքսային գործի արդյունավետ կազմակերպման իմաստով այնքանով, որքանով ԵԱՏՄ մարմինների որոշումներն անմիջական ազդեցություն ունեն մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավական կարգավիճակի վրա, և դրանով պայմանավորված՝ անհրաժեշտ է պարզել՝ դրանք անմիջական կիրառման ենթակա իրավական ակտե՞ր են, թե՞ այսուհանդերձ ենթադրում են համապատասխան ներպետական միջոցառումների իրականացում:

Այսպես՝ «Միության մասին» պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են անդամ պետությունների կողմից դրանց՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով կատարման:

«Միության մասին» պայմանագրի հիշյալ դրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ Միության իրավունքի բաղադրիչ համարվող երկու տեսակի իրավական ակտերը՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները, ի տարբերություն Միության իրավունքի մյուս բաղադրիչների, ունեն անմիջական կիրառման առանձ-

նահատակություն: Դրանք ենթակա են կատարման անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով: Այլ կերպ ասած՝ եթե Միության շրջանակներում կամ երրորդ կողմի հետ կնքվող Միության միջազգային պայմանագրերի պարագայում սահմանվում է դրանց անմիջական կիրառման պարտադիրություն, ապա վերը հիշատակված երկու ակտերի կապակցությամբ առկա է տարբերակված մոտեցում:

Խնդիրն այն է, սակայն, որ միջազգային պայմանագրով սահմանված հիշյալ մոտեցումը ևս համարժեքորեն չի տեղայնացվել ներպետական օրենսդրությամբ:

Այսպես՝ Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Միության իրավապայմանագրային բազան կազմող՝ պաշտոնապես հրապարակված պայմանագրերը և Միության մարմինների որոշումները Հայաստանի Հանրապետությունում գործում են անմիջականորեն, եթե դրանք չեն ներառում կիրառման համար ներպետական ակտերի ընդունման մասին պահանջներ: Միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինն իրավասու է սահմանելու Միության մաքսային օրենսդրության ակտերը Հայաստանի Հանրապետությունում կիրառելու կարգը՝ սույն օրենքին համապատասխան:

Բանն այն է, որ ինչպես նշվեց, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են անմիջական կատարման միայն ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով: Մինչդեռ Օրենքով «Միության մասին» պայմանագրին համահունչ որևէ տարբերակում չի մտցվել այս հարցի առնչությամբ: Եվ սա այն պարագայում, երբ միջազգային պայմանագրերում և Միության իրավունքի բաղադրիչը կազմող այլ փաստաթղթերում ներառված պահանջների անմիջական կատարումն առանձին դեպքերում կարող է լուրջ խնդիրներ հարուցել ներպետական համապատասխան կառուցակարգերի ապահովման թե՛ իրավական, թե՛ կազմակերպական իմաստներով: Նման պայմաններում, մեր համոզմամբ, Օրենքով սահմանված կանոնակարգումները պետք է համահունչ լինեին «Միության մասին» պայմանագրով սահմանված դրույթներին, առավելևս, երբ դրանով նախատեսվածն այս պարագայում անդամ պետության համար այս հարցում առավել բարենպաստ վիճակ է ապահովում:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցի պարզաբանումը, թե համահունչ է արդյոք Օրենքով սահմանված Միության մարմինների որոշումների կատարման կառուցակարգը «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Այսպես՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով սահմանված է, որ դրա մարմնի ընդունած որոշումները պարտադիր են կազմակերպության մասնակից պետությունների համար, կամ վերջիններս պարտավորություն են ստանձնել կատարելու այդ որոշումները, ապա պատասխանատու գերատեսչությունը ապահովում է դրանց կատարումը՝ անհրաժեշտության դեպքում՝

1) ընդունելով համապատասխան նորմատիվ գերատեսչական կամ այլ իրավական ակտ,

2) մշակելով Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի (կարգադրության), կառավարության կամ վարչապետի որոշման նախագիծ և սահմանված կարգով ներկայացնելով կառավարության քննարկմանը[1]:

Ակներև է, որ միջազգային պայմանագրի կատարման հիշյալ կառուցակարգերի կիրառումն իրականացվում է բացառապես «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Ուստին նման իրավիճակում որևէ առանձնահատուկ դեպք առկա չէ Օրենքով այս հարցի առնչությամբ իրավակարգավորման լրացուցիչ ուղենիշներ սահմանելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Միության իրավունքի և ներպետական մաքսային օրենսդրության միջև հարաբերակցության հայեցակարգային ուղենիշների սահմանումն ունի չափազանց կարևոր նշանակություն մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության իմաստով: Այն պահանջում է օրենսդրական հստակ հիմքերի ու կարգավորումների նախատեսում, որոնք թույլ կտան մաքսային մարմինների գործունեության ընթացքում ծագող զանազան խնդիրներին տալ ընդունելի լուծում թե՛ միութենական

[1] Ընդունվել է 22.02.2007 թ., ուժի մեջ է մտել 12.04.2007 թ., ՀՀՊՏ 2007.04.11/19 (543):

իրավակարգավորման հիմքերի, թե՛ ներպետական իրավականոնակարգումների համատեքստում:

ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ МЕЖДУ ЗАКОНОМ РА «О ТАМОЖЕННОМ РЕГУЛИРОВАНИИ» И ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ ЕЭС

Тигран Хачикян
Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

В статье рассмотрены некоторые нормативно-правовые противоречия в сфере таможенного регулирования на территории Таможенного союза стран ЕврАзЭС. Проведен их анализ и сформулированы предложения по их разрешению. В статье предпринята попытка исследования правовой природы Таможенного кодекса Таможенного союза как акта, регулирующего таможенные правоотношения на уровне государства, определяется его место и роль в правовой системе государств – участников Таможенного союза. В статье также рассматриваются проблемы, связанные с таможенным регулированием в связи с созданием Таможенного союза России, Белоруссии и Казахстана и вступлением в силу Таможенного кодекса Таможенного союза.

THE PROBLEMS OF INTERACTION BETWEEN THE LAW ABOUT CUSTOMS REGULATIONS OF THE RA AND EEU LEGISLATION

Tigran Khachikyan
Assistant of the Chair of Civil Procedure of the YSU,
Candidate of Legal Sciences

Some regularity contradictions in the sphere of customs regulation for the territory of Customs union of the EEU countries are examined. Their analysis is carried out and the recommendations for the arrangement are formulated. The article deals with the legal research of the Customs Code of the Eurasian Economic Community as an act

regulating the customs legal relationship at the state level. Its place and role in the legal system of states – participants of the Customs Union have also been described by the author. In article the problems connected with customs regulation in connection with creation of the Customs Union of Russia, Belarus and Kazakhstan and coming into force of the Customs Code of the Customs Union are considered as well.

Բանալի բառեր - Մաքսային միություն, մաքսային օրենսգիրք, միջազգային պայմանագիր, մաքսային կարգավորում
Ключевые слова: Таможенный союз, Таможенный кодекс, международный договор, таможенное регулирование
Key words: Customs union, customs code, treaty, customs regulation.

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հեղինե Գրիգորյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հանրային մասնակցության հարաբերությունների իրավական կարգավորումը

Ջրային ռեսուրսների պահպանությունը և արդյունավետ օգտագործումը առանձնակի կարևորություն ունեն հատկապես որպես ռազմավարական պաշար: Ջրային ռեսուրսների պահպանության կարևորությունն ընդգծված է նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպիսիք են օրինակ՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Վերափոխելով մեր աշխարհը. կայուն զարգացման օրակարգը մինչև 2030 թվականը»[1], ՄԱԿ-ի ԵՏՀ մի շարք բազմակողմ կոնվենցիաներ, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ ամրագրված բազմաթիվ ինստիտուտներ: Պատահական չէ, որ ի տարբերություն այլ բնական ռեսուրսների՝ հանրային մասնակցության հատուկ կառուցակարգեր ամրագրված են միայն ջրային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցության հարաբերությունները կարգավորվում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային-իրավական փաստաթղթերով: Դրանց մի մասը սահմանում է հանրային մասնակցության ընդհանուր շրջանակ (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ[2] (հոդվ. 183), «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք[3],

[1] Ընդունվել է 25.09.2015 թ., A/RES/70/1:

[2] Ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:

[3] Ընդունվել է 03.04.2002 թ., ուժի մեջ է մտել 31.05.2002 թ., ՀՀՊՏ 2002.05.21/15 (190), հոդ. 344:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք[1], «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում[2]), մյուսները վերաբերում են հենց շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացմանը (ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա[3], ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա[4], «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք[5], «Հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում[6]), իսկ երրորդները հատուկ կարգավորում են ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման ոլորտի որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցությունը (ՀՀ ջրային օրենսգիրք[7], «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում[8]):

---

[1] Ընդունվել է 07.05.2002 թ., ուժի մեջ է մտել 21.06.2002 թ., ՀՀՊՏ 2002.06.21/21 (196), հոդ. 473:

[2] Ընդունվել է 19.11.2014 թ., ուժի մեջ է մտել 13.12.2014 թ., ՀՀՊՏ 2014.12.03/66 (1079), հոդ. 1097:

[3] Ընդունվել է 25.06.1998 թ., ուժի մեջ է մտել 30.10.2001 թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4 (12):

[4] Ընդունվել է 25.02.1991 թ., ուժի մեջ է մտել 10.09.1997 թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4 (12):

[5] Ընդունվել է 21.06.2014 թ., ուժի մեջ է մտել 09.08.2014 թ., ՀՀՊՏ 2014.07.30/41 (1054), հոդ. 636:

[6] Ընդունվել է 09.04.2015 թ., ուժի մեջ է մտել 30.04.2015 թ., ՀՀՊՏ 2015.04.29/25 (1114), հոդ. 324:

[7] Ընդունվել է 04.06.2002 թ., ուժի մեջ է մտել 10.10.2002 թ., ՀՀՊՏ 2002.07.10/24 (199), հոդ. 581:

[8] Ընդունվել է 07.03.2003 թ., ուժի մեջ է մտել 12.04.2003 թ., ՀՀՊՏ 2003.04.02/17 (252), հոդ. 287:

ՀՀ գործող օրենսդրությունն ամրագրում է հանրային մասնակցության իրավունքը հետևյալ որոշումների կայացման գործընթացին.

1. գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ, օրինակ՝ ՀԷԿ-ի շահագործման համար ջրօգտագործման թույլտվություն,

2. պլանների, ծրագրերի և քաղաքականության (հիմնադրութային փաստաթուղթ) մշակում, օրինակ՝ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը,

3. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում, օրինակ՝ «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Հանրային մասնակցության աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ գործընթացին կախված է տարբեր գործոններից՝ ներառյալ սպասվող արդյունքը, դրա մասշտաբները, որքան մարդկանց կվերաբերի այդ գործընթացը, խնդրի լուծման այդ եղանակը կլինի տեղական, տարածաշրջանային, թե համապետական մակարդակով և այլն:

Կարևոր է անդրադառնալ տարբեր որոշումների կայացման ռեժիմների հարաբերակցությանը, որոնք գործող իրավակարգավորման պայմաններում որոշակի շփոթ են ստեղծում:

Մասնավորապես ի կատարումն ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածի՝ ՀՀ կառավարության 2003 թ. N217-Ն որոշումը նախատեսում է հանրային ծանուցման և մասնակցության պայմաններ:

Սակայն ՀՀ ջրային օրենսգրքի նշված դրույթը, ինչպես նաև Կառավարության համապատասխան որոշումը որոշակիորեն հակասում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով հիմնադրութային փաստաթղթերի ընդունման՝ ներառյալ դրանց հանրային ծանուցման և քննարկումների ռեժիմին: Ավելին, հիշյալ N217-Ն որոշումը սահմանում է միայն հանրային ծանուցման կարգը, մինչդեռ հասարակության ներգրավման և մասնակցության գործընթացը մնացել է կարգավորումից դուրս:

Մեկ այլ խնդիր է տարբեր իրավական ակտերով սահմանված՝ ջրային ոլորտում հանրային քննարկման ենթակա փաստաթղթերի ցանկը: Այսպես՝ ՀՀ ջրային օրենսգրքի «Հանրային մասնակցությունը» վերտառությամբ 20-րդ հոդվածում նշված փաստաթղթերից **ջրի**

ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագիծը, ջրի ազգային ծրագրի նախագիծը և ջրավազանային կառավարման պլանների նախագծերը ընդգրկվում են **հիմնադրութային փաստաթուղթ** հասկացության բովանդակային ծավալում՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի: Հետևաբար այս փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության և պետք է անցնեն հանրային քննարկումների համապատասխան ընթացակարգ: Պետք է նշել, որ հիմնադրութային փաստաթղթերի համար օրենսդրությամբ սահմանված մասնակցության ընթացակարգի շրջանակներում հանրության ներգրավման, ինչպես նաև մասնակցության հնարավորությունները անհամեմատ ավելի լայն են (նախատեսված են ծանուցման ավելի արդյունավետ համակարգ, ավելի երկար ժամկետներ, սահմանված են հետադարձ կապի կառուցակարգ, ինչպես նաև հանրային քննարկումների 4 փուլ նախագծի մշակման տարբեր հատվածներում): Նման պայմաններում երկու զուգահեռ ընթացակարգերի կիրառությունը, առավել ևս մեկի ցածր արդյունավետության պայմաններում, արդարացված չէ:

Հանրային մասնակցության ռեժիմների հարաբերակցության մասով նմանատիպ խնդիր առկա է նաև **ջրի ստանդարտների նախագծերի (պետք է տեղադրվի www.e-draft.am կայքում) և ջրերի սակագնային ռազմավարության նախագծերի** մասով: Նշված փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կառավարության որոշումների և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի մակարդակով, հետևաբար «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են նորմատիվ իրավական ակտեր, ուստի դրանք պետք է անցնեն հանրային ծանուցման և քննարկումների սահմանված ընթացակարգ: Կրկին պետք է նշել, որ այս ընթացակարգը առավել կարգավորված և արդյունավետ է, քան Կառավարության 2003 թվականի N217-Ն որոշմամբ սահմանվածը:

Վերոգրյալ դիտարկումներն ընդունելու պարագայում ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածում նախատեսված փաստաթղթերից հանրային մասնակցության առարկա է մնում միայն **ջրօգտագործման թույլտվության նախագիծը,** որի վրա չեն տարածվում վերոգրյալ ռեժիմները**:** Հետևաբար առաջարկում ենք համապատասխան

փոփոխություն կատարել ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածում՝ հանրային մասնակցության մասով հղում անելով համապատասխանաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների կարգերին: Միաժամանակ առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2003 թ. N217-Ն որոշումը, իսկ ջրօգտագործման թույլտվությունների մասով հանրային ծանուցման և քննարկումների կարգը ներառել «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանքցի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ. N218-Ն որոշման[1] մեջ հավելվածի տեսքով՝ հաշվի առնելով սույն հոդվածի շրջանակներում կատարված համապատասխան առաջարկները:

Հանրային ծանուցման և մասնակցության սկզբունքները

Հանրային մասնակցության կառուցակարգը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1. **Հրապարակայնություն,** երբ մասնակցության գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը հասանելի են բոլոր շահագրգիռ անձանց:

2. **Մատչելիություն,** երբ օրենսդրությամբ սահմանված համապատասխան պայմանները և ընթացակարգերը չեն սահմանափակում շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցության իրավունքը:

3. **Թափանցիկություն,** երբ հասարակության մասնակցության արդյունքները, ինչպես նաև պետական լիազորված մարմնի կողմից դրանք հաշվի առնելու գործընթացը բաց են, և ապահովված է հետադարձ կապը հասարակության անդամների հետ:

Վերոգրյալ սկզբունքները կյանքի են կոչվում հետևյալ պայմանների ապահովմամբ.

[1] Ընդունվել է 07.03.2003 թ., ուժի մեջ է մտել 12.04.2003 թ., ՀՀՊՏ 2003.04.02/17 (252), հոդ. 288:

1. կայացվելիք որոշման վերաբերյալ բավարար տեղեկատվության մատչելիություն,

2. պատշաճ հանրային ծանուցում,

3. մասնակցություն վաղ փուլում,

4. ողջամիտ ժամկետներ,

5. առաջարկներ և դիտողություններ ներկայացնելու հնարավորություն,

6. հանրության կարծիքը պատշաճ հաշվի առնելը,

7. ընդունված որոշման հրապարակայնության ապահովում:

Այդուհանդերձ, հանրային մասնակցության պարտադիր բանաձև, որը կհամապատասխանի յուրաքանչյուր դեպքին, գոյություն չունի, սակայն յուրաքանչյուր դեպքում առնվազն վերոգրյալ պայմանները պետք է ապահովվեն[1]: Ընդ որում, արդյունավետ մասնակցության պայմանները պետք է ապահովվեն ոչ թե ձևականորեն, այլ իրականում և բարեխղճորեն:

Որոշումների ընդունման գործընթացին հանրային արդյունավետ մասնակցության վերաբերյալ խորհրդատվական բնույթի առաջարկություններ են մշակվել Օրհուսի կոնվենցիայի հանրային մասնակցության հարցերով նպատակային խմբի կողմից: Փաստաթուղթն ընդունվել է 2014 թ. Մաաստրիխտում կայացած Օրհուսի կոնվենցիայի կողմերի 5-րդ հանդիպման կողմից[2]: Դրանում ամրագրված մոտեցումները ուղղորդող նշանակություն ունեն պետությունների համար ազգային օրենսդրության և պրակտիկայի կատարելագործման տեսանկյունից:

Հանրային ծանուցման և մասնակցության գործիքներ ներդրված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետևյալ կառուցակարգերի շրջանակներում.

1. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն,

---

[1] Տե՛ս The Aarhus Convention: An Implementation Guide, 2nd ed., 2013, էջ 25:

[2] «Շրջակա միջավայրին վերաբերող հարցերով որոշումների ընդունմանը հասարակության արդյունավետ մասնակցության խթանմանն ուղղված մաաստրիխտյան առաջարկներ» ECE/MP.PP/2014/8. https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/Publications/2015/1514364_E_web.pdf:

2. ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերի (ջրի ազգային քաղաքականություն, ջրի ազգային ծրագիր, ջրերի ստանդարտներ, ջրավազանային կառավարման պլաններ, քննարկվող ջրօգտագործման թույլտվություններ) ընդունում,

3. նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակում:

Հարկ է նշել, որ ի լրումն վերոգրյալ կառուցակարգերի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որպես սկզբունք, նախատեսում է **համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:** Այս ձևաչափով մասնակցությունը կարող է վերաբերել համայնքային նշանակության գրեթե բոլոր հարցերին, այդ թվում՝ ջրային ռեսուրսների օգտագործմանը և պահպանությանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, ոռոգման ջրի մատակարարմանը և այլն: Բոլոր այն դեպքերում, երբ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանությանն առնչվող որևէ որոշում, որն ընդգրկված չի լինի վերոգրյալ 3 կառուցակարգերից որևէ մեկում և առնչություն կունենա համայնքի շահերին, համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է իրականացվել ինչպես անձամբ, այնպես էլ *հասարակական միավորումների, քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով՝ համայնքային ժողովների, հանրային քննարկումների, կլոր սեղանների և ցանկացած այլ ձևաչափով,* որը հնարավորություն կտա ամրագրելու բնակիչների կարծիքը և փոխանցելու որոշում կայացնող մարմնին՝ ապահովելով նաև հետադարձ կապ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված այս կառուցակարգը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության ոլորտում կարող է հանդես գալ որպես **«պահեստային տարբերակ»:** Հարկ է նշել, որ նման կարգ ընդունվել է ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ բազմաթիվ այլ քաղաքային և գյուղական համայնքների համար (Եղվարդ, Գառնի, Ջրվեժ, Աբովյան, Աշտարակ և այլն):

Հանրային մասնակցության վերոգրյալ կառուցակարգերի կատարելագործման նպատակով հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտարկումները և առաջարկությունները:

Ա. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն: Ծանուցման և հանրային քննարկումների կազմա-

կերպման փուլերում գործնականում ներգրավված են բոլոր սուբյեկտները, որոնք ունեն ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական հարաբերակցություն։ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը հանրային քննարկումների 4 փուլերում, սահմանելով այդ մարմինների պարտականությունները, գրեթե չի տարանջատել և հստակեցրել դրանք։ Ավելին, առկա է որոշակի խառնաշփոթ՝ կապված քննարկումների տարբեր փուլերում (1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ) ծանուցման առանձին բաղադրիչներ տարբեր կերպ բաշխելու մասով։ Գտնում ենք, որ որոշակիորեն խնդրահարույց է նաև ձեռնարկողի ներգրավվածության բնույթը. գործող իրավակարգավորման պայմաններում հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպման ոլորտում ձեռնարկողի պարտականություններն ունեն իմպերատիվ ձևակերպում և որևէ կերպ չեն առանձնանում մյուս սուբյեկտների պարտականություններից։ Ուստի առաջարկում ենք հանրային քննարկումների բոլոր 4 փուլերի համար հստակեցնել ծանուցման և քննարկումների կազմակերպման մասով յուրաքանչյուր սուբյեկտի պարտականությունների շրջանակը՝ հնարավորինս միասնականացնելով դրանք։ Կարևոր է, որպեսզի հստակ սահմանվի, թե ծանուցման կամ մասնակցության կազմակերպման որ բաղադրիչի համար որ սուբյեկտն է պատասխանատու։ Սա հնարավորություն կտա նաև հեշտությամբ անհատականացնելու համապատասխան սուբյեկտին, եթե անհրաժեշտություն առաջանա կիրառելու վարչական կամ այլ տեսակի պատասխանատվություն։

Ինչ վերաբերում է ձեռնարկողի ներգրավվածությանը, ապա գտնում ենք, որ այստեղ առանցքային է վերջինիս կարգավիճակը՝ որպես պատվիրատու։ Հետևաբար նա չի կարող կիսել կամ ունենալ միևնույն պարտականությունները, որոնք դրված են մյուս սուբյեկտների վրա։ Իհարկե, միաձշանակ դրական պետք է գնահատել ձեռնարկողի պատրաստակամությունն աջակցելու ծանուցման և քննարկումների կազմակերպման աշխատանքներին, սակայն նմանատիպ կարգավորումը պետք է ունենա բացառապես *կամընտրական* բնույթ։

Գործող իրավակարգավորման համաձայն՝ հանրության կողմից ներկայացված դիտողությունների պատասխանները պատրաստվում են փորձաքննական կենտրոնի և ձեռնարկողի կողմից։ Գտնում

ենք, որ այս մոտեցումը չի համապատասխանում փորձաննության ինստիտուտի էությանը, որտեղ, ըստ էության, փորձաքննական կենտրոնը պետք է զբաղվի հանրության կարծիքը հաշվի առնելով: Իհարկե, սա չի բացառում նաև ձեռնարկողի հետ առանձին հարցերի քննարկումները, բայց ցանկացած պարագայում հանրության կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկների պատասխանը պետք է լինի **փորձաքննական կենտրոնի կողմից:** Հետևաբար առաջարկում ենք «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման 34-րդ կետը փոփոխել՝ ամփոփաթերթի կազմման (ներառյալ ստացված դիտողությունների ընդունման կամ չընդունման վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելը) **պարտականությունը դնելով փորձաքննական կենտրոնի վրա:**

Բ. Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերի ընդունում: Այս կառուցակարգի մասով հանրային մասնակցության բոլոր բաղադրիչների համար միակ իրավասու սուբյեկտը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն է: Գտնում ենք, որ ջրօգտագործման թույլտվությունների դեպքում ծանուցումը միայն այդ մարմնի կողմից իրականացնելը բավականաչափ արդյունավետ չէ, քանի որ գործնականում այն համայնք(ներ)ի բնակիչները, որտեղ պետք է իրականացվի ջրօգտագործումը, հաճախ չեն իրազեկվում քննարկվող ջրօգտագործման թույլտվության նախագծի մասին՝ պայմանավորված կիրառվող ծանուցման եղանակներով (ՋՌԿԳ ինտերնետային կայք, առնվազն 1000 տպաքանակ ունեցող պարբերական): Առաջարկում ենք «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան լրացում՝ ծանուցման գործառույթ վերապահելով նաև ազդակիր համայնքի ղեկավարին, ով կարող է արդյունավետորեն օգտագործել ծանուցման լոկալ եղանակներ, օրինակ՝ ծանուցումը փակցնել իր նստավայրի և հանրային նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակի վրա: Առաջարկում ենք նաև քննարկվող ՋԹ-երի հայտերը մատչելի դարձնել ՋՌԿԳ ինտերնետային կայքում, որպեսզի դրանով հետաքրքրված

անձինք չունենան որևէ տեխնիկական խոչընդոտ փաստաթղթին ծանոթանալու և դրա վերաբերյալ դիտողություններ ու առաջարկներ անելու համար։

Գ. Նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակում։ Միանշանակ դրական ենք գնահատում ՀՀ օրենսդրությամբ հանրային քննարկումների կազմակերպումն այլ սուբյեկտների պատվիրելու հնարավորության ամրագրումը, որը հիմնականում թույլ է տալիս նեղ մասնագիտական ուղղվածության նախագծերի քննարկումների կազմակերպումն իրականացնել ավելի պրոֆեսիոնալ և արդյունավետ կերպով։ Ձևավորված պրակտիկայում արդյունավետ են հատկապես ակադեմիական կառույցների և հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող հանրային քննարկումները, որոնք երբեմն անցկացվում են վճարովի, երբեմն էլ՝ անվճար հիմունքներով։ Այդուհանդերձ, հայտնի են դեպքեր, երբ այլ անձանց կողմից քննարկումների կազմակերպման դեպքում չի ապահովվում պատշաճ ծանուցում, չեն ներգրավվում ոլորտում առանցքային դերակատարություն ունեցող կազմակերպություններ և փորձագետներ, խախտվում են ժամկետները, չի ապահովվում արդյունավետ կապ քննարկմանը մասնակցող անձանց և նախագիծ մշակող մարմնի միջև։ Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկում ենք մշակել նախագիծը մշակող մարմնի պատվերով այլ անձի կողմից հանրային քննարկումներ անցկացնելու պայմանագրային հիմքերը։ **Պայմանագրի օրինակելի ձևը** կարող է լինել «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հավելված։

Բացի դրանից՝ գործող իրավակարգավորումը չի նախատեսում նախագիծը մշակող մարմնի համապատասխան ներկայացուցչի պարտադիր մասնակցությունը հանրային քննարկումներին, ինչը առանցքային պայման է արդյունավետ մասնակցության և հետագայում նախագծի լրամշակման համար։ Առաջարկում ենք «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան լրացում՝ նախատեսելով հանրային քննարկումներին նախագիծը մշակող մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցության պահանջ։

Գործող իրավակարգավորման պայմաններում հանրապետական գործադիր մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկումները առավելապես անցկացվում են Երևան քաղաքում նույնիսկ այն դեպքերում, երբ կարգավորվող իրավահարաբերությունները սերտորեն առնչվում են առանձին տարածաշրջանների կամ համայնքների բնակչությանը, օրինակ՝ ստորերկրյա ջրերի պահպանությանը և օգտագործմանը վերաբերող իրավական ակտերի նախագծերը: Առաջարկում ենք «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան լրացում՝ նախատեսելով համայնքներում հանրային քննարկումներ անցկացնելու պայման այն նախագծերի համար, որոնցով կարգավորվող իրավահարաբերությունները հատկապես առնչվում են առանձին համայնքների սոցիալական, տնտեսական, բնապահպանական և այլ ասպեկտների:

Հանրային ծանուցման կառուցակարգը և պայմանները

Ինչպես արդեն նշվեց, հանրային մասնակցության հիմնական կառուցակարգերը 3-ն են, որոնց շրջանակներում գործում են հանրային ծանուցման տարբեր կառուցակարգեր և պայմաններ՝ հաշվի առնելով ընդունվելիք որոշումների առանձնահատկությունները: Անկախ կառուցակարգից՝ **հանրային ծանուցումը համարվում է պատշաճ,** եթե այն հնարավորություն է տալիս ճիշտ և ամբողջական պատկերացում կազմելու մասնակցության առարկայի, ձևաչափի և ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև պատրաստվելու և արդյունավետ մասնակցելու համապատասխան գործընթացներին: Այլ կերպ ասած՝ պատշաճ ծանուցման համար պետք է միաժամանակ ապահովվեն հետևյալ պայմանները՝

1. ծանուցման արդյունավետ եղանակ,
2. ամբողջական տեղեկատվություն,
3. ողջամիտ ժամկետներ:

Հանրային մասնակցության վերաբերյալ ծանուցումը, որպես ընդհանուր կանոն, պետք է տարածվի այնպիսի եղանակով, որպեսզի դրան ծանոթանան հասարակության հնարավորինս լայն խմբեր և հատկապես այն կազմակերպություններն ու անհատները, ովքեր մասնագիտացել են կամ հետաքրքրված են քննարկման առարկա հարցերով:

Հանրային ծանուցման եղանակները բավականին հանգամանորեն կարգավորված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկման հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում, ուստի հետագա շարադրանքի շրջանակներում կանդրադառնանք «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման իրավակարգավորումներին։

Ծանուցման եղանակ։ ՀՀ կառավարության N217-Ն որոշման 4-րդ կետը նախատեսում է երկու այլընտրանքային տեղեկատվական միջոցներ՝ *1000 և ավելի օրինակ տպաքանակ ունեցող տպագիր միջոցները և ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը։*

Ծանուցման վերոգրյալ միջոցները ցածր արդյունավետություն ունեն հատկապես այն դեպքերում, երբ քննարկման է դրվում ջրօգտագործման թույլտվության նախագիծ, որը պետք է իրականացվի գյուղական համայնքում։ Գաղտնիք չէ, որ հատկապես գյուղական համայնքներում համացանցից օգտվելու, առավել ևս պետական մարմինների կայքերին պարբերաբար հետևելու տարածված պրակտիկա չկա, հետևաբար բնակիչները որոշումների կայացման վաղ փուլում չեն իրազեկվում քննարկվող փաստաթղթի մասին և հնարավորություն չեն ունենում արտահայտելու իրենց դիրքորոշումը։ Հետևաբար առաջարկում ենք 1000 և ավելի օրինակ տպաքանակ ունեցող տպագիր միջոցները և ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում ծանուցում հրապարակելը նախատեսել ոչ թե որպես այլընտրանքային, այլ որպես **երկու պարտադիր եղանակներ։**

Ծանուցման բովանդակությունը։ ՀՀ կառավարության N217-Ն որոշմամբ սահմանվում է հասարակայնության ծանուցման ձևը, որի հետ կապված առկա են հետևյալ խնդիրները։

Ծանուցման մեջ նշվում է. *«Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին և փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը ...-ից մինչև ...-ը, դիմել ջրային ռե-*

սուրսների կառավարման և պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարության 3-րդ տուն, 5-րդ հարկ)»:

Գտնում ենք, որ փաստաթղթերին ծանոթանալու և աշխատանքներին մասնակցելու համար ՋՌԿԳ այցելելու միակ պայմանն արդյունավետ չէ:

Առաջարկում ենք ծանուցման մեջ նշել էլեկտրոնային փոստի հասցե և հեռախոսահամար, որոնց միջոցով հնարավոր կլինի կապվել ՋՌԿԳ-ի հետ: Փաստաթղթերին ծանոթանալու համար անհրաժեշտ ենք համարում ծանուցման մեջ ներառել էլեկտրոնային հղում, իսկ ջրօգտագործման թույլտվությունների նախագծերի քննարկման դեպքում համապատասխան փաստաթղթերը պետք է մատչելի լինեն նաև ազդակիր համայնք(ներ)ի ՏԻՄ նստավայրում, գրադարանում կամ համայնքային նշանակության այլ վայրում, ինչի մասին պետք է նշվի ծանուցման մեջ:

Ժամկետներ: ՀՀ կառավարության N217-Ն որոշման 2-րդ կետում նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ ծանուցման համար նախատեսված է 10-օրյա, իսկ ջրօգտագործման թույլտվությունների համար՝ 5-օրյա ժամկետ:

Ջրօգտագործման թույլտվությունների համար 5-օրյա ժամկետ նախատեսելը բավականին բարդ կամ գրեթե անհնարին է դարձնում փաստաթղթերին ծանոթանալը և արդյունավետ մասնակցությունը, առավելևս, եթե հաշվի առնենք, որ դրա համար անհրաժեշտ է այցելել ՋՌԿԳ: Ավելին, նշված 5-օրյա ժամկետում ոչ աշխատանքային օրերի առկայությունն ավելի է նվազեցնում գործընթացի արդյունավետությունը:

Առաջարկում ենք ջրօգտագործման թույլտվությունների ծանուցման մեջ նախատեսել 5 աշխատանքային օր ժամկետ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ժամկետներն ինքնին սեղմ են, և ավելի երկար ժամկետ նախատեսելու դեպքում անհրաժեշտ կլինի նաև երկարացնել թույլտվությունների տրամադրման ժամկետները:

Մասնակցություն վաղ փուլում: Էկոլոգիական իրավունքի գիտության կողմից հաստատված սկզբունք է, որ հանրությունը պետք է ներգրավվի քննարկման ենթակա փաստաթղթի նախագիծը պետական մարմնի ներսում համաձայնեցումից հետո: Նախագծերի համաձայնեցման ավելի ուշ շրջանում, երբ արդեն ձևավորվել և արմատա-

ցել են որոշակի մոտեցումներ, սկզբունքային փոփոխություններ կատարելու հնարավորությունները նվազում են: Մասնակցության ապահովումը վաղ փուլում որևէ պարագայում չի կարող նշանակել, որ ավելի ուշ փուլում այդ իրավունքը կարող է սահմանափակվել:

ՀՀ կառավարության 2003 թ. N218-Ն որոշման համաձայն՝ ջրօգտագործման թույլտվության վերաբերյալ ծանուցումը կատարվում է հայտի նախնական գնահատումից հետո միայն, ինչը չի համապատասխանում վաղ փուլում հասարակայնության ներգրավման սկզբունքին: Այս խնդիրը որոշակիորեն կարող է լուծվել ջրօգտագործման թույլտվությունների հայտերի ներկայացման էլեկտրոնային համակարգի ներդրմամբ, երբ հայտը, ինչպես նաև դրան կից ներկայացված փաստաթղթերը մատչելի կլինեն պետական լիազոր մարմնին ուղարկվելու հետ միաժամանակ:

Գործող օրենսդրությունը հատուկ պահանջներ չի սահմանում **քննարկումների վայրի** վերաբերյալ, իսկ ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դրանք, որպես կանոն, անցկացվում են Երևանում:

Հատկապես եթե ջրօգտագործման թույլտվություններն առնչվում են առանձին համայնքների բնակչությանը, նմանատիպ դեպքերում առանձնակի կարևորվում է վերջիններիս մասնակցությամբ քննարկումների կազմակերպումը: Ուստի նպատակահարմար ենք գտնում ամրագրել ջրօգտագործման թույլտվությունների նախագծերի վերաբերյալ քննարկումներ անցկացնելու պահանջ այն բնակավայրերում, որոնց բնակիչների շահերը հատկապես առնչվում են նախագծի կարգավորման առարկան կազմող իրավահարաբերություններին: Տեղում քննարկումներ կազմակերպելու անհնարինության դեպքում դրանք կարող են անցկացվել տեսա- կամ ձայնակոնֆերանսների միջոցով:

Դիտողությունների և առաջարկների ներկայացում: Հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ մասնակցության տարբեր ձևաչափերի շրջանակներում իրավունք ունի ներկայացնել դիտողություններ, փաստեր, վերլուծական տվյալներ կամ կարծիքներ: Այս հնարավորությունները կարող են իրացվել հանրային քննարկումների ընթացքում բանավոր կամ գրավոր դիտողությունների կամ առաջարկների ձևով, ինչպես նաև քննարկումներից հետո սահմանված ժամկետում:

Ցանկացած պարագայում հանրային քննարկումների արդյունքները պետք է արտացոլվեն արձանագրություններում, իսկ դրանք ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ որոշում կայացնող մարմինը **պետք է կազմի համապատասխան ամփոփագիր՝** ապահովելով դրա մատչելիությունը հանրության անդամների համար:

ՀՀ կառավարության N217-Ն որոշումը որևէ կերպ չի կարգավորել նշված հարաբերությունները: Անհրաժեշտ է ՀՀ կառավարության N217-Ն որոշմամբ ամրագրել հետադարձ կապի մեխանիզմ, ինչպես նաև մասնակցության արդյունքներն արտացոլող ամփոփաթերթի կազմում: Դրանում կարող են խմբավորվել նույնաբովանդակ առաջարկություններն ու դիտողությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ որոշում կայացնող մարմնի արձագանքը: Նշված փաստաթուղթը պետք է մատչելի լինի որոշում կայացնող մարմնի ինտերնետային կայքում:

Ամփոփելով սույն ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ որոշակիորեն կարգավորված են ջրային ռեսուրսների պահպանության հարաբերություններին հանրային մասնակցության առանձին ասպեկտներ, այդուհանդերձ, խիստ անհրաժեշտություն է զգացվում ներդաշնակեցնելու կարգավորման ռեժիմները, ճշտելու դրանց հարաբերակցությունը, ինչպես նաև առանձին կառուցակարգերի շրջանակներում լրացնելու վեր հանված բացերը:

О НЕКОТОРОЫХ ВОПРОСАХ УЧАСТИЯ ОБЩЕСТВЕННОСТИ В ПРОЦЕССЕ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ, КАСАЮЩИХСЯ УПРАВЛЕНИЯ ВОДНЫМИ РЕСУРСАМИ

Этине Григорян

Ассистент кафедры

гражданского процесса ЕГУ, кандидат юридических наук

Настоящая статья посвящена исследованию механизмов участия общественности в рамках законодательства Республики Армения, которые непосредственно или общим образом регулируют процедуру участия общественности в принятии решений в сфере управления водными ресурсами. В частности, автор анализирует институты

ОВОС, подготовку и принятие решений агентством, управляющим водные ресурсы, а также подготовку и принятие проектов нормативно-правовых актов.

На основании сравнительного анализа практики и действующего законодательства, автор обосновывает свою точку зрения о необходимости гармонизировать режимы участия общественности в рамках различных правовых механизмов в целях эффективного применения соответствующих правил, исключая дубликацию. Кроме того, автор приходит к заключению, что механизм принятия решений по управлению водными ресурсами нуждается в детальном пересмотре, чтобы исправить пробелы относительно раннего участия общественности, своевременного и эффективного уведомления, предоставления замечаний и предложений и их рассмотрения государственным органом, ответственным за принятие решений. В рамках статьи также подчеркивается необходимость усиления и расширения роли органов местного самоуправления в процессе принятия решений по использованию водных ресурсов, с учетом их специального статуса и задач по защите интересов общины.

ON SEVERAL ISSUES OF PUBLIC PARTICIPATION IN DECISION-MAKING RELATED TO MANAGEMENT OF WATER RESOURCES MANAGEMENT

Heghine Grigoryan
Ph.D in Law, Assistant at the
Chair of Civil Procedure of YSU

The present article is devoted to the analysis of existing public participation mechanism within the legislation of the Republic of Armenia which directly or indirectly may cover the decision-making procedures related to the management of water resources. In particular the author scrutinizes the institutions of EIA, preparation and adoption of decisions by water resources management agency as well as preparation of draft normative legal acts.

Based on the comparative analysis of general legal practices as well as relevant legislation, the author substantiates the view that public

participation regimes within different legal mechanisms should be harmonized to enable effective application of respective legal rules for specific decision-making processes without any duplication. In addition, the author concludes that the legal-regulatory framework targeting the decision-making process on water issues shall be thoroughly amended to accommodate the main internationally recognized principles of public participation, such as early public participation, timely and effective notification, submission of comments and consideration thereof by the public authority in charge for decision-making. Another core point drawn up within the article touches upon the role of local self-governance bodies in decision-making on water resources which shall be considerably extended given their special status and capacity to pursue the interests of the community.

Բանալի բառեր - ջրային ռեսուրսների պահպանություն և օգտագործում, ջրօգտագործման թույլտվություն, հանրային ծանուցում, հանրային մասնակցություն, մասնակցության սկզբունքներ, մասնակցության պայմաններ

Ключевые слова: охрана и использование водных ресурсов, разрешение по водопользованию, уведомление общественности, участие общественности, принципы участия общественности, условия участия общественности

Key words: protection and use of water resources, water use permit, public notification, public participation, public participation principles, terms of public participation

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անի Սիմոնյան

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս

Յուրաքանչյուր պետության և ժողովրդի մշակութային ժառանգությունը մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն իրենց, այլև ողջ մարդկության համար: Հետևաբար մշակութային արժեքների պահպանության և պաշտպանության խնդիրներն անմասն չեն կարող մնալ քաղաքակիրթ հասարակությունների իրավական օրակարգից: Մինչ անցած դարի 50-ական թվականները մշակութային ժառանգության պահպանման խնդիրները միջազգային իրավունքի հարթակում քննարկվում էին բացառապես զինված ընդհարումների համատեքստում: Մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտությունը դիտարկվում էր բացառապես պատերազմական գործողությունների ժամանակ պատերազմող երկրների տարածքում գտնվող ճարտարապետական, գիտական, գրական, կրոնական և ազգային արժեքների պահպանման տեսանկյունից[1]: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո մշակութային և պատմական արժեքների պահպանության անհրաժեշտությունը կարևորվեց նաև խաղաղ պայմաններում: Դա առաջնահերթ պայմանավորված էր տեխնոլոգիական և արդյունաբերական զարգացման, ինտեգրացիոն և գլոբալիզացիայի գործընթացներով: Միջազգային հանրությունը, ընդգծելով ազգերի և ժողովուրդների մշակութային ժառանգության միջոցով ինքնությունը պահպանելու առաջնահերթությունը, միջազգային իրավական օրակարգ բերեց նաև ոչ պատերազմական պայմաններում մշակութային արժեքների պահպանման խնդիրները[2]:

---

[1] State Responsibility and International Protection of Cultural Heritage In Armed Conflicts, Andrzej Jakubowski, Santander Art and Cultural Law Review, 2016 page 148.

[2] Становление международного права охраны культурных ценностей как новая отрасли общего международного права, Акуленко В. И. Максимов В.В. Киев 2012, стр. 777.

Կարևորելով վեր ընշված խնդիրը՝ այս գիտական հոդվածում կփորձենք վերլուծել մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված հիմնական միջազգային իրավական ակտերը, կփորձենք ներկայացնել այդ իրավական ակտերի խախտման համար միջազգային իրավունքի սուբյեկտների պատասխանատվության առանձնահատկությունները, ինչպես նաև պատասխանատվության կիրառման գործիքակազմը բարելավելու մեխանիզմները: Անհրաժեշտ ենք համարում նաև պարզաբանել մշակութային ժառանգություն եզրույթը իրավական տեսանկյունից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, որպես միջազգային հանցագործություն որակվեցին անհատների կողմից համաշխարհային արժեք ներկայացնող մշակութային արժեքների ոչնչացմանն ուղղված գործողությունները: Նացիստական Գերմանիան և իր զինվորական անձնակազմը մեղադրվեցին Երկրորդ աշխարհամարտի ժամանակ օկուպացված երկրների մշակութային ժառանգության ոչնչացման համար՝ այն որակելով որպես ողջ մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Առաջին անգամ անհատների համար սահմանվեց միջազգային իրավական պատասխանատվություն զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքները յուրացնելու և վնասելու համար:

Այս եզրույթը կոնսոլիդացվեց միջազգային մարդասիրական իրավունքում և իր ամրագրումը ստացավ «Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. Հաագայի կոնվենցիայում և 1949 թ. «Պատերազմի զոհերի պաշտպանության մասին» ժնևյան կոնվենցիայի 1977 թ. երկու լրացուցիչ արձանագրությունների մեջ:

Մշակութային արժեքները, անկախ ծագումից և սեփականատերերից, համարվում են անշարժ և շարժական այն արժեքները, որոնք մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուր ազգի մշակութային ժառանգության համար (ճարտարապետական, արվեստի կամ պատմական հուշարձանները, կրոնական և հնագիտական տեղանքները, ճարտարապետական համալիրները, որոնք պատմական կամ գեղագիտական հետաքրքրություն են ներկայացնում, արվեստի գործերը, ձեռագիր մատյանները, գրքերը, գիտական գրական հավաքածուները, արխիվային նյութերը, ինչպես նաև վեր ընշված արժեքների վեր-

արտադրությունները), շինությունները, որոնց հիմնական նշանակությունը մշակութային շարժական արժեքների պահպանումն է (թանգարաններ, պատկերասրահներ, խոշոր գրադարաններ, արխիվային տարածքներ, ինչպես նաև զինված ընդհարումների ժամանակ մշակութային օբյեկտների պահպանման համար ստեղծված հատուկ թաքստոցներ), և վերջապես մշակութային օբյեկտներ պարունակող խոշոր կենտրոններ[1]:

«Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. Հաագայի կոնվենցիան, որը հանդիսանում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հրավիրված մշակութային արժեքների պաշտպանության հարցերի քննարկմանն ուղղված միջազգային կոնֆերանսի (կայացել է 1954 թ. ապրիլի 21-ից մայիսի 15-ը Հոլանդիայի Հաագա քաղաքում, մասնակցել է 56 պետություն) եզրափակիչ ակտը և առաջին միջազգային իրավական համագործակցությունն էր համամարդկային մշակութային ժառանգության պահպանման ոլորտում: 1954 թ. Հաագայի կոնվենցիան շեշտում է, որ յուրաքանչյուր ժողովրդի մշակութային արժեքներին հասցվող վնասը հավասարապես վերաբերում է ողջ մարդկությանը, քանի որ յուրաքանչյուր ժողովուրդ իր ներդրումն ունի համաշխարհային մշակույթի մեջ: Կոնվենցիային միացած մոտ 120 պետությունները պարտավորվել են հարգել և պահպանել իրենց պետության տարածքում և տարածքից դուրս գտնվող մշակութային արժեքները նույնիսկ ռազմական օկուպացիայի պայմաններում[2]:

Ինչպես արդեն նշել էինք, մշակութային արժեքների պահպանությունն անհրաժեշտ է դիտարկել նաև ռազմական գործողությունների համատեքստից դուրս: Այսպիսով՝ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունվեցին խաղաղ պայմաններում համաշխարհային մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված երկու կարևորագույն միջազգային իրավական փաստաթուղթ՝ «Մշակութային արժեքների անօրինական արտահանման, ներմուծ-

[1] Convention for the protection of cultural property in the event of armed conflicts, 14 May 1954, article 2.

[2] Международное гуманитарное право, И. И. Котляров, К. Л. Ходжабегов, Москва, 2007, стр 68.

ման և սեփականության իրավունքի փոխանցման մասին» 1970 թ. և «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության մասին» 1972 թ. կոնվենցիաները: «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության մասին» կոնվենցիան, որը վավերացվել է 193 պետությունների կողմից, առանցքային դերակատարում ունի և յուրահատուկ իրավական երաշխիք է մշակութային արժեքների պահպանման միջազգային իրավական գործընթացում: Այս կոնվենցիան համակարգում է համաշխարհային մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված միջազգային իրավական համագործակցության իրավական, ֆինանսական և վարչական կարևորագույն ասպեկտները: «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության մասին» 1972 թ. կոնվենցիայի նորմերով ամրագրվեցին համակարգային մոտեցումները մշակութային և բնական ժառանգության հասկացության և պաշտպանության խնդիրներում, ինչպես նաև սահմանվեց «Համաշխարհային ժառանգություն» իրավական եզրույթը: Կոնվենցիայի մասնակից երկրները պարտավորվեցին հետևել ընդունված սկզբունքների, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պատասխանատվություն է կրում իր երկրի տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների պահպանության համար, ինչպես նաև օժանդակել միջազգային հանրությանը կամ առանձին պետություններին, եթե վերջիններս անկարող են բավարար չափով ապահովել այդ արժեքների պաշտպանությունը[1]:

1972 թ. կոնվենցիան նախատեսել էր նաև միջազգային համագործակցության ձևաչափը և մեխանիզմները՝ հիմնվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության հարցերով միջկառավարական կոմիտեի գործունեության վրա: Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության հարցերով միջկառավարական կոմիտեն մասնակից երկրների դիմումների հիման վրա քննարկում է այդ պետությունների տարածքում գտնվող մշակութային արժեքները Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու հարցը[2]: 2017

[1] International Law and the protection of cultural heritage, Craig Forrest, Routledge 2011, page 231.

[2] The handbook of international humanitarian law, Dieter Fleck and Michael Bothe, Oxford University press 2008, page 32.

թ. հուլիս ամսվա դրությամբ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված են 832 մշակութային, 208 բնական, 35 խառը տիպի արժեքներ, որոնք գտնվում են 167 անդամ պետությունների տարածքում (Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 3, Ադրբեջանի Հանրապետության՝ 2, Թուրքիայի՝ 16, Վրաստանի Հանրապետության՝ 3, Իրանի՝ 21)[1]:

Համաշխարհային ժառանգության ցանկում առավելագույն մշակութային արժեքներ ընդգրկած երկրները 2017 թ. հուլիսի 1-ի դրությամբ



Չնայած այն հանգամանքին, որ մշակութային ժառանգության պահպանումը միջազգային իրավունքի կարգավորման համեմատաբար նոր ոլորտներից է, այն արդեն իսկ ձևավորել է միջազգային իրավական պատասխանատվության համալիր համակարգ:

Միջազգային իրավական պատասխանատվություն հանդիսանալով՝ միջազգային իրավունքի կարևորագույն, միևնույն ժամանակ խոցելի ինստիտուտը առանցքային անհրաժեշտություն է նաև մշա-

[1] www.unesco.org.

կութային ժառանգության ոչնչացումը կանխելու համար[1]: Դեռևս Երկրորդ աշխարհամարտի ժամանակ պատերազմող երկրների մշակութային բազմահազար օբյեկտներ թալանվեցին, ավերվեցին, ինչպես նաև ապօրինաբար արտահանվեցին օկուպացված տարածքներից: Ուկրաինայի պաշտոնական տվյալներով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, բացի մարդկային մեծ կորուստներից, ոչնչացվել էին ավելի քան երեք հարյուր հազար թանգարանային նմուշներ, հիսուն միլիոն գրքեր և քառասուն միլիոն արխիվային գործեր: Ղրիմի հատուկ կոնֆերանսի ժամանակ՝ 1945 թ. փետրվարին, որոշում էր կայացվել հիմնվել Հաագայի կոնվենցիայի պահանջների վրա և ռեպարացիաների կիրառմամբ Գերմանիայից բռնագանձել քսան միլիարդ ԱՄՆ դոլար փոխհատուցում: Ի վերջո 1993 թ. փետրվարի 15-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Ուկրաինայի Հանրապետության միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ երկու կողմերը պարտավորվում են վերադարձնել պատերազմական գործողությունների ժամանակ առգրավված մշակութային արժեքները:

Սկսած 1972 թվականից՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեցին երկու տասնյակից ավելի բանաձևեր, որոնք վերաբերում էին մշակութային արժեքների վերադարձմանը և իրենց ծագման երկրներ ռեստիտուցիային: Այսօր էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում գործում է հատուկ մասնագիտացված հիմնարկ, որի շրջանակներում ստեղծվել է միջկառավարական կոմիտե մշակութային արժեքները իրենց ծագման երկրներ փոխանցելուն աջակցման համար[2]:

Մշակութային, պատմական, այլ արժեք ներկայացնող օբյեկտների ոչնչացումը ռազմական հանցագործություն է որակվել Միջազգային քրեական դատարանի ստատուտում (հոդված 8 (2)b(ix)(e)(iv)): 2016 թ. սեպտեմբերի 27-ին Միջազգային քրեական դատարանը ինը տարվա ազատազրկման դատապարտեց Ահմադ ալ Ֆաքիին, որը Անսար Դայն իսլամիստական շարժման անդամ էր, կաս-

[1] Public and private international protection of global cultural goods, European Journal of International Law, Francioni F., 2012, vol 23.

[2] Особенности международно-правовой ответственности в сфере охраны культурного наследия, Мельничук Е. И., Киев, 2012, стр. 794.

կածվում էր Մալիի կրոնական և պատմական շինությունները դիտավորությամբ ռմբակոծելու մեջ: Այս որոշումը նախադեպային էր և հետագայում կարող է առանցքային նշանակություն ունենալ Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող ավերածությունների համար պատասխանատվության հարցերում[1]:

Մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներից անմասն չի մնացել նաև Արցախի Հանրապետությունը: 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ ադրբեջանական ռմբակոծության արդյունքում զգալի վնասներ է կրել նաև Թալիշ գյուղի մատուռը: Ի թիվս այլ դիմումների՝ Թալիշ գյուղի մատուռին հասցված վնասի փոխհատուցման պահանջով ևս Մարդու իրավունքների եվրոպական դատարան հայց է ներկայացվել, որն այս պահին ընթացքի մեջ է:

Փորձելով ամփոփել մշակութային ժառանգության պահպանման ոլորտում պատասխանատվության որոշ խնդիրների քննարկումը՝ անհրաժեշտ ենք համարում կատարել հետևյալ եզրահանգումները.

Մշակութային ժառանգության պաշտպանությունը համամարդկային խնդիր է, ուստի այն պետք է ամրագրված լինի յուրաքանչյուր պետության erga omnes պարտավորությունների շարքում:

Միջազգային հանրությունը պարտավոր է հետևողականորեն դատապարտել և իրավական պատասխանատվության հստակ մեխանիզմներ կիրառել մշակութային ժառանգության ոչնչացման դեպքերի նկատմամբ՝ հատկապես զինված ընդհարումների ժամանակ:

[1] ICC Prosecutor v. Ahmad Al Faqi Al Mahdi case number ICC-01/12-01/15.

К ВОПРОСУ О МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В СФЕРЕ ОХРАНЫ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

Ани Симонян
Преподаватель кафедры европейского и международного права ЕГУ

Статья посвящена изучению некоторых правовых аспектов становления международного права охраны культурных ценностей, особенностей международно-правовой ответственности в сфере охраны культурного наследия. В статье проанализированы основные международно-правовые судебные процессы, касающиеся международной охраны всемирного культурного наследия.

STATE RESPONSIBILITY ON INTERNATIONAL PROTECTION OF CULTURAL HERITAGE

Ani Simonyan
Lecturer, Chamber of European and International Law, YSU

This article deals with international responsibility of States and also Non-State actors for their breach of cultural heritage obligations. The following article briefly discusses main Conventions concerning protection of cultural heritage both in the event of armed conflicts or peace. Also, presented International Criminal Court and other international tribunals practice.

Բանալի բառեր – մշակութային ժառանգության պաշտպանություն, ՅՈՒՆԵՍԿՕ, միջազգային իրավական պատասխանատվություն, բնական ռեսուրսներ
Ключевые слова: охрана культурного наследия, ЮНЕСКО, международно-правовая ответственность, природные ресурсы
Key words: cultural heritage, ICC, UNESCO, State responsibility, natural resources

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am